

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՒՇԱՐՁԱՆ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 81:82.0
ԳՄԴ 81+83.3
Հ 964

*Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ հայ բանասիրության
ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

**Գիրքը տպագրվում է Մ. Աբեղյանի ծոռան՝
Սուրեն Աբեղյանի մեկենասությամբ:**

Կազմող՝ Աննա Աբաջյան

Հ 964 Հուշարձան Մանուկ Աբեղյանին/Կազմող՝ Ա. Աբաջյան: -Եր., ԵՊՀ
հրատ., 2023, 324 էջ:

Սույն ժողովածուում զետեղված են ականավոր հայագետ Մ. Աբեղյանին նվիրված լեզվաբանական ու գրականագիտական հոդվածներ՝ տպագրված տարբեր տարիներին, մամուլից, գրականությունից քաղված հուշեր նրա մասին՝ գրված իր ժամանակակիցների և հետագա ուսումնասիրողների կողմից, ըստ արժանվույն ներկայացված է Աբեղյան գիտնականը՝ որպես լեզվաբան, գրականագետ, բանագետ, մանկավարժ և այլն:

Գիրքը կարող է օգտակար լինել ինչպես մասնագետների, ուսանողության, այնպես էլ բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հայագիտության հարցերով:

ՀՏԴ 81:82.0
ԳՄԴ 81+83.3

ISBN 978-5-8084-2598-9

© ԵՊՀ հրատ., 2023
© Կազմողի համար, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	7
------------------	---

ԱՌԱՋԱԲԱՆ

Մանուկ Աբեղյանի կյանքն ու գիտական վաստակը. Աննա Աբաջյան	10
--	----

Մաս 1. ԱԲԵՂՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՅԱՅՔՈՎ

<i>Մեծերը մեծի մասին</i> (Ա. Մեյե, Ա. Իսահակյան, Վ. Թորոլենց, Դ. Դեմիրճյան, Ս. Զորյան, Հ. Շիրազ, Հ. Օրբելի)	21
Հայագիտության վիթխարի կաղնին. Արամ Ղանալանյան	24
Աբեղյանը եղել է, Աբեղյաններ՝ հազիվ թե. Սուրեն Շտիկյան	33
Աբեղյանը թարգմանիչ. Վ. Վարդանյան	39
Բազմավաստակ գիտնականը. Ալեքսանդր Մարգարյան	41
Բանագետ-բանասերը. Արտաշես Նազինյան	45
Հաղթ կաղնին. Կարապետ Մելիք-Օհանջանյան	48
Մանուկ Աբեղյան. Նշան Սուրադյան	50
Մեծ հայագետի հոյակապ աշխատության նոր հրատարակությունը.	
Ռաֆայել Իշխանյան	54
Հայ լեզվաբանության անգուգական կոթողը. Մանվել Ասատրյան	59
Մ. Աբեղյանն իբրև հայոց հին գրականության պատմաբան. Մայիս Ավդալբեկյան	62
Մեծ գիտնականին. «Գրական թերթի» խմբագրական	75
Մեծ գիտնականի հիշատակին. «Սովետական Հայաստան»	76
Հուշարձան Մանուկ Աբեղյանին. Արտաշես Մարտիրոսյան	77
Հուժկու անհատականություն. Գագիկ Սարգսյան	80
Մանուկ Աբեղյանի 125-ամյակին. «Արմենայրեսի» թղթակից	84
Մանուկ Աբեղյան. Հովհաննես Ղանալանյան	86
Որբ աշխարհի զավակները և նրանց հոգևոր հայրերը.	
Ազատ Հովհաննիսյանի որբանոցային հուշերից. «Գրական թերթ»	92
Մեծարում հայգիտության հսկային. «Գրական թերթ»	98
Նշանավոր ձեմարանականներ. Մանուկ Աբեղյան.	
Սարգիս Հարությունյան	100
Մանուկ Աբեղյանի երկերի ութհատորյակը. Սարգիս Հարությունյան	113

Հուշագրություն (թոռնուհու՝ Հասմիկ Աբեղյանի հուշերից)

Մ. Աբեղյանի կերպարը՝ ըստ Հասմիկ Աբեղյանի «Օրերս ինձ հետ են...»

հուշագրության. **Եվա Մնացականյան**117

Մաս 2. ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ ԳԻՏԱԿԱՆԸ

Խոսք Մանուկ Աբեղյանի մասին. **Ժենյա Քալանթարյան**129

Հայ բանասիրության հսկան. **Ազատ Եղիազարյան**.....138

Ուրվագիծ հայ գրականության պատմագրության. **Մերգեյ Սարինյան**.....142

Արտաշես Աբեղյանը Մանուկ Աբեղյանի մասին.

Մարգարիտ Խաչատրյան145

Մաս 3. ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ա) Լեզվաբանություն

1. Մանուկ Աբեղյանը բառարանագիր. **Աննա Աբաջյան**155

2. Աբեղյանական գործող ուղղագրության անհիմն քննադատությունները.

Աննա Աբաջյան.....164

3. Լեզվի նորմավորման հարցերը Մ. Աբեղյանի աշխատություններում.

Զարիկ Աղաջանյան174

4. Մանուկ Աբեղյանը և հայերենի ուղղագրության հարցը.

Լավրենտի Հովհաննիսյան182

5. Մանուկ Աբեղյանը բառարանագիր. **Փառանձեմ Մեյթիխանյան**.....187

6. Մանուկ Աբեղյանը իբրև գրաբարագետ. **Անահիտ Յուզբաջյան**193

7. Գրաբարի բայական համակարգը՝ ըստ Մ. Աբեղյանի.

Անահիտ Յուզբաջյան202

8. Բացահայտչի աբեղյանական ըմբռնումը. **Գոհար Ներսեսյան**207

բ) Գրականագիտություն

9. Հայ միջնադարյան գրականության ու հայ բանագիտության

չգերազանցված համակարգողը. **Աելիտա Դուլիսանյան**215

10. Միխիթար Գոշը՝ Մ. Աբեղյանի գնահատմամբ. **Վանո Եղիազարյան**.....220

11. Նահապետ Քուչակին վերագրված հայրենների և նրա անունով մեզ

հասած աշուղական երգերի տաղաչափության համեմատական

քննություն. **Վանո Եղիազարյան**229

12. Մեծերի հանդիպումների խաչմերուկներում. Մանուկ Աբեղյան և Հովհաննես Թումանյան. Սուսաննա Հովհաննիսյան	240
13. Մ. Աբեղյանի «Մեր դպրոցական կյանքից» հոդվածաշարը և նրա արդիական հնչեղությունը. Եվա Մնացականյան	252
14. Ներսես Շնորհալու և Ստեփանոս Օրբելյանի պատմական ողբերը Մ. Աբեղյանի գնահատությամբ. Հերիքնազ Որսկանյան	261
15. Աբեղյանը և հայկական տաղաչափության ուսումնասիրության հարցերը. Էդուարդ Ջրբաշյան	273
16. Մանուկ Աբեղյանի դերը հայ տաղագիտության մեջ. Աբեղյանի տեսության քննադատությունը. Աշխեն Ջրբաշյան	292

գ) Մանկավարժություն

17. Մանուկ Աբեղյանի ավանդը դպրոցական համակարգում. Գայանե Մկրտչյան	305
18. Մանուկ Աբեղյանը մանկավարժ. Նունե Մկրտչյան	315

Երկու խոսք

«Հուշարձան Մանուկ Աբեղյանին» ժողովածուի ստեղծման գաղափարը պատկանում է ականավոր հայագետի միակ թոռնուհուն՝ գրականագետ, երջանկահիշատակ Հասմիկ Աբեղյանին, որի հետ բախտ վիճակվեց ծանոթանալ Մ. Աբեղյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում կազմակերպելիս: Ծանոթությունը վերաճեց մտերմության և ջերմ բարեկամության: Աբեղյանապաշտ երախտագետ թոռնուհու ցանկությունն էր ի մի բերել, ամբողջացնել մեծանուն հայկաբանին նվիրված նյութերը, ստեղծել մի երկ, որը կդառնա հուշարձան Մանուկ Աբեղյանի համար: Ահա փոքր-ինչ ուշացումով փորձում ենք կատարել նրա խնդրանքը...:

Մ. Աբեղյանի, նրա գիտական ժառանգության մասին շատերն են գրել, ըստ արժանվույն գնահատել նրա վիթխարի վաստակը հայագիտության զարգացման գործում, գրվել են գրքեր, ինչպես Ս. Հարությունյանի «Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը» հսկայածավալ արժեքավոր մենագրությունը, Ե. Տեր-Մինասյանի «Մանուկ Աբեղյանի կյանքն ու գործը», Շ. Ստեփանյանի «Մանուկ Աբեղյանի քերականագիտական հայացքները», բազում հոդվածներ, հուշեր, այլևայլ ուսումնասիրություններ:

Սույն ժողովածուում բնականաբար հնարավոր չէր մեկտեղել տարբեր աղբյուրներում առկա բոլոր նյութերը՝ հուշ-դիմանկարներ, գիտնականի մասին տարբեր հոբելյաններին գրված ելույթներ, մահվան առիթով հնչած խոսքեր, աբեղյանագիտությանը վերաբերող գիտական հոդվածներ: Վերջիններիս հետ կապված՝ նշենք, որ այստեղ ներկայացված են հիմնականում «Աբեղյանական ընթերցումներ» հանրապետական գիտա-ժողովների զեկուցումները, ինչպես նաև տարբեր տարիներին տպագրված որոշ հոդվածներ:

Սրանով մեր հարգանքի տուրքն ենք մատուցում հայագիտության տիտանին և շատ սիրելի տիկին Հասմիկին...:

Մոռացման չմատնելու նպատակով ստորև ներկայացնում ենք Հասմիկ Աբեղյանի խոսքը՝ հնչած հոբելյանական նստաշրջանի բացման ժամանակ.

«Աբեղյան տոհմի ժառանգի իրավունքով ողջունում եմ այսօրվա «Աբեղյանական ընթերցումների» մասնակիցներին, որոնց, համոզված եմ, այստեղ է բերել հարգալից վերաբերմունքը Մանուկ Աբեղյան գիտնականի նկատմամբ:

.... Շատ երջանիկ եմ, որ պապս իր գիտական վաստակի շնորհիվ մինչ օրս գնահատվում է ըստ արժանվույն, և համոզված եմ, որ գալիք սերունդները նույնպես կհիշեն, նաև շատ բան կսովորեն նրանից:

Դժբախտաբար, ես նրա կողքին եմ եղել միայն յոթ տարի և այն ժամանակ չէի կարող արժևորել նրան՝ որպես գիտնականի: Նա իմ լավ, բարի պապիկն էր, որն ինձ գրել-կարդալ, թվաբանություն էր սովորեցնում, նաև հեքիաթներ պատմում, գերմաներեն պարապում...: ... Փոքր հասակից արտակարգ սեր և հետաքրքրություն էի տածում Մասիս սարի նկատմամբ, որ շատ լավ երևում էր մեր պատշգամբից: Մտովի պապիս նմանեցնում էի Մասիսին, և այդպես էլ նա ինձ համար մնաց որպես մեր բիրլիական լեռ:

Ուզում եմ այսօր մեկ անգամ ևս կրկնել Հ. Թումանյանի այն բանաստեղծությունը, որ սովորեցրել էր ինձ պապիկս, և որը արտասանեցի իր մահվան նախընթաց օրը՝ այցելության եկած Ավետիք Իսահակյանի և Կարո Մելիք-Օհանջանյանի ներկայությամբ.

Ամպն ու սարը

Ամպը եկավ, նստավ սարին,
Նստավ սարի սուր կատարին.
–Լսի՛ր, պապի՛,– ասավ նրան,–
Լավ օրերդ անցան, կորան...
Խիստ սոսկալի ցուրտ է գալի:
Ասավ, գնաց: Մարը կամաց
Մտավ սպիտակ վերմակի տակ:

Պապիկիս մահից հետո ես՝ փոքրիկ աղջնակս, կարծում էի, թե նա գնացել է Մասիսի մոտ և մնացել այնտեղ: Գուցե այդպես է, և այժմ բիրլիական լեռան բարձունքից ունկնդրում է մեզ և ուրախություն ապրում այս մեծարանքի համար: Ուրեմն ես բոլորիդ ողջունում եմ նաև իր կողմից:

Բարի՛ եկաք և բարի՛ մնաք... »:

Վերջում հավելենք՝ սույն ժողովածուի կազմմանը իր մասնակցությունն է բերել Հասմիկ Աբեղյանի լավ բարեկամ, գրականագետ Եվա Մնացականյանը:

Աննա Աբաջյան

բ. գ. դ., պրոֆ.

ԱՌԱՋԱԲԱՆ

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Ականավոր հայագետ, լեզվաբան, գրականագետ, բանագետ, բառաբանագիր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Մանուկ Խաչատուրի Արեղյանը ծնվել է 1865 թ. մարտի 17-ին Նախիջևանի Աստապատ գյուղում: Ըստ ավանդության՝ տեղանվան ծագումը կապվում է Ավարայրի հերոսամարտի հետ. պատմում են, որ Վարդան Մամիկոնյանի մարմինը «այդտեղ են բերել և պատել», որից և առաջացել է *Աստ-ա-պատ* անունը:

Արեղյանի հոր պապի՝ Պետրոսի բեղի կեսը սպիտակ լինելու պատճառով տոհմին տրվել է Աղբեղանք (թուրքերեն *աղ* > սպիտակ), ապա՝ Արեղյան ազգանունը: Գերդաստանը կրել է նաև Գալստյան ազգանունը¹:

Լինելով ընտանիքի կրտսեր զավակը՝ պատանի Մանուկը վայելում էր ծնողների՝ հողագործ Խաչատուրի և տիրացուի դուստր Մարթայի առանձնահատուկ սերն ու հոգածությունը: Յոթ տարեկանից գրաճանաչություն է սովորել գյուղի խալֆաների մոտ, այնուհետև՝ դարձել Հովակիմ եպիսկոպոս Տեր-Գրիգորյանի հիմնած Կարմիր վանքի դպրոցի անդրանիկ սան: Իր բացառիկ ընդունակությունների շնորհիվ 1876 թ. նա մի երջանիկ պատահականությամբ ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որն ավարտել է 1885 թ. «յոթ գովելի» գնահատականներով: 1887 թ. տեղափոխվել է Թիֆլիս որպես թեմական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1888 թ. լույս է տեսել Արեղյանի բանաստեղծությունների ժողովածուն՝ «Նմուշներ» վերնագրով: Դեռևս 1886 թ.՝ Էջմիածնում ուսանելիս, ճեմարանի դոնապան մոկացի Նախո քեռուց (Նահապետ) լսելով «Սասնա ծռերի» նոր պատումը՝ գրի է առել այն՝ դառնալով երկրորդը Գարեգին Սրվանձտյանից հետո: 1889 թ. Շուշիում լույս է տեսել «Դավիթ և Մհեր» պատումը: 1889 թ. Արեղյանը հրավիրվել է Թիֆլիս՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատելու Հովնանյան օրիորդաց վարժարանում: Նա այդ ժամանակ երբեմն թղթակցում էր «Նոր-Դարին», ապա դարձել է թերթի խմբագիրը:

¹ Տե՛ս **Արեղյան Հ.**, Օրերս ինձ հետ են..., Եր., 2014, էջ 5:

1893 թ. կատարվել է Աբեղյանի վաղեմի երազանքը, և նա իր նախնին ուսուցիչ Փիլիպոս Վարդանյանի միջնորդությամբ ու Ալեքսանդր Մանթաշյանի հովանավորությամբ մեկնել է Գերմանիա, ընդունվել Ենայի համալսարան: Մեկ տարի սովորելուց հետո կրթությունը շարունակել է Լայպցիգի, ապա՝ Բեռլինի համալսարաններում: 1895-1896 թթ. Մ. Աբեղյանը սովորել է Սորբոնի համալսարանում:

1898 թ. Ենայի համալսարանում նա փայլուն պաշտպանել է «Հայ ժողովրդական հավատալիքը» թեմայով ատենախոսությունը՝ ստանալով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 1898 թ. գիտնականը նորից Թիֆլիսում էր և հրավեր ստացավ՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում դասավանդելու, որտեղ և նա բարեկամացավ մեծն Կոմիտասի հետ: Համատեղ սկսեցին ժողովրդական երգեր հավաքել և ուսումնասիրել: 1903 թ. հրատարակվեց դրանցից հիստունը՝ «Հազար ու մի խաղ» վերնագրով, 1905 թ.՝ հաջորդ հիսնյակը: Նրանց միջև ծնվեց և արմատավորվեց մեծ բարեկամություն. Կոմիտասը դարձավ Աբեղյանի որդու՝ հետագայում ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Միեր Աբեղյանի կնքահայրը: 1903 թ. Աբեղյանը ամուսնացել էր գորավար գնդապետ Գևորգ Շահխաթունյանի դստեր՝ Շուշանիկի հետ:

Աբեղյան ընտանիքում ծնվում են չորս արու զավակներ՝ Գագիկը, որը մահանում է կույրադիքի սուր բորբոքումից 16 տարեկան հասակում, Միերը, որին ևս ծնողները կորցնում են մեկ տարեկանում, երրորդ որդին՝ Մեհերը, և Սուրենը՝ հետագայում Գ. Սունդուկյանի անվան թատրոնի դերասան:

Մ. Աբեղյանը աշխատակցել է հայ պարբերական մամուլին («Նոր-Դար», «Մուրճ», «Արարատ», «Ազգագրական հանդես», «Նորք» ևն): 1917 թ. Հայոց ազգագրական ընկերությունը Թիֆլիսում հիմնեց կովկասագիտական ու հայագիտական երկսեռ բարձրագույն դասընթացներ, և դասախոս նշանակվեց Մ. Աբեղյանը: Այս ժամանակահատվածում մի խումբ նշանավոր գիտնականների, այդ թվում՝ Մ. Աբեղյանի և Հ. Թումանյանի ջանքերով կազմակերպվեց Հայկազյան ընկերությունը, որի նպատակն էր հիմնել Հայոց ակադեմիա, դնել հայկական համալսարանի հիմքերը, զարգացնել հայագիտությունը և այլն: Սակայն պատմական դեպքերի բերումով Հայկազյան ընկերության ծրագիրը չիրականացավ:

1918-1927 թվականները Մ. Աբեղյանի գիտական գործունեության մեջ նշանավորվեցին լեզվաշինարարական արդյունավետ աշխատանքներով. պետական գրական լեզվի մշակման խնդիրը դարձել էր ժամանակի հրամայական: 1918 թ. Թիֆլիսի հայ փաստաբանների միությունը ռուս-հայերեն իրավաբանական տերմինների բառարան կազմելու խնդրանքով դիմեց մի քանի հայտնի իրավաբանների և հայագետներ Մ. Աբեղյանին ու Ս. Մալխասյանին: 1919 թ. լույս տեսավ բառարանը՝ մեծապես նպաստելով հայ իրավաբանական մտքի զարգացմանը:

1918 թ. Թիֆլիսում սկսվում են Երևանի համալսարանի կազմակերպման աշխատանքները: Մեծ գիտնականը դառնում է կազմակերպիչ հանձնաժողովի անդամ, հրավիրվում Երևան: 1919 թ. օգոստոսի 1-ին նշանակվում է համալսարանի դասախոս և պատմաբանասիրական ֆակուլտետի դեկան: Սակայն Երևանում հարմար չենք չլինելու պատճառով համալսարանի բացումը կատարվում է հունվարին Ալեքսանդրապոլում:

1920 թ. Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց անմիջապես հետո Հայաստանի ռազմական կոմիսար Ավիս Նուրիջանյանի հրամանով Մ. Աբեղյանին հանձնարարվում է կազմել ռուս-հայերեն և հայ-ռուսերեն ռազմական տերմինների բառարան, և այդ նպատակով նրան նշանակում են ռազմական կոմիսարի անձնական քարտուղար: 1925 թ. (կազմի վրա՝ 1927) լույս է տեսնում 724-էջանոց բառարանը:

Հայաստանի խորհրդայնացման հենց սկզբում փակվում է Երևանի համալսարանը, և կառավարության հատուկ որոշումով վերաբացվում է ժողովրդական համալսարան, որտեղ և անվանի հայագետը դասավանդում է հայ ժողովրդական բանահյուսություն, հայ հին գրականություն և հայոց լեզվի տեսություն: 1921 թ. նրան շնորհվում է դոցենտի, 1926 թ.՝ հայ գրականության պատմության պրոֆեսորի գիտական կոչում: 1923-1925 թթ. Մ. Աբեղյանը արդեն վարում է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնը:

1925 թ. Հայաստանի Ժողկոմխորհրդի հատուկ ղեկընտրված հիմնադրվում է Խորհրդային Հայաստանի առաջին գիտական կենտրոնը՝ գիտության և արվեստի ինստիտուտը, որի խորհրդի անդամներ են ընտրվում Հակոբ Հովհաննիսյանը, Համբարձում Քեչեկը, Ալեքսանդր Թամանյանը, Արսեն Տերտերյանը, Աշոտ Հովհաննիսյանը: Նախագահ է ընտրվում Հայկ Գյուլիքնիսյանը, փոխնախագահ՝ Մ. Աբեղյանը: Սակայն

վեց ամիս պաշտոնավարելուց հետո հրաժարական տված նախագահի պաշտոնը հինգ տարի շարունակում է վարել Աբեղյանը՝ անընդմեջ միաձայն վերընտրվելով:

Մեծ հայագետի նկատմամբ անսահման ակնածանքի և վստահության դրսևորումը երկրի իշխանությունների կողմից արտահայտվում է նրանում, որ 1925 թ. Աբեղյանը ընտրվում է Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ (վերընտրվում է 1927, 1929 թթ.), իսկ 1927 թ.՝ Երևանի քաղաքապետի անդամ: Սակայն 1930-ական թթ. չարաքառտիկ մթնոլորտում, անձի պաշտամունքի հետ կապված, փոխվում է վերաբերմունքը նաև նրա նկատմամբ: 1930 թ. առանց պատճառի նա ազատվում է Գիտության և արվեստի ինստիտուտի նախագահի պաշտոնից, սկսվում են ոտնձգություններ նրա դավանած գիտական տեսության դեմ:

Գիտության բնագավառում իրենց առաջին քայլերն անող երիտասարդ լեզվաբանների համար (Գ. Սևակ, Ա. Ղարիբյան) հարմար պայմաններ են առաջանում հինգ հոլովի ճշմարիտ տեսությունն առաջ քաշած հեղինակի դեմ ընդվզելու համար: Աբեղյանի նման վիթխարի մի մեծության դեմ պայքարի լավագույն տարբերակը գաղափարական պայքարն էր: Աբեղյանին մեղադրում են ֆորմալիզմի մեջ՝ մեռած սեռական ու հայցական հոլովների «խրտվիլակները» աշխարհաբարում չընդունելու համար: Նրա ուսմունքը հռչակվում է իբրև իդեալիստական, հակադիալեկտիկական, մետաֆիզիկական, հակամարքսիստական: Դա Գ. Սևակի հորջորջած «սերունդների պայքարն էր», երիտասարդ սերնդի պայքարը ավագ սերնդի դեմ՝ ամբողջ ճակատով, չափ ու սահմաններ չճանաչող: Գործիք էին դարձրել նաև ուսանողությանը: Վիրավորված գիտնականը, որոշելով ընդմիջտ թողնել մանկավարժական աշխատանքը, գրավոր հրաժարական է տալիս²: Իր սկզբունքներին աներեք հետամուտ մեծ հայագետը մինչև իր կյանքի վերջը այլևս չդասախոսեց ԵՊՀ-ում:

1931 թ. պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ Ե. Չարենցի և Աբեղյանի միջև բանակցություններ են սկսվում «Մասնա ծոերի» գիտական հրատարակության վերաբերյալ: 1932 թ. նրանց միջև կնքվում է պայմանագիր, ըստ որի՝ վեպի համահավաք բնագիրը կազմված էր լինելու 2 հատորից (100 մամուլ): Աբեղյանը Կ. Մելիք-Օհանջանյանի եռանդուն

² Աբեղյան Մ., Երկեր, Ը հատոր, Եր., 1985, էջ 494:

մասնակցությամբ 1936 թ. հրատարակում է առաջին հատորը: 2-րդ հատորը հրատարակվում է գիտնականի մահվանից հետո (1-ին մասը՝ 1944 թ., 2-րդը՝ 1951 թ.): Կառավարությունը 1940 թ. Աբեղյանին, ինչպես նաև Գ. Աբովին և Ա. Ղանալանյանին պարգևատրում է հանրապետության գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: 1932 թ. Աբեղյանն ընտրվել էր նաև Հայաստանի կենտգործկոմի նախագահությանն առնթեր ՀԽՍՀ բնակավայրերի անունների ճշգրտման հանձնաժողովի նախագահ՝ կապված օտար տեղանունները հայացնելու, եղածները ճշգրտելու հետ:

Հայաստանի կառավարությունը, բարձր գնահատելով Աբեղյանի՝ հայ գիտությանն ու մշակույթին մատուցած վիթխարի ծառայությունները, 1935 թ. նրան շնորհում է «Գիտության վաստակավոր գործչի» կոչում: Նույն թվականի նոյեմբերի 20-ին, առանց ատենախոսության պաշտպանության, հիմնվելով առկա աշխատությունների վրա, Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատը նրան շնորհում է հասարակական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1940 թ. Մ. Մաշտոցի մահվան 1500-ամյակի առթիվ Աբեղյանը ձեռնամուխ է լինում Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի հրատարակությանը: Արդեն 1941 թ. լույս է տեսնում այն՝ Աբեղյանի կազմած բնագրով, թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով: «Հայոց հին գրականության պատմությունը», «Վիպական երգեր», «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև «Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ» երկերը, կարելի է ասել, դառնում են մեծանուն գիտնականի կարապի երգը:

Ինչպես գրում է ակադեմիկոս Սարգիս Հարությունյանը Աբեղյանի կյանքին ու գործին նվիրված հսկայածավալ մեծարժեք աշխատության մեջ³, կյանքի վերջին չորս տարիները տառացիորեն դառնում են մեծ գիտնականի հասարակական վերագնահատման ու մեծարման մի կարճ, բայց բովանդակալից ժամանակաշրջան: Հենց 1940-ական թվականներից են սկիզբ առնում ուսումնական ու գիտահետազոտական տարբեր հաստատություններից արդեն պատկառելի տարիքով գիտնականին զանազան եղանակներով իրենց աշխատանքներում ներգրավելու զանազան առաջարկները: 1942 թ. դեկտեմբերին ԵՊՀ ռեկտորատը Աբեղյանին նշանա-

³ Կենսագրական շատ տվյալներ վերցված են Մ. Հարությունյանի «Մ. Աբեղյան. կյանքը և գործը» գրքից (Եր., 1970):

կում է բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսոր: 1943 թ. ապրիլին Գրականության և լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն Արեղյանի թեկնածությունն է առաջադրում ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ ընտրվելու համար: Հաջորդ օրն իսկ ԵՊՀ գիտխորհուրդը ևս ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսի բարձր կոչմանն է առաջադրում Մ. Արեղյանին: Իսկ 1944 թ. սկզբներին ակադեմիայի նախագահ Հովսեփ Օրբելու ցանկությամբ առաջադրվում է նրան ստանձնել ակադեմիայի Գրականության ինստիտուտի տնօրենի պաշտոնը, որից նա հրաժարվում է վատառողջ լինելու պատճառով⁴:

1944 թ. սեպտեմբերի 25-ին մեծ գիտնականը կնքում է իր մահկանացուն: Կարկառուն գիտնականի հիշատակը հավերժացնելու համար Ժողկոմսովետը որոշեց գրականության ինստիտուտը կոչել Մանուկ Արեղյանի անունով:

Մ. Արեղյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի բացառիկ դերը նաև համալսարանական գիտության զարգացման գործում:

Դ. Դեմիրճյանը Արեղյանի մահվան առիթով գրել է. «Նա ընկավ հսկա կաղնու նման, և ծանր լուրջություն տիրեց անտառում»: Իսկ մահվան տարելիցի առթիվ Երևանի քաղաքային պանթեոնում Ա. Բսահակյանը Արեղյանի գերեզմանի մոտ ասել է հետևյալը. «Մանուկ Արեղյան... Ի՞նչ էր մեզ համար նա. հայկական ավանդությունների մարմնացում, գիտնական՝ բառիս ամենախորին իմաստով, անվախ, աննախապաշար, անկեղծ, վառ հայրենասեր՝ լի հավատով հայ ժողովրդի լավագույն ապագայի հանդեպ, սկզբունքի մարդ՝ մեր ապառաժների պես կայուն, մտքի և կամքի, աշխատանքի և գործի հսկա, պատկառելի ուսուցիչ, սերունդների անձնվեր դաստիարակիչ: Հավերժ սիրելի Մանուկ Արեղյան... Բովանդակ հայությունը հարգում և պատկառում է քեզանից և քո մեծարժեք վաստակներից, և քո՝ մեզնից հեռանալը համազգային վիշտ է: Մենք խորապես զգում ենք, որ քո շնորհիվ մեր ազգային-հոգեկան միջավայրը լցված է իմաստու-

⁴ Նշվ. աշխ., էջ 133:

թյամբ և հեղինակությամբ, լրջությամբ և վեհ նպատակների հետապնդումով⁵»:

Մ. Աբեղյանը արգասաբեր գործունեություն է ծավալել հայագիտական գրեթե բոլոր բնագավառներում՝ առասպելաբանություն, ժողովրդական վիպասանություն և էպոս, միջնադարյան քնարերգություն, ընդհանրապես հին ու նոր գրականություններ, տաղաչափություն: Ինչ վերաբերում է լեզվաբանական աշխատություններին, նշենք, որ դրանք նույնքան մնայուն ու կոթողային գործեր են: Նա հեղինակ է 200-ից ավելի լեզվաբանական ուսումնասիրությունների: Աբեղյանը հայ իրականության մեջ երիտքերականների հետևորդն էր: Լեզվի բնորոշման, փոփոխության, զարգացման և քերականության տեսական հարցերում գիտնականը որպես ուղենիշ ունեցել է հենց այդ դպրոցի մշակած սկզբունքները:

Է. Աղայանը գրում է. «Մ. Աբեղյանի քերականական ուսումնասիրությունների առաջին և մեծագույն արժեքն այն է, որ դրանց շնորհիվ մեր գրական լեզվի քերականական կառուցվածքի նկարագրությունը լիովին ու վերջնականապես ազատագրվեց գրաբարյան քերականական սխեմաներից և ունեցավ իր ուրույն սխեմաները»⁶:

«Աշխարհաբարի քերականութիւն» գրքի առաջաբանում նորարար-գիտնականը գրում է. «Երբեք նորաձևության փափագը չէ եղել մեզ առաջնորդ այդ փոփոխությունների համար, այլ միմիայն ճշտության և կատարելության ձգտումը (...): Մեր քերականությունները մինչև այժմ մեծ մասամբ օտար քերականությունների ընդօրինակություն են, որոնց բոլորի համար «լատիներեն լեզուն Պրոկրոստեսի անկողինն է եղել, որի վրա նոր լեզուները ծայրատել են կամ բռնի կերպով քաշքշելով երկարացրել»: Այս պատճառով, ի նկատի ունենալով նորագույն գիտական հետազոտությունները քերականության մասին, հայերենի քերականության բոլոր խնդիրները կրկին ու կրկին քննության ենք ենթարկել և երկար կշռադատելուց հետո միայն այս կամ այն փոփոխությունը մտցրել⁷»:

Մ. Աբեղյանը, արդարև, ժամանակակից հայոց լեզվի գիտական քերականության հիմնադիրն է: «Աշխարհաբարի քերականության» մեջ լեզվաբանը մանրակրկիտ ուսումնասիրել է բառակազմության, հոլովման ու

⁵ «Գրական թերթ», 1959, հ. 40:

⁶ **Աղայան Է.**, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1958, էջ 150:

⁷ **Մ. Աբեղյան**, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, Առաջաբան, էջ 9:

խոնարհման հետ կապված մի շարք խնդիրներ: «Աշխարհաբարի շարահյուսություն» աշխատության մեջ քննության է ենթարկել աշխարհաբարի շարահյուսական համակարգը, բացահայտել կապակցության տեսակներն ու բառերի պաշտոնները, հոլովների ու կապերի նշանակություններն ու կիրառությունները, քննել նախադասության անդամների համաձայնության ու շարադասության օրենքները, պարզ և բարդ նախադասությունների տեսակները, բայի եղանակների ու ժամանակների կազմության յուրահատկությունները և այլն: Գիտնականը նոր մակարդակի է հասցրել շարահյուսությունը՝ որպես քերականության առանձին, ձևաբանությանը հավասար ճյուղ:

Մ. Աբեղյանի լեզվաբանական հետազոտությունների թագն ու պսակը «Հայոց լեզվի տեսությունն» է, որի մեջ ամփոփված են հեղինակի տեսական ըմբռնումները հայերենի բոլոր մակարդակների՝ հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության, շարահյուսության, ինչպես նաև համակարգային օրինաչափությունների վերաբերյալ: Լինելով առաջինը՝ Աբեղյանը համակարգել է ժամանակակից հայերենի հնչյունաբանությունը, պարզաբանել հնչյունափոխական շատ երևույթներ, հիմնադրել է բառագիտությունը իր երկու բաժիններով՝ իմաստաբանություն և բառակազմություն, քննել ածանցների ծագումն ու նշանակությունները, բարդության տեսակները:

Մ. Աբեղյանը ստեղծել է բայի կերպերի տեսությունը, պարզել խոնարհման համակարգի էությունը, ճշտել բայի եղանակաժամանակային ձևերը և այլն:

Նա գրել է նաև գրաբարի քերականություն («Գրաբարի համառոտ քերականություն», Վաղարշապատ, 1907, 1936, «Գրաբարի դասագիրք», գիրք 1, Թիֆլիս, 1915, «Գրաբարի դասագիրք», գիրք 2, Թիֆլիս, 1916):

Աբեղյանը նաև հայոց լեզվի արդի ուղղագրության հիմնադիրն է: Հայ գիտության զարգացմանը մեծապես նպաստել են բեղուն գիտնականի կազմած բառարանները՝ «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան» (Տ. Հովհաննիսյանի, Մ. Մալխասյանի... հեղինակակցությամբ), «Ռուս-հայերեն ռազմական բառարան», «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան» (Լ. Հովհաննիսյանի և Ա. Տեր-Պողոսյանի հեղինակակցությամբ) և այլն:

Անվանի լեզվաբան, բառարանագետ Աշոտ Սուքիասյանը այսպես է բնութագրել Աբեղյան բառարանագրին. «Դեռ 20-ական թթ. պրոֆ. Աբեղյանը հիմնովին հերքեց ժամանակակից հայերենի մասին տարածված այն առասպելը, ըստ որի՝ հայոց լեզուն անընդունակ է իր սեփական միջոցներով ստեղծելու հասարակական-քաղաքական, գիտական և տեխնիկական տերմինաբանություն: Այդ... առասպելի հերքման փայլուն ապացույցներն են պրոֆ. Աբեղյանի կազմած և հայոց լեզվի մեջ մտած հազարավոր բառերն ու տերմինները...»⁸:

Ականավոր գիտնականի թողած գիտական բարձրարժեք ժառանգությունը իր անխախտ տեղն է զբաղեցնում հայագիտության ոսկե ֆոնդում:

Ահա թե ինչպիսի տողեր է ձոնել Վահան Թորթովենցը մեծատաղանդ հայագետին. «Մանուկ Աբեղյան... Կարծես մի հին բաբելացի, որ զարմանալի քմահաճույքով ցանկացել է զարթնել և ապրել իբրև հայ քսաներորդ դարում:

Նրա դեմքի վրա դեռևս կան բաբելոնական աստվածների դաշույնների հարվածները: Լավ չհղկված ճակատ, խորը ակոսված կնճիռներ, որոնք լցված են գիտության փոշով, հնադարյան արձաններին վայել քիթ, լայն և ժայռային դիմադրողականություն ունեցող ծնոտ, ...աչքեր, որոնք հառնում են միայն զննելու համար... Եթե մենք մի րոպե կասկածեինք նրա ոչ բաբելոնացի լինելուն, բայց պարտավոր ենք անպայման հավատալ, որ նա թև թևի ման է եկել Մովսես Խորենացու հետ, վիճել, հակաճառել նրան և, թերևս, Խորենացուն երբեմն դեմ է տվել պատին իր երկաթյա տրամաբանությամբ և քաշվելով իր խուցը՝ զրի է առել մտքերը երկաթագրերով... Մանուկ Աբեղյանը 20-րդ դարի հայ խոշորագույն գիտնականներից մեկն է: Եթե նա ապրեր Ոսկեդարում, նրա երկերը հետնորդների համար կդառնային ամենաբազմազան ուսումնասիրության առարկա...»⁹:

Աննա Աբաջյան

բ. գ. դ., պրոֆ.

⁸ Տե՛ս նրա «Դուս-հայերեն բառարանագրությունը սովետական իշխանության տարիներին» թեկնածուականատենախոսությունը, էջ 79 (անտիպ):

⁹ **Զաքյան Ռ.**, Հուշապատում, հ. 2, Եր., 1977, էջ 225:

Մաս 1

ԱԲԵՂՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ
ՀԱՅԱՑՔՈՎ

Մեծերը մեծի մասին

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻՆ

Ինչպես Միեր դյուցազնը մեր,
Կանգնած գահին տարիներիդ՝
Նայում ես լուռ մեկ դեպի վեր,
Մեկ էլ անցած հովիտներիդ:
Ե՛վ հնավանդ, և՛ հնաբույր՝
Քո տաղերգած էպոսի պես
Դու կաս կրկին վեհ ու մաքուր,
Դու մարդ Մասիս՝ վճիտ ու վես...

Հ. ՇԻՐԱԶ

* * *

Աբեղյանի հայ գրական շարահյուսությունը արդի հայերենի քերականության մասին գրված լավագույն աշխատությունն է, որ պետք է ուսումնասիրեն բոլոր նրանք, ովքեր հետաքրքրվում են այսօրվա հայերենով:

ԱՆՏՈՒԱՆ ՄԵՅԵ

* * *

Աբեղյանը հայոց մատենագրությունն էր, նրա պատմությունն էր, հայոց լեզուն էր: Նա հայոց ֆոլկլորն էր: Նա Սասնա ծռերի էպոսն էր, միջնադարյան տաղերը: Նա առասպելախառն դյուցազներգությունն էր, պարսից և արաբական պատերազմների վեպը: Շատ էր հնօրյա, շատ էր հարազատ, շատ էր հայ: Եվ գիտնական էր, մեծ գիտնական: Ահեղասատ՝ սխալմունքի դեմ, վեճի մեջ և ուսուցող: Նա հոր էր նման՝ հարգելի, սիրելի և սիրող-ներող:

...Նրա ծանրակշիռ գրքերը մեծ գիտնականի երկարատև ու բազմափորձ կյանքի արդյունքներն էին, հին հայագիտության, հայոց պատմության, հայոց մատենագրության, հայ կուլտուրայի մթնոլորտում կուտակված, ժրաջան, համառ, հիմնական աշխատանքի պտուղներ, մոնումենտալ, հեղինակավոր և ինքնատիպ աշխատություններ:

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

* * *

Մանուկ Աբեղյանը հայկական ավանդությունների մարմնացումն էր, գիտնական՝ բառիս ամենախորին իմաստով. անվախ, աննախապաշար, անկեղծ, վառ հայրենասեր՝ լի հավատով հայ ժողովրդի լավագույն ապագայի հանդեպ, սկզբունքի մարդ՝ մեր ապառաժների պես կայուն, մտքի և կամքի, աշխատանքի և գործի հսկա. պատկառելի ուսուցիչ, սերունդների անձնանվեր դաստիարակիչ: Ավելի քան կես դար, առանց հուսահատվելու և հոգնելու, նա պրպտեց հայ ժողովրդի ֆուկլորը, պատմությունը, հին և միջին դարերի գրականությունն ու լեզուն և իր անալիտիկ մտքի զարմանալի տրամաբանությամբ դրանցից ստեղծեց դիսցիպլիններ, իր մոնումենտալ երկերով կառուցեց իր հավերժական արձանը մեր կուլտուրայի և մեր սրտերի մեջ:

Ա. ԻՄԱՀԱԿՅԱՆ

* * *

Մանուկ Աբեղյանը նշանավոր գիտնական է, հայ ժողովրդի հավատարիմ զավակը: Նա մեծ ու կարևոր ընդհանրացումներ է կատարել հայ ժողովրդի մշակույթի ուսումնասիրության տարբեր բնագավառներում. նա հավասար ուժով լուսաբանել է թե՛ հայ ժողովրդի վեպը և թե՛ հայոց լեզվի ու գրականության բազմաթիվ հարցեր. իր բազմամյա վաստակով նա սովետական գիտությունը հարստացրել է բազմաթիվ նոր աշխատություններով և ուսումնասիրություններով:

Հ. ՕՐԲԵԼԻ

* * *

Մանուկ Աբեղյանը իսկական գիտության մարդ էր. նա ապրում էր գիտության խնդիրներով ու շահերով: Անողորք անալիտիկ էր նա և ստույգ փաստերի երկրպագու: Մեր գիտական աշխարհում նա հեղինակություն էր:

Նա կորովապիճիկ և սկզբունքային մարդ էր՝ իր անհողորդ համոզմունքներով. բացառիկ ճշտապահ, դիսցիպլինար և պարտաճանաչ. գործի մեջ պահանջկոտ, հասարակական իր պարտքի գիտակցությամբ, լավ քաղաքացի, օրինակելի իր կենցաղում:

Լինելով վերին աստիճանի հայրենասեր՝ նա խորապես ապրում էր մեր ժողովրդի բախտով: Նա հայ լեզուն ու կուլտուրան ոչ միայն գրքերի մեջ էր սիրում ու գնահատում ոմանց նման, այլև կենցաղում ամենօրյա:

Ս. ԶՈՐՅԱՆ

* * *

Մանուկ Աբեղյան. կարծես մի հին բաբելոնացի, որ զարմանալի քմահաճությամբ ցանկացել է զարթնել և ապրել իբրև հայ քսաներորդ դարում... Եթե մենք մի րոպե կասկածեինք նրա ոչ բաբելոնացի լինելուն, բայց պարտավոր ենք անպայման հավատալ, որ նա թև թևի ման է եկել Մովսես Խորենացու հետ, վիճել, հակաճառել նրան և, թերևս, Խորենացուն երբեմն դեմ է տվել պատին իր երկաթյա տրամաբանությամբ և քաշվելով իր խուցը՝ գրի է առել մտքերը երկաթագրերով... Մանուկ Աբեղյանը այն գիտնականներից է, որ պարտադրում է քեզ համոզվել իր ասածին:

Վ. ԹՈԹՈՎԵՆՑ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԻԹԽԱՐԻ ԿԱՂՆԻՆ

Մանուկ Խաչատուրի Աբեղյանը դասական հայագիտության ամենակարկառուն դեմքերից մեկն է, նրա հաստաբեւստ, դիմակայուն ու անհողդողդ կաղնին, որի արմատները ձգվում են դեպի հայ մշակույթի հազարամյա պատմության խորքերը, դեպի Մեսրոպ Մաշտոցն ու Մովսես Խորենացին:

Աբեղյանի կենսագրությունը հարուստ չէ արտաքին դեպքերով: Նա ծնվել է 1865 թ. մարտի 17-ին Հին Նախիջևանի Աստապատ գյուղում՝ հողագործ գյուղացու ընտանիքում: Իր սկզբնական և միջնակարգ կրթությունը Աբեղյանը ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, իսկ բարձրագույնը՝ Բեռլինի, Լայպցիգի, Ենայի ու Փարիզի համալսարաններում:

Աբեղյանի կյանքի գլխավոր դեպքերը եղել են նրա երկարամյա մանկավարժական ու հասարակական բեղմնավոր գործունեությունը և մանավանդ նրա բազմարդյուն ու մեծարժեք հայագիտական աշխատությունները:

Իր գրական, գիտական, մանկավարժական և հասարակական գործունեությունը Մանուկ Աբեղյանը սկսել է անցյալ դարի 80-ական թվականներին՝ հանդիսանալով մեր ժողովրդական-ազգային զարթոնքի խոշորագույն գործիչներից մեկը: Հովհաննես Թումանյանի, Կոմիտասի, Թորոս Թորամանյանի և ուրիշների հետ նա հանդես եկավ հարազատ ժողովրդի ինքնահաստատման, նրա հնադարյան մշակույթի պահպանման ու զարգացման պատմական գործին ծառայելու անկաշկանդ մղումով՝ իրեն հուզող կարևորագույն հարցերի պատասխանը գրչի ու գաղափարի իր զինակից ընկերների նման փնտրելով հայ ժողովրդի կենսունակ ուժերի և նրա դարավոր լավագույն ավանդների մեջ:

Շուրջ 40 տարի Աբեղյանը պաշտոնավարել է ուսումնական հաստատություններում, որից 10 տարի՝ Թիֆլիսի Ներսիսյան, Հովնանյան և Շուշվա թեմական դպրոցներում, իսկ 30 տարի՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Կովկասյան և Երևանի պետական համալսարաններում:

Հազարավոր հայ երիտասարդներ ու աղջիկներ մայրենի լեզու և գրականություն են ուսանել Մանուկ Աբեղյանից: Վերջին կես դարում, Հայաստանի և Անդրկովկասի միջնակարգ ու բարձրագույն դպրոցներում, գիտահետազոտական հիմնարկներում աշխատող ուսուցիչների, դասախոսների ու գիտական աշխատողների մի զգալի մասը, ինչպես նաև այլ

բնագավառներում աշխատող շատ ականավոր դեմքեր, եղել են Մանուկ Աբեղյանի երբեմնի սաները, որոնք միշտ հպարտությամբ, երախտագիտությամբ ու խորին ակնածանքով են հիշել իրենց պատկառելի ուսուցչի և դասախոսի անունը:

Մանկավարժական աշխատանքին զուգընթաց Աբեղյանն ունեցել է և բավական արգասավոր գրական-հասարակական գործունեություն: Նա տարիներ շարունակ մասնակցել է մշակութային զանազան ընկերությունների ու կազմակերպությունների աշխատանքներին. Թիֆլիսում, Բաքվում, Երևանում և այլուր կարդացել է բազմաթիվ հրապարակային դասախոսություններ, երկար ժամանակ կատարել է Էջմիածնի գավառի հայ ուսուցիչների արհեստակցական միության մասնաճյուղի նախագահի պարտականությունը, աշխատակցել է ժամանակի աչքի ընկնող թերթերին ու հանդեսներին:

Աբեղյանը միշտ ուշիուշով հետևել է ժամանակակից գրական-հասարակական կյանքին, իր հեղինակավոր խոսքն ասել այս ամ այն խնդրի առթիվ, ուղղություն ցույց տվել նոր գրական ասպարեզ դուրս եկող, ինչպես և այդ ասպարեզում վաղուց հայտնի գործիչների կատարած աշխատանքին:

Առավել հիմնականն ու էականը, սակայն, Աբեղյանի համար հանդիսացել է գիտության բնագավառում նրա ունեցած գործունեությունը, որով նա անընդմեջ ու անձանձիր զբաղվել է շուրջ 60 տարի:

Աբեղյանի անունը անխզելիորեն կապված է հայ ժողովրդի ազգային հոյակապ էպոսի, նրա վաղնջական հավատալիքների, առասպելների, երգերի, նրա հին ու նոր լեզուների, տաղաչափության ու գրականության հետ: Նա եղել է և մնում է հայագիտության վերոհիշյալ մարզերի ամենահմուտ և ամենից ավելի հեղինակավոր հետազոտողը:

Նախասովետական շրջանի իր աշխատություններում Աբեղյանը հիմնականում հետևել է ժամանակի գիտական առաջավոր դպրոցներից մեկին՝ պատմահամեմատական դպրոցին: Բանահյուսական, լեզվական և գրական երևույթները նա դիտել է պատմական հողի վրա, վերջիններիս զարգացման ընթացքի և փոխադարձ կապի մեջ, տարբեր ժողովուրդների մշակութային հուշարձանների համեմատությամբ: Աշխատելով երևան բերել հիշյալ երևույթների մեջ առկա անցյալի մնացուկները, ներկայի հիմքերը և նրանց զարգացման հետագա ընթացքը՝ գիտնականը կատարել է հիմնավոր, պատճառաբանված ու ճշմարտացի ընդհանրացումներ:

Նմանօրինակ հիմքերի վրա են խարսխված Աբեղյանի նախասովետական շրջանի այնպիսի լավագույն աշխատությունները, ինչպիսիք են նրա նշանավոր «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» (1899 թ.), «Հայ ժողովրդական վեպը» (1908 թ.), «Աշխարհաբարի շարահյուսությունը» (1912 թ.) և այլն:

«Հայ ժողովրդական առասպելների» մեջ մի առ մի վերլուծելով Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ իբրև կարևոր պատմական սկզբնաղբյուր քննադատորեն օգտագործված հայկական առասպելների բնույթն ու բովանդակությունը՝ Աբեղյանը հայոց առասպելների այլազգի բազմաթիվ գուգահեռների վկայակոչմամբ և պատմաբանասիրական ուրիշ, ըստ ամենայնի, համոզիչ ու գորավոր փաստերով և փաստարկներով հերքում է այդ առասպելների շինծու կամ կեղծ լինելու վերաբերյալ Գրիգոր Խալաթյանի առաջ քաշած հայտնի վարկածը: Նա ապացուցում է, որ Մ. Խորենացու Պատմության մեջ հիշված առասպելները ոչ թե կեղծիք են և շինծու, այլ իրոք եղել են հայոց մեջ, և Խորենացին կամ ինքն անձամբ, կամ իր աղբյուրների միջոցով օգտվել է հայ ժողովրդական առասպելներից՝ դրանով իսկ մի անգամ ընդմիջտ հաստատելով պատմահոր գրքի բանավոր աղբյուրների վավերականությունը և վերականգնելով հայ ժողովրդի պատմության ու բազմադարյան մշակույթի հիմնաքարերից մեկը հանդիսացող այդ կարևորագույն հուշարձանի հավաստիությունն ու արժանի հեղինակությունը:

«Հայ ժողովրդական վեպի» մեջ Աբեղյանը հանգամանալից ու խորը հետազոտության է ենթարկել հայ ժողովրդի ազգային մեծ էպոսը, նրա պատումների բովանդակությունն ու ճյուղագրությունը տարածման սահմանները, վիպասանների արվեստի առանձնահատկությունները, վեպում պահպահված պատմական կարևոր հիշողությունները, նրա մեջ արտահայտված հասարակական, քաղաքական և բարոյական գաղափարները, դիցազնական-առասպելական մոտիվները, կենցաղական գծերը և այլն:

Տակավին կես դարից էլ առաջ նա հավաստել ու հաստատել է «Սասունցի Դավթի» բուն ժողովրդական, գեղջկական ստեղծագործություն լինելու հանգամանքը՝ գրելով. «Վեպը թեպետ և պատմում է Սասնո տերերի մասին, բայց գրեթե ոչ մի ազնվական բան չունի իր մեջ. այլ ազնվական և նույնիսկ թագավոր անվան տակ դուրս են գալիս մեր գյուղացիները: Վեպն ամբողջապես ռամկական, գեղջկական բնավորություն ունի. հայ

հասարակ ժողովրդի կյանքն ու հոգին ենք տեսնում այնտեղ, նրա նիստ ու կացը, պարապմունքը, բարքերը և այլն» (էջ 22):

Մանրամասն բացահայտելով վեպի տարածման ճանապարհները և ցույց տալով այն կապը, որ կա Հայաստանի զանազան վայրերի և վեպում երևան եկող գործողության տեղանքի հետ՝ Աբեղյանը եկել է այն ճիշտ եզրահանգմանը, որ «Սասունցի Դավիթը», սկզբնապես ստեղծվելով Սասնո միջավայրում, իր մեջ եղած «կենդանի ազգային սաղմերի» շնորհիվ տարածվել է ամբողջ հայության մեջ և դառել է «համազգային վեպ» (էջ 18-19). նշանակալից ու խիստ կարևոր մի ընդհանրացում, որի առաջնության պատիվը մեր իրականության մեջ պատկանում է Աբեղյանին:

Ճիշտ է, Աբեղյանի հետ միասին, նրանից առաջ ու հետո «Սասունցի Դավթի» մասին մեզանում գրել են և ուրիշները, սակայն պետք խոստովանել, որ ոչ մեկը չի կարողացել նրա նման խորը, բազմակողմանի ու մասնագիտորեն հետազոտել մեր ժողովեպը:

«Աշխարհաբարի շարահյուսության» մեջ Աբեղյանը տվել է հայերենի շարահյուսության գիտականորեն հիմնավորված ընդարձակ ու բազմակողմանի ուսումնասիրությունը: Նա ամենայն մանրամասնությամբ վերլուծել է հայերենի պարզ ու բարդ նախադասությունները, վերջիններիս կառուցվածքը, կապն ու փոխհարաբերությունը, վեր հանել խոսքի մասերի շարահյուսական դերն իրենց կոնկրետ արտահայտությամբ, բացահայտել է հայերենի հոլովների կիրառական նշանակությունները, կապերը, կապական բառերն ու շաղկապները, ցույց տվել դրանց իմաստային նրբերանգները և այլն:

Մինչև Աբեղյանը մեր ոչ մի քերական այդպիսի մանրամասնությամբ ու խորությամբ չի քննարկել հայերենի շարահյուսության խնդիրները: Առանձնապես մեծ է նրա դերը աշխարհաբարի բայական կառուցվածքը ճշտորեն ըմբռնելու և այն քերականության մեջ արտացոլելու գործում:

«Աշխարհաբարի շարահյուսությունը» երկար ժամանակ եղել է մի անփոխարինելի ձեռնարկ և ուղեցույց միջնակարգ ու բարձրագույն դպրոցների աշակերտության, ուսուցչության և դասախոսների համար: Նրանից մեծապես օգտվել են և այժմ էլ շարունակում են օգտվել հայոց լեզվի ուսումնասիրությամբ զբաղվող մեր լեզվաբան-քերականագետները:

Ֆրանսիացի աշխարհահռչակ գիտնական Անտուան Մեյեի կարծիքով «Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսությունը», անտարակույս, լավագույնն է, որ երբևէ գրվել է հայերենի քերականության վերաբերյալ:

Այն հարուստ է ճշգրտորեն ընտրված բազմաթիվ վավերական օրինակներով, որոնք ենթարկված են հիանալի դասակարգման ու վերլուծման: Դա իսկական գիտական աշխատություն է: Բոլոր նրանք, ովքեր հետաքրքրվում են ժամանակակից հայերենով, պետք է անպայման ուսումնասիրեն այս գիրքը» (1913 թ., «Ժուռնալ ազիատիկ», Բ հատոր, էջ 689-690):

Սովետական տարիներին Արեղյանն ավելի ևս կատարելագործեց ու խորացրեց նախորդ շրջանի իր աշխատությունների գրական կողմերը (պատմականություն, ճշմարտացիություն, քննական մոտեցում սկզբնաբյուրների տվյալների նկատմամբ, գիտական բարեխղճություն, առարկայական իրականության տվյալների մանրագնին ուսումնասիրություն, անաչառ եզրահանգումներ...)՝ պարզնելով հայագիտությանը մի ամբողջ շարք այնպիսի մնայուն ու ծանրակշիռ գլուխգործոցներ, ինչպիսիք են նրա «Հայոց լեզվի տեսությունը» (1931 թ.), «Հին գուսանական-ժողովրդական երգեր» (1931 թ.). «Հայոց լեզվի տաղաչափությունը, (1933 թ.), «Հայոց հին գրականության պատմություն» Ա և Բ հատորները (1944 թ.) և այլն:

«Հայոց լեզվի տեսության» մեջ Արեղյանը հանգամանորեն հետազոտել է հայերենի հնչյունաբանությունը, բառակազմությունն ու ձևաբանությունը, մասնագիտական հմտությամբ պարզաբանել ու հիմնավորել է աշխարհաբարի բայական կառուցվածքի համակարգը, խոսքի մասերը, բառաբարդություններն ու նրանց տեսակները, վեր է հանել հայերենի բոլոր ածանցները՝ բացահայտելով վերջիններիս իմաստային նրբերանգները, ծագումն ու զարգացումը և այլն:

Թե՛ իր բնությամբ և թե՛ նյությամբ տվյալ գործն ամբողջապես նորություն էր մեզանում, որը հայ քերականագիտությունը դուրս բերեց իր նախկին նորմատիվ վիճակից և հասցրեց փիլիսոփայական բարձր աստիճանի: Այն աչքի է ընկնում հեղինակի բազմաթիվ դիտողություններով ընդհանրապես հայոց լեզվի և առանձնապես վերջինիս հնչյունների արտաբերության, դրանց տեսակների ու կրած փոփոխությունների վերաբերյալ:

Ինչպես իր քերականագիտական մյուս աշխատություններում, այնպես էլ այստեղ Արեղյանը ընդհանուր լեզվաբանական խնդիրների բացատրության մեջ կանգնած է հիմնականում մատերիալիստական դիրքերի վրա: Նա ելակետ ունի այն միանգամայն ճիշտ տեսակետը, որ յուրաքանչյուր լեզվի քերականություն, ինչքան էլ այն ընդհանուր գծեր ունենա ուրիշ լեզուների հետ, պետք է խարսխված լինի տվյալ լեզվի առանձնահատկությունների վրա:

«Հին գուսանական, ժողովրդական երգերում» Աբեղյանը, մանրագնին ու հանգամանակից քննության ենթարկելով «հայրենների» լեզուն ու ոճը, բովանդակության մոտիվները, նրանց տարբերակները, դիրքը, տների ու տողերի շարժունությունը և այլն, ակներևորեն ցույց է տվել, որ դրանք բուն ժողովրդական երգեր են՝ դարերի ընթացքում ստեղծված ու մշակված հայ գուսանների ու գուսանուհիների բազմաթիվ սերունդների կողմից, հայոց բազմադարյան բանաստեղծության ամենագեղեցիկ, ամենակյանքոտ և ամենից ավելի ազգային ստեղծագործություններից, որոնք իրավունք ունեն իրենց պատվավոր տեղը գրավելու համաշխարհային քնարերգության լավագույն գոհարների շարքում:

«Հայոց լեզվի տաղաչափության» մեջ Աբեղյանը մանրամասն հետազոտել է հայոց լեզվի բառերի ու խոսքերի շեշտը, հայկական ոտանավորի տակտերն ու հանգերի տեսակները, բացահայտել հայերեն ոտանավորի՝ դարերի ընթացքում կրած փոփոխությունները և որոշել նրա զարգացման օրինաչափությունները՝ սկսած VII դարից մինչև սովետական բանաստեղծները ներառյալ:

Աբեղյանն առաջինն էր մեզանում, որ նկատի ունենալով հայ հին քերական-արվեստաբանների համապատասխան կարծիքներն ու տեսությունները, ինչպես նաև եվրոպական ու ռուսական տաղաչափական նորագույն համակարգները, ստեղծեց հայոց լեզվի տաղաչափության գիտական և ամբողջական համակարգը՝ դրանով իսկ իր խոշորագույն ավանդը մուծելով բազմադարյան հայ բանաստեղծության ուսումնասիրության գործի մեջ և տեսական ու գործնական մեծ օգնություն ցույց տալով հայ գրականագետներին ու բանաստեղծներին:

«Հայոց հին գրականության պատմության» մեջ Աբեղյանը իրեն հատուկ խորությամբ քննության է առել հայոց հին գրականության բոլոր հիմնական թեմաներն ու հեղինակներին՝ վերջիններիս հետ սերտորեն առնչվող պատմաբանասիրական բազմաթիվ կարևոր հարցերի հետ միասին:

Մինչև Աբեղյանի ներկա աշխատությունը հայոց հին գրականության վերաբերյալ մեզանում լույս տեսած բոլոր գործերը եղել են հիմնականում բանասիրական, փաստագրական շարադրանքներ կամ էլ համառոտ ձեռնարկներ միջնակարգ դպրոցների համար: Աբեղյանն առաջինն էր, որ մանրամասն, բազմակողմանի ու խորը վերլուծեց ու գնահատեց այդ գրականության կարևորագույն հուշարձանների հասարակական-գաղափար-

րական բովանդակությունը, նրանց լեզուն ու գեղարվեստական առանձնահատկությունները, տվեց հայոց հին և միջնադարյան գրականության գիտական պարբերացումը՝ ելնելով ոչ թե ինչ-որ ձևական սկզբունքներից, ինչպես այդ արել էին իր նախորդներն ու ժամանակակիցները, այլ ըստ բովանդակության, նայելով գրականության արտահայտած պատմական իրականությանը, այդ գրականության հիմնական և բուն էությունը, նրա ոգին և ընդհանուր ուղղությունը իրավացիորեն համարելով օտարերկրյա բռնապետությունների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական դարավոր անդուլ մաքառումներն ու քաղաքական պայքարը:

Վերլուծական-հետազոտական աշխատանքների հետ միասին թե՛ նախասովետական և թե՛ սովետական շրջանում Աբեղյանը իրականացրել ու տպագրել է նաև հայագիտության համար անգնահատելի նշանակություն ունեցող բազմաթիվ սկզբնաղբյուր-բնագրեր՝ հիտորեն օգտագործելով դրանց մեջ տվյալ ուղղությամբ դասական հայ բանասիրության՝ տարիների ընթացքում կուտակած ուսանելի հարուստ փորձը և միաժամանակ հանդես բերելով աղբյուրագետ-բանասերի իր մեծ ձիրքն ու լայն գիտանքները:

Աբեղյանի անվան հետ կապված կուլտուր-պատմական, ճանաչողական ու գեղարվեստական խոշոր արժեք ներկայացնող այդպիսի սկզբնաղբյուր-բնագրեր են «Դավիթ և Մհերը» (1888 թ.), Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գիտական հրատարակությունը (պատրաստված Մեթ Հարությունյանի աշխատակցությամբ, 1913 թ.), «Սասնա ծռերի» հոյակապ հատորները (Կարապետ Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ, 1936, 1944-1951 թթ.), «Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպի հորեյանական համահավաքի առաջին ճյուղը (1939 թ.), «Ժողովրդական խաղիկները» (1940 թ.), «Գուսանական-ժողովրդական տաղերը» (1940 թ.), Կորյունի «Վարք Մաշտոցի» գիտական հրատարակությունը (1941 թ.):

Մանուկ Աբեղյանը այն գիտնականներից չէր, որոնք տարիներ ու տասնամյակներ շարունակ կարծրացած հայացքներով մնում են անշարժ կանգնած միևնույն կետի վրա: Լինելով ըստ ամենայնի հետևողական ու սկզբունքային՝ նա միաժամանակ՝ իբրև առաջավոր հայացքների տեր մտածող, միշտ ուշիուշով հետևել է գիտության նվաճումներին և ըստ այսմ վերանայել, լրացրել, խմբագրել ու մշակել է իր հետազոտությունները: Նրա թե՛ բանագիտական և թե՛ քերականագիտական ու գրականագի-

տական աշխատություններում ակնբախ է տարիների ընթացքում դեպի առաջ և դեպի խորքը կատարված այդ շարժումը:

Իր գիտական եզրակացություններն ու ընդհանրացումները Մանուկ Աբեղյանը միշտ ու ամենուր հիմնավորել է բազմակողմանի և հարուստ փաստերով: Հայտնի խոսքն այն մասին, թե «փաստերը գիտնականի օղն են», շատ են հարմարվում Աբեղյանին: Նա բացառիկ ուշադրություն է նվիրել փաստերի ուսումնասիրությանը, ամեն կերպ ձգտել է թափանցել վերջիններիս ծագման գաղտնիքի մեջ, փնտրել ու գտել նրանց կառավարող օղակները:

Փաստերի հետ միասին Աբեղյանը հավասար ուշադրություն է դարձրել նաև հետազոտական մեթոդին: «Բանասերը, ինչպես և ամեն իսկական գիտական աշխատող, – գրել է նա, – միայն մեկ մեթոդ ունի, այն է՝ նա բազմակողմանի կերպով ճիշտ դիտում է օբյեկտիվ իրականությունը և դրանից հանում հասկացությունը, կամ ինչպես փիլիսոփայորեն ասում են, մտածությունը անդրապատկերում է օբյեկտիվ իրականությունը: Սովորական լեզվով ասում ենք, թե հետազոտողը ուղիղ հետևության հասնելու համար պետք է բազմակողմանի ուղղատեսություն ունենա իր դիտած առարկայի նկատմամբ և իր հետազոտության ժամանակ լինի ուղղամիտ և ուղղադատ («Վիշապներ», էջ 28): Ճիշտ այդպիսին էր ահա ինքը՝ Աբեղյանը: **Ուղղամտությունն ու ուղղադատությունը** նրա գիտական մեթոդի ամենաբնորոշ հատկանիշներից են:

Շատ ուրիշ խոշոր գիտնականների նման Աբեղյանի աշխատություններում ևս կարելի է գտնել վիճելի կետեր, պակաս հիմնավոր որոշ դրույթներ, նվազ համոզիչ առանձին կարծիքներ, որոնք երբեք չեն կարող նսեմացնել այն հսկայական գործը, որ կատարել է նա գիտության համար:

Այդուհանդերձ, գտնվեցին մեզանում որոշ մարդիկ, որոնք ինչ-ինչ դրդումներով, զինված ժամանակի ընդունած պիտակներով, փորձեցին վարկաբեկել մեծ գիտնականին:

Սակայն հայ ժողովուրդը, հանձինս իր կառավարության և լավագույն մտավորականների, հակահարված տվեց այդ մարդկանց՝ արժանին հատուցելով Մանուկ Աբեղյանին նրա հասարակական, մանկավարժական բեղմնավոր գործունեության և մասնավորապես հայագիտությանը մատուցած մեծագույն ծառայությունների համար:

1925 թ. Աբեղյանը կարգվեց Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի խորհրդի նախագահ: 1935 թ. Աբեղյանին շնորհվեց գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում: Նույն թվականին նա ստացավ նաև բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան՝ առանց դիսերտացիայի պաշտպանության:

1843 թ. նա ընտրվեց նոր հիմնադրված Հայկական ակադեմիայի իսկական անդամների առաջին կազմում: 1944 թ. Աբեղյանի մահվան կապակցությամբ Հայաստանի կառավարությունը մեծ գիտնականի հիշատակը հավերժացնելու նպատակով հատուկ որոշում ընդունեց Հայկական ՍՍՌ ԳԱ գրականության ինստիտուտը և Երևան քաղաքի միջնակարգ դպրոցներից մեկը կոչել Մանուկ Աբեղյանի անունով, հրատարակել նրա երկերի լիակատար ժողովածուն:

Այլ կերպ չէր էլ կարող լինել: Ժողովուրդը միշտ գիտե գնահատել իր իսկական երախտավորներին: Մանուկ Աբեղյանը այդպիսի երախտավորներից էր: Հայ ժողովրդական բանահյուսությանը, հայոց լեզվին ու գրականությանը նվիրված նրա բազմահատոր աշխատությունները դասական հայագիտության անկրկնելի կոթողներից են: Դրանց մեջ ցայտուն դրսևորված են մեծանուն գիտնականի բնատուր խոշոր տաղանդը, իմաստուն միտքն ու կուռ տրամաբանությունը, որ նա առատորեն ժառանգել էր հողի աշխատավոր իր ծնողներից ու նախնիներից: Դրանց մեջ լիովին ներդրված են լեզվական, պատմական, գրական ու փիլիսոփայական այն հարուստ ու խորը գիտանքները, որ նա ստացել էր ճեմարանական և համալսարանական իր լավագույն ուսուցիչներից ու դասախոսներից: Դրանցից առատորեն շողարձակում է նրա անկաշառ ու ներհուն հայրենասիրությունը, որն իբրև նվիրական ավանդ հաղորդել էր նրան իր հարազատ ժողովուրդը:

Մանուկ Աբեղյանի հայագիտական բազմահատոր գրքերը հայ ժողովրդի հոգեկան հազարամյա ստեղծագործության այն անսպառ աղբյուրներից են, որոնցով հագեցել են նրա ժամանակակիցները, և որտեղից միշտ պիտի շարունակեն առատորեն օգտվել գիտության ծարավի գալիք սերունդները:

ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ
«Գրական թերթ», № 39, 1964

ԱԲԵՂՅԱՆ ԵՂԵԼ Է, ԱԲԵՂՅԱՆՆԵՐ՝ ՀԱՁԻՎ ԹԵ

(Ն. Մառ)

(Մ. Աբեղյանի ծննդյան 100-ամյակի առիթով)

Նախիջևանի Աստապատ գյուղը XIX դարի կեսերին բնորոշվում էր իր նահապետական նիստուկացով, բարձր անգրագիտությամբ, որն իր հերթին անկուր շահագործման համար պայմաններ էր ստեղծում: Այստեղ էր, որ հողագործ Խաչատուրի ընտանիքում 1865 թ. մարտի 17-ին աշխարհ եկավ նրա երկրորդ որդին, որը, ի հավերժացումն պապի, ժառանգեց նրա անունը՝ Մանուկ: Խաչատուրը մի առանձին սեր չունեց դեպի «գիրն ու դալամը», բայց որդուն որոշ կրթություն տալուց հետո՝ 1876 թ., ուղարկում է Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանում ուսանելու: Ի բնե աշխույժ ու աչքաբաց Մանուկը այստեղ էլ աչքի է ընկնում մեծ ընդունակություններով, այստեղ էլ նրա անվան դիմաց դասամատյանում փայլում են «գովելի» և «հույժ գովելի» նիշերը: 1885 թ. փայլուն ցուցանիշներով ավարտելով ճեմարանի լսարանական բաժինը՝ Աբեղյանը սկսում է հայոց լեզու և հայ հին գրականություն դասավանդել նույն ճեմարանում: Այս էր այն հնարավոր բարձրակետը, որն իր՝ Մանուկի համար երազում ու փայփայլում էր հայրը: Բայց այսքան չէին և այս չէին Աբեղյանի ձգտումները: Յոթ տարի դասավանդելուց հետո՝ 1893 թ., մեկնում է արտասահման՝ կատարելագործվելու: Ուսումնառությունը շարունակելով Ենայի (բանասիրության գծով), Լայպցիգի (պատմաբանասիրության գծով), Բեռլինի (փիլիսոփայության գծով) և Փարիզի (պատմության ու տեսության գծով) համալսարաններում և ամբարելով վիթխարի գիտելիքներ՝ Աբեղյանը 1898 թ. պաշտպանության է ներկայացնում «Հայկական ժողովրդական հավատալիքները» աշխատությունը գերմաներեն, որի համար Ենայում նրան շնորհվում է բանասիրության դոկտորի գիտական աստիճան:

Բարձրթողի արված չէր հին հայկական ժողովրդական հավատալիքների քննության բնագավառը: Եթե չհիշատակենք ուրիշները, 1895 թ. հրատարակվել էր Ալիշանի «Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց» աշխատությունը, որի դերն ու նշանակությունը դժվար է գերազնահատել: Թվում է՝ ինչ ուներ ասելու երիտասարդ գիտնականը, որն առաջին քայլերն էր անում այդ ասպարեզում: Բայց Աբեղյանի աշխատու-

թյանը վիճակված չէր մնալու ստվերում: Քննելով հայկական հեթանոսական հավատալիքները և համադրելով նրանց եվրոպականի, հատկապես հին հունահռոմեականի հետ, այս ընթացքում բացահայտելով մի շարք կարևոր առանձնահատկություններ՝ Աբեղյանն անում է իր ուշագրավ, հաճախ համարձակ եզրակացությունները, որոնք չեն հնացել առ այսօր:

1898 թ. վերադառնալով հայրենիք՝ Աբեղյանը Գևորգյան ճեմարանում նորից ստանձնում է հայոց լեզվի և գրականության դասերը: Այստեղ նա մնում է մինչև 1914 թիվը և իրար ետևից հրատարակում անուն և կշիռ ունեցող իր մի քանի ուսումնասիրությունները: Դեռ 1899 թ. նա կարողացել էր հայտնաբերել և հրատարակել հայկական ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավիթ» երկրորդ տարբերակը (առաջինը հրատարակել էր Գարեգին Սրվանձտյանը 1874 թ.) և այժմ ձեռքի տակ ունենալով ուրիշ տարբերակներ էլ՝ ձեռնամուխ եղավ նրանց քննական ուսումնասիրությանը: Արդյունքը հանդիսացավ «Հայկական ժողովրդական էպոս» աշխատությունը, որը մի անգամ ևս հավաստում է Աբեղյան բանասերի բացառիկ կարողությունները: Աբեղյանն առաջին անգամ ցույց տվեց, որ «Սասունցի Դավիթը» հիմնականում ձևավորվել է IX-X դարերում, երբ հայ ժողովուրդը կենաց ու մահու պայքար էր մղում տիրապետողների դեմ, իսկ այդ վիպերգում առկա են տարրեր, որոնք գալիս են դեռ հեթանոսությունից: Քննելով վիպերգի ծագումնաբանական ակունքները՝ նա ապացուցեց, որ վերջինիս հիմնական մասը, այսպես ասած կորիզը, ձևավորվել է պատմական Հայաստանի հարավում, գերազանցապես Մուշի և Վանի շրջաններում: Մինչև իր կյանքի վերջն էլ Աբեղյանը զանազան առիթներով անդրադարձավ «Սասունցի Դավիթին»: Նրա անմիջական ղեկավարությամբ հավաքվեցին այդ վիպերգի 50 տարբերակները (օգնական՝ Կ. Մելիք-Օհանջանյան), որոք երեք մեծ հատորներով հրատարակվեցին 1936-1944 թվականներին:

1899 թ. էջմիածնում հրատարակված «Հայ ժողովրդական առասպելները Խորենացու «Հայոց պատմության» մեջ» ծավալուն աշխատությունը արդեն բացահայտում է Աբեղյանի՝ որպես ականավոր հայագետ-բանասերի, մեծ կարողությունները: Բանն այն է, որ ընդունվել և նույնիսկ քաղաքացիական իրավունք էր ստացել այն տեսությունը, որ Խորենացու մոտ հիշատակված հայկական ժողովրդական առասպելները (Վահագն, Տորք Անգեղ, Արա Գեղեցիկ-Շամիրամ, Արտաշես-Սաթենիկ և այլն) ժո-

ղովրդական չեն, որ նրանց հնարել է պատմահայրն ինքը, և հետևաբար նրանք զուրկ են գիտական արժեքից: Հակադրվելով այս կարգի բոլոր «տեսություններին»՝ Աբեղյանը ցույց տվեց այդ առասպելների իրոք ժողովրդական լինելը և որպես այդպիսին՝ հայ ժողովրդի մտավոր զարգացման նախնական շրջանի արտահայտություն հանդիսանալը: Ի մի բերելով մինչև XIII դարի մեր պատմիչների հաղորդած մեծ ու փոքր փաստերը՝ Աբեղյանն ապացուցեց, որ այդ անպաճույճ, առաջին հայացքից անարժեք թվացող առասպելները պարունակում են կարևոր տվյալներ հայ ժողովրդի կազմավորման և նրա սկզբնական շրջանի անգիր պատմության վերաբերյալ և որպես այդպիսին՝ ուսումնասիրողների համար եզակի արժեք են ներկայացնում:

Աբեղյանի՝ այս շրջանում գրած գործերից ոչ պակաս ուշագրավ են «Աշխարհաբարի քերականություն» (1906 թ.), «Աշխարհաբարի հոլովները» (1908 թ.), «Գրաբարի համառոտ քերականություն» (1908 թ.) և ուրիշ ծավալուն աշխատություններ, ինչպես նաև պարբերականներում հրատարակվող բազմաթիվ ուսումնասիրությունները՝ նվիրված մեր գրականության զանազան հարցերին: Հիշյալ շարքի մեջ առանձնանում են «Հազար ու մի խաղ» խորագիրը կրող հայկական ժողովրդական երգերի երկու ժողովածուները, որոնք Աբեղյանը կազմել էր իր ընկերոջ ու բարեկամի՝ Կոմիտասի հետ մեկտեղ: Աբեղյանն ու Կոմիտասը՝ հայ գրականության ու երգի այդ երկու խոշոր մեծությունները, ջանադիր աշխատանքով հավաքեցին, դասդասեցին և ուսումնասիրեցին մինչև 100 երգ, որոնց հրատարակությունը իրադարձություն հանդիսացավ մեր մշակույթի անդաստանում:

1920 թվականը նոր դեպքեր և նոր իրադարձություններ բերեց շնչահեղձ լինող հայ ժողովրդին: Դադարեցին արյունահեղ, եղբայրասպան պատերազմները: Հայաստանում ստեղծվեց սովետական իշխանություն, որն անհապաղ ձեռնամուխ եղավ հետամնաց Հայաստանը վերափոխող տիտանական աշխատանքների: Առաջին քայլերից մեկը եղավ Երևանում համալսարան հիմնադրելը: Այստեղ էլ 1921 թ. հրավիրվեց Աբեղյանը՝ հայոց լեզու, բանահյուսության և հայ հին գրականության պատմություն դասավանդելու համար:

Աշխատանքը շատ էր, անելիքն ու կատարելիքը՝ առավել ևս: Անհրաժեշտ էր կարճ ժամանակամիջոցում պատրաստել հմուտ մասնագետներ,

որոնք կարողանային առաջ տանել աճող սերնդին կրթելու գործը: Անհրաժեշտ էր դրանից առավել օժտվածներին առաջ քաշել հայագիտության բնագավառը, արժանավոր ու հուսալի փոխանորդներ պատրաստել: Հայ հին միջնադարյան գրականության բազմաթիվ ներկայացուցիչներ կային, որոնց մասին կամ ընդհանրապես ոչինչ չէր ասվել, կամ թիավել էին հակագիտական, սխալ կարծիքներ, որոնք վերջնական խոսք լինելու հավակնությունն ունեին, և որոնք անհրաժեշտ էր ինչպես հարկն է հերքել: Անհրաժեշտ էր վերջապես ստեղծել հայոց լեզվի ու գրականության ամբողջական ու գիտական դասընթաց: Եվ Աբեղյանը երկար սպասել չտվեց: 1931 թ. հրատարակվեց «Հայոց լեզվի տեսություն» և 1933 թ.՝ «Հայոց լեզվի տաղաչափություն»: Այդ ուսումնասիրությունները եղան այն գործերը, որոնց վիճակված էր ուղենիշ լինել արդի հայերենի հետագա բոլոր ուսումնասիրողների համար: Աբեղյանը կարգավորեց աշխարհաբար հայերենի գործող օրինաչափությունները, տվեց նրանց գիտական հիմնավորվածությունն ու մեկնաբանությունը: Հայտնաբերեց հայոց լեզվի տաղաչափական արվեստի հիմունքները, չգերազանցված պարզությամբ տվեց հայերեն լեզվամտածողության բոլոր սահմանումները, որոնց մասին նույնիսկ ամենախոշոր մասնագետները աղոտ ու թերատ պատկերացումներ ունեին:

1935 թ. ծննդյան 70-ամյակին երկարատև ու անբասիր ծառայությունների համար Մանուկ Աբեղյանին շնորհվում է գիտության վաստակավոր գործչի կոչում: Նույն թվականին համալսարանի գիտական խորհուրդը Մանուկ Աբեղյանին առանց պաշտպանության շնորհում է բանասիրական գիտությունների դոկտորի բարձր աստիճանը: Այս շրջանում է, որ հրատարակվեց նրա «Գուսանական ժողովրդական տաղեր, հայերեններ և անտունիներ» սովորածավալ ժողովածուն, որը մի տեսակ ամփոփումն էր այդ բնագավառում հեղինակի կատարած տարիների քրտնաջան աշխատանքի: Այս ժամանակներից էր, որ Մանուկ Աբեղյանի մոտ հղացավ և աստիճանաբար սկսվեց կերպարանք ստանալ «Հայ գրականության պատմություն» գրելու գաղափարը վեց ծավալուն հատորների սահմաններում, որը պետք է ընդգրկեր հայ մշակույթի այդ ձևի գիտական պատմությունը՝ սկսած հեթանոսական անգիր ժամանակներից մինչև XIX դարը:

1943 թ. Հայաստանն ունեցավ իր գիտությունների ակադեմիան, հետևաբար և իր ակադեմիկոսները: Եվ նույն 1943 թ., 23 ալ անձանց հետ միասին, Մանուկ Աբեղյանին շնորհվում է Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի իսկական անդամի պատվավոր տիտղոսը:

Մանկավարժական դասախոսական լարված աշխատանքին զուգընթաց նա ավելի մեծ եռանդով շարունակեց աշխատանքը «Հայ գրականության պատմության» առաջին հատորի վրա, որը, ըստ նախնական պլանի, պետք է ընդգրկեր հին շրջանը:

Դժվարությունները բազմաթիվ էին: Նախ՝ սխալ էր գնահատված մեր դասական հեղինակների մեծ մասը: Խորենացու վերաբերյալ, օրինակ, եվրոպական բանասիրությունը պնդեց, որ նա ոչ թե V դարի պատմիչ է, ինչպես ընդունված է առհասարակ, այլ VI, VII և նույնիսկ VIII դարի: Այս տեսակետն ապացուցելու համար բերվում էին հիմնավոր թվացող մի շարք փաստեր: Ագաթանգեղոսի վերաբերյալ առաջ քաշվեց այն տեսությունը, որ վերջինս ազգությամբ հույն է եղել, իր պատմությունը գրել է հունարեն և հետագայում այն թարգմանվել է հայերեն. հետևաբար Ագաթանգեղոսը հայ պատմիչ չի կարող համարվել: Ժխտողական քննադատության ենթարկվեց Փավստոսը: Նշելով նրա պատմության մեջ եղած մի քանի սխալները, բանասերները շտապեցին պնդել, որ Փավստոսի աշխատությունը ընդհանուր առմամբ հերյուրանք է, զուրկ գիտական հավաստիությունից և, հետևաբար, պատմական որևէ արժեք ներկայացնել չի կարող: Սխալ էր, վերջապես, պնդումը Նարեկացու մասին: Վերածննդի մեր նշանավոր ներկայացուցիչը ներկայացվում էր սոսկ որպես մի ջերմեռանդ հավատացյալ, որն ընդամենը իր լավահառաչ աղոթքներն է առաքում առաստված: Եթե սրանց էլ ավելացնենք նյութի քննման բնույթի բազմաթիվ սխալները, ապա զոնե ընդհանուր առմամբ հասկանալի կդառնա Աբեղյանի կատարելիք գործի ամբողջ բարդությունը:

Տարիների համառ, անդադրում աշխատանքով, առանց խնայելու իրեն, չխորշելով սև աշխատանքից, գրկվելով հանգստից՝ Աբեղյանը ի վերջո ավարտեց «Հայ գրականության պատմության» առաջին հատորը՝ ավելի քան 40 մամուլ ծավալով: Մի աշխատանք, որը դարակազմիկ երևույթ եղավ հայ գրականագիտության պատմության մեջ:

Ընկերների ջանքերով ու կատարմամբ 1946 թ. ետմահու հրատարակվեցին «Հայ գրականության պատմության» երկրորդ՝ թերավարտ հատորը

(առաջին հատորը 1948 թ. թարգմանվեց ռուսերեն), ինչպես նաև Աբեղյանի մի քանի այլ գործերը:

Խոժոռադեմ, ժլատ՝ բառ ու բանի օգտագործման մեջ, պատրաստ օգնելու իր կարիքն զգացող յուրաքանչյուրին, բայց խիստ ու անխնա հայագիտությունը հեշտ վաստակի ուղի համարողների հանդեպ, սկզբունքային ու անաչառ այս կամ այն մարդու, երևույթի, իրողության մասին կարծիք հայտնելիս. այսպիսին մնաց Աբեղյանը ժամանակակիցների հիշողության մեջ:

Եվ այսպես էլ կմնա հավերժ:

ՍՈՒՐԵՆ ՇՏԻԿՅԱՆ
«Ավանգարդ», № 61, 1965

ԱԲԵՂՅԱՆԸ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Բազմավաստակ հայագետ Մանուկ Աբեղյանը, հայ ժողովրդի փրկությունը և նրա մշակույթի զարգացումը կապելով ռուս և հայ ժողովուրդների համագործակցության հետ, դեռ երիտասարդական տարիներին հանդես է եկել ռուս գրականության պրոպագանդոյի դերում:

1890-1892 թթ., լինելով Թիֆլիսի հայ հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ, նա հասարակական կարգով ակտիվ մասնակցել է ռուսերենից կատարած թարգմանությունների գրախոսման, խմբագրման աշխատանքներին, ինքն էլ է կատարել թարգմանություն: Ընկերության նպատակն էր օտար հեղինակներից կատարված թարգմանությունների հրատարակությամբ ժողովրդի մեջ վառ պահել ազգային ազատագրական իդեալ, նպաստել նրա ազգային ինքնագիտակցության բարձրացմանը: Դրա համար էլ ընկերության խմբագրական մասնաժողովը ծրագրում է տպագրել ռուս գրողների այն ստեղծագործությունները, որոնցում դեմոկրատ հեղինակներն արծարծել են սոցիալական անհավասարությունը, ժողովրդի մղած հերոսական պայքարը օտարերկրյա թշնամիների դեմ: Այդ կարգի գործ էր Գոգոլի «Տարաս Բուլբան», որի լիակատար թարգմանության կարիքը խիստ զգացվում էր: Ընկերությունը առաջարկում է Աբեղյանին ձեռնարկել այդ դժվարին և պատվավոր աշխատանքը: Նա համաձայնվում է թարգմանել այդ հայրենասիրական երկի ոչ թե երկրորդ, այլ առաջին վարիանտը: «...Երկրորդ վարիանտում Գոգոլը փառաբանել է ռուս թագավորներին,– բացատրում է Աբեղյանը,– ուստի և կարիք չկա, որ մեր դպրոցները փակող, մեր կուլտուրան ճնշող ռուս թագավորների գովքը տանք մեր ժողովրդին: Իսկ առաջին վարիանտում այդ փառաբանությունը չկա»: Պատճառաբանության համոզիչ լինելը տեղիք չտվեց վիճաբանության, և 1892 թ. լույս ընծայվեց այդ գիրքը՝ Աբեղյանի թարգմանությամբ: Միանգամայն հեշտ է նկատել Ս. Ջորյանը, որ այդ թարգմանությունը «...այսօր էլ շատ ուսանելի կոդմեր ունի»: Նա կարողացավ գոգոլյան վրձնի այդ «պայծառ ու շլացուցիչ խոշոր պոեզիայով» (Բելինսկի) գրված երկը թարգմանել ոչ թե բառացի, այլ նրա սիրտը, ուժն ու ոգին՝ պահպանելով գեղարվեստական առանձնահատկությունները և հեղինակի նրբին հումորը:

Ի մի բերելով հրատարակչական ընկերություններին ներկայացրած թարգմանությունների մասին Մ. Աբեղյանի տված կարծիքները՝ նկատում ենք, որ նա առաջնորդվել է այն ճիշտ սկզբունքով, թե որքանով է թարգմանիչը կարողացել թափանցել, հասկանալ ստեղծագործության էությունը, ցուցաբերել ստեղծագործական մոտեցում, հարազատ մնացել հեղինակի արտահայտչական ձևին: Ելակետ ընդունելով և առաջնորդվելով այդ պահանջներով՝ Աբեղյանը 1891-1892 թթ. բացասական կարծիք է տալիս հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովին ներկայացրած Պուշկինի «Պոլտավա», «Ավագակ եղբայրներ», Գոգոլի «Շինել», «Ռևիզոր», Տուրգենևի «Նախօրեին» թարգմանություններին: Նա իրավացիորեն գտնում էր, որ չի կարելի թարգմանական խոտանով փչացնել ժողովրդի գեղագիտական ճաշակը, որ դասական գրականությունը պետք է ունենա բարձրարժեք թարգմանություն:

Լինելով խմբագրական մասնաժողովի անդամ՝ Մ. Աբեղյանը պաշտպանում է այն կարծիքը, որ անհրաժեշտ է թարգմանել ոուս և եվրոպական երգիծաբանների ստեղծագործությունները: Նա հաճույքով է խմբագրում Մ. Ղազարյանի թարգմանած՝ Շչեդրինի «Իդեալիստ ծածանը», «Իմաստուն ծանձաղուկը», «Խիդճը կորավ» պատմվածքները, որոնք ընկերությունը լույս է ընծայել 1892 թ. «Երեք վիպակներ» խորագրով:

Այսքանով չի սահմանափակվում Մ. Աբեղյանի՝ ոուսերենից կատարած թարգմանական, խմբագրական աշխատանքը:

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
«Սովետական Հայաստան», № 120, 1965

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Մանուկ Աբեղյանը հույժ իմաստալից ու բեղուն գիտական գործունեության փառապանծ ուղի է անցել: Իր կյանքի շուրջ 60 տարիները նա նվիրաբերել է հայ բազմադարյան մշակույթի ու գրականության և բազմադարյան հայոց լեզվի ուսումնասիրության սուրբ գործին՝ ստեղծելով մեկը մյուսից գեղեցիկ, մեկը մյուսից հիասքանչ կոթողներ, որոնք բացառիկ մեծ տեղ են բռնում հայագիտության մեջ և կազմում նրա ուրույն զարդը:

Մանուկ Աբեղյանի գիտական գործունեությունը նշանավորվում է ու արժեքավորվում նրա ստեղծած հոյակապ գործերով, որոնք, ընդգրկելով հայ մշակութային կյանքի բազմաթիվ ու բազմատեսակ բնագավառները, համապարփակ ու հանրագիտային բնույթ են կրում:

Եվ իսկապես, Աբեղյան-գիտնականի ամենաբնորոշ առանձնահատկությունը բառիս բուն իմաստով նրա **մեծագույն հանրագետ** լինելն է:

Աբեղյանը և՛ բանահավաք է ու բանագետ, և՛ գրականագետ է ու գրականության պատմաբան, և՛ լեզվաբան է ու քերական, և՛ թարգմանիչ է ու տեքստաբան, և՛ բառարանագիր է ու լեզվաշինարար... Ըստ որում, բոլոր դեպքերում էլ նա հանդես է եկել իբրև նորարար և հետազոտելով նոր՝ կա՛մ բնավ չուսումնասիրված, կա՛մ քիչ ու անբավարար ուսումնասիրված շատ ու շատ ճյուղեր՝ դրել դրանց հաստատուն հիմքերը և լայնահուն ու լայնածավալ ուղիներ բացել հայագիտության ու դրա հետագա զարգացման համար:

Աբեղյանը անելիք է ունեցել այնտեղ կամ այն բնագավառում, որտեղ պետք էր գիտական ծանրակշիռ խոսք ասել, զարգացնել ու առաջ տանել գիտական միտքը, գիտությունը: Նորով է սկսվում ու նորով ավարտվում մեծանուն հայագետի, հայագիտության անխոնջ մշակի, տքնաջան հետազոտողի, գիտական հարուստ ու բազմաբովանդակ գործունեությունը:

Հիշենք նախ՝ բանահյուսության-բանագիտության բնագավառը:

Ինչպիսի՜ ծովածավալ աշխատանքներ. Մ. Աբեղյանը տարիներ շարունակ ու անդադրում, եթե մի կողմից ի մի է ամբարել ամենամեծ իմաստունի՝ Ժողովրդի ստեղծագործության (հայ Ժողովրդական էպոս, վիպական երգեր, տաղեր, Ժողովրդական խաղիկներ և այլն) բազմահարուստ գանձերը, այսինքն՝ բուն նյութը, ապա, մյուս կողմից, տեսական մեծարժեք ուսումնասիրություններ է կատարել՝ բացահայտելով նրա բնույթն ու

էությունը, պատմական զարգացումը, առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, այլև արժեքն ու նշանակությունը հենց այն ստեղծողի ու կրողի հոգևոր կյանքում:

«Մասունցի Դավթի», ինչպես նաև ժողովրդական քնարերգությանը վերաբերող ժողովածուներով ու ուսումնասիրություններով մեծ գիտնականը ցույց է տվել հայ ժողովրդի ստեղծագործական մեծ ուժն ու կարողությունը և ամենախոր կերպով բացահայտելով նրա հոգու գաղտնիքները՝ բանահյուսությունը դրել մի նոր՝ գիտական բարձր աստիճանի վրա:

Մեր առաջ իր ամբողջ վեհությամբ վեր է հառնում ահա նաև գրականագետ ու գրականության պատմաբան Մանուկ Աբեղյանը՝ հատկապես «Հայոց հին գրականության պատմության» երկու սովոր հատորներով, որոնք, նույնպես տարիների աշխատանքի արդյունք լինելով, այլ բան չեն, քան հայ բազմադարյան գրականությունն ու գրական մշակույթը հնագույն ժամանակներից մինչև XIX դարը պատկերող մեծարժեք ու մնայուն հանրագիտարաններ: Աբեղյանը ոչ միայն ուշիուշով կարդացել, այլև հանգամանորեն ուսումնասիրել է ու հետազոտել հայ հին ու միջնադարյան գրականության ամբողջական ու գիտական պատմությունը: Նա այնտեղ ուրվագծել է հայոց հին գրականության պատմական զարգացման փուլերն ու ուղիները, քննել պատմություն դարձած ու արժեք ներկայացնող ամեն մի ստեղծագործություն, որոշել նրա բնույթն ու էությունը, տվել բոլոր նրանց վառ դիմանկարը, ովքեր գործել են գրչով ու բանիվ...:

Նա խոսել է Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի, Կորյունի, Փ. Բուզանդի, Մ. Խորենացու, Գ. Նարեկացու, Հ. Սարկավագի, Ն. Շնորհալու, Մ. Գոշի, Վ. Այգեկցու, Ֆրիկի և շատ-շատերի հետ: Նա հայ հին գրականության պատմության բազմաթիվ կնճռոտ հարցեր է լուծել, և ամեն մի կնճռոտ հարց լուծելիս մի կնճիռ ու խորշում է ավելացել նրա արևոտ դեմքին:

Չափազանց մեծ է Մ. Աբեղյանի վաստակը հայոց լեզվի գիտական ուսումնասիրության բնագավառում: Աբեղյանը պեղել է հայոց լեզուն, խորաթափանց մտքով չափել նրա բազմաշերտ ծալքերը, տեսել ու ներկայացրել նրա պատմական զարգացումը, անցյալի ու ներկայի կապը և, որ ամենից կարևորն է, տվել ժամանակակից հայերենի ամբողջական նկարագիրն ու պատկերը:

Մ. Աբեղյանի լեզվաբանական-քերականական աշխատությունների («Աշխարհաբարի քերականություն», «Հայերենի հոլովները», «Աշխարհաբարի շարահյուսություն», «Գրաբարի քերականություն», «Հայոց լեզվի տեսություն» և այլն) պսակը, անշուշտ, «Հայոց լեզվի տեսությունն» է (ներառյալ նաև «Աշխարհաբարի շարահյուսությունը»), որով հայ լեզվաբանական-քերականագիտական միտքը նա զարգացրել ու հասցրել է մի նոր՝ փիլիսոփայական աստիճանի: Այդ աշխատությունը, իրոք, հայոց լեզվի չգերազանցված տեսությունն է, որտեղ իրենց փայլուն լուսաբանությունն են ստացել նրա թե՛ հնչյունաբանությունը, թե՛ իմաստաբանությունը, թե՛ բառագիտությունը, թե՛ ձևաբանությունը և թե՛ շարահյուսությունը:

Մ. Աբեղյանը, ինչպես Վ. Բելինսկին կասեր, ոչ թե օրենքներ ու կանոններ է տվել լեզվին, այլ խորագույնս բացահայտել է նրանում իրապես գոյություն ունեցող օրենքներն ու օրինաչափությունները, դրանք հանել լեզվի իրական փաստերից և հիմնավորել ու հաստատել լեզվի իրական փաստերով...: Չենք կարող չասել նաև, որ Աբեղյանը լեզվի՝ իբրև գրականության ատաղձի, և գրականության՝ իբրև կյանքը պատկերող արվեստի, փոխադարձ պայմանավորվածությունը, կապն ու հարաբերությունն է շատ խոր լուսաբանել իր «Հայոց լեզվի տաղաչափություն» աշխատությամբ՝ հատկապես մեծագույն ավանդ մուծելով հայագիտության գանձարանը:

Լրագրական հոդվածի սահմանները շատ նեղ են, իհարկե, թվելու համար այն աշխատանքները, որ կատարել է Մ. Աբեղյանը իր բազմաբովանդակ գիտական գործունեության ընթացքում:

Բայց անկախ դրանից ու առանց դրան պարզ է, որ ինչ բնագավառի էլ ձեռք է զարկել նա, նոր էջեր է բացել գիտության մեջ, ջերմեռանդ կերպով սիրել է իր գործը և առաջնորդվել միշտ սուրբ ու ազնիվ սկզբունքներով:

Աբեղյան-գիտնականը իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրել է հայագիտությանը և գիտակցելով, որ գիտական մեծ գործերն ու արժեքներն ստեղծում են անձանձիր, տքնաջան աշխատանքի և միայն ու միայն այդպիսի աշխատանքի միջոցով՝ տվել այնքան բան, որքան շատ տրվածից է պահանջվում:

Աբեղյանը սկզբից նեթ գիտակցել ու ըմբռնել է, որ գիտության աշխարհը սուրբ աշխարհ է, որ այնտեղ պետք է գործել ազնվաբար, չպետք է խարդախել և զբաղվել կեղծիքով ու խաբեությամբ...

Այստեղից էլ այն մեծ սկզբունքայնությունն ու հետևողականությունը, որ հանդես է բերել նա իր գիտական գործունեության ընթացքում: Արեղյանը երբեք չի փոխել իր տեսակետներն ու ըմբռնումները, եթե նոր փաստերը նրան նոր համոզման չեն բերել, եթե անցյալում առաջնորդված այս կամ այն դրույթը չի մերժվել իր իսկ հայտնագործած տվյալներով: «...Հետազոտողը ուղիղ հետևության հասնելու համար պետք է բազմակողմանի ուղղատեսություն ունենա իր դիտած առարկայի նկատմամբ և իր հետազոտության ժամանակ լինի ուղղամիտ և ուղղադատ»: Այդ է եղել Մ. Արեղյանի գիտական աշխատանքի մեթոդն ու դավանանքը, և հենց այդ ելակետից էլ նա բազմիցս պաշտպանել է գիտության շահերը, բանավեճ մղել այնտեղ, որտեղ հարկ է եղել, իրեն հատուկ տրամաբանությամբ, ինչպես նաև համապատասխան փաստերով ու ապացույցներով հերքել հակառակորդի սխալ ըմբռնումները՝ անպատասխան չթողնելով ոչ մի անհիմն հարձակում ու մեղադրանք:

Մ. Արեղյանը մեծ է նաև իր ծավալած հասարակական-մանկավարժական լայն գործունեությամբ. նա իբրև մանկավարժ շատ սերունդներ է կրթել, բազմահարուստ գիտելիքներ հաղորդել ինչքան-ինչքան աշակերտների և ինչքան՝ ժամանակ հատկացրել նրանց:

Մանուկ Արեղյանը գիտությունը ոչ թե գիտությանը, այլ կյանքին, ժողովրդին էր ծառայեցնում, և ինքն էլ ոչ թե ինքնամփոփ, «կաբինետային» գիտնական էր, այլ կյանքի հրատապ հարցերին արձագանքող, հուզվող ու խորհող, կենսասեր ու միշտ գիտնական-քաղաքացի:

Սերունդներին թողած մեծարժեք ավանդներով, որոնց առանցքը ժողովրդայինն է ու ժողովրդականը, Մ. Արեղյանը անմահացրել է իրեն և կապրի այնքան, որքան այն ժողովուրդը, որին ծառայել է նա՝ դրա մեջ տեսնելով իր կյանքի բուն նպատակն ու իմաստը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«Սովետական Հայաստան», № 120, 1965

ԲԱՆԱԳԵՏ-ԲԱՆԱՍԵՐԸ

Խոշոր է Մանուկ Աբեղյանի վաստակը հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության հետազոտության ասպարեզում, մի մասնաճյուղ, որի նկատմամբ իր նախասիրությունները Աբեղյանը ցուցաբերել է դեռևս պատանեկության տարիներին: Նա ծնվել է պատմական Հայաստանի Գողթն գավառում, որը, հայ պատմիչների վկայությամբ, ավանդական գրույցների ու երգերի հայրենիքն է եղել: Հասակ առնելով աշխատավոր գյուղացու ընտանիքում՝ ուշիմ ու բնատուր շնորհքով օժտված պատանին սիրել է հայրենի ժողովրդի բանավոր ստեղծագործությունները, ունկնդրել ու հավաքել է դրանք: Մանուկ Աբեղյանը իր ողջ կյանքի ու գիտական գործունեության ընթացքում տքնաջանորեն ուսումնասիրել է հայկական ժողովրդական հարուստ բանահյուսությունը, ցույց տվել պատմության, արվեստի ու գրականության մեջ, ազգային ինքնագիտակցության գործում բանավոր ստեղծագործության ունեցած մեծ դերն ու նշանակությունը:

Նա հսկայական գործ է կատարել «Մասնա ծոեր» էպոսի հետազոտման, հրատարակման և մասսայականացման գործում: Գ. Սրվանձոյանից հետո Մ. Աբեղյանն առաջինն էր, որ արձագանքեց էպոսի հավաքման կոչին: Սրվանձոյանի և իր գրի առած տարբերակների հիման վրա Աբեղյանը հայկական էպոսի հետազոտության առաջին փորձն է կատարում, որը հրապարակում է «Մուրճ» ամսագրում: Հետագա տարիներին, բանահավաքների գրի առած նոր տարբերակները հաշվի առնելով, Աբեղյանն ընդարձակում է իր ուսումնասիրությունը և «Ազգագրական հանդեսի» համարներում հրապարակ հանում ընդարձակ մի նոր աշխատություն, որը 1908 թ. լույս է տեսնում առանձին գրքով՝ «Հայ ժողովրդական վեպը» վերնագրով: Իր մեծարժեք ուսումնասիրության մեջ Աբեղյանը բազմակողմանի հետազոտության է ենթարկում հանճարեղ այդ ստեղծագործությունը՝ ցույց տալով նրա խոր ժողովրդայնությունը՝ որպես աշխատավոր հայ ժողովրդի դարավոր իդեալի ու ակնկալությունների մարմնավորում: Նա համոզիչ փաստերով վեր է հանում էպոսի պատմական արմատները, այն ներկայացնում որպես պատմական տարբեր ժամանակաշրջաններում իր ազատության ու անկախության համար հայ ժողովրդի պայքարի գեղարվեստական տարեգրություն:

1936 թ. Մ. Աբեղյանը Կ. Մելիք-Օհանջանյանի հետ միասին ձեռնարկում է «Սասնա ծռերի» սովարածավալ եռահատորյակը (1936, 1944, 1951 թթ.), որտեղ ընդգրկված են Էպոսի շուրջ 50 տարբերակները՝ ներքին դասակարգմամբ, առաջաբանով, ծանոթագրություններով, համապատասխան ցանկերով ու օժանդակ նյութերով, որն իր տեսակի մեջ կոթող-հանրագիտարան է, որը ժամանակի ընթացքում գնալով ավելի է բարձրացնում իր արժեքն ու նշանակությունը:

Էպոսից բացի՝ վիպական բանահյուսության ժանրերից Մ. Աբեղյանը հետազոտել է հայ ժողովրդական առասպելները, ավանդական զրույցներն ու հավատալիքները: Դեռ 1898 թ. Ենայի համալսարանում Մ. Աբեղյանը որպես ավարտական դիսերտացիա ներկայացրել է «Հայ ժողովրդական հավատքը» գերմաներեն աշխատությունը, որի համար ստացել է փիլիսոփայության դոկտորի դիպլոմ: 1899 թ. Վաղարշապատում լույս է տեսնում նրա «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու «Հայոց պատմության մեջ» բանագիտական-բանավիճային աշխատությունը:

Վիպական բանահյուսության ասպարեզում ուշագրավ են նաև Մ. Աբեղյանի «Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ» (1935 թ.) և «Վիպական երգեր» (1940 թ.) ուսումնասիրությունները:

Մ. Աբեղյանի բանագիտական գործունեության մյուս կարևոր բնագավառը հանդիսացել է հայ ժողովրդական քնարական բանահյուսությունը: Իր երկարամյա մանկավարժական գործունեության և շրջագայությունների ընթացքում մեծ գիտնականին գրավել են ժողովրդական խաղիկները, ջանգյուլումի երգերը: Հանճարեղ Կոմիտասի հետ միասին Աբեղյանը հավաքել է այդ երգերը և տպագիր աղբյուրներից քաղած նմանատիպ երգերի հետ միասին հետազայում հրատարակել՝ «Ժողովրդական խաղիկներ» վերտառությամբ սովարածավալ ժողովածուում (1940 թ.):

Քնարական բանահյուսության ուսումնասիրության ասպարեզում Մ. Աբեղյանի մեծագույն վաստակն է նաև հին գուսանական-ժողովրդական երգերի, այսպես կոչված, հայրենների պրոբլեմի լուծումը: «Հին գուսանական-ժողովրդական երգեր» աշխատության մեջ (1931 թ.) Մ. Աբեղյանը այդ երգերի գաղափարական, գեղարվեստական, լեզվատաղաչական առանձնահատկությունների քննությամբ ապացուցում է, որ

դրանք հայոց հին աշխարհիկ քնարական երգերն են, որոնք, միջնադարյան ձեռագրերի մեջ որոշ հեղինակային ձևափոխությունների ենթարկվելով, հասել են մեզ: 1940 թ. Մ. Աբեղյանը հրատարակում է նաև «Գուսանական ժողովրդական տաղեր» (հայրեններ և անտունիներ) գիտական բնագիրը:

Մ. Աբեղյանի բանահյուսական բնագրերի արժեքավոր հրատարակության կողքին չի կարելի չնշել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» քննական հրատարակությունը՝ 34 ձեռագրերի բաղդատությամբ (Մ. Հարությունյանի աշխատակցությամբ) և Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի հրատարակությունը՝ աշխարհաբար թարգմանությամբ հանդերձ:

Մ. Աբեղյանը բանագիտական մեծ ժառանգություն է թողել: Շարունակելով անցյալի հայ բանագետների ավանդները՝ նա այդ բնագավառը բարձրացրեց և դուրս բերեց լայն ուղու վրա՝ դառնալով հայ բանագիտության իսկական հիմնադիրը:

ԱՐՏԱՇԵՍ ՆԱԶԻՅԱՆ

«Սովետական Հայաստան», № 120, 1965

ՀԱՂԹ ԿԱՂՆԻՆ

Նահապետական հայ գյուղի պապենական կիսախավար թոնրատնից դուրս գալով՝ նա հասել է եվրոպական կուլտուրական հռչակավոր կենտրոնները՝ Բեռլին, Փարիզ և այլուր, հայ գյուղացու անհագ ծարավով յուրացրել այն ամենը, ինչ կարող էր հոգևոր սնունդ հանդիսանալ: Վերադարձել է հայրենիք և իր ուժերը բոլորանվեր ի սպաս դրել իրեն ծնող ու սնող ժողովրդին:

Հայրենասեր երիտասարդ գիտնականը կառչեց հայ հողին, հաղթ կաղնու նման խոր արմատներ ձգեց և անդուլ աշխատանքով, եռանդով նվիրվեց հայ ժողովրդի հոգևոր մշակույթի ուսումնասիրության ու զարգացման գործին:

Մ. Աբեղյանը իր գործունեության մեջ խստապահանջ էր, սկզբունքային ու անկաշառ, պարտաճանաչ ու անզիջող:

Երիտասարդության շրջանում գրել է նաև գեղարվեստական գործեր, բանաստեղծություններ, սակայն նրա կոչումը պոեզիան չէր: Դրա փոխարեն նա օժտված էր տրամաբանելու հզոր տաղանդով: Նրա տրամաբանությունը, փաստարկումները դիմադրության չէին հանդիպում և միշտ հաղթանակով էին ավարտվում:

Նա բազմաժանր է ընտրած մասնագիտության մեջ, միաժամանակ միասնական է, քանի որ նրա մշակած գիտական ճյուղերը մտնում են մի «մայր» գիտության՝ հայագիտության մեջ: Նա հանդես է գալիս մերթ իբրև բանագետ-բանասեր, մեկ բանահավաք ու բնագրաբան (տեքստաբան), մեկ էլ գրականագետ-քննադատ ու գրականության պատմաբան, ապա՝ առասպելաբան, տերմինաբան և այլն:

Հայագիտության մեջ չկա մի բնագավառ, որին նա անդրադարձած և իր աբեղյանական դրոշմը դրած չլինի: Նրա վիթխարի գիտական ժառանգությունը ժամանակին վճռողական դեր է կատարել մեր իրականության մեջ, որոշ մասն այսօր էլ պահպանում է իր արժեքը, մի շարք բնագավառներում՝ նույնիսկ տիրապետող է հանդիսանում: Ինչո՞վ բացատրել այդ հանգամանքը, ո՞րն է դրա գաղտնիքը:

Մեծ գիտնականը, բնությունից օժտված լինելով նուրբ զգացողությամբ, դիտողական սուր ընդունակությամբ և արտակարգ ջանասիրությամբ, ուսումնառության շրջանում կուտակած գիտությունը ստեղծագոր-

ծաբար վերամշակեց և իր սեփական, աբեղյանական եղանակով ուսումնասիրեց հայրենի նյութը՝ հասնելով գերազանց արդյունքի:

Մ. Աբեղյանը փայլուն մանկավարժ էր: Շուրջ չորս տասնամյակ նա հայոց լեզու ու գրականություն է դասախոսել մեր միջնակարգ և բարձրագույն դպրոցական հաստատություններում: Հազարավոր ուսանողներ են սովորել և յուրացրել այդ առարկաները նրա մոտ, ապա իրենց հերթին ուսուցչից ստացածի համեմատ՝ ավանդել իրենց աշակերտներին-սերունդներին:

Մ. Աբեղյանը կար, մնում է որպես լավագույն ուսուցիչ-դաստիարակ բոլոր այն ուսանողների համար, որոնք երբևէ ցանկություն կունենան հայ լեզու և հայ գրականություն ուսումնասիրելու, իսկ այդպիսիների թիվը անպակաս կլինի, հարատև կաճի ու կբազմանա, քանի դեռ կինչի մեր քաղցրիկ լեզուն, քանի կա մեր ժողովրդի ստեղծած շենշող մշակույթը:

Փա՛ռք մեծավաստակ, հայրենանվեր գիտնական-ակադեմիկոս Մ. Աբեղյանին:

Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ
«Սովետական Հայաստան», № 120, 1965

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ (Մ. Աբեղյանի 100-ամյակի առթիվ)

Մանուկ Աբեղյանի ստեղծագործությունը բազմակողմանի է ու խոր միաժամանակ: Նա հայ առաջին ֆոլկլորագետներից էր՝ բառիս իսկական իմաստով, հայ հին և միջնադարյան գրականության գիտական դասընթացի ստեղծողը, հայ առավել աչքի ընկնող քերականներից մեկը, հայոց լեզվի տաղաչափական գիտության հիմնադիրը անվիճելիորեն: Նույնիսկ այն բնագավառներում, ուր նա աշխատել է «ի միջի այլոց», թողել է անջնջելի հետք. ահա՛ ձեզ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հրատարակությունը (պատրաստված Մեթ Հարությունյանի աշխատակցությամբ), «Սասնա ծռերի» երկու հոյակապ հատորները (Կարապետ Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ), «Սասունցի Դավիթ» դրուցագներգության համահավաքի առաջին ճյուղը, «Ժողովրդական խաղիկները», «Գուսանական ժողովրդական տաղերը», «Վարք Մաշտոցի» գիտական հրատարակությունը: Տեքստաբանական աշխատանքները կապվում են գիտական պրպտումների ու հետազոտությունների հետ, գիտական հետևությունները՝ հենվում այդ հետազոտությունների վրա: Ի՞նչ ասել հապա տասնամյակներ տևող նրա մանկավարժական գործունեության, նրա պատրաստած գիտական հիանալի կադրերի մասին:

Եվ, այնուամենայնիվ, Աբեղյանի ստեղծագործության պսակը հայ ֆոլկլորի մասին ստեղծած գիտությունն է, այդ գիտության միջուկը՝ հայ ժողովրդական հոյակապ էպոսի հայտնաբերումը (ամբողջական առումով, իհարկե) և բազմակողմանի, հիմնավոր, համարյա թե սպառիչ հետազոտությունը: Լինելով ստույգ փաստերի երկրպագու՝ նա փաստեր էր հայտնաբերում այնտեղ, որտեղ նրանից առաջ ենթադրություններով ու վարկածներով էին լցնում ամեն բաց: Քննադատելով գրականության մեջ իշխող այն կարծիքը, թե Խորենացու «վեպ» կոչված աղբյուրները շինծու են, կամ որ նրա հաճախակի հիշատակած «Հայոց վեպը» սովորաբար գրքային ծագում ունի, մասամբ և պատմագրի գրչին է պատկանում՝ Աբեղյանն ապացուցում է, որ պատմահոր երկում հիշված առասպելներն ու վեպերը իրոք եղել են հայոց մեջ, և որ «Խորենացին կամ ինքն անձամբ կամ յուր աղբյուրների միջոցով օգտվել է հայ ժողովրդական առասպելներից»:

Մի անգամ ճանաչելով ժողովրդի «ձեռագիրը»՝ նա այն փնտրում և գտնում էր ամենուր և հենց այն աղբյուրներում, որոնք մինչև այդ կարդացել ու վերաքննել էին շատերը հայրենի և օտար գիտնականներից: Այս տեսակետից ուղղակի անհավատալի է «Պարսից պատերազմ» վեպի նրա հայտնաբերումը: Եվ ահա պարզվեց ամենակարևորը. գրականությանը գիտակ լինելուց առաջ Աբեղյանը գիտակ էր հայ ժողովրդի ոգուն ու մտածողությանը, նրա մտածողությանը բանաստեղծության մեջ և բանաստեղծությանը՝ փիլիսոփայության բնագավառում: Մենք չգիտենք կամ համարյա չգիտենք, թե Մանուկ Աբեղյանը երբ է իր կռահումները հավաստում փաստերով, բայց հաստատ գիտենք, թե փաստերի ի՛նչ հանրագումարից է հանում նա իր հետևությունները: Հայ ժողովրդական վեպի տարբեր պատումների և ճյուղագրության, տարածման սահմանների, վիպասանների արվեստի առանձնահատկությունների, այնտեղ պահպանված պատմական կարևոր հիշողությունների, նրա մեջ արտահայտված հասարակական ու քաղաքական գաղափարների, հենց դիցաբանական մոտիվների որպիսի՝ ուսումնասիրություն էր պետք հավաստելու համար մի, այժմ արդեն անվիճելիորեն ընդունված ճշմարտություն, որ այդ վեպը բուն ժողովրդական ստեղծագործություն է: «Վեպը թեպետ և պատմում է Մասնոտերերի մասին, բայց գրեթե ոչ մի ազնվական բան չունի իր մեջ, այլ ազնվական և նույնիսկ թագավոր անվան տակ դուրս են գալիս մեր գյուղացիները: Վեպն ամբողջապես ռամկական, գեղջկական բնավորություն ունի, հայ հասարակ ժողովրդի կյանքն ու հոգին ենք տեսնում այնտեղ, նրա նիստն ու կացը, պարապմունքը, բարքերը և այլն»: Ավելացնե՞լ արդյոք, որ այս տողերը գրված են մահից ոչ թե հիստուն օր, այլ հիստուն տարի առաջ:

Ահա՛ թե ինչու ճշմարիտ էր բանաստեղծը, ասելով.

Ինչպես Մհեր դյուցազնը մեր,
Կանգնած գահին տարիներիդ
Նայում ես լուռ մեկ դեպի վեր,
Մեկ էլ անցած հովիտներիդ:
Ե՛վ հնավանդ, և՛ հնաբույր՝
Քո տաղերգած էպոսի պես
Դու կաս կրկին վեհ ու մաքուր,
Դու մարդ Մասիս՝ վճիտ ու վեա...

Մասնագետների կարծիքով Արեղյանը տվել է շարահյուսության գիտականորեն հիմնավորված, բազմակողմանիորեն ուսումնասիրված մի տեսություն:

Միշտ ժողովրդի հետ, անբաժան նրա հոգևոր կուլտուրայից՝ Արեղյանը հետևում է նրա բանաստեղծական մտածողության փայլատակումներին՝ դիցաբանական երգ, ժողովրդական վեպ՝ գազաթների գազաթը հայ հանճարի, ապա՝ գուսանական երգ, վերջապես՝ ժողովրդական խաղիկներ: Դարձյալ նույն հարցը. կանխակա՛լ մի՞տքն է նախորդել նյութի ուսումնասիրությանը, թե՞ ընդհակառակը: Բայց Արեղյանը՝ հայ ամենաներհուն գիտնականներից մեկը, երբեք չի շտապում իր եզրակացությունը ձեռք հաղորդելու. նա օգնում է, որ ինքներդ համապատասխան եզրակացության գաք:

Ահա՛ ձեզ մի պերճախոս օրինակ. անցյալ դարի ութսունական թվականներին միամիտ ու անփորձ մի բանասերի կողմից գուսանական ժողովրդական երգերի մի մարգարտաշար վերագրվում է Նահապետ Քուչակին: Ավելի ու ավելի է մեծանում այդ գողտրիկ երգերի թիվը, մեծանում, աստղերին է հասնում և երգչի անունը: Բայց արդյո՞ք Քուչակին էին պատկանում այդ երգերը: Պետք էր կես դար տևող գիտական և ամենահամառ ուսումնասիրություն ոչ թե լեզենդը ցրելու, իհարկե, այլ այդ զարմանահրաշ երգերի բնություն ու որակը պարզելու համար: Եվ այդ կատարում է դարձյալ Մանուկ Արեղյանը: Ե՛վ նյութի խորունկ ուսումնասիրությամբ, և՛ տեքստերի մինչ այժմ ափսոս, որ միակ գիտական հրատարակությամբ նա ապացուցում է (ո՛չ, հարկադրում է, որ դուք չտարակուսեք), որ այդ երգերը ժողովրդական երգիչների և երգչուհիների ստեղծագործություններ են, ոչ թե մարդկային մի կյանքի, այլ համարյա թե ութ երկար ու ձիգ դարերում ստեղծված:

Ասացի, որ Արեղյանը իսկական հիմնադիրն է հայոց տաղաչափական գիտության: Դժբախտաբար այդ աշխատությունը («Հայոց լեզվի տաղաչափություն») այնպիսի մի խրտնացնող պլանով է շարադրված, որ մեր մանկավարժներից քչերն են կարողանում օգտվել նրանից: Բայց չպետք է մոռանալ, որ շատ դեպքերում, ինչպես և այս դեպքում, շարադրանքի խրթին լինելը գալիս է հենց նյութի դժվարությունից: Նյութի առաջին դժվարությունը հաղթահարողը այստեղ արժեքավոր շատ և շատ բան կգտնի ոչ միայն մեր դասական, այլև սովետահայ պոեզիային՝ նրա կար-

կառուն ներկայացուցիչներին վերաբերող: Գիտնականը ցույց է տալիս, որ վանկային մեր տաղաչափությունը կանգնած է շեշտային դառնալու ճանապարհին:

Ի՛նչ ասել ապա նրա «Հայոց հին գրականության պատմության» մասին: Աբեղյանի մեծագույն վաստակը ոչ միայն այն է, որ նա առաջինը տվեց հին և միջնադարյան գրականության գիտական պարբերացումը, այլև բացահայտեց նրա ոգին, դրա հետ՝ նաև նրա արվեստը:

Մանուկ Աբեղյանը, որի ծննդյան հարյուրամյակն է այսօր լրանում, Հրաչյա Աճառյանի հետ կարող է դասվել համաշխարհային ֆիլոլոգների շարքը: Գրականագետ լինելուց առաջ նա, ինչպես ասվեց, ժողովրդագետ էր և հենց այդ իմաստությունը բերեց՝ մտքի առավել մեծ գանձարանը մուծելու համար: Ժամանակը մանր ու միջակ շատ բան կմոռացնի՝ պահպանելու համար մեծերը, այս դեպքում՝ մեր հավերժորեն շողափայլ «Սասնա ծռերը»: Քանի կա մեր էպոսը, կա և կմնա նաև նրա էպիկական վսեմ նկարագիր ունեցող գիտնականը՝ Մանուկ Աբեղյանը:

ՆՇԱՆ ՄՈՒԴԱԴՅԱՆ
«Երեկոյան Երևան», № 73, 1965

ՄԵԾ ՀԱՅԱԳԵՏԻ ՀՈՅԱԿԱՊ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մանուկ Աբեղյանը՝ հայ բանասիրության հսկաներից մեկը, իր ուժերը փորձել է հայագիտության ամենատարբեր բնագավառներում ու միշտ զարմանալի հաջողության հասել։ Ո՞ր բնագավառում է ավելի մեծ և արժեքավոր նրա վաստակը՝ բանագիտության¹, թե՞ գրականագիտության, լեզվաբանության², թե՞ պատմական գիտության մեջ։ Այդ մասին կարելի է անընդհատ վիճել, բայց այժմ առիթ է ներկայացել խոսելու լեզվաբան Աբեղյանի մասին։ Այդ ուրախալի առիթը տվել է Երևանի պետական համալսարանը՝ մեծ հայագետի ծննդյան 100-ամյակը նշանավորելով նրա կարևորագույն լեզվաբանական աշխատության՝ «Հայոց լեզվի տեսության» («Աշխարհաբարի շարահյուսության» հետ) հրատարակությամբ։

Հայագիտության մեջ դարագլուխ կազմող այս աշխատությունը նախկինում հրատարակվել է մաս-մաս։ Նրա երկրորդ մասը՝ «Աշխարհաբարի շարահյուսությունը», տպագրվել է 1912 թ., առաջինը՝ «Հայոց լեզվի տեսություն» վերնագրով, լույս է տեսել 1931 թ.։ Վաղուց ի վեր այդ հրատարակությունները դարձել են խիստ հազվագյուտ գրքեր, և հայոց լեզուն ուսումնասիրող լեզվաբանն ու ուսանողը, հայերենի ուսուցիչն ու դասախոսը, հայ գրողն ու գրականագետը հնարավորություն չունեին օգտվելու մեր լեզվի հարստություններն այնքան ճոխ ու բազմակողմանի ներկայացնող այդ աշխատությունից։ Այժմ այդ հնարավորությունը նորից է ստեղծվում։

Աբեղյանն ունի նաև լեզվաբանական այլ ուսումնասիրություններ («Աշխարհաբարի քերականություն», «Աշխարհաբարի հոլովները», «Հայցական հոլովը» և այլն), որոնք բոլորն էլ առաջնակարգ գործեր են։ Սակայն վերահրատարակված այս աշխատությունը մյուսներից առանձնանում է իբրև բացառիկ մի գործ նրանով, որ հայ նոր գրական լեզվի՝ աշխարհաբարի ուսումնասիրության բնագավառում մնում է իբրև դեռևս չգերազանցված մի գագաթ։

Աբեղյանի՝ իբրև լեզվաբանի, հրապարակ գալու ժամանակ հայոց լեզվի ուսումնասիրման բնագավառում իշխող էր քերականության տրամաբանական ուղղությունը, որն իր որոշակի արժանիքների հետ զգալի բա-

ցեր ու թերություններ ուներ: Հիշենք դրանցից երկու կարևորները. նախ՝ այն, որ գրական նոր հայերենի մի շարք փաստեր ներկայացվում էին այլ լեզուներին, ինչպես նաև գրաբարին հատուկ «շրջանակներում», և ապա՝ նոր հայերենի բազմաթիվ բնորոշ իրողություններ դուրս էին թողնված տեսադաշտից, լեզուն չէր ներկայացվում իր ողջ ճոխությամբ:

Աբեղյանն իր առջև նպատակ դրեց, մի կողմից, աշխարհաբարը քննել իբրև ինքնուրույն լեզու՝ ազատված գրաբարի և այլ լեզուների ուսումնասիրության կաշկանդիչ ավանդներից, և ապա՝ հենց դրա շնորհիվ, ավելի ճիշտ, ամբողջական և փաստերի մեծ առատությամբ ներկայացնել նոր գրական հայերենը:

Աբեղյանը մանրակրկիտ վերլուծեց աշխարհաբարի ամենատարբեր հուշարձանները, այդ թվում՝ հայ գեղարվեստական բազմապիսի երկերի, հրապարակախոսության, բանավոր խոսքի և բանահյուսական նմուշների լեզուն: Կուտակված բոլոր փաստերը նա գիտականորեն գնահատեց, դասակարգեց և ապա գնաց դեպի եզրակացություններ ու ընդհանրացումներ, սահմանեց կանոններ:

Աբեղյանի այս աշխատության մեջ է, որ առաջին անգամ տրվել են արդի հայերենի գիտական հնչյունաբանությունն ու բառագիտությունը, հայերենի բառաստեղծական հնարավորությունների լայն պատկերը, բառաբարդման ու ածանցման տեսությունը, նախադասության տեսությունը, շարահյուսական կապակցությունների միջոցներն ու տեսակները, հոլովների կիրառական նշանակության ծավալուն աղյուսակը, բարդ նախադասության օրինաչափությունները և այլն:

Այս աշխատությամբ Աբեղյանը ամբողջացրել է նաև քերականագիտական իր չափազանց հետաքրքրական ու յուրօրինակ համակարգը: Տարբեր գնահատականներ ու անուններ են տրվել այդ համակարգին՝ ձևամոլական (ֆորմալիստական), պատմահոգեբանական, շարահյուսական և այլն: Սակայն դրանցից ոչ մեկը հարկ եղած ճշտությամբ չի բնութագրում Աբեղյանի բազմահարուստ քերականական տեսությունը: Այնտեղ եթե մի կողմից՝ բառերի ձևափոխումները գնահատվում ու դասակարգվում են նրանց շարահյուսական կիրառություններից վերացված (այստեղից էլ՝ հայցական և սեռական հոլովների մերժումը), ապա, մյուս կողմից, նկատելի է կենդանի խոսքին, շարահյուսությանը առավելագույն չափով հավատարիմ մնալու, քերականական երևույթները շարահյուսա-

կան ելակետից գնահատելու ուժեղ հակումը (այստեղից էլ՝ խոսքի մասին ըմբռնման շարահյուսական հիմունքին գերապատվություն տալը): Բայց սրանք ոչ թե տարբեր մոտեցումներ են, այլ միևնույն տեսանկյունի տարբեր դրսևորումներ: Ուշադրություն է գրավում այն, որ Աբեղյանի բոլոր ըմբռնումները սերտորեն շաղկապված են միմյանց, մինչև վերջ տրամաբանված, և նրա ողջ քերականական համակարգը զարմանալիորեն հետևողական է ու կոտ: Ըստ երևույթին, ամենից ավելի ճիշտ է այդ համակարգը կոչել ուղղակի աբեղյանական:

Բոլոր լեզվաբանները չէ, որ ընդունեցին Աբեղյանի տեսակետները: Շատերն են լրջորեն վիճաբանել նրա հետ, այդ թվում՝ խոշոր լեզվաբաններ: Սակայն ոչ ոք երբեք չի վիճարկել և չի վիճարկում այն, որ որևէ լեզվաբան, իր որևէ աշխատությամբ այնքան լրիվ ու այնքան բազմակողմանի չի վերլուծել ու ներկայացրել հայ նոր գրական լեզուն, որքան Աբեղյանը իր այս վերահիրատարակված աշխատությամբ: Եվ սա է այդ ուսումնասիրության մեծագույն արժեքը:

Ուշադրություն են գրավում Աբեղյանի բերած լեզվական փաստերը, բազմաթիվ ու բազմապիսի օրինակները: Միայն դրանցից կարելի է պատկերացում կազմել հայերենի զարգացման նկատմամբ մեծ բանասերի ունեցած լայնախոհության մասին: Նա, օրինակ, զուտ գրական բառերի հետ միասին քննության ու գնահատման նյութ է դարձրել կազմությամբ և արտասանությամբ ժողովրդական-խոսակցական բնույթի շատ բառեր ու արտահայտություններ: Շարահյուսական երևույթների ցուցադրման համար իբրև օրինակ բերված են բազմաթիվ ժողովրդական առածներ ու ասացվածքներ: Մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե Աբեղյանը որքան լայն էր ըմբռնում «գրական լեզու» հասկացությունը, որքան մեծ տեղ էր հատկացնում նրա մեջ ժողովրդական խոսքին: Այնուհետև, արևելահայ լեզվի երևույթներին զուգահեռ, Աբեղյանը հաճախ բացատրում է արևմտահայերենի նույնարժեք երևույթները՝ օրինակներ բերելով նաև արևմտահայ հեղինակներից: Մեծ հայագետը խորապես ըմբռնում էր նոր հայերենի այդ երկու հատվածների այդ ներքին միասնությունը և տարբերությունների երկրորդական բնույթը: Մի կարևոր հանգամանք ևս: Տարբեր առիթներով զուտ հայացի լեզվամիջոցները Աբեղյանը սիրում է հակադրել մեր լեզվի մեջ թափանցած օտարաբանություններին՝ մերժելով դրանք, ձգտելով ցուցադրել և պահպանել լեզվի ազգային բնույթը:

Հսկայական է եղել Աբեղյանի այս աշխատության ավանդը խորհրդային հայ լեզվաբանության զարգացման գործում: Պատկերացնել անգամ անհնար է մեր այժմյան լեզվաբանությունը առանց Աբեղյանի: Այնտեղ ամեն քայլափոխի զգացվում են աբեղյանական վերլուծումները, բնութագրումներն ու դասակարգումները: Այժմ սովորական դարձած քերականական, հատկապես շարահյուսական շատ անվանումներ Աբեղյանի ստեղծածն են, այդ թվում՝ հենց «շարահյուսություն» անվանումը: Բացի այդ, Աբեղյանի այս աշխատության մեջ լեզվաբանական կարևոր շատ հարցեր են սաղմնավորված, որոնք այժմ զարգացվում են մեր լեզվաբանների կողմից: Ընդհանրապես դժվար է, գուցե և անհնար գտնել արդի հայերենի վերաբերյալ այնպիսի մի հարց, որն այս կամ այն կերպ արծարծված չլինի Աբեղյանի կողմից:

Սակայն կա նաև մի այլ, փոքր-ինչ նուրբ հարց: Երկար ընդմիջումից հետո, երբ հայերենի մասնագետներն ու սովորողները այսօր նորից իրենց սեղանի վրա կունենան Աբեղյանի հոյակապ ուսումնասիրությունը, դարձյալ ուշադրության առարկա կդառնա այն հանգամանքը, որ աբեղյանական մի շարք հանգուցային դրույթները այժմյան մեր քերականագիտության մեջ այլ տեսանկյունով են ներկայացվում: Օրինակ՝ Աբեղյանը հայերենում տեսնում է հինգ հոլով, այժմ ընդունվում է յոթը, Աբեղյանը, **բայ** ասելով, հասկանում է միայն խոնարհված բայ, իսկ այժմ բայ ենք ասում դերբայներին, Աբեղյանի համար նախադասության կենտրոնական անդամը բայ-ստորոգյալն է, որի լրացումներից է նաև ենթական, այժմ ստորոգյալն ու ենթական համագոր անդամներ են դիտվում և այլն: Կլինեն մարդիկ, որ հարց կտան՝ որն է ճիշտ, որը՝ սխալ: Մեր համոզմամբ այսօր հարցն այդպես կտրական դնելը ճիշտ չէ: Հիշենք այլ լեզուների ուսումնասիրման փորձը: Միևնույն ժամանակ լեզուն, օրինակ, ուսումնասիրել են մի շարք խոշոր բանասերներ, յուրաքանչյուրն իր տեսանկյունից, և ստեղծվել են միևնույն ժամանակի ուսումնասիրման տարբեր ուղղություններ: Մրանք առաջ խիստ հակադիր են եղել, նրանց շուրջ սուր բանավեճեր են տեղի ունեցել, իսկ այժմ նրանք բոլորը ժուռ քերականագիտության հարստությունն են կազմում: Նրանց արդյունքը ի վերջո եղել է այն, որ ժուռաց լեզուն տարբեր տեսանկյուններից, տարբեր մոտեցումներով է ուսումնասիրվել ու վերլուծվել:

Այժմ ավելի հանդարտ և ուշադիր գնահատելով մեր քերականագիտության անցած ուղին՝ կարող ենք վստահորեն ասել, որ իրենց մեջ դրական և ուսանելի շատ բան ունեն թե՛ նախաբեղյանական, թե՛ աբեղյանական և թե՛ ետաբեղյանական քերականական ուղղությունները: Յուրաքանչյուր դեպքում մենք գործ ունենք միևնույն հայերենի ուսումնասիրման ու գնահատման տարբեր տեսանկյունների, տարբեր մոտեցումների հետ, որոնք բոլորը միասին, ի վերջո, ավելի լրիվ ու բազմակողմանի են ներկայացնում մեր լեզվի առանձնահատկությունները:

Ինչ վերաբերում է քերականության դպրոցական դասագրքերին, ապա նրանցում սովորաբար օգտագործվում է անցյալի քերականագիտության ողջ արժեքավոր փորձը: Աբեղյանի լեզվաբանական աշխատանքը մեր դասագրքերում օգտագործվել է միշտ, իսկ այժմ բազմահարուստ «Հայոց լեզվի տեսության» նոր ամբողջական հրատարակությունը խորհրդանշում է նաև այդպիսի օգտագործման զգալի ընդլայնում:

Վերջում հարկ է նշել ներկա հրատարակության բարձր որակը: Գրքի գեղեցիկ ձևավորմանը ներդաշնակում է բնագիր խնամքով կատարված տպագրությունը: Հոգատարությամբ է իր աշխատանքը կատարել խմբագիր Ա. Մարգարյանը, որը նաև բավականին բարդ բնագիրը պատրաստել է տպագրության:

Գրքում տեղ են գտել մի քանի թեև աննշան, բայց մեր կարծիքով անհարկի կրճատումներ, որոնք, իհարկե, որևէ կերպ չեն անդրադառնում հրատարակության բարձր արժանիքների վրա:

ՌԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ

«Գրական թերթ», № 22, 1965

ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԿՈԹՈՂԸ

Բազմավաստակ հայագետ Մանուկ Աբեղյանի գիտական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում լեզվաբանական-քերականական աշխատությունները: Հայոց լեզվի ուսումնասիրության ուղղությամբ կատարած իր բազմամյա քրտնաջան հետազոտությունների արդյունքները նա ամփոփել է «Աշխարհաբարի շարահյուսություն» (1912 թ.) և «Հայոց լեզվի տեսություն» (1931թ.) աշխատությունների մեջ, որոնք «Հայոց լեզվի տեսություն» ընդհանուր վերնագրով այժմ վերահրատարակել է պետական համալսարանի հրատարակչությունը:

Կանգնած լինելով իր ժամանակի լեզվաբանական գիտության առաջավոր դիրքերում՝ Մ. Աբեղյանը ստեղծել է աշխարհաբարի գիտական, խոր ուսումնասիրության անգուգական կոթողներ, որոնք և՛ գիտական-տեսական բարձր մակարդակով, և՛ նյութի բազմակողմանի ընդգրկմամբ ու վերլուծությամբ մինչև օրս էլ մնում է անգերազանցելի:

«Հայոց լեզվի տեսություն» աշխատությունը, ամբողջությամբ առած, բաղկացած է վեց մասից: Ներածության մեջ ամփոփված են մեծ գիտնականի ընդհանուր լեզվաբանական հայացքները՝ այն ելակետերը, որոնց հիման վրա նա ուսումնասիրում է ժամանակակից հայոց լեզուն: Նա տալիս է լեզվի՝ որպես համակարգի, բնութագիրը, քննում է լեզվական իրողությունների փոփոխությունների պատճառներն ու գործոնները, գրական լեզվի ու բարբառների, անհատական ու հասարակական լեզվի փոխհարաբերությունները և բազմաթիվ այլ հարցեր, որոնց լուսաբանությունը անհրաժեշտ հող է նախապատրաստում հայերենի փաստերի գիտական ուսումնասիրության համար:

Աշխատության երկրորդ մասը, որն ունի «Բառերի հնչյունները» (հնչաբանություն) վերնագիրը, նվիրված է արդի հայերենի հնչյունական համակարգի ուսումնասիրությանը: Պետք է նշել, որ հենց ինքը՝ Մ. Աբեղյանն է հիմք դրել ժամանակակից հայերենի հնչյունաբանության՝ որպես լեզվաբանական հետազոտության առանձին ճյուղի, ուսմունքին:

Մ. Աբեղյանի ծառայությունները մեծ են նաև ժամանակակից հայերենի իմաստաբանության և բառակազմության ուսումնասիրության բնագավառում, որոնք նա խոր հմտությամբ հետազոտել է իր աշխատության երրորդ և չորրորդ մասերում: Ժամանակակից հայերենի իմաստաբանու-

թյանը նվիրված մասում ներկայացված են գիտնականի՝ խոսքի մասերի և նրանց դասակարգման մասին ունեցած ըմբռնումները, վերլուծված են բառերի նշանակությունների փոփոխությունների պատճառներն ու գործոնները: Նա հանգամանորեն զարգացնում է այն միտքը, որ բառիմաստների փոփոխությունները պայմանավորված են հասարակական-պատմական և անհատական-հոգեբանական որոշակի գործոններով:

Ավելի ընդարձակ ու հանգամանալից ուսումնասիրության է ենթարկված ժամանակակից հայերենի բառակազմությունը:

Իրեն հատուկ խորությամբ ու ընդհանրացումներով Մ. Աբեղյանը ներկայացրել է ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունները, քննել է բարդ բառերի ծագման պատմական աղբյուրները, որոշել է հայերենի բարդությունների հիմնական տիպերն ու նրանց բաղադրիչների շարահյուսական փոխհարաբերությունները և այլն: Նա հանգամանալից վերլուծության է ենթարկել նաև հայերենի ածանցումը՝ պարզաբանելով ածանցների ծագման ուղիները, ածանցների գործածականության հաճախականությունը, արտահայտված իմաստները, նրանց տեղն ու դերը արդի հայերենի բառակազմական համակարգում և բազմաթիվ այլ հարցեր:

Աշխատության V մասում քննարկված է հայերենի ձևաբանական համակարգը: Մ. Աբեղյանը նոր աստիճանի բարձրացրեց գիտության այս ճյուղը՝ բազմաթիվ քերականական իրողությունների տալով նոր ու հիմնավորված բացատրություններ կամ նախորդ քերականների առանձին դիտողություններին հաղորդելով գիտական պատշաճ տեսք ու բովանդակություն: Աշխատության այս մասում շարադրված են գիտնականի հայացքները հայերենի ձևաբանության վերաբերյալ: Նա ստեղծել է մի ամբողջական ու կոռ ուսմունք հայերենի բայական համակարգի վերաբերյալ, որ մինչև այսօր էլ մնում է որպես այդ ուղղությամբ կատարված քերականական աշխատությունների հիմնաքար:

Մ. Աբեղյանը յուրահատուկ տեսակետ է զարգացնում գոյականի հոլովական ձևերի մասին՝ գտնելով, որ սեռական և հայցական հոլովները պատմական զարգացման ընթացքում լեզվից դուրս են ընկել, և աշխարհաբարը ձևականորեն միայն հինգ հոլով է զանազանում՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական:

Աշխատության VI մասը, որ ամենաընդարձակն է, ընդգրկում է «Աշխարհաբարի շարահյուսությունը»: Մինչև Մ. Աբեղյանը մենք աշխարհաբարի շարահյուսություն չենք ունեցել: Ընդգրկելով հայ գեղարվեստական գրականության, ժողովրդական խոսքի ոլորտները, այսպիսով՝ կուտակելով հարուստ փաստական նյութ ու թափանցելով լեզվական երևույթների էության մեջ՝ Մ. Աբեղյանը ստեղծեց աշխարհաբարի շարահյուսության մի կոտ ու տրամաբանական համակարգ: Այս դասական աշխատությունը այնքան մեծ դեր է խաղացել (և խաղալու է) մեր քերականության պատմության մեջ, որ դրա նշանակությունը դժվար թե հնարավոր լինի գերազնահատել: Աշխարահռչակ լեզվաբան Ա. Մեյեն նշել է, որ Մ. Աբեղյանի այդ գիրքը, անտարակույս, լավագույնն է, որ երբևէ գրվել է հայերենի քերականության վերաբերյալ:

ՄԱՆՎԵԼ ԱՍԱՏՐՅԱՆ

«Երեկոյան Երևան», № 120, 1965

**Մ. ԱՔԵՂՅԱՆՆ ԻԲՐԵՎ ՀԱՅՈՑ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱԲԱՆ
(ծննդյան 100-ամյակի առթիվ)**

Մանուկ Աբեղյանին նախորդող հայ գրականության պատմաբանները խոշոր ծառայություն ունեն հայ անցյալի բազմահարուստ ժառանգության վերհանման գործում: Նրանք հանդիսանում են այն հիմքը, որի վրա հնարավոր է եղել բարձրացնել «Հայոց հին գրականության պատմության» աբեղյանական կոթողը: Եվ չնայած դրան՝ Մ. Աբեղյանը գրականության պատմությունն ստեղծելիս կանգնած էր մեծ դժվարությունների առաջ:

Դժվարություններից առաջինը մենագրությունների պակասն էր մեր հին գրականության ուսումնասիրության մեջ: «Այս երկար ժամանակի ընթացքում, – գրում է Մ. Աբեղյանն իր «Հայոց հին գրականության պատմության» առաջաբանում՝ նկատի առնելով 1890-ական թվականներից իր մեջ ծագած մտադրությունը՝ գրել հայոց հին գրականության պատմության, – համեմատաբար սակավ մենագրություններ և բնագիրներ հրատարակվեցին, այնպես որ դեռևս կարելի չէ ժամանակաբանական հաջորդությամբ հորինել մի աշխատություն՝ բավարար չափով պարզելով մեր հին գրականության հիմնական մոմենտները: Դեռ շատ բաց տեղեր են մնում այդ ընդարձակ շրջանի մեջ»: Ուրեմն Աբեղյանի դժվարությունն այն էր, որ թեև կային մատենագրություններ և գրականության, եթե կարելի է ասել, ակնարկային պատմություններ, բայց բացակայում էին առանձին հեղինակներին և հարցերին նվիրված հատուկ մենագրություն-ուսումնասիրություններն ու գրական հուշարձանների գիտական բնագրերը, առանց որոնց նա չէր էլ պատկերացնում գրականության գիտական պատմության ստեղծումը:

Երկրորդ դժվարությունը, որ նշում է Աբեղյանն իր առաջաբանում, կրում էր մեթոդական բնույթ: Մեթոդական որոշակի սկզբունքների բացակայությունը դանդաղեցնում էր գրականության պատմության ուսումնասիրությունն ու շարադրանքը, բայց այն միաժամանակ բացահայտում էր Մ. Աբեղյանի՝ իբրև գրականության պատմաբանի մոտեցումը գրականության հարցերին և նրա տարբերությունն իրեն նախորդող գրականության պատմաբաններից. դա նրա՝ պատմությունն ուսումնասիրելու պահանջն էր, առանց որի չէր բացահայտվի գրական և ոչ մի երևույթ:

«Երկրորդ դժվարությունն այն է,– գրում է Աբեղյանը,– որ մինչև այժմ լույս չտեսավ հայոց պատմության մի գիտական ուսումնասիրություն, մեր դարավոր պատմության զարգացման շրջանների սոցիալ-տնտեսական-քաղաքական կյանքի պարզաբանությունը՝ հասցրած մինչև XIX դարը: Այդպիսի մի գործը պիտի օգներ գրականագետին իր աշխատանքը կատարելիս և երբեմն հեշտացներ հայտնաբերել տվյալ դարաշրջանի այն քաղաքական ու սոցիալական իրականությունը, որի անդրադարձումն են եղել այս կամ այն գրական հիշատակարանները: Եվ քանի որ չկա այդպիսի պատմություն, գրականագետն ինքը պետք է մտնի պատմական խնդիրների պարզաբանման մեջ, հաճախ եկեղեցական պատմության վերաբերյալ... նա պիտի զբաղվի նաև այնպիսի կողմերով, որոնք գրականության պատմության մեջ առանձին տեղ չպիտի գտնեին, այլ իբրև հայտնի իրողություններ՝ մի երկու խոսքով միայն պետք է մեջբերվեին»:

Ինչպես տեսնում ենք, հարցն այստեղ սուսկ շարադրանքի առջև ծառացած դժվարությունները չեն, որ տիտանական տոկունությամբ հաղթահարել է Մ. Աբեղյանն իր գրականության պատմությունը շարադրելիս՝ կատարելով և՛ մենագրություններ կազմողի, և՛ բնագրեր պատրաստողի, և՛ պատմաբանի դերը միաժամանակ: Խոսքն այստեղ վերաբերում է Աբեղյանի մոտեցմանը հին գրականությանը և ցուցումը հայոց հին գրականությամբ զբաղվողներին՝ հայ հին գրական որևէ գրական հուշարձան: Ինչպես նոր դարերում, այն ևս կապված է իր դարաշրջանի սոցիալ-քաղաքական կյանքի այլևայլ կողմերի հետ, իսկ հին դարերում՝ հատկապես եկեղեցու պատմության և կրոնադավանաբանական պայքարի ուղղությունների հետ, որոնց շղարշի տակ թաքնված են եղել սոցիալ-քաղաքական տարբեր գաղափարախոսություններ:

Պատմության մեջ ամեն ինչ յուր տեղում առնելու և արժեքավորելու սկզբունքը կազմում է Մ. Աբեղյանի՝ իբրև գրականության պատմաբանի հավատամքը և մեծագույն արժանիքը:

Գրականության պատմության ստեղծման առջև ծառացած վերոհիշյալ հարցերից բացի՝ Մ. Աբեղյանին ամենից ավելի զբաղեցրել է մի խնդիր, թե ի՞նչը հայոց հին գրականությունից պետք է դառնա գրականության պատմաբանի ուսումնասիրության առարկա. ո՞ր երկերն ու ստեղծագործությունները, այլ կերպ ասած, ինչը պետք է լինի գրականության պատմության առարկան: «Հիմա հարց է,– գրում է Աբեղյանը,– հին գրվածքնե-

րից ինչը իբրև հատկակի գրական երկ պետք է նյութ դառնա գրապատմական ուսումնասիրության», և ինքը՝ անվարան, պարզ ու մեկին պատասխանում է. «Անշուշտ գեղարվեստական երկերը: Նոր գրականության պատմության համար այդ պարզ է,– գրում է Աբեղյանը,– դրամա, վեպ, քնարերգություն՝ իրենց ենթատեսակներով: Հին գրականության պատմության նյութի ընտրությունն անասելի՝ նկատի պիտի ունենալ, որ կրիտերիումն անհրաժեշտորեն տարբեր պիտի լինի: Բանն այն է, որ հնում մեզանում չի եղել ո՛չ դրամա, ո՛չ վեպ այժմյան իմաստով, ո՛չ էլ ընդհանրապես այնպիսի գեղարվեստական գրականություն, որ ոչ գեղարվեստական տեսակետներից անջատ և անկախ լիներ իբրև մի ինքնուրույն բնագավառ: Այստեղ բանաստեղծականը և ոչ բանաստեղծականը կազմում են մի չտարբերակված միություն»:

Եվ այս չտարբերակված միությունից Աբեղյանն անջատել է հայոց հին գրականության այն դրվագները՝ հեղինակ լինի այն, թե գրական որևէ ստեղծագործություն, որտեղ առավել չափով գեղարվեստական անդրադարձում է գտել հայ պատմական կյանքը: Այս ընտրության մեջ ավելի հեշտ է կողմնորոշվել, երբ խոսքը վերաբերում է միջնադարին, այնտեղ արդեն համեմատական որոշակիություն կա գեղարվեստական և ոչ գեղարվեստական ժանրերի մեջ. ասենք որոշակի է, որ առակները, անտարակույս, գեղարվեստական գրականության պատկանող ստեղծագործություններ են և անխուսափելիորեն պետք է մտնեն գրականության պատմության մեջ, նույնը և միջնադարյան տաղերգուները: Դրանում կասկած լինել չի կարող: Բայց այլ է հին շրջանը՝ պատմագրությունը, վարքերը, վկայաբանությունները, անգամ ճառերն ու քարոզները, հայ հին պատմագիրների գրվածքները, որ, Աբեղյանի խոսքերով ասած, «երբեմն խառնուրդ են բանաստեղծականի և պրոզայիկի. միևնույն երկի մեջ գրական և արտագրական տարրերը գտնվում են փոխեփոխ իրար կողքի...: Հասկանալի է, որ պատմագիրները, որոնք պատկառելի քանակով են մեր գրականության մեջ, այդ կողմերով մասամբ մտնում են գեղարվեստական գրականության մեջ»: Ուրեմն պատմագիրների երկիրը «Հայոց հին գրականության պատմության» մեջ մտնում են ոչ միայն իբրև արժեքավոր պատմություններ, այլ նաև իբրև գրական ստեղծագործություններ: Յուրաքանչյուր հեղինակի կամ ստեղծագործության մասին խոսելիս Աբեղյանը, ի տարբերություն նախորդ գրականության պատմությունների, ա-

ռանձին գլուխ է նվիրում տվյալ երկի գեղարվեստական հորինվածքի քննությանը: Խորենացուն նվիրված ուսումնասիրության բաժիններից մեկն է կազմում «Քերթողահայրը և նրա «Հայոց պատմությունը» իբրև գրական երկ», Եղիշեի պատմության «Հորինվածքը», Փարպեցու «Իրական արվեստը» և այլն, և այլն: Նույնիսկ թվաբան Անանիա Շիրակացու ինքնակենսագրության և թվաբանական խնդիրների մեջ Մ. Աբեղյանը տեսնում է ճարտասանական արվեստի դրսևորումներ, էլ չենք խոսում միջնադարյան բանաստեղծության արվեստագիտական վերլուծությունների մասին: Երկի գեղարվեստական վերլուծությունը Մ. Աբեղյանը հասցնում է մինչև Մխիթարյան բանաստեղծների առանձին երկերի քննությունը՝ նրանց բարձրարվեստ ստեղծագործության մեջ ցույց տալով հնարքների հմտություն և բուն բանաստեղծականի՝ անկեղծ ներշնչման բացակայությունը:

«Ընդհանուր առմամբ Արսեն Բագրատունու տաղերի մեջ ավելի ճարտասանություն կա, քան բանաստեղծություն,– գրում է Աբեղյանը,– ավելի սովորովի է, արվեստ ունի, քան ինքնաբերական ստեղծագործություն և զգացում, ուստի նրա նկարեն ու պերճ ոճը յուր բոլոր սեթևեթանքով հանդերձ՝ միակերպ է, ձանձրալի... Նա ոչ միայն իշխան է լեզվի, այլև ոտանավորի. միանման հաջողությամբ նրա գրչի տակից դուրս են գալիս և՛ կարճ, սրընթաց տողեր, և՛ դանդաղ, ծանր ու մեծավայելուչ ասացվածքներ՝ երկար տողերով: Հեշտալուր հնչյուններն ու վանկերը, երաժշտական շեշտերն ու հանգերը երբեմն հափշտակում են ընթերցողին: Բայց ավա՛ղ, այդ ամենն ապարդյուն են անցնում, որովհետև տաղերն արտաքին գեղեցկության համեմատ չունին ներքին հարստություն...: Մարդ զգում է շարունակ, որ մի սնամեջ քերթվածության հետ գործ ունի, իսկ այդ բավական է ամենայն բանաստեղծություն մեռցնելու համար»: Եվ ընդհակառակը:

Խոսելով XIII-XIV դարի հեղինակ Ստեփանոս Օրբելյանի քաղաքական իդեերն արտահայտող «Ողբ ի դիմաց կաթուղիկեին» երկի մասին, որ Օրբելյանը գրել է Խաչատուր Կեչառեցու խնդիրքով՝ Մ. Աբեղյանը գրում է. «... Ըստ ոճի կամ մանրամասների արտահայտության...՝ բավական աղքատ է. չունի պերճություն, հայ թագավորությունների մասին պատմող կտորների մեջ նույնիսկ պրոզայիկ է հնչում: Բայց գրվածքն ընդհանրապես չոր ու ցամաք չէ, ինչպես գուցե թվա ոմանց: Դա ազդում է, որովհետև

շնչում է մի անկեղծ ջերմ զգացմունք, որ կենդանություն է տալիս ամբողջին»:

Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմությունը», այսպիսով, իրոք, գեղարվեստական, գրական ժանրերի, ձևերի, հնարանքների, ուղղությունների պատմություն է, գրականության պատմություն, որը, սակայն, իր ամենաչնչին իսկ փոփոխությամբ ու դրսևորմամբ կապված է պատմության հետ, միջնադարյան գաղափարախոսության, ճաշակի ու ըմբռնումների հետ:

Մ. Աբեղյանի՝ իբրև գրականության պատմաբանի ուժն այն է, որ նա հայ հին գրականության պատմությունը չի դիտում իբրև զարգացման միագիծ շարժում, իբրև հայ գրականության առանձնահատուկ զարգացում: Տարբեր ժամանակահատվածների ու երևույթների ինքնատիպությունը բացահայտելու հետ մեկտեղ նա իրավացիորեն այն համարում է համաշխարհային գրականության ընդհանուր զարգացման դրսևորման ձևերից մեկը:

«Մեր հին գրականությունը,– գրում է Աբեղյանը,– ինչպես և ամեն կուլտուրական երևույթ, հարկավ մեկուսի և անջատ չէ նաև այլ ազգերի ժամանակակից կուլտուրայից և մասնավորապես գրականությունից»: Այն «ունեցել է նույն զարգացումը, ինչ որ միջնադարյան քրիստոնեական գրականությունը»:

Ժողովուրդների հասարակական զարգացման ընդհանուր օրենքի կիրառությունից էր բխում Մ. Աբեղյանի՝ գրականության պատմության զարգացման շրջանների պարբերացումը՝ պերիոդիզացիան, որը, անկախ մանրամասների իր ճշգրտման անհրաժեշտությունից, մի մեծ նվաճում էր՝ իբրև հայ գրականության պատմության գիտական շարադրանքի անհրաժեշտ նախապայման: Աբեղյանի գրականության պատմության մեջ, ի տարբերություն նախորդ պատմությունների, գրականության պարբերացման հիմք է ընդունվում հայ ժողովրդի պատմության հասարակական զարգացման ընթացքը:

Հայ գրականության պարբերացումը չանջատելով ընդհանուր միջնադարյան գրականության զարգացման օրինաչափություններից, հասարակության զարգացման ընդհանուր օրենքներից՝ Մ. Աբեղյանը միաժամանակ դրա մեջ փորձել է տալ հայ գրականության ինքնատիպ բովանդակությունը՝ ելնելով հայ ժողովրդի պատմության յուրահատուկ զարգացու-

մից՝ հին գրականության մեջ դիտելով պարբերացման չորս աստիճան. 1. առասպելապատմական, 2. մաքառման գրականություն, 3. վերածնության շրջանի գրականություն, 4. վերանորոգման շրջանի գրականություն: Առասպելապատմական շրջանի ուսումնասիրության մեջ Աբեղյանի առավելությունը նախորդներից առասպելի բնութագրման ճշմարտությունն է և յուրաքանչյուր առասպելի մեջ պատմական կորիզի բացահայտումը: Մեծ հմտությամբ նա վեր է հանում մեր վաղ նախահայրերի հավատալիքների հնագույն բանահյուսական նմուշների մեջ պահպանված պատմական հենքը և առասպելաբանական հորինվածքը: Խոսելով Հայկի առասպելի մասին՝ Աբեղյանը գրում է. «Հայկը և Օրիոնը... նման նկարագիր ունեն. այս շատ տարածված գրույցը... բնության մի առասպել է, որ իր հիմքն ունի այն աշխարհայեցողության մեջ, որ նախնական մարդիկ ունեին բնության երևույթների, լույսի ու խավարի վրա: Դա լույսի կռիվն է ընդդեմ գիշերվա և ձմեռվա խավարի, որ մանուկ ազգերն ըմբռնել են իբրև մի աստվածային աղեղնավորի կռիվ, մի բարի աստծու, մարդկանց հոր կռիվն ընդդեմ մարդկանց թշնամի չար ոգու»: Եվ ոչ միայն այդ. Մ. Աբեղյանը դեռևս 1889 թ. իր «Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու պատմության մեջ» ուսումնասիրության էջերում, հենվելով բազմաթիվ աղբյուրների վրա, ցույց է տվել հայ առասպելների և մյուս ժողովուրդների համապատասխան առասպելների միջև եղած ընդհանրությունները: Հայկի, Օրիոնի, Տորքի և Ռոստոմա Սագճկի կամ Հոմերյան Կիկլոպ Պոլիփեմի, Շամիրամի, Իշտարի, Աստարտի, Աֆրոդիտեի, Վահագնի ու Վերեթրագնայի, Հերակլի նմանությունները բացահայտում են, ինչպես ինքն է ասում, «մանուկ ազգերի աշխարհայեցողությունը» բնության ուժերի մասին:

Այսպես բացահայտվում են հայ ժողովրդական բոլոր առասպելների մեջ պահպանված պատմական դեմքերի ու իրադրությունների անդրադարձումներն իբրև հայ հին գրականության պատմաառասպելական շրջանի արտահայտություններ:

III-XI դարերի պատմությունը Աբեղյանի գրականության պերիոդիզացիայում «մաքառման գրականություն» անունն է կրում: «Մաքառման գրականություն» ասելով Աբեղյանը ոչ թե հերքում է հայ իրականության մեջ գոյություն ունեցող այլ՝ դասային, սոցիալական հարաբերություններն ու տեղաշարժերը, այլ ընդգծում այդ շրջանի գրականության հիմնական

տենդենցը՝ պայքարը օտարերկրյա նվաճողների դեմ, հայ ժողովրդի անձնվեր մաքառումը բռնակալության դեմ: Բայց չնայած այս երևույթների առարկությանը՝ ժամանակաշրջանի բնութագրական գիծը եղել է պայքարը նվաճողի դեմ: Այդ են ապացուցում մեր ողջ պատմությունը, մեր գրականությունը, մեր ժողովրդի իղձերն արտահայտող հայ ժողովրդական անմահ էպոսը՝ «Մասունցի Դավիթը»: Բացի դրանից, երբ մենք ուշադիր հետևում ենք Աբեղյանի դրույթին, ակնառու է դառնում, որ «մաքառման» հիմնական տենդենցի մեջ նա չի տեսնում սոսկ պայքարն օտար նվաճողի դեմ, այլ նաև հայ հասարակական կյանքի մյուս կողմերի դրսևորումը հայ գրականության մեջ: Խոսելով իր պարբերացման երկրորդ շրջանի մասին՝ նա գրում է. «Երկրորդ շրջանը՝ «Մաքառման գրականությունը», իր մեջ անդրապատկերած ունի հայկական պատմական իրականությունը՝ սկսած III դարից մինչև XI դարը... Թե՛ գրավոր դպրության և թե՛ վիպական բանահյուսության մեջ... իշխում է մի ընդհանուր միտում – ազգային խիստ մաքառում՝ նախ պարսից Մասանյան տերության ու հույների, հետո՝ արաբական բռնապետության դեմ: Մյուս կողմից՝ այս շրջանի գրականության համար բնորոշիչ է նաև եկեղեցական դասի ձգտումն ու պայքարը իր գաղափարախոսությունը հաստատելու հայ ժողովրդի մեջ... Չեն պակասում նաև աշխարհիկ գաղափարները և հայրենասիրական ոգին, աչքի է ընկնում ուժեղ ձգտում պաշտպանելու ազգային անկախությունը և ընդհանուր շահերը, որոնք, սակայն, սովորաբար արտահայտված են՝ հայոց եկեղեցու շահերի հետ կապված»:

Մ. Աբեղյանը, III-XI դարերի գրականությունը վերնագրելով «մաքառման գրականություն», նախ՝ գիտական ավելի բարձր, պատմական հողի վրա է դնում գրականության պերիոդիզացիան, երկրորդ՝ գրականությունը զուտ կրոնական ոգու արտահայտությունը համարելուց նա բարձրացնում է և ողջ միջնադարյան պատմագրությունը դիտում իբրև հայ աշխարհիկ կյանքի արտացոլում, հայ քաղաքական կյանքի վերարտադրություն:

Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» ամենաուշագրավ դրույթը կապված է նրա պարբերացման երրորդ շրջանի գրականության հետ, որը, գրականագիտական նորույթ լինելուց բացի, մի խոր ուսումնասիրություն է հայ գրականության բովանդակության փոփոխության՝ պատմասոցիալական հիմքի հետ: Այստեղ բացահայտված են հայ գրականության նոր էպոսի աշխարհականացման պատճառներն ու ա-

ռանձնահատկությունները: Դարաշրջանի գրականության աշխարհակա-
նության ընդհանուր նկարագրից հետո տրվում է նաև երևույթի պատճա-
ռաբանությունը: «Այս փոփոխությունը հետևանք էր կյանքի և աշխար-
հայեցողության փոփոխության: Մինչդեռ քրիստոնյա աշխարհի ուրիշ կող-
մերում դեռ ընդհանրապես իշխում էր թանձր միջնադարը, XI դարի առա-
ջին կեսին արդեն մեր կյանքի ու մտածողության մեջ մտել էր մի հեղա-
շրջում, որով կրոնաճգնավորական ոգին սակավ առ սակավ տեղի էր տա-
լիս մի ուրիշ ոգու դիմաց, և առաջ էր գալիս ինքնուրույն վերածնություն,
որից չէր կարող չազդվել և հոգևորականը»: Արեղյանը հանգամանորեն
կանգ է առնում «Վերածնություն» տերմինի պայմանականության վրա.
նա բացատրում է տերմինի իմաստը Արևմտյան Եվրոպայի պատմության
հասկացությամբ՝ ընդգծելով այնտեղ ձևավորված բուրժուական հարաբե-
րությունները: «Այսպես այդ անունով կոչում էին Արևմտյան Եվրոպայի և
առանձնապես Իտալիայի վաղ-բուրժուական (քաղաքացիական) կուլտու-
րան XIV-XVI դարերում: Այդ ժամանակ արդեն գլխավոր հասարակական
դեր էր կատարում բարձրացած նոր դասակարգը՝ բուրժուազիան (քաղա-
քացիությունը), որի դասակարգային շահերի և իդեալների արտահայտու-
թյունն էին դառնում գիտությունը, արվեստն ու գրականությունը»: Արե-
ղյանը եվրոպական վերածնության շրջանում հատկապես նշում է անտիկ
կուլտուրայի վերականգնման, դպրոցների և գրականության աշխարհա-
կանացման, անհատի ազատության հատկանիշները: Նշելով այդ ամենը՝
Արեղյանը տարբերակում է հայկական վերածնությունը միջազգայինից:
Այդ ոչ թե անտիկ հունահռոմեական կուլտուրայի վերածնությունն է հայ
կյանքում, այլ հայ ժողովրդի կյանքի ու աշխարհայացքի փոփոխությունը,
արվեստում հեթանոսական աշխարհիկ ոգու վերականգնումը, կյանքի և
մշակույթի աշխարհականացումը:

Դեռևս իր գրականության պատմության սկզբներում Մ. Արեղյանը
քրիստոնեության մուտքի ու նրա գաղափարների տարածման կապակ-
ցությամբ այն միտքն է արծարծում, որ «ավանդական բանահյուսությունը
պիտի կազմեր հիմունք մեր գրավոր բանաստեղծության, որի մեջ պիտի
ցուլար հայ ազգի հատուկ հանճարը, էթե միայն մեր գրականությունը գրե-
րի գյուտից հետո շարունակեր իր ճանապարհով ընթանալ: Բայց մեր ա-
զնվականությունը գրի միջոցով չմշակեց իր բանաստեղծության տեսակ-

ները: Նրա բանահյուսությունը տեղի տվավ եկեղեցական գրականության առաջ: Եվ այլապես չէր էլ կարող լինել. դա անխուսափելի էր...»:

Եվ ահա վերածնության գրականության մասին խոսելիս Աբեղյանը ցույց է տալիս, որ հայ կյանքի աշխարհականացման շրջանում ոչ թե վերածնվում է հետաքրքրությունը հունահռոմեական անտիկ մշակույթի նկատմամբ, այլ ժողովրդի հնագույն՝ հեթանոսական աշխարհիկ ոգու բանահյուսական շրջանի ոգու նկատմամբ: «Իսկ մեր հայկական վերածնությունն ինքնուրույն է,– գրում է Աբեղյանը: –Դա ազգային կուլտուրայի ու գրականության շարունակական զարգացման մի իրականություն է, արդյունք հայկական քաղաքային կյանքի բարգավաճման... Եթե «Վերածնություն» բառով է անվանվում այստեղ մեր գրականության այս վերափոխված շրջանը, որովհետև այդ ժամանակ «վերածնվել» է հեթանոսական դարերի բուն աշխարհիկ ոգին և աշխարհայեցությունը՝ հակառակ կրոնակեղեցականի»:

Այստեղ խոսքը դարձյալ այն մասին չէ, որ առանձին դեպքերում՝ վերնագրերի, ձևակերպումների կամ բնութագրումների մեջ, Մ. Աբեղյանի հետ կարելի է չհամաձայնել, այլ այն մասին, որ Մ. Աբեղյանը ճիշտ է դիտել մեր գրականության բովանդակության փոփոխությունը՝ աշխարհիկ ոգու վերականգնումը և այդ փոփոխության հիմքը:

Առանձին արժեք է ներկայացնում Մ. Աբեղյանի՝ գրականության պատմության մեջ մտած այն հատուկ բաժինը, որ նվիրված է սոցիալական հակամարտությունների արտահայտությանը միջնադարյան գրականության մեջ: «Հայաստանը եղել է մի ակուր աղանդավորական անընդհատ շարժման համար՝ մերթ գաղտնի, մերթ հայտնի, նույնիսկ ապստամբության վերածվելով,– գրում է Աբեղյանը: –Հայոց գրականության սկզբում հենց հանդիպում ենք «բարբարիանս» աղանդին... Հայաստանի արևմտյան կողմերում: Ապա մեր աշխարհում գործել են նաև Մարկիոնի աղանդին, մանիքեության, մծղնեության «հայոց աղանդին» և ուրիշների հետևողները... Դրանցից առանձնապես հիշելու է երկուսը՝ Պավլիկյան և Թոնդրակեցոց աղանդները, որոնք երկուսն էլ հայկական հողի վրա են ծագել»:

Աղանդավորական շարժումների սոցիալական կողմի բացահայտումը նորություն էր հայ գրականության համար ոչ միայն թեմատիկ իմաստով: Մ. Աբեղյանն իր գրականության պատմության մեջ հատկապես

կանգ է առնում ոչ այնքան նրանց կրոնական տարբեր դավանանքների սկզբունքների բացահայտման վրա, որքան ցույց է տալիս նրանց միջնադարյան գաղափարախոսության հակընթաց ուղղությունը և դրանց սոցիալական արմատները:

«Ճգնավորական կյանքին և եկեղեցուն հակադիր մի վարդապետություն էր թոնդրակեցոց ուսումը,— գրում է նա,— ծայրահեղության հասած մի բողոք վանական ու ճգնավորական կյանքի, եկեղեցական իշխանության, եկեղեցու կարգերի ու գաղափարներ դեմ»:

Թոնդրակեցոց ուսմունքի լայն ծավալման պատմական պատճառաբանության հետ մեկտեղ Աբեղյանը տալիս է նրա բնաջնջման պատմական-սոցիալական անխուսափելիությունը: «Բայց նրանց գաղափարը չէր կարող հայերի մեջ իրականանալ այն դարում, քանի որ եկեղեցին ու նրա պաշտպան իշխանություններն ու բյուզանդական կայսրությունը դեռ շատ զորեղ էին, իսկ այդ հերքող ու ժխտող աղանդը մի ռևոլյուցիոն ընդդիմադրություն էր իշխող դասակարգի դեմ, մի դասակարգային պայքար, որ անխնա բնաջինջ անել աշխատեին իշխողները»:

Չին աղանդավորական գաղափարների՝ իբրև հայ գրականության աշխարհականացման պատմական նախապայմաններից մեկի բացահայտումը Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» ամենագորեղ կողմերից մեկն է:

Հայոց հին գրականության մեջ ներքին դասային փոփոխությունների վերհանմանն է նվիրված Մ. Աբեղյանի գրականության պատմության «Սոցիալական հարաբերություններն առակների մեջ» գլուխը, որ նախորդ՝ «Վերածնության գրականություն» բաժնի հետ մեկտեղ կազմում է նրա ստեղծագործության ամենաթարմ, ամենաինքնուրույն և ամենաարժեքավոր բաժիններից մեկը:

Հայտնի է, որ հայ պատմագրությունը շատ քիչ՝ գրեթե ոչինչ չի թողել հայ կյանքի սոցիալական փոխհարաբերությունների, հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի վերաբերյալ: Պատմագիրների ոչ բացահայտ, այլ առանձին դրվագների անդրադարձ մեկնաբանությունն է մեզ գաղափար տալիս հայ կյանքի սոցիալական փոխհարաբերությունների մասին: Միայն միջնադարից սկսած՝ նշված կյանքի ու աշխարհայացքի որոշ փոփոխությունների հետևանքով հայ գրականության մեջ են մտնում նաև ժողովրդական առակներ հեղինակների մեկնաբանությամբ, որոնք և՛ իբրև առակներ, և՛

իբրև մեկնություններ բացահայտում են սոցիալական կյանքի բազմազան կողմեր՝ «աշխատավորության պայքարն ազնվականության դեմ», «արհեստավոր քաղաքացիներ և քաղաքացիների վերաբերմունքն առ գյուղացիները»։ Խնդիրներ ու հարցեր, որոնք առականերում ավելի են, քան կարելի է գտնել վերնագրերում։ Հայոց հին գրականության մեջ սոցիալական հարաբերությունների բացահայտումը նույնպես Մ. Աբեղյանի՝ իբրև գրականության պատմաբանի, խոշորագույն արժանիքներից մեկն է։ Բարեբախտաբար այդ կողմի վրա նա ուշադրություն դարձրել է ընդհանրապես իր պատմությունը շարադրելիս՝ սկսած V դարի գրականությունից. «Պարսից պատերազմ» վերնագրի տակ նա անդրադառնում է ֆեոդալական այն հարաբերություններին, որոնք արտացոլվել են հատկապես Փավստոս Բուզանդի պատմության մեջ։ Նա ֆեոդալական վեպի՝ «Պարսից պատերազմի» մեջ տեսնում է ֆեոդալական մեկ դասի՝ հիմնականում ազնվականության գաղափարախոսությունը, իր բառերով ասած՝ «ռազմիկ ազնվականությունն իր պարապմունքներով, որ է որսորդություն, խնջույք, քսություններ, խարդավանքներ, պատերազմ, ավարառություն և նմանները։ Ազնվականության հետ սակավադեպ հանդես են գալիս եկեղեցական դասից կաթողիկոսները»։

Սակայն Մ. Աբեղյանը չի կարող անտեսել և ժողովրդին. նա բացատրում է, թե ինչու ֆեոդալական շրջանի ստեղծագործություններում շինականությունը գրեթե տեղ չպետք է գրավեր։ «Ֆեոդալական հասարակության երրորդ դասը,– գրում է նա,– աշխատավոր ռամիկը, տնտեսապես, քաղաքականապես և իրավապես կախված է եղել կալվածատերերի այս երկու անաշխատ վայելող դասերից։ Նա միշտ մնացած է եղել անուշադիր։ Մեր հին պատմագիրներն էլ մոռացության են տվել նրան՝ գրի առնելով միայն ազնվականների պատերազմներն ու հոգևորականների գործերը»։ Այս պատճառով էլ, ըստ Աբեղյանի, այդ գրվածքներում չեն մնացել հետքեր շինականների կյանքից ու դասակարգային պայքարից։ «Այստեղ չենք տեսնում և դասակարգային պայքար, աշխատավորության կռիվն ընդդեմ վերին երկու դասերի։ Վեպն ազնվականության բանաստեղծություն է, և, բնականաբար, նրա բանաստեղծները չափտի հանեին այդ։ Բայց և այնպես,– գրում է Աբեղյանը,– Արշակավանի դրվագի մեջ երևում է այդ կռիվի հետքը»։ Շարունակության մեջ Աբեղյանը բացատրում է նաև այն, թե ինչու Արշակավանի շինությունն ու ավերումը պատմագրության

մեջ կապվում են հասարակության քրեական խավերի հետ: «Որ վեպի մեջ Արշակավանի շինությունը բնորոշված է իբրև գողերի, ավագակների, մարդասպանների ժողովարան, «Ժողով մարդկան մեղաւորաց» այդ վերաբերմունքն ու լուսաբանությունը միայն բավական են ցույց տալու, որ այդ գրույցը ծագել է և այդ գույնով պատմվել է ընդդիմադիր հոգևորական և նախարարական շրջաններում, բայց ունեցել է իր ուրույն սոցիալական իմաստը: Դա գրկվածների, նեղվածների, տառապյալների մասսայական ըմբոստացումն է ճնշողների դեմ»:

Սոցիալական հարցերի և դասակարգային պայքարի անդրադարձումների վրա Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» մեջ մենք ուշադրության հրավիրեցինք նաև աղանդավորության կապակցությամբ: Ինչպես պատմության մեջ է եղել, այնպես էլ գրականության: Սոցիալական հարցերն ու դասակարգային պայքարը սրվել են X դարից հատկապես, և սոցիալական հարաբերություններն ու դասակարգային հակամարտություններն ամենաուժեղ ձևով հայ գրականության մեջ արտահայտվել են միջնադարյան առակներում, այդ իսկ պատճառով սոցիալական հարաբերությունների արտացոլմանը զգալի բաժին է հատկացնում Մ. Աբեղյանը իր «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ գրքում մասնավորապես:

Զխոսելով այլևս Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» մեջ առանձին հեղինակների, երկերի, հարցերի, հատկապես «Հավելվածների» մեծարժեք բացահայտումների մասին՝ բավականանա՞նք միայն ամբողջությամբ համադրելով նրա «Հայոց հին գրականության պատմությունը» նախորդ պատմությունների հետ՝ ակնառու դարձնելու համար այն բարձունքը, որի վրա դրվեց հին գրականության պատմության ուսումնասիրությունը Մ. Աբեղյանի ջանքերով: Աբեղյանի գրականության պատմությունը իր նախորդը չունեցող գրականագիտական մի մոնումենտալ ստեղծագործություն է՝ 1) իր ընդգրկմամբ (ժամանակի իմաստով)՝ առասպելաբանական շրջանից սկսած մինչև Մխիթարյանները ներառյալ, 2) իր պատմականությամբ՝ գրական երևույթները պատմաքաղաքական հիմքով բացատրելու դարձյալ աննախընթաց ունակությամբ, և 3) գրական հուշարձանների գեղարվեստական վերլուծությամբ, որ նույնպես դուրս էր մնացել նախորդ, թեև արժեքավոր գրականության պատմությունների տեսադաշտից:

Սրանք Մ. Աբեղյանի՝ իբրև գրականության պատմաբանի առավելություններն են, որոնք արգասիք են նաև հասարակական գիտությունների լայն ծավալման XIX դարի վերջին և XX դարի սկզբներին և մարքսիստական գիտության անժխտելի ազդեցության՝ մեծանուն հայագետի ստեղծագործությունների վրա: Նախորդ՝ բանասիրական, նկարագրական, հարուստ փաստագրական, իրենց ժամանակին նշանակալից դեր կատարած Հ. Գաթրժյանի, Գ. Պալասանյանի, Գ. Զարբհանալյանի, Վ. Փափազյանի, Ա. Զամինյանի արժեքավոր պատմությունների կողքին Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմությունը» երևույթների հասարակական ըմբռնման խորությամբ մի գրական կոթող է, որ պատիվ կարող է բերել ամեն մի ժողովրդի:

Մ. Աբեղյանի գրականության պատմությամբ, անշուշտ, չի սպառվում հայոց հին գրականության ուսումնասիրությունը: Վիճելի ու առարկելի հարցեր, դրույթներ ու մեկնաբանություններ կարող է ունենալ և ունի նրա պատմությունը: Դրանց լրացումն ու ճշգրտումը սերունդների գործն է:

ՄԱՅԻՄ ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆ

«Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969

ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆԻՆ

Մեր ժողովուրդը լայնորեն նշեց մեծանուն գիտնական-հայագետ Մանուկ Աբեղյանի ծննդյան 100-ամյակը: Այդ առթիվ մայիսի 25-ին Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ: Նախագահությունում են ընկ. ընկ. Հովհ. Բաղդասարյանը, Յա. Զարոբյանը, Ն. Հարությունյանը, Բ. Մուրադյանը, Ս. Պողոսյանը, ականավոր գրողներ, գիտնականներ:

Մեծ գիտնականին նվիրված հոբելյանական հանդիսավոր նիստը բացեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Ներսիսյանը: Նա ասաց. «Իր բազմակողմանի և արգասավոր գործունեության ընթացքում Աբեղյանը մեծ ավանդ է ներդրել մեր կուլտուրայի ծաղկման գործում: Բազմավաստակ գիտնականի անվան հետ են կապված այն նվաճումները, որ ունեցավ հայագիտությունը քսաներորդ դարի սկզբներին և մասնավորապես սովետական իշխանության առաջին երեք տասնամյակներին»:

Ապա Մանուկ Աբեղյանի կյանքի և գիտական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ղանալանյանը: «Աբեղյանը բնության մեծ պարզներից մեկն է, – ասում է զեկուցողը, – լայն ու ընդգրկուն է նրա գրական, հասարակական, մանկավարժական և գիտական գործունեությունը»:

Աբեղյանը աչքի է ընկնում ոչ միայն բնատուր մեծ տաղանդով և ստեղծագործական խոշոր կարողություններով, այլև անսպառ եռանդով, բացառիկ աշխատասիրությամբ, իմացությունների հսկայական պաշարով: Հմտորեն հետազոտելով մեր վաղնջական առասպելներն ու վեպերը, գուսանական երգերը, գրաբարի քերականությունը, Մեսրոպ Մաշտոցի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու և մյուսների կյանքն ու գործը՝ նա նույն կերպ լուսաբանել է նաև հայ ժողովրդի նորոգ շրջանի վեպերն ու վիպական երգերը, ժողովրդական խաղիկները, աշխարհաբարի շարահյուսությունը, Հովհաննիսյանի, Թումանյանի, Զարենցի և շատ այլ հեղինակների գրական ժառանգության կարևոր հարցերը:

Միշտ անմահ կմնա խոշոր գիտնականի, մեծ հայրենասերի անունը:

ԽՍՀԱԳՏԱԿԱՆ

«Գրական թերթ», № 22, 1965

ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Երևան, Տերյան փողոց, №62 տուն: Այստեղ է իր կյանքի վերջին տարիներն անցկացրել ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանը: Գիտնականի ծննդյան 100-ամյակի առթիվ քառահարկ այդ տան առջև դրվեց հուշասյուն: Կոթողը, որը պատրաստվել էր հղկված բազալտից, զարդարված է գեղեցիկ մանրաքանդակներով: Նրա մի կողմի վրա հետևյալ մակագրությունն է. «Այս տանը 1935-1944 թվականներին ապրել է հայ մշակույթի մեծ երախտավոր, խոշորագույն բանասեր, գրականագետ, լեզվաբան ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը»:

«Սովետական Հայաստան», №117, 1965

ՀՈՒՇԱՐՁԱՆ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻՆ

Մեծ գիտնականի անունը կրող գրականության ինստիտուտը հաջորդաբար հրատարակում է նրա երկերի ժողովածուն: Հենց նույն խորագրով մի ստվար հատոր վերջերս տրվեց ընթերցողին. գիրքը ոչ թե լրացնում է հրատարակությունների շարքը, այլ կարծես ամբողջացնում այն: Դա բանասեր Ս. Հարությունյանի աշխատությունն է:

XIX դարի վերջը և XX դարի սկիզբը մեր ազգային հոգևոր արժեքների պեղման և հայտնաբերման շրջանն էր: Թորամանյանը ավերակներից պեղեց ազգային ճարտարապետությունը, Կոմիտասը հայտնաբերեց հայ ազգային երգը, որ խլացել էր արևելյան միալար ու պարզունակ մեղեդիներով, Թումանյանը վերածնեց արխայիկ գրաբարի բռնահանգով և աշուղական հեշտաթուխ ձևերով խեղված հայ բանաստեղծությունը: Իսկ Աբեղյանը պատռեց դարերի վարագույրը և հավաստեց հայ միջնադարի մատենագրությունը, բանաստեղծությունը՝ իբրև համամարդկային քաղաքակրթության անառարկելի արժեքների մեկը:

Աբեղյանը հին գրականության պատմության ծնողն է, բանագիտության հայրը: Անգնահատելի և գրեթե հեղաշրջող է նրա դերը նաև լեզվաբանության մեջ, աշխարհաբարի քերականության ստեղծման գործում:

Մեծ կտավները հեռվից են միայն դիտվում: Ավելի մոտ դու կտեսնես ներկերի ավելորդ շերտեր և անորոշ ուրվագիծ, բայց տարածությունը թույլ չի տալիս խաբկանք: Բավական էր քառորդ դարից մի փոքր ավելի ժամանակ, որպեսզի Աբեղյանը հայագիտության պատմության մեջ կանգներ իր վիթխարի կերպարով: Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից գիտնականի երկերի վեցհատորյակի ակադեմիական հրատարակությունը (առայժմ լույս է տեսել չորսը) Աբեղյանի համար կանգնեցված լավագույն հուշարձանն է, իսկ Ս. Հարությունյանի «Մանուկ Աբեղյան» երկը՝ նրա մակագրությունը:

Լայն է Աբեղյանի գործունեության ոլորտը գիտության մեջ և ընդգրկում է տարբեր բնագավառներ ու խնդիրներ, հրապարախոսություն և ժամանակակից գրականություն, մանկավարժություն, հին գրականության պատմություն, լեզվաբանություն, բանագիտություն, ազգագրություն, տաղաչափություն. այդպիսին է և Ս. Հարությունյանի մենագրության մեջ վերարտադրության ոլորտը: Հեղինակը, համարձակորեն ընդ-

գրկելով գիտնականի գործունեության բոլոր բնագավառները, ոչ մի տեղ ճնշված չի գգում իրեն:

Գիրքն ունի երկու մաս՝ «Կյանքը», «Գործը», բայց դրանք այնքան էլ չեն տարբերվում իրարից, ինչպես Աբեղյանի կյանքը՝ գործից:

Ս. Հարությունյանը ներկայացնում է Աբեղյանի կյանքը հասարակական գործունեության մեջ, և մի տեսակ անսպասելի պարզվում է, որ միջնադարի կածաններով ճամփորդող գիտնականն ամեննին էլ հեռու և ներանձնացած կյանք չի վարել, որ մեծ գրասեղանի մարդը նաև ջերմորեն հանդես է եկել հասարակական կյանքի հրապարակներում: Նա անմիջականորեն արձագանքել է հայ իրականության մեջ տեղի ունեցող կարևոր իրադարձություններին և ասել իր խոսքը:

Աբեղյանը ոչ միայն ուներ տրամաբանության անկասելի ուժ, այլև նորը տեսնելու բարձր զգացողություն: Նա առաջիններից մեկն էր, որ ճանաչեց Թումանյանի հանճարը և համարձակ ողջունեց Հակոբ Հակոբյանի մուտքը գրականություն՝ նրա անվարժ տողերի մեջ գուշակելով գրական ապագա: Վերջապես հայ մատենագրությամբ, հայ միջնադարի մշակույթով զբաղվելը ևս ժամանակի և ազգային պահանջների արձագանքն էր:

Տողատակի ծանոթագրություններից երևում է, որ Հարությունյանը շատ բան գիտե Աբեղյանի կյանքի մասին՝ իր մանրամասներով, բայց նրա մոտ պարզորոշ սահմանագծում կա կենսագրության և կենցաղագրության միջև: Այդ գլուխն Աբեղյանի կյանքի լավագույն բնութագիրն է և ընթերցվում է բացառիկ հետաքրքրությամբ:

Երկրորդ մասը գրքի անհամեմատ ընդարձակ բաժինն է, որ արտահայտված է հինգ գլուխներով՝ ժողովրդագիտական հետազոտություններ, հայ տաղաշափության գիտական հիմունքներ, լեզվաբանական հետազոտություններ, Աբեղյանը տեքստաբան և բառարանագիր:

Այստեղ արդեն Աբեղյանի գործունեությունը չի ներկայացված սոսկ գիտական կենսագրության սահմաններում: Տալով Աբեղյանի գործունեության բնութագիրը իբրև գիտնականի՝ Ս. Հարությունյանի երկը ձեռք է բերում գիտական նշանակություն:

Ս. Հարությունյանը համբերատար հետևողականությամբ, հաճախ ծայրահեղ մանրամասների մեջ, վկայաբերում է Աբեղյանի մտքերը, կարծիքները, փաստարկները, հետևություններն ու ապացույցները: Թվում է, որ դրա հարկը չկար, որովհետև միևնույնը դու կգտնես բուն Աբեղյանի

երկերում, որն առավել է, քանզի սկզբնաղբյուր է: Բայց թերևս ոչ ոք, ով ծանոթ է Աբեղյանի ժառանգությանը, չի կարող այդպես մտածել: Աբեղյանը բազմաթիվ հարցերի հաճախ է անդրադարձել շուրջ կես դարի հեռագծով նրա մտքերի, կարծիքների ու տեսությունների զարգացումն ու փոփոխությունը, դրանց ձևավորումն իբրև ամբողջական ուսմունք կարելի էր ներկայացնել թերևս միայն այդ եղանակով:

Բայց որ ամենակարևորն է, Ս. Հարությունյանը մեզ ներկայացնում է Աբեղյանին այժմեականության շեշտերով: Դա ամեննին մոդեռնիզացիա չէ, և մենք այդ նկատի չունենք: Ս. Հարությունյանի բնութագրումից հետո Աբեղյանը մեզ ներկայանում է այսօրվա գիտության պահանջների համար ոչ միայն պատմական, այլև այժմեական հնչեղությամբ:

Ա. Բսահակյանը գրում է. «Աբեղյանի շնորհիվ մեր ազգային հոգևոր միջավայրը լցված է իմաստությամբ և հեղինակությամբ, լրջությամբ և վեհ նպատակների հետապնդումով»:

Վեհ նպատակների հետապնդումով էլ զրված է այս գիրքը, որ տարիների աշխատանքի արդյունք է:

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Սովետական Հայաստան», հունվարի 19, 1971

ՀՈՒԺԿՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
(Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Մանուկ Աբեղյանի ծննդյան օրվանից անցել է մեկ և քառորդ դար, մահվանից՝ շուրջ կես դար, և, այնուհանդերձ, նա մեզ հետ է։ Նրա հուժկու անհատականությունը ուժ ու կորով է հաղորդում մեզ այս դժվարին ժամանակներում։

Մանուկ Աբեղյանի գիտական դեմքը և գործը բնութագրելիս կարելի է առանձնացնել մի քանի գիծ։

Առաջին. նրա՝ որպես հետազոտողի նկարագիրը, ծնունդ է իր անհատականության, որի հատկանիշներն են փաստերի նկատմամբ ծայրահեղ հարգանքը, տրամաբանական, վերլուծական և համադրական հզոր կարողությունները, քննադատական սուր վերաբերմունքը թե՛ հետազոտվող նյութի և թե՛ գիտական տեսակետների նկատմամբ։ Գիտական անազնվությունը նրա ցասմանն էր արժանանում, ինչպես և գավառական մտածողությունը և նեղմտությունը։

Այս խառնվածքի վրա են մակաշերտվել, մի կողմից, հայ դասական բանահյուսության լավագույն ավանդույթները, մյուս կողմից՝ XIX դարի վերջի եվրոպական գիտության նվաճումները, որոնք նա յուրացրել է հենց Եվրոպայում՝ Գերմանիայում և Ֆրանսիայում, այսինքն՝ ակունքներից և ոչ երկրորդ ձեռքից։

Աբեղյանի շինարար խառնվածքին հատկանշական է, որ այդ նվաճումներից նա թանկ է գնահատել պատմահամեմատական մեթոդը, որին և հիմնականում հետևել է իր հետագա գործունեության ընթացքում։ Դրա հետ մեկտեղ նա խուսափել է իր ապրած տարիներին բավական լայն տարածում գտած գերքննադատական, ժխտական ուղղությունից։

Երկրորդ. Մանուկ Աբեղյանը միավորում էր իր մեջ մասնագիտությունների մի փունջ՝ բանագիտություն, բանասիրություն, գրականագիտություն, լեզվաբանություն, անշուշտ, նաև պատմություն։ Սրանք, սակայն, նրա մեջ ինքնուրույն շիթեր չէին, այլ հանդես էին գալիս կատարելապես միաձուլյ, միակտոր։ Այս հանգամանքը հնարավորություն էր տվել Աբեղյանին բազմակողմանիորեն, գիտական տարբեր հայեցակետերից ու դրա հետ միասին նույն աչքով դիտարկելու իր հետազոտության առար-

կաները: Լիներ դա ժողովրդական ստեղծագործության արգասիք, այն է՝ էպոս, առասպել, վարք, երգ կամ հեղինակային ստեղծագործություն՝ պատմություն, պոեմ, շարական, բանաստեղծություն թե տաղաչափական կամ քերականական խնդիր, որոնցից յուրաքանչյուրը բացում էր նրա առջև ոչ թե մեկ, այլ բազմաթիվ լուսամուտներ: Այդ լուսամուտներից ներս էր թափանցում նրա հայացքը՝ համակողմանի դիտարկելով, շոշափելով ու վերլուծելով դրանց բուն էությունը:

Լավ օրինակ են և ինձ էլ սրտամոտ, Աբեղյանի խորենացիագիտական աշխատությունները: Հայտնի է, որ Խորենացու «Հայոց պատմության»՝ ժողովրդական բանահյուսությանը հարող հատվածները հետազոտողները հայտարարել էին իր՝ Խորենացու հնարածը: Աբեղյանը, գործի դնելով իր հետազոտական անհուն կարողությունները վերոհիշյալ բնագավառներում, դեռևս XIX դարի վերջերին կարողացավ ապացուցել, որ դրանք հնարովի, սարքած չեն, այլ, իրոք, ժողովրդական ստեղծագործություններ են, հայերի հնագույն, նախաքրիստոնեական բանահյուսության նմուշներ: Ես պետք է շեշտեմ, որ սա թերևս միակ բնագավառն է, որն առայժմ անվերապահորեն զիջել են Խորենացու՝ նկատմամբ գերքննադատորեն տրամադրված հեղինակները՝ ասպարեզը թողնելով Աբեղյանին:

Աբեղյանը թեև հատուկ չի հետազոտել Խորենացու ժամանակի խնդիրը, բայց այդ կապակցությամբ արել է առնվազն մի կարևորագույն, կողմնորոշիչ դիտողություն: Դա հետևյալն է. «...Ահա մեկը նրան VII դարում է դնում, մեկը՝ VIII դարում կամ IX դարասկզբում, մեկն էլ՝ IX դարի երկրորդ կեսի սկզբում, և աշխատում են հայոց պատմության հեղինակ ցույց տալ այս կամ այն անձին... Այս բոլոր փոխադարձ հերքումներից, ժխտումներից ու բացասումներից հետո մեր պատմահայր և քերթողահայր Մ. Խորենացուն էլ ուրիշ բան չի մնում անել, բայց եթե ետ քաշվել ու նստել իր հին ու բնական տեղում՝ V դարում»:

Այս պարզ և անպաճույճ դիտողությունը, մեր կարծիքով, փաստարկներով հագեցած մի ամբողջ մենագրություն արժե, եթե ոչ ավելին:

Երրորդ. Մանուկ Աբեղյանի գիտական գործունեությունը անքակտելիորեն կապված է բուն ժողովրդի հետ: Այսպես, եթե փորձենք առաջնություն տալ նրա տիրապետած մասնագիտություններից որևէ մեկին, ապա դա հավանաբար կլինի բանագիտությունը: Այստեղ, բացի հիշատակված նյութերից, Աբեղյանը մեր մատենագրության ընդերքից վեր է հանել մի

ստվար բանահյուսական շերտ, որն արտացոլում է մեր պատմության III–IV դարերի իրողությունները, և որը ինքն անվանել է երկրորդ էպոս ու վերնագրել «Պարսից պատերազմ»:

Սրան պատմական ժամանակագրության տեսակետից հաջորդում են «Սասնա ծռեր» հայոց էպոսի հետազոտման ու հավաքման ուղղությամբ կատարած նրա տիտանական ջանքերը: Դրան զուգահեռ Աբեղյանը աչքաթող չի արել ժողովրդական ստեղծագործության փոքր չափի տեսակները՝ խաղիկները:

Պատահական չէ, որ լեզվաբանության բնագավառում նրա հիմնական շահագրգռությունները կապված են եղել ժողովրդի խոսակցական լեզվի՝ աշխարհաբարի հետ: Նաև նրա մշակած ուղղագրության բարենորոգումը դարձյալ կապված էր գրավոր խոսքը ժողովրդին առավել մատչելի դարձնելու մտայնության հետ:

Մանուկ Աբեղյանը մեզ հետ է, ապրում է մեր օրերում: Նրա թողածը ամեննին ժառանգություն չէ, եթե վերջինիս տակ հասկանալու լինենք սոսկ պատմական նշանակություն ունեցող արժեքներ: Նրա «Հայոց հին գրականության պատմությունը» այսօր էլ մնում է այդ բնագավառի գլուխգործոցը և դեռ երկար կպահպանի իր թարմությունը:

Այնուհետև նրա մոտեցումը փաստերին, հետազոտվող նյութին, հետազոտական ձևին այսօր էլ օրինակելի են մեզ համար: Նա գրել է. «... Հետազոտողը ուղիղ հետևության հասնելու համար պետք է բազմակողմանի ուղղատեսություն ունենա իր դիտած առարկայի նկատմամբ և իր հետազոտության ժամանակ լինի ուղղամիտ և ուղղադատ»: Շատ կարևոր հիշեցում է այսօրվա որոշ հեղինակներին:

Ի վերջո մի մեջբերում էլ անեմ Մանուկ Աբեղյանի՝ վերջերս հրապարակված 1940 թ. մի անտիպ նամակից, որը կարծես այսօր գրված լինի: Խոսքը Դավթակ Քերթոզի մասին է, որին աղբյուրների գրականագետ Ռաֆիկին ժամանակին անվանել է աղբյուրեջանական բանաստեղծ: Աբեղյանը գրում է. «Այդ կարծեցյալ գրականագետ Մ. Ռաֆիկին, որ Դավթակին «աղբյուրեջանական բանաստեղծ» է դարձրել, մի հարց տվեք, թե այժմյան Աղբյուրեջանը ո՞ր թվականից է այդպես կոչվում: Մի՞թե գիտական գործ է այժմյան քաղաքական սահմանների վրա հին դարերում ապրած և գործած բանաստեղծներին համարել «աղբյուրեջանական բանաստեղծ»:

1917 թվականից առաջ Ադրբեջան կոչվում էր հին Ատրպատականը (Թավրիզը և այլն): Փետրվարյան հեղափոխությունից հետո մուսավաթականները Բաքու քաղաքում ժողով արին և իրենց ձեռքին գտնված երկրամասը կոչեցին Ադրբեջան որոշ քաղաքական նկատառումներով: Նրանից առաջ այդ երկիրը երբեք Ադրբեջան չի եղել, այլ եղել է Ռուսիայի մի մաս. ուրեմն 17 թվից առաջ Դավթակ Քերթոդին պիտի համարեին ռուսական բանաստեղծ...: 1918 թվից առաջ էլ այդ երկիրը Պարսկաստանի մի մաս էր, ուրեմն այն ժամանակ էլ Դավթակին պիտի համարեին պարսկական բանաստեղծ...: Պարսիկներից առաջ XIII դ դարում թաթարներն են տիրել այդ երկրին, ուրեմն այն ժամանակ էլ Դավթակը եղել է թաթարական բանաստեղծ: Խեղճ Դավթակ...

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
«Գրական թերթ», N 30, 1990

ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆԻ 125-ԱՄՅԱԿԻՆ

Խոշորագույն հայագետ, գիտնական Մանուկ Աբեղյանի ծննդյան 125-ամյակին էր նվիրված ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի համատեղ գիտական նստաշրջանը: Բացելով նստաշրջանը՝ ՀԽՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ Գագիկ Սարգսյանը նշեց, որ թեև կես դար է անցել Մ. Աբեղյանի մահվանից, սակայն նրա թողած գիտական հարուստ ժառանգությունը այսօր էլ մնում է ժամանակակից ու արդիական՝ անսպառ աղբյուր հանդիսանալով լեզվաբանների, բանագետների, ժողովրդական ստեղծագործության հետազոտողների համար:

Մ. Աբեղյանի լեզվագիտական հայացքների արդիական արժեքի թեմայով զեկուցում կարդաց ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը: Նա մասնավորապես ասաց, որ Մ. Աբեղյանը մեկն էր այն եզակի գիտնականներից, որոնց ուսմունքը եվրոպական գիտության մակարդակի վրա էր: Հաղորդակից լինելով իր ժամանակի լեզվաբանական ուղղություններին՝ նա լեզուն համարում էր հոգեֆիզիկական երևույթ՝ որպես սկզբունք ընդունելով պատմականությունը:

Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Հարությունյանի զեկուցումը նվիրված էր Աբեղյանի հայ վիպաառասպելական բանահյուսության համակարգին ու տեսությանը: Զեկուցողը խոսեց Աբեղյանի բանագիտական ժառանգության մասին, որն ընդգրկում է հինգ շրջան՝ հին առասպելներ, առասպելական վեպ, ավանդական վեպ և այլն: Աբեղյանը բաժանել է դրանք պարբերաշրջանների և կատարել մեթոդական ու մեթոդաբանական բարդ հետազոտություններ:

«Մ. Աբեղյանը և հայոց հին գրականության ազգային յուրահատկության հարցերը» թեմայի մեջ բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Ներսիսյանը ներկայացրեց Աբեղյանի գիտահետազոտական մեթոդի կարևոր կողմերը: Նա նշեց, որ հին հայկական գրականությունը անջատ չէ այլ ազգերի գրականությունից, սակայն այդպիսի առնչությունները չեն խաթարում հայ գրականության ազգային նկարագիրը:

Աբեղյանի նամակագրական ժառանգության մասին խոսեց բանասիրական գիտությունների դոկտոր Պ. Հակոբյանը: Նա նշեց Աբեղյանի վիթխարի գիտական աշխատանքը՝ սկսած Հայկական Հանրապետության առաջին օրերից, նրա անգնահատելի ավանդը Երևանի պետական համալ-

սարանի ստեղծման գործում, գործունեությունը՝ որպես գիտության և արվեստի ինստիտուտի ղեկավարի:

Աբեղյանին և հայերենի ուղղագրությանն էր նվիրված բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Շարաբխանյանի զեկուցումը: Ուղղագրական հարցերը միշտ էլ եղել են Աբեղյանի ուշադրության կենտրոնում: Իր առաջին ուղղագրական ուսումնասիրությունները նա կատարել է 1890 թ., երբ աշխարհաբար լեզուն նոր էր ստացել իր կերպարանքը և պետք է ամրապնդվեր: 1908 թ. լույս տեսավ նրա ուղղագրական հոդվածների ժողովածուն: Աբեղյանը գտնում էր, որ փոփոխությունները պետք է լինեն այնպիսին, որ իրարից չհեռացվեն երկու լեզուները՝ գրաբարն ու աշխարհաբարը:

Նստաշրջանում ընթերցվեց Ա. Իսահակյանի «Մանուկ Աբեղյանի թարմ շիրմի առաջ» գրեթե անհայտ հոդվածը:

Խոշորագույն հայագետի մասին իրենց հուշերը պատմեցին Հրաչյա Հովհաննիսյանը, Ալիս Մանուկյանը և գիտնականի թոռը՝ Հասմիկ Աբեղյանը:

«ԱՐՄԵՆՊԵՆՍԻ» ԹՂԹԱԿԻՑ

«Խորհրդային Հայաստան», N 72, 1990

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

Էջմիածնի Գևորգյան ճեմարան, Ենայի, Լայպցիգի, Բեռլինի և Փարիզի նշանավոր համալսարանները. ահա այն իմացության ավազանները, որտեղ մկրտվեց երիտասարդ Մանուկ Աբեղյանը և վերադարձավ հայրենիք՝ նպատակ ունենալով մի նոր աստիճանի բարձրացնելու հայագիտության տարբեր բնագավառները (լեզվաբանություն, տաղաչափություն, էպոսագիտություն, ժողովրդական բանահյուսություն և այլն, և այլն):

«Մանուկ Աբեղյանը հայկական ավանդությունների մարմնացումն էր, գիտնական՝ բառիս ամենախորին իմաստով, անվախ, աննախապաշար, անկեղծ, վառ հայրենասեր՝ լի հավատով հայ ժողովրդի լավագույն ապագայի հանդեպ: Սկզբունքի մարդ, մեր ապառաժների պես կայուն, մտքի ու կամքի, աշխատանքի ու գործի հսկա, պատկառելի ուսուցիչ, սերունդների անձնվեր դաստիարակիչ...: Իր մոնումենտալ երկերով կառուցեց իր հավերժական արձանը մեր կուլտուրայի և մեր սրտերի մեջ»: Այսպես է բնորոշել մեծն Աբեղյանին մեծն Ավետիք Բսահակյանը: Եվ հիբավի, արտաքինն իսկ այդ պատկառելի գիտնականի պարզ կացուցանում էր, որ անկոտրում կամքի տեր, սկզբունքային մարդ էր Աբեղյանը: Միջահասակ, հաղթամարմին, հաստատուն ուսերի վրա կրում էր իմաստուն գլուխը: Լայներես, օվալաձև դեմքով, հռոմեական էր հիշեցնում համառ ծնոտը, իսկ արքենի ճակատը պատված էր խոր ակոսված կնճիռներով, կնճիռներ, որոնք գոյացել էին հայագիտության կնճռոտ հարցերի լուծման հետևանքով:

Ես բախտ չեմ ունեցել լինել ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի ուսանողը, որովհետև երբ ընդունվեցի Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, պատկառելի գիտնականը մի քանի այլ մեծ հայագետների հետ՝ Հակոբ Մանանդյան, Հրաչյա Աճառյան, հեռացվել էին համալսարանից: Աճառյանը հետո վերադարձավ, բայց անկոտրում կամքի տեր Աբեղյանն ու Մանանդյանը անդրդվելի մնացին: Աբեղյանին առաջին անգամ ի մոտո ծանոթացա եղբորս՝ Արամի տանը: Հարևաններ էին և ապրում էին մասնագետների շենքում: Իմանալով, որ ես զբաղվում եմ Ավետիք Բսահակյանի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությամբ՝ պատմեց հետևյալ զվարճալի դեպքը. «Երբ Ավետիքը 1894 թվականին եկավ արտասահման՝ Լայպցիգ,– այսպես սկսեց իր պատմությունը

Մանուկ Աբեղյանը, – մենք հաճախ հանդիպում էինք: Լայպցիգի փողոցներում շրջագայելիս տեղացիները հատուկ ուշադրություն էին դարձնում Ավետիքի վրա նրա՝ «սանրի ու մկրատի երես չտեսած» մագակալած դեմքի պատճառով: Ես մի քանի անգամ ասում էի իրեն՝ Ավետիք, արի վար առ բեղերդ ու մորուքդ, տեսնում ես հատուկ ուշադրություն ես գրավում: Բայց նա չէր լսում ինձ: Մի անգամ առաջարկեցի Ավետիքին մտնել վարսավիրանոց՝ մագերը թեթևակի հարդարելու: Համաձայնվեց: Նոր էր խեղճը նստել աթոռին, երբ ես կամացուկ գերմաներեն ասացի սափրիչին՝ գանց կուրց: Ավետիքը այն ժամանակ գերմաներեն լավ չգիտեր և գլխի չընկավ, թե ինչ ասացի սափրիչին: Մեկ էլ այն տեսավ, որ մի ակնթարթում սափրիչը վար առավ Ավետիքի երեսի կեսի մագերը: Այլևս ճար չկար, ստիպված մյուս կեսն էլ սափրել տվեց: Եվ մնաց անմագ, անմորուք»: Այս պատմության վրա Աբեղյանը իր ջախջախված բարիտոնով (Կոմիտասի արտահայտությունն է – Հ. Ղ.) սրտանց ծիծաղեց:

1940 թ., երբ լույս տեսավ Մանուկ Աբեղյանի «Գուսանական ժողովրդական տաղերը», այս գրքի մասին «Սովետական դպրոց» թերթում ես հանդես եկա մի ընդարձակ գրախոսականով: Ուրիշ պարագաներում իմ այդ գրախոսականը չեմ կարծում գրավեր Աբեղյանի ուշադրությունը, բայց քանի որ այդ շրջանում մեծ գիտնականը աջ ու ահյակ քննադատվում էր հանիրավի նրա գիտական վաստակի արժեքը իմացող-չիմացողների կողմից, ուստի իմ այդ գրախոսականը կարդացել էր և եղբորս՝ Արամին, խնդրել՝ հայտնի ինձ իր գոհունակությունն ու շնորհակալությունը:

Երբ հիմնադրվեց Արմֆանը (ՀՍՍՀ ԳԱ հայկական մասնաճյուղը), շատ չանցած՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին նշանակվեց Արմֆանի պրեզիդենտ: Օրբելին մեծապես գնահատում էր Մանուկ Աբեղյանին հայագիտության բնագավառում ունեցած նրա խոշոր վաստակի համար, և Արմֆանի ստեղծման առաջին իսկ օրերից Աբեղյանը դարձավ մեր գիտության կաճառի իսկական անդամը՝ հաճախ հանդես գալով զեկուցումներով: Այն ժամանակ Արմֆանը գտնվում էր Ազիզբեկովի հրապարակի մոտ՝ եռահարկ վարդագույն տուֆից կառուցված շենքում: Արմֆանի նիստերի դահլիճում էր, որ հանդես եկավ Աբեղյանը մի զեկուցմամբ, հետևյալ թեմայով՝ «Վիշապներ կոչված կոթողները իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձանները»: Նիստը վարում էր ինքը՝ պրեզիդենտ Հովսեփ Օրբելին: Աբեղյանը իր այդ զեկուցման ընթացքում որոշ չափով քննադատեց Ն. Մառին,

նրա՝ վիշապների մասին գրածի կապակցությամբ, ապա խստագույն կրակի տակ առավ հնագետ Յու. Ի. Սմիռնովին: Օրբելին, որ երբեք չէր հանդուրժում իր ուսուցչին քննադատողներին, այդ թվում՝ և Մառին աշակերտած Գրիգոր Ղափանցյանին, այս անգամ զսպելով իր հուզմունքը, լարված լսում էր Աբեղյանին՝ «հատակում պահելով իր փրփուրները»: Աբեղյանի խոսքը հիմնավոր էր և անառարկելի: Իսկ երբ Մանուկ Խաչատուրովիչը անցավ Սմիռնովին ու հիմնահատակ ջախջախեց նրան, փայլուն պղեմիստ Օրբելու աչքերը ուրախությունից սկսեցին փայլատակել: Նա հիացած էր Աբեղյանի երկաթե տրամաբանության և բերած ստուգված փաստերի անառարկելիության վրա:

Մի ուրիշ անգամ ես բախտ ունեցա ներկա լինելու Աբեղյանի մի այլ հրապարակային ելույթին, որը տեղի ունեցավ լուսծողկոմատի նիստերի դահլիճում: Լուսծողկոմատը այն ժամանակ գտնվում էր այժմյան «Գիտելիք» ընկերության շենքում: Նիստը վարում էր ինքը՝ լուսծողկոմը՝ Արտո Եղիազարյանը, որը, մեծապես գնահատելով Աբեղյանին, ընդառաջ էր գնացել մեծ գիտնականի խնդրանքին և հնարավորություն ընձեռել հանդես գալու իր դեմ գրիչ ճոճող վայ-քննադատներին ջախջախելու: «Սերունդների պայքարը» նշանաբանով էին հրապարակ գալիս Աբեղյանի հակառակորդները: Այդ պայքարը գլխավորողներն էին իր նախկին աշակերտներից երկուսը: Շատերը նախօրոք լսել էին, որ Աբեղյանը պետք է հաղթական ճակատամարտ տար՝ նպատակ ունենալով լավ դաս տալ իր դեմ սուր ճոճողներին: Աբեղյանը «ահեղասաստ էր սխալմունքի դեմ և վեճի մեջ ուսուցանող», ինչպես ճիշտ նկատել է Դ. Դեմիրճյանը: Խոսքը ուղղելով դահլիճում գտնվող իր մեծ ու փոքր քննադատներին՝ Աբեղյանն իր ելույթն սկսեց այսպես. ««Սերունդների պայքարը» նշանաբանով են հանդես գալիս իմ դեմ արշավանքի ելած իմ նախկին աշակերտները: Բայց դա, ընկերներ, սերունդների պայքարը չէ, այլ տգիտության պայքարն է գիտության դեմ», – ասաց սաստիկ հուզված մեծն Աբեղյանը, ապա անցավ կիսատ-պռատ և սխալ հասկացված ու աղավաղված ձևով բերված քաղվածքների ճշտմանը: Քաղվածքներից մեկն էլ Ֆ. Էնգելսից էր: Աբեղյանը գերմաներեն անգիր արտասանեց այդ հատվածը: Բանասիրական ու փիլիսոփայական գիտությունների դոկտոր Աբեղյանը ցույց տվեց, որ պետք է ճիշտ հասկանալ Ֆ. Էնգելսին և լեզվի հարցերը լուսաբանել այդ դիրքերից:

Զեկուցման ընթացքում ակադեմիկոս Աբեղյանը ծանակեց մեկին, որի դեմ գրած հոդվածի նախադասությունները կազմված էին որոշիչ հոդերի բացակայությամբ: Երբ Աբեղյանը նեղը գցեց հակառակորդներին, որոնք ներկա էին նիստին և լուռ ու մունջ լսում էին ահեղասաստ և ուսուցանող ուսուցչին, այդ պահին Թադևոս Ավդալբեկյանը, դանակոդ ժպիտը դեմքին, շուռ եկավ Աճառյանի կողմը:

–Հրաչյա՛, ելույթ ունեցիր, աշակերտներիդ պաշտպանիր:

–Ի՞նչ ես ասում, Թադևո՛ս, ես կարո՞ղ եմ բանավեճի մեջ մտնել ահարկու Աբեղյանի հետ:

Եվ, իրոք, ոչ ոք, դեռ երեկ գրիչ ճոճողներից ելույթ չկարողացավ ունենալ: Այն ժամանակ Աբեղյանը, խոսքը ուղղելով այդ քննադատներին, ասաց.

–Խորհուրդ եմ տալիս ձեզ այսուհետև կոկոզաբանությամբ չզբաղվել:

Ցավոք, պետք է նշել, որ հին գրականությամբ զբաղվողները ևս հանդես էին գալիս Աբեղյանի դեմ՝ նույն «սերունդների պայքարը» նշանաբանի տակ: Այդ վայ-քննադատները շարունակ առանց լրջորեն քննելու և դատելու Աբեղյանի աշխատությունները, հանիրավի քննադատում էին մեծ գիտնականին, հետևանքը եղավ այն, որ դրանցից մեկը ի վերջո արժանացավ «Ոգնու» փշերին, իսկ ակադեմիայի գրականության ինստիտուտը կոչվեց Աբեղյանի անունով:

Նկատենք և այն, որ Աբեղյանը չէր ուզում իր դեմ գրիչ ճոճողներին արժանացնել պատասխանի պատվին և մեծ մասամբ բավականանում էր միայն իր աշխատությունների տողատակի ծանոթագրություններում մեկերկու ինքնաստեղծ դիպուկ բառերով բնորոշելով նրանց: Բառեր, որոնք այնքան սազական էին, որ անմիջապես արմատ էին բռնում ընթերցողների հիշողության մեջ: «Այդ աղքատիմացը,– կարդում ենք Աբեղյանի հատորներից մեկի մի ծանոթագրության մեջ,– ոչ միայն մտքերս, այլև ցավս է յուրացրել. ես մի տեղ սխալ եմ թույլ տվել, նա այդ սխալս էլ է յուրացրել»: Մի այլ տեղ Եզնիկ Կողբացու մասին գրող մեկ ուրիշ հեղինակի մասին Աբեղյանն ասել է. «Վերջերս մեկը մի կարծիք է բաց թողել Եզնիկի մասին»:

Մի անգամ Պետհրատի տնօրենի ընդունարանի դռան մոտ անակնկալ հանդիպեցի Մանուկ Աբեղյանին:

–Մանուկ Խաչատուրովիչ, ինչո՞ւ եք սպասում, ներս մտե՛ք,– ասացի ես, և ինքս, կաբինետի դուռը բաց անելով, դիմեցի դիրեկտորին,– անհարմար է, ինչո՞ւ եք սպասել տալիս հարգարժան գիտնականին:

–Թող սպասի:

Այդ բառերը լսելուն պես Աբեղյանը դուռը բաց արեց և ասաց.

–Մեղիկովա, երկա՞ր պիտի սպասեմ, «ձերդ մեծություն», որ ընդունե՛ք ինձ: –Ասաց, դուռը ծածկեց ու հեռացավ:

Այս տողերը գրելիս ես վերհիշեցի նման մի դեպք՝ Դեմիրճյանի հետ պատահած: Մեծ գրողը մի անգամ ինչ-որ գործով գնում է մի մինիստրի մոտ: Վերջինս երկար սպասեցնել է տալիս Դեմիրճյանին: Երբ Դերենիկ Կարապիչի համբերությունը հատնում է, մինիստրի կաբինետի դուռը բաց է անում և ...:

–Մինի՛ստր, մի՛ նստիր,– ասում է ու հեռանում:

Երբեմն Մանուկ Աբեղյանին հանդիպում էի Հակոբ Մանանդյանի հետ Ղ. Ղուկասյանի պուրակում զբոսնելիս: Խոնարհաբար բարևում էի և ուզում էի անցել. կանգնեցնում էին ինձ երկուսով.

–Ո՞ւր եք շտապում, ընկե՛ր Ղանալանյան:

–Չեմ շտապում, պարզապես չեմ ուզում խանգարել ձեզ:

–Ինչպե՞ս է Արամը, բարե՞ք իմ կողմից:

–Իմ կողմից էլ,– ավելացնում էր Մանանդյանը: –Եթե ժամանակ ունի, թող անցնի ինձ մոտ:

–Ինձ մոտ էլ,– վրա բերեց Աբեղյանը:

–Ձեզ այցելելու համար եղբայրս միշտ էլ ժամանակ կունենա:

Աբեղյանի մասին մեծ պատկառանքով էր խոսում և գրում Դերենիկ Դեմիրճյանը: Ինչպես Իսահակյանը, այնպես էլ Դեմիրճյանը «աշխատանքի հսկա» էր անվանում Աբեղյանին:

«Արվեստների տերմինաբանական բառարանի վրա աշխատելիս,– գրում է իր հուշերում Դեմիրճյանը,– ես միտում էի ավելի շատ փոխառությունների, քան նորաբանությունների: Перспектив,– կարդում էի բառը և կցում– պահենք պերսպեկտիվ»:

–«Հեռատեսիլ»,– թնդում էր Աբեղյանի բասը:

–Դե լավ, գոնե «հեռանկար»,– զիջում էի ես:

Ո՛չ, ճիշտը տեսիլն է և ոչ նկարը,– ճնշում էր երկրորդ Աբեղյան-որոտը:

Գարեգին Լևոնյանը կոտրած ժպիտով նայում էր Աբեղյանին և լռում:

–Ի՞նչ կասես, Գարեգի՛ն,– դառնում էր նրան...

Գարեգին Լևոնյանը դիպլոմատիկորեն ժպտում էր:

–Ուրեմն գրեցեք՝ «հեռատեսիլ»,– ասում էր Աբեղյանը Լևոնյանին:

Այս մի քանի տողի մեջ Դեմիրճյանը ևս ճշտորեն բնորոշել է Աբեղյանի անկոտրում սկզբունքի տեր գիտնական լինելու հանգամանքը:

Մեր այս փոքրիկ հուշ-դիմանկարը մեծ հայագետի մասին կուզեի ավարտել Նիկողայոս Մառի հետևյալ խոսքերով. «Աբեղյանը եղել է, Աբեղյաններ՝ հազիվ թե»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

«Հուշ-դիմանկարներ: Անմարելի անուններ», 1991

**ՈՐԲ ԱՇԽԱՐՀԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՐԸ
ԱԶԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ որբանոցային հուշերից**

*Ազատ Սարգսի Հովհաննիսյան (1908-1993). ծնվել է Բուլանըխում:
Երկար տարիներ աշխատել է Կոտայքի մարզի Բուժական և Մրգաշեն
գյուղերի դպրոցներում, դասավանդել է հայոց լեզու և գրականություն:*

Պերճաբան ուսուցիչն այդ օրը դժվարանում էր սկսել նոր դասը, որի թեման էր Մ. Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը.

–Մեր հայրենիք՝ թշվառ, անտեր,– մի քանի անգամ ընթերցեց նա բանաստեղծության հայտնի հատվածի առաջին տողն ու լռեց. պահ էր հարկավոր, որպեսզի զսպված արցունքները հոսեն դեպի սիրտը և այնտեղից դուրս գան՝ բառեր դարձած:

Եվ, իրոք, մակընթացության ալիքը ափ հանեց իսկական մարգարիտ. սկիզբ առավ մեկն այն ո՛չ դասագրքային դասերից, որոնցով լիքն էր ծերունագարդ ուսուցչի անհանգիստ կյանքի ողիսականը:

–1920 թ. Ալեքսանդրապոլ. Ամերկում որբանոց: Որբանոց որբաշխարհում, անուրախ մանկության համատարած սգի ու հարության երկրում,– սկսեց ուսուցիչը: –Որբանոցին կից վարժարանի բարձր դասարանի սան էի: Բախտավորություն ունեի աշակերտելու Հ. Աճառյանին, Գ. Էդիլյանին, Մ. Աբեղյանին և ընկերն ու բախտակիցը լինելու մեր ժամանակի մեծագույն բանաստեղծ Հ. Շիրազի:

Կենսապայմանների վատթարացման պատճառով ուսումնա թողեցի և սկսեցի աշխատանք որոնել: Օրվա ապարդյուն թափառումներից հետո երեկոյան կանգ առա մի կիսակառույց բակում և անվստահ մոտեցա ինձնե՜րին.

–Աշխատանքի կընդունե՞ք:

Նայեց դեմքիս.

–Քանի՞ տարեկան ես,– հարցրեց:

–Տասնվեց,– երկու տարով մեծ ձևացա ես:

Ինձնե՜րի ճաշակով բանվոր չէի հարկավ իմ վտիտ կերպարանքով, բայց հավանաբար խորաթափանց մարդ էր, անխոս հասկացավ ինձ. չէ՞

որ այն տարիներին իմ հասակակիցները իրենք էին վաստակում իրենց ապրուստը, հաճախ ո՛չ միայն իրենց:

Ընդունեց: Մյուս օրն առավոտյան գործի անցա: Այդ օրվա իմ պարտականությունն էր կիսակառույց շենքի մի կողմից ավագ տեղափոխել մյուս կողմը և այնտեղից բերել որոշ քանակությամբ քար: Մի քանի անգամ ձեռնասայլակով գնացի-եկա ու հոգնեցի: Այնտեղ, որ նահանջում է տկար մարմինը, ելք է որոնում հնարամիտ ուղեղը. նայեցի շուրջս, տեսա մի սյուն, չէին պակասում և այլ պարագաներ, և քիչ անց շինության կողքին վեր խոյացավ մի ինքնաշեն լծակ, որի մի նժարը կախված էր ավագակույտի, իսկ մյուսը՝ քարերի վրա: Նժարները նախ հավասարակշռված դիրքով լարաններով ամրացրի, որ չշարժվեն, և սկսեցի բեռնել, հետո լարաններից մեկը պտտեցի, և բեռներս հայտնվեցին անհրաժեշտ տեղերում: Այդպես կարգով-սարքով բեռնեցի-բեռնաթափեցի և մինչև կեսօր ավարտեցի աշխատանքս: Այն է՝ ուզում էի քանդել լծակը, երբ ինժեները եկավ: Եկավ, տեսավ ու զարմացավ: Զարմացավ ու հիացավ:

–Եվրոպայում եմ կրթություն ստացել, բայց ասիացու քո փոքրիկ ուղեղը իմ գիտություններն այսօր ջրեց: Ժողովրդի՛ հանճար. ահա թե որն է գիտությունների իսկական կաճառը...: Եվ այն էլ ի՛նչ ժողովրդի,– խորը թախծեց ինժեները, ապա ինձ մեկնեց իմ այդ օրվա աշխատավարձը: Բացի այդ՝ ինձ խոստացավ վաղը ևս աշխատանք տալ:

Փռշտ ու կեղտոտ, քրտինքս փռեթաթավ դեմքիս չորացած, քերձված ու կոշտացած ձեռքերս մեծավարի թափահարելով՝ դուրս եկա կիսակառույցի բակից: Առաջին վաստակիս պարգևած բերկրանքն այնպես էր պարուրել ինձ, որ ես փողոցն անցա սուլելով: Անցա և դեմ դուրս եկա... Մանուկ Աբեղյանին:

–Ողջո՛ւյն, ուսուցի՛չ,– շփոթահար մրմնջացի ես:

–Ողջո՛ւյն, հանգա՛ծ բանաստեղծ:

Նա ընդհուպ մոտեցավ ինձ:

Ես գլուխս ավելի խոնարհեցի:

Երբ հայացքս բարձրացրի, նրա քննախույզ հայացքը աչքերիս մեջ պատասխան էր որոնում:

–Դուք սնում եք մեր հոգին, իսկ մարմինը մնում է քաղցած ու անօթևան. գնում եմ հանապազօրյա հաց վաստակելու,– բարբառեցի ես:

Աբեղյանի հայացքում իմ պատասխանը ալիք առաջացրեց, ինչպես ժայռաբեկորը՝ ծովում սուզվելիս: Իսկ երբ ծովը հանդարտվեց, նա ասաց.

–Վաղը կգաս դպրոց:

–Չեմ գա:

Կգաս-չեմ գա, կգաս-չեմ գա. ես գլուխս կախ ու անկարգ հեռացա: Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, ներկայացա «աշխատանքի», բայց ինժեները անժպիտ դիմավորեց ինձ:

–Քո ուսուցիչը եկել էր ինձ մոտ և պահանջեց, որ քեզ աշխատանքի չընդունեն, հակառակ դեպքում ինձ դատի կտա:

Լսելու հետ մեկտեղ մտածում էի նոր աշխատանք որոնելու մասին, այնքան որ ստիպողական էր կարիքս, և խռովքս ինձ կամավոր էր դարձրել:

Դեռ չէի հասել փողոցը, երբ նորից դեմս ելավ Աբեղյանը՝ այս անգամ մի խումբ ուսուցիչների հետ:

Ես անցա մյուս մայրը: Նրանք նույնպես բաժանվեցին երկու խմբի և շրջապատեցին ինձ: Աբեղյանը ձեռքս բռնեց...:

Եվ ինչպե՞ս շարունակեցիք բաբախել, իմ սի՛րտ, թեկուզև շփոթահար, թեկուզև բեկ-բեկ: Բայց իմ կրծքի տակ սիրտ չէր բաբախում, այլ բարձրանում էր մի իններորդ ալիք, որ հորձանք էր առնում Աբեղյանի ափի մեջ գտնվող իմ բախտավո՛ր ձեռքի երակներից:

Եվ հետո առհասարակ մենք որքա՛ն հանգիստ ենք վերապրում մեր անդարձ անցյալի նվիրական պահերը, որոնց աստեղային հմայքը ժամանակը չի խունացնում, այլ բյուրեղացնում է միայն:

...Աբեղյանն ինձ... խանութ տարավ, ոտքից գլուխ հագցրեց, ապա մի կիսալայնեզր գլխարկ ու նախշազարդ փայտիկ էլ ավելացրեց, որպիսիք կրում էին այն ժամանակ երիտասարդ մայրները:

Որբի իմ սիրտը ճղփում էր՝ մեկընդմիջտ տեղի տալով շփոթության ու երկյուղածության առաջ: Չէ՞ որ իր անձնական միջոցներից ինձ այդպիսի բաժին էր հանել ինքը՝ Աբեղյանը: Ուշադրության այդպիսի տարափ ես երբևէ չէի տեսել ու չտեսա հետագա իմ ողջ կյանքում:

Չասաց այլևս, թե վաղը կգաս վարժարան, այլ ասաց.

–«Աբու-Լալա Մահարի» պոեմի 3-րդ սուրահը անգիր է հանձնարարված:

Չասաց, բայց ասաց:

Հաջորդ օրը դպրոցի հոգաբարձությունը ստիպված էր ինձ նորից ընդգրկել իր սաների ցուցակում, որի առիթով երգեցողության ուսուցչուհի օր. Փերգելյանը խիստ զայրացած էր: Միջանցքի մի անկյունից նկատելի և լսելի էր ուսուցչանոցում տեղի ունեցող վեճը.

–Աբեղյա՛ն-Թերգելյա՛ն,– մեր ականջին էր հասնում Աբեղյանի ձայնը, որի ձեռքը կարծես թե դողում էր, իսկ ծաղկատար դեմքին զայրույթը շառագույն էր սփռել: Ինչևէ, Աբեղյանը հաղթեց, և ես դասաբանում էի:

Գրականության դաս էր: Սրտատրոփ սպասում էի իմ հերթին: Ի դեպ, նա ինձ գրատախտակի մոտ էր հրավիրում Հայրենիք անունով մի տղայի հետ և լիասիրտ ըմբռնում մեր անունների պարզևած վսեմ հաճույքը:

–Ազա՛տ, Հայրենի՛ք,– արտաբերում էր նա, և տեսնել էր պետք այն գմայլանքը, որ հայտնվում էր այդ պահերին մեր ուսուցչի դեմքին. դա հոգեւաւցում էր բառի բովանդակ արտահայտությամբ: Մանկությունից զուրկ մեր հոգիները այն տեղափոխում էր անանձնական մի աշխարհ և ներարկում մի զգացմունք, որ կոչվում էր հայրենասիրություն: Անձնվե՛ր, անմնացո՛րդ, մոլի՛, պատրաստակա՛մ: Այսօր էլ առանց հուզմունքի չեմ կարող հիշել, թե ինչպիսի՛ սիրով ունկնդրեց նա ինձ «Աբու-Լալան» ասմունքելիս. գլուխը քիչ թեքած՝ տակտով շարժում էր՝ մատներով միաժամանակ ռիթմիկ թրխկացնելով սեղանին, կարծես թե ընթանում էր քարավանին համաքայլ, նվագակցում իր կորած-գտնված աշակերտին կամ ողջունում էր «անառակ որդու» վերադարձը:

Եվ դա այդ համակ հույզն էր, այն հազվագյուտ գումարելին, որի հավելումով նա իր մատուցած դասերի հոգևոր սնունդը դարձնում էր կենսական բարիք:

Զսպանվո՛ղ: Զինացո՛ղ: Զխամրո՛ղ:

Եվ ո՞վ էր նա:

Ուսուցի՞չ, հա՞յր, ընկե՞ր, եղբա՞յր...

Իսկ ո՞վ չէր:

Շուտով, սակայն, ասպարեզ եկան քաղաքական այլ ուժեր, և Հայաստանի առաջին հանրապետության եռագույն դրոշը... խոնարհվեց: Ու մի առավոտ էլ աղմուկ ու իրարանցում էր որբանոցում: Վարժարանի և որբանոցի տնօրեններ միստր Օգդենը և Միստր Յարոն իրենց միջոցներով սնած ու կրթած որբերին (շարժակա՛ն կապիտալ), որոնք փոքրիշատե

հմտացել էին գիտության, արվեստի և արհեստների բնագավառներում, որոշել էին Ամերիկա տանել, և շատերին տարան:

...Վագոնների բաց պատուհաններից նայում էինք դուրս, ու աշխարհը է՛լ ավելի անծայր ու անորոշ էր թվում, իսկ կառամատույցում երթևեկող մարդիկ՝ շարժական ֆիգուրաներ: Կարծես թե միֆ էր դառնում Արարատը, իսկ Աբեդյանի սերմանած անձնագոհ հայրենասիրությունը՝ թղթե գաղափար: Մեր որբ հոգիները կարծրացել ու կծկվել էին կրկնակի որբանալու հեռանկարից, ու չէին հրապուրում ուղեկցող մայրապետների զրույցները՝ ամերիկյան բարեկեցիկ հեռուների մասին: Ու հանկարծ... տեսադաշտում հայտնվեցին վարժարանի սկաուտական նվագախումբն ու երգչախումբը.

–Մեր հայրենիք՝ թշվառ, անտեր...

Հնչում էր երգը ու ոչ թե ալեկոծում, այլ փոթորկում էր մեր հոգիները: Այո՛, կանչում էր հայրենիքը, կանչում էր յուր որդոց, և այդ կանչին անտարբեր չէր կարող մնալ ոչ մի որդի՝ թեկուզև որբ, թեկուզև դեռահաս:

Ինչ-որ մեկը հեռվում գոռաց (Օհանի կա՛նչն էր).

–Կեցցե՛ անկախ Հայաստանի ապագան՝ նոր սերունդը. ուռա՛-ա՛ա...

–Ուռա՛-ա՛, – արձագանքեցինք մենք ու վարարած գետի պես դուրս թափվեցինք վագոններից... նվագախմբից մեկուսի, բայց նրան առընթեր կանգնած էր Մ. Աբեդյանը: Նա նման էր մարտադաշտը զննող զորավարի, որի զինվորները հաջող էին կռվել, բայց կային փորձություններ, որոնք դեռ գալոց էին: Վերադարձանք մեր բույնը՝ մանկատուն՝ միակ հարազատ վայրն աշխարհիս երեսին: Վերադարձանք նույն երգը երգելով, բայց ուրիշ էին այժմ արդեն երգի բառերը: Հիմա արդեն ուղղակի կապ կար այդ երգի ու մեր միջև: Կարծես թե հենց մե՛զ համար էր գրված այդ երգը, ու հենց մենք էինք հայրենիքի կանչած որդիները: Այդ պահը մեզ հասունացրեց այնքան, որքան չէին հասունացել անուրախ ու դժվար կյանքի բոլոր օրերն ու փորձությունները...:

Քիչ անց արևով ողողված դասարանում՝ Աբեդյանի խանդաղատալից հայացքի ներքո, հնչում էր դասից առաջ կատարվող աղոթքը.

–Գոհանամ զքեն, Արարի՛չ, զի արժանի արարեալ շնորհաց քոց՝ ընդունելութեան զուսմանս այսօր: Օրհնեա՛ զուսուցիչս, ծնողքս, որոնք առաջնորդեն մեզ ի գիտութիւն, ի բարութիւն:

Այդ մեր շուրթերը չէին արտաբերում այդ բառերը. նրանք պոկվում էին ուղղակի մեր սրտերից: Պատանեկան երեք տասնյակ կրծքեր ելնեջում էին միևնույն ազնիվ խռովքով: Այդ պահին մենք նորովի ընկալեցինք աղոթքի բառերն ու «օրհնեա զուսուցիչս» արտահայտությունը. այդ օրը նրա՝ շնորհիվ մենք չկորցրինք մեր երազի ճամփան, իսկ այդ բառերն այլևս ոչ միայն աղոթքի, այլև ուխտի երդման բառեր էին՝ զինվորագրված դպրության ապրեցնող խորհրդին...

*Գրառեց Էմմա Հովհաննիսյանը
«Գրական թերթ» №42, 2009*

ՄԵԾԱՐՈՒՄ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀՄԿԱՅԻՆ

Վաղուց այդքան բազմամարդ չէր եղել Գրականության ինստիտուտի դահլիճը: Եվ դա պատահական չէր: Որքան էլ տարօրինակ թվա, շուրջ 20 տարվա ընդմիջումից հետո առաջին անգամ էր մեծարվում այն գիտնականը, որի անունն է կրում Գրականության ինստիտուտը:

Հարկ է ասել, որ կազմակերպած գիտական նստաշրջանը ելույթ ունեցողների պատկառելի կազմով՝ ակադեմիկոսներ Վլադիմիր Բարխուդարյան և Սերգեյ Սարինյան, ԳԱԱ թղթակից անդամներ Սարգիս Հարությունյան և Արտեմ Սարգսյան, ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Լավրենտի Հովհաննիսյան, ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Ավիկ Իսահակյան, ԵՊՀ Բանասիրական ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյան, ճանաչված գրականագետներ Ալբերտ Մուշեղյան, Վարդան Դևրիկյան, Վահան Նավասարդյան, Մարգարիտ Խաչատրյան և Հասմիկ Աբեղյան, իրենց գիտական զեկույցներում այնքան բազմաբնույթ ու հագեցած էին ներկայացրել մեծ հայագետի կյանքն ու ստեղծագործությունը, որ ամենայն իրավունքով կարող ենք ասել, որ սեպտեմբերի 30-ի նախաձեռնությունը լիովին արժանի դարձավ հայ մեծ գիտնական-բանագետի հիշատակին:

Այդ օրը նշանակալից կլինի Գրականության ինստիտուտի պատմության մեջ նաև այն առումով, որ ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ ստեղծված է մեծ գիտնականի անունը կրող արձաթյա հուշամեդալ, որը յուրաքանչյուր տարի պետք է տրվի մի շարք անվանակարգերով: Գիտական նստաշրջանին արեղյանական առաջին հուշամեդալները հանձնվեցին հետևյալ անվանակարգերով՝ «Տարվա լավագույն գրականագետ»՝ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանին (ի դեպ, վերջինիս գիտական զեկույցումը՝ «Մ. Աբեղյանի գրականագիտական համակարգերը», անառարկելիորեն գիտական նվաճում է), «Հայագիտության ասպարեզում մեծ վաստակի համար»՝ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանին, «Երկարամյա անբասիր աշխատանքի համար Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում»՝ բանասիրության դոկտոր Ալմաստ Զաքարյանին և բանասիրության թեկնածու Հասմիկ Աբեղյանին:

Մանուկ Աբեղյանը՝ էնցիկլոպեդիկ գիտելիքների տեր ազգանվեր գիտնականը, միայնակ մի խոշոր հետազոտական հաստատության դեր է

կատարել, նրա մտքի կենտրոնում է եղել հայագիտությունն իր բոլոր ճյուղերով: Եվ ներկայիս գիտաժողովը հնարավոր լայն չափով էր ներկայացրել նրա գիտական ընդգրկումները՝ «Մ. Աբեղյանի գրականագիտական համակարգերը» (Ս. Մարինյան), «Մ. Աբեղյանի բանագիտական գործունեությունը» (Ս. Հարությունյան), «Մ. Աբեղյանը և հայ տաղաչափության կարգերը» (Վ. Նավասարդյան), «Մ. Աբեղյանը և եվրոպական գրականությունը» (Ա. Մուշեղյան), «Հայ ժողովրդական խաղիկների և գուսանական երգերի աբեղյանական հրատարակությունները» (Վ. Դերիկյան), «Արտաշես Աբեղյան և Մանուկ Աբեղյան առնչությունները» (Ս. Խաչատրյան): Իսկ Հասմիկ Աբեղյանը հանդես եկավ շատ հետաքրքիր ու հուզիչ հուշերով իր մեծ պապի մասին:

Գիտաժողովի ավարտից հետո մեր հարցին, թե առաջիկայում ինչ ծրագրեր ունի Գրականության ինստիտուտը, պատասխանեց ինստիտուտի տնօրեն Ավիկ Իսահակյանը. «Խորհրդանշական է, որ մեծ հայագետի հիշատակին նվիրված գիտական նստաշրջանից հետո մոտակա ժամանակներս կկազմակերպվի ժամանակակից հայ գրականությանը նվիրված գիտաժողով, որի մասնակիցները կլինեն բացառապես երիտասարդ գրականագետները, կանցկացվի նաև կլոր սեղան երիտասարդ գրողների մասնակցությամբ, իսկ հոկտեմբերի 30-ին մեր՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի և Վանաձորի մանկավարժական ինստիտուտները համատեղ կանցկացնեն հանրապետական գիտաժողով ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների մասնակցությամբ՝ նվիրված հայ պոեզիայի անմար աստղ Հովհաննես Թումանյանի ծննդյան 140-ամյակին: Այնպես որ, ավանդները շարունակվում են, և անցյալն ու ներկան հավերժ փոխկանչի մեջ են»:

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿԻՑ

«Գրական թերթ», N 33, 2009

ՆՇԱՆԱՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ.

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

(186-1944)

Հայագիտական մտքի նոր պատմության դասական ներկայացուցիչ, խոշորագույն լեզվաբան, գրականագետ, բանագետ, պատմաբան, բանասեր Մանուկ Աբեղյանը ծնվել է 1865 թ. մարտի 17-ին (հին տոմարով՝ 5-ին), Նախիջևանի Աստապատ գյուղում՝ հողագործի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է հայերենի գյուղի խալֆաների մոտ, ապա՝ Կարմիր վանքի նորաբաց վանական դպրոցում և իր բացառիկ ընդունակություններով իր վրա է հրավիրել Հովակիմ եպիսկոպոս Տեր-Գրիգորյանի և վարդապետների ուշադրությունը: 1876 թ. Մ. Աբեղյանը դարձել է էջմիածնի նորաբաց ճեմարանի աշակերտ¹⁰:

Ճեմարանի տեսուչը՝ Գաբրիել եպիսկոպոս Այվազովսկին, հոգ է տանում նոր սանի կրթության, նրան ճեմարանական պայմաններին ծանոթացնելու և ընտելացնելու ուղղությամբ: Այդ նպատակով բարձր դասարանցիներից առանձնացնում է երեք հոգու (Ա. Զամինյան, Ն. Քարամյան, Սաֆարյան), որոնք Մանուկի հետ պարապում են տարբեր առարկաներ: Զնայած գործադրած ջանքերին՝ Մանուկին այդ տարի չի հաջողվում փոխադրվել հաջորդ դասարան, քանզի նա ճեմարան էր ընդունվել գրեթե ուսումնական տարվա վերջին՝ ապրիլ ամսին, և կարճ ժամանակում չէր կարող հաղթահարել կրթության թերին՝ հասնելու երկրորդ դասարանցիների մակարդակին:

Նոր ուսումնական տարվանից արդեն որոշ չափով ընտելացած լինելով ճեմարանի միջավայրին, ավանդվող առարկաներին և ուսումնական ծրագրի պահանջներին՝ Մ. Աբեղյանը սկսում է հաջողությամբ յուրացնել դասավանդվող առարկաները՝ առանձնապես մեծ առաջադիմություն ցույց տալով հայոց լեզվից (գրաբար և աշխարհաբար):

Այս տարիներին Գևորգյան ճեմարանում էին դասավանդում ականավոր մանկավարժ-հայկաբաններ Սեդրակ Մանդինյանը, Ստեփանոս Պալասանյանը, Կարապետ Կոստանյանցը և Փիլիպպոս Վարդանյանը,

¹⁰ Մանրամասներ տե՛ս Մ. Հաբութունյան, Մանուկ Աբեղյան, կյանքն ու գործը, Երևան, 1970, էջ 17:

որոնց Մանուկ Աբեղյանը անձամբ է աշակերտում: Իր ընդունակությունների և լավ վարքի համար Աբեղյանն արժանանում է բոլոր ուսուցիչների սիրուն ու համակրանքին: Նրան հատկապես խրախուսում է ճեմարանի տեսուչն ինքը՝ Գաբրիել եպիսկոպոս Այվազովսկին, որի վրա Աբեղյանն առաջին իսկ հանդիպումից շատ լավ տպավորություն էր թողել: 1882 թ. Աբեղյանը բարձր գնահատականներով ավարտում է ճեմարանի դպրոցական հանրակրթական բաժինը և փոխադրվում լսարանական մասնագիտական բաժին: 1885 թ. ավարտելով Գ լսարանը՝ մայիս ամսին բոլոր ավարտական քննությունները հանձնում է «յոթ գովելի» գնահատականներով՝ արժանանալով առաջնակարգ մրցանակագրի՝ դիպլոմի: Նույն՝ 1885 թ. Մ. Աբեղյանը վեց այլ ճեմարանավարտների հետ հունիսի 10-ին գրավոր դիմում է ներկայացնում Էջմիածնի Սինոդին. նախ՝ իրենց շնորհակալությունն են հայտնում ստացած ուսման համար, ապա, ի նշան երախտագիտության, խնդրում մեկ տարով ձրի դասավանդել ճեմարանի դպրոցական բաժնի երեք դասարաններում՝ խոստանալով միաժամանակ ստանձնել ճեմարանի վերակացության, քարտուղարության և մատենադարանապետության պաշտոնները՝ խնդրելով միայն չնչին կենսամիջոցներ իրենց «չափավոր և համեստ կենցաղի» համար: Դիմումը ներկայացվում է ճեմարանի նոր տեսչին՝ Գրիգոր եպիսկոպոսին, որը դրական եզրակացությամբ ներկայացնում է Սինոդին. վերջինս բավարարում է շրջանավարտների պահանջները¹¹: Մ. Աբեղյանը նշանակվում է ճեմարանի դպրոցական բաժնի հայոց լեզվի ուսուցիչ, միաժամանակ գրադարանապետ և ճեմարանի խորհրդի քարտուղար՝ ամսական 25 ռուբլի աշխատավարձով:

1887թ. ինքնահոժար թողնելով ճեմարանը՝ Աբեղյանը հայոց լեզվի և գրականության ուսուցիչ է կարգվում Շուշվա թեմական դպրոցում: Այստեղ 1888 թ. լույս է տեսնում նրա «Նշումներ» խորագրով բանաստեղծությունների ժողովածուն, իսկ 1889թ.՝ հայ ժողովրդական հերոսավեպի իր գրառատ պատումը՝ «Դավիթ և Մհեր» վերտառությամբ: Վերջինս Աբեղյանը գրառել էր 1886 թ. Էջմիածնում, ճեմարանի դռնապան մոկացի Նախոքեռուց: Այս պատումի հրապարակությունը նշանավոր երևույթ էր թե՛ հայագիտության համար և թե՛ Մ. Աբեղյանի կենսագրության մեջ: Հայ

¹¹ Տե՛ս Մ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 19:

դյուցագնավեպի՝ Գ. Սրվանձոյանցի հայտնաբերած և հրատարակած առաջին ու միակ պատումից հետո սա երկրորդ նորահայտ պատումն էր, որ գալիս էր հաստատելու այդ վեպի տարածվածությունը, Տարոնից բացի, նաև հարևան գավառներում: Այս պատումը իր գեղարվեստական ու պատմամշակութային ակնհայտ արժանիքներով գրավում է ժամանակի գիտական մտքի ուշադրությունը (Լեո, Լ. Սարգսյան, Ն. Մառ) և վերջնականորեն կողմնորոշում Մ. Աբեղյանի գիտական նախասիրությունները: «Դավիթ և Մհեր»-ով Աբեղյանը ձեռք է բերում գիտական ճանաչում և ընդմիշտ նվիրվում հայագիտությանը:

Նույն՝ 1889 թ. «Մուրճ» ամսագրում սկսում է լույս տեսնել Մ. Աբեղյանի՝ «Ազգային վեպ» խորագրով ուսումնասիրությունը՝ շարադրված Գ. Սրվանձոյանցի և իր գրառած պատումների հիման վրա. դրանով նա դառնում է մեր ժողովրդական վեպի առաջին գիտական հետազոտողը:

1889թ. Աբեղյանը Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց վարժարանի տեսուչ Փիլիպպոս Վարդանյանի հրավերով մեկնում է Թիֆլիս և ստանձնում վարժարանի հայոց լեզվի և գրականության ուսուցչի պաշտոնը: Վարժարանում պաշտոնավարելու չորս տարիների ընթացքում Աբեղյանը ծավալում է նաև լրագրական-հասարակական լայն գործունեություն՝ իր գրական բախտը կապելով ժամանակի հայ նշանավոր պարբերականներից մեկի՝ «Նոր-Դար»-ի հետ: Այստեղ նա պարբերաբար հրատարակում է գանգան հոդվածներ՝ նվիրված ժամանակի հայ գրականությանը, լեզվի, թատրոնի, հասարակական կյանքի հետ առնչվող հրատապ խնդիրների՝ իր բուն ազգանունից բացի հանդես գալով «Վարսամ», «Գիսավոր» և այլ կեղծանուններով: Աբեղյանն այնքան է կապվում «Նոր-Դար»-ի հետ, որ 1890 թվականից սկսած՝ վարում է թերթի մատենախոսական բաժինը, իսկ 1891-1892 թթ. ստանձնում է նրա խմբագրությունն ու անգամ հրատարակությունը: 1889 թ. նա ընտրվում է նաև Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության խմբագրական մասնաժողովի անդամ: 1893 թ. ազգային բարերար Ա. Մանթաշյանի նյութական հովանավորությամբ Աբեղյանը մեկնում է Գերմանիա՝ ուսանելու: Ընդունվում է Ենայի համալսարանը՝ իբրև բանասիրության և փիլիսոփայության ուսանող: Երկու կիսամյակ ուսանում է Ենայի, երեք կիսամյակ՝ Լայպցիգի, երեք էլ՝ Բեռլինի համալսարաններում, իսկ 1895 թ. անցնում է Ֆրանսիա՝ Փարիզ, և մեկ տարի ուսանում Սորբոնի համալսարանում որպես ազատ ունկնդիր, հմտանում

ֆրանսերենին և խորամուխ լինում ֆրանսիական հարուստ ու գեղեցիկ գրականության մեջ: Այստեղ էլ նա գրում է իր «Գրական դպրոցներ» աշխատությունը:

1898 թ. Աբեղյանն ավարտական քննություններ է հանձնում Ենայի համալսարանում՝ քննության գլխավոր ճյուղ ընտրելով ընդհանուր պատմությունը, իսկ երկրորդական ճյուղ՝ ընդհանուր փիլիսոփայությունը և ֆրանսերենը: Այստեղ էլ նա որպես դոկտորական ավարտաճառ ներկայացնում է «Հայ ժողովրդական հավատալիքը» գերմաներեն աշխատությունը, որը փայլուն կերպով պաշտպանելով՝ ստանում է փիլիսոփայության դոկտորի աստիճան: Այդ աշխատությունը լույս է տեսնում հաջորդ տարի (1899) Լայպցիգում:

1898 թ. Աբեղյանը Գերմանիայից վերադառնում է Թիֆլիս և անմիջապես ստանում Գևորգյան ճեմարանի վարչության հրավերը՝ ճեմարանում դասավանդելու համար: Աբեղյանն ընդունում է հրավերը և մեկնում Վաղարշապատ: Սկսվում են Աբեղյանի ճեմարանական աշխատանքային շրջանի երկար ու բեղուն տարիները (1898-1914): Այստեղ նա ստանձնում է հայոց լեզվի, հայ գրականության, պատմության, աշխարհագրության և գերմաներենի դասերը և դասավանդում ճեմարանի թե՛ դպրոցական և թե՛ լսարանական բաժիններում: Այստեղ էլ սկսվում է Մ. Աբեղյանի գիտահետազոտական գործունեության ամենաարդյունավետ ու բուռն ժամանակաշրջանը: Դրան մեծապես նպաստում է նաև «Արարատ» հեղինակավոր ամսագրի՝ Էջմիածնում հրատարակվելու հանգամանքը, որի խմբագրական հանձնաժողովի անդամ և գործուն աշխատակիցներից մեկն է դառնում նա:

1899 թ. բոլորում էր Գևորգյան ճեմարանի հիմնադրման 25-ամյա տարեդարձը: Այն Աբեղյանը նշանավորում է մի ամփոփ ու բովանդակալից աշխատությամբ՝ նվիրված ճեմարանի հիմնադիր, երախտավոր Գևորգ Դ կաթողիկոսի կյանքին ու եկեղեցահասարակական գործունեությանը¹²: Աբեղյանը շեշտը դնում էր հատկապես կաթողիկոսի կրթալուսավորական մեծարդյուն գործունեության վրա, որի բարձրակետն էր 1874 թ. նրա կողմից Էջմիածնի ճեմարանի հիմնադրումը, որ հետագայում կոչվեց նրա

¹² Մ. Աբեղյան, Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոս Ամենայն Հայոց, համառոտ կենսագրություն, Վաղարշապատ, 1899:

անունով՝ Գևորգյան: Նա է հիմնադիրը նաև «Արարատ» ամսագրի, որը հետագայում մշակութային խոշոր դեր խաղաց հայ ազգային-հասարակական կյանքում: Եվ Արեղյանի իրավացի հավաստմամբ՝ եթե հանգուցյալ Վեհափառը «Արարատ» ամսագրի և Էջմիածնի Ճեմարանի հիմնադրումից բացի ուրիշ ոչինչ արած չլիներ, ապա դրանք միայն բավական կլինեին նրա անունը ընդմիշտ հավերժացնելու:

Ճեմարանական գործունեության այս տարիներին է Արեղյանը գրում և հրատարակում իր հայագիտական աշխատությունների ճնշող մեծամասնությունը: 1899-1901 թթ. «Արարատ» ամսագրի տարբեր համարներում (1900 թ.՝ նաև առանձին գրքով) լույս է տեսնում նրա «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ» բանավիճային ստվար աշխատությունը, որտեղ պատմահամեմատական մեթոդով հետազոտվում և վերականգնվում են պատմահոր հաղորդած հայոց հնագույն առասպելների բուն նկարագիրն ու դիցաբանական բնույթը, ճշգրտվում մեր հին վեպի՝ «Վիպասանքի» սահմաններն ու առասպելապատմական հատկանիշները, հակառակ Գր. Խալաթյանցի՝ հավաստվում է Խորենացու հաղորդումների վավերականությունը և հիմք դրվում հայ հին վիպական բանահյուսության գիտական ուսմունքին:

1904 թ. «Արարատում» հրատարակվում է Արեղյանի «Ժողովրդական խաղեր» ուսումնասիրությունը՝ նվիրված հայ գեղջկական փոքրածավալ երգերին՝ խաղիկներին, որով հայ բանագիտության մեջ հիմքեր են դրվում մեր ժողովրդական երգերի տեսական ուսմունքին: 1906-1908 թթ. «Ազգագրական հանդեսի» տարբեր համարներում լույս է սկսում տեսնել Մ. Արեղյանի «Հայ ժողովրդական վեպը» դասական մենագրությունը (1908 թ.՝ նաև առանձին գրքով), որը թեպետ գրված էր «Սասնա ծռեր» հերոսավեպի մինչ այդ հայտի 15 պատումների հիման վրա, սակայն առարկայի բազմակողմանի ընդգրկմամբ ու քննությամբ դառնում է գիտական մի կուռ ու ամբողջական ուսմունք հայ վիպագիտության մեջ: Նույն՝ 1906 թ. հրատարակված «Աշխարհաբարի քերականություն», հետագայում տպագրված «Աշխարհաբարի հոլովները» (1908), «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (1909), «Աշխարհաբարի շարահյուսություն» (1912) աշխատություններով Արեղյանը հիմք է դնում արևելյան աշխարհաբարի քերականական նոր ուսմունքին և դառնում արևելահայերենի ամենահեղինակավոր ու նորարար հետազոտողը:

Ճեմարանում, հայոց լեզվի դասավանդմանը զուգընթաց, Մ. Աբեղյանը մշակում է առարկայի դասավանդման իր մեթոդներն ու ծրագիրը, որոնց հիման վրա կազմում է գրաբարի ու աշխարհագրարի դասագրքերը («Տարրական քերականություն», «Գրաբարի համառոտ քերականություն» և այլն), որոնք հետագայում ունենում են մի քանի վերահրատարակություններ և մեծ չափով նպաստում արևելահայոց մեջ հայերենի ուսուցման գործին:

XX դարասկզբից սկզբավորում են Մ. Աբեղյանի գրականագիտության և տեքստաբանական ուսումնասիրությունները: 1908-1909 և 1911 թթ. «Արարատ» ամսագրի մի շարք համարներում «Ուրվագծեր հայոց գրականության պատմությունից» ընդհանուր խորագրի տակ լույս են տեսնում Մ. Աբեղյանի երեք տարբեր գրականական հետազոտություններ, որոնցից առաջինը նվիրված էր հայ նոր գրականության սկզբնավոր ժամանակի խնդիրներին և XIX դարի սկզբի գրաբար բանաստեղծությանը, մյուս արևելահայ նոր քնարերգության սկզբնավոր Հ. Հովաննիսյանին և երրորդը՝ հայ հին հոգևոր բանաստեղծական հուշարձանների՝ շարականների բանասիրական քննությունը: Իսկ 1913 թ. Թիֆլիսում «Պատմագիրք Հայոց» մատենաշարով լույս է տեսնում Մ. Աբեղյանի և Սեթ Նարությունյանի աշխատասիրած՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» քննական-բաղդատական բնագիրը, մի տքնաջան ու մեծարդյուն գործ, որի վրա կազմողներն աշխատել էին 1901 թվականից ի վեր:

Աբեղյանի ճեմարանական շրջանի գործունեությունը համընկավ Ռուսական առաջին հեղափոխության տարիներին, որոնց նախորդել էր ցարիզմի հայահալած քաղաքականությունը՝ հայոց եկեղեցական կալվածքների և գույքի բռնագրավմամբ և դպրոցների փակմամբ: Իսկ բուն հեղափոխության տարիներին Անդրկովկասի ժողովուրդների ուշադրությունը հեղափոխությունից շեղելու և նրանց պատժելու նպատակով ցարական կառավարությունը հրահրում է հայ-թուրքական (ադրբեջանական) ազգամիջյան բախումներ՝ դրանց բոլոր ծանր հետևանքներով: Այս առթիվ Աբեղյանը «Նոր-Դար»-ում 1906 թ. հանդես է գալիս հրապարակախոսական հոդվածներով («Հայ-թուրքական կռիվը», «Պետք է պարզել, թե ինչ ենք ուզում»), որոնց մեջ մերկացնում և դատապարտում է ցարական կառավարության հակահայ քաղաքականությունը:

1899-1900 ուսումնական տարում Աբեղյանը ճեմարանում ստանձնում է նաև ընդհանուր եվրոպական գրականություն, իսկ հաջորդ ուստարում՝ նաև գրականության տեսություն առարկաների դասավանդումը և հիմնականում ծանրանում հայոց լեզվի (գրաբար և աշխարհաբար), հայոց հին և նոր գրականության, մասամբ էլ հայոց լեզվի տաղաչափության վրա: Ճեմարանի ուսումնական ծրագրում Աբեղյանը կատարում է մի կարևոր նորամուծություն. առաջին անգամ հայկական ուսումնական հաստատությունների պատմության մեջ ներմուծում է ժողովրդական բանահյուսությունն իբրև առանձին ծրագրված առարկա, և ինքն էլ ստանձնում է դասավանդումը:

Ճեմարանի հիմնադրումից ի վեր գրեթե ոչ մի էական փոփոխություն չէր կատարվել նրա վարչակրթության գրվածքում, և շատ կանոններ հնացել էին նորացող հասարակական կյանքի պահանջների համեմատ:

Երկրում բարձրացող հեղափոխական ալիքը թափանցում է նաև ճեմարանի պատերից ներս: Եկեղեցական կալվածքների բռնագրավումից արդեն հուզված և բորբոքված ճեմարանի աշակերտությունը, հետևելով պետական դպրոցների աշակերտության տրամադրություններին, սկսում է ըմբոստանալ ճեմարանի կարգ ու կանոնի ու այն պահպանող վարչության դեմ: Աշակերտական հուզումներն առավել բորբոքվում են հայ-թուրքական ազգամիջյան կոտորումների հետևանքով: Ճեմարանում աշակերտական խռովությունները ծայր աստիճան են հասնում 1905-1907 թթ. ընթացքում, որոնց հետևանքով ուսումնական տարիները փակվում են ժամանակից շուտ և միմյանց են հաջորդում նոր տեսուչների նշանակումներն ու նրանց հրաժարականները (Կ. Կոստանյանց, Գաբեգին վարդապետ Հովսեփյան, Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյան): Ի վերջո բարձրագույն հոգևոր իշխանությունը տեղի է տալիս այդ խռովությունների առջև: 1907 թ. հունիսի 2-ի Կոնդակով կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը պարտավորեցնում է իր տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցին՝ Միտղի անդամների և Մայր Աթոռի ձեռնհաս միաբանների մասնակցությամբ ժողով հրավիրել և քննության դնել ճեմարանի և եկեղեցական մյուս դպրոցների բարեկարգման հարցը: Ժողովն իր երկրորդ նիստում (1907 թ. հունիսի 23), ի գիտության ընդունելով ճեմարանի տեսուչ Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանի հրաժարականը, որոշում է անհապաղ հրավիրել նոր տեսուչ, որն առաջիկա ուստարվա համար ուսուցչական

նոր խումբ կազմի: Տեսչության պաշտոնի թեկնածուներ են առաջադրվում Մ. Աբեղյանը, Ն. Ադոնցը և Բ. Գասպարյանը, վերջնական ընտրությունը թողնում է կաթողիկոսի կամքին:

Հիշյալ որոշումից անմիջապես հետո Մկրտիչ Ա Խրիմյանը հրավիրում է Մ. Աբեղյանին և առաջարկում ստանձնել տեսչի պարտականությունները՝ մինչ այդ նախապես ծանոթանալով ճեմարանի գործերի ընդհանուր վիճակին: Ծանոթանալով գործերին՝ Աբեղյանը մի ընդարձակ հայտարարությամբ դիմում է կաթողիկոսին և նախքան տեսչի պաշտոն ստանձնելը հանգամանորեն շարադրում է ճեմարանի պայմանների բարեփոխման իր առաջարկությունները՝ պատճառաբանելով բարեփոխումների հասարակական անհրաժեշտությունը: Այդ առաջարկությունները հիմնականում հանգում են հետևյալին՝ կայուն վարչություն և ուսուցչական որակյալ խմբի ստեղծում, ուսուցիչների նյութական դրության բարելավում և կենսաթոշակների սահմանում, ճեմարանի տարեկան նախահաշիվների կարգավորում և ժամանակին ֆինանսավորում, ճեմարանի աշակերտության իրավացի պահանջների բավարարում, ճեմարանի կառավարման վարչական համակարգի հետագա դեմոկրատականացում, մանկավարժական խորհրդի ղեկավար դերի բարձրացում և այլն:

Աբեղյանը հայտարարության վերջում ավելացնում է. «...Չեմ կարող հանձն առնել ճեմարանի տեսչությունը, մինչև չփոխվին վերոհիշյալ պայմանները՝ որոշ եզրակացության հանգելով, որով կվերացվեն աշակերտական դժգոհությունների ու անկարգությունների պատճառները, որովհետև հավատացած եմ՝ քանի որ ցանկալի հառաջադիմություն ու բարեկամություն ունենալ»¹³:

Աբեղյանի հայտարարությունը Խրիմյան Հայրիկի մակագրությամբ հասցեագրվում է վերոհիշյալ ժողովի նախագահ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցին, որը ժողովի վեցերորդ նիստը (1907 թ. հուլիսի 2) ամբողջությամբ նվիրում է Մ. Աբեղյանի հայտարարության քննարկմանը: Ժողովն սկզբունքորեն ընդունում է գրեթե բոլոր առաջարկությունները, բացառությամբ մեկի՝ ճեմարանի ուսումնական ու կառավարման վարչական փոփոխման հարցի՝ այն թողնելով հատուկ քննության: Ժողովն իր որոշումն ուղարկում է կաթողիկոսին, որը սակայն, նույնությամբ չի ըն-

¹³ Տե՛ս Մ. Հաբությունյան, Մանուկ Աբեղյան, կյանքն ու գործը, էջ 84:

դունում և 1907 թ. սեպտեմբերի 7-ին հրապարակած Կոնդակով օրենքի ուժ է տալիս Աբեղյանի առաջարկներից միայն մի քանիսի (բարձրագույն կրթությամբ ուսուցիչների անհրաժեշտություն, դասագների բարձրացում, ուսուցիչների ռոճիկների հավելում և կոնսաթոշակների դրամարկդի հիմնադրում), իսկ մնացած արմատական խնդիրները մնում են չլուծված, որը հետագայում տեղիք է տալիս նորանոր դժգոհությունների և խռովությունների:

Չընդունելով Աբեղյանի առաջարկած պայմանները՝ Էջմիածնի հոգևոր իշխանությունը ճեմարանի տեսչի պաշտոնին է կոչում Մինաս Բերբերյանին, որը, ստանձնելով այն, շտապում է առաջիկա ուսումնական տարվա համար ուսուցչական նոր խումբ կազմել: Նա գրավոր դիմում է Մ. Աբեղյանին՝ հայտնելով նրան դասավանդվելիք առարկաները, դասերի և ռոճիկի չափը: Վերջինս որոշ ճշգրտումներից հետո տալիս է իր համաձայնությունը: Նոր ուստարում կաթողիկոսը հայոց դպրոցների գործը բարելավելու նպատակով Մայր աթոռին կից ստեղծում է հատուկ հանձնաժողով, որի նպատակն էր հայկական բոլոր դպրոցների ուսումնականական աշխատանքների ղեկավարումը: Ճեմարանի մանկավարժական հանձնաժողովի կից հանձնաժողովի անդամ են ընտրվում Մ. Բերբերյանն ու Մ. Աբեղյանը: Մակայն 1907 թ. հոկտեմբերին վախճանվում է Խրիմյան Հայրիկը, կաթողիկոսական գահը մնում է թափուր: 1909 թ. ապրիլին ձերբակալվում է Մ. Բերբերյանը: Վերջինս կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցը ազատվում է տեսչի պարտականություններից և առաջարկում Ճեմարանի մանկավարժական խորհրդին ընդունել խորհրդի մշտական նախագահ, որը մինչև տարեվերջ վարի Ճեմարանի գործերը: Ապրիլի 28-ին կայացած խորհրդի նիստում միաձայն նախագահ է ընտրվում Մ. Աբեղյանը: Դեռևս նախորդ տեսչի պաշտոնակատարման ժամանակ Ճեմարանում տեղի է ունենում աշակերտների մի նոր ցույց: Ցուցարարների հարցը տեղափոխվում է մանկավարժական խորհուրդ, սակայն վերջինս ոչ մի որոշում չի կայացնում՝ հարցը համարելով իր պատասխանատվությունից դուրս: Աբեղյանի ժամանակավոր տեսչության օրերին այդ հարցը նորից է դրվում մանկավարժական խորհրդի քննարկմանը: Նախքան որոշում կայացնելը կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցը միջամտում է գործին՝ կարգադրելով մանկավարժական խորհրդին դասադուլ անող աշակերտներին քննություննե-

րը փոխադրել հաջորդ ուստարվա սկզբին: Այս հանգամանքը առիթ է ծառայում ճեմարանի ուսուցչության և էջմիածնի հոգևոր իշխանության միջև առկա հակասությունների ծայրահեղ սրման: Կաթողիկոսական տեղապահի միջամտությունը խորհուրդը դիտում է իբրև վանքի իշխանությունների կողմից իր իրավունքների ոտնահարման մի կոպիտ ցույց: Մանկավարժական խորհրդի անդամները, ի նշան բողոքի, հրաժարվում են իրենց պաշտոններից: Խորհրդի որոշումն Աբեղյանը անմիջապես հայտնում է Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցին: Վերջինս, ճեմարանի տարեվերջյան քննությունների ձախողումից անհանգստացած, չի ընդունում ուսուցիչների հրաժարականը և առաջարկում է Աբեղյանին հանդարտացնել ուսուցիչներին և շարունակել պարապմունքները: Ճեմարանի տեսչի պաշտոնակատարն առավել համառ է գտնվում իր որոշման մեջ: Նա իսկույն պատասխանում է Սուրենյանցին, թե «...ինչպես այսօրվա... գրությամբ հայտնեցի Ձեզ, ուսուցիչները և ես նրանց հետ հրաժարվել ենք մեր պաշտոններից, ուստի և այսուհետ չի կարող մանկավարժական ժողով կայանալ՝ ճեմարանի գործերը վարելու համար... Ես այսօրվանից ինձ ազատ եմ համարում ապագայի պատասխանատվությունից»¹⁴:

Տեղապահը ստիպված ընդունում է ճեմարանի մանկավարժական անձնակազմի հրաժարականը և տեսչի պաշտոնակատար է նշանակում Մ. Կանայանին: Բայց շուտով ձերբակալությունից ազատվում է Մ. Բերբերյանը, կրկին աշխատանքի է հրավիրվում: Աբեղյանը Գևորգյան ճեմարանում շարունակում է իր աշխատանքները մինչև 1914 թվականը, երբ ուսուցչի երկու մեծ խմբերի միջև պառակտում է առաջանում: Գևորգ Ե կաթողիկոս Սուրենյանցը փոխանակ արդար ու մեղավորը միմյանց գատելու, ճեմարանի ամբողջ ուսուցչական կազմը ազատ է արձակում՝ հաշվի չնստելով նրանց ոմանց՝ ճեմարանին մատուցած երկարամյա ծառայությունների, գիտելիքների և մանկավարժական հարուստ փորձի հետ: Մ. Աբեղյանը ստիպված 1914 թ. հունիսի 15-ին հրաժարվում է իր պաշտոնից, մեկնում Թիֆլիս՝ ընդմիշտ թողելով էջմիածինը:

Սկսվում է Աբեղյանի թիֆլիսյան կյանքի երկրորդ շրջանը: Նա այստեղ նախ պաշտոնավարում է Ներսիսյան դպրոցում՝ որպես գրաբարի և

¹⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 87:

հայ հին գրականության ուսուցիչ, հետագայում նաև նորաբաց հայագիտական երկսեռ բարձրագույն դասընթացներում, Հայկական պետական գիմնազիայում և Կովկասյան համալսարանում: Գևորգյան ճեմարանի վարչությունը այդ տարիներին (1915, 1917) Աբեղյանին երկիցս հրավիրում է Էջմիածին՝ ճեմարանում կրկին պաշտոնավարելու, սակայն երկու դեպքում էլ Աբեղյանը կտրուկ մերժում է:

Թիֆլիսյան այդ տարիներին Մ. Աբեղյանը ծավալում է գիտական, հասարակական-մշակութային լայն ու արդյունավետ գործունեություն: Նախ՝ նա ընդգրկվում է Հայ գրողների կովկասյան և Հայոց ազգագրական ընկերությունների մեջ՝ իր գործունե պասստը բերելով դրանց աշխատանքներին: 1916 թ. սկզբներից նա կարդում է մի շարք հրապարակային զեկուցումներ՝ նվիրված հայ հին գրական նշանավոր դեմքերի ու երևույթների (Գրիգոր Նարեկացի, միջնադարյան առակներ, հին բանաստեղծության տեսություն), մասնակցում Հայկազյան ընկերության, Հայաստանի համալսարանի հիմնադրման աշխատանքներին, մամուլում հանդես գալիս այդ օրերի ազգային-քաղաքական հրատապ խնդիրներին նվիրված մի շարք շահեկան հոդվածներով, ակտիվորեն մասնակցում հայ իրավաբանական և ռազմական տերմինաբանության մշակման աշխատանքներին:

1919 թ. կեսերին Մ. Աբեղյանը ընտանիքով տեղափոխվում է Երևան, կարգվում Հայաստանի համալսարանի դասախոս և պատմաբանասիրական ֆակուլտետի դեկան: 1921թ. նրան շնորհվում է դոցենտի, իսկ 1926 թ.՝ հայ գրականության պրոֆեսորի կոչում:

Աբեղյանի գիտահասարակական գործունեությունը նոր թափ ու ծավալ է ստանում Հայաստանի խորհրդայնացման շրջանում: Նա դառնում է հայոց լեզվի նոր ուղղագրության գիտական սկզբունքների մշակողն ու հեղինակը, որով նա սկսել էր զբաղվել տակավին 1890-ական թվականներից, իսկ 1913 թ.՝ դեռևս ճեմարանում աշխատելիս, նա ուղղագրության բարեփոխման տեսական ու գործնական դրույթները զեկուցման կարգով ներկայացնում էր հայ գրերի գյուտի 1500-ամյա համագգային մեծ հոբելյանի հանդիսավոր ժողովի քննությանը:

1925 թ. հոկտեմբերին Մ. Աբեղյանն ընտրվում է Հայաստանի անդրանիկ գիտահետազոտական հաստատության՝ Գիտության և արվեստի ինստիտուտի նախագահ և հինգ տարի անընդմեջ մեծ ջանասիրությամբ ու նվիրումով ղեկավարում այդ հաստատությունը: Այդ տարիներին են հրա-

տարակվում հայ բանասիրական մտքի փայլուն արտահայտություններից մեկը՝ նրա «Հին գուսանական ժողովրդական երգեր» մենագրությունը և «Հայոց լեզվի տեսություն» հիմնարար աշխատությունը:

1932 թ. Աբեղյանը ընտրվում է Հայաստանի կենտգործկոմի նախագահությանն առընթեր հանրապետության բնակավայրերի անունների ճշգրտման և ձևավորման հանձնաժողովի նախագահ: 1935 թ. հայ գիտությանն ու մշակույթին մատուցած մեծ, բազմամյա ծառայությունների համար Մ. Աբեղյանին շնորհվում է գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ Հայաստանի լուսժողկոմիսարիատը, առանց դիսերտացիայի պաշտպանության, եղած գիտական աշխատանքների հիման վրա նրան շնորհում է հասարակական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1933 թ. Մելքոնյան ֆոնդի միջոցով լույս է տեսնում Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափություն» դասական ուսումնասիրությունը:

1931 թ. կեսերին Պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ Ե. Չարենցի առաջարկությամբ և Մ. Աբեղյանը Կ. Մելիք-Օհանջանյանի գործուն մասնակցությամբ նախաձեռնում է «Մասնա ծոեր» ժողովրդական վեպի տարբերակների գիտական հրատարակությունը, որը հետագայում լույս է տեսնում երեք գրքով (1936, 1944, 1951), և դրանով հիմք է դրվում հայ բանահյուսական հուշարձանների գիտական հրատարակությանը: Իսկ 1939թ. հայ ժողովրդական վեպի հազարամյա հոբելյանի տոնակատարության նախապատրաստման օրերին Մ. Աբեղյանի առաջարկությամբ վեպի ավելի քան 60 պատումների հիման վրա (Մ. Աբեղյանի, Գ. Աբովի և Ա. Ղանալանյանի մասնակցությամբ) կազմվում է «Մասունցի Դավիթ» խորագրով ժողովրդական վեպի հյուսվածո համահավաք բնագիրը, որը թարգմանվում և հրատարակվում է նաև ռուսերեն, հետագայում՝ նաև աշխարհի տարբեր ժողովուրդների լեզուներով և նպաստում մեր վեպի միջազգային տարածմանն ու ճանաչմանը:

1940 թ. ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի՝ Գրականության և լեզվի ինստիտուտի հանձնարարությամբ Մ. Աբեղյանը սկսում է շարադրել հայ հին գրականության երկհատոր ամբողջական պատմությունը: Օրավուր վատթարացող առողջության պայմաններում և վերահաս մահվան պատճառով թեպետ մնում է թերավարտ, բայց այն, ամբողջությամբ վերառած, մի դարակազմիկ կոթողային աշխատություն է հայագիտության պատմության մեջ:

1943 թ. նոյեմբերին հիմնադրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիա (Աբեղյանի հապավմամբ՝ հայգիտակը), որի հիմնադիր կազմում որպես ակադեմիկոս ընտրվում է նաև Մանուկ Աբեղյանը:

Մ. Աբեղյանը վախճանվել է Երևանում 1944 թ. սեպտեմբերի 29-ին, 79 տարեկան հասակում և թաղվել Երևանի քաղաքային պանթեոնում:

Աբեղյանին այսպես է բնութագրել Դ. Դեմիրճյանը. «Նա ընկավ հսկա կաղնու նման և ծանր լռություն տիրեց անտառում»: Ա. Իսահակյանի բնորոշմամբ՝ «Մանուկ Աբեղյանը... հայկական ավանդույթների մարմնացումն էր, գիտնական՝ բառիս ամենախորին իմաստով, անվախ, աննախապաշար, անկեղծ, վառ հայրենասեր՝ լի հավատով հայ ժողովրդի լավագույն ապագայի հանդեպ, սկզբունքների մարդ՝ ապառաժների նման կայուն, մտքի և կամքի, աշխատանքի և գործի հսկա, պատկառելի ուսուցիչ, սերունդների անձնվեր դաստիարակիչ... Մենք խորապես զգում ենք, որ Աբեղյանի շնորհիվ մեր ազգային-հոգևոր միջավայրը լցված է իմաստությամբ և հեղինակությամբ, լրջությամբ և վեհ նպատակների հետապնդումով»: Իսկ Նիկոլ Աղբալյանի գնահատմամբ՝ Մ. Աբեղյանը «մտավորական մեծ ճիգի մարդ էր, որ կազմակերպել է մեր ազգային գիտությունը» հայ հոգևոր մշակույթի տարբեր բնագավառների նկատմամբ: «Պատմական և հանրային մեծ ծառայություն է սա հայ մշակույթին, որ փառքով պետք է արձանագրվի և անկորուստ մնա հայոց գրականության պատմության մեջ»¹⁵:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

¹⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 138, 642:

ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ՈՒԹՅԱՏՈՐՅԱԿ

Շուրջ 20 տարի տևեց հայագիտության մեծ երախտավոր Մանուկ Աբեղյանի երկերի ութհատորյակի ակադեմիական հրատարակությունը: Վերջերս լույս տեսավ ութհատորյակի եզրափակիչ՝ Ը հատորը, որը կազմել, խմբագրել, ծանոթագրել ու հրատարակության են պատրաստել Պ. Հակոբյանը, Ս. Հարությունյանը, Հ. Աբեղյանը, Ս. Կոստանյանը:

Մ. Աբեղյանի երկերի առաջին երկու հատորները, որոնք հերթակա-նությամբ լույս տեսան 1966 և 1967 թթ., ընդգրկում էին հեղինակի հայ վի-պական և քնարական բանահյուսության բնագավառում կատարած երկա-րամյա ուսումնասիրությունների արդյունքները: Հատորները կազմել, ծա-նոթագրել, խմբագրել ու ընդարձակ ներածությամբ օժտել էր Մ. Աբեղյանի անվանի աշակերտ, ակադեմիկոս Ա. Ղանալանյանը: 3-րդ և 4-րդ հատոր-ները (1968, 1970) ընդգրկում էին Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» մեծարժեք աշխատությունը, որ կազմել ու խմբագրել էր Բանասեր Էմ. Պիվազյանը: 5-րդ հատորը (1971) ամփոփում էր հեղինակի «Հայոց լեզվի տաղաչափություն» մենագրությունը և հայ տաղաչափու-թյանը նվիրված մյուս ուսումնասիրությունները: Հատորը կազմել էր Է. Բաստրմաջյանը, խմբագրել և ծանոթագրել էր ակադեմիկոս Է. Ջրբա-շյանը: 6-րդ մեծածավալ հատորում (1974) զետեղված էին հայագետի լեզ-վաբանական կարևորագույն ուսումնասիրությունները («Հայոց լեզվի տե-սություն», «Հայոց լեզվի շարահյուսություն», «Գրաբարի քերականություն» և հոլովներին նվիրված հետազոտությունները): Հատորը կազմել և ծանո-թագրել էր լեզվաբան Պ. Շարաբխանյանը, խմբագրել էր ակադեմիկոս Է. Աղայանը:

7-րդ հատորը (1975) ամփոփում էր Աբեղյանի ազգագրական-բանա-գիտական և գրականագիտական հոդվածներն ու ուսումնասիրություննե-րը («Հայ ժողովրդական հավատքը», «Վիշապներ...», «Գրական դպրոց-ներ» և այլն:) Հատորը կազմել, ծանոթագրել և խմբագրել էր Բանասեր Ս. Հարությունյանը: Վերջին 8-րդ հատորն ընդգրկում է Մ. Աբեղյանի «Սասնա ծռեր» հերոսավեպին նվիրված անդրանիկ ուսումնասիրություն-ները («Ազգային վեպ», «Դավիթ և Մհեր»), «Հայ ժողովրդական առասպել-ները», հայոց լեզվի ուղղագրության բնագավառում տարբեր ժամանակնե-րում հրատարակած աշխատությունները, ինչպես նաև իր քերականագի-

տական տեսությունը քննադատողների դեմ ուղղած «Մի քանի քերականական խնդիրների մասին» ցարդ անտիպ բանավիճային փայլուն աշխատությունը:

Մ. Աբեղյանի գիտական ժառանգության ներկա հրատարակությունն ունի ոչ միայն գիտապատմական, այլև տեսական ու գործնական շատ կարևոր արժեք արդի հայագիտության համար: Նրա ստեղծած գիտական ուսմունքները, տեսական դրույթներն ու գիտական ապացույցները գիտության արդի պահանջների համար ոչ միայն չեն հնացել, այլև շատ կողմերով շարունակում են խթանիչ դեր խաղալ այսօրվա հայագիտության տարբեր բնագավառների զարգացման համար: Բացի այդ, Աբեղյանի աշխատությունների նախորդ հրատարակությունները մասամբ մամուլում ցրված լինելու, մասամբ էլ սահմանափակ տպաքանակի պատճառով վաղուց էին դարձել մատենագիտական հազվագյուտ նմուշներ և մնացել դժվարամատչելի ոչ միայն ընթերցող լայն խավերին, այլև՝ անգամ մասնագետ հետազոտողներին: Ութհատորյակի հրատարակությամբ լիովին վերացվում է այդ բացը, և մեծ հայագետի ժառանգությունը մատչելի է դառնում ընթերցող լայն հասարակությանը, որն այսուհետև վերահասու կլինի գիտական շատ ճշմարիտ տեսակների ու արժեքների, որոնց կարիքը վաղուց էր զգացվում: Եվ, ի վերջո, այս հրատարակությունը գալիս է նպաստելու հայագիտության տարբեր բնագավառներում Մ. Աբեղյանի բազմամյա տքնանքով ձեռք բերած արդյունքների զանգվածային պրոպագանդմանը, նոր սերնդի հայագիտական և հայրենասիրական ճշմարիտ դաստիարակությանը:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Գրքերի աշխարհ», 1985

ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ՝ ԸՍՏ ՀԱՍՄԻԿ ԱԲԵՂՅԱՆԻ «ՕՐԵՐՍ ԻՆՁ ՀԵՏ ԵՆ...» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Բ. Գ. Պ.

Մանուկ Աբեղյանի գիտական վաստակը վաղուց արդեն հաստատուն և անփոխարինելի տեղն ունի հայ մշակույթի պատմության մեջ: Նրա ժառանգության հետ կապված ուսումնասիրություններում ուրվագծվում է հայագետի բացառիկ կերպարը, իսկ ժամանակակիցների՝ տարբեր առիթներով գրված հուշ-պատառիկներում՝ նաև նրա մարդկային նկարագիրն իր գիտական շրջապատի հետ բազմաբնույթ հարաբերություններում: Գիտնականի թոռնուհու՝ Հասմիկ Աբեղյանի «Օրերս ինձ հետ են...» հուշագրությունը ներկայացնում է մեծանուն հայկաբանի մարդկային տեսակը՝ ընտանեկան, մտերմական, ընկերական, առհասարակ առօրյա-կենցաղային միջավայրի հետ բազմապիսի շփումների ոլորտում, որ քիչ է հայտնի սերունդներին: Այս անձանոթ մարդ-անհատականությունը Հասմիկ Աբեղյանի հուշագրության մեջ ներկայանում է ամենից առաջ վեց-յոթ տարեկան աղջնակի մանկական տպավորություններով, որոնք ամենաանմիջականն են ու հավաստին և երբեք չեն ջնջվում մարդու հիշողությունից: Հուշագրողի համար վավերական վկայություններ են նաև ընտանիքի անդամների հուշ-պատմությունները, որոնց ըստ պատշաճի ու տեղին օգտագործումով ավելի է ամբողջանում գիտնականի մարդկային կերպարը:

Հասմիկ Աբեղյանի հուշագրությունը ժամանակային և տարածական առումով բավական տարողունակ հուշամատյան է, որտեղ միահյուսվում են մարդկային բազմերանգ փոխհարաբերությունները, նկարագրությունները՝ զգացմունքային-հուզական շեշտադրմամբ, հետաքրքիր կառուցվածքը, ինքնատիպ ու գեղեցիկ գրելաոճը, գեղարվեստական շունչն ու գիտական լրջությունը: Գրքի էջերից կենդանանում ու հառնում են վաղուց հեռացած շատ սիրելի և հարազատ հայտնի և անհայտ դեմքեր՝ հետաքրքիր, ուրախ ու տխուր պատմություններով: Դրվագների բազմերանգ գունապնակում, սակայն, առանձնանում է հուշագրողի համար ամենից հարազատն ու սիրելին՝ Մանուկ Աբեղյան պապիկը, մարդը, գիտնակա-

նը, որ տարիների հեռավորությունից անգամ չի կորցնում իր մշտակա ներկայությունը, հմայքն ու մեծությունը թոռնուհու հուշաշխարհում:

Հուշագրության ամբողջական քննությունը, որ շատ տեսակետներից շահեկան կլիներ մեծանուն գիտնականի ապրած ժամանակն ու միջավայրը ավելի լավ ճանաչելու համար, այս համառոտ հաղորդման խնդիրը չէ. մեր նպատակը առավելապես Մանուկ Աբեղյան մարդու կերպարի բացահայտումն է «Օրերս ինձ հետ են...» հուշապատումի էջերում: Անշուշտ, *կերպար* եզրույթի գործածությունն այս դեպքում որոշ առումով պայմանական է. եթե գեղարվեստական ստեղծագործության մեջ գործող անձերը սովորաբար հեղինակի երևակայության ծնունդ են, և նրանց վարքագիծը վերջին հաշվով ուղղորդավորվում է հեղինակի կողմից, ապա հուշագրության մեջ հանդես են գալիս իրական մարդիկ: Այս պարագայում հուշագրողից պահանջվում է ավելի շրջահայաց դիտողականություն՝ մարդու մեջ հայտնաբերելու և սպառնիչ ներկայացնելու բնավորության ու վարքագծի այն կողմերը, որոնցով բնութագրվում է նրա անկրկնելի անհատականությունը: Հուշագրողի գործը դժվարանում է նաև նրանով, որ վերջինս այս կամ այն չափով առնչվել է իր «հերոսների» հետ և նրանց բնութագրելիս պիտի կարողանա նվազագույնի հասցնել սուբյեկտիվության պահը՝ միշտ նկատի ունենալով, սակայն, որ հուշագրությունը, այնուամենայնիվ, իր ժանրային բնույթով չի կարող իսպառ գերծ լինել գեղարվեստական պայմանականությունից: «Օրերս ինձ հետ են...» հուշապատումը շարադրված է այս ամենի հստակ գիտակցությամբ:

Հասմիկ Աբեղյանը պապի մասին իր հուշերը սկսում է իբրև գրականագետ. տվյալներ քաղելով Սարգիս Հարությունյանի «Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը» արժեքավոր աշխատությունից՝ ներկայացնում է ապագա մեծ գիտնականի մանկությունը, ուսումնառության տարիները, աշխատանքային, բանահավաքչական և գիտական գործունեությունը: Այս, կարելի է ասել, նախաբանը ինքնանպատակ չէ. դրանով հուշագրողի համար շատ բան նոր իմաստ է ստանում պապի մասին իր հիշողություններում մնացած մանկական տպավորություններից: Պատահական չէ, որ այս «գիտական» նախադրությունից գործողությունների երկարուձիգ շղթայում անցումը մարդկային սովորական իրականություն կատարվում է ընթերցողի համար գրեթե աննկատելի՝ բացելով Աբեղյան մարդու նե-

րաշխարհի, մտածողության, հոգեբանության անտեսանելի նրբերանգները:

Մեծ հայրենասեր էր Մանուկ Աբեղյանը: Արտասահմանում ուսումնառությունից հետո նա գերադասում է վերադառնալ հայրենիք և գիտելիքների ողջ պաշարը ի սպաս դնում հայրենական կրթության և լուսավորության գործին:

Որդիներին ևս դաստիարակում է նույն ոգով: Անթաքույց հուզմունքով է պատմում հուշագիրը վաղամեռիկ Գագիկ հորեղբոր մասին, որ աչքի է ընկել ոչ միայն հազվագյուտ ընդունակություններով, այլև մարդկային լավագույն որակներով: Այսպես, օրինակ, 15 տարեկան դպրոցական՝ հրաժարվում է նոր վերարկուից, քանի որ ընկերը վերարկու չուներ, և հայր Աբեղյանը վերարկու է գնում նաև ընկերոջ համար: 16-ամյա Գագիկի մահը մեծ ցավ է պատճառում ծնողներին: Հուշագրողը որդուն կորցրած հոր տառապանքը ներկայացնում է ոչ թե ուրիշներից բանավոր լսածը վերապատմելով, այլ մեջբերելով «Հառաջ» թերթում տղայի մահվան կապակցությամբ տպագրված մահախոսական հոդվածը. «Միշտ համեստ, լուռ ու զգայուն Գագիկն իր պատրաստությամբ ապագա խոստացող էր, ճշմարիտ հայ և շիտակ հայրենասեր: Իզուր չէր, որ թաղման օրը հոր վիշտը կրկնակի էր նրանով, որ նա արցունք էր թափում ոչ միայն իր նեցուկ և սիրած որդու կորստի համար, այլև ողբում էր «մի պատրաստի և շիտակ հայրենասերի մահը», ինչպես ինքը՝ պ. Աբեղյանն էր ասում»¹⁶:

«Հառաջի» այս մահախոսականը պերճախոս վկայություն է գիտնական Աբեղյանի մարդկային ազնվական որակներից մեկի. նա՝ իբրև հայր, շատ է կարևորել իր զավակների ազգային-հայրենասիրական դաստիարակությունը՝ սկսելով մայրենի լեզվի և գրականության, Հայաստանի աշխարհագրության ուսումնասիրությունից: Պատահական չէ, որ հաճախ է որդիների հետ շրջել Հայաստանի գրեթե բոլոր կողմերում. չէ՞ որ հայրենիքը սիրելու համար պետք է ճանաչել նրա բնաշխարհն ու մարդկանց: Հայրենիքի նկատմամբ նույն անվերապահ սերն է մղում Աբեղյանի մյուս որդուն՝ Սուրենին, 1941 թ. կամավոր մեկնել ռազմաճակատ՝ հրաժարվելով տաղանդավոր դերասանի և թատերագրի խոստումնալից հեռանկարից: Իբրև դերասան՝ նա արդեն ճանաչված էր Սունդուկյանի անվան

¹⁶ Տե՛ս **Աբեղյան Հ.**, Օրերս ինձ հետ են, Եր., 2014, էջ 18:

թատրոնում: Աբեղյան հայրը, բազմազբաղ լինելով հանդերձ, մշտապես դիտում էր որդու մասնակցությամբ ներկայացումները և ասում իր ծանրակշիռ խոսքը, որ դերասան որդին չափազանց կարևորում էր:

Հուշերում վերակենդանացած յուրաքանչյուր միջադեպ նրբորեն բացում է Աբեղյանի բնավորության և հոգեբանության նորանոր շերտեր: Նախանձելի ուղղախոս է եղել գիտնականը կյանքում, կենցաղում: Մարդկային տարատեսակ հարաբերություններում երբեք չի կեղծել, մշտապես ասել է այն, ինչ մտածել է, անգամ եթե դա կարող էր տհաճություն պատճառել դիմացինին: Այդպիսի մի միջադեպ է հիշում հուշագիրը մոր և տատի պատմածներից: Երբ երևանյան մի շոգ ու քամոտ օր Շուշանիկ տատիկի քույրերը իրենց ամուսինների հետ այցելում են նրանց՝ միաժամանակ դժգոհելով անտանելի քամուց ու փոշուց, Աբեղյանը հանգիստ պատասխանում է. «Բայց չէ՞ որ ես ձեզ չեի խնդրել գալ այս պահին, չգայիք»¹⁷:

Հայտնի է, որ ցանկացած գիտնականի համար ընտանեկան անդորրն ու հոգու խաղաղությունը բեղմնավոր աշխատանքի կարևոր նախապայմաններ են: Այս կապակցությամբ հուշագիր թոռնուհին գիտնական պապի կողքին հաճախ հիշատակում է նրա կնոջը՝ Շուշանիկ տատին: Վերջինս, մեծ սիրով և հոգատարությամբ շրջապատելով ամուսնուն, մշտապես աջակցել է նրան, ազատել կենցաղային տարատեսակ հոգսերից, եղել նրա կողքին: «Այն մեծ հարգանքն ու սերը պապիս նկատմամբ, որ իշխում էր տանը, ընտանիքում, գալիս էր նաև տատիցս, որ առաջին հերթին ամուսնու մեջ տեսնում և գնահատում էր գիտնականին»¹⁸: Խստապահանջ և լուրջ գիտնականը ինքն էլ իր կողմից բարձր է գնահատել կնոջը, նույնը ներշնչել նաև որդիներին: Առանց վարանելու ի լուր ամենքի բարձրաձայնել է, որ առանց Շուշանիկի հոգատարության ինքը չէր արժանանա ակադեմիկոսության աստիճանին:

Լինելով ինքնուրույն և անկախ բնավորություն՝ Աբեղյանը շատ բծախնդիր չի եղել կենցաղային պայմանականություններում: Այս տեսակետից հետաքրքիր դրվագ է Մուրենի և Մարգարիտայի նշանադրության նկարագրությունը, որտեղ երևան է գալիս Աբեղյանի մարդկային տեսա-

¹⁷ Նույն տեղում, էջ 14:

¹⁸ Նույն տեղում, էջ 15:

կի յուրօրինակ դրսևորումներից մեկը: Ավանդապահ լինելով հանդերձ՝ նա ամեննին էլ անհրաժեշտ չի համարում անպայման հետևել հարսնա-խոսության ընդունված կանոններին, եթե դրա հարկը չի եղել: Համոզված, որ սերը փոխադարձ է, առանց այլևայլի սեղանին է դնում կոնյակը և շնորհավորում՝ չհարցնելով խնամիների կարծիքը: Վերջում խստապահանջ հայրը օրհնում է զույգին: «Բախտավո՛ր եղեք, սիրե՛ք միմյանց, հարգե՛ք մեզ,– ասում է գիտնականը, ապա դառնալով դերասան որդուն՝ ավելացնում: –Սուրի՛կ, չմոռանաս, որ սա բեմական ամուսնություն չէ, որ վարագույրը փակվի, և ամեն ինչ վերջանա: Մա կյանք է...»¹⁹:

Այստեղ մի նոր գիծ է երևան գալիս Աբեղյանի կերպարում. մշտապես լուրջ ու խոհուն գիտնականը մեծ ջերմությամբ է վերաբերվում հարսին. ընդունում է իբրև հարազատ դստեր, արգելում նրան Գրետ անվանել. «Դու իսկական մարգարիտ ես, մարգարիտ»²⁰:

Հայոց լեզվի մաքրության նկատմամբ նախանձախնդիր գիտնականը մեծ սիրով և համբերությամբ թիֆլիսահայ հարսին սովորեցնում է ճիշտ գործածել և արտաբերել բառերը: Առհասարակ նկատելի է՝ Աբեղյանը ուներ հայկական օրինակելի ընտանիքի իր պատկերացումը, որտեղ հատուկ հարգանքի արժանի էին տան մայրը, կինը: Պատահական չէ, որ նա մեծ հոգատարությամբ և ջերմությամբ էր վերաբերվում հարսին, որ ամուսնու՝ ռազմաճակատ մեկնելուց հետո աշխատում և միայնակ մեծացնում էր երեխային: Աբեղյանը՝ իբրև ընտանիքի ավանդապաշտ հայր, խիստ կարևորում է բացակա որդու ընտանիքի ամբողջունը՝ թույլ չտալով որևէ մեկին նեղացնելու կամ վիրավորելու Մարգարիտային, անգամ եթե դա լիներ իր հարազատ որդին:

Սակայն, երբ վտանգ է սպառնում ավանդական ընտանիքի բարոյական հիմքերին, գիտնական Աբեղյանի մեջ սկսում է խոսել ընտանիքի խստապահանջ հայրը: Բոլորովին այլ վերաբերմունք է դրսևորում նա մյուս հարսի՝ Մհերի կնոջ՝ Լուսիկ Թոթովենցի նկատմամբ: «Պապս չի ներում և չի ընդունում այդ ամուսնությունը,– գրում է Հասմիկ Աբեղյանը: –Հարգանքը Թոթովենց գրողի և անձնավորության նկատմամբ թույլ չի տալիս օրինապաշտ մարդուն համակերպվել այդ միության հետ, և մինչև

¹⁹ Նույն տեղում, էջ 42:

²⁰ Նույն տեղում, էջ 43:

վերջ Լուսիկին անվանում էր «Թոթովենցի կին»²¹: Աբեղյանի որոշմամբ՝ չորսսենյականոց բնակարանը կիսվում է, և գույգերը ապրում և սնվում են առանձին:

Աբեղյանի մարդկային տեսակի ուրիշ կողմի մասին է խոսում մեկ այլ միջադեպ, որ հիշում է Հասմիկ Աբեղյանը Շուշանիկ տատի պատմածից: 1937 թ. մահասարսուռ օրերից մի օր, երբ մահվան ուրվականը շրջում էր ամենուրեք, Աբեղյանը վերադառնում է տուն, կնոջը հայտնում, որ գրադարանում հավաքել են իր գրքերը և շուտով գալու են իր հետևից: Որոշ ժամանակ անց՝ կեսգիշերին, իսկապես թափում են նրանց դուռը: Պարզվում է, սակայն, որ սև բաճկոնավորները շփոթել են հասցեն. պետք է ծեծելիս դիմացի դուռը: Մեփական անձի փրկությունը չի ուրախացնում գիտնականին. համոզված էր՝ ստալինյան զոհեր են դառնալու ուրիշ անմեղները, նրանց մեջ՝ լուսավոր և տաղանդավոր մարդիկ: «Շուշանի՛կ, – ասում է նա կնոջը, – էլի անմեղ մարդու տարան»²²:

Առհասարակ Աբեղյան գիտնականի մարդասիրությունը նրա կարևոր մարդկային որակներից է: Նույն 1937 թ. երկրաշարժի օրերին իր շուրջն է բոլորել սարսափած մարդկանց, հարևաններին և հեքիաթներ պատմել՝ նրանց զբաղեցնելու համար:

Հուշագրության մեջ ամենահետաքրքիր և հուզաթաթավ մասը թերևս «Իմ պապիկը՝ առաջին ուսուցիչս» հատվածն է, որտեղ հուշագիր հեղինակը վերափոխվում է փոքրիկ աղջնակի և մանկան պարզ աչքերով ներկայացնում սիրելի պապիկին: Տողերի միջից վեր է հառնում Մանուկ Աբեղյանի դիմանկարը՝ բարի ժպիտը դեմքին՝ թոռնուհուն հեքիաթ պատմելիս, սենյակում կամ պատշգամբում լուռ, մտախոհ շրջելիս, գրասեղանի մոտ աշխատելիս: Բազմաբղետ, երբեմն էլ զվարճալի պատմությունները, աշխույժ երկխոսությունները, մարդկային տարաբնույթ հարաբերությունները նոր գծերով են ներկայացնում Աբեղյանին: Կարգ ու կանոն, ճշտապահություն սիրող պապիկը լավագույն օրինակն էր թոռնուհու համար: Մանկավարժական բացառիկ հմտությամբ ուսուցիչ պապը նկատում էր թոռնուհու վարքագծում նոր-նոր ձևավորվող հատկանիշները՝ տարբեր մեթոդներով ուղղելով անցանկալիները: «Երեխային երբեք թույլ

²¹ Նույն տեղում, էջ 55:

²² Նույն տեղում, էջ 184:

չտաս նմանվել մեծերին. ամեն ինչ լավ է իր ժամանակին»²³, – ասում էր նա հարսին: «Երեխան չպետք է կամակոր լինի»²⁴, – պնդում է մեկ այլ անգամ, Բայց և ներողամտորեն ու անհուն բարությամբ շարունակում վայելել չարաճճի թոռնուհու ներկայությունը: Բազմազբաղ լինելով հանդերձ՝ Արեղյան պապիկը սիրով, հոգատարությամբ է վերաբերվում նրան, մեծ պատրաստակամությամբ արձագանքում նրա գրել-կարդալու ցանկությանը: Առաջին ուսուցիչը փոքրիկ Հասմիկին սովորեցնում է հայոց այբուբենը, թվաբանությունը, ժամացույցից օգտվելը, ավելի ուշ հանձնարարում պարապել նաև ռուսերեն և գերմաներեն:

Սեպտեմբերի մեկին, երբ Հասմիկն առաջին անգամ դպրոց է գնում, հավասարակշռված ու խոհուն գիտնականը երեխայի պես հուզվում է՝ ուշադրությամբ որսալով դպրոցից լսվող ձայները, ուրախանում՝ կնոջն ասելով. «Շուշանի՛կ, երեխաները խաղում են, Հասմիկս էլ նրանց հետ է, կարծես լսում եմ ձայնը...»²⁵:

Հուշագրության մեջ հոգիչ են հատկապես այն էջերը, որտեղ հեղինակը պատմում է ծերացող պապի կյանքի վերջին տարիներին ապրած թախծալի պահերի մասին, երբ նա թոռնուհուն խնդրում էր իր համար արտասանել Թումանյանի «Ամպն ու սարը» ոտանավորը, հաճախ նաև իրեն այցելած բարեկամ-ընկերների ներկայությամբ: Հ. Արեղյանը հիշում է, թե ինչպես այդպիսի մի օր մանուկ թոռան անպաճույճ արտասանությունը լսելուց հետո պապը տխուր հոգոցով ասում է Բսահակյանին. «Ավետի՛ք, լավ օրերս անցան, կորան...»²⁶:

Վեց-յոթ տարեկան աղջնակն այն ժամանակ լավ չէր հասկանում, իհարկե, թե պապն ինչո՛ւ է սիրում Թումանյանի այդ փոքրիկ ոտանավորը կամ ինչո՛ւ Բսահակյանին դիմեց այդ տխուր խոսքերով: Բայց նրա հիշողության մեջ անջնջելի են մնացել ոտանավորը և պապի խոսքերը, և այսօր էլ, երբ առիթ է լինում, հուզմունքով է հիշում այդ պահը՝ հուզելով նաև ունկնդիրներին:

Չարմանալի մանրամասնությամբ է հիշում թոռնուհին Արեղյան պապիկի կյանքի վերջին օրը, իրենց հրաժեշտը, հաջորդող սգո օրերը: «Այդ

²³ Նույն տեղում, էջ 71:

²⁴ Նույն տեղում, էջ 84:

²⁵ Նույն տեղում, էջ 82:

²⁶ Նույն տեղում, էջ 84:

օրվանից պապիկս ինձ համար դարձավ հիշողություն, լավ, բարի երագ, մի սրբություն, որի պատկերը տարիները երբեք չմշուշեցին»²⁷:

Հրաժեշտ տալով մանկության անմոռաց օրերին՝ հուշագիրը գրքի տարբեր էջերում ամենատարբեր առիթներով դարձյալ հիշում է մեծանուն պապին՝ ավելի հաճախ որպես հետազոտող գիտնականի, հիշեցնում անվանի ժամանակակիցների՝ Հ. Աճառյանի, Մ. Սարյանի, Ա. Իսահակյանի, Գ. Սևակի, Մ. Մկրտչյանի և ուրիշների հետ գիտական առնչությունների մասին պատմություններ, գնահատանքի խոսքեր, որոնք տարբեր կողմերից, ուղղակիորեն կամ անուղղակի նորանոր նրբերանգներ են ավելացնում Արեղյանի մարդկային և գիտական նկարագրին: Ահա, օրինակ, Ա. Ղանալանյանի դիպուկ բնութագիրը. «Արեղյանը նույն դերն է կատարել հայագիտության մեջ, ինչ դեր որ կատարել են Կոմիտասը՝ երաժշտության և Թումանյանը՝ գրականության մեջ»²⁸:

Գիտնական Արեղյանի բացառիկությունը ընդգծելու համար թոռնուհուն հարկավոր չի եղել մեծ ջանքեր թափել. նա պարզապես սուր դիտողականությամբ կարողանում է ճիշտ տեղում գտնել ու ներկայացնել անհրաժեշտ վկայությունները: Լավագույն օրինակներից մեկը բաքվեցի ուսանողի՝ 1940 թ. գրած նամակին Արեղյանի պատասխանն է: Դավթակ Քերթոզի ազգության հետ կապված հարցին ի պատասխան՝ գիտնականը մատնանշում է պատմական անատարկելի փաստեր և մանրամասն տեղեկություններ, որոնք այլևս կասկած չեն թողնում Քերթոզի՝ ազգությամբ հայ լինելու վերաբերյալ: Ընթերցողը մեկ անգամ ևս համոզվում է, որ գործ ունի բազմակողմանի իմացություններով, կուռ տրամաբանությամբ օժտված եզակի գիտնականի հետ:

Հուշագրության մեջ Հասմիկ Արեղյանը ոչ պատահականորեն բերում է նաև Թոթովենցի՝ Մանուկ Արեղյանին տված բնութագիրը, որ դիմանկարի բացառիկ օրինակ է՝ զարմանալի խորատեսությամբ: «Մանուկ Արեղյան. կարծես մի հին բաբելոնացի, որ զարմանալի քմահաճույքով ցանկացել է զարթնել և ապրել իբրև հայ քսաներորդ դարում... Եթե մենք մի քոպե կասկածեինք նրա ոչ բաբելոնացի լինելուն, բայց պարտավոր ենք անպայման հավատալ, որ նա թև թևի ման է եկել Մովսես Խորենա-

²⁷ Նույն տեղում, էջ 86:

²⁸ Նույն տեղում, էջ 75:

ցու հետ, վիճել, հակաճառել նրան և, թերևս, Խորենացուն երբեմն դեմ է տվել պատին իր երկաթյա տրամաբանությամբ և քաշվելով իր խուցը՝ գրի է առել մտքերը երկաթագրերով... Մանուկ Աբեղյանը այն գիտնականներից է, որ պարտադրում է քեզ համոզվել իր ասածին»²⁹:

Կարծես ամեն ինչ ասված է: Բայց թոռնուհու հիշողության մեջ Մանուկ Աբեղյան գիտնականի կերպարը մնացել է մի ուրիշ՝ ոչ պակաս պերճախոս զուգադրությամբ. «Մասիսի վեհության, մեծության մեջ ես տեսնում էի իմ լավ, իմ բարի պապիկին: Նա մնաց իմ կյանքի Մասիս սարը»³⁰:

Հասմիկ Աբեղյանի «Օրերս ինձ հետ են...» հուշագրությունը օգնում է ընթերցողին շատ կողմերից այլ լույսի տակ տեսնել, ճանաչել Մանուկ Աբեղյանի մարդկային տեսակը, նաև վերաբժնորել նրան՝ իբրև հավասարը չունեցող գիտնականի:

²⁹ Նույն տեղում, էջ 318-319:

³⁰ Նույն տեղում, էջ 86:

Մաս 2

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Մանուկ Աբեղյանը հայագիտության այն սակավաթիվ երախտավորներից է, որը հայագիտությունը բարձրացրեց ակադեմիական գիտական բարձր մակարդակի և այսօր էլ կանգնած է գիտության ակունքներում: Աբեղյանի ժառանգությունն այնքան հարուստ է ու բազմակողմանի, որ այն կարելի է գնահատել միայն ըստ ոլորտների՝ տվյալ բնագավառի մասնագետների կողմից: Անգամ առանձին բնագավառի մասին հնարավոր չէ սպառիչ խոսք ասել, որովհետև մեծ գիտնականի բարձրացրած և հետազոտած հարցերը բազմազան են, փոխկապակցված, իր ժամանակի համար թարմ հարցադրումներով հագեցած, իսկ այդ ամենի անդրադարձը պահանջում է նաև այսօրվա դիրքերից նայել խնդիրներին, զատել անվիճելի տեսակետները բանավեճ հարուցող խնդիրներից: Մենք ցանկանում ենք առանձնացնել միայն գրականագիտության, մասամբ նաև բանագիտության ոլորտը ոչ այնքան բովանդակային առումով, որքան գիտնականի մեթոդի, աշխատառճի, սկզբունքների տեսանկյունից: Հպանցիկ հայացքն անգամ տեսանելի է դարձնում Աբեղյանի աշխատանքային կարևոր սկզբունքը, այն է՝ յուրաքանչյուր գրական երևույթ ուսումնասիրել ժամանակային երեք չափումների և պատճառահետևանքային կապերի մեջ: Ի սկզբանե նա ձևակերպում է իր աշխատանքի բնույթը, բացատրում, թե ինչ սկզբունքով է աշխատելու. «Արդի ժամանակը հասկացվում է հնի, անցյալի ուսումնասիրությամբ, բայց արդի ժամանակի ուսումնասիրությունը ևս իր կողմից բանում է մեր առաջ անցյալը, քանի որ անցյալի շարունակությունն է ներկան»³¹: Հենց այդ մտայնությամբ էլ հայ գրականության ուսումնասիրությունը նա սկսում է բանահյուսությունից, ավելի ճիշտ՝ հին հեթանոսական հավատալիքներից, որոնք արտահայտում են հայ ժողովրդի նախապատմական ժամանակի հայացքները աշխարհի և բնության վերաբերյալ: Դեպի ուսումնասիրվելիք առարկայի հիմքերը գնալու հատկանիշը դառնում է սկզբունք Աբեղյանի համար:

³¹ Մ. Աբեղյան, Երկեր, Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1966, էջ 12: Հետագա հղումների դեպքում հատորը և էջերը կնշվեն տեղում:

Աբեղյանի համար ոչ պակաս կարևոր էր հասկացությունների հստակեցումը և տեսական ամուր հիմքը: Հիմքը պետք է հասկանալ երկու առումով՝ նախ՝ վերադարձ դեպի ակունք ժամանակի առումով և գիտական-տեսական հիմք՝ գիտական օբյեկտիվության պահպանման առումով: Իբրև ասվածի օրինակ կարելի է հիշել, թե ինչպես է նա գրականությունը բաժանում բանահյուսությունից՝ վերջինիս համար չընդունելով անգիր կամ բանավոր գրականություն անվանումները: Սկզբունքը պարզ է և գիտական. «գրականություն» բառի մեջ կա «գիր» արմատը, ինչը հուշում է գրավոր լինելու հանգամանքի մասին, որը բնորոշ չէ բանահյուսությանը: Մյուս կողմից՝ շատ լավ ծանոթ լինելով Գերմանիայում սկիզբ առած դիցաբանական դպրոցի սկզբունքներին՝ Աբեղյանը իրավացիորեն չի ընդունում ժողովրդական բանահյուսության կոլեկտիվ ծագման տեսությունը և գտնում է, որ բանահյուսությունն ունի անհատական սկիզբ, բայց հետագայում ենթակա է փոփոխության՝ ժամանակի և տարածության մեջ: Նա հիմնավոր կերպով ուսումնասիրում է ժողովրդական ստեղծագործությունը՝ սկսած խաղ ու տաղից, ապա անցնում գուսանական ու աշուղական երգերին, որոնք էլ նախապատրաստում են միջնադարյան քնարերգությունը: Հետևելով դիցաբանական կամ առասպելաբանական դպրոցի սկզբունքներին՝ Աբեղյանը հայ հին գրականության մեջ փնտրում և բացահայտում է հայ ժողովրդի բնավորության, նրա հոգեբանության և բարոյականության հատկանիշները: Այս իմաստով հատկանշական է նրա՝ 1916 թ. կարդացած դասախոսությունը՝ «Ընդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության» թեմայով: Հայոց հին բանաստեղծությունը համեմատելով հին ու նոր ազգերի՝ պարսիկների, մարերի, ասորիների ստեղծագործությունների հետ՝ գալիս է այն եզրակացության, որ «մեր հին բանաստեղծությունը մի պատվավոր տեղ կարող է բռնել քրիստոնյա ազգերի հին գրականությունների մեջ: Մեր բանաստեղծությունը զուգընթաց է և երբեմն նույնիսկ ավելի վաղ է զարգացել, քան եվրոպական նոր ազգերինը: Դրա հիմքն ամենից առաջ պետք է որոնել գլխավորապես մեր ցեղական բնավորության մեջ» (Է, 1975, էջ 316): Ընդհանրապես այս դասախոսությունն աչքի է ընկնում շատ ուշագրավ եզրակացություններով: Փաստելով, որ հայ ժողովուրդը կրել է տարբեր՝ ասորական, պարսկական, ինչպես նաև սեմական ժողովուրդների ազդեցությունները, որոնք հիմնականում արևելյան ժողովուրդներ են, նա ավելի ուշ կրել է նաև հելլենական ազդեցությունը, և եթե «հեթանոսության շրջանում հակված էին

դեպի արևելյան ազգերը, հետզհետե սկսում են հակվել դեպի Արևմուտք» (ն.տ., էջ 317): Աբեղյանը գտնում է, որ հայերի մեջ «արևմտյան արյունի հետ խառն է արևելյան արյուն, և նա արևելյան մեծ ազդեցություններ կրելով՝ միաժամանակ և արևմտյան հունական ազդեցություն է կրում, և հին ժամանակներից մինչև այսօր թեքված է մնում դեպի քրիստոնյա Արևմուտքը, մանավանդ որ նա Արևելքում եղել է միակ մեծ քրիստոնյա ժողովուրդը ընդդեմ զրադաշտականության և մահմեդականության» (էջ 318): Այս խառնուրդը Աբեղյանը դիտարկում է դրականորեն՝ համարելով, որ հայն այդպես դարձել է ճկուն, նորասեր, նորություններ ու լեզուներ յուրացնող: Նա համադրում է պատմական իրողությունները և գալիս այն եզրակացության, որ հայոց հեթանոսական աշխարհիկ բանաստեղծությունը արևելյան բնավորություն ունի, իսկ քրիստոնեական շրջանի բանաստեղծությունը, որը հիմնականում սնվում էր Աստվածաշնչից, ունի արևմտյան բովանդակություն (եկեղեցականները ժխտում էին, արհամարհում էին ժողովրդականը, աշխարհիկը, արևելյանը): Այս երկու ճյուղերը, այնուամենայնիվ, ունեցել են փոխադարձ ազդեցություն միմյանց վրա: Գր. Աղթամարցու սիրո երգը համեմատելով Կ. Երզնկացու և Հ. Թլկուրանցու երգերի հետ՝ Աբեղյանը հաստատում է վերը նշված հատկանիշը. «Աղթամարցու սիրո երգը... մի տեսակ խառնուրդ է անում հեթանոսականի և քրիստոնեականի, արևելյանի և արևմտյանի, որի մեջ է և մեր հին սիրո երգի հրապույրը» (ն.տ., էջ 334): Վերլուծելով մեր միջնադարյան սիրերգակների ստեղծագործությունները՝ Աբեղյանը նկատում է, որ հայոց մեջ սիրո երգը «անգամ տարփալից վայրկյաններում» միշտ «պարկեշտ է, զգաստ և նուրբ է, երբեք բամբառակ, հայրատ և պազշոտ»: Նա բանաստեղծության մեջ փնտրում և գտնում է ազգային բնավորության և հոգեբանության գծերը, հատկանիշ, որն, ի դեպ, գալիս է դիցաբանական դպրոցից: «Մաքրություն ուրեմն, ամենից առաջ զգաստություն: Եվ դա մեր հին քնարերգության էական հատկանիշն է: Բայց դա նաև մեր ազգային բնավորության մի էական գիծն է, որ նույնիսկ հեթանոսական բանաստեղծության և առասպելաբանության մեջ երևան է գալիս. մեծ Անահիտ տիկինը, որ է մայր ամենայն զգաստությանց, նա է եղել «փառք ազգիս մերոյ և կեցուցիչ», «որով կեայ և կենդանութիւն կրէ երկիրս Հայոց» (էջ 339): Ի դեպ, այս դասախոսության մեջ է առաջին անգամ Աբեղյանը խոսում հայոց վերածննդի մասին. «...11-րդ դարից մինչև 14-րդ դարի սկզբները, չնայելով քաղաքական անբարեհաջող վիճակին, մի տեսակ ինքնուրույն վերածնու-

թյամբ աշխարհիկ միտքը թափանցում է եկեղեցական բանաստեղծության մեջ...» (Էջ 332): Աբեղյան գիտնականին բնորոշ է նաև գիտության հետ համաքայլ ընթանալը: Եվրոպական լեզուների (գերմաներեն, ֆրանսերեն) իմացությունը հնարավորություն է տվել նրան հետևելու եվրոպական գիտական մտքի տեղաշարժերին և արձագանքելու դրանք: Բնորոշ օրինակ կարող է լինել 1896-1897 թթ. գրած «Գրական դպրոցներ» ուսումնասիրությունը, որի մեջ դեռևս Եվրոպայում սովորող ուսանող Աբեղյանը հայրենակիցներին տեղեկացնում է եվրոպական մշակութային և գրական ուղղություններին՝ լայնորեն հենվելով Հ. Տենի, Ֆ. Բրյունիտիերի, Է. Ֆագեի և այլոց տեսակետների վրա: Հոդվածաշարն առաջին հերթին ուներ ճանաչողական նշանակություն: «Սույն վերնագրի տակ կաշխատենք «Նոր-Դարի» գրասեր ընթերցողներին ծանոթացնել մի քանի հայտնի գրական դպրոցների և ուղղությունների հետ, որոնք եվրոպական գրականության զարգացման ընթացքում նշանավոր տեղ են բռնել» (Է, Էջ 185): Հակառակ ծանուցման նպատակի համեստությանը՝ այս դեպքում ևս Աբեղյանն իր ասելիքն սկսում է հիմքից՝ անդրադառնալով իր նկարագրած ժամանակին նախորդած դարերի՝ XVI և XVII դարերում ստեղծված այն նախադրյալներին, որոնք նախապատրաստեցին XVIII-XIX դարերի գրականության փոփոխություններն իբրև արդյունք ազգերի և հասարակությունների կենսական պայմանների, մտածողության և գիտության զարգացման: «Գրական դպրոցները» պարզ տեղեկություններ չեն, դրանք առաջադրված հարցի հանգամանալից վերլուծություններ են, որտեղ գրականագետը որոշակի գիտելիքներ է տալիս ընթերցողին «միջնադար, հումանիզմ, վերանորոգություն» եզրույթների բովանդակության, ինչպես նաև հետագայում առաջացած գրական ուղղությունների մասին: Շատ կարևոր է, որ գիտնականը փնտրում է համապատասխան զուգահեռները հայ գրականության մեջ՝ դրանով իսկ ընթերցողին մղելով հայ գրական երկերը գնահատել համեմատության մեջ: Օրինակ՝ կլասիցիզմի մասին խոսելով՝ նա բերում է Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազնի» օրինակը՝ գտնելով, որ դա չստացված ստեղծագործություն է, ստրկական նմանություն Հոմերոսին, որովհետև Հոմերոսն զգում ու ապրում էր այն, ինչ նկարագրում էր, իսկ Բագրատունին զուտ կրկնում էր Հոմերոսին, նմանվում նրան, «խելքին զոռ տալիս», ինչը մահ է բանաստեղծի համար: «Բայց այն, ինչ որ Հոմերոսի համար մի իրականություն և ջերմեռանդ հավատք է, Բագրատունու համար մի խաղալիք, մի ձևական բան..., Հոմերոսը հավա-

տում էր մուսաներին, որոնք նրա աստվածուհիներն էին..., իսկ Բագրատունին ոչ միայն չի հավատում երկնքում Հայկ նահապետի արարքը երգող հրեշտակի գոյությանը, այլև այդ հրեշտակը հենց իրեն՝ Բագրատունու նմանողական մտքի ծնունդ է...» (Է, 226): Ռոմանտիզմի առումով էլ գուգահեռներ է տանում Վ. Սքոթի և Րաֆֆու միջև և այլն: Սակայն այս մի քանի կցկտուր տեղեկությունները բնավ բավարար չեն Աբեղյանի «Գրական դպրոցների» ճշմարիտ բովանդակությունը, նրա արժանիքները կամ թերությունները բացահայտելու առումով: Պարզապես ուսանող Աբեղյանի այս հոդվածի հիշատակությունը ցույց է տալիս, որ ապագա գիտնականը գրականության ասպարեզ է մտնում գիտելիքներով զինված, որոնք բազմապատկվում են աշխատանքային գործունեության ընթացքում՝ լայնացնելով նրա հետաքրքրությունների հունը: Աբեղյանի՝ հայ բանահյուսության տարբեր սեռերին ու ժանրերին նվիրված ուսումնասիրությունները, ինչպես նաև «Սասնա ծռերի» տարբերակի գրառումն ու էպոսի դիցաբանական ու պատմական հիմքերի քննությունն ու այլ ժողովուրդների համանման ստեղծագործությունների համեմատական գուգահեռները, որոնք ունեն բանագիտական կարևոր նշանակություն, նրան չէին կարող կտրել ժամանակակից գրական կյանքի ընթացքից: Այդ են վկայում Հ. Հովհաննիսյանի, Հ. Թումանյանի, Ա. Օստոյանի, Հ. Հակոբյանի բանաստեղծություններին նվիրված նրա գրախոսությունները: Այդ հոդվածները կարևոր են ոչ միայն նշված հեղինակներին արժևորելու, նրանց ստեղծագործական առանձնահատկությունները հայտնաբերելու, այլև տեսական բնույթի ընդհանրացումներ անելու առումով: Խոսելով Հ. Հովհաննիսյանի քնարերգության մասին՝ Աբեղյանը նկատում է, որ թեև բանաստեղծի պոեզիան անձնական բնույթ ունի, բայց դա իր մեջ նաև ընդհանուրի տրամադրությունն է արտահայտում. «... Հաճախ դժվար է ասել նույնիսկ, թե արդյոք նա իր անձնակա՞նն է երգում, թե՞ ընդհանուրինը, չի իմացվում, թե որն է բանաստեղծի հոգու շարժումների աղբյուրը, անհատակա՞նը, թե՞ հավաքականը» (Է, 341): Այս հատկանիշը բնորոշ է ընդհանրապես քնարերգությանը: Բայց ահա Հովհաննիսյանի հայրենասիրական և վշտի երգերի մեջ գրախոսն ընդգծում է բանաստեղծի քնարերգության առանձնահատկությունը. «Նրա երգը չունի գոռ շեշտեր, ոչ բուռն փոթորկահույզ կատաղի ատելություն կամ բարկություն, բայց որքան տրտմալի ու սգավոր են նրա այս երգերի շարքը (խոսքը վերաբերում է 90-ական թթ. երգերին – Ժ.Բ.). դա ինքը ցավն է մարմնացած, մեր ամենիս ցավը, որ մեղմ հո-

սանքով բխում է նրա սրտի խորքից, մի սիրտ, որ այրվում, մաշվում է, որ «բնավեր թռչուն ենք մնացել», որ ավերվել են «մեր պայծառ հույսերը» (ն.տ., էջ 351):

Հ. Թումանյանի առաջին ժողովածուի գրախոսության մեջ Աբեղյանն իսկույն նկատում է բանաստեղծի թե՛ առանձնահատկությունը, թե՛ բերած նորությունը: Եվ կարևորն այն է, որ Աբեղյանը գատում է Թումանյանին նրա ժամանակի այլ բանաստեղծներից, որոնց մասին ընդհանրացնելով՝ գրում է. «...Պ. Հովհաննիսյանին տրված գովեստներից զարթնած բանաստեղծները Րաֆֆիի փառքի ձայնով տեղերից վեր թռան, լծեցին իրենց բանաստեղծական սայլերը և սկսեցին ճոնչացնելով, ճլվստացնելով քշել, հա՛քշել...» (Է, 361): Նորեկների մեջ նա առանձնացնում է Հ. Թումանյանին և շեշտում նրա բանաստեղծության երկու հատկանիշ՝ ժողովրդական կյանքի նկարագրությունը և վիպականությունը (Էպիգմը). «Պ. Թումանյանի բանաստեղծության բնորոշ հատկությունն է վիպականությունը. վեպը նրան ավելի է հաջողվում, քան թե քնարերգությունը. նրա գրվածքի ամենագեղեցիկ հատվածներն են «Լոռեցի Սաքուն», «Մեհրի» և «Ալեք», մանավանդ վերջին երկուսը, որոնք մի-մի փոքր քերթվածներ (поэма) են: Մեր վիպերգական բանաստեղծության մեջ այդ երեք քերթվածները չունին իրենց նմանը թե՛ կենդանությամբ, թե՛ զգացմունքների բնականությամբ և թե՛ գրավիչ, սահուն և, որ գլխավորն է, կանոնավոր գեղեցիկ լեզվով» (Է, էջ 362): Չի կարելի չնկատել, որ հենց առաջին իսկ ժողովածուից Աբեղյանը շեշտը դնում է Թումանյանի ստեղծագործությանը բնորոշ հատկանիշների վրա: Պատահական չէ, որ բանաստեղծական ժողովածուների գրախոսություններում Աբեղյանը հատուկ ուշադրություն է հրավիրում բանաստեղծների լեզվի և տաղաչափության վրա, որն առավելապես նկատելի է Ա. Ծատուրյանի մասին գրած գրախոսության մեջ: Կարելի է ասել, որ սա նախանշում է Աբեղյանի հետաքրքրությունների նոր ոլորտները, որոնց ասպարեզում ևս նա հետագայում գրեց հիմնարար աշխատություններ՝ «Հայոց լեզվի տեսությունը» (1931) և «Հայոց լեզվի տաղաչափությունը» (1933): Բանաստեղծների ժողովածուների գրախոսություններում Աբեղյանն անում է կարևոր ընդհանրացումներ: Ինչ-որ չափով իր պաշտպանության տակ առնելով Հ. Հակոբյանին, որին մամուլն անխնա քննադատում էր՝ նա գտնում է, որ թույլ ու երկրորդական բանաստեղծներն են ստեղծում լեզվական ու բովանդակային այն միջավայրը, ուր հետագայում բարձրանում է տաղանդը. «Արհամարհել այդ թոթովանքները կնշանակե

բանաստեղծական գրականության զարգացումն արհամարհել, քանի որ այդ թոթովանքների վրա պետք է առաջանա այրական լեզուն» (Է, էջ 390): Սա ամեննին չի նշանակում, թե նա աչք էր փակում Հակոբյանի անարվեստ բանաստեղծությունների թերությունների վրա: «Հակոբյանը ոչ բուն զգացմունք ունի, ոչ էլ երևակայության թռիչք, և ոչ իսկ զգացումների նորություն է բերում, – գրում է նա և ավելացնում, – մի բան, որ ցավելու և ասելու ունենք, այն է, որ պ. Հակոբյանը բնավ չէ մտածում արվեստի վրա: Մի երկու թշվառական հանգ ու շեշտ կամ նմանները չնչին բաներ են ըստինքյան» (ն.տ., էջ 391):

Վերը նշված հպանցիկ անդրադարձները սուկ մի նպատակի են ծառայում՝ մատնանշել բանասիրության (բանագիտություն, գրականագիտություն, լեզվաբանություն, քննադատություն...) իրար լրացնող, բայց և հետազոտական տարբեր ընդունակություններ ու մեթոդներ պահանջող բնագավառները, որոնցով զբաղվել է Աբեղյանը հիմնովին: Այս ամենը կարող են պատկերացում ստեղծել, թե ինչ գիտական հիմքի վրա, ինչ լայն ու բազմակողմանի արդյունքներ ստեղծելուց հետո Աբեղյանը ձեռնամուխ եղավ հայոց հին գրականության պատմության կոթողային աշխատության ստեղծմանը: Ճիշտ է, Աբեղյանից առաջ նման փորձեր արվել են (Ս. Սումայան, Ս. Նազարյան, Ս. Պալասանյան, Հ. Գաթրճյան, Գ. Զարբհանայան...), ճիշտ է, որ որոշակի աշխատանքներ կատարվել են պատմության, ազգագրության, բանասիրության ու բանագիտության և հարակից բնագավառներում, բայց այդ աշխատանքները բավարարել են մասնակի հետաքրքրություններ՝ նվիրված այս կամ այն բնագավառի որոշակի խնդիրների պարզաբանմանը և ապա՝ անջատ-անջատ կատարված հատվածական ուսումնասիրությունները անկախ աշխատանքներ են, որոնք մեկ միասնական կապի մեջ չեն մտնում իբրև հայագիտության փոխկապակցված ոլորտներ: Այս իրավիճակում Աբեղյանն ստիպված էր հայ հին գրականության պատմությունը շարադրել ժամանակագրական հաջորդականությամբ՝ լրացնելով «բաց տարածությունը» հնարավորինս հավաստի տվյալներով: Գիտական պատասխանատվությունից ելնելով՝ ստիպված էր ստեղծել պատճառահետևանքային կապ գրական-մշակութային-սոցիալական-պատմական շղթայի տարբեր, բայց իրարով պայմանավորված օղակների միջև: Նաև զբաղվել հայոց պատմության ուսումնասիրությամբ այդ պատմության ամբողջական-վավերական գիտական հրատարակության բացակայության պայմաններում: Անհրաժեշտ էր նաև

գեղարվեստական գրականությունը բաժանել, առանձնացնել պատմագրությունից, դավանաբանական նյութերից: Նույնքան կարևոր էր նաև եկեղեցու պատմության իմացությունը, որովհետև մեր հին գրականության ստեղծողները հիմնականում եկեղեցականներ էին: Այս բոլոր խնդիրներին, գուցե այլ ձևակերպումներով աշխատության առաջաբանում անդրադառնում է Աբեղյանը՝ ավելացնելով ևս մի քանիսը, որոնք ցույց են տալիս նրա մտահոգությունների քանակը: «Մեր հին գրականությունը, ինչպես և ամեն կուլտուրական երևույթ, հարկավ, մեկուսի և անջատ չէ նաև այլ ազգերի ժամանակակից կուլտուրայից ու մասնավորապես գրականությունից... Ուստի այս աշխատության մեջ ոչ միայն բավականին տեղ է տված թարգմանություններին, այլև գրականության պատմությանն ամենանախնական դարերից, առասպելներից սկսած, առնված է այլ գրականությունների հետ համեմատությամբ» (Գ, 1968, էջ 14): Այսինքն՝ այս աշխատությունը իրապես Աբեղյանի գիտական վաստակի բարձրակետն է, ուր նոր համադրությամբ ու որակով միավորվում են գիտնականի նախորդ ձեռքբերումները: Բայց ոչ միայն այդ: Նախ՝ աշխատության «Առաջին շրջան» անվանված մասում, որն ունի «Նախնական առասպելապատմական բանահյուսություն» վերնագիր, գիտնականը տարբեր ժանրերի (առասպել, ավանդական վեպ, վիպասք) քննությամբ հիմնավորում է այն նախադրյալների գոյությունը, որոնք նախապատրաստում են գրավոր գրականությունը: Երկրորդ շրջանը, որ նա անվանում է «Եկեղեցական-քաղաքական մաքառման գրականություն», շարադրված է ազգային-քաղաքական և սոցիալական կյանքի՝ գրականության վրա ունեցած ազդեցության սկզբունքով, որը տիրական է դառնում ամբողջ աշխատության համար, ինչը նախապատմական շրջանում չէր կարող շատ որոշակի լինել: Երկրորդ շրջանն ընդգրկում է հայ գրականության V-X դարերը, երրորդը՝ XI-XVII դարերը, որ նա անվանում է «Վերածնության շրջան»: Հավանական է, որ Աբեղյանը պիտի շարունակեր հայ գրականության պատմությունը, որովհետև նրա դասախոսությունները, որոնք ընդգրկում են նաև հետագա դարերը, հիմք են տալիս ենթադրելու, որ հին գրականության պատմությանը նոր պատմություններ էին հաջորդելու:

Բնականաբար, գրականության տեսակները, ժանրերը, թեմաները հարստանում են, հարուստ նյութի ընդգրկումը՝ դժվարանում, մանավանդ որ Աբեղյանը չի բավարարվում գրական նյութի զուտ բովանդակային վերլուծությամբ: Նա հավասար չափով անդրադառնում է նաև գրական

երկերի արվեստին և, որ թերևս ավելի կարևոր է, առաջ է քաշում տեսական խնդիրներ (օրինակ՝ Գ. Նարեկացու, Հ. Իմաստասերի և այլ առիթներով), բացահայտում օրինաչափություններ: Հընթացս անհրաժեշտ է դառնում բանասիրական բնույթի աշխատանքը, բազմաթիվ փաստերի ճշտումը: Հասկանալի է, որ գիտական աշխատանքի ընթացքում միշտ էլ առաջանում են լրացուցիչ հարցեր, հաճախ նյութը կարծես ճյուղավորվում է, խանգարում ասելիքի կենտրոնացմանը: Թերևս սա է պատճառը, որ Աբեղյանի ակադեմիական հատորները, որոնք տպագրվել են նրա մահից հետո, հարուստ են հավելվածներով: Դրանք ցույց են տալիս գիտնականի հավելյալ աշխատանքը, որ հարստացնում է նրա «Հայոց հին գրականության պատմությունը», բայց կառույցի նպատակասլացությունը չթուլացնելու նպատակով տեղ չի գտել հիմնական շարադրանքում: Այնուամենայնիվ, մի բան հաստատ է. մինչև 1940 թ. Աբեղյանի կատարած աշխատանքները նոր որակով, համակարգված, մի ամբողջական աշխարհայացքային-գեղագիտական ամբողջության մեջ են ամփոփվել «Հայոց հին գրականության պատմության» երկհատորյակում: Հին գրականությամբ զբաղված լինելու հանգամանքը բնավ չի նշանակում, թե Աբեղյանը ուշադիր չէր ժամանակակից գրականության նկատմամբ: Նրա հետաքրքրությունների մեջ, իհարկե, առաջնային տեղ էին գրավում պոեզիայի և տաղաչափության խնդիրները: Վկա՝ «Տաղաչափության զարգացումը Չարենցի և ուրիշների բանաստեղծությունների մեջ» ուսումնասիրությունը, որտեղ նա անդրադառնում է ոչ միայն Չարենցի, այլև Տերյանի, Աբովի, Վշտունու և այլոց տաղաչափությունների առանձնահատկություններին:

Մանուկ Աբեղյանի մահից հետո անցել են տասնամյակներ: Գիտությունն առաջ է գնացել, շատ մութ կետեր են պարզվել, շատ սխալներ են ճշտվել, նոր փաստեր են երևան եկել... Մանուկ Աբեղյանը իր պատկառելի վաստակով մնում է աննվաճ բարձրության վրա:

*2022, դեկտեմբեր
(տպագրվում է 1-ին անգամ)*

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀՄԿԱՆ

Ազատ Եղիազարյան

բ. գ. դ., պրոֆեսոր

Դեռ դպրոցում Աբեղյանն ինձ համար առասպել էր: Նրա անվանը առաջին անգամ հանդիպել էի «Սասունցի Դավթի» հորեղյանական շքեղ հրատարակության կազմին, որը պահվում էր մեր տանը: Աբեղյանը այդ տեքստը՝ համահավաքը կազմող խմբի ղեկավարն էր:

Համալսարանում սովորելու տարիներին ավելի հաճախ էի առնչվում Աբեղյանի անվանը՝ և գրականության, և՛ լեզվի դասախոսություններին: Կարդում էինք նրա ուսումնասիրությունները: Իմ մանկական ակնածանքը Աբեղյանի հանդեպ գնալով խորանում էր:

Ասպիրանտուրայից հետո աշխատանքի անցա Աբեղյանի անունը կրող ակադեմիական ինստիտուտում: Մի ժողովում աշխատակիցներից մեկը անհարգալից արտահայտվեց Աբեղյանի ժառանգության հասցեին: Դա ինձ համար անսպասելի էր: Ես երիտասարդական ուղղագծությամբ արտահայտեցի իմ զայրույթը: Եվ, իհարկե, ես միակը չէի, որ զայրացած էի:

Հետագայում, երբ սկսեցի զբաղվել հայ գրականության պատմությամբ և հայկական էպոսի պոետիկայով, առանց Աբեղյանի ուսումնասիրությունների չէի կարող աշխատել: Մանավանդ նրա էպոսագիտական աշխատությունները ամեն բույե ձեռքիս տակ էին:

Աբեղյանի ժառանգությունը նորից ու նորից ստիպում է ակնածել: Մեր բանասիրության ամենահայտնի ներկայացուցիչների շարքում չկա մեկ ուրիշը, որն այդքան բազմակողմանիորեն և այդքան խորությամբ զբաղվեր և՛ հին, և՛ նոր գրականությամբ, և՛ բանահյուսությամբ, և՛ դյուցազնավեպով, և՛ բանահյուսական աղբյուրների հավաքմամբ ու դասակարգմամբ: Եվ այս բոլորի կողքին՝ նրա դասական լեզվաբանական աշխատությունները: Նրա երկերի ակադեմիական հրատարակության մեծադիր ու ծավալուն հատորները ավելի ծավալուն կլինեին, եթե հատորների գիտական ապարատը ավելի հիմնավոր ու հանգամանալից լիներ (թեև, բոլոր դեպքերում, այդ հրատարակությունը մեծ ծառայություն եղավ հայ բանասիրությանը):

Այսօր Աբեղյանի արտահայտած շատ ու շատ մտքեր վեճեր են հարուցում, քննադատության են ենթարկվում: Ես ինքս էպոսին նվիրված իմ գրքում և հոդվածներում վիճարկում եմ Աբեղյանի առանձին դրույթները: Բայց այսօր էլ ես պահպանում եմ իմ խոնարհումը Աբեղյանի հանդեպ: Ինչ էլ ասենք մենք, միևնույն է, Աբեղյանի աշխատությունները մնում են անկյունաքարային, անշրջանցելի: Նրա ընդարձակ գիտելիքները հայ մշակույթի, մանավանդ խոսքային մշակույթի մասին, նրա զարմանալի հստակ մտածողությունը, տեսակետները պարզ շարադրելու ընդունակությունը միշտ ակնածանք են առաջացնում իմ մեջ:

Ես չեմ անդրադառնա Աբեղյանի էպոսագիտական դրույթներին (դրանց մասին մանրամասնորեն ես գրել եմ էպոսին նվիրված իմ գրքի տարբեր հրատարակություններում): Բայց ուզում եմ մի անգամ ևս ընդգծել Աբեղյանի հսկայական դերը հայկական էպոսի գիտական ուսումնասիրության սկզբնավորման մեջ: Ինչ էլ գրած լինեն Բ. Խալաթյանը, Կանայանը և մյուսները «Մասնա ծոերի» մասին, հայ էպոսագիտության իսկական դասականը մնում է Մանուկ Աբեղյանը: Եվ եթե սրան էլ գումարենք, որ էպոսի երկու առաջին կարևորագույն պատումներից մեկի (Մոկացի Նախո քեռու) գրառումը կատարել է Մանուկ Աբեղյանը, ապա պատկերացում կունենանք նրա էպոսագիտական հսկայական վաստակի մասին:

Բայց այս գրության մեջ ես ընթերցողի ուշադրությունն եմ ուզում հրավիրել Աբեղյանի ժառանգության մի համեմատաբար աննկատ մնացած բաժնի վրա: Նա ծավալուն հոդված է գրել Հովհաննես Հովհաննիսյանի ստեղծագործության մասին և երեք գրախոսություն XIX դարավերջի հայ բանաստեղծության հայտնի հեղինակների՝ Հովհաննես Թումանյանի, Ալեքսանդր Օստրոյանի և Հակոբ Հակոբյանի մասին: Այդ գործերը կարելի է դասել այն տարիների հայ քննադատության ամենախորաթափանց գործերի շարքը: Հովհաննիսյանին նվիրված հոդվածը գրված է 1912 թ.: Այդ ժամանակ Հովհաննիսյանն արդեն իր հաստատուն տեղը գրաված բանաստեղծ էր: Աբեղյանը հոդվածում վերլուծում է նրա ստեղծագործությունը և գծում հայ նոր պոեզիայի զարգացման ընթացքը: Այստեղ շատ բան այսօր էլ պահպանում է իր արժեքը: Աբեղյանը, գործածելով բանաստեղծի խոսքերը, ասում է, որ Հովհաննիսյանը նոր «սրտի խոսք», «նոր շունչ» էր բերում: Նրա միտքը՝ «Հովհաննիսյանը մեր առաջին մաքուր քնարերգուն էր», վկայում էր, որ Աբեղյանը լավ գիտեր և խորությամբ

զգում էր նոր գրականության մեջ, մանավանդ պոեզիայում տեղի ունեցող փոփոխությունները: «Նրանից առաջ Գամառ-Քաթիպան և Շահագիզը երգել էին արդարև, բայց դրանք հրապարակախոս բանաստեղծ էին և ոչ քնարերգու, մինչդեռ Հովհաննիսյանը երգում էր առանց հրապարակախոսության, նման վաղամեռիկ Դուրյանին... Մեր քնարերգությունը Հովհաննիսյանով գտնում էր իսկական ճանապարհը, որով պիտի ընթանային հաջորդները՝ ավելի ու ավելի հարթելով և ընդարձակելով բացված շավիղը»: Տեղյակ ընթերցողն այստեղ անպայման կհիշի Թումանյանի խոսքերը հայ նոր պոեզիայի զարգացման երեք շրջանների մասին. «Ռուսահայ բանաստեղծությունը երեք շրջան է ունեցել: 1857 թ. ուսանող Ռ. Պատկանյանը՝ Գամառ Քաթիպան, հրատարակել էր «Ազգային երգարան» անունով տետրակն ու նրանով սկիզբ դրել առաջին շրջանի բանաստեղծության: Նրանից երեսուն տարի հետո ուսանող Հովհաննես Հովհաննիսյանը հրատարակեց իր բանաստեղծությունների առաջին գիրքը, ու սկիզբ առավ երկրորդ շրջանի բանաստեղծությունը...»: Երրորդ շրջանը տերյանականն է: Բայց այստեղ ինձ համար հետաքրքրականը երկրորդ շրջանն է: Ե՛վ Աբեղյանը, և՛ Թումանյանը այդ շրջանի սկիզբը համարում են Հովհաննիսյանի ստեղծագործությունը, և դա ճշմարիտ է նաև այսօրվա հայացքով: Աբեղյանի և Թումանյանի մոտեցումների ընդհանրությունը միայն հաստատում է այդ:

Աբեղյանը հանգամանորեն վերլուծում է Հովհաննիսյանի ողջ ստեղծագործությունը՝ միշտ շեշտելով նրա բերած նորությունը՝ իսկական քնարերգությունը, մարդու զգացմունքների արտահայտությունը: Ես կարծում եմ՝ Աբեղյանի այս հոդվածը մնում է Հովհաննես Հովհաննիսյանի պոեզիայի լավագույն քննություններից մեկը հայ գրականագիտության մեջ:

Միայն այս հոդվածը բավական էր հերքելու այն տպավորությունը, որ Աբեղյանը գլխովին թաղված է եղել հայոց բանահյուսության և հին գրականության ուսումնասիրության մեջ. նրա ժայռեղեն դեմքը կարծես հաստատում է, որ նա զբաղվել է միայն հույժ գիտա-բանասիրական խնդիրներով և չի հետաքրքրվել ժամանակակից գրականությամբ, մանավանդ պոեզիայով: Բայց երբ ծանոթանում ենք Հովհաննիսյանին, Թումանյանին, Ծատուրյանին և Հակոբյանին նվիրված հոդվածներին, տեսնում ենք, թե Աբեղյանը ինչքան հետաքրքրված էր նոր գրականությամբ, մանավանդ նոր բանաստեղծությամբ: Աբեղյանի գրախոսությունը Թումանյանի առա-

ջին գրքի մասին ևս վկայում է այս իրողությունը: Նա թերևս առաջինն էր, որ նկատեց Թումանյանի պոեզիայի էպիկական բնույթը. «Պ. Թումանյանի ստեղծագործության բնորոշ հատկությունն է վիպականությունը. վեպը նրան ավելի է հաջողվում, քան քնարերգությունը...»: Հետո այս միտքը հաստատվեց Դեմիրճյանի հուշերով, թումանյանագիտական հետազոտություններով:

Աբեղյանի ժառանգությունը դեռ շատ երկար մնալու է հայկական հումանիտար մտքի բարձրագույն դրսևորումներից մեկը:

ՈՒՐՎԱԳԻԾ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ

բ. գ. դ., պրոֆեսոր

XX դարի առաջին տասնամյակներում նկատելիորեն վերանայվում է սովետահայ գրականության պատմությունը, վերագնահատվում են 20-30-ական թվականների գրական արժեքները, գրականության պատմության մեջ իր անփոխարինելի տեղն է նվաճում Եղիշե Չարենցը:

Սակայն հայ գրականության գիտական պատմությունը տակավին մնում էր չլուծված պրոբլեմ: Ստեղծվածը անհրաժեշտ էր միայն մի որոշակի սահմաններում: Գրականության պատմությունն այստեղ ներկայանում է մի որոշակի մակարդակով. գրական շարժման, մամուլի, կուլտուրայի պատմության հետ առնչվող բազմաթիվ հարցեր ու առնչություններ, բազմաթիվ դեմքեր ու գրական երևույթներ դուրս են մնում տեսադաշտից: Տրվում են միայն ամենաընդհանուր օրինաչափությունները, մինչդեռ անհրաժեշտ էր պատմությունը ներկայացնել իր մանրամասների, փաստերի ամբողջության, նյութի լիակատար ընդգրկման մեջ: Դրա համար անհրաժեշտ էր գրականագիտական մտքի հասունացում, փաստերի կուտակում, նյութի խոր ուսումնասիրություն: Թերևս պատահական չէր, որ առաջինը գրվեց հին շրջանի գրականության գիտական պատմությունը, և դրա ձեռնարկողը եղավ մի խոշոր գիտնական՝ բազմակողմանի գիտելիքներով, հայ ժողովրդի պատմության ու մատենագրության բազմիմացությամբ, բեղուն գրչի վեց տասնամյակների վաստակով: Մենք նկատի ունենք Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» կապիտալ աշխատությունը, որի առաջին հատորը լույս տեսավ 1944 թ., իսկ երկրորդը՝ 1946 թ.: Աբեղյանի «Պատմությունը...» հայ գրականության պատմագրության խոշոր նվաճումն էր, որը մի շարք կողմերով այսօր իսկ մնում է չգերազանցված: ...Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» արժանիքներից մեկն այն է, որ սինթեզում է գրականության գիտական պատմագրության էական հատկանիշները: Այստեղ հմտորեն զուգորդվում են փաստագրությունն ու բանասիրությունը, վերլուծումն ու գիտական ընդհանրացումը: Աբեղյանը լայն մասշտաբի վրա դրեց հայ հին գրականության ուսումնասիրությունը, դիտարկեց այն ժամանակի

համաշխարհային գրականության ընդհանուր ֆոնի վրա: Արեղյանն ամբողջ խորությամբ վեր հանեց հայ հին գրականության համակողմանի բովանդակությունը, գիտականորեն հիմնավորեց նրա զարգացման էտապները:

Եթե որոշ գրականագետներ միագիծ էին ներկայացնում հին և միջին դարերի գրականությունը՝ նկատելով միայն կրոնական ուղղություն, իսկ ոմանք էլ փորձում էին անտեսել վերջինիս առկայությունն իր ամբողջ նշանակությամբ, Արեղյանը վերանում է այս երկու ծայրահեղություններից և հանդես բերում դիալեկտիկ մոտեցում՝ գրականության պատմության մեջ հայտնաբերում հակադիր ուղղություններ. «Մեր գրականության մեջ,– գրում է նա,– V դարի սկզբից հենց՝ երկվություն է մտնում: Մի կողմում գրավոր դպրություն, հակված ավելի դեպի արևմուտք, այն բնավորությամբ, որ ունի եկեղեցական գրականությունը ընդհանրապես քրիստոնյա ազգերի մեջ..., մյուս կողմում՝ աշխարհիկ անգիր բանաստեղծություն, մեծ մասամբ գյուղացու ստեղծագործություն, շարունակություն հին բանահյուսության, որ ինքնուրույն է և ցուլացնում է իր մեջ բուն ժողովրդի կյանքը... Մեր այս երկու բանահյուսությունները՝ ավանդական ու գրավոր, միասին արտահայտել են մեր հին գրականության ամբողջական պրոցեսը V դարից ի վեր»:

Հիմք ընդունելով գրականության ընդհանուր բովանդակությունը և պայմանավորելով այն ժողովրդի պատմական կացությամբ՝ Արեղյանը տալիս է առարկայի գիտական պարբերացումը՝ հին և միջին դարերի գրականությունն առնելով զարգացման երեք փուլի մեջ.

1. Առասպելապատմական բանահյուսություն (հնագույն ժամանակներից մինչև մեր թվագրության դարը),
2. Եկեղեցաքաղաքական մաքառման գրականություն (IV-XI դարեր),
3. Վերածնության գրականություն (XII-XVII դարեր):

Արեղյանն առաջինն էր, որ ցույց տվեց, իմաստավորեց այդ շրջափուլերի ներքին կապը, որակական փոփոխությունների ներքին միասնությունը, նախորդ շրջանի վերջաբանի մեջ նշմարեց նոր էտապի նախերգանքը: Ահա ինչպես է Արեղյանը բնորոշում գրականության երեք փուլերի դիալեկտիկ փոխանցումը. «Առաջին շրջանը՝ «Նախնական առասպելական-պատմական բանահյուսությունը» սկսվում է հնագույն ժամանակներից և արտահայտությունն է հայոց պատմական իրականության մինչև

երրորդ դարը (մեր թ.): Դա միայն ավանդական բանահյուսություն է: Շրջանի կոչումը՝ Առասպելապատմական, արդեն ցույց է տալիս այդ բանահյուսության ընդհանուր բնորոշ գիծը... Երկրորդ շրջանը՝ Մաքառման գրականությունը, իր մեջ անդրապատկերված ունի հայկական պատմական իրականությունը՝ սկսած III դարից մինչև XI դարը: Այս շրջանի գրականությունը կազմված է ավանդական բանահյուսությունից և գրավոր երկերից: Դրա մեջ երևան է գալիս ազնվականության և եկեղեցական շահերի պաշտպանությունը: Թե՛ գրավոր դպրության և թե՛ վիպական բանահյուսության մեջ, ինչպես են «Պարսից պատերազմը», «Պատերազմ Տարոնոյ» և ուրիշները, իշխում է մի ընդհանուր միտում՝ ազգային խիստ մաքառում, նախ՝ պարսից Սասանյան տերության ու հույների, հետո՝ արաբական բռնապետության դեմ: Մյուս կողմից այս շրջանի գրականության համար բնորոշիչ է նաև եկեղեցական դասի ձգտումն ու պայքարն իր գաղափարախոսությունը հաստատելու հայ ժողովրդի մեջ, մինչև որ X դարի երկրորդ կեսին թուլանում է օտարների դեմ մաքառումը, գերիշխում է եկեղեցական աշխարհայեցությունը, որին ենթարկվում են նաև իրենց իշխանությունների մեջ վերականգնված ազնվականները: Չեն պակասում նաև աշխարհիկ գաղափարներն ու հայրենասիրական ոգին, աչքի է ընկնում ուժեղ ձգտումը պաշտպանելու ազգային անկախությունը և ընդհանուր շահերը, որոնք, սակայն, սովորաբար արտահայտված են հայոց եկեղեցու շահերի հետ կապված: Շրջանի վերջում հորինված մի քանի երկերի մեջ զգալի է հաջորդ շրջանի՝ Վերածնության գրականության շունչը»:

(հատված հեղինակի նույնանուն հոդվածից)

ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂՅԱՆԸ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Մարգարիտ Խաչատրյան

բ. գ. դ., պրոֆեսոր

Մի քանի խոսք Արտաշես Աբեղյանի մասին (կենսագրական տվյալները քաղել ենք «Ազդարար» (Բեյրութ) թերթի 1953-ի մայիսի 15-ի համառում գիտնականի ծննդյան 75-ամյակին նվիրված ծավալուն հոդվածից):

Մանուկ Աբեղյանի ավագ եղբայր Գաբրիելի որդին էր, հորեղբոր սանը՝ Շուշիի թեմական դպրոցում: Ծնվել է 1978 թ. Աստապատում, ուսանել է Ներսիսյան դպրոցում, Գևորգյան ճեմարանում, Գերմանիայում, փիլիսոփայության դոկտոր էր, դասավանդել է Ներսիսյան դպրոցում, հետագայում՝ Պոլսի «Եսայան» օրիորդաց վարժարանում: Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի անդամ էր: 1922 թվականից բնակություն է հաստատել Բեռլինում: 1925 թվականից հատուկ թույլտվությամբ հայերեն է դասավանդել Բեռլինի համալսարանում, իսկ 1942 թվականից գրաբար է դասավանդել նույն համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում: Երբ ֆաշիստներն իշխանության գլուխ անցան, Արտաշես Աբեղյանը հայերի արիական ծագման մասին գերմաներեն գիրք հրատարակեց, գլխավորեց հայ գերիներին օժանդակող Ազգային խորհուրդը: Հիշարժան մի դեպք. ելույթներից մեկում Արտաշես Աբեղյանը դատապարտեց ֆաշիստներին, որոնք, կասկածի տակ դնելով հայերի արիական ծագումը, գործակցում էին թուրքերի ու ճապոնացիների հետ: Այդ հայտարարությունը ցնցող տպավորություն թողեց Եվրոպայում:

Նրա աշխատություններից թվարկենք «Թլուստ Դավիթը» (1902), ուսուցիչների համար որպես ուղեցույց հրատարակած «Հայրենագիտության ուսուցումը», աշխարհագրության դասագրքերը, Մանուկ Աբեղյանի հետ լույս ընծայած «Ուղղագրական բարգրքույկը», «Դորպատյան աշխատությունները», «Գյոթե. իր կեանքը եւ իր գործերը», էլ չենք խոսում հանդեսների հրատարակությունների, թարգմանությունների մասին:

Մահացել է 1955 թ. մարտի 13-ին:

Մեզ հետաքրքրող «Մանուկ Աբեղեան. կեանքը եւ աշխատութիւնները» ուսումնասիրությունը բաղկացած է 8 մասից, լույս է տեսել «Հայրենիք» ամսագրի 1955 թ. համարներում, բայց ինչպես գրում է ակադեմիկոս

Սարգիս Հարությունյանը «Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը» գրքում, վերահաս մահվան պատճառով մնացել է անավարտ: Վերջին հատվածն ավարտվում է այսպես. «Յաջորդի մի գլուխ եւս իր վերջին եւ ամենակոթողական աշխատութեան՝ «Հայոց գրականութեան պատմութիւն» երկհատոր հոյակապ գործին մասին»:

Ուսումնասիրությունն սկսվում է Աստապատ գյուղի, Խաչատրյան-Աբեղյան-Աբեղյան տոհմի, Մանուկ Աբեղյանի ուսումնառության, նրա ուսուցիչների մասին տեղեկություններով, մեկ առ մեկ ներկայացվում են մեծ գիտնականի աշխատությունները: Հատուկ շեշտվում է, որ Փիլիպպոս Վարդանյանի միջամտությամբ և հայ մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանի հովանավորությամբ Գերմանիայում ուսանող Մանուկ Աբեղյանն իր դոկտորական աշխատանքը՝ «Հայ ժողովրդական հաւատքը», նվիրել է Մանթաշյանին: Պատմելով Մանուկ Աբեղյանի մանկավարժական գործունեության մասին՝ Արտաշես Աբեղյանը գրում է, որ նա «բնականաբար դառնում է» Երևանի համալսարանի ուսուցչապետերից մեկը «մինչեւ խորին ծերութիւն», «վաստակաւոր ուսուցչապետը եւ հմուտ գիտնականը չի դադարում տքնել ու անձնուիրաբար ծառայել հայ մշակոյթին, իր պատուաւոր տեղն է գրաւում նաեւ Հայաստանի գիտութեանց ակադեմիայի հիմնադիրների շարքում: Ու այսպէս՝ մինչեւ իր օրհնուած կեանքի վերջին օրերը»:

Ներկայացվող ուսումնասիրությունը հմուտ գիտնականի երախտագիտության, խոնարհման ու նշանավոր հայագետի հսկայական վաստակի արժեքների հետաքրքիր փորձ է, ըստ էության՝ նաև երախտապարտ սանի խոսք իր ուսուցչի հիշատակին: Սա այն եզակի դեպքերից է, երբ դժվար է գերազնահատել ուսումնասիրության հեղինակի և առավել ևս վաստակավոր գիտնականի թողած հարուստ ժառանգությունը՝ սկսած «Դավիթ և Մհեր» ժողովրդական վեպին նվիրված առաջին դասախոսությունից մինչև «Հայոց հին գրականության պատմություն» երկհատոր աշխատությունը: Արտաշես Աբեղյանը բազմաթիվ առիթներով խոսում է Մանուկ Աբեղյանի հազարավոր սաների մասին, որոնք ծառայում են հայ գրին ու դպրոցին: Հմուտ ուսուցչապետի արժանավոր սաներից էր Աբեղյան տոհմի մեկ ուրիշ ներկայացուցիչը՝ Արտաշես Աբեղյանը:

«Բանասիրական գործերը» հատվածում Արտաշես Աբեղյանը հիացմունքով է գրում Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» քննական

հրատարակության մասին, որը «հսկայական ու տքնաջան աշխատանքի արդյունք է» (աշխատանքը կատարվել Ս. Հարությունյանի հետ): Կրտսեր Աբեղյանը լավ գիտեր, թե «որքան մաշիչ, ծանր բան է ձեռագրերի եւ նրանց մանրակրկիտ բաղդատութեան հետ գործ ունենալը», առավել ևս, եթե «այդ պարտականութիւնը ստանձնողները զբաղուած եւ պաշտոնի տէր ու ծանրաբեռնուած մարդիկ են»: Նա 37 ձեռագրերի բաղդատութեամբ, ընդարձակ առաջաբանով և «բիրաւոր» հարուստ ծանոթագրութիւններով քննական այս շքեղ հրատարակության մասին իր խոսքում մեջբերում է այն հատվածը, որտեղ Մանուկ Աբեղյանն անվարան հաստատում է պատմահոր «հին ու բնական տեղը մեր գրականության մեջ՝ հինգերորդ դարը»: «Հայ ժողովրդական առասպելները բազմակողմանի եւ սպառիչ ուսումնասիրութեան առարկա դարձնելուց հետո» Կորյունի «Վարք Մաշտոցի» քննական հրատարակությունն ու թարգմանությունը «պարզ աշխարհաբարով ու գիտական հաւատարմութեամբ» «կրկնակի վաստակ» է անվանում Արտաշես Աբեղյանը: Գրերի գյուտն արժնորում է հայ գրականության ծնունդով, քանի որ գրականությունը «ընդհանուր համագգային միութեան ամենամեծ պատմամշակութային գործն» է: «Դավիթ և Միհեր» տարբերակը 1886 թ. գրի առնելուց հետո Մանուկ Աբեղյանը տասնամյակներ շարունակեց մեր ժողովրդական վեպի ուսումնասիրությունը, ու 1936 թ. հրապարակ իջավ «մի շքեղ, հոյակապ գործ՝ «Մասնա ծոերը»: «Գիտական մեծարժէք», «ամէն կողմով գիտական» այս գործի շարունակությունն էր «նմանապէս յոյժ կարեւոր» մի այլ հրատարակություն՝ Մանուկ Աբեղյանի և Արամ Ղանալանյանի կազմած «Մասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստի առաջին փորձը:

Արտաշես Աբեղյանը հիշատակում է այն փաստը, որ Մանուկ Աբեղյանը երկար տարիներ դասավանդել է հայ ժողովրդական բանահյուսություն և հատկապէս հայ ժողովրդական վեպը: «Հայ ժողովրդական վեպը» աշխատության քննությանը նվիրված հատվածում կրտսեր Աբեղյանը քսան կետերի մեջ ամփոփում է հետազոտության գլխավոր արդյունքները՝ հայ դյուցազնավեպի՝ որպէս «հետազօտական մի նոր ճիւղի հիմնադիր» Մանուկ Աբեղյանի անմահությունը կապելով նաև էպոսի ու նրա հեղինակի՝ հայ ժողովրդի անմահության հետ»: Իր ուսուցչի պէս Արտաշես Աբեղյանն էլ համոզված պնդում է, որ դեռ կծնվի այն հայ հանճարեղ բանաստեղծը, որը մեր սքանչելի էպոսի ոգով կստեղծի «խսկական մարգա-

րիտը մեր ազգային բանաստեղծութեան», որը նոր ճանապարհ կբացի գրականության ծովի մեջ ճիշտ այնպես, ինչպես «Մասնա փոքրիկ գետակը, թաւալելով լեռների կատարներից վար, զարկում է հսկայական գետին, մի շերտով հոսում է ջրերի մեջտեղը եւ, միանալով նրան, ամէնը վազում են հասարակաց հունով»:

Ուսումնասիրության ամեն մի մաս առանձին քննության հետաքրքիր նյութ է, բայց մեր ընտրությամբ և տիկին Հասմիկ Աբեղյանի համառ խնդրանքով ներկայացնենք «Լեզուական աշխատութիւններ» գլուխը՝ ուշադրության կենտրոնում ունենալով ուղղագրության հարցի մեկնաբանությանը՝ ըստ Արտաշես Աբեղյանի: Մեզ այս դեպքում հետաքրքրում է գիտնականի խոսքը գիտնականի՝ իր ուսուցչի մասին:

Արտաշես Աբեղյանը հատուկ ուշադրություն է հրավիրում Մանուկ Աբեղյանի կազմած մի քանի դասագրքերի վրա՝ «Տարրական քերականութիւն», «Աշխարհաբարի քերականութիւն»՝ միջնակարգ դպրոցների համար: Այս դասագրքերը «պարունակում են ոչ միայն անհրաժեշտ գիտելիքներ արեւելահայ աշխարհաբարի մասին,– գրում է նա,– այլ նաեւ ուղղագրական կարեւոր գիտելիքներ: Դիւրացնելու համար քերականական կանոնների ուսումը, դրանց կցուած են համառօտ վերլուծութիւններ եւ դիւրմբոնելի գործնական վարժութիւններ: Այլեւ բառացանկեր»: «Աշխարհաբարի շարահիւսութիւն» «մեծարժեք գործը» Արտաշես Աբեղյանն արժեւորում է իբրեւ «իր տեսակում առաջինը եւ մինչեւ այժմ (խոսքը 1955-ի մասին է – Խ. Մ.) միակը հայ քերականական գրականութեւան մէջ: Մեծապէս օգտակար՝ իբրեւ վերին կարգերի դասագիրք, նաեւ որպէս օժանդակ ձեռնարկ ուսուցիչների եւ գրողների ու առհասարակ հայերէնի ուսմամբ հետաքրքրուող բոլոր մտաւորականների համար»: Երանի ազգային դպրոցի դասագրքերի հեղինակներն այս սկզբունքներով կազմեին իրենց «գլուխգործոցները» և ոչ թե անգլերէնի չիմացած քերականությանը հարմարեցնէին հայերէնի կառուցվածքն ու դպրոցական ծրագիրը, ոչ թե ամեն ինչ անէին հայ երեխային հիմնավորապէս խորթացնելու ազգային գրականությունից ու գիրք կարդալուց ընդհանրապէս: Ինչնէ: Մեծերը մեծ են բոլոր ասպարեզներում. գիտնական Մանուկ Աբեղյանը Ուսուցիչ էր բառի ամենալայն ու ամենախոր իմաստով, Արտաշես Աբեղյանը հավելում է՝ Ուսուցչապետ:

Ներկայացնելով Մանուկ Աբեղյանի «Աշխարհաբարի հոլովներ», «Գրաբարի համառոտ քերականություն», «Հայոց լեզվի ուղղագրություն» աշխատությունները, «Ուղղագրական հոդվածներ» գրքույկը, որ «աւելի ծանօթ է իր ենթավերնագրով՝ «Գայլ եւ գայլի պատահարներ», Մամբրե Մատենճյանի և Արտաշես Աբեղյանի հետ կազմած «Գրագետ» ուղղագրական օժանդակ ձեռնարկը, «Ռուս-հայերեն ռազմական բառարանը»՝ Արտաշես Աբեղյանը հանգամանորեն անդրադառնում է «այն խոցոտ նորամուծութեան, որ 1922-ին բռնադատուեց Հայաստանում» (2-46): Մանուկ Աբեղյանը՝ «հայ լեզուի եւ քերականութեան ուսումնասիրութեան գործին իր ամբողջ կեանքը նուիրած» գիտնականը, «միշտ եւ հանապազ մտահոգութեան միակ առարկա» ուներ՝ ուղղագրությունը «դիրացնել հայ մանուկների եւ գրասէրների համար»՝ «Անյողդողդ հիմք ունենալով սակայն մեր աւանդական կամ պատմական ուղղագրութեան օրէնքները»: Արտաշես Աբեղյանն անդրադառնում է Նահապետ Ռուսինյանի, Մինաս Չերագի, Խորեն Ստեփանեի եւ այլոց «քմածին» փոփոխություններին ու հավելում՝ «Բայց ապարդիւն՝ գրեթէ բոլորը»: Բացառություն է Ղազարոս Աղայանի՝ «ընտիր դասագրքերի ու երկար տարիների յամառ քարոզչութեան» միջոցով կատարած փոփոխությունը՝ վ հնչյունի գրությունն ընդհանրացնելը ւ-ով, իսկ Ստեփան Մալխասյանի առաջարկը՝ վ հնչյունը վ-ով գրելը, Արտաշես Աբեղյանն անվանում է «սկիզբն երկանց»: Վտանգավոր էր հատկապէս այն հանգամանքը, որ նորամուծությունների հեղինակները չէին գոհանում հարցի տեսական քննությամբ և կիրառում էին գրությունների մեջ՝ առաջացնելով «մի նոր շփոթութիւն եւ տարակուսանք՝ արեւելեան կողմն հայ աշխարհի», այնինչ արեւմտյան կողմը հեռու էր այս փոփոխություններից:

1913 թ. Գևորգ Հինգերորդ կաթողիկոսի հովանավորությամբ կազմված հանձնաժողովը պիտի քննարկեր ուղղագրության խնդիրը. նախագահը Գալուստ Տեր-Մկրտչյանն էր (Միաբան), քարտուղարը՝ Գևորգ վարդապետ Չեղեքչյանը (հետագայում՝ Ամենայն հայոց կաթողիկոս): Հանձնաժողովի անդամ Մանուկ Աբեղյանը մշակում է «կոչ եւ ծրագիր»՝ աչքի առաջ ունենալով «անհրաժեշտութիւնը մեր ուղղագրութեան միակերպութեան»: «Արարատ» ամսագիրը 1913 թ. հոկտեմբերի համարի «Յաւելուածում» գրում է ուղղագրության մասին՝ անդրադառնալով Մանուկ Աբեղյանի դասախոսությանը, որի նպատակն էր հստակեցնել, թե «ինչ

փոփոխությունների կարելի է մտցնել մեր ուղղագրության մեջ, որ բառերի պատկերներն առհասարակ աննշան փոփոխություն կրեն»։ Նույն ամսագրի հաջորդ համարներում տպագրված է այդ դասախոսության տեքստը։ Մանուկ Աբեղյանը բազմիցս կրկնել է, «որ եթե որեւէ փոփոխություն պետք է մեր ուղղագրության մեջ աւելի խառն դրություն մտցնի, աւելի լաւ է, որ չլինի։ Այդ պատճառով այս խնդիրին պետք է շատ զգուշութեամբ մօտենալ»։

Արտաշես Աբեղյանը հիշատակում է Մանուկ Աբեղյանի զեկուցման հիմնավորումներից երկուսը՝ պետք է հրաժարվել «հիմնական փոփոխություններ մտցնելու ամէն ծայրայեղ մտքից», քանի որ հնարավոր է «միայն մասնակի փոփոխություններ մտցնել մեր ուղղագրության մեջ, այն էլ՝ միայն ձայնաւորների գրութեան մեջ»։ Մանուկ Աբեղյանը դասախոսության ընթացքում հատուկ շեշտել է, որ նույնիսկ մասնակի փոփոխությունները պետք է լինեն աստիճանաբար և ոչ միանգամից։ Դասախոսության ընթացքում գիտնականն առաջարկել է քննել ձայնավորների ուղղագրության մասնակի փոփոխության չորս հնարավոր տարբերակ՝ հատկապէս շեշտելով, որ ուղղագրության մեջ փոփոխություն կարելի է կատարել միայն այնտեղ, «ուր երկու գրական լեզուներն եւս ունեն մի ընդհանուր արտասանություն»։ «Այդ մասին պիտի խոսեն արեւմտյան գրական լեզվի մարդիկ», – հավելում է նա։ Գիտնականը, «լոկ ակադեմիական» քննության նյութը ներկայացնելով հանրությանը, ո՛չ իրեն և ո՛չ էլ ուրիշներին իրավունք չէր վերապահում առաջարկած փոփոխությունները կիրառելու և համոզված պնդում էր՝ ոչ ոք չի կարող իրեն համարել «ակադեմիայի հաւասար» և իրավունք չունի նոր խառնաշփոթ առաջացնելու այս կարևոր հարցում։

Նա ցույց է տալիս նաև «ուղիղ ճանապարհը»՝ վերադարձ ավանդական ուղղագրության։ Սպասվում էր լայն քննարկում։ Բայց եղավ առաջին աշխարհամարտ, հետո «տեղի ունեցաւ հայկական ահռելի եղեռնը», ուղղագրական խառնաշփոթը շարունակվեց... «Իսկ ի՞նչ արաւ Մանուկ Աբեղյանը, – հարցնում է Արտաշես Աբեղյանն ու պատասխանում։ – Նա ինքնագլուխ կերպով որեւէ քայլ չի կատարել։ Շարունակեց գրել աւանդական ուղղագրութեամբ եւ ուսուցանել նոյնը»։

Հետո Խորհրդային Հայաստանում «լեզուական մարզում եւս յեղափոխութեան վճիռ» ընդունվեց՝ «ձեւի համար միայն» հրավիրելով մասնա-

գետներին, իսկ արեւմտահայութեան ներկայացուցիչներին հարկ չհամարեցին հրավիրել: Քննարկման մասնակիցները, այդ թվում՝ նաև Մանուկ Աբեղյանը, դեմ են արտահայտվել հապշտապ որոշումներին, բայց ժամանակներն ուրիշ էին: Արտաշես Աբեղյանը «աբեղյանական ուղղագրությունը» բնորոշում է որպես «անգէտ կամ չարական որակումը ոմանց», որոնք չգիտեն կամ չեն ուզում իմանալ, որ իշխանությունները պարզապես շահագործել են Աբեղյան գիտնականի «Բարոյական հմայքը եւ հեղինակաւոր դիրքը հայ լեզուի ու գրականութեան մարզում»՝ նրան դարձնելով «քաւութեան նոխազ»: Ճիշտ է, երկրի ներսում «կրաւորական դիմադրութեան եւ ներքին դժգոհութեան», իսկ Սփյուռքում «բուռն բողոքների ու դիմադրութեան» պայմաններում 1940 թ. մասնակի վերադարձ կատարվեց դեպի պատմական ուղղագրություն: Այդ առիթով Արտաշես Աբեղյանը նշում է. «Գոհունակութեան մի թերեւ զգացում ամենքի եւ բոլորից առաջ Մանուկ Աբեղյանի համար»:

Արտաշես Աբեղյանը «Հայոց լեզվի տեսությունը» «հոյակապ գործն» անվանում է Մանուկ Աբեղյանի «լեզուական աշխատությունների» «թագն ու պսակը» և նրա կողքին՝ որպես նույնքան արժեքավոր ուսումնասիրություն, ներկայացնում է «Հայոց լեզվի տաղաչափությունը»՝ այդ աշխատությունները դիտարկելով որպես բոլոր գրասերների ու հարցասերների լավագույն ուղեցույցներ լեզվական գիտելիքները հարստացնելու և խորացնելու գործում: Այս հիմնարար աշխատությունների կողքին Արտաշես Աբեղյանը չի մոռանում հիշատակել նաև Մանուկ Աբեղյանի «Շահնամեի» ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ» «փոքրիկ, բայց հմտալից» հոդվածը:

*«Գրական թերթ»
հոկտեմբերի 16, 2009, №34*

Մաս 3

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԸ ԲԱՌԱՐԱՆԱԳԻՐ

ԱԲԱԶՅԱՆ ԱՆՆԱ

բ. գ. դ., պրոֆեսոր

Վիթխարի է ականավոր գիտնական Մ. Աբեղյանի ծավալած բեղուն ու հիմնարար գործունեությունը հայագիտական գրեթե բոլոր բնագավառներում՝ առասպելաբանություն, ժողովրդական վիպասանություն ու էպոս, միջնադարյան քնարերգություն, ընդհանրապես հին ու նոր գրականություններ, տաղաչափություն և այլն: Ակադեմիկոսի գիտական մնայուն ժառանգության մեջ ծանրակշիռ տեղ են գրավում հայոց լեզվի ուսումնասիրությանը նվիրված նրա երկու հարյուրից ավելի բարձրարժեք հետազոտությունները, որոնցով Մ. Աբեղյանը նոր էջ բաց արեց հայ լեզվաբանական մտքի պատմության մեջ՝ իրավամբ դառնալով հայերենի գիտական քերականության հիմնադիրն ու հսկան:

Գաղտնիք չէ, որ գրական լեզվի մշակման, կատարելագործման, նամանավանդ բառապաշարի հարստացման գործում խիստ կարևոր են թե՛ լեզվի քերականական կառուցվածքի ուսումնասիրությունը և թե՛ նոր բառարանների ստեղծումը:

Մ. Աբեղյանը մեծ վաստակ ունի նաև բառարանագրության ասպարեզում: 1918 թվականից սկսած՝ պետական գրական լեզվի մշակման խնդիրը դարձել էր ժամանակի հրամայական, և ահա 1918-1927 թվականները Աբեղյանի գիտական գործունեության մեջ նշանավորվում են լեզվաշինարարական արդյունավետ աշխատանքներով, որոնք մեծապես նպաստեցին մեր լեզվի մշակմանը և կանոնավորմանը:

Այժմ մեր խնդրո առարկան անդրադարձն է մեծ գիտնականի ստեղծած բառարաններին:

Բառարանագրության ոլորտում լեզվաբանի առաջին փորձը եղել է «Աշխարհաբար առանձին բառերի համար բացատրական բառարանը»՝ կազմված 1882 թ.³²:

³² ԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆոնդ, N 490:

1890-ականների սկզբներին Մ. Աբեղյանը ծրագրել էր ստեղծել հայոց լեզվի բարբառային բառերի բացատրական բառարան: Այս գործին ձեռնամուխ է եղել 1891 թ.՝ կազմելով Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպի բառարանը: Բառարանի առաջին էջում գրված է. «Այս տետրի բոլոր դարձվածները հանված են Խ. Աբովյանի «Վ. Հ.» գրքից 1891 թվին Թիֆլիսում, իմ ձեռքով³³»: Որոշակի հանգամանքներով պայմանավորված՝ աշխատանքը ընդհատվում է, սակայն գիտնականին հոգեհարազատ է մնում ժողովրդական, բարբառային բառերի բառարան ստեղծելու գաղափարը:

1907 թ. Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր) նա կազմում է Պ. Պոռշյանի «Կովածաղիկ» վեպի բառարանը՝ բնագրային համապատասխան օրինակներով³⁴: Բառարանագրական այս աշխատանքներից կարելի է ենթադրել, որ Մ. Աբեղյանի կազմելիք բառարանը, ամենայն հավանականությամբ, պիտի լիներ ժողովրդական հորջորջվող հայերենի լավագույն բացատրական բառարանը:

Աբեղյան բառարանագրի բուռն գործունեությունը սկսվում է 1919 թվից, երբ նա եռանդուն մասնակցում էր հայ գրական լեզվի տերմինաբանական կոմիտեի աշխատանքներին: Ինչպես նշում է Հ. Ամալյանը «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները» գրքում, նոր շրջանի՝ XIX դարի առաջին կեսին ծաղկում ապրող հայ բառարանագրությունը կոչված էր բավարարելու բուռն թափով զարգացող հայագիտության պահանջները, մինչդեռ հրապարակի վրա մասնագիտական, տերմինաբանական բառարանները հազվադեպ էին, մի բան, ինչի կարիքը խիստ հրատապ ու անխուսափելի էր»³⁵:

Ակադեմիկոս Սարգիս Հարությունյանը Աբեղյանի կյանքին ու գործին նվիրված հսկայածավալ մեծարժեք աշխատության մեջ գրում է. «Պետականությունից զուրկ երկրում սեփական ազգային լեզվով գիտությունը, քաղաքականությունն ու արվեստը զարգացնելու անհնարինությունը, բնականաբար, հասարակականորեն չէր առաջադրում գիտության, քաղաքականության ու մշակույթի տարբեր բնագավառների մասնագիտա-

³³ Նույն տեղում, N 70 բ:

³⁴ Նույն տեղում, N 70 գ:

³⁵ Տե՛ս **Ամալյան Հ.**, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1966, էջ 54:

կան տերմինաբանության մշակման կարիք: XX դարի 2-րդ տասնամյակից սկսած՝ հայ ազգային-քաղաքական և մշակութային կյանքի վերաճման հետ միասին, առաջ է գալիս նաև մասնագիտական բառարաններ ունենալու բուռն պահանջ: Երբ 1918 թվականից ի վեր Հայաստանում պետական պաշտոնավարությունը սկսում է կատարվել հայերենով, օրակարգի հրատապ խնդիրներից է դառնում մասնագիտական տերմինաբանության մշակումը՝ պաշտոնավարության այնպիսի բնագավառների համար, որպիսիք դատարաններն ու ռազմական գործն էին³⁶:

1918 թ. Թիֆլիսի հայ փաստաբանների միությունը («Հայփաստ»)/, հաշվի առնելով Հայաստանի դատարանների մոտալուրտ ազգայնացումը, նախաձեռնում է կազմել ռուս-հայերեն իրավաբանական տերմինների բառարան, որը առաջին քայլը պիտի լիներ կարևորագույն օրենսգրքերի հայերեն թարգմանության գործում, գործնականորեն նպաստեր հայերենին անվարժ արևելահայ պաշտոնյաների ու փաստաբանների աշխատանքին: Բառարանն ընդգրկելու էր դատավարության մեջ հաճախակի կիրառվող բառեր, քաղաքացիական, քրեական, առևտրական և մուրհակային իրավունքին, քաղաքացիական, քրեական դատավարության վերաբերյալ տերմիններ:

Ռուսերեն 1100 բառերից բաղկացած բառացանկը բյուրոն տրամադրեց երդվյալ հավատարմատար Տիգրան Հովհաննիսյանին՝ կազմելու բառարանը, որի տերմինների քանակը չպետք է գերազանցեր 1400-ը (ծախսերի և ժամանակի առումով): Խմբագրական մասնաժողովում (այդպես է նշված) աշխատելու են հրավիրվում ժամանակի հայտնի հայկաբաններ Մ. Աբեղյանն ու Ս. Մալխասյանը:

Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարանը հավաքական մտավոր աշխատանքի եզակի օրինակ էր, ստեղծագործական երևույթ հայ իրականության մեջ: Հիշենք, որ նախքան սույն բառարանի ստեղծվելը չունեինք իրավաբանական որևէ բառարան: Գրաբարն էլ աղքատ էր իրավաբանական տերմիններ ունենալու առումով, որից կարողանային օգտվել հեղինակները: Անհրաժեշտություն էր առաջացել ստեղծելու նոր բառեր: Եվ ահա իրավաբանական տերմինաբանության կերտման կարևոր և պատասխանատու գործը ստանձնում են Մ. Աբեղյանը և Ս. Մալ-

³⁶ Հարությունյան Ս., Մ. Աբեղյան. կյանքը և գործը, Եր., 1970, էջ 623:

խաայանը: Բառարանի շուրջ 1400 բառական միավորից (մեր հաշվումներով ստույգ թիվը 1324 է), ինչպես հեղինակներն են նշում, ավելի քան 360-ը կա՛մ նոր տերմիններ են՝ նորաբանություններ, կա՛մ նորաձևություններ (գործածական բառերի կրճատումներ և առհասարակ ձևափոխություններ), կա՛մ էլ հնաբանություններ (հին բառերի վերականգնումներ հին կամ նոր առումով, անփոփոխ կամ փոփոխած ձևով): Սրանցից մոտ հիսունը առաջարկել են Մ. Աբեղյանն ու Ս. Մալխասյանը, վաթսունը բուն իմաստով համատեղ աշխատանքի արդյունք են, իսկ մնացածի հեղինակը Տ. Հովհաննիսյանն է³⁷:

Կարևոր ենք համարում առանձնացնել այս բառարանի գլխավոր արժանիքները:

ա) Հեղինակներն աշխատել են ռուսերեն յուրաքանչյուր տերմինի դիմաց անպայման դնել հայերեն այնպիսի բառ, որը ճշգրտորեն կարտահայտեր ռուսերեն տերմինի իմաստը: Այդպիսի բառ նախ փնտրել են խոսակցական լեզվում. եթե չեն գտել այնտեղ, դիմել են գավառաբարբառների և գրաբարի օգնությանը. «Հին հայերենից օգտուել ենք լիաբուռն և ի միջի այլոց ի կեանս ենք վերակոչել այնպիսի քիչ գործածական ձևեր, ինչպես «վարութիւն», «իրաւութիւն» և այլն (փոփոխած կամ անփոփոխ առումով)³⁸:

բ) Բառարանը կազմողները հնարավորինս խուսափել են ռուսերեն մի քանի տերմին հայերեն միևնույն բառով թարգմանելուց, համարժեքը չգտնելու դեպքում ստեղծել նորը՝ մեծապես նպաստելով իրավաբանական հասկացությունների հստակեցմանն ու հարստացմանը:

Բառարանում ամեն մի տերմինի իմաստային յուրաքանչյուր առումի դիմաց գրված է հայերեն մեկ բառ, հազվադեպ՝ երկուսը, որոնցից մեկը օտար ծագման է: Սա այն դեպքում է, երբ մասնագետները գերադասել են օտար բառը, թեև հայերենն էլ անընդունելի չեն համարել: Կամ ընդհակառակը, գերադասել են հայերեն բառը, սակայն չեն ցանկացել հանրության կողմից լայնորեն կիրառվող օտար բառը չներկայացնել բառարանում՝ վերջնական ընտրությունը թողնելով լեզվի զարգացմանը:

³⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 9-10:

³⁸ Նույն տեղում:

Բառերի ընտրության ժամանակ հեղինակները մեծ ուշադրություն են դարձրել նաև դրանց բարեհնչյունությանը, հակիրճությանը. «Նոր հայերենի պակասութիւններից մէկն էլ բառերից շատերի չափազանց երկարությունն է, ուստի մեր հոգսերից մէկն էլ եղել է բառերին կրճատ ձև տալը կամ նրանց կրճատ ձևերի վերականգնումը: Բառեր ընտրելիս, կրճատելիս կամ կազմելիս մենք առանձին ուշադրութիւն ենք դարձրել նաև նրանց գեղեցկության վրայ³⁹» (օրինակ՝ ներկայիչ>ներկայացուցիչ, հավատարար>հավատարմատար):

1919 թ. լույս տեսած «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարանը» բռնեց ժամանակի քննությունը՝ մեծապես նպաստելով հայ իրավաբանական մտքի զարգացմանը: Բազմաթիվ բառեր մտան շրջանառության մեջ: Նշենք դրանցից մի քանիսը՝

иск–հայց, истец–հայցվոր, исковое прошение–հայցագիր, аренда–վարձակալություն, арендная плата–վարձագին, аванс–կանխավճար, наследователь–ժառանգատու, недоимка–ապարք, сообщник–հանցակից, чуждать–օտարել, акциз–բաժ, акция–բաժնեթուղթ, алиби–այլուր (հիմա՝ այլուրեքություն), атестат–վկայագիր, вклад–դրույք և այլն:

Բառարանում զետեղված որոշ նորակազմություններ չմտան շրջանառության մեջ. կա՛մ ենթարկվեցին փոփոխությունների, կա՛մ էլ ուղղակի դուրս ընկան լեզվից: Ներկայացնենք դրանցից մի քանիսը՝ срок–կետիկ, безсрочный–անկետիկ, бланк – սոսկիկ, бланковая надпись – սոսկ մակագիր, апелляция – առկոչ (այժմ՝ բողոքարկում)/, вознаграждение за находку – գտնողչէք և այլն:

Այսպիսով, 1919 թ. հունիսին լույս տեսած «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարանը», լինելով արևելահայերենում տերմինաբանական-մասնագիտական առաջին բառարանը, դարձավ այն խարիսխը, որի վրա հիմնվեց ու զարգացավ հայ իրավաբանության լեզուն:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին ժամանակի հրամայական էր դարձել նաև ռազմական տերմինաբանություն ունենալը: Հայաստանի ռազմական կոմիսար Ավիս Նուրիջանյանի հրամանով Մ. Արեղյանին հանձնարարվում է կազմել ռուս-հայերեն ռազմական տերմինների բառարան: Այդ նպատակով մեծ գիտնականին նշանակում են ռազ-

³⁹ Նշվ. աշխ., էջ 13:

մական կոմիսարի անձնական քարտուղար: 1924 թվականից նա կովկասյան կարմրադրոշ բանակի ռազմահեղափոխական խորհրդին կից խմբագրական-հրատարակչական կոլեգիայի անդամ էր, ռազմական տերմինների թարգմանիչն ու վերջնական մշակողը: 1925 թ. (կազմի վրա նշված է 1927) հայագետը լույս է ընծայում մոտավորապես 17 հազար բառ ու դարձված պարունակող «Ռուս-հայերեն ռազմական բառարանը»՝ բաղկացած 724 էջից՝ հայ բառարանագրության պատմության մեջ դառնալով առաջինը իր տեսակի մեջ:

Ռազմական տերմիններ՝ որպես այդպիսիք, գրեթե չունեն հայերենը, և Աբեղյան բառարանագրի առջև դժվարին խնդիր էր ծառացել, քանի որ «դարերից ի վեր ռազմական կյանքով ապրած չլինելով՝ մեր լեզուն մնացել է այս նկատմամբ ընդհանրապես նախնական դրության մեջ, շատ քիչ են առաջ եկել ռազմական նոր բառեր և դարձվածքներ⁴⁰»: Բառարանը կազմելիս Մ. Աբեղյանը առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով:

ա) Բառարանում ներառել իր և ուրիշների կողմից վերջին 7-8 տարիների ընթացքում ստեղծված տերմինները:

բ) Գործածել ռազմական հին բառերը նոր, փոփոխված իմաստներով, այսինքն՝ իմաստափոխության ենթարկելով, օրինակ՝ *համհարզ*, *հաստիք*, *փակադակ* և այլն: Սրա մասին Մ. Աբեղյանը գրում է. «Կուլտուրայի փոխվելու հետ, բնականաբար, ոչ միայն նոր օտար բառեր պիտի մտնեն մեր լեզվի մեջ, այլև մեր բառերի նշանակությունները ևս պետք է ընդարձակվեն նոր առումներով⁴¹»:

գ) Երբ նշված երկու մեթոդները արդյունք չեն տվել, հեղինակը ստեղծել է նոր տերմիններ, ինչպես՝ *командировка* – գործուղում, *съёмка* – հանութ, *барак* – հեղակ և այլն: Հաճախ դիմել է ժողովրդախոսակցական, բարբառային բառաշերտին, օրինակ՝ *сошка* – խզմար, *гуськом* – իծաշարուկ և այլն:

Մ. Աբեղյանը, բացի իր ստեղծած տերմիններից, խմբագրել, նորմավորել, ի մի է բերել տարբեր բառարաններում և զրքերում առկա ռազմական բառերը, ինչի շնորհիվ հայերենի բառապաշարը հարստացավ հազարավոր նորաստեղծ բառերով: Նշենք դրանցից մի քանիսը՝ *батальон* – գու-

⁴⁰ Աբեղյան Մ., Ռուս-հայերեն ռազմական բառարան, էջ 4:

⁴¹ Նույն տեղում:

մարտակ, повестка – ծանուցում, стелька – միջատակ (կոշիկի), поворот – ոլորան, мина – ական, снаряд – ական, лафет – հրետասայլ, взвод – դասակ, бомбардир – ռմբարկու, граната – նռնակ, шеренга – տողան, штат – հաստիք, пехота – հետևազոր և այլն:

Եղան նաև այնպիսի բառեր, որոնք հավանության չարժանացան և դուրս մնացին կիրառությունից, ինչպես՝ колонна – դրութասայուն, ефрейтор – թելանի, лейтенант – տեղակալ և այլն:

Այսպիսով, «Ռուս-հայերեն ռազմական բառարանի» պատմական մեծ նշանակությունն այն է, որ կյանքի կոչվեցին հազարավոր ինչպես նորաստեղծ, այնպես էլ անգործածական բառեր՝ հարստացնելով հայոց լեզվի բառային կազմը, իսկ Մ. Աբեղյանը դարձավ հայերենի ռազմական տերմինաբանության հիմնադիրն ու նորմավորողը:

1927թ. լույս է տեսնում Հ. Աճառյանի և Գ. Ղափանցյանի կազմած՝ երկաթուղային տերմինների բառարանը, որին իր մասնակցությունն էր բերել նաև Մ. Աբեղյանը լեզվական կողմի մշակմամբ:

1930-ականներին բժիշկներ ակադ. Լևոն Հովհաննիսյանի, Ա. Տեր-Պողոսյանի և Մ. Աբեղյանի ջանքերով կազմվում է «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարանը», որն իր ծավալով՝ ավելի քան 20000 միավոր, գերազանցում է մինչ այդ հրապարակի վրա եղած բժշկական բոլոր բառարանները:

Հեղինակները որպես ուղենիշ ունեցել են հետևյալ սկզբունքները. չթարգմանել բժշկական օտար տերմինը, եթե հայերենում չկա համապատասխան բառ կամ կազմված է անհաջող, եթե թարգմանությունը ճշգրիտ չի արտահայտում տերմինի իմաստը, եթե հանրության կողմից արդեն իսկ քաղաքացիություն են ստացել և լայնորեն տարածվել դեղերի, հիվանդությունների շատուշատ անուններ, ինչպես՝ *մալարիա, խոլերա, նոպա, ստրեպտոկոկոս* և այլն:

Նշենք, որ բառարանում տեղ են գտել նաև որոշ թերություններ, անհաջող, երբեմն էլ սխալ թարգմանություններ: Դրա գլխավոր պատճառը թերևս այն է, որ 40-ականներից Մ. Աբեղյանը գերծանրաբեռնվածության և վատառողջության պատճառով չի կարողացել մասնակցել բառարանի խմբագրման, հղկման վերջնական աշխատանքներին: Այսուհանդերձ, «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարանը» բացառիկ երևույթ էր հայոց լեզվի բժշկական տերմինաբանության ոլորտում:

Դեռ 1920-ական թվականներին Մ. Աբեղյանը, երբ ղեկավարում էր գիտության և արվեստի ինստիտուտը, առաջարկում է Գ. Լևոնյանին և Դ. Դեմիրճյանին կազմել գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինների բառարան՝ հաշվի առնելով այս բնագավառի մասնագիտական տերմինների բացակայության պայմաններում հայ ազգային արվեստաբանության զարգացման միտումները: Բառարանի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքներում Մ. Աբեղյանը առավելապես հակված էր հայերեն տերմիններ ստեղծելուն՝ ի տարբերություն իր գործընկերների, որոնք նախընտրում էին փոխառությունները:

Բառարանն ընդգրկում է հարյուրավոր նորաստեղծ բառեր, որոնց հեղինակը Մ. Աբեղյանն է: Բերենք օրինակներ՝ живопись – գունանկարչություն, гуаш – խեժաներկ, комбинация – համակցություն, комплект – համալիր, конфигурация – կերպավորություն, мазок – քուրք, ассортимент – տեսակույք, банка – գլաման, натюрщик – բնորդ, розетка – վարդյակ, овал – ձվարդ, сине-серый – կապտագորշ, стенопись – որմնանկար, чеканка – դրոշմատուր և այլն: Թերություններով հանդերձ՝ 2000 բառային միավոր պարունակող «Գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինների բառարանը» հայ բառարանագրության պատմության մեջ կերպարվեստի տերմինների առաջին բառարանն էր, սակայն, ցավոք սրտի, չիրատարակվեց. տարածվեց մասնակիորեն (ձեռագիրը պահվում է ԳԱ արվեստի ինստիտուտում):

Ամփոփենք՝ Մ. Աբեղյանի կազմած բառարանները՝ «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան» (Տ. Հովհաննիսյանի, Մ. Մալխասյանի... հեղինակակցությամբ), «Ռուս-հայերեն ռազմական բառարան», «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան» (Լ. Հովհաննիսյանի և Ա. Տեր-Պողոսյանի հեղինակակցությամբ), «Գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինների բառարան» (Գ. Լևոնյանի և Դ. Դեմիրճյանի հեղինակակցությամբ), գիտական ծանրակշիռ ավանդ են հայ բառարանագրության, ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման, տերմինաբանության զարգացման ասպարեզում և մեծապես նպաստել են հայ գիտության զարգացմանը: Լինելով հայերենի բոլոր դրսևորումների անըստգյուտ մասնագետ, բազմադարյա հայ մշակույթի լավագույն գիտակ՝ Մ. Աբեղյանը, իրավամբ, ստեղծագործական մոտեցում է հանդես բերել օտար բառերի թարգմանության հարցերում՝ մեր հարուստ մատեն-

նագրությունից կենդանացնելով բազմաթիվ մեռած բառեր կամ էլ արարել նորերը՝ կատարելապես տիրապետելով հայերենի բառակազմության օրինաչափություններին:

Անվանի լեզվաբան, բառարանագետ Աշոտ Սուքիասյանը այսպես է բնութագրել Աբեղյան-բառարանագրին. «.... Դեռ 20-ական թթ. պրոֆ. Աբեղյանը հիմնովին հերքեց ժամանակակից հայերենի մասին տարածված այն առասպելը, ըստ որի հայոց լեզուն անընդունակ է իր սեփական միջոցներով ստեղծելու հասարակական-քաղաքական, գիտական և տեխնիկական տերմինաբանություն: Այդ... առասպելի հերքման փայլուն ապացույցներն են պրոֆ. Մ. Աբեղյանի կազմած և հայոց լեզվի մեջ մտած հազարավոր բառերն ու տերմինները...»⁴²:

⁴² Տե՛ս **Ա. Սուքիասյանի** «Ռուս-հայերեն բառարանագրությունը սովետական իշխանության տարիներին» թեկնածուական ատենախոսությունը, էջ 79 (անտիպ):

ԱԲԵՂՅԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՀԻՄՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆՆԱ ԱԲԱԶՅԱՆ

բ. գ. դ., պրոֆեսոր

Հայտնի է, որ ՀՀ պետական լեզվի ուղղագրական բարեփոխումը կատարվել է 1922 թ. մարտի 4-ին ականավոր գիտնական Մ. Աբեղյանի կողմից (նշվում է լուսավորության այն ժամանակվա նախարար Պողոս Մակինցյանի անունը ևս) և 1940 թ. մասնակի փոփոխությունների ենթարկվել: Այդ ժամանակ արդեն արևելահայերենի և մաշտոցյան դասական ուղղագրությունների միջև տարբերությունները խիստ խորացել էին:

Դասական ուղղագրությունը անադարտ գոյություն է ունեցել իր ծննդյան պահից մինչև մի քանի դար: XI-XII դարերի . ձեռագրերում արդեն ի հայտ են գալիս ուղղագրական և հնչյունական տարբերություններ⁴³: Հայերենի հնչյունական համակարգի և քերականական կառուցվածքի մեջ պատմականորեն առաջացած տեղաշարժերը, բնականաբար, դասական ուղղագրության մեջ բարեփոխումների տեղիք պիտի տային: Այսինքն՝ մաշտոցյան ուղղագրության մեջ բարեփոխություններ սկսվել են կատարվել դեռևս վաղ միջնադարում:

Գ. Զահուկյանը գրում է. «Գրաբարի ուղղագրության նորմավորման պահանջ առաջացել է դեռ միջին դարերում, երբ արդեն նկատելի էին խոսակցական լեզվի՝ գրաբարից ունեցած տարբերությունները: XII-XIII դարերում Արիստակեսի, Գևորգ Սկևռացու և ուրիշների կողմից գրվել ու հիմնական գծերով լուծվել է գրաբարի ուղղագրության ու կետադրության նորմավորման հարցը»⁴⁴: Այս մասին գրում են նաև Ա. Մարգարյանը և Պ. Շարափխանյանը: Այսպիսով, դեռ վաղ միջնադարում մաշտոցյան ուղղագրության մեջ կատարվել են բարեփոխումներ:

⁴³ Տե՛ս Տեր-Մկրտչյան Գ., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1979, էջ 312, Շարափխանյան Պ., Հայերենի ուղղագրության հարցեր, «Պատմա-բանասիրական հանդես», 1990, հ. 2, էջ 98:

⁴⁴ Զահուկյան Գ., Հարկ կա՞րդ այդքան փոխել մեր ուղղագրությունը, «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 20.12.1989:

Նոր ուղղագրության հակառակորդ Մ. Մալխասյանցը, անդրադառնալով **ու, լ, վ** տառերին, որոնք **վ** հնչույթն են նշագրում, գրում է. «Դեռ 10-11-րդ դարերից սկսած՝ թե՛ արձանագրությունների և թե՛ գրքերի մեջ պատահում են **վ**-ով գրություններ անգրագետ գրիչներից: Մխիթարյանները դեռ 19-րդ դարի սկզբում՝ աշխարհաբար գրելու ժամանակ, հետևում էին այս գրության կերպին...: Սայաթ-Նովայի գիտական հրատարակիչը՝ բժիշկ Ախվերդյան, կրավորական բոլոր ձևերը գրում էր «**վ**»-ով...: Խաչ. Աբովյան «**վ**» է գործածել բոլոր տեղերում, ուր մենք ավանդական ուղղագրությամբ «ու» ենք գրում «**վ**» հնչելիս..., իսկ Խորեն Ստեփանեն իր «Հայկական աշխարհում» ավելի արմատական կերպով է վարվել և ամեն տեղ, ուր հնչվում է «**վ**», գրել է «**վ**»⁴⁵:

Նշենք, որ XX դարասկզբին՝ Աբեղյանի բարեփոխումից առաջ, Ղ. Աղայանը **վ** հնչույթի երեք նշանագրերից **ու**-ն սեփական համոզմամբ հանել էր: Զարմանալի է, սակայն հաջորդ քայլը կատարում է ոչ այլ ոք, քան նույն ինքը՝ Մ. Մալխասյանցը՝ իր «Մի հնչյունին մի գիր» գրքույկում թողնելով **վ** հնչույթ արտահայտող միայն **վ** տառը⁴⁶: 1922 թ. բարեփոխումից հետո նա գրում է, որ այդ ռեֆորմի երեք կետեր Մ. Աբեղյանին չեն պատկանում, այլ առաջարկվել ու գործադրվել են ուրիշների կողմից⁴⁷: Երբ XIX դարի կեսերին նոր գրական լեզուն վերջնականապես դուրս մղեց գրաբարը, ուղղագրության մեջ արդեն թափանցել էին բառերի արտասանության մեջ կատարված ինչ-ինչ փոփոխություններ (դուռն>դուռ, հուգումն>հուզում, անցանել>անցնել և այլն): Սակայն նոր գրական լեզվի ուղղագրությունը հիմնականում մնում էր հինը՝ խոր անջրպետ գոյացնելով կենդանի արտասանության և ավանդական գրության միջև: Ահա այս պատճառով էլ նոր լեզվի հրամայականն էր դարձել ուղղագրության մեջ ևս արտասանությանը համապատասխանող ամենաանհրաժեշտ ու կարևոր փոփոխությունների կատարումը:

1913 թ. հոկտեմբերին Էջմիածնում հայ գրերի գյուտի 1500-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսության ժամանակ կարդացած «Մեր ուղղագրության մասին» զեկուցման մեջ Մ. Աբեղյանը նշում է. «Ես, ուրեմն, առաջարկում եմ հաշտվել կատարված իրողության հետ⁴⁸»:

⁴⁵ Տե՛ս Աբեղյան Մ., Ուղղագրական ռեֆորմը, Երկեր, հ. 8, Եր., էջ 386:

⁴⁶ Մալխասյանց Մ., Մի հնչյունին մի գիր, Թիֆլիս, 1910, էջ 13:

⁴⁷ Տե՛ս Մալխասյանց Մ., Մարտակոչ, Թիֆլիս, 1924, N10-11:

⁴⁸ Տե՛ս Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 363:

Այսպիսով, Մ. Աբեղյան ներհուն գիտնականը դասական ուղղագրության՝ դարերի հոլովություն տեղի ունեցած փոփոխությունները ի մի բերեց, համակարգեց բոլոր առաջարկներն ու կարծիքները, ըստ հարկի՝ փոխեց դրանք՝ գիտականորեն հիմնավորելով ուղղագրության նոր սկզբունքները:

Հին ուղղագրությանը վերադառնալու պահանջով շարժմանը, որը ծավալվել է անցյալ դարի 80-ականների վերջերից, ակտիվորեն մասնակցել են բանաստեղծ Լևոն Միրիջանյանը, ազգային գրադարանի նախկին տնօրեն Գ. Տեր-Վարդանյանը, ֆրանսահայ Հակոբ-Գրիգորը (Ջրջրյան), Անդրանիկ Չելեպյանը, Սիմոն Հովիվյանը և այլք, իսկ առաջնորդն ու ոգեշնչողը Ռաֆայել Իշխանյանն էր: Ըստ նրա՝ բարեփոխման հեռահար նպատակն իբր լատինատառ հայերենին անցնելն էր⁴⁹: Հայաստանում գործող ուղղագրությունը անվանում է «խառնիճադանջ», «անհեթեթություն», «ծռագրություն», «անգրագիտություն»: Ռ. Իշխանյանն այն կարծիքին էր, որ 1922-1940 թթ. հայերենի ուղղագրության մեջ ոչ թե ինչ-որ փոփոխություններ են կատարվել, ինչպես սխալմամբ կարծում են բոլոր լեզվաբանները, այլ ուղղակի «բռնաբար արգելվել է հայերենի դասական ուղղագրությունը»: Եվ դա նա անում է միայն այն նպատակով, որ գործին անտեղյակ մարդիկ զայրությամբ ու ատելությամբ լցվեն գործող ուղղագրության դեմ և պահանջեն անմիջապես անցնել հին ուղղագրությանը: Ինչպես իրավացիորեն նշում է Մ. Ասատրյանը, «եթե մեր լեզվի ուղղագրության վրա բռնություն է գործադրվել, ապա դրա նգովից արմատը եղել է ոչ թե Հայաստանի բոլշևիկյան կառավարությունը, այլ Նորին մեծություն կենդանի լեզուն, որի դեմ, ինչպես հին հռոմեացիներն էին ասում, անգոր է նույնիսկ կայսրը»⁵⁰: Իսկ ուղղագրության հեշտության, պարզության ու մատչելիության մասին Ռ. Իշխանյանը, բոլոր սահմաններն անցնելով, գրում է. «18 թվի մայիսին Երևանը հակառակորդին հանձնելը հեշտ էր, չհանձնելը՝ դժվար (և այդ դժվարը հաղթահարեցինք), 21 թվին Կարսը և Ալեքսանդրապոլը հանձնելը հեշտ էր (ցավոք, այդպես էլ արեցինք), պահելը՝ դժվար: Եվ ահա հիմա էլ թե՛ նոր ուղղագրությունը հեշտ է, դասականը՝ դժվար: Ուղղակի մարդ ապշում է մեր մաշտոցյան, դասական ուղ-

⁴⁹ Տե՛ս **Իշխանյան Ռ.**, Վերացնել ուղղագրական բռնադատումը, «Ավանգարդ» օրաթերթ, հ. 84, 1989:

⁵⁰ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Անհիմն առաջարկ, «Հայաստան» օրաթերթ, 16. 04. 1991:

ղագրության հակառակորդների այս *հեշտասիրության* վրա»⁵¹: Խոսքերն ավելորդ են...

Հակոբ-Գրիգորը Փարիզում հրատարակած մի գրքուկում Պ. Սևակին հղած պատասխանում գրում է. «Ոչ ոք չի կարողար ձեր ուղղագրությամբ և ձեր լեզվով գրված թերթեր. սակավ կարդացողներն ալ հակակրությամբ կը լեցվին»⁵²:

Ըստ Լ. Միրիջանյանի՝ «արդի ուղղագրության պատճառով մինչև այսօր Հայաստանի հայը և Սփյուռքի հայը դժվարանում են հասկանալ միմյանց գրավոր խոսքը՝ լինի նամակ, թերթ կամ գիրք»։ Հեղինակը երևի չի էլ պատկերացնում, որ գրական հայերենի երկու տարբերակների միջև եղած հիմնական տարբերությունները բառաբերականական են, հնչյունական-արտասանական և այլն, իսկ ուղղագրականը երկրորդական դեր ունի։ «Մեկ ազգ, մեկ լեզու, մեկ ուղղագրություն» կեղծ հայրենասիրական կարգախոսով հանդես եկողները նենգափոխում են փաստերը, փորձում վարկաբեկել նոր ուղղագրությունը, հայ ազգի մեծ երախտավոր Մ. Աբեղյանին, որն իբրև «Միբիր քշվելու վտանգից վախեցած», «իր գլուխն ազատելու համար» կառավարության պարտադրանքով ոտքի վրա, գաղտնի կերպով, հակառակ ամբողջ հայ մտավորականության պահանջի, առանց քննարկման փոխել է ուղղագրությունը, և մեզ բաժին է հասել «բոլշևիկյան» ուղղագրությունը։

Հիշենք, որ 1922 թ. բարեփոխումից դեռ երեսուն տարի առաջ՝ 1892 թ., Մ. Աբեղյանը գիրք էր գրել՝ «Հայոց լեզվի ուղղագրությունը», դրանից ամիսներ անց՝ ուղղագրության ուսուցման օժանդակ ձեռնարկ՝ «Գայլ և գայլի պատահարներ», իսկ 1913 թ. հոկտեմբերին հայ գրերի գլուխի 1500-ամյակի հոբելյանական նիստին կարդացել ընդարձակ զեկուցում այդ մասին, որը փաստորեն նախագիծն էր հետագա բարեփոխումների։ Անդրադառնալով այս զեկուցմանը՝ ակադ. Սարգիս Հարությունյանը նշում է. «Աբեղյանը ապացուցում է, որ այն (ուղղագրական բարեփոխումը – Ա. Ա.) մի անխուսափելի անհրաժեշտություն է, «իսկական շարունակությունն ու մնացորդը» «գրաբարի և աշխարհաբարի մեծ վեճի, որ դեռ վերջնական բավարար լուծում չի ստացել մտքերի ընդհանրապես»⁵³:

⁵¹ Իշխանյան Ռ., «Ազգ՝ նշանակում է ավանդույթ», «ԳԹ», 1 սեպտ., 1989թ.:

⁵² Համազգային ուղղագրության և հայերենի մաքրագործման հարցերը, էջ 40, 1977:

⁵³ Հարությունյան Ս., Մ. Աբեղյան. կյանքը և գործը, Եր., 1970, էջ 109:

Նոր ուղղագրությունը մերժողները, չունենալով հին ուղղագրությանը վերադառնալու իրենց պահանջները հիմնավորող գիտական փաստարկներ, շահարկում են այն հանգամանքը, որ հայ մշակույթի նշանավոր դեմքերից մի քանիսը անբարենպաստ են արտահայտվել 1922 թ. ուղղագրական բարեփոխության վերաբերյալ: Ավանդույթը խախտող ցանկացած նորություն, բնականաբար, հանդիպում է դիմադրության ու դժգոհության: Սույն բարեփոխման մասին հայ մտավորականների կարծիքները նույնպես տարբեր էին: Հակաաբեղյանական թևի հիմնական կռիվներից մեկը Հ. Թումանյանի և Ա. Իսահակյանի նամակներն են՝ առաջինը ուղղված Հայաստանի լուսժողովում Պ. Մակինցյանին, մյուսը՝ Մ. Սարյանին: Մեծ լուռեցին, ճիշտ է, իր դժգոհությունն է հայտնում՝ լինելով նաև կատարվածի անմիջական տպավորության տակ: Իսկ ինչո՞ւ չի հիշատակվում նրա երկրորդ նամակը Պ. Մակինցյանին՝ գրված երկու ամիս անց. «Ուղղագրությունը գալով՝ ես հոտառությունով ասում եմ, որ դա չի անցնելու ամբողջովին. օրինակ՝ *ռ*-ի և *ր*-ի պատմությունը: Ոչ թե պետք է հին հնչյունները վերականգնել, այլ մաշվածները դեն գցել, ինչպես ռուսներն արին: Ոչ թե պետք է դժարացնել, այլ պետք է հեշտացնել...⁵⁴»:

Ակադ. Է. Ջրբաշյանն այս նամակի մասին գրել է. «Ինչքան էլ զարմանալի թվա, 12 էջից բաղկացած և շատ հստակ ձեռագրով շարադրված այդ նամակը չի գրված ոչ Թումանյանի համար այնքան սովոր գրաբարյան ուղղագրությամբ /.../ և ոչ էլ 1922 թ. ռեֆորմի սկզբունքներով, որոնք արդեն սկսել էին գործադրվել մամուլում: Նամակը գրված է մի ուղղագրությամբ, որը բացարձակորեն համընկնում է 1940 թ. սահմանված սկզբունքներին: /.../ Հ. Թումանյանը Պ. Մակինցյանի միջոցով կարծեք ցանկացել է հուշել, թե ինչպիսին պետք է լինի ժամանակակից հայերենի ուղղագրությունը: Դա, կարելի է ասել, *Թումանյանի ուղղագրական կտակն էր*⁵⁵» (ընդգծումը մերն է՝ Ա. Ա.): Հետընթաց ռեֆորմի առաջամարտիկ Ռ. Իշխանյանին ուղղված խոսքում մեծ գրականագետը գրում է, որ Իշխանյանը թող մեկընդմիջտ հանգիստ թողնի Հ. Թումանյանին՝ չդարձնելով իր դաշնակիցը⁵⁶:

⁵⁴ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1969, էջ 432:

⁵⁵ Ջրբաշյան Է., Լուրջ հարցին լուրջ մոտեցում, «Ավանգարդ» օրաթերթ, 10.11.1989:

⁵⁶ Ն. տ.:

Ինչ վերաբերում է Ա. Իսահակյանին, հայրենիքից հեռու ապրող վարպետը Մ. Սարյանին հասցեագրված նամակում գրել է. «Ամեն բան լավ է գնում Հայաստանում (Երևանից եկած թերթերը կարդում եմ), միայն մի բան գեշ է – ուղղագրությունը. աշխատեցե՛ք փոխել⁵⁷»: Թող չօգտագործեն այս անգամ էլ Իսահակյանի գրածը, իսկ թե ինչ մեծագույն գնահատանքի է արժանացրել նա Մ. Աբեղյանին, վկայում են այս խոսքերը. «Մանուկ Աբեղյան: Ի՞նչ էր նա մեզ համար – հայկական ավանդությունների մարմնացում, գիտնական բառիս ամենախորին իմաստով՝ անվախ, աննախապաշար, անկեղծ, վառ հայրենասեր՝ լի հավատով հայ ժողովրդի լավագույն ապագայի հանդեպ, սկզբունքի, աշխատանքի և գործի հսկա, պատկառելի ուսուցիչ, սերունդների անձնվեր դաստիարակիչ⁵⁸»:

Հավելենք՝ Ե. Չարենցն ու Ա. Բակունցը աբեղյանական ուղղագրությունը համարել են մեր ազգային նվաճումներից մեկը:

Չունենալով գիտական որևէ լուրջ ու հիմնավոր կովան՝ հին ուղղագրությունը վերահաստատելու կողմնակիցների հիմնական փաստարկը այդ քայլով իբրև թե ազգային ակունքներին վերադառնալն է, և կարծես թե գրաբարով ավանդված հսկայական գրականությունը չենք հասկանում հին ուղղագրությունը փոխվելու պատճառով: Նորից հղում անենք Մ. Ասատրյանից. «Կարելի է բերել ամբողջական նախադասություններ, որոնք հին և նոր ուղղագրությամբ ճիշտ և ճիշտ նույնն են: Վերցնենք հետևյալ նախադասությունները: *Երկիր ի փոքունց: Առն միոջ էին երկու որդիք: Կատարեցան գիրք առաջին ծննդաբանութեան Հայոց Մեծաց: Ժամանակակից գրագետ հայը մի տառի տարբերությամբ ճշտորեն կկարդա դրանք, բայց դրանց բովանդակությունը չի հասկանա և որպեսզի հասկանա, նա, ոչ ավել, ոչ պակաս, պետք է ծանոթանա գրաբարին և այդ ժամանակ կիմանա, որ վերևի նախադասությունները նշանակում են՝ *Վախեցի՛ր փոքրերից: Մի մարդ ուներ երկու որդի: Ավարտվեց Մեծ Հայքի ծննդաբանության առաջին գիրքը*⁵⁹»:*

Այնպես որ ազգային ակունքներին վերադառնալը ընդամենը ամբոխավարական սին կոչ է:

Խնդրո առարկա հարցը քննել են ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը, նախագահությունը, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, ԵՊՀ հայոց լեզվի,

⁵⁷ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1962, հ. 4, էջ 174:

⁵⁸ «Գրական թերթ», 1959, հ. 40:

⁵⁹ Ասատրյան Մ., ն. տ.:

մյուս բուհերի հայագիտական ամբիոնները և կայացրել միանշանակ որոշում՝ մերժել արդի ուղղագրության դեմ ամեն մի ոտնձգություն: Նույն կարծիքին է Հայաստանի ուսուցչությունը: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի հուլիսի 5-ի (1997 թ.) համարում տպագրվել է մի հայտարարություն՝ «Ի պաշտպանություն հայերենի արդի ուղղագրության» վերնագրով, որի տակ ստորագրել են ինը կարկառուն լեզվաբաններ՝ ակադ. Գ. Զահուկյանը, ակադ. Ս. Աբրահամյանը, պրոֆ. պրոֆ. Հ. Բարսեղյանը, Վ. Առաքելյանը և այլք (սրան հաջորդել է Լ. Միրիջանյանի հողվածը՝ «Լեզուն լեզվաբանների մենաշնորհը չէ»՝ լեցուն լեզվական ամենատարբեր սխալներով): 1998թ. ապրիլի 22-ին ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի և ԳԱԱ լեզվի ինստիտուտի համատեղ գիտաժողովը կրկին հիմնավորեց գործող ուղղագրության լիակատար համապատասխանությունը ժամանակակից արևելահայերենի հնչյունական համակարգին և դատապարտեց այդ ուղղագրության դեմ ամեն կարգի ոտնձգությունները: Որոշման մեջ գրված է. «Նոր ուղղագրությունն ինչ-որ մեկ կամ երկու անհատի (Ս. Աբեղյանի կամ Ս. Աբեղյանի և Պ. Մակինցյանի կամ թեկուզ այն ժամանակվա կառավարության «բոլշևիկյան») նախաձեռնությունը չէր, որ կյանքի կոչվեց. այն պատմական անհրաժեշտություն էր՝ թելադրված մեր լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով»⁶⁰:

Թվում է՝ հարցը պետք է փակված համարվեր, սակայն այն նորից բարձրացվեց ամիսներ առաջ այս անգամ... Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Առաջին կաթողիկոսի կողմից..., որի արդյունքում էլ առաջացավ խնդրին մեր կողմից վերստին անդրադարձը:

Միայն այն հանգամանքը, թե հայագիտության ինչպիսի կարկառուն դեմքեր են եղել դեմ աբեղյանական գործող ուղղագրությունը փոխելուն, պետք է զգաստացնեք (նաև զգաստացնի) ցանկացած ընդդիմախոսի՝ Գ. Զահուկյան, Ս. Աբրահամյան, Հ. Բարսեղյան, Է. Զրբաշյան, Մ. Ասատրյան, Վ. Առաքելյան, Ա. Մարգարյան, Ա. Պապոյան, Պ. Շարաբխանյան և այլք:

Իսկ ի՞նչ կլինի, եթե հանկարծ կատարվի նրանց ցանկությունը. մենք ոչ թե չենք մոտենա մեր ազգային ակունքներին, այլ կկորցնենք հայ մշա-

⁶⁰ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 16. 05.1998:

կույթն ու գիտությունը: Չմոռանանք՝ երբևէ հայ իրականության մեջ չի եղել այնքան տպագրված գրականություն, որքան կա վերջին հարյուրամյակում:

Հաշվի առնենք մի հանգամանք ևս. երբ փոխում էին ուղղագրությունը, ազգաբնակչության քանի՞ տոկոսն էր գրագետ (բնականաբար, չնչին) և հիմա: Միանգամայն պարզ է, որ Հայաստանում բնակվող և նրանից վերջին տասնամյակներին արտագաղթած ողջ հայությունը կդառնա անգրագետ գրչի մեկ հարվածով: Էլ չենք խոսում Ռուսաստանի մի քանի միլիոնանոց հայ համայնքի մասին, ԱՄՆ հայ ազգաբնակչության գերակշիռ մասը կազմող արևելահայության մասին...

Հին ուղղագրությունը տասնյակներ անգամ ավելի խրթին է, որի յուրացումը կպահանջի երկարատև ժամանակահատված: Նշենք, որ ժամանակին Մ. Աբեղյանը նոր ուղղագրության յուրացման համար նախատեսում էր առնվազն 20 տարի (այս դեպքում մեկ դար կպահանջվի հավանաբար): Եվ ովքե՞ր պետք է ուսուցանեն հին ուղղագրությունը, Սփյուռքից եկած ուսուցիչնե՞րը... Երևի պիտի նորից բացվեն «լիկկայաններ», որտեղ Ս. Նազարյանի ասած՝ նույն աշակերտական նստարանին կնստեն աշակերտն ու պրոֆեսորը... Հազարավոր քանի՞ բառացանկեր պիտի հիշի խեղճ հայ երեխան, որ ճիշտ գրի է/ե, օ/ո, յ/հ, վ/ւ/ու: Էլ չենք խոսում բառի թեքման ժամանակ հնչյունի գրային նշանի փոխվելու դեպքերի մասին (թիւ, բայց՝ **թուեր, թուով** և այլն): Այդ դեպքում այբուբենից պետք է հանվեն **օ** և **ֆ** տառերը, քանի որ մաշտոցյան այբուբենում դրանք չեն եղել, XII-XIII դդ. նոր մտել են գործածության մեջ և այլն, և այլն: Հ. Թումանյանը ժամանակին գրել է. «Ուղղագրությունը գիտություն է, և նրա դեմ կարելի է դուրս գալ կամ նրան փոխել միայն գիտությունով»⁶¹ :

Միասնական ուղղագրություն ունենալու պահանջը իբրև կովան ներկայացնողների մտքով ինչո՞ւ բնավ չի անցնում, որ այդ միասնականությանը կարելի է հասնել արևմտահայերենի ուղղագրությունը փոխելով. ավելորդ չէ երևի նշել, որ ոչ մի միասնական ուղղագրություն էլ չկա հայկական գաղթօջախներում: Արևմտահայերը լսել անգամ չեն ուզում այդ մասին, և դա իրենց իրավունքն է:

⁶¹ **Թումանյան Հ.**, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1951, էջ 139:

Շատերն էլ միամտաբար կարծում են, որ եթե ստեղծվի մեկ միասնական ուղղագրություն Հայաստանում և Սփյուռքում, դա վճռական քայլ կլինի նաև լեզվի միասնականացման ճանապարհին:

XIX դարի կեսերից, երբ վերջնականապես ձևավորվում էր աշխարհաբարը, նրա երկու ճյուղերի առկայությունը պատմական փաստ էր: Այդ ժամանակ նույնպես շատ մտավորականներ նման փորձեր կատարել են, որոնք ապարդյուն են անցել: Մի՞թե գրական լեզուների տարբերությունը միայն ուղղագրության մեջ է, հապա հնչյունական համակարգը, քերականական կառուցվածքը, բառապաշարը և այլն, և այլն...:

Երկու գրականները միավորելը միամիտ երազանք է կամ դիտավորություն:

Մ. Ասատրյանը գրել է. «Հայ ազգը գրական լեզվի միասնության կարող է հասնել միայն այն դեպքում, երբ կվերանա պատմական աղադակող անարդարությունը, հայ ժողովրդին կվերադարձվեն նրա արևմտյան տարածքները, և, այսպիսով, սփյուռքի հայությունը հնարավորություն կունենա զանգվածորեն ներգաղթելու ..., ահա այդ ժամանակներից կսկսվի երկու գրական լեզուների մրցակցությունը: ... Իսկ թե երկուսից ո՞րը կհաղթի, այս հարցին կարող է պատասխանել միայն Աստված»⁶²:

Ուղղագրության միասնականացման և երկու գրականների մերձեցման շղարշի տակ շատերն էլ ձգտում են դրանցից մեկի վերացմանը. հասկանալի է՝ թիրախը արևելահայերենն է: Նման գործընթաց իրականացնելու համար պահանջվում են նյութական վիթխարի միջոցներ, որն ի գործու է կատարել միայն սփյուռքահայությունը:

Այսպիսով, ուղղագրության փոփոխման հարց կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե այն չհամապատասխանի տվյալ լեզվի հնչյունական համակարգին. սա է ուղղագրության փոփոխության հիմքը: Այդ պատճառով է, որ հին ուղղագրության կողմնակիցները չեն էլ ուզում քննել, թե ո՞ր ուղղագրությունն է առավել ճշգրիտ արտացոլում մեր լեզվի օրինաչափությունները:

Հայերենի գործող ուղղագրության մեջ հմտորեն միահյուսված են հնչյունական ու ավանդական սկզբունքները, այն միանգամայն համապատասխանում է արդի գրական արևելահայերենի ոգուն ու էությանը:

⁶² Ասատրյան Մ., ն. տ.:

Նոր ուղղագրությունը պատճառաբանվում և հիմնավորվում է ինչպես տեսականորեն, գիտականորեն, այնպես էլ գործնականորեն ու մանկավարժորեն:

Եվ վերջապես ի՞նչ խնդիր ենք լուծում: Խնդիրն արհեստածին է:

Եռանդն ու ժամանակը անհրաժեշտ է ծախսել իրական խնդիրների վրա, օրինակ՝ գրական և առօրյա-խոսակցական լեզուների մերձեցում, լեզվի անադարտության ապահովում, պայքար նրա գոեհկացման, ժարգոնի դեմ, որն անխնա տարածում են զանգվածային լրատվության միջոցները և ոչ թե *պարտադրված, մեր կարծիքով, կեղծ օրակարգի*:

Առաջարկում ենք լեզվի մասին օրենքում հստակ ձևակերպել. գործող ուղղագրությունը պարտադիր է Հայաստանի բոլոր քաղաքացիների համար, ինչպես մնացած բոլոր օրենքները:

Արդի արևելահայերենի ուղղագրությունը փոխելու փորձերը անիմաստ են, հակաարդյունավետ, հակապատմական, վտանգավոր ու կործանարար հայ ժողովրդի համար բոլոր առումներով՝ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական, թե՛ մշակութային, հոգևոր ու կրթական:

**ԼԵԶՎԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ Մ. ԱՔԵՂՅԱՆԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ԶԱՐԻԿ ԱՂԱԶԱՆՅԱՆ

բ. գ. թ., դոցենտ

Լեզվաբանության կարևորագույն սկզբունքներից մեկն այն է, որ յուրաքանչյուր լեզու միշտ և անընդհատ փոփոխվում է, և այդ փոփոխության մեջ են լեզվի կյանքն ու պատմությունը: Մյուս սկզբունքն այն է, որ, շարունակական փոփոխություններին զուգընթաց, գրական լեզուն պետք է անընդհատ կանոնարկվի, նորմավորվի՝ հիմնվելով լեզվի պատմությունից ձեռք բերած իրողությունների, ընդհանրապես մարդկային լեզվի զարգացման ընդհանուր օրենքների ուսումնասիրության, խոսքային գործունեության կամ կենդանի խոսվածքի փոփոխությունների և նրանց մեջ նույնը մնացող գործոնների բնույթի ու ներգործության հետազոտական քննության վրա:

Մ. Աբեղյանը բազմակողմանիորեն ու հիմնովին ուսումնասիրեց քերականական գիտությունը, ուսումնասիրեց և թափանցեց հայերենի էության մեջ ու գրեց հայոց լեզվի տեսությունն ու նրա քերականությունը:

Ըստ քերականի՝ ամեն լեզվի մեջ լեզվական բոլոր իրակությունները որոշ օրենքներով միշտ և անընդհատ փոփոխվում են՝ խոսողների կամքից բխողովին անկախ: Այդ փոփոխությունը, սակայն, այնքան դանդաղ է կատարվում, որ խոսողների համար անզգալի է մնում, միայն առանձին անհատներ, որ սուր դիտողություն ունեն և հետաքրքրվում են լեզվով, նկատում են լեզվի մեջ իրենց կարճ կյանքի ընթացքում մտած փոփոխությունները: Սուր դիտողությամբ և նուրբ լեզվազգացողությամբ օժտված գիտնականը նկատեց լեզվի մեջ իր կարճ կյանքի ընթացքում մտած փոփոխությունները, լեզվական իրակությունների կիրառական տատանումներն ընդգծելով՝ աշխատեց հնարավորինս ճշտել, կանոնավորել իր ժամանակի գրական լեզուն՝ դառնալով մեկը նրանցից, ով, ինչպես ինքն է ասում, «...մեր հին հայկական միջավայրում, կյանքի արգելքների դեմ անընդհատ կռվելով է ձգտել գիտության, իր հոգնածության ժամերն է միայն՝ փոխանակ հանգստի՝ գիտության նվիրել»⁶³:

⁶³ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ը, Եր., 1985, էջ 635:

Տրամաբանական է, որ Մ. Աբեղյանը լեզվի կանոնավորման խնդիրների լուծումը պիտի բխեցնեի լեզվում կատարվող փոփոխություններից, կիրառական տատանումներ ունեցող կամ, ինչպես ասում են, տարբերակային ձևերի՝ զուգաձևությունների, զուգորդությունների, անալոգիական կազմությունների բազմազանության մեջ ընտրություն կատարելուց, պիտի կարևորեր գրական հայերենի նորմավորման աշխատանքները և նոր օրենքներ ու օրինաչափություններ սահմանեի հայերենի համար՝ կենդանի խոսքի անընդհատ շարժման մեջ զարգացման միտումները տեսնելու, լեզուն ճիշտ ու կատարյալ դարձնելու ձգտման սկզբունքներով: Ի վերջո նա պիտի եզրակացնեի՝ ժամանակի հետ կերպարանափոխվող, վերանորոգվող, նորմավորվող գրական լեզուն է միայն կենսունակ և ընդունակ բավարարելու այն նպատակին, որին ծառայում է, այսինքն՝ «դառնալ մի ընդհանուր հարմարավոր գործնական միջոց նույն լեզվով խոսող և գրող մարդկանց մտավոր հաղորդակցության համար»⁶⁴:

Իր լեզվաքննական աշխատանքների մասին խոսելիս գիտնականն ամփոփում է. «Երբեք նորաձևության փափագը չէ եղել մեզ առաջնորդ այս փոփոխությունների համար, այլ միայն ճշտության և կատարելության ձգտումը և այն միտքը, թե ամեն լեզու ընդհանուր քերականության հետ ունի և իր առանձնահատուկ քերականությունը: Այս պատճառով ի նկատի ունենալով նորագույն հետազոտությունները քերականության մասին՝ հայերենի բոլոր խնդիրները կրկին ու կրկին քննության ենք ենթարկել և երկար կշռադատելուց հետո միայն այս կամ այն փոփոխությունը մտցրել»⁶⁵:

Ավելին, Աբեղյան ուսուցիչը մատնանշում է գրական լեզվի ընդհանրականացման և նրանում կատարված յուրաքանչյուր կանոնական փոփոխության, փոփոխություններից օրինաչափությունների վերածված կանոնների՝ նորմերի տարածման ճանապարհը՝ հաղորդակցության սերտությունն ու մտավոր զորեղ հաղորդակցությունը դպրոցի ու գրական լեզվի միջոցով: Նա գրում է. «Գրական լեզուն գրի և դպրոցի միջոցով հնարավորություն ունի իր ազդեցությունը միակերպ թողնելու ամեն տեղ, ... նույնիսկ ապրող սերնդից հետո եկող հաջորդների վրա: Նրա տարածման

⁶⁴ Աբեղյան Մ., Երկեր, հ. Զ, Եր., 1974, էջ 51:

⁶⁵ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ը, էջ 499:

գլխավոր միջոցն է դպրոցը, որ ... ամեն տեղ սովորեցնում է գրական լեզվով միատեսակ մտածել, խոսել ու գրել...»⁶⁶:

Ամեն ինչ գտնվում է հավիտենական շարժման, փոփոխության մեջ: Այդ անընդհատ շարժման մեջ են նաև լեզվական ձևերը. հաղորդակցական սովորական գործընթացում էլ հակադրությունների պայքար և միասնություն կա, քանակական փոփոխություններից որակական փոփոխությունների վերածվելու աստիճանական կամ թռիչքային անցումներ կան: Խոսքային գործունեության ընթացքում լեզվական ձևերը կա ծագում են, ապրում և մահանում իրենց հատուկ օրենքներով, և գիտնականը գիտության, նաև լեզվագիտության առաջընթացի ճանապարհին է ուրվագծում. «Ուրոնեցե՛ք այդ օրենքները, և եթե գտնեք, գիտությունը մի քայլ առաջ կլինի»⁶⁷:

Լեզվի նորմավորման՝ կանոնարկման աշխատանքները պետք է սկսել լեզվում նկատվող, նկատելի կամ դեռևս նոր-նոր նշմարվող փոփոխությունների և դրանց հիմնապատճառների քննական ուսումնասիրությունից: Փոփոխությունների «ինչպիսին լինելու» հարցը լեզվաբանորեն բացատրելի է, իսկ թե ինչու են կատարվում այդ փոփոխությունները, այստեղ լեզվաբանությունը «լռում է»: Ըստ Մ. Աբեղյանի՝ լեզվաբանությունը, օրինակ, բացատրում է, թե ինչպե՛ս է ձայնեղ **բ** հնչյունը, վերածվելով իր հակադրությանը, դառնում անձայն **պ**, կամ ինչպես է, դիցուք, **մարդ** բառի վերջին **դ** հնչյունը դառնում **թ**, և այդ բառն այժմ արտասանում են **մարթ**, բայց թե ինչու է կատարվել առանձնապես այդ փոփոխությունը, դեռ վերջնականապես բացատրված չէ: Կամ հնարավոր չէ առանց ծաղրելի դառնալու տնտեսությամբ ու դասակարգով բացատրել, թե ինչու **դադարել** դարձել է **դաթարել**, կամ հենց մեր օրով **մարդու** ձևը դառնում է **մարդի**⁶⁸:

Գրական լեզվում փոփոխությունները դանդաղ են կատարվում, հաճախ աննկատելի: Ինչո՞ւ: Աբեղյանը բացատրում է. «Գրական լեզուն ենթակա է փոփոխությունների, բայց այդ փոխվելը պակաս ազատություն ունի: Հնչյունական այբբենարանի միջոցով գրական արտասանությունը համեմատաբար ավելի կայուն է, հնչյունական գրությունը գրական լեզուն որոշ չափով ազատ է պահում անհատների, բարբառների և այլ լեզուների

⁶⁶ Աբեղյան Մ., Երկեր, հ. Զ, էջ 51-52:

⁶⁷ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ը, էջ 527:

⁶⁸ Նույն տեղում, էջ 529:

հնչյունական ազդեցությունից: Գրական լեզվի ձևերն ու բառամթերքը գրականության միջոցով սևեռվում և մնայուն կերպարանք են ստանում. որոշ մատենագրությունների լեզուն դառնում է ամենքի համար ընդունելի, ընտիր և օրինակելի, դպրոցներում սովորում են այդ գրվածքները. ուստի հին շարահյուսական ձևերը, հին բառաձևերը, մասամբ և բառերի հին նշանակությունները ... համարվում են մի նորմա, որ ձգտում են պահել խոսելիս և ավելի ևս գրելիս: Երևան են գալիս բառարաններ և գրական լեզվի քերականություններ, որոնցով ավելի ևս ճշտվում ու կանոնավորվում է գրական լեզուն և ձգտում միակերպ դառնալու: Եվ այսպես, քանի որ գրական լեզվով խոսողն ու գրողը հետևում են ավանդության, ուստի և այդ լեզվի փոփոխությունը համեմատաբար ավելի դանդաղ է կատարվում»⁶⁹:

Ինչի՞ց է առաջանում լեզվի փոփոխությունը...

1. Լեզվական փոփոխությունների իսկական պատճառը լեզվի սովորական գործունեությունն է: Այստեղ չկա որևէ դիտավորյալ ներգործություն լեզվի վրա՝ բացի «վայրկյանի կարիքից, որ է՝ ցանկություններն ու մտքերը հասկանալի դարձնել ուրիշին: Լեզվի այս սովորական կիրառության, սովորական կենդանի խոսվածքի ժամանակ ահա ծագում են լեզվական նոր ձևերը, և ինչպես օրգանական բնության զարգացման մեջ, նույնպես և լեզվի զարգացման մեջ ծագած նոր լեզվական իրականությունների ավելի կամ պակաս նպատակահարմարությամբ որոշվում է նրանց պահպանությունը լեզվի մեջ կամ կորուստը: Ուստի լեզվի զարգացումը, այսինքն՝ նրա կրած փոփոխությունները ըմբռնելու համար պետք է ամենից առաջ տեսնել, թե ինչպես ենք սովորում խոսել, և ինչպես է ընթանում խոսվածքի գործունեությունն ընդհանրապես»⁷⁰:

2. Ըստ Մ. Աբեղյանի՝ լեզվի փոփոխություններն առաջանում են նաև անհատական լեզուների փոփոխության ազդեցությամբ: Անհատը գիտակցաբար լեզու չի ստեղծում, նա գիտակցաբար շատ քիչ փոփոխություն է մտցնում լեզվի մեջ, և չի կարելի մերժել անհատների մտքած փոփոխությունները. քերականները և բառարանագիրները շարունակ աշխատում են գրական լեզուն կանոնական օրինաչափություն-

⁶⁹ Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, էջ 50:

⁷⁰ Նույն տեղում, էջ 15-16:

ների ենթարկել, ճշտել ու կանոնարկել կիրառական տատանումներ ունեցող լեզվական շատ իրողություններ: Լեզվական ամեն փոփոխություն ծագում, սկսվում է անհատական կոնկրետ լեզուների մեջ, հենց **սովորական կենդանի խոսվածքի ժամանակ** (իսկ գրավոր լեզվի մեջ՝ գրելու ժամանակ) և ապա ընդհանրանում: Իր՝ «Հայոց լեզվի տեսությունը» քննադատողների հոդվածներին պատասխանելիս գրում է. «Երբ ես այս բույսին խոսում եմ, ... որևէ դիտավորություն չունիմ լեզվի վրա ազդելու, որևէ ուրիշ նպատակ չունիմ, բացի այս վայրկյանի կարիքից, որ է՝ իմ մտքերը հասկանալի դարձնել ունկնդիրներին: Բայց փոխվում է լեզուն իմ բերանում: –Անպայման: Եթե ոչ ուրիշ բան, բառերի և նախադասությունների հազարավոր նորանոր կապակցություններ են առաջ գալիս առանց իմ գիտակցության կամ եթե կուզեք, արտադրվում են իմ խոսվածքի մեջ կապակցություններ, որոնք առաջ գուցե երբեք չեն եղել ոչ մի ուրիշ խոսվածքի մեջ»⁷¹: Այսպես, նույն տեղում նա գրում է. «Այս **զգայել** բառը ես կազմել եմ ... **զգայություն, զգայարան** բառերի համապատասխան մի բայ ունենալու համար՝ **զգալ** բառը պահելով **զգացում** բառի համար»⁷², կամ՝ «**Մտապատկեր** բառը կազմվել է այն ժամանակ, երբ ես դեռ պատանի էի, և դրա կազմողը եղել է մանկավարժ Առաքել Բահաթրյանը»⁷³: Մյուս կողմից՝ ամեն անհատ, խոսելով և գրելով այդ լեզվով, ինչքան էլ դպրոցում և հին մատենագրություններից սովորած լինի «ուղիղ» խոսելու և գրելու կանոնները, ունի դարձյալ որոշ չափի ազատություն իր ձևով վերաստեղծելու լեզուն և իր կողմից ազդելու ուրիշ խոսողների և գրողների վրա: Այդ ազատությունն ու ազդեցությունը, անշուշտ, ավելի մեծ է խոսելիս, քան գրելիս, բայց ընդհանուր խոսակցական լեզվից անցնում է հետզհետե նաև գրավորին»⁷⁴: Որքան ավելի մեծ է անհատի ազդեցությունը, այնքան ավելի շատ և շուտ են ընդհանրանում նրա լեզվի մեջ ծագած փոփոխությունները. ինչքան նոր բառեր, բառակապակցություններ ու կապակցության ձևեր են ստեղծում մեր քաղաքական ու պետական գործիչները, գիտնականներն ու գրողները իրենց խոսելու ընթացքում: Ուզում ենք Արեղյանի հարցը կրկնել. «Ի՞նչ էք կարծում, նրանք մտադրվել են դիտավորյալ կեր-

⁷¹ **Արեղյան Մ.**, Երկեր, հ. Ը, էջ 526:

⁷² Նույն տեղում, էջ 505:

⁷³ Նույն տեղում, էջ 507:

⁷⁴ **Արեղյան Մ.**, Երկեր, հ. Զ, էջ 51:

պով լեզվի մեջ փոփոխություն մտցնել: Մեծ միամտություն կլիներ ենթադրել այդ: Նրանք խոսելիս կամ գրելիս միայն մեկ նպատակ են ունեցել – իրենց մտքերը որևէ հարմար ձևով արտահայտել, և հենց այդ հարմար ձևը գտնելու ժամանակ լեզվի մեջ հաճախ նոր բան է մտնում, կամ հինը ձևափոխվում»⁷⁵:

3. Ցանկացած լեզու ենթակա է այլ լեզուների ազդեցությանը: Այսպիսի փոփոխությունները նույն եղանակով են առաջանում՝ նորից գիտակցաբար կամ անգիտակցաբար: Սկզբնաղբյուրը այն անհատներն են, որոնք խոսում են և՛ իրենց մայրենի լեզվով, և՛ թե մի ուրիշ լեզվով կամ հասկանում են այն: «Լեզվի զարգացումն այս ճանապարհով երբեք չի դադարել, հայերենը թե՛ հին, թե՛ նոր ժամանակներում մեծ ազդեցություններ է կրել ուրիշ լեզուներից, և այս եղել է հոգուտ մեր լեզվի զարգացման», – եզրակացնում է լեզվաբանը: Բայց և զգուշացնում է. «Երբ չափազանց մեծ է լինում մի լեզվի ազդեցությունը մի ուրիշ լեզվի, վերջինս նույնիսկ կորստի է մատնվում: ...Կարող է նույնիսկ ոչնչանալ»⁷⁶:

4. Գրական լեզուն ազդվում է հին գրական լեզվից, եթե կա այդպիսին, իսկ հայերենն ունի այդպիսիք՝ գրաբարն ու միջին հայերենը:

5. Գրական լեզուն ազդվում է բարբառներից, իսկ հայերենը հարուստ է նաև բարբառներով: Յուրաքանչյուր բարբառակիր, օգտագործելով գրական լեզուն իբրև ընդհանուր լեզու, ներմուծում է իր բարբառից բառեր ու դարձվածքներ, բառերի նոր նշանակություններ, շարահյուսական ձևեր և այլն, որոնք գրական լեզվի միջոցով հեշտությամբ ընդհանրանում են:

6. Գրական լեզվի փոփոխության մեծ գործոններից է նաև ժողովրդի ընդհանուր մշակույթի զարգացումը և գիտական մակարդակի բարձրացումը: Գրական լեզուն շարունակ հարմարվում է նոր մշակույթին, գիտության նոր նվաճումներին, որով և անընդհատ հարստանում է և ընդունակ դառնում ամեն ինչ արտահայտելու:

7. Լեզուն փոփոխվում է նաև հոգեբանական, մանկավարժական, մեթոդական և այլ պայմանների ներգործությամբ:

Մ. Աբեղյանը լեզվի նորմավորման հիմնախնդրում կարևորում է հետևյալ սկզբունքները:

⁷⁵ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ը, էջ 527:

⁷⁶ Աբեղյան Մ., Երկեր, հ. Զ, էջ 47:

- Ցանկացած գրական լեզվի համար միակերպ քերականության հետ անհրաժեշտ պայման է միակերպ ուղղագրությունը: Ավելին՝ գրությունը պետք է մոտեցնել արտասանությանը, և կենդանի արտասանությունը պետք է առաջնորդ լինի ուղղագրության համար՝ առանց ստուգաբանական և բառակազմական հակասությունների:

- Որևէ փոփոխություն չպետք է ավելի խառը դրություն մտցնի մեր լեզվի մեջ և մեր գրական լեզուները չպետք է ավելի հեռացնի իրարից:

- Շատ դեպքերում պետք է նկատի ունենալ ուրիշ ազգերի օրինակը:

- Մեծ և հիմնական փոփոխությունները երբեք միանգամից չպետք է անել. ամեն փոփոխություն պետք է աստիճանական և համակարգային լինի. փոփոխել, բայց «առանց լեզուն ցնցումի ենթարկելու»⁷⁷:

- «Ամեն անելի նորոգություն գիտական հիմունքներով պիտի կատարվի և այնպես, որ համապատասխան լինի մեր երկու գրական լեզուներին և ընդհանուր ընդունելի լինի»⁷⁸:

- Մշակված կանոններն ընդունելի, պարտադիր, միասնական պիտի լինեն:

- «... Փոփոխությունը լինում է և լինելու է, կուզեք՝ գիտությամբ համարեք, կուզեք՝ սոցիալությամբ..., և մենք անկարող ենք դրա առաջն առնել ...»⁷⁹:

Մ. Աբեղյանն անդրադառնում է նաև **նորմավորման հարցերը կարգավորող մարմինների** խնդրին: Թվում է՝ շատ դեպքերում գրչի մի հարվածով, ձեռքի մի շարժումով կարելի է անկանոնությունները կանոնի տակ դնել, բացառությունները ջնջել և կանոններն ընդհանրացնել, բայց սա կվնասի լեզվին: Եթե հարցնես մի ֆրանսիացի գիտնականի, թե որն է ճիշտ ելքը, նա կպատասխանի. «**Ակադեմիան** միայն բավարար իշխանություն և հեղինակություն ունի այս վերանորոգությունը կատարելու...»: Նույն հարցին Մ. Աբեղյանը պատասխանում է՝ հարկավոր է մի **հեղինակավոր խորհուրդ**՝ մասնագետներից կազմված, որ լրջությամբ զբաղվի նորմավորման, լեզվի «վերանորոգության» հարցերով, և միայն **«հոգևոր**

⁷⁷ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ը, էջ 349:

⁷⁸ Նույն տեղում:

⁷⁹ Նույն տեղում, էջ 365:

իշխանությունների և գրագետների ձեռներեցությամբ կազմված բանիբուն մարմնի որոշումը մեզ համար ընդունելի և պարտադիր կլինի⁸⁰...

Աբեղյանական լեզվահոգսերն այսօր էլ արդիական են:

ա) Մերօրյա հայերենում էլ «լեզվի վերանորոգության» հիմնախնդիրը կա. լեզվագործածության և նորմավորման, լեզվապահպանման և հայերենատարածման շատ հարցեր են կուտակվել, և դրանցից շատերի՝ կանոն դառնալու իրավունքի պահանջը կա...

բ) Ընդհանուր քերականության և այլ լեզուների օրինակներն անստեղծ, մեր լեզվի առանձնահատկությունները չտեսնելու-չկարևորելու, այն մեքենայական ընդօրինակության ենթարկելու:

գ) Այսօր էլ լեզվի ընդերքը պեղելու, զարգացման ընդհանուր միտումներն զգալու, արդիական չափանիշներով հայերենի լեզվավիճակը պարզելու և հայերենն արժևորելու անհրաժեշտությունը կա...

դ) Մերժամանակյա հայերենում էլ, առանց լեզվացնումների, աստիճանական և համակարգային փոփոխություններ կատարելու և մեր գրական լեզուները մի քայլ ևս իրար մոտեցնելու հիմնախնդիրների առաջնային լինելու կարևորությունը կա...

ե) Ճիշտ լեզվաքաղաքականություն վարելու և լեզվի նկատմամբ պետական հոգածության անհրաժեշտության, լեզվաշինական աշխատանքները ճիշտ ուղիով տանելու հիմնախնդիրները կան...

զ) Ի վերջո, հազարամյա հայերենը մաքու՛ր պահելու և հայերեն՝ն հնչեցնելու հրամայականը կա...

⁸⁰ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ը, էջ 366:

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԸ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,

բ. գ. դ., պրոֆեսոր

Մի շարք գործոններով պայմանավորված՝ լեզվի հնչյունական, բառապաշարային, քերականական համակարգերը ենթարկվում են փոփոխությունների, որոնք արտացոլվում են և գրության մեջ:

Դասական (ավանդական) ուղղագրության խախտումներ նկատելի էին արդեն գրաբարում, ավելի ցայտուն ու բազմաբնույթ՝ միջին հայերենում և աշխարհագրում⁸¹:

Անմիօրինակությունը, բազմաձևությունը ակնառու էր ձայնավորների ու երկբարբառների, նաև բաղաձայնների ուղղագրության մեջ: Խնդիրը կարգավորելու համար, բնականաբար, առաջադրվում է ուղղագրական փոփոխությունները կանոնարկելու պահանջ: «Գրաբարի ուղղագրության նորմավորման պահանջ առաջացել է միջին դարերում... XII-XIII դդ. Արիստակեսի, Գևորգ Սկևռացու և ուրիշների կողմից դրվելու հիմնական գծերով լուծվել է գրաբարի ուղղագրության ու կետադրության նորմավորման հարցը»⁸²:

Ավելի ուշ՝ XIX դարերի վերջերին, ուղղագրությանը անդրադարձել են Մխիթարյան միաբանները: «Բազմավեպը» գրում է, որ հարցը բանավեճի առարկա է եղել 6-7 տարի առաջ, սակայն վերջնական եզրակացության չեն հանգել⁸³:

1913 թ. հոկտեմբերի 14-ին հայերեն գրերի գյուտի և տպագրության հոբելյանին նվիրված գիտաժողովում Մանուկ Աբեղյանը ներկայացրել է «Մեր ուղղագրութեան մասին» մի ընդարձակ զեկուցում-ծրագիր, մանրամասն, գիտականորեն հիմնավորված փաստարկներով նշել ուղղագրության փոփոխության սկզբունքները, փոփոխության անհրաժեշտությունը: Զեկուցումը նույն թվականին տպագրվել է «Արարատ» ամսագրում (հ. 12,

⁸¹ Մանրամասն տե՛ս Մ. Գյուլբուդաղյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր., 1973:

⁸² Գ. Զահուկյան, Հարկ կա՞րողոք փոխել մեր ուղղագրությունը, Եր., 1996, էջ 4-5:

⁸³ «Բազմավեպ», հ. 1, 1897, էջ 46:

էջ 1120-1141): Մանուկ Աբեղյանը այդ հարցի շուրջ նամակագրությամբ խորհրդակցել է ֆրանսիացի ականավոր հայագետ Անտուան Մեյեի հետ: Ա. Մեյեն, կողմ լինելով հայերենի ավանդական ուղղագրության պահպանմանը, ընդունելի է համարում Մ. Աբեղյանի առաջարկած որոշ փոփոխություններ՝ բառամիջում և բառավերջում *n*-ի գրությունը (*Պողոս, կոշիկ, այո, Մկո, Սաքո*), բառավերջում ձայնավորից հետո *յ*-ն չգրելը (*վկա, ծառա, պաշտոնեա*), բառասկզբում *յ*-ի փոխարեն *հ* գրությունը (*հարմար, հղի, հուլիս*):

Մի դեպքում *վ*, այլ դեպքում *ւ* գրության հարցին Ա. Մեյեն պատասխանում է. «Վ. կասկած չկա: Վ-ի և շ-ի տարբերակումն այլևս անիմաստ է»⁸⁴:

1921 թ. Մ. Աբեղյանը ներկայացրել է մեկ այլ նախագիծ, «Զեկուցում հայոց լեզուի ուղղագրութեան ռեֆորմի մասին», որը հրատարակվել է ձեռագրի իրավունքով:

1922 թ. պետականորեն ընդունված բարեփոխման հիմքում դրվեցին ոչ թե 1913, այլ 1921 թ. զեկուցման դրույթները: Աբեղյանը ստիպված էր գնալ զիջման:

Պարտադրված զիջման մասին Աբեղյանը ակնարկում է հենց այդ զեկուցման մեջ. «Կարելի է աւելի պակաս զիջում ևս անել գրագէտներին, և առայժմ, դուրս ձգելով *օ* և *է* տառերը, պահել միայն բառասկզբի *n=վո*, ե=*յե*, ինչպէս նաև *էա, էօ, իւ* երկբարբառները» (էջ 21):

1922 թ. պաշտոնապես ընդունված և շրջանառության մեջ մտած բարեփոխման մեջ անտեսված էին Աբեղյանի կողմից առաջադրված և գիտականորեն հիմնավորված դրույթները:

Առաջին բարեփոխման հիմնական թերությունը այն էր, որ հիմքում դրվել էր *մեկ տառ՝ մեկ հնչյուն սկզբունքը*՝ անտեսելով ձևաբանական, ավանդական, ստուգաբանական հիմունքները: Այդ պատճառով այն սուր քննադատության ենթարկվեց Հայաստանի և հատկապես սփյուռքի մտավորականների կողմից:

⁸⁴ Անտուան Մեյե, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Եր., 1978, էջ 33:

Ա. Մեյեն քաջաձանոթ էր Մ. Աբեղյանի գիտական աշխատություններին: Իսկ «Աշխարհաբարի շարահյուսութիւնը» համարում է «Իսկական գիտական աշխատություն..., ովքեր հետաքրքրվում են ժամանակակից հայերենով պետք է անպայման ուսումնասիրեն այդ գիրքը» (տե՛ս Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Եր., 1965, էջ VII):

1940 թ. ընտրված ուղղագրությունը բոլորովին այլ որակ էր՝ գիտականորեն հիմնավորված սկզբունքներով ու օրինաչափություններով, փոփոխության համար անհրաժեշտ բոլոր գործոնների հաշվառմամբ:

Երկրորդ բարեփոխման քննադատներ նույնպես եղան: Եղան սուր բանավեճեր (այն կարող է շարունակական լինել):

Բանավիճող-քննադատների շարքում կային և կան անհատներ, որոնք, անտեղյակ լինելով լեզվաբանական հարցերին, ուղղագրության սկզբունքներին, անհիմն անվանարկում են Արեղյանին:

Մերձգիտական կամ հակագիտական նման մոտեցումը մերժելի է:

Իսկ երբ բանավիճում են գործին խորագետ մտավորականները (լեզվաբաններ, գրականագետներ, պատմաբաններ), նշում որոշ թերություններ, հայտնում իրենց մտահոգությունը, հիմնավորում փաստարկները, սա արդեն, իրոք, գիտական բանավեճ է: Հայաստանում մի շարք մտավորականներ այժմ էլ իրենց գրավոր խոսքում օգտագործում են ավանդական (հին) ուղղագրությունը: Սկզբունքի հարց է: Բայց ինչո՞ւ հաշվի չառնել այն, որ նոր ուղղագրությունը (խոսքը 1940 թ. ուղղագրության մասին է) ոչ միայն կանոնարկել է հինը, այլև ավելի է պարզեցրել այն:

Տարբեր լեզուներում կատարված բարեփոխումների հիմնական նպատակը հենց ուղղագրության պարզեցումն էր, գրության և հնչման մեջ հստակություն մտցնելը: Ինչո՞ւ քննադատության թիրախը դարձյալ Արեղյանն է: Ինչո՞ւ են անտեսել ուղղագրության հարցում Արեղյանի հիմնական սկզբունքները, որը նաև պատասխանն է և՛ առաջին, և՛ երկրորդ բարեփոխման քննադատների շատ հարցերի:

Բերենք 1913 թ. Արեղյանի զեկուցման որոշ դրույթներ՝ մեջբերումներով (ընթերցողի ներողությունն ենք հայցում ծավալուն մեջբերումների համար):

1. Արեղյանը մերժում է միայն մեկ սկզբունքի կիրառումը. «Ընդամիշտ պիտի հրաժարուել ուղղագրութեան մէջ հիմնական փոփոխութիւններ մտցնելու մտքից, որով ցանկանում են մեր ուղղագրութիւնը խիստ հնչաբանական դարձնել...» (էջ 1058):

Արեղյանը գիտեր, որ այդ կարգի ուղղագրությունը «հաւասարագօր է մեր մեծ ջանքերով ձեռք բերուած գրական լեզուներից հրաժարուելուն» (ն.տ.):

2. Արեղյանը չի թերագնահատում հին (գրաբարյան) ուղղագրությունը. «Եթէ չլինէր գրաբարի ուղղագրութիւնը, մենք դժուար թէ ունենայինք

մեր արդի գրական լեզուն, և մեր երկու աշխարհաբարները այնքան հեռու կը լինէին իրարուց, որ կը կարդայինք, բայց դժուար կը հասկանայինք» (էջ 1056):

3. Աբեղյանը դեմ էր *օ*-ի փոխարեն *ռ* գրությանը: «Քանի որ կայ բառասկզբի *ռ*=վո գրութիւնը, մենք չենք կարող այժմ բառասկզբի *օ*-երի գրութիւնը *ռ*-ի վերածել» (էջ 1125):

4. Աբեղյանը դեմ էր բաղաձայնների գրության փոփոխությանը. «Ոչ մի դեպքում ձեռք չտալ բաղաձայնների հին ուղղագրութեանը, որն անշուշտ մեծ խառնաշփոթ կստեղծեր» (էջ 1061):

Գրահնչունային դասական համակարգը խախտված է հատկապես արևմտահայերենում (ձայնեղ բաղաձայնների խլացում, խուլերի ձայնեղացում, *պ, կ, տ, ծ* խուլ պայթականների կորուստ):

5. Աբեղյանը գտնում է, որ նոր ուղղագրությունը չպետք է խոչընդոտի երկու գրական լեզուների մերձեցմանը. «Քանի որ մենք ունենք այսօր երկու գրական լեզուներ, որոնք նոյնանում են գոնէ միակերպ ուղղագրութեամբ, ուստի հենց սկզբից պիտի ասեմ, որ եթէ որեւէ փոփոխութիւն պէտք է մեր ուղղագրութեան մէջ աւելի խառն գրութիւն մտցնի և մեր գրական լեզուներն իրարուց աւելի հեռացնի, աւելի լաւ է, որ չլինի: Այս պատճառով այս խնդրին պէտք է շատ մեծ զգուշութեամբ մօտենալ» (էջ 1047-1048): Ընդգծումը մերն է – Լ. Ն.):

Ակնհայտ է, որ Աբեղյանի վերոհիշյալ նկատառումները հիմնովին անտեսվել են առաջին, մասամբ՝ երկրորդ բարեփոխման մէջ:

Ո՞րն էր պատճառը: Այդ հարցին պատասխանել է ինքը՝ Աբեղյանը. «Իրենց մի-մի Ակադեմիա կարծող անհատների փոփոխութիւններին ուրիշ բան չի վիճակուած, բայց եթէ մի նոր խառնաշփոթ գրութիւն մտցնել մեր ուղղագրութեան մէջ» (էջ 1141):

Սակայն կար մի զորեղ պարտադրանք ևս, որը ո՛չ Աբեղյանը և ո՛չ էլ Աբեղյանի ծրագրի կողմնակիցները չէին կարող հաշվի չառնել:

* Անշուշտ, երկու գրական լեզուների մերձեցումը հրատապ, բայց դժվարութեւի խնդիր է: Էական տարբերություններ կան հնչյունական, բառապաշարային, քերականական համակարգերում: Եթէ ուղղագրությունը խոչընդոտում է միասնականացմանը, ապա առաջին հերթին պէտք է միասնական դարձնել արևմտահայերենի ուղղագրությունը: Այդ հարցի լուծման համար ուղենշային կարող են լինել արևելահայերենի նոր ուղղագրության եթէ ոչ բոլոր, ապա գոնէ հիմնական սկզբունքները:

Իշխանության համար առաջնային էր քաղաքական դիրքորոշումը, որը որպես հրահանգ արձանագրված է 1921թ. հրատարակված ծրագրի՝ Լուսժողկոմիսարիատի առաջաբանում: «Լուսավորական նպատակի և կիրառման միջոցների տեսակետից ուղղագրության հարցը քաղաքական հարց է, և հայ լեզվի ուղղագրության ռեֆորմի խնդիրը Հայաստանի յեղափոխական իշխանության հերթական խնդիրներից մինը»:

Ամփոփենք: Ուղղագրության բարեփոխման ծրագիրը գիտականորեն հիմնավորված էր, իսկ որոշ մերժելի դրույթներ՝ պարտադրված:

Արեղյանը հայ իրականության մեջ այն եզակի գիտնականն է, որ սերունդներին է ավանդել գրականագիտական և լեզվաբանական անգնահատելի ժառանգություն: Արեղյան լեզվաբանը անդրադարձել է գրաբարի, միջին հայերենի իրողություններին: Հրատարակել է գրաբարի դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» քննական բնագիրը: Ուսումնասիրել է միջինհայերենյան շրջանի մի շարք հեղինակների լեզուն և ոճը:

Անգնահատելի են աշխարհաբարի ձևաբանության ու շարահյուսության հարցերին վերաբերող ուսումնասիրությունները՝ նոր մեթոդաբանությամբ ու հարցադրումներով ուղենշային ընդհանրացումներով, գիտական նոր տերմինների շրջանառությամբ: Պետք է շեշտել և այն, որ Արեղյանը կատարելության հասցրեց լեզվաբանական ուսումնասիրությունների *գիտական ոճը*:

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԸ ԲԱՌԱՐԱՆԱԳԻՐ

ՓԱՌԱՆՁԵՄ ՄԵՑԹԻՒԱՆՅԱՆ

Բ. Գ. Պ.

Բառարանագրությունը լեզվի այն բաղկացուցիչ մասերից մեկն է, որը գայթակղել է գրեթե բոլոր նշանավոր հայագետներին՝ Մ. Սեբաստացի, Հ. Աճառյան, Ս. Մալխասյանց, Է. Աղայան, Հ. Բարսեղյան, Ա. Սուքիասյան և այլք։ Բացառություն չէ նաև Մանուկ Աբեղյանը, որը, չնայած իր բազմաբովանդակ գործունեությանը, ունի իր ներդրումը բառարանագրության մեջ։ Իր ցանկացած ուսումնասիրության մեջ նա դրսևորում է բառագետի իր տաղանդը և բացատրում զանազան բառեր այնպիսի խորությամբ ու ճշգրտությամբ, ինչին կնախանձեին մերօրյա շատուշատ բառարանագիրներ։ Նրա «Հայ վիպական բանահյուսություն» աշխատության հենց առաջին ենթավերնագիրն է «Տերմիններ», որտեղ նա բացատրում *ժողովուրդ* բառը լայն և նեղ առումներով, *բանահյուսություն* ու *բանահավաք* բառերը, *բանագետ*-ը առաջարկում *ֆոլկլորիստի* փոխարեն և *բանագիտություն*-նը՝ որպես բանահյուսության մասին գիտության եզր։

1940 թ. լույս է տեսել Մ. Աբեղյանի «Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ, անտունիներ» ժողովածուն, որի վերջում հեղինակի կողմից ներկայացված են տաղերի և նրանց փոփոխականների դժվարհասկանալի բառերն ու բառաձևերը, ինչպես նաև *գ*, *ի* նախդիրների կիրառությունները հայրեններում։ Իր իսկ երկու խոսքից պարզ է դառնում, թե որքան լուրջ մոտեցում է դրսևորում նա առաջին հայացքից այդքան հասարակ թվացող մի բառացանկի ներկայացմանը։ Բառերի նշանակությունները ճիշտ որոշելու համար նա օգտվել է բազմաթիվ բառարաններից, որոնցից մի քանիսի անունը թվարկում է։

Բերենք տաղերից մեկը.

*Քանի ու քանի կասեմ
Մի՛ կենար դու խամ լաթերով.
Գնա՛, ասյրջում հագիր,
Որ նախշած է ոսկի թելով.
Արե՛կ, լուկ առջևս անցի՛ր,
Լօք քալէ՛ քալդ համարով.*

Յայնժամ ինձ աղվոր թըվիս,

Քան գուռի որթըն խաղողով:

Բառացանկում արդեն միառմի ներկայացվում (ընդ որում՝ տարբերություններով) և բացատրվում են *ապրշում-մետաքս, արեկ-արի, եկ, լուկ//լօք//լուք- և ահա, նաև, ապա* բառերը, առանց որի դժվար թե որևէ ընթերցող լիարժեք կկարողանա ընկալել տաղի իմաստը:

Իսկ այժմ ներկայացնենք մեծ լեզվաբանի բուն բառարանագրական գործերը:

Դեռևս 1919 թ. Ս. Մալխասյանցի, Տ. Հովհաննիսյանի և ուրիշների հեղինակակցությամբ Ս. Աբեղյանը հրատարակում է «Ռուս-հայերեն առձեռն իրավաբանական բառարանը», որը պարունակում էր ընդամենը 1400 գլխաբառ, բայց այդ բառահոգվածներից յուրաքանչյուրը այնքան ճշգրիտ է բացատրված, որ մինչ այսօր էլ ընդունելի է ու կիրառելի:

1922 թ. Մանուկ Աբեղյանը հայոց լեզու է դասավանդում Երևանի նորաբաց ռազմական դպրոցում, ինչն էլ այդքան արագ ստիպում է ձեռնամուխ լինել մի շատ կարևոր գրքի՝ «Ռուս-հայերեն ռազմական բառարանի» ստեղծմանը: Այն հրատարակվում է 1925 թ.: Հեղինակը առաջաբանում շեշտում է բառարանի գործնական անհրաժեշտության մասին և բառացանկը կազմում՝ օգտվելով 35-ից ավելի ռազմական կանոնագրքերից ու ձեռնարկներից, ֆրանսերեն-ռուսերեն ռազմական բառարանից և, ամենակարևորը, “Энциклопедия военных и морских наук” գրքի ուր իսկ հաստոներից և հանրագիտարանի հեղինակ Գ. Լեերայի բազմաթիվ այլ հոդվածներից⁸⁵: Հայերեն բառերի ու տերմինների համար աղբյուր են ծառայել Լուսինյանի, Քաջունու, Նուպարյանի, Դադբաշյանի բառարանները: Ինչպես նշում է հեղինակը բառարանի առաջաբանում, իրեն շատ օգտակար է եղել 1919-1920 թթ. ռազմական կանոնագրքերը ռուսերենից հայերեն թարգմանող հանձնախմբի աշխատանքներին մասնակցելը 1924 թ. ստեղծված Հայկական խմբագրական-հրատարակչական կոլեգիայի կազմում, որը նոր ռազմական գրքեր էր թարգմանում և տպագրում: «Այս վերջին թարգմանությունների տերմինոլոգիան ևս անցել է իմ խմբագրությամբ, որի համար ես միշտ խորհրդակցել եմ թարգմանիչների և ուրիշների

⁸⁵ Sté u Dictionnaire franco-russe des principaux termes militaires, par **A. Flint** ևЭнциклопедиявоенныхиморскихнаук, сост. иред. **Г. Леера, Աբեղյան Ս.**, Ռուս-հայերեն ռազմական բառարան, Եր., 1925, էջ 3:

րի հետ՝ ըստ իրենց մասնագիտության, և կամ հաճախ թարգմանիչներն իրենք են դիմել ինձ շատ տերմինների հայերենի համար»⁸⁶,– գրում է Աբեղյանը։ Ապա հավելում է, որ դեռ վերջնական տարբերակն էլ պատասխանատու պաշտոնյաների հետ կարդացել է։ Ինչո՞ւ ենք այսպես մանրամասնում. միայն մեկ պատճառով. այսպիսի խորքային մոտեցումը երբեք չէր կարող արդյունք չտալ։ Մանուկ Աբեղյանի այս բառարանը համարվում է հայ մասնագիտական բառարանագրության արժեքավոր գործերից մեկը. «Ռազմական լիարժեք բառարան կազմելու պատիվը պատկանում է Մանուկ Աբեղյանին»⁸⁷,– գրում է Գ. Գասպարյանը։ Բառարանը ունի 724 էջ և պարունակում է 17000 բառ և կապակցություն՝ ըստ Գասպար Գասպարյանի, իսկ ըստ Սվետլանա Ասլանյանի՝ 25000 տերմին և տերմինային կապակցություն⁸⁸։

Բառարանն ընդգրկում է ռազմական ոլորտի հիմնական տերմինները, տալիս դրանց նշանակությունները՝ *մարտունակություն, վերջապահ, զինանոց, զրահապատ, զրահամետաղ, զրահահար, զրահամեքենա, հրետանային, սվինամարտ, հետևազոր, ձգաբանություն (բալիստիկա), զորաշարժ, հրետաթուփ, հողապատվար, մարտկոցային, հրետասայլ, զինվորագրում, հավաքագրում, հողմաչափ, ռազմատուգանք, ռազմամթերք, օդազնացություն, պատնեշողի և այլն*, որոնց մեծ մասը այսօր ևս կիրառելի են ռազմական ոլորտում և կազմում է ռազմական բառապաշարի հիմքը։ Դրանք հիմնականում ռուսերեն տերմինի դիմաց միաբառ հայերեն համարժեքներ են, ինչպես՝ *аксельбант–նւկապ, арьергард–վերջապահ, ассистент–ընթերակա, балка–հեծան, баланс–հաշվեկշիռ, бронешина–զրահամեքենա, взрыватель–պայթուցիչ, волномер–ալեչափ, мундир–համազգեստ, униформа–համազգեստ, наконецник–ծայրապանակ, наводка–նշանառություն, упущение–զանցառություն, шайба–տափօղակ, шагомер–քայլաչափ, шкала–սանդղակ, штамп–դրոշմոց* և այլն։

Բառարանի արժեքը ռազմական տերմինաբանության կարգավորման տեսանկյունից խիստ գնահատելի է նաև օտար (ռուսերեն) բառակապակցության դիմաց հարյուրավոր դեպքերում միաբառ հայերեն տարբերակ ներկայացնելու առումով, այսպես՝ *перевозочный–վիրակապ, шей–*

⁸⁶ Տե՛ս Մ. Աբեղյան, Ռուս–հայերեն ռազմական բառարան, էջ 4։

⁸⁷ Տե՛ս Գասպարյան Գ., *Հայ բառարանագրության պատմություն*, Եր., 1968, էջ 421։

⁸⁸ Տե՛ս Ասլանյան Ս., *Ռուս–հայերեն ռազմական բառարան*, Եր., 1992, էջ 3։

ныйремень-վզափոկ, вытижнойшнур-ձգալար, отхожаяяма-աղբահոր, рукопашныйбой-ձեռնամարտ, дорогадольвала-պատնեշողի, кавалерийскийполк-հեծելազոր, наблюдательныйпост-դիտապոստ, դիտակայան, наблюдательныйпункт-կետ, դիտակետ և այլն:

Գլխաբառերից շատերը ներկայացված են հայերեն հոմանիշային տարբերակներով, որը կարելի է արդարացնել հետևյալ հիմնավորումներով. նախ, որ այդ տերմինը բազմիմաստ է, ասենք՝ *нагнетать-սեղմել, հույ տալ, ճնշել* տարբերակները համանիշներ են և կարող են իմաստային տարբերություն ի ցույց դնել տարբեր իրավիճակներ բնութագրելիս, կամ՝ *вытягивать-ձգել, երկայնաձգել, դուրս քաշել*, և ապա այդպես հնարավորություն է ընձեռնում համապատասխան դեպքում ունենալ տարբեր բառեր և ճշգրիտ ընտրություն կատարել: Այս առումով միանգամայն ճիշտ դիտարկում է անում ինքը՝ հեղինակը, բառարանի առաջաբանում.«...Եվ որ գլխավորն է՝ հին բառերը գործածված են նոր նշանակությամբ ևս, որ չունեն մեր բառերը միայն այն պատճառով, որ այդպիսի կիրառության կարիքը չի եղել, մինչդեռ դրանց համապատասխան բառերն ուրիշ լեզուների մեջ ունեն, ըստ տեղին թե՛ մեր բառերի սովորական նշանակությունը և թե՛ այս նոր նշանակությունը: Կուլտուրայի փոխվելու հետ, բնականաբար ոչ միայն նոր բառեր պիտի մտնեն մեր լեզվի մեջ, այլև մեր բառերի նշանակությունները ևս պետք է ընդարձակվեն նոր առումներով»⁸⁹:

Բայց սա եթե ընդհանրության մեջ միգուցե ճիշտ է, ապա շատ դեպքերում այսօր արդեն չի համապատասխանում. ասենք՝ *высший – վերին, բարձրագույն* տարբերակներից *վերին*-ը այսօր կիրառելի չէ, ոչ թե *վերին շտաբ*, այլ *բարձրագույն շտաբ*, կամ *выкуп-փրկանք, փրկագին*, բայց այսօր ավելի շատ՝ *փրկագին*:

Ինչ խոսք, բառարանը այսօր պատմական է, և շատ բառեր այլևս արդեն ոչ ճիշտ կամ ոչ հասկանալի և ընդունելի, ինչպես՝ *ավտոմատ-ինքնեկ, ավտոմատիստ-ինքնեկաձիգ, արխիվ-հնադարան, բեգ-վագ, բեզլեց-փախստյա, բլինդաժ-շերտափակ, թունել-ստորուղի, յամա-գուր, խորխորատ, նասոս-հանոց, տրադիցիա-ավանդություն, բունտ-խազմ, բունտավճիկ-խազմարար, վիստրել-ձիգ, արձակյուն, պայթյուն, տրանսպորտ-փոխակրանք* և տասնյակ այլ բառեր:

⁸⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 6:

Հետաքրքրության համար մենք որոշակի համեմատություն կատարեցինք արդեն բավական ուշ տպագրված ռազմական երկու այլ բառարանների հետ՝ հեղինակած Հ. Մելքումյանի⁹⁰ և վերը հիշատակած Ս. Ասլանյանի կողմից, և պետք է փաստել, որ Աբեղյանի բառարանը բացարձակապես չի զիջում նշված բառարաններին, քանի որ տերմինների բազմաթիվ քանակ կրկնվում է: Դեռ ավելին՝ ռազմական եզրաբանության մասին որևէ ուսումնասիրություն անհնար է պատկերացնել առանց այս բառարանի օգտագործման: Բերենք մեկ-երկու համեմատական օրինակ. *бдительность*-ը, ըստ Աբեղյանի, տրվում է *արթնություն, աջարջություն, Ասլանյանի մոտ՝ զգոնություն, աջարջություն, Ա. Ղարիբյանի բառարանում՝ զգաստություն, զգոնություն, աջարջություն, беженец*-ը *փախստական* է բոլորի մոտ, Ա. Ղարիբյանը հավելում է *գաղթական*-ը:

Հաջորդ լուրջ բառարանը, որ լույս է տեսել արդեն մեծ գիտնականի մահից հետո՝ 1951 թ., «*Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան*» է: Ի տարբերություն նախորդ բառարանի թեմատիկայի՝ այս պարագայում խնդիրն այլ է: Բժշկական տերմինաբանության հիմքը դրվել էր դեռևս միջնադարում. հայ բժիշկները գրել են մասնագիտական բազմաթիվ բառարաններ, նրանք գլխավորապես թարգմանել են հունարենից կամ արաբերենից, երբեմն լատիներենից կամ պարսկերենից և այդ ձևով մշակել ու ստեղծել որոշակի բժշկական տերմիններ: Հիշենք դրանցից «*Բառք Գաղի-անոսի*» (Մատենադարանում կա այդ բառարանի երեսունից ավելի օրինակ), *Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպետք»*, որոնց հետագայում հաջորդեցին տպագիր բազմաթիվ բառարաններ և դրանցից վերջինը Մ. Աբեղյանի, Լ. Հովհաննիսյանի, Ա. Տեր-Պողոսյանի կազմած այս բառարանն է, որը պարունակում է շուրջ քսան հազար բառահոդված: Բառարանի հեղինակ է եղել նաև բժիշկ Արշակ Ղազարյանը, որի անունը, սակայն, չի գրվել գրքի վրա, քանի որ նա անձի պաշտամունքի տարիների կամայականություններին զոհ է գնացել:

Բառարանի առաջաբանի հեղինակն է Լ. Հովհաննիսյանը, որը արժևորում է նախորդ բժշկական, հատկապես Լ. Տիգրանյանի, Վ. Արծրունու բառարանները:

Այս բառարանի կազմության կարևոր սկզբունքներն են եղել.

⁹⁰ Տե՛ս **Մելքումյան Հ., Ռազմական տերմինների ռուս-հայերեն համառոտ բառարան**, Եր., 1983:

ա) տերմիններ կազմելիս նկատի ունենալ, թե որ դեպքում անհրաժեշտ է պահել անփոփոխ օտար տերմինը՝ *անորտա, ինֆարկտ, հերպես, լամբլիոզ, լակտազա, բացիլ*, և որ դեպքում կերտել նորերը՝ օգտվելով հայերենի հարուստ բառապաշարից՝ *գրիժա-ճողվածք, ֆիրրոմա-թելքուռ, ֆիլտր-քամոց, ժելտուխա-դեղնուկ, պադկիդիշ-ընկեցիկ*,

բ) նախկինում եղած տերմինները ճշգրտել և փոխարինել ավելի ճիշտ տարբերակով (*կլապան-փական-կափույր*):

գ) օտար ածական տերմինները թարգմանել գոյականի սեռական հոլովով, ասենք՝ *подпупочный-պոքտառակի, подлопаточный-թիակատակի, подреберный-կողատակի, подгрудинный-կրծոսկրատակի*, իսկ մնացած դեպքերում թարգմանել իբրև ածական՝ *-ային* վերջածանցով՝ *эрозивный-քերծվածային, лицевой-դիմային, -ական՝ нечувствительный-անզգայական, эротический-տարփական, -ավոր՝ полосатый-գոլավոր* և այլ վերջածանցներով, *-ձև՝ ворекообразный-ձագարաձև, падучевидный-վերնոտաձև, -կերպ՝ фиброид-թելքակերպ* վերջնաբաղադրիչ արմատներով:

Բառարանը հետաքրքիր է դառնում նաև տրվող լատինական այնպիսի արտահայտությունների ու դարձվածքների հայերեն ու ռուսերեն թարգմանություններով, որոնք գործածվում են բժշկության ոլորտում, ինչպես՝ *ավազի բաղնիք, հիվանդագին հեշտասիրություն, մամադային ջրգոյություն, սաթմատիկ հովիկ, Ռեյլյան կղզյակի շենք, Վյոսենյան նեղուց, ներսադարձ ձիառտ, թափառող բջիջներ, գրաաֆյան պարկիկների պատյան* և այլն:

Սակայն բառարանը լայն տարածում չունեցավ, քանի որ առաջին գլխաբառը լատիներեն է, ինչը դժվարացնում էր համապատասխան բառը փնտրելիս:

Մանուկ Աբեղյանը Դերենիկ Դեմիրճյանի և Գարեգին Լևոնյանի հետ կազմել է «*Գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինաբանական բառարանը*», որը, ժամանակին չհրատարակվելով, հնացավ և կորցրեց իր նշանակությունը:

Իհարկե, կարելի է երկար գրել, խոսել ու ներկայացնել անվանի գիտնականի բառարանագրական աշխատանքը, որն ունի բազմաթիվ դրվատելի կողմեր, ինչու չէ, նաև թերություններ, բայց կցանկանայինք մեր խոսքն ավարտել անգլիացիների մի իմաստուն ասույթով. «Բառարանները նման են ժամացույցի. ամենալավը չի կարող ամենից ճիշտը լինել, ամենավատը չլինելուց լավ է»:

ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆԸ ԻԲՐԵՎ ԳՐԱԲԱՐԱԳԵՏ

ԱՆԱՀԻՏ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

Բ. Գ. Թ., դոցենտ

Մեծանուն գիտնական Մ. Աբեղյանը գրաբարի ուսումնասիրությունը կատարում է «Գրաբարի համառոտ քերականություն» (Վաղարշապատ, 1907 թ.), «Գրաբարի դասագիրք»՝ երկու մասով (առաջին գիրք՝ Թիֆլիս, 1915թ., երկրորդ գիրք՝ Թիֆլիս, 1916 թ.), և «Գրաբարի քերականություն» (Յերեվան, 1936 թ.) աշխատություններում: Վերջինս վերահրատարակվել է Աբեղյանի «Երկերի» Զ հատորում (1974 թ.):

«Այժմ գրաբարի քերականություն միայն իբրև միջոց պիտի ծառայի մեր հին լեզուն հասկանալու համար և ապա պիտի օգնի մեր լեզուի կազմությունը և պատմական զարգացումը բացատրելուն»⁹¹: Հեղինակը գրաբարին նվիրված իր առաջին աշխատությունը ուղղում է միջնակարգ դպրոցի բարձր դասարանի աշակերտներին: Գրքի երկրորդ վերահրատարակությունը՝ «Գրաբարի քերականություն» ընդհանրական անվանումով, «լոյս է ընծայվում մեր բարձրագույն դպրոցների ուսանողների և առհասարակ նրանց համար, որոնք ցանկանում են մեր հին լեզուն ուսումնասիրել, – գրում է հեղինակը, – այժմ գրաբարի քերականությունն միայն իբրև միջոց պիտի ծառայի մեր հին լեզուն հասկանալու համար և ապա պիտի օգնի մեր լեզուի կազմությունը և պատմական զարգացումը բացատրելուն»⁹²:

Մ. Աբեղյանը փոքրիկ առաջաբանից հետո «Գրաբար և աշխարհաբար» կոչվող բաժնում ակնարկային ձևով ներկայացնում է գրաբարի և աշխարհաբարի տարբերությունները, որոնք հիմնականում վերաբերում են ձևաբանությանը և շարահյուսությանը, քանի որ «բառակազմութեան նկատմամբ գրաբարն ու աշխարհաբարն իրարուց առանձին տարբերություն չունին»⁹³:

Շարահյուսության համար հեղինակն առանձնացնում է «կոդմնակի խնդիրների» գործառույթը. նրանք հիմնականում հետադաս են, ինչպես

⁹¹ Աբեղյան Մ., Գրաբարի քերականություն, Յեր., 1936, էջ 4:

⁹² Աբեղյան Մ., Գրաբարի համառոտ քերականություն, Վաղարշապատ, 1907, էջ 3:

⁹³ Աբեղյան Մ., Գրաբարի քերականություն, էջ 7:

«Լեառն Ձիթենեաց, կին մի և այլն»: Որոշիչները բնորոշում է իբրև մակա-
նուններ, որոնք հետադաս դիրքում համաձայնում են լրացյալին, իսկ նա-
խադաս դիրքում՝ ոչ, չնայած կան նաև նախադաս դիրքում համաձայնու-
թյան օրինակներ, ինչպես՝ **մեծի զորութեան և քաջին զօրավարին**⁹⁴:

Ձևաբանության քննությունը հեղինակը սկսում է բայից: Անորոշ դեր-
բայը ներկայացնում է 4 լծորդությամբ՝ **ալ, ել, իլ, ուլ, և գոլ** բայը, որը **ո**
լծորդության միակ բայն է: Ածանցավոր բայերը ներկայացնելուց հետո
անցնում է անցյալ կատարյալի հիմքի բացատրությանը. այն հեղինակն
անվանում է «բայերի բուն» և տարբերակում է ագ-ով և եաց-ով ձևեր: Կա-
տարյալի արմատական հիմքի կառույցները բնորոշում է «հիմքն իբրև
բուն»: Յուրաքանչյուր դերբայ ներկայացնում է կազմության առանձնա-
հատկություններով՝ օրինաչափությունների և բացառությունների ամբող-
ջական ընդգրկմամբ: Դիմավոր բայի համար Մ. Աբեղյանը «Գրաբարի հա-
մառօտ քերականութիւն» աշխատության մեջ առանձնացնում է երկու
եղանակ՝ սահմանական և հրամայական, իսկ վերահրատարակված
գրքում արդեն նշում է 3 եղանակ՝ սահմանական, ստորադասական, հրա-
մայական⁹⁵:

Սահմանական եղանակի համար ներկայացնում է սահմանական
ներկա, անցյալ անկատար, ապառնի Ա ժամանակաձևերը. վերջինս ստո-
րադասական առաջին ապառնու բայաձևերի աբեղյանական անվանումն
է, ըստ որում, հարացույցում դրանց դիմաց փակագծում գրում է Մտ. (էջ
23): Որպես հրամայական եղանակ առանձնացնում է ապառնի Ա և արգե-
լական ներկա, այսինքն՝ արգելական հրամայականի ձևերը:

Ապառնի Ա նշումով գրաբարագետը ներկայացնում է ա լծորդության
համար *-այջիր, -այջիք*, ի և ե լծորդությունների համար՝ *-իջիր, -իջիք* վեր-
ջավորությունները, որոնք դիպվածաբար հանդիպում են թարգմանական
գրականության մեջ և գրաբարի այլ քերականների կողմից չեն առանձ-
նացվում: *Բջիր, իջիք*-ը՝ հորդորական հրամայականի կանոնավոր հան-
դիպող վերջավորություններ: Ու լծորդության բայերը ապառնի Ա չու-
նեն⁹⁶: Այս կառույցները՝ իբրև հրամայականի ձևեր, Մ. Աբեղյանը պահ-

⁹⁴ Աբեղյան Մ., Գրաբարի համառօտ քերականութիւն, էջ 7:

⁹⁵ Աբեղյան Մ., Գրաբարի համառօտ քերականութիւն, էջ 21, Գրաբարի քերականութիւն,
էջ 28:

⁹⁶ Տե՛ս Աբեղյան Մ., Գրաբարի համառօտ քերականութիւն, էջ 23:

պանում է նաև մյուս աշխատություններում բերված հարացույցներում: Ներկայի հիմքի նույն ձևերը հայագետն առանձնացնում է նաև վերահրատարակության մեջ: Միայն ստորադասական ապառնի Ա ձևը հանում է սահմանական եղանակի կազմից:

Կատարյալի հիմքից կազմվող բայաձևերը հեղինակը տալիս է ներգործակերպ, կրավորակերպ և խառը խոնարհման հարացույցներով, ըստ որում, սահմանականի համար առանձնացնում է անցյալ կատարյալ և ապառնի բայաձևերը, որոնք ստորադասական երկրորդ ապառնու հարացույցի միավորներն են: Այստեղ արդեն փակագծում *Ստ.* նշումը չունի: Հրամայական ներկան բուն հրամայականի ձևերն են, իսկ ապառնի Բ-ն՝ հորդորական հրամայականի: Վերահրատարակության մեջ դրանք կոչում է ստորադասական ապառնի Բ՝ մնացածը թողնելով նույնը (էջ 32):

Հարացույցներից հետո «Գիտելիք» վերնագրով հեղինակը տալիս է կառուցվածքային մեկնաբանումներ: Հարացույցներով ներկայացնում է պատճառական բայերի խոնարհումը, ապա՝ բացատրում անցյալ դերբայի կազմությունը: Անկանոն բայերի ցանկը Մ. Աբեղյանը տալիս է ավելի լայն ընդգրկումով, քան այլ գրաբարագետները՝ ներառելով ոչ միայն խոնարհման և հիմքակազմության առանձնահատկություններով բայերը, այլև առանձին բայեր, որոնք այս կամ այն կառույցում կարող են առանձնահատկություններ ունենալ, օրինակ՝ *սփածանիս, պրծանիս, զառածիս-զառածանիս, ծիրիս-ծիրանիս* ձևերի *սփածայ* (կանոնավոր) և *սփածեայ*, ինչպես նաև *պրծեայ, զառածեայ, ծիրեայ* անկանոն⁹⁷ ձևերը:

Բաղադրյալ ժամանակաձևերի ամբողջական հարացույցները ներկայացնելուց հետո հեղինակը անդրադառնում է ժամանակների գործածությանը: Յուրաքանչյուր ժամանակաձևի գլխավոր և երկրորդական քերականական իմաստով գործածությունները 2 հրատարակություններում էլ հեղինակը ներկայացնում է ամբողջական ընդգրկմամբ և բնագրային հարուստ նյութի փաստագրմամբ: «Գրաբարի դասագիրք» աշխատության Բ մասում հեղինակը անդրադառնում է ժամանակաձևերի կիրառություններին և իրավամբ նշում է, որ ստորադասական I և II ապառնիների սահմանը և «դրանց տարբերությունն հնագույն մատենագիրների մեջ անգամ ար-

⁹⁷ Անկանոն և պակասավոր բայերին անդրադառնում է նշվ. աշխատության առաջին հրատարակության 37-54 էջերում, երկրորդ վերահրատարակության 45-58 էջերում:

դեն շփոթուած է, և այն երկու ժամանակները մեծ մասամբ նոյն նշանակութիւնն և գործածութիւնն ունին» (էջ 136): Հաճախ ստորադասական ապառնի Ա-ն թարգմանվում է սահմանական ներկայով: Ի թիւս այլ օրինակների՝ բերում է հետևյալ օրինակը. «Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յագարակի խրում» (էջ 136): Նույնը վերաբերում է նաև եղանակիչ բայերի քննությանը: Նրանց ձևագործական հատկանիշների մանրակրկիտ վերլուծությունը հեղինակը կատարում է ձևաբանական և շարահյուսական մակարդակներում՝ ամբողջացնելով գրաբարի բայական համակարգի քննությունը:

«Գրաբարի դասագիրք» ձեռնարկի մեջ խոնարհման համակարգը ներկայացված է նույն ձևով, ինչ «Գրաբարի քերականություն» աշխատության մեջ: «Գրաբարի դասագրքի» առաջին մասում հեղինակը բայի համար առանձնացնում է 3 եղանակ, ըստ որում, սահմանականի համար ներկա, անցյալ անկատար և անցյալ կատարյալ ժամանակաձևերը, ստորադասականի համար՝ ապառնի առաջին և ապառնի երկրորդ ձևերը. «Հրամայականն ունի երեք ժամանակ՝ ներկայ, ապառնի առաջին և ապառնի երկրորդ: Ներկայի բացասականը **մի՛** մակբայով արգելական է և առանձին ձև ունի: Ուլ-ով վերջացող բայերը չունին հրամայական ապառնի առաջին ժամանակը»⁹⁸, որի համար հեղինակը պահպանում է առաջին աշխատության մեջ տեղ գտած *-այջիր, -այջիք, -իջիր, -իջիք*՝ դիպվածային, միայն Աստվածաշնչի և թարգմանական այլ գրականության մեջ հանդիպող մեղմ հրամայականի ձևերը: Հարացույցները և նրանց մասին տեսական վերլուծությունը Մ. Աբեղյանը կատարում է անկատար և կատարյալ ժամանակների հակադրությամբ, որը պահպանում է նաև իր հետագա աշխատություններում, այնինչ «Գրաբարի համառոտ քերականություն» աշխատության մեջ ներկայի հիմքից կազմվող ժամանակաձևերն անվանում է «լծորդի ձևեր», իսկ կատարյալի հիմքից կազմվող ժամանակաձևերը՝ «բնի ձևեր» կամ ժամանակներ: Հրամայական ներկա նշումով իր բոլոր աշխատություններում Մ. Աբեղյանը ներկայացնում է բուն հրամայականի ձևերը, իսկ Ա ապառնի Բ-ի տակ՝ հորդորական հրամայականի ձևերը, ըստ որում, *հորդորական հրամայական* եզրը հեղինակը չի գործածում: Ապառնի Ա-ի տակ տեղ գտած կառույցները Մ. Աբեղյանը

⁹⁸ **Աբեղյան Մ.**, Գրաբարի դասագիրք, առաջին գիրք, Թ., 1915, էջ 97:

ներկայացնում է հավանաբար պահպանելու համար ապառնի Ա (անկատար ժամանակաձև) և ապառնի Բ (կատարյալ ժամանակաձև) կերպային հակադրությունը՝ հարացույցում նշելով *աղայջիր, աղայջիք, սիրիջիր, խօսիջիր, խօսիջիք* ձևերը, որոնց կողքին բնի (կատարյալի) ժամանակների մեջ ապառնի Բ նշմամբ բերում է *աղասջիր, աղասջիք, սիրեսջիր, սիրեսջիք, մատուսջիր, մատուսջիք, ածջիր, ածջիք, փախիջիր, փախիջիք* ձևերը, որոնք ներկայացնում են հորդորական հրամայականի ընդունված պատկերը: Ինչպես տեսնում ենք, հեղինակի մոտեցումները բայական կարգերի վերաբերյալ աստիճանական զարգացում են ստացել: Ստորադասական եղանակը՝ իբրև առանձին եղանակային եզր, հեղինակը առանձնացրել է «Գրաբարի դասագրքում» և ապա՝ «Գրաբարի քերականություն» աշխատության մեջ: «Համառոտ քերականութեան» մեջ ստորադասական առաջին և երկրորդ ապառնիները սահմանական եղանակի պարզ ժամանակաձևեր էր համարում⁹⁹: Ծանոթության մեջ գրում է. «Սահմանական եղանակի առաջին ապառնին քերականները սովորաբար դնում են իբրև Ստորադասական եղանակ»¹⁰⁰: Նախնական գիտելիքներ տալով հոլովների և նրանց կազմության առանձնահատկությունների մասին՝ Մ. Աբեղյանը *Կանոնավոր հոլովումներ* վերնագրի տակ առանձնացնում է **ի, ու, ոյ, այ** հոլովումները, որի մեջ քննում է ավանդաբար ընդունված **ի-ա, ո-ա** խառն հոլովման բառերը, բայց դրանք անվանում է **«ի և ո»** շեղման բառեր, իսկ **այ** արտաքին հոլովումը՝ անխառն **ա** ձայնավորով հոլովում¹⁰¹: Ան հոլովման տակ դնում է ավանդական անվանումներով **ա** և **ի-ա** խառն ներքին հոլովման բառերը: **Եր-եղ** հոլովման տակ առանձնացնում է **ե** ներքին հոլովման բառերը:

Մ. Աբեղյանը կանոնավոր հոլովումների կազմության առանձնահատկությունները բացատրելիս ներկայացնում է տվյալ հոլովման բառաշարքերը ձևային և իմաստային հատկանիշների հնարավորինս ամբողջական ընդգրկմամբ: Հեղինակը չի գործածում *արտաքին* և *ներքին, պարզ* և *խառն հոլովումներ* եզրույթները:

Կանոնավոր հոլովումների մեջ ներկայացնում է տվյալ հոլովման պատկանող ոչ միայն գոյականները, այլ նաև թվականները (*մի-միոյ*),

⁹⁹ Աբեղյան Մ., Գրաբարի համառոտ քերականություն, էջ 21:

¹⁰⁰ Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 21:

¹⁰¹ Տե՛ս Աբեղյան Մ., Գրաբարի քերականություն, էջ 95-99:

ածականները (*մանր-մանու-մանունք*), դերանունները (*մեր-մերոյ*), դերբայները (*խաղալ-խաղալոյ, խաղացեալ(ք)-խաղացելոյ, խաղացելոց*):

Անկանոն հոլովումների տակ է դնում *այր, տէր, մայր, քոյր, ասր, կին, տիկին* բառերը, ինչպես նաև *ծանալթ* և *փոքր* բառերը: Հոլովումների մեջ փոխանցումները ներկայացնելուց հետո տալիս է չհոլովվող բառերի շարքը, դրանք են *-իւն* ածանցով մի շարք բառեր, օր.՝ *գոչիւն, թնդիւն, դղրդիւն*, կրկնակի փոքրացուցիչ-փաղաքշական ածանցով՝ *պատանեկիկ, մանկիկ, նաւակիկ*:

Դերանվանական հոլովման տակ Մ. Աբեղյանը քննում է հարցական, անորոշ, անձնական, ցուցական, որոշյալ, փոխադարձ դերանունները, առանձնացնում է նաև այն ձևերը, որոնք ունեն մակբայական նշանակություն, ինչպես՝ *այսր, այդր, այնր, աստի, այդի, անտի, աստ, անդ* ձևերը:

«Շարահյուսություն» բաժնում քննում է ձայնարկությունը, որ հարաբերական դերանունը, շաղկապները, նախադրական կամ մակբայական բառերը (*յէտ, զկնի* ևն), այսինքն՝ նախադրությունները¹⁰²:

Առանձին քննության է ենթարկում նախդիրներն իրենց կիրառական դաշտի գրեթե բոլոր գործառնություններով, հոդերը, համաձայնությունն ու շարադասությունը: Մանրակրկիտ քննության է ենթարկում գրաբարի հոլովների և անորոշ դերբայի կիրառությունները:

«Խոսքի կազմության» մեջ անդրադառնում է խնդիրներին. ներգործական և կրավորական սեռի բայերի հետ գործածվող խնդիրները անվանում է սեռի խնդիրներ, իսկ մնացած խնդիրները՝ բնության խնդիրներ, ըստ որում, ենթակայի և խնդրի հետաքրքիր սահմանում է տալիս. «Բայի դեմքի լրացումը, յենթական մեր հին քերականները կոչում են «անուն բայի» կամ «տէր բայի», իսկ բայիմաստի լրացումները՝ խնդիր»¹⁰³:

«Գրաբարի համառոտ քերականութիւն» աշխատության մեջ *շարահյուսություն* բաժին չի առանձնացվում: Դերանվանական հոլովումից հետո բացատրվում է «Հոլովների գործածությունը», ածականից հետո ներկայացված են հոդերը, նախադրությունները, ներառյալ նախդիրները, ապա՝ շաղկապը և ձայնարկությունը¹⁰⁴:

¹⁰² Նույն տեղում, էջք 194-207:

¹⁰³ Տե՛ս **Աբեղյան Մ.**, Գրաբարի քերականութիւն, էջ 146:

¹⁰⁴ Տե՛ս **Աբեղյան Մ.**, Գրաբարի համառոտ քերականութիւն, էջք 146-204:

«Գրաբարի քերականություն» աշխատությունն արդեն գրաբարի հնչյունական համակարգի, ձևաբանության և շարահյուսության ամբողջական վերլուծությունն է, տեսական աշխատանք և ոչ միայն դասագիրք:

Այս տեսանկյունից ներկայացնենք «Գրաբարի դասագիրք» ձեռնարկի կառուցվածքը՝ հաստատելու մեր վերոբերյալ միտքը: Առաջին գիրքը սկսվում է բնագրային տեքստերով, որոնց հաջորդում է «Բառացուցակ և քերականական կանոններ» բաժինը, որտեղ Մ. Աբեղյանը քննում է «բառադասությունը», որ վերաբերում է հատկացուցչի և ածական վերադրի հետադաս շարադասությանը, այնուհետև ընդհանուր նշվում են հոլովների առանձնահատկությունները, նախդիրները և նրանց գործածությունը:

Դերբայների փոքրիկ, ակնարկային վերլուծությունից հետո հեղինակն անցնում է խոնարհմանը¹⁰⁵:

Փաստորեն՝ այս աշխատանքը ծառայում է գործնականում արագ գրաբար սովորեցնելու նպատակին, ավելի որոշակի՝ գրաբարից աշխարհաբար թարգմանություն կատարելուն:

Ածականին առավելապես շարահյուսական մակարդակի միավորի սահմանում է տալիս: «Գրաբարում, ինչպես և աշխարհաբարում, ածականները խօսքի մեջ վարած պաշտօնով միայն տարբերվում են իբրև ածական անուն կամ մականուն, մակբայ կամ մակածական. օրինակ՝ քաջ այր, քաջ գիտեմ, քաջ յայտնի: Մակբայների և մակածականների կիրառության համար առանձին գիտելիք չկայ»¹⁰⁶:

Ըստ որում, ստացական դերանունները թվարկելիս հեղինակը գործածում է *դերանուն* եզրը, բայց գոյականի հետ հոլովման հարացույցը ներկայացնելիս գործածում է *ստացական-ածական* անվանումը¹⁰⁷ (*ծառայիմ, ծառայի իմոյ, ծառայի իմում* և այլն):

Դասագիրքը կառուցված է այն սկզբունքով, որ յուրաքանչյուր թեմայի քննության ժամանակ հնարավորինս շատ բնագրային օրինակներ ընդգրկվեն և թարգմանական նրբություններ բացահայտվեն:

Դասագրքի Ա և Բ մասերը ընդգրկում են քերականությունը, բնագրային հարուստ հատվածներ, բառարաններ: Կառուցվածքային առումով նրանք ունեն տարբերություններ. I գիրքը կազմված է «Յօդուածներից»,

¹⁰⁵ Աբեղեան Մ., Գրաբարի դասագիրք, գիրք առաջին, էջ 98-112:

¹⁰⁶ Աբեղեան Մ., Գրաբարի համառոտ քերականութիւն, էջ 154:

¹⁰⁷ Տե՛ս Աբեղեան Մ., Գրաբարի դասագիրք, գիրք առաջին, էջ 126:

որը բառերի և բառաձևերի մեկնաբանությունն է, և քերականական տվյալ իրողության մեկնաբանությունից, օրինակ՝ բառացանկ է տալիս՝ բառեր և բառաձևեր՝ իրենց բացատրություններով, ապա Ա բաժինն է, որը բառադասությանն է վերաբերում, Բ-ն՝ ուղղական և հայցական հոլովներին, Գ նախդիրին և հոլովական համակարգին վերաբերող մի շարք այլ իրողությունների, այնուհետև անդրադառնում է խոնարհմանը, զուգընթաց դարձյալ բառերի և բառաձևերի բացատրություններն են, վերջում Եղիշեի երկի բառարանն է։ Բ գիրքը կառուցվածքային առումով ավելի հստակ է՝ տեքստեր, քերականություն և բառարան, ընդ որում, տեքստերը գերակշռող ընդգրկում ունեն։ Կարևոր է բնագրային թարգմանության մեջ համանիշների ճիշտ ընդգրկումը (էջ 113-141, II գիրք)։ Հեղինակը խիստ կարևորում է բնագրերի ճիշտ թարգմանությունը, հատկապես ուշադրության կենտրոնացումը համանիշ բառերի վրա, որով հազեցած են գրաբարյան բնագրերը։ 2-րդ մասում քերականական գիտելիքը հավաքված է¹⁰⁸, քանի որ առաջին գրքում «քերականական կանոններից առնուած են, ինչպես պահանջում է ծրագիրը, կանոնավոր հոլովում և խոնարհում, մի քանի դերանունների հոլովում, բառերի շարադասութիւն ու համաձայնութիւն և պատահած նախդիրների գործածութիւն»¹⁰⁹։

«Գրաբարի դասագիրքը» կազմված է 2 գրքից. I գիրքը սկսվում է թարգմանության համար նախատեսվող բնագրային հատվածներով։ Տրվում են բառացուցակներ, որոնցով հազեցած է դասագիրքը։ Բառացուցակները բառերի և բառաձևերի բացատրություններ են։ Այնուհետև «Քերականական կանոններ» վերնագրով տրվում են նախդիրների գործածության կանոններ։ «Բառադասության» մեջ հեղինակը ներկայացնում է հատկացուցի (սեռական վերադիր) և հետադաս որոշչի շարադասության և համաձայնության առանձնահատկությունները¹¹⁰։ Անդրադառնում է նաև հոլովների կիրառությանը։ Հետո ներկայացնում է խոնարհման և հոլովման համակարգերը, որոնք նույնն են, ինչ «Գրաբարի քերականության» մեջ։ Գիրքն ունի հարուստ բացատրական բառարան։

II գիրքը նս սկսվում է բնագրային տեքստերով։ Նրանց հաջորդում է «Քերականություն» բաժինը, որը սկսվում է հոլովների մեկնաբանությամբ,

¹⁰⁸ Տե՛ս Աբեղեան Մ., Գրաբարի դասագիրք, Բ գիրք, էջք 113-141։

¹⁰⁹ Աբեղեան Մ., Գրաբարի դասագիրք, Ա գիրք, էջ 4։

¹¹⁰ Աբեղեան Մ., նշվ. աշխ., Ա գիրք, էջք 91-93։

ապա անդրադառնում է բայական համակարգին: Առանձին բաժնով՝ «Շարահիւսութիւն», ներկայացնում է գրաբարի շարահյուսական իրողութիւնները՝ ա) համաձայնություն, բ) հոլովների գործածութիւն, գ) նախդիրների գործածութիւն, դ) բայի ժամանակների գործածութիւն, ե) յոդերի գործածութիւն, զ) **որ** յարաբերական, է) դերբայների գործածութիւն:

Այնուհետև այբբենական կարգով ներկայացնում է բացատրական բառարան: Ազդեցիկ է վաստակաշատ հետազոտող Մ. Աբեղյանի գիտական ավանդը ինչպէս հայագիտության մեջ ընդհանրապէս, այնպէս էլ գրաբարագիտության մեջ մասնավորապէս: Հեղինակը գրաբարի քերականությունը ներկայացնում է իր ամբողջության մեջ: Բոլոր խոսքի մասերը իրենց ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններով տեղ են գտել Մ. Աբեղյանի աշխատություններում: Դասագրքերը ունեն բացատրական բառացանկ:

Մ. Աքեղյանը գրաբարի բայական համակարգի համակողմանի քննություն է կատարում գրաբարի դասագրքերում, «Գրաբարի համառոտ քերականութիւն» (Վաղարշապատ, 1907) և «Գրաբարի քերականություն» (Յերեվան, 1936) աշխատություններում: «Գրաբարի դասագիրքը» առաջին (Թիֆլիս, 1915) և երկրորդ (Թիֆլիս, 1916) գրքերից է կազմված: Գրաբարի դասագրքերում հեղինակը դիմավոր բայի 3 եղանակ է տարբերակում.

1. Սահմանական, որն ունի երեք ժամանակ՝ ներկա, անցյալ անկատար և անցյալ կատարյալ:

2. Ստորադասական, որն ունի առաջին և երկրորդ ապառնի ժամանակները:

3. Հրամայական եղանակ, որն ունի ներկա, առաջին և երկրորդ ապառնի ժամանակները:

Բայափոխքը Մ. Աքեղյանն անվանում է բուն և տարբերակում է ներկայի կամ անկատարի հիմք «որ է անորոշ դերբայը առանց լ վերջավորութեան կամ Սահմ. ներկայի եզակի 1-ին դեմքը՝ առանց մ վերջաւորութեան՝ խաղա-լ, գրե-լ, խօսի-լ, առնու-լ»¹¹¹:

Ա, է, ի, ու ձայնավորներն անվանում է լծորդ ձայնավորներ:

Անկատարի բնից կազմվում են սահմանական եղանակի ներկան, անցյալ անկատարը, ստորադասական եղանակի առաջին ապառնին, հրամայական եղանակի ապառնի **Ա**, արգելական ներկա ժամանակները, դերբայներից անորոշը և ապառնին: Հրամայական եղանակի ապառնի **Ա** ժամանակաձևի տակ Մ. Աքեղյանը դնում է հետևյալ նմուշները՝ գնայջիր-գնայջիք, ասիջիր-ասիջիք, լինիջիր-լինիջիք. **ու** լծորդության բայերը չունեն այս ժամանակաձևը: Ըստ էության, այս ձևերը հեղինակը սկզբունքորեն որակում է իբրև հրամայականի բայաձևեր, որոնք իմաստով համարժեք են բուն հրամայականին, ըղձական, պայմանական ապառնիներին: Սրանք քիչ հանդիպող միավորներ են, որոնք՝ իբրև հրամայականի կա-

¹¹¹ Մ. Աքեղյան, Գրաբարի դասագիրք, գիրք առաջին, Թիֆլիզ, 1915, էջ 97:

ռույցներ, գրաբարագիտությունը չի արձանագրում, այնինչ Մ. Աբեղյանը դրանք համարում է գրաբարի խոնարհման համակարգի միավորներ, որոնց մասին տեսական մեկնություն չի տալիս, բայց հարացույցում ներկայացնում է՝ նշելով, որ **ու** լծորդության բայերը չունեն այդ ձևերը: Կատարյալի հիմքի (բուն) համար առանձնացնում է **աց(եաց)** և **ոյց**-ով ձևեր, որոնց **ց**-ոյական անվանումը չի տալիս և բայարմատին համարժեք ձևեր, որոնց արմատական անվանումը չի տալիս: Կատարյալի հիմքի կառույցները ներկայացնում է ներգործակերպ և կրավորակերպ խոնարհման հարացույցներով:

Հրամայական ներկայի տակ հեղինակը ներկայացնում է բուն հրամայականի ձևերը, իսկ ապառնի **Բ**-ի տակ՝ հորդորական հրամայականի ձևերը՝ չօգտագործելով հորդորական անվանումը:

Ժխտական խոնարհման **մի** ձևույթի երեք գործառույթ է զանազանում՝ մի+սահմանական ներկա, օր.՝ մի՛ գնար, մի՛ գնայք: «Ապառնի ժամանակների հետ կազմում է ապառնի արգելական՝ Մի երդնացուս սուտ = սուտ չերդուես: Անորոշ դերբայի հետ՝ Ամեննին մի՛ երդնուլ = ամեննին չերդուել կամ ամեննին չպիտի երդուել»¹¹²:

Բաղադրյալ ժամանակները կազմվում են **եմ** և **լինիմ** բայերով և ապառնի, անցյալ դերբայների միջոցով, ըստ որում **լինիմ** բայը գործառական է իբրև օժանդակ բայ միայն անցյալ դերբայի հետ:

Հետաքրքիր է այն իրողությունը, որ անցյալ դերբայով հարացույցներում հարացուցային յուրաքանչյուր միավորի դիմաց գրում է նաև սեռականով ենթակայով ձևերը, օր.՝ տեսեալ եմ – իմ տեսեալ է, տեսեալ էին – նոցա տեսեալ էին, տեսեալ իցեմք – մեր տեսեալ իցե նն: Մ. Աբեղյանը «Սեռական ենթակա» (էջ 113) վերնագրի տակ կանոնարկում է սեռականով ենթակայի գործառույթը. հարացույցում նրանց ընդգրկումը վկայում է գրաբարում սեռականով ենթակայի գործառական հաճախականության մասին, ինչը և հիմք է դառնում լեզվաբանի համար նրա ներառումը հարացույցում՝ իրենց համարժեք միավորներով. այն ունի ուսուցողական նպատակ: Հարկադրական եղանակի իմաստի համար Մ. Աբեղյանը ներկայացնում է.

«պարտ է, պիտոյ է, արժան է, հարկ է + անորոշ դերբայ + տրականով ենթակա» (էջ 119) կառույցը: Անկանոն բայերի ցանկում Մ. Աբեղյանը ներ-

¹¹² Մ. Աբեղյան, Գրաբարի դասագիրք, առաջին գիրք, Թիֆլիս, 1915, էջ 117:

կայացնում է և՛ հիմքակազմության (ասել, գիտել, կարել, մորթել են), և՛ խոնարհման անկանոնություններ ներկայացնող բայերը (օր.՝ երթալ – չոգայ, ուտել – կերայ են):

«Բայի ժամանակների նշանակությունը» վերնագրով մասում Մ. Աբեղյանը անդրադառնում է սահմ. ներկա և անցյալ ժամանակների երկրորդական նշանակություններով գործառույթին՝ իբրև ըղձական և պայմանական ապառնու միավորների:

«Գրաբարի դասագրքի» երկրորդ գրքում «Բայի ժամանակների գործածությունը» վերնագրի տակ անդրադառնում է նաև անցյալ անկատարի բայաձևերի գործառույթին՝ իբրև պատմական ժամանակի, որի «փոխանակ աշխարհաբարում բանում է Սահմ. ներկան կամ Անց. կատարեալը, օրինակ՝ իբրև զայն լսել (= լսեց կամ լսում է)¹¹³: Հաջորդ կարևոր դիտարկումը վերաբերում է ստորադասական ապառնի **Ա** և **Բ** ժամանակների չսահմանազատված գործառույթին. չնայած ըստ կազմության նրանք պիտի տևական և ոչ տևական գործողություն ցույց տային, քանի որ կազմվում են տարբեր հիմքերից: «Բայց դրանց այս տարբերությունը հնագոյն մատենագիրների մեջ անգամ արդեն շփոթուած է, և այս երկու ժամանակները մեծ մասամբ նոյն նշանակությունն ու գործածությունն ունին»¹¹⁴:

Մ. Աբեղյանը ժամանակների գործածության երկու կարևոր հատկանիշի մասին է խոսում, որոնք գրաբարով մատենագրության մեջ տարածված են և ունեն ոճական կարևոր արժեք. դրանք են.

1. **Էմ, լինիմ** բայերի եզակի 3-րդ դեմքի ձևերի գործածությունը անորոշ դերբայի հետ. համեմատենք՝

Ինձ լիցի ամենայն հնազանդութեամբ պաշտել զԱստուած արարիչ (փոխ. պաշտեցից = ես պիտի պաշտեմ)¹¹⁵: Սրանք բարձր ոճի կառույցներ են և ունեն մտքի ընդգծման կարևորություն:

2. Պարզ ժամանակների փոխարեն բաղադրյալ կառույցների գործածությունը ոճավորման կարևոր միջոց է գրաբարյան մատենագրության համար: Համեմատենք՝ «Եւ յետ մարտին յաղթութեան քաջութեանցն, զոր արար, դարձեալ լինէր (փոխանակ՝ դառնայր) ի կողմանցն Յունաց Տրդատ արքայ Հայոց:

¹¹³ Մ. Աբեղյան, Գրաբարի դասագիրք, երկրորդ գիրք, Թիֆլիս, 1916, էջ 135:

¹¹⁴ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 136:

¹¹⁵ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 137: Հաջորդիվ օրինակը նույնպես բերված է ըստ Մ. Աբեղյանի:

Ելնելով դասագրքի պահանջներից՝ Մ. Աբեղյանը մանրամասնում է ժամանակաձևերի գործածությունները, ինչը կարևորում է բնագրային այն հատվածների ճշգրիտ թարգմանության համար, որ տեղ են գտել դասագրքում: Այս իմաստով առանձին նշանակություն են ստանում «Շարահիսութին» բաժնում տեղ գտած դիտարկումները, որոնք երկրորդ գրքում ավելի մանրամասնված են: Կարևորվում են նաև «**որ** հարաբերական դերանվան և յօդերի գործածությունները», որոնք ոչ միայն շարահյուսական կարևորություն ունեն, այլև ոճական: Շարահյուսությունը դասագրքի երկրորդ գրքում ավելի մանրամասնված է, ինչը ուղղված է թարգմանական հմտությունների մշակմանը դպրոցներում:

Դիմավոր բայի համար Մ. Աբեղյանը «Գրաբարի համառօտ քերականութիւն» աշխատության մեջ առանձնացնում է երկու եղանակ՝ սահմանական և հրամայական: «Գրաբարի քերականութիւն» վերնագրով վերահրատարակության մեջ ստորադասական եղանակը առանձնացնում է սահմանականից և բնորոշում իբրև առանձին եղանակ՝ առաջին և երկրորդ ապառնի ժամանակաձևերով, որոնք անվանում է ապառնի **Ա** և ապառնի **Բ**:

Հեղինակը բայի անդեմ ձևերի կառուցվածքային մանրակրկիտ քննություն է կատարում՝ անդրադառնալով բայածանցներին, լծորդիչներին և լծորդություններին, բաղադրյալ ժամանակների կազմության մեջ անցյալ և ապառնի դերբայների մասնակցությանը, անորոշ և անցյալ դերբայների հոլովմանը, ուստի նաև նրանց անվանական հատկանիշներով գործառույթներին:

Մ. Աբեղյանը բայական համակարգի միավորներ է համարում անորոշ դերբայի գործածությունները եղանակիչ կամ միադիմի բայերի հետ, որոնք արտահայտում են պայմանական (օր.՝ Հնար է ինձ ուսանել) և հարկադրական (Պիտոյ է ինձ ուսանել) եղանակների իմաստներ:

Ստորադասական եղանակի բայաձևերը, բազմիմաստ լինելով, հայ քերականագիտության մեջ միակերպ չեն բնորոշվել, ըստ որոշ քերականների՝ նրանք բնորոշվել են իբրև սահմանական եղանակի միավորներ¹¹⁶: Օրինակ՝ Մ. Ղազարյանը

¹¹⁶ Մանրամասն տե՛ս **Հ. Ավետիսյանի** «Գրաբարի ստորադասական եղանակը և նրա ըմբռնումը հայ քերականության պատմության մեջ» հոդվածը, Բանբեր Երևանի համալսարանի, հ. 1, Եր., 1985, էջ 199-204:

«Գրաբարի դասագրքում» այն դնում է սահմանականի մեջ, իսկ «Հայոց լեզվի համառոտ պատմության» մեջ՝ ստորադասականի մեջ¹¹⁷:

Մ. Աբեղյանը, ստորադասական եղանակի բայաձևերը «Գրաբարի համառոտ քերականութիւն» աշխատության մեջ դնելով սահմանական եղանակի մեջ, ծանոթությամբ նշում է, որ որոշ քերականներ դրանք անվանում են ստորադասական եղանակի միավորներ: Իր մյուս աշխատություններում հեղինակը դրանք հանել է սահմանականի կազմից:

Դասական գրաբարի քերականության առանցքային բաժինը բայական համակարգն է, որի մանրակրկիտ վերլուծությունը մեծանուն գիտնականի՝ գրաբարին նվիրված աշխատություններում պատահական չէ: Մ. Աբեղյանն ունի այն ճշգրիտ մոտեցումը, որ բայը հայերենի խոսքակազմիչ գլխավոր միավորն է: Անկախ նրանից, որ եղանակաժամանակային հարացույցների վերլուծության իր մեկնաբանումներում հեղինակը գրաբարի բայի եղանակների թվի փոփոխություններ է կատարում, այնուամենայնիվ բայական համակարգը ձևաբանական, շարահյուսական մակարդակներում ամբողջական և մանրագնին քննության է ենթարկված նրա բոլոր աշխատություններում. մասնավորապես «Գրաբարի դասագրքի» երկու գրքերում էլ հեղինակը գրաբարի բայի կառուցվածքային, ձևաբանական և գործառական մանրակրկիտ վերլուծություն է կատարում: Արժեքավոր են նրա դիտարկումները բայաձևերի գլխավոր և երկրորդական քերականական իմաստներով, գործածությունների մասին:

Դրանց մանրամասնումը ևս պատահական չէ. դասագրքում հեղինակը ընդգրկել է բնագրային տարբեր հատվածներ, որոնց ճշգրիտ թարգմանության համար կարևոր է ոչ միայն բառապաշարի իմացությունը, այլև քերականության յուրաքանչյուր միավորի, մասնավորապես բայաձևի իմաստի ճիշտ և տեղին ընկալումը:

¹¹⁷ Տե՛ս Մ. Ղազարյան, Գրաբարի դասագիրք, Ե., 1951, էջ 66, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 111-115:

Անգնահատելի է Մ. Աբեղյանի կատարած վճռական դերը արևելահայ գրական լեզվի գիտական քերականության ստեղծման գործում. նա առաջինն էր, որ, ձեռքագատվելով ավանդական քերականագիտության կաղապարային մոտեցումներից, արդի հայերենի քերականական կառուցվածքի ուսումնասիրությունը հասցրեց մի նոր՝ բարձր մակարդակի, և շարահյուսությունը, որի քննությունը մինչ այդ սահմանափակվում էր ասպարեզում եղած քերականական աշխատությունների «Համաձայնություն» («Բաղդասութիւն», «Շարամանութիւն») բաժնով¹¹⁸, դարձրեց ձևաբանությանը հավասարաթեք համակարգված մի ճյուղ: Գրական լեզվի համակարգային առանձնահատկությունները խորությամբ ու հանգամանորեն ուսումնասիրելով՝ Մ. Աբեղյանը ներկայացրեց արդի հայերենի կառուցվածքի բազմակողմանի, ամբողջական նկարագրությունը և ժամանակակից քերականագիտության հիմքը դրեց, ուստի վստահաբար կարելի է ասել, որ այս առումով հայ շարահյուսագիտությունը բաժանվում է երկու շրջանի՝ ավանդական և աբեղյանական: Անվանի գիտնականի լեզվաբանական ուսումնասիրությունները հիքավի կարևորագույն դեր խաղացին հայ քերականագիտության տարբեր բնագավառներում, և սխալված չենք լինի, եթե փաստենք, որ այսօր էլ մեր լեզվի քերականական զանազան իրողություններ ու երևույթներ մեկնաբանելիս առաջին հերթին իբրև ելակետ ընդունվում են հենց նրա դրույթներն ու տեսակետները: Սա, անշուշտ, վերաբերում է նաև գոյականական անդամի լրացումներին առնչվող հարցերին:

¹¹⁸ Համաձայնություն ասելով՝ հասկանում էին և՛ խոսքի մասերի կապակցությունը՝ *շարահյուսություն* տերմինի առումով, և՛ կապակցության եղանակը: Տե՛ս **Այտընեան Մ.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, **Պալասանեան Ս.**, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1884, **Չամչեանց Մ.**, Քերականութիւն հայկազեան լեզուի, Մոսկվա, 1859, **Աւետիքեան Գ.**, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, **Տէր-Յարությունեան Ս.**, Քերականութիւն հայոց լեզուի, Կ. Պոլիս, 1826, **Մելիք-Թանգեան Ն.**, Աշխարհաբարի քերականութիւնը, Շուշի, 1893:

Շարահյուսագիտության մեջ ընդունված տեսակետ է, որ նախադասության գոյականական անդամը ունի երեք տեսակ լրացում՝ որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ, սակայն ավանդական քերականագիտության՝ հիշյալ հարցին վերաբերող պատկերացումները էականորեն տարբերվում էին այն մեկնաբանություններից, որոնք հետագայում այս առթիվ տրվեցին Մ. Աբեղյանի կողմից, ուստի նախքան արեղյանական ըմբռնումները ներկայացնելը հարկ էնք համարում համառոտ անդրադառնալ դրանց:

Ընդհանուր առմամբ շարահյուսական խնդիրները ուսումնասիրության առարկա դարձան՝ սկսած լատինատիպ և հունա-լատինատիպ քերականությունների շրջանից, երբ ձևաբանական ու շարահյուսական մակարդակների հստակ տարանջատում դեռևս չկար, և, հետևաբար, որոշակիորեն տարբերակված չէին խոսքի մասերն ու նախադասության անդամները: Շարահյուսական հարցերի ուսումնասիրությունը հիմնականում ընդգրկում էր խոսքի մասերի միջև կապակցության եղանակների, կետադրության, նախադասության անդամների շարադասության և խոսքի կառուցման ընդհանուր սկզբունքների քննությունը¹¹⁹: Տարբեր խոսքի մասերի, այդ թվում նաև գոյականների և ածականների կապակցության դրսևորումներին անդրադառնալով՝ քերականները փաստորեն բերում էին գոյականական լրացումների օրինակներ՝ առանց, սակայն, դրանք շարահյուսորեն անվանելու: Այսպես՝ Կդեմես Գալանոսը կապակցության եղանակները քննելիս նշում էր, որ գոյականը առանց շաղկապի կապակցվում է գոյականի հետ այն դեպքում, 1) երբ դրանք դրված են նույն հոլովով, այսինքն՝ «մինն է յայտնիչ միւսոյն» (փաստորեն նկատի ունենալով բացահայտիչ-բացահայտյալը՝ «Պետրոս՝ վէմ հաւատոյ»), և 2) երբ երկու գոյականներից մեկը դրված է սեռական հոլովով (այսինքն՝ հատկացուցիչ է՝ «երկիւղ տեառն», «այր քաջ զօրութեան»): Շրյոդերը ևս, խոսելով անունների համաձայնության մասին, նշում էր, որ գոյականը գոյականի հետ համաձայնում է թվով և հոլովով. հասկանալի է՝ խոսքը բացահայտիչ-բացահայտյալի մասին է՝ «Պօղոս առաքեալ՝ ծառայ Յիսուսի Քրիստոսի», իսկ ածականի համաձայնությունը գոյականի հետ փաստորեն ածական

¹¹⁹ Տե՛ս **Զահուկյան Գ.**, Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974, էջ 58-296:

կամ դերբայ որոշի ու գոյական որոշյալի համաձայնությունն է՝ «Վասն կենացն յաւերժական, բազմաւ համարձակութեամբ»¹²⁰:

Ինքնատիպ քերականությունների հեղինակները գոյականին լրացնող բառերի կախումային հարաբերությունները հիմնականում քննում էին ըստ խոսքի մասերի՝ ածական անվան տակ հասկանալով ածականը և՛ իբրև խոսքի մաս, և՛ իբրև նախադասության անդամ, այսինքն՝ որոշիչ, իսկ մյուս անվանումները գործածում էին շարահյուսական առումով՝ հատկացուցիչ և բացահայտիչ, հետևաբար և գոյականական անդամի համար առանձնացնում էին միայն երկու տեսակ լրացում՝ հատկացուցիչ և բացահայտիչ¹²¹: Առաջինը սահմանելու հարցում քիչ թե շատ միասնականություն նկատվում էր՝ չնայած այն հանգամանքին, որ երբեմն **հատկացուցիչ** տերմինով նշում էին նաև ածականով արտահայտված որոշիչը՝ տարբերակելով այն իբրև **ածական հատկացուցիչ** («*Բարի* մարդը իւր *բարի* գործերից է ճանաչվում»)¹²²: **Բացահայտիչ** տերմինը գերազանցապես գործածվում էր գոյական որոշիչը (տեսակ-սեռ, անհատ-տեսակ հարաբերակցությամբ), ինչպես նաև բուն բացահայտիչն անվանելու համար՝ ելնելով իշխող այն տեսակետից, թե գոյականն ու ածականը, լինելով տարբեր խոսքի մասեր, չեն կարող նախադասության մեջ նույն պաշտոնը կատարել:

Բացահայտիչի թերևս առավել սպառիչ բնորոշումը տվեց Մ. Չամչյանը՝ հաշվի առնելով դրա և՛ իմաստային, և՛ քերականական առանձնահատկությունները. «Յորժամ ի բանս կամիմք զգոյական անուն ինչ բացայայտել՝ թե յինչ միտս դնի, և կամ փոխանակ որոյ նշանակէ, յարեմք ի նոյն զայլ միւս ևս անուն գոյական՝ թուով և հոլովիւ համաձայն նմին առանց շաղկապի, և զայն կոչեմք *բացայայտիչ*»¹²³: Հատկանշական է, որ ըստ որոշ քերականների՝ միայն հատուկ անունները կամ տեսակ նշող գոյականները կարող էին բացահայտիչ դառնալ սեռի անունների համար՝ *զինուոր* մարդ, *Հռոմ* քաղաք, արքայ *Արտաշէս*, այն է՝ միայն մասնավորի

¹²⁰ **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 59, 201:

¹²¹ Ն. Մելիք-Թանգյանն առանձնացնում էր նաև որոշիչը, սակայն գոյականական լրացումները նույնպես որոշակիորեն չէր զատում միմյանցից՝ որոշ դեպքերում շփոթելով բացահայտիչն ու որոշիչը:

¹²² Տե՛ս **Պալասանյան Ս.**, նշվ. աշխ., մաս 3-րդ, էջ 19-20: Հմմտ. **Այսրենյան Ա.**, նշվ. աշխ., էջ 146-147:

¹²³ Տե՛ս **Չամչեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 145:

միջոցով կարելի էր բացահայտել ընդհանուրը (Մ. Չամչյան, Ա. Այտընյան, Վ. Չալըխյան): Քերականներից ոմանք էլ, ընդհակառակը, այն տեսակետն էին հայտնում, որ ընդհանուր հասկացությունն է բացահայտում մասնավորը, ինչպես՝ բազէ *թռչունը*, բօա *օձը*, թզենի *ծառ*, Դաւիթ *արքայ* ևն (Ս. Պալասանյան, Գ. Ավետիքյան): Այս մոտեցումները, անշուշտ, հետևանք էին այն իրողության, որ քննական քերականություններում ևս շատ դեպքերում դեռևս հստակորեն չէին տարբերակվում խոսքի մասերն ու նախադասության անդամները:

Գոյականական անդամի լրացումներին, մասնավորապես բացահայտչին առնչվող վերոհիշյալ կարծիքները քերականագիտության մեջ ընդունված մնացին մինչև Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսություն» աշխատության ասպարեզ գալը, որում հեղինակը հանգամանալից ու համակարգված քննությամբ նորովի ներկայացրեց իր մոտեցումներն ու հիմնավոր տեսակետները:

Ինչպես հայտնի է, Մ. Աբեղյանը դիմավոր բայը համարեց բուն խոսքը՝ նախադասությունը, կամ խոսքի էական մասը, իսկ նախադասության մյուս անդամները՝ բայի նկատմամբ խոսքի ստորադաս մասեր (այսինքն՝ լրացական անդամներ)՝ դրանց թվում նշելով նաև վերադիրը: Ըստ նրա բնորոշման՝ վերադիրը այն լրացումն է, որը, դրվելով գոյականի վրա, որևէ կողմից պարզում, լրացնում է նրա նշանակությունը. ընդ որում, ցանկացած գոյական, անկախ իր կատարած պաշտոնից, կարող է վերադիր ունենալ: Նա վերադիրները բաժանեց երկու խմբի՝ **մականուն** և **բացահայտիչ**. մականուն անվանեց «այն ածական կամ գոյական վերադիրները, որոնք դրվում են անվան վրա առաջից և որոշում, պարզում են անվան նշանակությունը, ինչպես՝ **բարձր** լեռներ.- **երեք** մարդ.- **այս** տունը.- **խնձորի** ծառ»¹²⁴:

Այսպիսով, Աբեղյանը մեկ ընդհանուր (մականուն) տերմինի տակ միավորեց գոյական ու ածական որոշիչները, ապա իր մոտեցման հիմքում դնելով բացահայտչի գրաված դիրքի և բացահայտյալի հետ նրա համաձայնության հատկանիշները՝ բավականաչափ հստակեցրեց բացահայտչի սահմանումը. «**Բացահայտիչ** ասվում են այն գոյական վերադիր-

¹²⁴ **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 320: Մ. Աբեղյանը վերադիրների շարքին է դասում նաև հատկացուցիչը՝ անվանելով այն սեռական վերադիր:

ները, որոնք դրվում են անվան և դերանվան վրա ետևից՝ այն հոլովով, որով դրված է բացահայտյալը, այսինքն՝ այն անունը կամ դերանունը, որի նշանակությունը որոշում է բացահայտիչը: Օրինակ՝ Անուց՝ Բագրատունյաց **մայրաքաղաքից**, շատ հեռու չէ Երազգավորսը: Խոսքովը՝ Տրդատ թագավորի **որդին**՝ մի անտառ տնկել տվավ Մամիկոնյանց նահապետի՝ **Վաչեի** ձեռքով...»¹²⁵: Ինչպես տեսնում ենք, ըստ այս բնորոշման՝ բացահայտիչ նա համարում է միայն գոյականով արտահայտված հետադաս վերադիրը, որը լրացնում է կա՛մ գոյականին, կա՛մ դերանվանը՝ քերականորեն համաձայնելով դրանց հետ: Մականուն վերադիրից բացահայտիչը հստակորեն տարբերակելու համար նա ընդգծում է վերջինիս ետադաս դիրքի և խոսքիմասային արտահայտության կարևորությունը՝ գրելով. «Բացահայտիչը կարելի է շուռ տալ և դնել բացահայտյալից առաջ ինչպես մի մականուն վերադիր: Այսպես վերևի օրինակները լինում են՝ Բագրատունյաց **մայրաքաղաք** Անուց շատ հեռու չէ Երազգավորսը: Տրդատ թագավորի **որդի** Խոսքովը մի անտառ տնկել տվավ Մամիկոնյանց **Վաչե** նահապետի ձեռքով»: «Բացահայտիչ լինում են միայն գոյականները. ածականը կարող է բացահայտիչ դառնալ, երբ գոյականաբար է գործածվում»¹²⁶: Իր այս միտքը Աբեղյանը հիմնավորում է՝ նշելով, որ վերադիրներից բացահայտիչը միշտ է դրվում բացահայտյալից հետո, և հատկապես ընդգծում է, որ այդ շարադասությունը շրջում չէ, մինչդեռ մականունները միայն շրջումով կարող են իրենց լրացյալից հետո դրվել և լոկ այն ժամանակ, երբ լրացյալ անունն ուղղական հոլովով է արտահայտված¹²⁷:

Ելակետ ունենալով իր բայակենտրոն տեսությունը՝ Աբեղյանը տարբերակեց ստորադասական կապակցության երկու տեսակ՝ **կախում** (խնդրառություն կամ վարում) և **ներունակություն**: Ներունակության հարաբերության մեջ, ինչպես նշում է նա, լրացման ցույց տված գաղափարը մտածվում է իբրև լրացյալի մեջ արդեն պարունակված կամ լրացումն ըմբռնվում է իբրև իր լրացյալի կրկնությունը այլ բառով, այնպես որ լրացումը, իր լրացյալին ստորադասվելով հանդերձ, խոսքի մեջ մի տեսակ *նրան հավասար պաշտոն է վարում* կամ թե լծորդվում, զուգորդվում է

¹²⁵ Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 320:

¹²⁶ Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 321:

¹²⁷ Տե՛ս Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 447:

նրան և *իր հոլովական ձևով կախված չէ նրանից* (ընդգծ. մերն է – Գ. Ն.). մինչդեռ կախման մեջ, ընդհակառակը, լրացումը բոլորովին այլ պաշտոն է կատարում և իր հոլովական ձևով կախված է լրացյալից: Ներունակությամբ զուգադրվում են ոչ միայն ենթական ու ստորոգյալը, այլև բացահայտիչն ու բացահայտյալը. սրանք հավասարազոր անդամներ են, հաստատում է նա, և յուրաքանչյուր բացահայտյալ արդեն պարունակում է բացահայտչի գաղափարը, այսինքն՝ վերջինս բացահայտյալի կրկնությունն է մի ուրիշ բառով և ստորադաս լինելով հանդերձ՝ նախադասության մեջ նրան համարժեք դեր է կատարում: Արեղյանն իրավացիորեն նկատում է, որ հոլովական համաձայնությունը բացահայտիչ-բացահայտյալի՝ միևնույն գերադաս անդամն ունենալու, այն է՝ միևնույն շարահյուսական պաշտոնը կատարելու արդյունք է: ««Անուց՝ Բագրատունյաց մայրաքաղաքից հեռացա» խոսքի մեջ,– գրում է նա,– բացահայտիչը՝ «Բագրատունյաց մայրաքաղաքից», իր բացահայտյալի վերաբերմամբ մի կրկնություն է ուրիշ բառով, որի ցույց տված գաղափարն արդեն պարունակվում է «Անուց» բացահայտյալի մեջ. բացահայտչի բացառական հոլովը կախված է իսկապես ոչ թե բացահայտյալից, այլ «հեռացա» բայի նշանակությունից»¹²⁸: Մա նշանակում է, որ երկուսն էլ, միևնույն առարկայի անվանումը լինելով, նույն հարաբերության մեջ են իրենց համար գերադաս մի անդամի հետ և միայն վերջինիս թելադրանքով են դրվում համապատասխան քերականական ձևով, ինչից և կարող ենք եզրակացնել, որ բացահայտիչ-բացահայտյալ կապակցության մեջ հիմնականը ոչ թե հոլովական, այլ իմաստային-շարահյուսական համաձայնությունն է:

Անշուշտ, վերն ասվածը լիովին համոզիչ կլիներ, եթե անտեսեինք տրամաբանական մի հակասություն, որը ժամանակակից քերականագիտության մեջ ևս նկատվում է: Խնդիրն այն է, որ բացահայտիչ-բացահայտյալ հարաբերության ստորադասական բնույթն ընդունելու պարագայում անպատասխան է մնում այն հարցը, թե ինչպես կարող են լրացումն ու իր լրացյալը՝ իբրև համարժեք անդամներ, հավասարապես լրացնել միևնույն գերադաս անդամին, և ինչպես կարող է նույն լրացումը միաժամանակ երկու տարբեր անդամների լրացնել:

Արեղյանի ուշադրությունից դուրս չեն մնում բացահայտչի և բացահայտյալի հոլովական, թվային և դիմային համաձայնության մանրամաս-

¹²⁸ Արեղյան Մ., Երկեր, հ. Զ, էջ 324, հմմտ. էջ 671-672 :

նությունները, որոնց անդրադառնալիս, սակայն, նա այնքան էլ հետևողական չէ և բերում է նաև այնպիսի օրինակներ, որոնք հակասում են բացահայտչին տված իր բնորոշմանը: Հիշեցնենք, որ ըստ այդ ձևակերպման՝ բացահայտիչ դառնում են միայն գոյական վերադիրները՝ դրվելով անվան և դերանվան վրա վերջում, մինչդեռ բերված օրինակներում կան և՛ տարբեր դերանուններով կամ փոխանուն ածականներով ու թվականներով արտահայտված բացահայտիչներ, և՛ բացահայտյալի պաշտոնով կիրառված դերբայական կապակցություններ: Այդ օրինակները հանգեցնում են այն մտքին, որ բացահայտիչ կարող են լինել ոչ միայն գոյականները, ինչպես հաստատում է սահմանումը, այլև նյութական իմաստ ունեցող այլ խոսքի մասեր ևս՝ լրացնելով նախադասության ամենատարբեր անդամների: Ահա մի քանի օրինակ. «Բնությունն **ինքը** կբժշկի», «Նրա մորը՝ **իրեն** հայտնեցին», «**Մենք չորսս** միասին ծունկ չոքեցինք նրա առաջ», «**Ինքս առաջինն** ուղևորվեցա դեպի այն դասարանը», «**Դրանց երկուսին** էլ մի տեղ կապեցեք», «Դուրս գալ քաղաքի փառավոր տանից և ապրել գյուղի այդ տեսակ մի հյուղում, **դա** արդարև չափազանց զգալի էր ինձ», «Անհայտության մեջ ապրել, անհայտության մեջ մեռնել, **այդ** է իմ ցանկությունը»¹²⁹: Նշենք, որ այսօրինակ հակասության հանդիպում ենք նաև ժամանակակից քերականություններում, որոնց հեղինակների կողմից բերվող օրինակներում քիչ չեն տարբեր խոսքի մասերով ու ամբողջական կապակցություններով, անգամ նախադասություններով արտահայտված բացահայտիչ-բացահայտյալներ:

Աբեղյանը տարբերակեց բացահայտչի մի առանձին տեսակ, որը շարահյուսության մեջ ընդունված է **մասնական** բացահայտիչ անվամբ և իմաստային, ձևային ու շարադասական հատկանիշներով տարբերվում է բուն բացահայտիչից: Իմաստային տեսակետից մասնական բացահայտիչը, ինչպես հայտնի է, յուրահատուկ է նրանով, որ բացահայտյալի իմաստը պարզաբանում է ոչ լրիվ ընդգրկումով, կարող է դրվել բացահայտյալից և՛ առաջ, և՛ հետո, իսկ ձևային տեսակետից բնորոշվում է կապակցման բառային միջոցներով՝ *իբրև*, *որպես* կապերի պարտադիր առկայությամբ: Հենց անկայուն շարադասությունն ու իմաստային երկվությունն էլ հիմք են տալիս եզրակացնելու, որ մասնական բացահայտիչը ոչ միայն գոյականին, այլև բային է լրացնում, ինչը և իրավացիորեն նկատում է Աբեղյանը:

¹²⁹ Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, էջ 419:

նը՝ կարևորելով նրա առաջադաս դիրքը և բացահայտյալի առկայությունն ու կատարած պաշտոնը խոսքում. «Երբեմն բացահայտյալը, երբ մի դերանուն է և ենթակա, չի դրվում, կամ **իբրև** բառով բացահայտիչը դրվում է բացահայտյալից առաջ և այն ժամանակ ստանում է հիմունքի կամ ձևի պարագայի նշանակություն: Օրինակ՝ Տեր Մուկուչն անծանոթ էր քաղաքներում ընդունված այս կարգերին. ուստի հեռվից տեսած լինելով մեզ, **իբրև** քահանա, շտապել էր մեզ ողջունելու.– Իբրև գյուղական քահանա, նա մինչև անգամ ավելի բան գիտեր, քան սպասելի էր (Մուր.)¹³⁰»:

Ամփոփելով մեր խոսքը՝ ընդգծենք, որ Մ. Աբեղյանի՝ քերականական ամենատարբեր իրողությունների վերաբերող թարմ պատկերացումներն ու համոզիչ ըմբռնումները նրա հետևորդների համար նորանոր տեսակետներ ու կարծիքներ առաջադրելու, նոր տեսություններ զարգացնելու, ինչպես նաև զանազան վիճահարույց խնդիրներ հստակեցնելու հիմք դարձան՝ արդի շարահյուսագիտությունը հասցնելով գիտական բարձր մակարդակի:

¹³⁰ Աբեղյան Մ., Երկեր, հ. Զ, էջ 420:

բ) ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԳԵՐԱԶԱՆՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԸ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ.

Մանուկ Աբեղյանը՝ 1943 թ. հիմնադրված Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադիր անդամը, հիրավի հսկայական հետք է թողել հայ միջնադարի հարուստ գրականության և նույնքան հարուստ բանահյուսության գիտական ուսումնասիրության բնագավառում: Դրա պերճախոս վկայությունն են Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հրատարակած՝ ակադեմիկոսի երկերի 8 սովոր հատորները, որոնցում զետեղված հետազոտությունները ցարդ ելակետային են և այդպիսին էլ մնալու են հետագայում:

Մեծ հայրենասերը, բազմագիտակ ուսումնասիրողը, բազմաթիվ լեզուների տիրապետողն այդ փառահեղ գիտական հեղինակությանը հասել է բնածին ձիրքով ու տիտանական աշխատասիրությամբ: Նա պատրաստել է իր սրբազան գործը շարունակողներ, որոնցից մեկը Արամ Ղանալյանն էր:

Այսօր էլ չեմ կարող մոռանալ բանասիրական գիտությունների դոկտորներ Արմենուհի Սրապյանին ու Մայիս Ավդալբեգյանին՝ այդ գեղեցիկ ու կիրթ կանանց, որոնք ամեն օր Մատենադարանում անձանձիր աշխատում էին միջնադարյան ձեռագրերի վրա՝ իրենց սիրելի ուսուցչի սկսած գործն առաջ տանելու համար:

Մ. Աբեղյանի բոլոր գրվածքներից երևում է մի չափազանց կարևոր մղում. հայ գրականագիտությունը, լեզվաբանությունը, բանասիրությունն ու բանագիտությունը համընթաց պետք է քայլեն եվրոպական զարգացած երկրների համարժեք գիտաճյուղերի հետ: Նա ժամանակին ստացել էր եվրոպական կրթություն. սովորել էր (1893-1898) Ենայի, Լայպցիգի, Բեռլինի, Փարիզի համալսարաններում:

Մ. Աբեղյանի կոթողային գործերից մեկը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» քննական բնագիրն է, որի վրա Սեթ Հարությունյանի հետ աշխատել է շուրջ 12 տարի: Ահա թե ինչ են խոստովանում քննական բնագրի հեղինակները. «Չպետք է մոռանալ, որ այս գործի վրա աշխատողներս, մեր օրվա թարմ ժամանակը չենք նվիրել սրան, այլ եղել ենք մարդիկ՝ «անպարապ» յուրաքանչյուրս մեր պաշտոնի գործերից և մեր հոգնության ժամերին ենք կատարել այդ և նույնիսկ մեր հանգստյան ժամերը նվիրել դրան տարիների ընթացքում՝ չինայելով ժամանակ և եռանդ և կրելով այդպիսի տաղտկալի գործի ծանրությունը, որ այսպիսի բազմաթիվ օրինակների բաղդատողներն ու բյուրավոր ընթերցվածները համախմբողները միայն կհասկանան, թե ինչ է»:¹³¹

Հասկանում ենք ու հպարտանում Մ. Աբեղյանի կատարածով ու պարտավոր ենք խոստովանել, որ չլինելով նրա ժամանակակիցը՝ աշակերտում ենք նրան, որովհետև նա լինելու է հետագա գիտությանը նվիրված բոլոր բանասերների մեծ ուսուցիչը:

Հայ միջնադարյան գրականությունն ունի բազմաթիվ խրթին պրոբլեմներ, վիճահարույց իրողություններ, որոնք տարբեր քննարկումների, մեկնությունների են ենթարկվել՝ սկսած XIX դարից և շարունակվում են առ այսօր: Բավական է հիշել ոսկեդարը (V դար), որը փայլեց իր պատմագրությամբ: Ծանոթ լինելով նշանավոր հայ և օտարազգի գիտնականների՝ Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու երկերին տված գնահատականներին՝ հաստատապես պետք է շեշտել, որ ամենահամոզիչը շարունակում են մնալ Մանուկ Աբեղյանի սահմանած գիտական բացատրությունները, որոնք չեն անտեսում և խոսում են միջազգային հայագիտության վարկածների մասին: Մանուկ Աբեղյանը հենվում է փաստերի վրա: Նա հեռու է վարկածային բանասիրությունից, որի հեղինակները փորձում են ուշադրություն գրավել իրենց «նորարարությամբ»: Նա գրում է պարզ ու հստակ՝ ոճ, որը հատուկ է գիտական նյութին: Այդպես մեզանում գրել են Մ. Խորենացին, Ա. Շիրակացին, Ն. Շնորհալին, Մ. Նալբանդյանը, Հ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը և մեր մյուս մեծերը, որոնք շարադրել են

¹³¹ **Մովսես Խորենացի**, «Պատմություն Հայոց» Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, նմանահանություն, Եր., 1991, էջ ԾԲ:

գրաքննադատական ու բանագիտական հոդվածներ, իրականացրել բանասիրական հետազոտություններ:

Մ. Աբեղյանը ճշմարիտ գրողի, գիտնականի, արվեստագետի, ուսուցչի պաշտպանն էր:

Աբեղյանը ջերմ հարաբերությունների մեջ է եղել Կոմիտաս վարդապետի հետ. վերջինիս հետ իրականացրել է «Հազար ու մի խաղ» բանահյուսական ժողովածուն: Բոլոր հանճարեղ մարդկանց նման Կոմիտասը առաջ է անցել իր ժամանակակիցներից և ունեցել է խիստ քննադատողներ: Նա, վերադառնալով Գերմանիայից, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում մտցնում է «Եվրոպական երաժշտության արվեստը, որի առաջ մերն անպետք բան է, և որով միայն հնարավոր է կանոնավոր քառաձայն երգեցողություն»:¹³² Այս երևույթը և ժողովրդական երգերի բովանդակությունը ոմանք անհարիր են համարել հայ եկեղեցուն և հայ մամուլում քննադատել են Կոմիտասին: Նա իրեն քննադատողներին չի պատասխանել. դա արել է Աբեղյանը: Վերջինս բացատրում է, թե Կոմիտասը սիրահար է և՛ հայ ժողովրդական երգերի, և՛ եկեղեցական երաժշտության: Ավելին, նա եկեղեցական երգերի հիմքում տեսել է զուլալ ազգային ժողովրդական երգերը¹³³: Նշանավոր բանագետը առավելություն է համարում, որ հայ եկեղեցու բեմից Վարդանանց նահատակներին նվիրված «Նորահրաշ...» շարականից հետո հնչել են ժողովրդական «Աղջի Մարան», «Էս գիշեր՝ լուսնյակ գիշեր», «Շողեր ջան» և նման երգեր:¹³⁴ Կոմիտասը ժողովրդական երգերի բնագրերից հանել է գռեհիկ, օտար բառերը, թողել անաղարտ ազգայինը, և Էջմիածին եկած ուխտավորը, լսելով կոմիտասյան ժողովրդական երգերը, խիստ տպավորված ու մխիթարված է հեռացել:¹³⁵

Աբեղյանը գիտեր հայ միջնադարյան ողջ գրականությունը՝ վարքեր, վկայաբանություններ, պատմիչներ, ժամանակագիրներ, աստվածաբանական, փիլիսոփայական երկեր, առակագիրներ, հայ հին ու նոր վեպեր, հեքիաթներ, առասպելներ, հայրեններ, անտունիներ, միջնադարյան թարգմանություններ:

¹³² Մ. Աբեղյան, Երկեր, հ. է, Եր., 1975, էջ 421:

¹³³ Նույն տեղում, էջ 423:

¹³⁴ Նույն տեղում, էջ 424-425:

¹³⁵ Նույն տեղում, էջ 426:

Նա հիանալի ձևով տիրապետում էր այն նյութին, որով զբաղվում էր: Բնագրերով ծանոթ էր աշխարհի նշանավոր էպոսներին ու նրանց շուրջը ստեղծված գրականությանը:

«Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորում է զետեղված Գրիգոր Նարեկացուն վերաբերող ուսումնասիրությունը, որում հետք անգամ չկա խորհրդային գաղափարախոսությանը տուրք տալու խնդրում: Որոշ միջնադարյան բանաստեղծների կա՛մ անունն է տվել, կա՛մ մոտ մեկ էջով խոսել է նրանց մասին: Հետագայում դա հիմք է դարձել, որ այդ բանաստեղծների քննական բնագրերը հրատարակվեն, և գրվեն մեծարժեք հետազոտություններ: Այդ բանաստեղծներից էր Գրիգոր Տղան,¹³⁶ որի քերթվածների բնագրերը ստեղծեց առաջնակարգ միջնադարագետ Ասատուր Մնացականյանը՝ հրատարակելով «Գրիգոր Տղա» գիրքը¹³⁷:

Գիտականորեն ճշգրիտ մեկնաբանելով հայ քրիստոնեական քնարերգության ընթացքը՝ հինգից մինչև տասնութերորդ դար, Արեղյանը զուգահեռներ է տեսնում այլ ժողովուրդների համանման թեմաների ու մոտիվների միջև: Նա ուշագրավ ձևով է բացատրում, թե ինչպես է ձևավորվել վարդի և բլբուլի այլաբանությունը՝ սկսած Գրիգոր Նարեկացուց մինչև ուշ միջնադար: Նրան ծանոթ է ֆրանսիական վաղ Վերածննդի հուշարձան «Le roman de la Rose» գիրքը,¹³⁸ որում միստիկական ձևով երևում են միջնադարի հիմնական թեմաներից մեկը՝ Միկրոկոսմի և Մակրոկոսմի,¹³⁹ տիեզերքի և մարդու փոխհարաբերությունները:

Արեղյանն անդրադարձել է հայ ժողովրդական երեք էպոսներին. առաջինը սկսվում է Հայկից, ձգվում մինչև Արտաշես և Արտավազդ, երկրորդը «Պարսից պատերազմն» է, որի հիման վրա ստեղծվել է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» և երրորդը՝ «Սասնա ծռերը», որի պատումների հիման վրա ստեղծվեց էպոսի համահավաք բնագիրը՝ «Սասունցի Դավիթ» խորագրով: Սասնա տան դյուցազունների մասին խոսե-

¹³⁶ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 129-130:

¹³⁷ Տե՛ս Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1972:

¹³⁸ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, էջ 322:

¹³⁹ Le roman de la Rose, Paris, 1974, p. 29.

լիս բանագետը դիպուկ նկատում է. «Դյուցազնը ժողովրդի գաղափարատիպն է, ժողովրդի ցանկության մարմնացումն է».¹⁴⁰

«Մասնա ծեռ» էպոսի գլխավոր դյուցազնը Սասունցի Դավիթն էր։ Այդ պատճառով էլ համահավաք բնագիրը, որի կազմելու աշխատանքներին կարևորագույն մասնակցություն ուներ Մանուկ Աբեղյանը, 1939 թ. լույս տեսավ «Սասունցի Դավիթ» վերնագրով։

Աբեղյանը կանոնակարգել է հայ բանաստեղծության տաղաչափությունը, գրել բառարաններ, գրաբարի քերականություն, զբաղվել հայերենի ուղղագրության բարելավման խնդիրներով։

Երջանիկ են եղել այն աշակերտները, որոնք Ներսիսյան, Շուշիի թեմական դպրոցներում, Գևորգյան ճեմարանում աշակերտել են մեծ հայագետին կամ եղել նրա ուսանողը Երևանի պետական համալսարանում, դարձել նրա ասպիրանտը։

Մ. Աբեղյանի գիտական ժառանգությունն այնքան վիթխարի է, որ դարձել է առանձին մենագրությունների առարկա։ Նրա մասին գրել են ակադեմիկոս Արամ Ղանալանյանը¹⁴¹ և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանը.¹⁴²

Մանուկ Աբեղյանն իր գիտական ժառանգությամբ խոր հետք է թողել հայագիտության բնագավառում։ Ինչպես հայ ժողովրդի պատմությունն անհնար է ներկայացնել առանց Մովսես Խորենացու «Հայոց պատմության», այնպես էլ հայ հին և միջնադարյան գրականության, հայ ժողովրդական բանահյուսության մասին հնարավոր չէ գրել առանց Մ. Աբեղյանի հիմնարար աշխատությունների։

¹⁴⁰ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ը, Եր., 1985, էջ 43։

¹⁴¹ Ա. Ղանալանյան, Մ. Աբեղյանի կյանքն ու գործը, Երևան, 1955։

¹⁴² Ս. Հարությունյան, Մանուկ Աբեղյան, կյանքն ու գործը, Եր., 1970։

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԸ՝ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

բ. գ. դ., պրոֆեսոր

Մանուկ Աբեղյանի կենսագրության ու գիտական վաստակի համակողմանի գնահատականը տվել է Սարգիս Հարությունյանը ինչպես առանձին մենագրությամբ¹⁴³, այնպես էլ տարբեր հոդվածներով¹⁴⁴:

Սույն հոդվածի խնդրո առարկան, սակայն, առանձին ուսումնասիրության չի արժանացել: Հոդվածի նպատակն է գիտականորեն արժևորել Մ. Աբեղյանի՝ Մխիթար Գոշի մասին կատարած ուսումնասիրությունները, որ արժանացել է առանձին քննության, ինչն ինքնին հաստատում է հոդվածի արդիականությունը: Մեր խնդիրն է մասնագիտորեն գնահատել գրականության պատմաբան Մանուկ Աբեղյանի՝ Գոշի մասին կատարած գիտական ընդհանրացումները՝ արդի հայագիտության լույսի ներքո: Հոդվածում կիրառել ենք կուլտուր-պատմական և արժեքանական (աքսիոլոգիական) մեթոդները: Գիտական նորույթը Մ. Աբեղյանի կողմից Մխիթար Գոշի կյանքի ու ստեղծագործության գնահատումն է՝ Գոշի մասին նորահայտ փաստերի լուսաբանմամբ:

Հենց սկզբից նշենք, որ Մանուկ Աբեղյանը Գոշի մասին ուսումնասիրությունը գրել է՝ առաջնորդվելով կուլտուր-պատմական մեթոդով, որի տեսաբանը Հիպոլիտ Տենն է: Այս մեթոդի հետևորդներն իրենց ուսումնասիրությունները կատարում էին «հաշվի առնելով արվեստի երկի ստեղծման պատմա-սոցիալական իրավիճակը (ժամանակը), ցեղային (ազգային) պատկանելությունը և կլիման (աշխարհագրական միջավայրը): Տենի ուսմունքի կարևորությունն այն էր, որ նա գիտության մեջ ամրա-

¹⁴³ Տե՛ս **Հարությունյան Ս.**, Մանուկ Աբեղյան: Կյանքն ու գործը, Եր., 1970:

¹⁴⁴ Տե՛ս **Հարությունյան Ս.**, Մանուկ Աբեղյան, Գիտական գնահատման վաստակի ուրվագիծ (*Ծննդյան 140-ամյակի առթիվ*). Պատմա-բանասիրական հանդես, 2006, թիվ 1, նաև **Հարությունյան Ս., Պողոսյան Ա.**, Մանուկ Աբեղյան. կենսամատենագիտական ակնարկ և մատենագիտություն (*ծննդյան 150-ամյակի առթիվ*), Պատմա-բանասիրական հանդես, 2015, թիվ 1:

պնդեց պատմականության մեթոդը և բացահայտեց երևույթների առաջացման պատճառահետևանքային կապը»¹⁴⁵:

Փաստենք, որ Մ. Աբեղյանը հայ միջնադարյան առակներով զբաղվել է դեռևս 1917թ., ապա 1935 թ. տպագրել է մի գիրք՝ «Հայոց միջնադարյան առակներն և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ» վերնագրով¹⁴⁶, իսկ ավելի ուշ՝ հայոց հին գրականության ակադեմիական պատմությունը գրելիս, կրկին անդրադարձել է Մխիթար Գոշին ու Վարդան Այգեկցուն՝ նրանց նվիրելով առանձին ուսումնասիրություններ, որոնք զետեղվել են Մանուկ Աբեղյանի երկերի Դ հատորում (1970 թ):

Ինչպես արդեն իսկ նկատված է հայագիտության մեջ, «1917-ի հունվարի 27-ին, դարձյալ Թիֆլիսի Հայ երաժշտական ընկերության դահլիճում, նա կարդում է հայ միջնադարյան առակներին նվիրված իր նոր հետազոտությունը: Գոշի և Այգեկցու առակների ընձեռած նյութի հիման վրա Աբեղյանը բացահայտում է առակների ժանրի մեջ անդրադարձած միջնադարյան Հայաստանի սոցիալ-դասակարգային կյանքի պատկերը»¹⁴⁷:

Ս. Հարությունյանը գրում է. «Նույն 1917-ին Թիֆլիսում Մ. Աբեղյանը հրապարակային դասախոսություն է կարդում հայ միջնադարյան առակների մասին, որի վերամշակված տարբերակը հրատարակում է 1935-ին՝ «Հայոց միջնադարյան առակներն և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ» խորագրով: Այստեղ՝ միջնադարյան արձակի այդ գոտրիկ մանրապատումներում, գրականագետի և պատմաբանի նրբատեսությամբ Աբեղյանը բացահայտում է դարաշրջանի սոցիալ-բարոյական կյանքի գեղարվեստական բազմակողմանի արտացոլումները, միաժամանակ նորովի գնահատում առակների գրապատմական արժեքը՝ ի լրումն հայկական վերածննդի իր տեսության»¹⁴⁸:

¹⁴⁵ **Քալանթարյան Ժ.**, Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն, Եր., 2017, էջ 93-94:

¹⁴⁶ Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց միջնադարյան առակներն և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ, ՀՄԽՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատությունները, հտ. 1, Եր., 1935, էջ 6-52:

¹⁴⁷ **Հարությունյան Ս., Պողոսյան Ա., Մանուկ Աբեղյան. կենսամատենագիտական ակնարկ և մատենագիտություն (ծննդյան 150-ամյակի առթիվ)**, Պատմա-բանասիրական հանդես, 2015, թիվ 1, էջ 100:

¹⁴⁸ **Հարությունյան Ս.**, Մանուկ Աբեղյան, Գիտական գնահատման վաստակի ուրվագիծ (Մոնդյան 140-ամյակի առթիվ). Պատմա-բանասիրական հանդես, 2006, թիվ 1, էջ 14:

Մ. Աբեղյանը Գոշի և Այգեկցու առակների քննությունը կատարել է՝ ելնելով ժամանակաշրջանի, ազգային միջավայրի և դասակարգային, սոցիալական հարաբերությունների քննության տեսանկյունից, այն է՝ կուլտուր-պատմական մեթոդի սկզբունքների կիրառմամբ: Անշուշտ, խորհրդային տարիների դասակարգային գաղափարախոսությունը ևս թողել է իր ոչ դրական ազդեցությունն այս ուսումնասիրության վրա, մասնավորապես առակների աբեղյանական վերլուծությունը կենտրոնացել է հիմնականում դասային և սոցիալական հարաբերությունների վրա՝ ստվերում թողնելով առակների գեղարվեստականության հարցը: Այսպես՝ Մ. Աբեղյանն առակների քննությունը վերնագրել է «Սոցիալական հարաբերությունները առակների մեջ», իսկ ուսումնասիրությունը կատարել հետևյալ հարցադրումներով՝ դասակարգային պայքարը, աշխատավորության պայքարն ազնվականության դեմ, արհեստավոր քաղաքացիներ և քաղաքացիների վերաբերմունքն առ գյուղացիները, աշխարհականի հայացքը եկեղեցականի վրա, հոգևորականության հայացքը այլազգիների հետ հարաբերության վերաբերմամբ:

Վերլուծության այս սկզբունքը կարելի է բացատրել կուլտուր-պատմական մեթոդի թերություններով, այն է՝ արվեստին կրավորական դեր հատկացնելը, անհատի դերի ստորադասումը:

Կուլտուր-պատմական մեթոդի սկզբունքների կիրառմամբ էլ Մ. Աբեղյանը ավելի ուշ՝ 40-ական թվականներին, անդրադարձել է Մխիթար Գոշին՝ այս անգամ ոչ թե սահմանափակվելով բացառապես առակների քննությամբ, այլ հայ հին և միջնադարյան գրականության պատմության ամբողջական շարադրանքում ստեղծելով Մխիթար Գոշի ընդհանրական դիմանկարը. «40-ական թվականներին Աբեղյանի հիմնական զբաղմունքն է դառնում մեր հին ու միջնադարյան գրականությունը՝ թե՛ առանձին դեմքերով ու խնդիրներով, թե՛ այն ամբողջությամբ վերցրած: Հայոց հին գրականությունը նվիրված մեծարժեք ուսումնասիրությունները և մանավանդ «Հայոց հին գրականության պատմությունը» դառնում են մեծ գիտնականի կարապի երգը»¹⁴⁹:

¹⁴⁹ Հարությունյան Ս., Պողոսյան Ա., *Մանուկ Աբեղյան. կենսամատենագիտական ակնարկ և մատենագիտություն (ծննդյան 150-ամյակի առթիվ)*. Պատմա-բանասիրական հանդես, 2015, թիվ 1, էջ 108:

Մեր խնդրո առարկայի՝ Մխիթար Գոշի կյանքի ու գործի քննությունը Մանուկ Աբեղյանը հասցրել է ոչ միայն ավարտել, այլ նաև վերամշակել է, մինչդեռ հայ հին և միջնադարյան գրականության պատմությունն ամբողջությամբ մնացել է անավարտ, քանի որ 1943 թ. ակադեմիկոս դառնալուց հետո «Աբեղյանը շարունակում է աշխատել «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորի վրա: Սակայն պատերազմական ծանր օրերը, ռազմաճակատում անհայտ կորած որդու վիշտը, օրըստօրե վատթարացող առողջությունը աստիճանաբար թեքում են «գիտության դարավոր կաղնուն» դեպի գետին և 1944 թ. սեպտեմբերի լույս 25-ի գիշերը ընդմիշտ տապալում»¹⁵⁰:

Հարցն այն է, որ Մխիթար Գոշին վերաբերող հատվածը Մ. Աբեղյանը համարել է ավարտուն, սակայն պետք է ասել, որ եղել են կենսագրական կարևոր փաստեր, որոնք դուրս են մնացել մեծ գիտնականի տեսադաշտից:

Նախ նշենք, որ Մխիթար Գոշի կյանքին անդրադառնալուց առաջ՝ «Հյուսիս-արևելյան Հայաստանի ազատումը մահմեդական բռնատիրությունից» ենթագլխով, Մ. Աբեղյանը հատուկ կանգ է առել նրա ժամանակի պատմական իրադարձությունների վրա՝ քննելով նրա ապրած ժամանակի պատմական միջավայրն ու առանձնահատկությունները, հետո նոր միայն անցում կատարել Գոշի կենսագրությանը, որը ներկայացրել է բացառապես Կիրակոս Գանձակեցու հաղորդած տեղեկությունների հիման վրա՝ գրելով. «Այս «մեծ վարդապետի» մասին կենսագրական տեղեկություններ հաղորդում է գլխավորապես Կիրակոս Գանձակեցին»¹⁵¹:

Փաստենք, որ Գոշի մասին մատենագրական վկայություններ են թողել նաև Վարդան Արևելցին, Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը, Առաքել Դավրիժեցին, որոնք դուրս են մնացել Մ. Աբեղյանի տեսադաշտից:

Այսպես՝ Գոշի կրտսեր աշակերտը՝ Վարդան Արևելցին (1198?-1271) գրում է. «Գետկայ վանք ուր աթոռն է Գոշ վարդապետին»¹⁵²: Ապա իր

¹⁵⁰ Անդ, էջ 110:

¹⁵¹ **Աբեղյան Մ.**, Երկեր, հտ. Դ, Եր., 1970, էջ 175:

¹⁵² **Վարդան Արևելցի**, Արարեալ է Աշխարհացոյց նորոգ թարգմանչին եւ երկրորդ Լուսաւորչին Վարդանայ Վարդապետին պարզ եւ համառօտ տեսութեամբ, տե՛ս Բառգիրք Հայոց, արարեալ ի Սբ. Էջմիածին Երեմիա Վարդապետէ, Կ. Պոլիս, 1728, էջ 504:

պատմության մեջ Վարդան Արևելյին գրում է Գոշի մահվան և Գետիկում թաղվելու մասին. «Եւ զկնի միոյ ամի կատարեցաւ սուրբ և սքանչելի վարդապետն Մխիթար, մականունն Գոշ Գանձակեցի, որ թաղեցաւ իւրում ձեռակերտին ՚ի Գետիկ, զոր շինեաց հրամանաւ Իւանէի քեռորդոյն մեծի իշխանին Քրդին, որոյ հրամանաւ եկեալ իսկ էր յերկիրն Կայենոյ, ՚ի Հինն կոչեցեալ Գետիկ, զի յայնմ ժամանակի նա ունէր զԿայեան հայրենեօք ՚ի Հասանայ Կայենեցոյ շինողէ բերդին»¹⁵³:

Մխիթար Այրիվանեցին, Գոշի անունը հիշատակելով հայոց պատմիչների ցանկում, ուր «Մխիթար Գոշ վարդապետ»-ին նախորդում է Սամվել քահանան՝ Սամվել Անեցին (1100/5-1185/90), և հաջորդում է Միքայել Ասորին (1126-1199)¹⁵⁴:

Գոշի անունը երկու անգամ իր «Ժամանակագրության» մեջ հիշատակել է նաև ԺԳ դարի մատենագիր Ստեփանոս Օրբելյանը (1250-1305). նախ՝ Գոշի մահվան մասին գրելով, թե «կատարի սուրբ և աշխարհալոյս վարդապետն Գոշ Մխիթարն ի Գետիկ»¹⁵⁵, ապա՝ նրա աշակերտ Վանական Վարդապետի մասին խոսելիս. «Առ այսու ժամանակաւ փայլէր ծերացեալ աւուրքքն մեծ վարդապետն Վանական, աշակերտ Գոշին»¹⁵⁶:

ԺԷ դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին հիշատակում է նրան՝ որպէս «եռամեծ վարդապետն Մխիթար՝ որ մականունն Գոշ կոչի»¹⁵⁷, ապա՝ նույն պատմության մեջ արձանագրում Գոշի մահվան թվականը. «ՈԿԲ. վախճանեցաւ Մխիթար վարդապետն, որոյ մականունն Գոշ»¹⁵⁸:

Կա մի կարևոր փաստ ևս, որ դուրս է մնացել Մ. Աբեղյանի տեսադաշտից, այն է՝ Մխիթար Գոշը Գրիգոր Տղա կաթողիկոսի աշակերտն է եղել: Այս մասին պահպանվել է ուշ շրջանի մի վկայություն, ըստ որի՝ Մխիթար Գոշն աշակերտել է Գրիգոր Տղային, ինչպես վերջինս աշակերտել է Ներսես Շնորհալուն. «Նորին աշակերտ՝ Ներսէս Կլայեցին: Նորին աշակերտ՝ Տղայ կոչեցեալ Գրիգոր: Նորին աշակերտ՝ Մխիթար Գոշ

¹⁵³ Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 140:

¹⁵⁴ Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 37:

¹⁵⁵ Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի, Եր., 1942, էջ 23:

¹⁵⁶ Անդ, էջ 25:

¹⁵⁷ Պատմութիւն Առաքել Վարդապետի Դավրիժեցոյ, Վաղարշապատ, 1884, էջ 339:

¹⁵⁸ Անդ, էջ 481:

Գանձակեցին: Սա ևս ետ գաւազան Յովհաննէս վանականին»¹⁵⁹: Բացի այս՝ պահպանվել է նաև Հայոց հյուսիսային կողմանց վարդապետների մի թուղթը՝ ուղղված Գրիգոր Տղա կաթողիկոսին, որ հաստատում է ավանդը. «Սուրբ և աստուածընկալ գլուխ մեր և պսակ պարծանաց Հայաստանեայց Գրիգոր կաթողիկոս, ամենանուաստ աղօթող աշակերտքս լուսաւորչական աթոռոյդ, Բասիլ եպիսկոպոս որ յարեւելս հիւսիսոյ, վարդապետ Գրիգոր ի Սանահին, և հայր Հովհաննէս, վարդապետք մայրաքաղաքիս Հաղպատայ՝ Իգնատիոս, Պետրոս, Վարդան և Դավիթ, Խաչատուր վարդապետ Հաղարծնին, Մխիթար վարդապետ Խորակերտոյ, եւ միւս Մխիթար վարդապետ Գետկայ, եւ այլք աշակերտեալք ամենեքեան սրբոց կտակարանաց Աստուծոյ, երկիր պագանեմք որպէս ի մօտոյ սուրբ աթոռոյդ և վերակացելումդ, և աղօթս ձիգս առնեմք վասն երկար կենաց և խաղաղութեան ձերոյ»¹⁶⁰:

Ապա Մ. Աբեղյանը ներկայացրել է Մխիթար Գոշի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը. նրան հայտնի են Գոշի անունով հետևյալ երկերը՝ «Երեմիա Մարգարէ Մխիթար վարդապետ Գոշ կոչեցեալ» մեկնությունը, «Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա, եւ ի դիմաց Եւայի առ դստերս նորա» ողբը, «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց՝ ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ» երկը, «Մխիթարայ Գոշի խրատք ոգեշափ» խրատական թղթերը, «Սուղ ինչ կանոնք» կանոնը: Ապա այս երկերի թվարկումից հետո Մ. Աբեղյանը գրում է. «Ձեռագրերի մեջ նրա անունով կան և ուրիշ երկեր, որոնցից տպագրված են «Աղոթքները», «Առակք» և «Դատաստանագիրք Հայոց»: Վերջին երկուսը Մխիթար Գոշի ամենակարևոր գրական գործերն են, և այդ երկուսն ևս ժամանակի արտահայտությունն են»¹⁶¹: Ուստի և Մանուկ Աբեղյանը Գոշի ստեղծագործության ուսումնասիրությունը նվիրում է բացառապես Դատաստանագրքին ու առակներին:

Հայագիտությանն այժմ հայտնի են Մխիթար Գոշի «Փիլոնի՝ Յաղագս նախախնամութեան առ Աղեքսանդրոս Գօշին ասացեալ պատճառ» պատճառն ու լուծմունքը, «Թուղթ առ վրացիս յաղագս ուղղափառութեան

¹⁵⁹ Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, Պոլիս, 1807, էջ 336 ա-336բ:

¹⁶⁰ Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, յԵրուսաղէմ, 1871, էջ 307-308:

¹⁶¹ Աբեղյան Մ., Երկեր, հտ. Դ, էջ 178:

հաւատոյ» դավանական թուղթը, «Ներբողեան ասացեալ ի նոր վկայն կոչեցեալ Խոսրով » վարքագրական ներբողը, «Շարք հայրապետացն Աղուանից» ժամանակագրությունը՝ որպէս ԺԱ-ԺԲ դարերի Աղվանից պատմության շարահարում, որոնք հայտնի չեն եղել Մ. Արեղյանին: Վերջին երկը չափազանց կարևոր ստեղծագործություն է, որով հաստատվում է Մխիթար Գոշի պատմիչ-ժամանակագիր լինելը, ինչը ևս հայտնի չի եղել Մ. Արեղյանին:

Մխիթար Գոշն իր այդ «Ժամանակագրության» մեջ գրում է. «Մի ըստ այդմ գրեսցուք պատճառի, երկրորդ՝ զի թէ ոք յաւժարեսցի գրել պատմութիւն զկնի գրեցերոյն պատմութեանն Մովսէսի Դասխուրանեցոյն, որ գրովանդակ պատմէ գտանս Աղուանից, դիւրին լիցի յայսմանէ զչար հայրապետացն առնուլ, զի ոչ զամենեցուն՝ անուն ի նորայն գտցէ պատմութեան, բայց զայնոցիկ, զորոց գրեաց»¹⁶²: Մխիթար Գոշն Աղվանից բովանդակ, այն է՝ ողջ պատմության հեղինակ համարում է Մովսէս Դասխուրանցուն, ապա ինքը ևս կատարում է հավելում Դասխուրանցու պատմությանը՝ գրելով. «Զի յայն ժամանակէ մինչեւ ցայժմ ոչ ոք գրեաց. եւ թէ պատահի ոք, յոյժ հարկաւոր է»¹⁶³:

Փաստենք, որ է դարում Մովսէս Կաղանկատվացու կողմից գրված Աղվանից աշխարհի պատմությունը Ժ դարի վերջերին լրացրել է Մովսէս Դասխուրանցին, իսկ ԺԲ դարում Մխիթար Գոշը մի հատված է հավելել, որով էլ ավարտվում է Աղվանից աշխարհի պատմությունը, որով **Մխիթար Գոշը դասվում է հայ պատմագիրների շարքը, ուստի ամենին էլ պատահական չէ ԺԳ դարի մատենագիր Մխիթար Այրիվանեցու կողմից Մխիթար Գոշի անունը հայ պատմիչների ցանկում հիշատակելը:**

Եթե Մ. Արեղյանը մեր կողմից կատարված այս լրացումներին կարող էր ծանոթ լինել, սակայն տարբեր պատճառներով դրանք դուրս են մնացել նրա տեսադաշտից, ապա որտեղից իմանար մեծ գիտնական-հայագետը, թե իր մահից մեկուկես տասնամյակ անց ինչ-որ աղբրեղանցի Զիա Բունիաթով կարող էր Մովսէս Կաղանկատվացուն, Դավթակ Քերթոզին, Մովսէս Դասխուրանցուն, Կիրակոս Գանձակեցուն, Մխիթար Գոշին և

¹⁶² **Մխիթար Գոշ**, ժամանակագրութիւն, տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. Ի, Եր., 2014, էջ 605:

¹⁶³ Մատենագիրք Հայոց, հտ. ԺԵ, Երևան, 2011, էջ 430:

այլոց դիտել աղվանական գրականության մեջ՝ վերջիններիս համարելով իր նախնիները¹⁶⁴:

Թեև կենդանի չէր Մանուկ Աբեղյանը, սակայն նրա գործի շարունակողները՝ Ասատուր Մնացականյանը, Պարույր Սևակը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, արժանիորեն պատասխան տվեցին հայագիտությանն ուղղված այդ անհիմն մարտահրավերին¹⁶⁵, որը, ցավոք, այժմ էլ կանխամտածված շարունակվում է ադրբեջանական քաղաքական քարոզչամեքենային լծված բունիաթովական կեղծ գիտական դպրոցի շառավիղների կողմից¹⁶⁶՝ անշուշտ, ստանալով արժանի հակահարվածներ արդի հայագետներից¹⁶⁷:

Ամփոփենք, Մ. Աբեղյանը Մխիթար Գոշի մասին իր ուսումնասիրությունը կատարել է՝ առաջնորդվելով կուլտուր-պատմական մեթոդով, ուստի անդրադարձել է նրա ապրած ժամանակին, այնուհետև կյանքի ու ստեղծագործության ընդհանուր բնութագրին, սակայն կենսագրական որոշ փաստեր դուրս են մնացել նրա տեսադաշտից՝ մատենագրական աղբյուրների ոչ ամբողջական քննության պատճառով, իսկ Գոշի ստեղ-

¹⁶⁴ Տե՛ս **3. Бунятов**, *Азербайджан в VII-IX вв.*, Баку, 1965:

¹⁶⁵ Տե՛ս **Մնացականյան Ա.**, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, նաև նույնի ռուսերենը՝ **Асатур Мнацаканян**, *О литературе Кавказской Албании*, Ереван, 1969, նաև **Асатур Мнацаканян, Паруйр Севак**, По поводу книги З. Бунятова «Азербайджан в VII-IX вв.», Պատմա-բանասիրական հանդես, 1967, թիվ 1, էջ 177-190, նաև **К. А. Мелик-Оганджаниян**, Историко-литературная концепция З. Бунятова, Вестник архивов Армении, Ереван, 1968, թիվ 2, էջ 169-190, նաև К. Мелик-Оганджаниян, Еще раз о национальной принадлежности Мхитара Гоша, автора «Судебника», Вестник архивов Армении, Ереван, 1969, թիվ 1, էջ 183-198:

¹⁶⁶ Տե՛ս **Ф. Мамедова**, Интерпретация новых дополнительных глав парижского списка «Истории албан» Моисея Каланкатуйского в свете эпиграфических данных Гандзасарского храма (Тез. докл. всесоюзной научной сессии «Актуальные проблемы изучения и создания письменных источников», Тбилиси, 1982), http://vestikavkaza.ru/interview/Farida-Mamedova-Istoriya-kavkazskoy-Albanii.html?utm_referrer=https%3A%2F%2Fzen.yandex.com

¹⁶⁷ Տե՛ս **Акопян А. А., Мурадян П. М., Юзбашян К. Н.**, К изучению истории Кавказской Албании (По поводу книги Ф. Мамедовой «Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э. - VIII в. н. э.)»), Պատմա-բանասիրական հանդես, 1987, թիվ 3, էջ 166-189, նաև **Мушегян А. В.**, *Псевдоалбанская литература и ее апологеты*. Լրաբեր հասարակական գիտությունների, 1989, թիվ 8, էջ 16-33, նաև **Շոխազարյան Վ.**, Պատասխան ադրբեջանցի պրոֆեսորին, «Գրական թերթ», 2018, մարտի 23, նաև **Ехизарян В.**, Контраргументы – против “аргументов” азербайджанского историка Фариды Мамедовой: О Мхитаре Гоше и его “Судебнике”, <http://haydzayn.am/p/60197>, նաև **Բախչինյան Հ.**, Բունիաթովականություն և ալիեականություն, «Ազգ» օրաթերթ, 27.04.2018:

ծագործությունից ինչ-ինչ գործեր պարզապես հրապարակված չեն եղել՝ այն ժամանակ անհայտ լինելով հայագիտությանը, ուստի Մ. Աբեղյանի հիմնական քննության առարկա են դարձել Գոշի առակներն ու Դատաստանագիրքը: Իսկ Գոշին աղվանցի համարելու կեղծ գիտական տեսակետը շրջանառվել է Մ. Աբեղյանի մահից հետո, որին վերջինս անհաղորդ է եղել:

**ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ՀԱՅՐԵՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱ
ԱՆՈՒՆՈՎ ՄԵԶ ՀԱՄԱԾ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ
ՏԱՂԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

ՎԱՆՈ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

բ. գ. դ., պրոֆեսոր

Հայագիտության մեջ դեռևս 1882 թ. Արիստակես վարդապետ Տեկանցը սկզբնավորել է մի թյուրիմացություն, ըստ որի՝ հայկական ժողովրդագուսանական հայրենները վերագրվել են Նահապետ Քուչակին: Այդ թյուրիմացությանը սկզբում նպաստել է Արշակ Չոպանյանը¹⁶⁸, հետագայում առավելապես Ավետիք Ղուկասյանը¹⁶⁹, Մկրտիչ Մկրյանը¹⁷⁰ և այլք:

Թեև հայագետների մեծ մասը՝ Տ. Պալյանը¹⁷¹, Մ. Աբեղյանը¹⁷², Ա. Մնացականյանը¹⁷³, Օ. Եզանյանը¹⁷⁴, Պ. Սևակը¹⁷⁵, Հ. Սահակյանը¹⁷⁶, Ս. Հարությունյանը¹⁷⁷, Շ. Գրիգորյանը¹⁷⁸, Խ. Ամիրյանը¹⁷⁹, Պ. Խաչատրյա-

¹⁶⁸ Տե՛ս Ա. Չոպանյան, Նահապետ Քուչակի դիվանը, Փարիզ, 1902:

¹⁶⁹ Տե՛ս Նահապետ Քուչակ, Հայրենի կարգավ, Եր., 1957, էջ 3-35:

¹⁷⁰ Տե՛ս Մ. Մկրյան, Նահապետ Քուչակ, տե՛ս Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր, Եր., 1976, էջ 464-476:

¹⁷¹ Տե՛ս Տ. Պալյան, Անյիշատակ հայ աշուղ մը, Հանդես ամսօրյա, 1897, էջ 344-345:

¹⁷² Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Բ, Ե., 1967:

¹⁷³ Տե՛ս Ա. Մնացականյան, Հայրենների և Նահապետ Քուչակի մասին, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1958, թիվ 2, էջ 234-257, Աս. Մնացականյան, Միջնադարյան սիրո հայրենների անդրանիկ ժողովածուն և հայրենների հարցը, տե՛ս Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության, Եր., 1971, էջ 96-126, Հայրեններ, աշխ. Ա. Մնացականյանի, Եր., 1995, էջ 8-40:

¹⁷⁴ Տե՛ս Օ. Եզանյան, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, Բանբեր Մատենադարանի, թիվ 5, 1960:

¹⁷⁵ Տե՛ս Պարույր Սևակ, Մայաթ-Նովա, Եր., 1987, էջ 110:

¹⁷⁶ Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, աշխ. Հ. Սահակյանի, հտ. Ա., Եր., 1986:

¹⁷⁷ Տե՛ս Ս. Հարությունյան, Նահապետ Քուչակ, տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 8, Եր., 1982, էջ 172-173, Ս. Հարությունյան, Հայրենների խնդիրը և Ասատուր Մնացականյանի գիտական նոր համահավաքը, Պատմա-բանասիրական հանդես, 1996, թիվ 1-2, էջ 153-168:

¹⁷⁸ Տե՛ս Շ. Գրիգորյան, Հայ հին գուսանական երգեր, Եր., 1971, Շ. Գրիգորյան, Ո՞վ է, ի վերջո, Նահապետ Քուչակը, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1984, № 7, Շ. Գրիգորյան, Ո՞վ է իրականում Նահապետ Քուչակը, Բազմավեպ, 2000, ՃՄԸ 1-4, էջ 231-246, Շ. Գրիգորյան, Հայ աշուղական գրականության պատմություն, Եր., 2002, էջ 76-102:

¹⁷⁹ Տե՛ս Խ. Ամիրյան, Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանյան Կայսրություն. 16-20-րդ դարեր, Փարիզ, 1993:

նը¹⁸⁰, Վ. Եղիազարյանը¹⁸¹, չեն ընդունել Քուչակին որպես հայրենների հեղինակ, այլ իրավամբ համարել են աշուղ, սակայն հայրենները թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով և տարածվել որպես Նահապետ Քուչակի ստեղծագործություն¹⁸²:

Սույն հոդվածի արդիականությունը հայրենների տաղաչափության և Քուչակի աշուղական երգերի տաղաչափության համեմատական քննությունն է, որով ևս հիմնավորապես հերքվում է հայրենների՝ Նահապետ աշուղ Քուչակին վերագրելու անհիմն վարկածը:

Հոդվածի նպատակն է համեմատության մեջ ցույց տալ, որ հայրենների տաղաչափությունը ոչ մի կապ չունի ձեռագրերով մեզ հասած և աշուղներից գրի առնված Քուչակի աշուղական երգերի տաղաչափության հետ: Խնդրո առարկան աշուղ Քուչակ Վանեցու հայատառ թուրքերեն երգերի և հայրենների տաղաչափության քննությունն է, որ կատարում ենք հերմենևտիկայի մասնագիտական, ինչպես նաև վերլուծական, համադրական, համեմատական մեթոդների կիրառմամբ:

Այսպես՝ նախ քննենք թյուրիմացաբար քուչակյան համարված հայրենների հարցը:

¹⁸⁰ Տե՛ս Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ. **Պ. Խաչատրյանի**, Եր., 2000:

¹⁸¹ Տե՛ս Վ. Եղիազարյան, Հայրեններ, Վանաձոր, 2007, Վ. Եղիազարյան, Քուչակյան թյուրիմացություն, թե՛ անիմացություն, Գրական թերթ, 2008, 25 հունվարի, Վ. Եղիազարյան, Նահապետ Քուչակը և նրա անունով մեզ հասած երգերը, Գրականագիտական հանդես, 2016:

¹⁸² Տե՛ս **Ֆրանսերեն**՝ Tchobanian A., La roseraie d'Armenie, t. 2, Paris, 1923, նաև Cent poèmes d'amour d'exil /par Nahapet Khutchak; Trad. par Vahé Godel. Paris : Orphee; La difference, 1991. 125 p., նաև **ռուսերեն**՝ Nahapet Kuceac, Cântece - ANI – Anuarul culturii armene, București, 1941, pag. 256. Traducere de Mircea Gheorghiu și Gr. Avakian, նաև **անգլերեն**՝ Blackwell, Alice Stone. Armenian Poems, Rendered into English Verse. Boston, MA: Atlantic Printing Company, 1917, նաև Come Sit Beside Me and Listen to Kouchag: Medieval Poems of Nahabed Kouchag. Translated by Diana Der Hovanessian. Ashod Press, 1984, 85 p., նաև A hundred and one hayrens /Nahapet Kouchak; Introd. by W. Saroyan; English transl. by E. Osers. Yerevan : Nairi, 1998. 127 p. A hundred and one hayrens =Հարյուր ու մեկ հայրեն /Nahapet Kouchak; Design by G. Marikian. Yerevan: Nairi, 2012. 108 p., նաև **բուլղարերեն**՝ Нахабед Кучак: Синя птица, златно перо: стихотворения, Пловдив: Изд. Хоризонти, 2009, 128 с. Подбрал и превел превод Марко Марков, նաև Нахабед Кучак: Целувката, която ти дари ми...- София Пловдив: Парекордзаган, 2011.- 63 с. Превод от арменска език Агоп Мелконян, նաև **ռուսերեն**՝ Песни любви, пер. А. Амбарцумяна, СПб, 1904, նաև Наапет Кучак. Стихотворения, пер. Ал. Степана, предисл. М. Мкряна, Ер., 1941, նաև Сто и один айрен, предисл., составл., подстроч. пер. Л. Мкртчяна, Ер., 1976, նաև **գերմաներեն**՝ Hundertundein Hairen /Von Nahapet Khutchak. Jerewan : Nairi, 1999. 106 S. Hundertundein hairen =Հարյուր ու մեկ հայրեն /Nahapet Khutchak; Umschlaggestaltung von G. Marikian. Jerewan: "Nairi", 2012. 105 S. և այլն:

Հայրեն բառը Մ. Աբեղյանը կապել է *հայկական* բանաստեղծության հետ, Ավ. Ղուկասյանը այն փորձել է կապել *հայրենիք*, Պ. Սևակը՝ *հայ* բառի հետ, մինչդեռ Ա. Մնացականյանը գրում է. «Հայ» բառը հեր կամ հար՝ ձևով չի կարող հնչել, իսկ «հայր»-ը հնչել է և՛ մեկով, և՛ մյուսով: Դա արդեն որոշիչ նշանակություն ունի և իրավունք է տալիս հայրեն, հայրեն ձևի հիմքում տեսնել *հայր* արմատը: Հետևապես *հայրեն (հայրենի)* բառը պիտի ընկալել հայրական (հայրենի) իմաստով, ինչպես որ այն պահպանված է «հայրենի կարգալ» դարձվածքում («հայրենի»)»¹⁸³:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի հեղինակները *հայրենի* բառը բացատրում են որպես «սեփական հոր, և հարց, և նախնեաց. հայրական, հայրենեան. և իւրական, սեպհական, պապենական, հին, բուն»¹⁸⁴, որով ևս հաստատվում է հայրենների կապը նախնայաց երգարվեստի հետ:

Մանուկ ան մանկանն ասեմ,
Որ հնտրէ հայրէն ու ասէ.
ԶՀայրենն ի դաթարն ասէ,
Որ ետն դալատ չի բերէ¹⁸⁵:

«Ղաթար»-ը չափն է, իսկ Մ. Աբեղյանը «Հայրենի առանձնահատուկ ուրիշ» գլխում¹⁸⁶ նկատել է, որ հայրենի բանաստեղծական չափը 15-վանկանի յամբ-անապեստյան կազմությամբ վանկաշեշտային ոտանավորն է՝ 7+8 հատվածով, որին հատուկ է պարտադիր շեշտը 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ, 12-րդ, 15-րդ վանկերում: Սա հայրենի ժանրակազմ կարևորագույն առանձնահատկությունն է՝ պարտադիր և կրկնվող բոլոր հայրեններում, իսկ հայրեն ասողը այնպես պիտի ասի, որ *«դալատ»-պակասություն, թե-րություն* չլինի: Ուրեմն՝ հայրենի համար անչափ կարևոր է բանաստեղծական ձևը, կազմությունը, և պատահական չէ, որ այս հայրենում հատուկ անդրադարձ է արվել նշված խնդրին, քանզի հայրենի ժանրակազմ գլխավոր առանձնահատկությունը հենց ձևի մեջ է: Հայրենի ժանրի բնորոշման համար կարևոր է նաև դրա կատարման եղանակը, արտահայտման կերպը:

¹⁸³ Հայրեններ, աշխ. Աս. Մնացականյանի, էջ 34:

¹⁸⁴ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 34:

¹⁸⁵ Հայրեններ, աշխ. Աս. Մնացականյանի, էջ 58:

¹⁸⁶ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Բ, էջ 38-53:

Կասեմ, թէ հայրէն ասա,
Թէ չէ ես ասեմ՝ դուն լսէ.
Զբերանդ ալ քենով ածէ
Ու զականջդ ալ ի զոց դու պահէ¹⁸⁷:

Այս հայրենի **«ես ասեմ՝ դուն լսէ»** արտահայտությունը մեզ բառացիորեն հիշեցնում է ժողովրդական ստեղծագործություններին հատուկ դիմելաձևը, ասացող զուսանի խոսքը:

Հայրենների ժանրակազմ առանձնահատկությունների տեսական բնութագիրը տվել ենք մեր «Հայրեններ» ուսումնասիրության մեջ, ըստ որի՝

«1. Հայրենը 7 և 8 վանկանի կիսատողերից կազմված 15 վանկանի ոտանավորն է՝ կառուցված վանկաշեշտային սկզբունքով, և ունի յամբանապետյան կազմություն, այսինքն՝ շեշտակիր են 2, 5, 7, 10, 12, 15-րդ վանկերը:

2. Հանգավորված են բոլոր 15-րդ վանկերը:

3. Հայրենի մեկ տունը կարող է լինել 2-10 տողանի, հիմնականում՝ 8 տողանի (վերջինս տաղաշարքերում ավելի հաճախադեպ է):

4. Հայրեններին բնորոշ է տաղաշարքեր կազմելու հատկությունը:

5. Թեև հայրենների երաժշտությունը մեզ անհայտ է, սակայն պիտի ընդունենք, որ դրանք ունեցել են առանձնահատուկ երաժշտություն, որով ասվել կամ երգվել են»¹⁸⁸:

Այս նշված հատկանիշները կայուն են և կրկնելի բոլոր հայրենների համար, այսինքն՝ հայրենի ժանրը բնութագրվում է վերոհիշյալ ժանրակազմ առանձնահատկություններով:

Հայրենների և Քուչակի աշուղական երգերի տաղաչափությանն անդրադարձել է Շավիղ Գրիգորյանը՝ գրելով, թե «հայրենները հայրենական են, աշուղականը՝ օտարամուծ, հայրենները միայն մերն են, աշուղականը՝ նաև մերը»¹⁸⁹: Ավելին՝ աշուղական երգերը և հայրենները «ժանրային առումով միանգամայն տարբեր և այլասեռ ստեղծագործություններ» են, որոնց ոչ միայն չի կարելի նույնացնել, այլև շփոթել անգամ չի կարելի¹⁹⁰:

¹⁸⁷ Անդ, էջ 316:

¹⁸⁸ Վ. Եղիազարյան, Հայրեններ, Վանաձոր, էջ 36-37:

¹⁸⁹ Անդ, էջ 90:

¹⁹⁰ Տե՛ս անդ, էջ 91:

Շ. Գրիգորյանը իրավացիորեն պնդում է, որ հայրենները կապ չունեն Քուչակի անվան հետ, վերջինս մի աշուղ է՝ հայատառ թուրքերեն երգերի հեղինակ, որի «աշուղական հայատառ թուրքերեն երգերը, հիրավի բարձրարվեստ գործեր են՝ Սայաթ-Նովայի, Բեսիկիի, Վազիֆի, Սաիբ և Կովսի Թավրիզեցիների, Վիդադիի, Սալմաստեցի Ղուլ-Հարությունի, Դավաթ-Մուրադի, Շիրինի, Դավիթ Քեշիշ-օղլու ստեղծագործություններին համահավասար: Հենց այն բանը, որ այդ երգերը գրի են առնվել ու պահպանվել Թավրիզում, Հայաստանի հեռավոր շրջաններում, Թիֆլիսում և այլուր, խոսում են Քուչակի ունեցած մեծ համբավի, ճանաչված լինելու մասին»¹⁹¹:

Սակայն, ցավոք, աշուղագետը կանգ չի առնում աշուղական տաղաչափական ձևերի և հայրենների տաղաչափական առանձնահատկությունների վրա, որով առավել հստակ է դառնում, որ հայրենները որևէ կապ չունեն աշուղ Քուչակի հետ:

Այժմ կանգ առնենք աշուղ Քուչակի անունով մեզ հասած մի քանի հայատառ թուրքերեն աշուղական երգերի վրա՝ ուշադրություն դարձնելով դրանց տաղաչափական առանձնահատկություններին:

Գաղտնիք չէ, որ աշուղական երգարվեստն ունի իր նրբությունները և տաղաչափական հնարանքները: Ինչպես արդեն իրավամբ նկատված է, «հայ գուսանը մուսուլմանական աշխարհում վերածվում է պարսկալեզու, ապա առավելապես թուրքալեզու միստիկ-աշուղի»¹⁹²: Դրանով է բացատրվում աշուղ Սայաթ-Նովայի (և նրանից առաջ հանդես եկած բոլոր աշուղների) թուրքերեն ստեղծագործելը:

Բլբուլ է կատարյալ խոսքի իմաստը,
Խոսքի (այս) իմաստը քառսուն ոտք ունի,
Իմ սիրտը քաղաք է, հազար տեսակ է,
Ինչպիսի քաղաք է, քառսուն ոտք ունի:

Ինչպիսի քաղաք է, քառսուն պահակ կա,
Քառսունի հոգսերին մեկն է ենթակա,
Թանաքաման, քառսուն ծայր, մի փախչող մոլլա,
Ինչպիսի մոլլա է, քառսուն ոտք ունի:

¹⁹¹ Շ. Գրիգորյան, Հայ աշուղական գրականության պատմություն, էջ 89:

¹⁹² Հ. Բախչինյան, Սայաթ-Նովա, էջ 106:

Քուչակն ասում է փողոց է սա մի,
Հաշվիր այս փողոցը, տես քանի կանի,
Թող քառսուն աշուղ գա այս խոսքը բացի,
Խոսքի այս իմաստը քառսուն ոտք ունի¹⁹³:

Նկատենք, որ այս երգն աշուղական հարցեր առաջադրող, վարպետ աշուղի երգած **դափուլամա** է («նշանակում է **փականքաբար**, կոչվում են այն երգերը, որոնց ամեն մի տողում կամ երկտողում մի հարց է առաջարկվում»¹⁹⁴), իսկ «բաս» մտած մրցակցող աշուղը փորձում է հանկարծախոսությամբ տալ պատասխանը:

Ինչպես գրում է Գ. Լևոնյանը, «Հակառակորդը յուր բոլոր ուժը, ընդունակությունը, շնորհքը գործ է դնում, որ նրա երգելու միջոցին մտքի մեջ մեկնե բոլոր հարցերը ու ոտանավորի վերածե նույն չափով ու հանգով: Այստեղ է, ահա, աշուղական արվեստի ամենադժվարին կողմը, այստեղ է աշուղի հանկարծախոսության (եմբոլվիսասիոն) ընդունակության չափը հայտնի լինում»¹⁹⁵:

Աշուղական երգին հատուկ է գեղեցկուհու արտաքինի գովք-փառաբանությունը, որը «Վարսաղ Քուչակին» երգում ինքնատիպ արտահայտություն է գտել.

Շրթներդ նման են քաղցր շաքարի,
Հասակդ տոսախ է, նագդ՝ անթերի,
Ելել է բլբուլը թովիչ շուրջպարի,
Ճեմում է դյուրված վաղ առավոտից¹⁹⁶:

Հարկ է փաստել, որ **վարսաղը** ևս աշուղական տաղաչափական երգատեսակ է, որի մասին գրել է նաև աշուղագետ Գ. Լևոնյանը¹⁹⁷:

Աշուղական բանաստեղծության ինքնատիպ տեսակ է **թեջնիսը**, որի մի գեղեցիկ նմուշ է Քուչակից մեզ հասած թուրքերեն երգը՝ «Երբ տգետը գիտունից դաս չի առնում» սկսվածքով, որ վերնագրված է «Թեջնիս»:

¹⁹³ **Օ. Եզանյան**, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, Բանբեր Մատենադարանի, թիվ 5, 1960, էջ 467-468:

¹⁹⁴ **Գ. Լևոնյան**, Երկեր, Եր., 1963, էջ 184:

¹⁹⁵ Անդ, էջ 189:

¹⁹⁶ Անդ, էջ 478:

¹⁹⁷ Տե՛ս **Գ. Լևոնյան**, Երկեր, էջ 177:

Տգետը նետվում է վեճի առ ճակատ,
Գիտուն մարդն ընտրում է գոհարագարդ պայտ,
Աստծո առյուծը Ալին է՝ Սուրբըն այդ,
Նա Քառասնյաց առաջնորդն է, ի՞նչ կասեք¹⁹⁸:

Այստեղ Քուչակը հեզնում է Սուրբ Ալին: Պահպանվել է նաև մի գրույց, ըստ որի՝ աշուղ Քուչակը և մի թուրք աշուղ Բաղեշում մրցում են. հաղթում է Քուչակը: Պարտված թուրք աշուղը վիրավորում է Քուչակին՝ վագող խոզին հայ տերտեր անվանելով, իսկ Քուչակը բառախաղով ետ է վերադարձնում վիրավորանքը: Մուսուլմանական միջավայրում գործող հայ աշուղը քրիստոնեական հավատի ու պատգամների քարոզիչ-երգիչ է, որն ակնհայտ է այս **դռմա թեջնիսում**.

Վանլի Քուչակն ասաց՝ աղքատ եմ ու որբ,
Մեկ Աստված գիտեմ՝ նրան եմ հետևորդ,
Թոչնաբարբառ մարգարեին Սողոմոն,
Թե դրախտի թռչուն կոչենք, ի՞նչ կասեք¹⁹⁹:

Ղռման 11-վանկանի 6+5 հատածով աշուղական տաղաչափություն ունեցող երգ է, որի առաջին տան 2-րդ և 4-րդ տողերը վերջանում են նույն բառով, որը կրկնվում է բոլոր հաջորդ տների 4-րդ տողի վերջում, որին նախորդող բառերը ունենում են ներքին հանգ, իսկ 2-րդ տնից սկսած՝ մյուս բոլոր տների 1-ին, 2-րդ և 3-րդ տողերն ավարտվում են նույն հանգով: Իսկ թեջնիս երգատեսակին հատուկ է միևնույն բառը տարբեր տների մեջ հիմնական, հականիշ կամ բոլորովին այլ իմաստներով գործածելը, ուստի թեջնիսի տների վերջին բառերը թեն միանման են, սակայն ունենում են տարբեր նշանակություն:

Մի խոհական երգ է «Ով գիտուններ, ինձ տանջում է...» սկսվածքով **դիվանին**, որի տաղաչափությունը 15-վանկանի է՝ 4+4+4+3 հատածով:

Ով գիտուններ, այս երեքը՝ երեք անկեղծ չեն լինի,

Երեքն էլ այս աշխարհում հույս չեն՝ մի ձի, մի թուր, մի կին²⁰⁰:

Մուսուլմանական աշխարհում տղամարդու պատվի խորհրդանիշեր են ձին, թուրը և կինը, մինչդեռ աշուղ Քուչակն ակնարկում է նաև դրանց անհուսալի լինելը:

¹⁹⁸ Նահապետ Քուչակ. աշուղական երգեր, աշխատասիրությամբ Վանո Եղիազարյանի, Եր., 2017, էջ 105:

¹⁹⁹ Անդ:

²⁰⁰ Անդ, էջ 107:

Ով գիտուններ, այս երեքը թե մեկտեղվեն՝ պարզն է,
Քոչաքներին թող վիճակվի՝ մի լուր, մի բախտ, մի դրախտ²⁰¹:

Այս վերջին տողը թարգմանված է «Koçaklara nasib olsun bir çav bir uğur bir ahret» թուրքերեն տողից: **Koçaklara** նշանակում է «**Կոչաք, քոչաքություն, քոչաքներ**»: Անատոլիայում **քոչաքներ** էին անվանվում այն տղամարդիկ, որոնք թաքնվում էին կանացի զգեստի մեջ և հատուկ շարժումներով պարեր պարում²⁰²: Սա հատկապես շեշտում ենք, որ բանասիրության մեջ նոր շփոթի տեղիք չտա: Իսկ երգի վերջում աշուղը կրկին տալիս է իր անունը.

Քուչակն ասաց, այս երեքի մեկտեղումն է կատարյալ,
Մեկմեկու յար կլինեն մի լեզու, մի միտք, մի աշխարհ²⁰³:

«Բենդի-Մահու» հայատառ թուրքերեն **դյուպեիս** երգը Բերկրի գետի գովքն է, որի վերջում աշուղ Քուչակը վկայում է, որ Վանն իր հայրենիքն է:

Հանց աշուղ Քուչակի վաթան,
Փառավորվես, դու չքնաղ Վան²⁰⁴:

Այս թուրքերեն երգը գրառվել է աշուղներից, ուստի «Բենդի՝-Մահու՝ բենդ իւսթինէ,/ Աղըրբեջան եօլ իւսթինէ» տողերը Հ. Աճեմյանը տպագրել է այնպես, ինչպես լսել է խառակոնիսցի աշուղ Ուստա Ղազարից, որն էլ իր հերթին սովորել է այս երգն իր համագյուղացի Կուլիջանից, իսկ վերջինս աշակերտել է Պոլսում՝ աշուղ Լիսանին²⁰⁵: Իրականում այստեղ խոսքը ոչ թե Աղըրբեջանի մասին է, այլ Առեստավան քաղաքի, որ հենց Բերկրի գետի եզերքին է: Բենդի-Մահու՝ Բերկրի գետն անցնում է Առբերան գավառի կենտրոն Առեստավան քաղաքով, որն անվանվել է նաև Բանդումահի, Բանդիմահի, Եռաստավան և այլն²⁰⁶: Պարզ է, որ խոսքն այստեղ հենց Առեստավան քաղաքի մասին է, ուստի թարգմանության մեջ կատարել ենք այդ ուղղումը:

²⁰¹ Անդ:

²⁰² Տե՛ս <http://www.radikal.com.tr/radikalist/bir-anadolu-kulturu-koceklik-hakkinda-10-sey-1217103/>, հասանելի էր 21.02.2017թ. նաև <http://www.hurriyet.com.tr/kastamonuda-kocek-yasagi-40095502>, հասանելի էր 21.02.2017:

²⁰³ Նահապետ Քուչակ, աշուղական երգեր, աշխատասիրությամբ Վանտ Եղիազարյանի, էջ 107:

²⁰⁴ Անդ, էջ 99:

²⁰⁵ Տե՛ս «Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության» ժողովածուն, Էջմիածին, 1917, էջ 93:

²⁰⁶ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. Ա, Եր., 1986, էջ 325:

Բենդի-Մահու, հենց հանգույցին,
Առեստավանն է քո ճամփին.
Բլբուլը թառել է վարդին,
Քեզ Բենդի-Մահու են ասում²⁰⁷:

Երգի մեջ հիշատակված Արճեշը Վանա լիճն է կամ նրա ափին գտնվող Արճեշ քաղաքը:

Աջ կողմումդ վճիտ ջրեր,
Ձախից Արճեշը կդիտեր,
Ափիդ բուրում են ալ վարդեր,
Քեզ Բենդի-Մահու են ասում²⁰⁸:

Առբերան գավառում է գտնվում նաև Բերկրիի գեղատեսիլ ջրվեժը:

Աշխարհի ունայնության մասին է «Արի, քեզնից խաբար առնեմ» խոհական երգը, որ ևս մի **դյուպեիտ** է՝ աշուղական 8-վանկանի երգ, որի բոլոր տների վերջին տողերը նույնն են, և այն կրկնվում է նաև առաջին տան երկրորդ տողում: Այնուհետև հաջորդ տների առաջին, երկրորդ, երրորդ տները նույնահանգ են: Դյուպեիտը սովորաբար ունենում է 3-5 տուն, Քուչակի այս դյուպեիտը 3 տուն է: Դյուպեիտն առավել շատ գործածական երգածն է իր հեշտության պատճառով:

Վանլի Քուչակ մնաց անճար,
Ինչ ցանեց, այն հնձեց արդար,
Եկողը հյուր, հյուրն էլ անցորդ,
Ո՞վ է քեզ մնացել, աշխա՛րհ²⁰⁹:

«Գարնան թագով ամառ եկավ» **դյուպեիտ** երգում էլ աշուղ Քուչակը դիմել է վարդի և սոխակի այլաբանությանը: Միրահար աշուղն իր սիրո դարդը փորձել է սփռվել վարդի և սոխակի սիրերգով:

Ես հասել եմ վարդի փնջին,
Մի հավատա բոգի խաղին,
Վանեցի Քուչակի դարդին,
Վշտակից դարձավ բլբուլը²¹⁰:

²⁰⁷ Նահապետ Քուչակ. աշուղական երգեր, աշխատասիրությամբ **Վանո Եղիազարյանի**, էջ 99:

²⁰⁸ Անդ:

²⁰⁹ Անդ, էջ 109:

²¹⁰ Անդ, էջ 111:

«Ով գիտուններ, մուսուլմաններ» թուրքերեն երգը ևս աշուղական դյուպեիտ է, որի ավարտական տան մեջ՝ թափշուրմայում, աշուղը վերստին տալիս է իր անունը՝ այս անգամ Վանլի Գյոշէկ անվանումով²¹¹:

Վանլի Քուչակ դեպ քեզ եկավ,

Հառաչանքս ավելացավ,

Որպես միջնորդ՝ մի խոսք ընկավ

Քաղցրախոս բերանից, յաման²¹²:

Արդ՝ Վանեցի Քուչակը՝ հայ աշուղների նահապետը, մեր առաջին եռալեզու աշուղն է: Նրանից մեզ հասել են **դափուլլամա, վարսաղ, դոշմա, թեջնիս, դիվանի, դյուպեիտ** և այլ աշուղական երգատեսակներ՝ հայերեն, հայատառ թուրքերեն և հայերեն-պարսկերեն: Քուչակի հանգույն հետագայում աշուղական տաղաչափական բազմաթիվ ձևերով և երեք լեզուներով ստեղծագործեց նաև Սայաթ-Նովան:

Համեմատելով Նահապետ Քուչակի բազմաձև աշուղական երգատեսակները հայրենների յամբ-անապեստյան միօրինակ տաղաչափության հետ՝ հստակ կարող ենք ասել, որ Քուչակի աշուղական երգերը ոչ մի կապ չունեն հայրենների տաղաչափության հետ: «Տարբերությունն այդ երկու ժանրերի միջև ավելի զգալի է պոետիկական տաղաչափական առումով: Աշուղական երգերն ունեն շատ ավելի ժողովրդամոտ, դիդակտիկ խրատական բնավորություն, հորինվում են հեղինակային օժտվածությամբ բացատրվող գեղարվեստական ամենատարբեր մակարդակներով ու բառ ու բանով և բնավ ենթակա չեն փոփոխության, որովհետև անմիջապես գրառվում են դավթարներում կամ փոխանցվում բերնեբերան, իսկ հայրենները մի տեսակ կոլեկտիվ ստեղծագործության բնույթ են կրում և մշտապես ենթակա են փոփոխման կամ կատարելագործման»,²¹³ նկատել է Շ. Գրիգորյանը

Հարկ ենք համարում հավելել, որ աշուղական տաղաչափությունն ունի իր առանձնահատկությունները՝ ձևավորելով 60-ից ավելի տաղաչափական ձևեր, որոնք բոլորովին տարբեր են հայրենների՝ յամբ-անապեստյան տաղաչափությունից, որը միմիայն 15 վանկանի ոտանավոր է՝ 7+8 հատածով, որի 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ, 12-րդ և 15-րդ վանկերը շեշ-

²¹¹ Անդ, էջ 112:

²¹² Անդ, էջ 113:

²¹³ Շ. Գրիգորյան, Հայ աշուղական գրականության պատմություն, էջ 91:

տակիր են, մինչդեռ աշուղական չափերը խիստ տարբեր են, ինչպես՝ դյուպեխոր՝ 8 վանկանի՝ երկու հատածով, դիվանին՝ 15 վանկանի՝ 4+4+4+3 հատածով, դոշման՝ 11 վանկանի՝ 6+5 հատածով, դաստան՝ 11 վանկանի՝ 4+4+3 հատածով, մուխամազը՝ 14 վանկանի՝ 4+3+4+3 հատածով, բայաթին՝ 7 վանկանի՝ 4+3 հատածով, թաղալան՝ 16 վանկանի՝ 5+5+6 հատածով և այլն, և այլն: Ինչպես արդեն վերոշարադրյալից պարզվեց, աշուղ Նահապետ Քուչակի երգերը աշուղական տաղաչափության կանոններով հորինված երգեր են, իսկ հայրենները սիլաբո-տոնիկական տաղաչափությամբ՝ յամբ-անապեստյան կազմությամբ հայկական գուսանական երգատեսակ:

Եզրակացություն. Ճշմարիտ էր Մ. Աբեղյանը, որ գրում էր, թե «միջին հայերենով հորինված բազմաթիվ անանուն տաղերը, որ կան տաղարանների մեջ՝ անհիմն կերպով վերագրված են և վերագրվում են XVI դարում ապրած Նահապետ Աշուղ Քուչակին: Դրանք մեր հին աշխարհիկ քնարերգության մնացորդներն են, մի առանձին բանաստեղծական չափով հորինված «հայերեն» կոչվող քնարերգությունը, որ սկզբից ի վեր գոյություն է ունեցել մեզանում»²¹⁴: Հայրենները մաքուր հայկական են՝ մեր նախնյաց ժողովրդագուսանական երգերը, որոնք ունեն միակերպ տաղաչափություն, իսկ Քուչակի աշուղական երգերը՝ արևելյան ժողովուրդներին հատուկ եռալեզու աշուղական բազմազան տաղաչափական ձևեր՝ **դափուլլամա, վարսաղ, դոշմա, թեջնիս, դիվանի, դյուպեխտ**, ինչպես նաև այլ աշուղական երգեր, որոնց տաղաչափությունը բոլորովին տարբեր է և ոչ մի կապ չունի գուսանաժողովրդական հայրենների յամբ-անապեստյան տաղաչափության հետ: Հայրենների լեզուն միջին հայերենն է, մինչդեռ Քուչակի անունով մեզ հասած երգերի լեզուն՝ գրաբարախառն հայերենը, պարսկերենն ու թուրքերենը:

²¹⁴ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Բ, էջ 279-280:

ՄԵԾԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ.
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍՈՒՄԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բ. Գ. Պ.

25-ամյա հայագետի ու քննադատի և 21-ամյա երիտասարդ բանաստեղծի՝ Մանուկ Աբեղյանի և Հովհաննես Թումանյանի հանդիպումը XXդարասկզբի գրական կյանքում տեղի է ունեցել դեռևս 1890 թ., երբ Աբեղյանը իր նշանավոր գրախոսականով արձագանքեց պոետի անդրանիկ ժողովածուի հրատարակությանը: Աբեղյանը առաջին լուրջ գրականագետ և մասնագետ քննադատն էր, որն ըստ արժանվույն գնահատեց պոետի՝ Մոսկվայում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուն (1890): Երիտասարդ բանասեր-քննադատն ու գրականության ապագա պատմաբանը՝ «Վարսամ» կեղծանունով, իր «Հովհաննես Թումանյան, Բանաստեղծություններ», Մոսկվա, 1890, Մատենախոսություն» վերնագրով գրախոսականում դեռ սկսնակ բանաստեղծի մեջ տեսավ նրա արժանիքներն ու պոեզիայի բնորոշ առանձնահատկությունները, ընդգծեց ժողովրդի կյանքի հետ գրողի սերտ կապվածությունը, ժողովրդական կյանքի կենդանի պատկերները²¹⁵:

Չենք անդրադառնա Թումանյանի պոեզիային տված արեղյանական գնահատականներին, քանի որ այդ մասին խոսվել է բազմիցս և հանգամանորեն, մասնավորապես Սարգիս Հարությունյանի «Մանուկ Աբեղյան» նշանավոր աշխատության մեջ²¹⁶: Նշենք միայն, որ առաջինը Մ. Աբեղյանը գիտական պատշաճ մակարդակով խոսեց բանաստեղծի երկերում զգացմունքների բնականության, գրավիչ, կանոնավոր, գեղեցիկ լեզվի, բանաստեղծական պարզության ու բնաշխարհի վերակերտման վարպետության մասին: Առաջինը նա «Լոռեցի Սաքոն» պոեմի հերոսի խելագարությունը հոգեբանորեն համոզիչ համարեց՝ հակադրվելով գրողի մերձավոր շրջանում տարածված հակառակ մտայնության:

²¹⁵ «Նոր դար», 1890, թիվ 196-197:

²¹⁶ Տե՛ս Մ. Հարությունյան, Մանուկ Աբեղյան, Կյանքն ու գործը, Եր., 1970, ՀՄՄՀ ԳԱ հրատ., էջ 287-291:

Թումանյանը չէր կարող չնկատել Մանուկ Աբեղյանի ընդգծված տարբերությունն ու տաղանդը ժամանակի լրագրողական սիրողական քննադատության ֆոնի վրա, երբ ընդունված էր դրական կամ մերժողական գնահատականներ տալ գրողների երկերին՝ առանց խորամուխ լինելու, առանց որևէ մեկնության պարզապես հայտարարել բանաստեղծ է կամ բանաստեղծ չէ, գեղարվեստական երկը լավ է կամ վատ է, «գոհար է» կամ «գոհար չէ», այո կամ ոչ: Նույնիսկ Աբեղյանի դրվատական կարծիքը բանաստեղծը միանշանակ չընդունեց՝ համարելով այն չափազանցված, թեև ապագան ցույց տվեց, որ իրավացին Աբեղյանն էր: Նամակներից մեկում Թումանյանը գրում է. «Ես կընդունեմ ամեն տեսակ աննպաստ կարծիք, եթե նա փաստ լիներ... «Նոր-Դարի» գովեստն էլ ես խո չեմ ասում, թե հալած յուղ է»²¹⁷ :

Մանուկ Աբեղյանը առանձնանում էր ժամանակի քննադատների մեջ մայրենի և համաշխարհային գրականության պատմության, գրական դպրոցների և ուղղությունների իր խոր իմացությամբ: Թումանյանը, որ հաճախ է խոսել քննադատի դերի կամ կոչման մասին, երբեք չի ընդունել որևէ քննադատի, ով ճշմարիտ արվեստին հասու լինելու համար տքնաջան աշխատանքի փոխարեն կատեգորիկ դատողություններ ու կտրուկ որակումներ է անում. լավ թե վատ, կարևոր չէ: Հանձին Աբեղյանի՝ Թումանյանը նկատեց մի քննադատի, որը հեռու էր դատավճիռ կարդացող, այո կամ ոչ ասող քննադատության մակարդակից, որը խոսում էր փաստարկներով և բացատրություններ տալիս, հետևաբար ի գործ էր կատարելու բանաստեղծի սրտի թարգմանչի պաշտոնը: Այդ իսկ պատճառով նույնիսկ այն հարցերում, երբ Թումանյանը համաձայն չէր իր առաջին քննադատներից մեկի, կոնկրետ դեպքում բանագետ Մանուկ Աբեղյանի հետ, միևնույն է, չէր մոռանում շեշտել գրականության ասպարեզում նրա «քաջահմուտ» լինելը:

Այնուամենայնիվ, տարաձայնություններ արվեստի ու գրականության հարցերում գրողն ու նրա քննադատը ունեցել են, սակայն դա երբեք չի խանգարել նրանց բարեկամական ջերմ հարաբերություններին:

1895 թ., երբ Թումանյանի մեկենաս և նրա մասին առաջին մենագրության («Վշտի ու թախծի երգիչը») հեղինակ Փիլիպոս Վարդապարյանի և

²¹⁷ **Հ. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով («այսուհետ՝ Թումանյան, ԵԼԺ»), հտ. 9, Եր., 1997, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 55:

բանաստեղծի նախաձեռնությամբ ու ջանքերով պետք է հրատարակվեր «Հորիզոն» կիսամյա հանդեսի 2-րդ ժողովածուն²¹⁸, ըստ ամենայնի, բանաստեղծի խնդրանքով, Աբեղյանը, սկսելով իր համագործակցությունը «Հորիզոնի» հետ, գրողին է ուղարկում իր մի ամբողջ ուսումնասիրության ծավալուն մասը (50 էջ): Սակայն այդ շրջանում հանդեսը չի հրատարակվում, անտիպ է մնում նաև Աբեղյանի՝ «Հորիզոնի» համար գրված այդ հոդվածը, որը հեղինակը կարծիքի էր ուղարկել նախ Թումանյանին: Աբեղյանի ուսումնասիրությունն ուներ «Հայկական ժողովրդական հավատքի մասին» խորագիրը: Բանաստեղծը Վարդագարյանին ուղղած 1895 թ. ապրիլի 15-ի նամակում գրում է. «Կարդացի Աբեղյանի գրությունը: Շատ կարևոր ու նշանավոր է նյութը, հմուտ ձեռքով է գրված»²¹⁹: Նկատենք, սակայն, որ «կայծակ» բառի աբեղյանական ստուգաբանության հետ բանաստեղծը համաձայն չէր: «Այս հոդվածում միայն կայծակի դիցաբանության մասին է խոսում, – գրում է Թումանյանը՝ նկատի ունենալով Աբեղյանի վերոնշյալ ուսումնասիրությունը, – ապացուցում է, որ Ծովինարն է նրա ալլաբանությունը, սակայն սխալներ կան. օրինակ, իբրև թե լոռեցիք կայծակին ծովինար են ասում: Լոռեցիք ոչ թե ծովինար, այլ ծովիան են ասում, և այն էլ ոչ թե կայծակին, այլ փայլակին»²²⁰ (ընդգծումը՝ Մ. Հ.):

Կամենալով շարունակել իր աշխատակցությունը «Հորիզոն» հանդեսի խմբագրության ու հրատարակիչների հետ՝ Մ. Աբեղյանը խոստանում է 100 էջի սահմաններում ուղարկել գրական ավանդույթների և ժողովրդական աղոթքների մասին իր աշխատությունը, որը պետք է ընդգրկեր երեկոյան դուռ ու երդիկ փակելու, Չարխափան Աստվածածնի, Ճրագ հանգցնելու, Քնի, Աստվածամոր, Առավոտյան, Ծննդկանի և այլ աղոթքների մասին ուսումնասիրությունը:

Տարբեր էին նաև Մեծ Մհերի Առյուծաձև անվան մեկնությունները:

Մ. Աբեղյանը, Մեծ Մհերի կերպարում նկատելով էպոսում արդեն առկա միջադեպերի բազմաթիվ կրկնություններ, գրում է. «Միակ դյուցազ-

²¹⁸ 1893 թ. Հովհ. Թումանյանը, Փ. Վարդագարյանը և Ա. Բարխուդարյանը հիմնադրում են Հրատարակչական ընկերություն՝ «Խրճիթներ և միայն խրճիթներ» կամ «Ժողովուրդ» անունով, որը «Հորիզոն» հանդեսի առաջին ժողովածուն հրատարակում է 1894 թ. նոյեմբերին, իսկ երկրորդը պետք է լույս տեսներ 1895 թ.: Մանուկ Աբեղյանից բացի՝ ժողովածուին խոստացել էին աշխատակցել նաև Ղ. Աղայանը և Պ. Պոռշյանը:

²¹⁹ **Թումանյան**, ԵԼԺ 9, էջ 154:

²²⁰ Նույն տեղում:

նական գիծը, որ միայն այս Միերի վրա է պատմված, որից և նա իր մականունն է ստացել, մանուկ հասակում մի առյուծ սպանելն է... Միերը տասնութինգ տարեկան հասակում հակառակ հոր կամքին գնում է առյուծն սպանելու. «Առան իրար. Միեր առյուծին սպանեց, քաշեց երկու կտոր արեց, մեկ դրեց ճամփու էն դրադ, մեկն էլ էն դրադ ... Նա ձևում, կիսում է առյուծին»²²¹:

Թումանյանը համաձայն չէր այս կարծիքին և այն արտահայտել է 1916 թ. մայիսի 25-ին Մ. Գորկու խմբագրած «Сборник армянской литературы» (Պետերբուրգ, 1916) ժողովածուում տեղ գտած թարգմանությունների թերությունները վերացնելու նպատակով գրված «Երկու բառ հայոց էպոսից» հոդվածում, ուր արտահայտում է իր տարակարծությունը՝ Առյուծաձև Միերը իբրև «առյուծ պատռող» թարգմանելը: «Թեպետ, – գրում է Թումանյանը, – մեր էպոսին քաջահմուտ պ. Մ. Արեղյանն էլ նույն մեկնությունն է տվել: Առյուծաձև կնշանակի առյուծակերպ, առյուծանման: Հաճախ էդպես են ծնվում դյուցազունները, ոնց որ էդպես է ծնվել և Բըդարատը՝ առյուծի կերպարանքով: Ով որ առյուծ է պատռում, նա առյուծաձև չի կոչվում: Սասունցի Դավիթը ինքն էլ է առյուծ պատռում, հրեական Սամսոնն էլ, բայց նրանք առյուծաձև չեն: Սանասարի որդի Միերը առյուծաձև է, որովհետև առյուծի կերպարանքով է ծնվել, և սխալ է թարգմանված *разрыватель льва*, պետք է լիներ *львеподобный*, *львеобразный*»²²²:

Հիրավի, հայոց դյուցազունը ժողովրդական պատկերացումներում շատ ավելի բնական է, որ առյուծի նման լիներ ոչ միայն իր կերպարանքով, այլև իր ուժով, մարդու կողմից կենդանական աշխարհում «արքա» հռչակված խորհրդով:

Պատահական չէ, որ ռուս ականավոր բանաստեղծ, հայի ու Հայաստանի մասին ամենաջերմ խոսքերի, գողտրիկ ու հայության նկատմամբ անսահման սիրով լի բանաստեղծությունների հեղինակ Օսիպ Մանդելշտամի երևակայության մեջ Հայաստանի գուներդ ու պերճ բնաշխարհը ներկայանում է որպես գրչապահոցից մի բուռ մատիտներ վերցրած առյուծի կորյունի նկար, անձանոթ ու խորթ «արևահամ բառը»՝ հայ խոսքը, նմանեցնում է վայրի կատվի ճիչի, իսկ հայ կանանց՝ առյուծանման գեղեցկությամբ օժտված էակների:

²²¹ Արեղյան Մ., Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 170-171:

²²² Թումանյան, ԵԼԺ 7, էջ 253:

Ты красок себе пожелала -
И выхватил лапой своей
Рисующий лев из пенала
с полдюжины карандашей²²³.

Здесь жёны проходят, даруя
от лвиной своей красоты²²⁴.

Սակայն անկախ Թումանյանի ու Աբեղյանի տարաձայնություններից, երբ խոսքը վերաբերում էր լեզվի զարգացման, հայերենի ուսուցման դժվարությունները և մայրենիի չիմացությունը հաղթահարելու խնդիրներին, բանաստեղծը առաջինը վստահում էր Աբեղյանին:

1910 թ. բանաստեղծը «Հայերեն չգիտեն» բաց նամակով դիմում է Մ. Աբեղյանին ու Ս. Մալխասյանին և ահագանգում Գևորգյան ճեմարանը, Ներսիսյան և թեմական դպրոցներն ավարտած ուսուցիչների՝ հայերեն թերիմացության և տգիտության տխուր հետևանքները հանրային կյանքում: Աբեղյանը անմիջապես արձագանքում է բանաստեղծին և կիսում նրա տագնապը: Հայագետ-մանկավարժը գրում է «Մեր դպրոցական կյանքից» ծավալուն հոդվածաշարը, որը լույս է տեսնում «Հորիզոնի» շուրջ մեկ տասնյակ համարներում²²⁵: Աբեղյանը բացահայտում է հայերենի վատ ուսուցման պատճառները՝ ցարիզմի քաղաքականությունը, դպրոցական գործի թույլ դրվածքը, տեսուչների և մանկավարժների միջև եղած հարաբերությունները, դպրոցներում տիրող բարոյաեկեղծական մթնոլորտը, աշխարհաբարի թերագնահատումը, հայ գրականության ծրագիրն ու դասավանդման մեթոդները, օտարամոլությունը, արհամար-հանքը սեփական լեզվի նկատմամբ և այլն²²⁶:

Թումանյանի և Աբեղյանի մտերմությունը էլ ավելի սերտանում է Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեության տարիներին (1912-1921): Ընկերություն, որի անփոփոխ ու անփոխարինելի նախագահն էր Թումանյանը, և որի ամբիոնից հայ հին գրականության հարցերին նվիր-

²²³ **Осип Мандельштам.** Стихотворения. Переводы. Очерки. Статьи. Тбилиси, "Мерани", 1990, с. 157:

²²⁴ Նույն տեղում, էջ 158:

²²⁵ Տե՛ս «Հորիզոն», թիվ 191, 193, 194, 197, 202-204, 207-208:

²²⁶ Այս մասին հանգամանորեն տե՛ս **Սարգիս Հարությունյան**, Մանուկ Աբեղյան, Կյանքն ու գործը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 69-73:

ված անփոփոխ ու անփոխարինելի բանախոսն էր Մ. Աբեղյանը: Հայ հին գրականությանը վերաբերող երեք դասախոսություն է կարդում Աբեղյանը Կովկասյան ընկերության ամբիոնից: Դրանք էին «Հայոց հին բանաստեղծության մասին» (1916, հոկտեմբերի 14), «Գր. Նարեկացին և իր շրջանը» (1916, նոյեմբերի 4) և «Հայոց միջնադարյան առակները» (1917, հունվարի 27): Այս ելույթներում Աբեղյանը անդրադառնում էր նաև գրականության տեսության խնդիրներին. տալիս է առակի ժանրային բնորոշումը, անդրադառնում առակի զարգացման և պատմության հարցերին, ընդգծում առակի պատմական կարևոր դերը՝ մասնավորապես գրականության աշխարհիկացման, գրականությունը ժողովրդին մերձեցնելու գործում:

Հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթներում բազմաթիվ էին լեզվի զարգացման հարցին վերաբերող ասուլիսները, որոնց ամենաակտիվ մասնակիցներից էր Աբեղյանը: 1000-ի հասնող ունկնդիրների առջև տեղի ունեցող զրույցներն ու բանավեճերը, մասնավորապես Աբեղյանի, Աղբալյանի, Լեոյի, Թումանյանի, Դեմիրճյանի և այլ գրողների, գրականագետների և լեզվաբանների բանավոր խոսքը, գրական լեզվի մշակման հարցում արտահայտած նրանց հայացքները չէին կարող իրենց նշանակությունը չունենալ XX դարասկզբին լեզվի զարգացման և մշակման գործում:

Մ. Աբեղյանի՝ տաղանդավոր բանասերի, քննադատի ու գրականագետի բոլոր դասախոսություններն էլ հազեցած էին միջնադարյան գրականության հարուստ նյութով, հետաքրքիր վերլուծություններով, գրական նուրբ դիտարկումներով: Ի դեպ, նրա զեկուցումներից և ոչ մեկի ժամանակ չծագեցին գրական սուր բանավեճեր և տարաձայնություններ, որոնք գրեթե պարտադիր հաջորդում էին բոլոր դասախոսություններին: Պատճառը ոչ միայն այն էր, որ Աբեղյանի ելույթները աչքի էին ընկնում գիտական ամուր տրամաբանությամբ, փաստերի ու գիտելիքների հավաստիությամբ, հարցերի գիտականորեն համոզիչ և իր ժամանակի համար բավարար պատասխաններով, այլև այն, որ ընկերության անդամներից քչերը կարող էին այդքան մանրամասնորեն տեղյակ լինել հայ միջնադարյան գրականության հարցերին, այդքան բանիմաց ու հմուտ լինել այդ ասպարեզում:

Երբեք միջնադարը այնքան մեծ ուշադրության առարկա չէր դարձել, որքան XX դարի տասական թվականներին: Եվ այստեղ իր մեծ ներդրումն

ուներ Աբեղյանը հրապարակային իր դասախոսություններով: Մ. Աբեղյանը հայ հին գրականության առաջին լուրջ, գիտականորեն հիմնավորված տեսության հեղինակն է:

Աբեղյանը ելույթ էր ունենում ոչ միայն հին, այլև նոր գրականության ու գրական լեզվի զարգացման հարցերի շուրջ: Հատկանշական է հատկապես նրա ելույթը Միքայել Նալբանդյանի մահվան 50-ամյակին նվիրված երեկոյթում 1916 թ. մարտի 31-ին: Աբեղյանի այդ զեկուցումը Թումանյանի հանձնարարությամբ տպագրվում է առանձին գրքով:

Հայ գրողների ընկերության ասուլիսների շնորհիվ մեծացավ Աբեղյանի հեղինակությունը և բանասերի նրա համբավը: Նրա ելույթներն ընդունվում էին բուռն ծափահարություններով և ընկերության նախագահ Թումանյանի բացման ու փակման խոսքերում նրա գործին տված լուրջ ու բարձր գնահատականներով: 1916 թ. հոկտեմբերի 14-ի «Հայոց հին բանաստեղծությունը» թեմայով Աբեղյանի դասախոսության մասին Մ. Լիսիցյանի հաղորդման մեջ ասվում էր. «Դասախոսությունից հետո վիճաբանությունը սկսելուց առաջ Գրողների ընկերության նախագահ Հովհ. Թումանյանը ցավ հայտնեց, որ միայն Վ. Բրյուսովից հետո է, որ մեր հին բանաստեղծության մասին լսում ենք պ. Մ. Աբեղյանից, որը տասնյակ տարիներ ուսումնասիրել է մեր հին գեղեցիկ գրականությունը, դեպի որը մենք շատ անտարբեր ենք եղել»²²⁷:

1916 թ. հոկտեմբերի 21-ին «Գրական երեկոներ» հռոժվածում Թումանյանը հպարտությամբ է արձանագրում Աբեղյանի դասախոսության հանրային նշանակությունը: Նա ասում է. «Հայ գրողների ընկերության վերջին գրական երեկոյթին»²²⁸ պ. Մանուկ Աբեղյանը հայոց հին բանաստեղծության ելնեջները, ուրախ ու տխուր էջերը բացատրելիս մերթ-մերթ խորասուզվում էր հայոց պատմության մեջ, ցույց էր տալիս, թե ինչքան է հին էս ահռելի պատերազմը, որ էսօր վարում է հայ ազգը, թե սրանից ավելի մեծ աղետներ են տեղի ունեցել մեր հողի վրա, և առաջ էր բերում պատմական զարհուրելի փաստեր: Ընդմիջմանը լսողներից ոմանք զար-

²²⁷ «Հորիզոն», 1916, թիվ 233, հոկտեմբերի 19:

²²⁸ Բանաստեղծը նկատի ունի 1916 թ. հոկտեմբերի 14-ի երեկոյթը, որը տեղի է ունեցել Թիֆլիսի երաժշտական դպրոցի դահլիճում (տե՛ս «Հորիզոն», 1916, հոկտեմբերի 16, թիվ 231):

մացած բացականչում էին՝ «...Իսկ մենք կարծում ենք, թե Հայոց Ազգային Բյուրոյիցն է սկսվում էս աղետը»»²²⁹:

Երիտասարդ հայազեղ ամենակտիվ մասնակցությունն է ունենում ընկերության գործունեությանը ոչ միայն իր կարդացած դասախոսություններով:

Մ. Աբեղյանը ընկերության թե՛ ակտիվ դասախոսներից էր, թե՛ ակտիվ ու աչքի ընկնող անդամներից: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ նա կարող էր նախագահել ընկերության ժողովներին, ինչպես օրինակ այն ժողովին, որի օրակարգում էր Թիֆլիսում բարձրագույն դասընթացների բացումը: Աբեղյանը ընտրվել է Կովկասյան ընկերության կանոնադրությունը փոփոխելու նպատակով ստեղծված հանձնաժողովի անդամ: Նա տարբեր նախաձեռնություններով հանդես էր գալիս հատկապես ընկերության կրթական ծրագրերում՝ դրսևորելով մանկավարժի իր բազմամյա փորձը, դասավանդման մեթոդիկայի գիտելիքներն ու հմտությունները:

1916 թ. մայիսի 25-ի Կովկասյան ընկերության վարչության նիստում Թումանյանը առաջարկում է բացել հայ գրականության բարձրագույն կուրսեր, դասընթացներ երկու կիսամյակով՝ զարնանն ու աշնանը: Նույն թվի աշնանից ընկերությունը որոշել էր հրատարակել նաև իր օրգանը, որը ըստ Նվարդ Թումանյանի անտիպ գրառումների՝ պետք է կոչվեր «Հուշագրեր հայոց գրականության»: Այս գործում նույնպես Թումանյանը հույսեր էր կապում Աբեղյանի հետ: 1916 թ. հունիսի 3-ի նամակով փոխնախագահ Տիգրան Հովհաննիսյանին տեղեկացնում է «Աշունքից էստեղ հայոց գրականության կուրսեր են բացվում: Առայժմ 3 հոգի ունենք ի նկատի՝ Աղբալյան, Աբեղյան (Մանուկ) և Մատենճյան»²³⁰:

Բարձրագույն դասընթացների գաղափարը ի վերջո վերաճում է համալսարան և ակադեմիա ստեղծելու նախաձեռնությանը, որը պետք է իրականացներ նոր ստեղծվող Հայկազյան ընկերությունը:

1916 թ. աշնանը Թումանյանը, սկսելով Հայկազյան ընկերության նախապատրաստական աշխատանքները, դիմում է միաժամանակ մի քանի խոշոր հայազետների՝ Նիկողայոս Մառին²³¹, Ա. Մելեհին²³², Հ. Աճառյա-

²²⁹ Թումանյան, ԵԼԺ7, էջ 281:

²³⁰ Նույն տեղում, հտ. 10, էջ 240:

²³¹ Նույն տեղում, էջ 254:

նին²³³, Մ. Աբեղյանին: Պատերազմի տարիներին Թումանյանը միակը չէր, որ երագում էր համալսարան ու ակադեմիա ստեղծելու մասին, բայց միակն էր, որ գործնական քայլերի էր դիմում այդ ուղղությամբ: Նա սկզբնական շրջանում նախատեսում էր երեք ուղղություններ ու բաժանմունքներ՝ Հայոց լեզվի, պատմության և գրականության: «Հորիզոնում» 1917 թ. ապրիլի 22-ին Թումանյանը ընկերության նպատակների մասին գրում է. «Ընկերություն, որը կոչվելու է Հայկազյան, իբրև մոտավոր նպատակ՝ միտք ունի կազմել «Հայոց ակադեմիա, դնել հայկական համալսարանի հիմքը, զարգացնել հայագիտությունը և ամենակողմանի ուսումնասիրել մեր աշխարհքը, մեր հին ու նոր կյանքը, մեր գրականությունն ու գեղարվեստը, նրա պատմությունն ու արդի կյանքը և ապահով վիճակի մեջ դնել գիտնականներին, գրողներին ու գեղարվեստագետներին: Միաժամանակ Հայկազյան ընկերությունը հետևելու է մեր կուլտուրական հիմնարկությունների գործունեությանը և նրանց օժանդակելու կարիք եղած ժամանակ»²³⁴:

²³² **Պոլ ժյուլ Անտուան Մեյլե** (ֆրանսերեն՝ Paul Jules Antoine Meillet) (նոյեմբերի 11, 1866 - սեպտեմբերի 21, 1936) քսաներորդ դարի սկզբի ֆրանսիացի հռչակավոր լեզվաբաններից: 1890 թ. մի հետազոտական խմբի հետ ճամփորդում է Կովկաս, որտեղ և սովորում է հայերեն: Մեյլեն հայոց մաշտոցյան այբուբենը գլուխգործոց էր համարում, որը պահպանվել էր առանց փոփոխության, քանի որ ի սկզբանե այն կատարյալ էր: Իսկ հայոց «մեծաքանչ» լեզուն ավելի քան 2700 մայր լեզուներից հինգից մեկն է: Նրա խոսքերով «Հայերենը ոչ միայն կը հաւասարի եւրոպական լեզուներու, հապա կը գերազանցէ զանոնք: Ոճի տեսակէտով հնդեւրոպական ոչ մէկ լեզու չի գերազանցեր հայերէնը, նոյնիսկ չի հաւասարիր անոր... Երբ կազմաւորուած էր հայ գրականութիւնը, ժամանակակից Եւրոպայի մեծ ազգերէն ոչ մէկը դեռէս կար... Այն ժամանակաշրջանին, երբ Ֆրանսիա կամ Անգլիա անունը նոյնիսկ գոյութիւն չունէր, Հայաստանը մեծ դեր խաղացած է պատմութեան մեջ... եւ ունէր ազգային գրական այնպիսի հնութիւն, որ երկար դարերով կը գերազանցէր եւրոպական ազգերու հեղինակածները: Տե՛ս **Ռ. Որբերյան**, Վկայություններ հայոց լեզվի մասին, Եր., 2010, https://hy.wikiquote.org/wiki/%D4%B1%D5%B6%D5%BF%D5%B8%D6%82%D5%A1%D5%B6_%D5%84%D5%A5%D5%B5%D5%A5:

²³³ Խնդիրը սրտամոտ էր նաև Սորբոնն ավարտած լեզվաբան Հ. Աճառյանին: Երբ Վանն ազատագրվել էր, Աճառյանը պատրաստվել էր այնտեղ իր սեփական միջոցներով բացել լեզվաբանության բարձրագույն դասընթացներ և անցնել խաղաղ աշխատանքի: Վանում այդ դասընթացների ու դրանք համալսարանի վերածելու իր ծրագրերի մասին նա տեղեկացրել էր Ա. Մեյլեին, որը խորհուրդ էր տվել չշտապել: Աճառյանն իր կողմից 1916 թ. նոյեմբերի 6-ին առաջարկում է ծրագրում ընդգրկել 21 առարկա և խոստանում է դասավանդել մի շարք առարկաներ:

²³⁴ «Հորիզոն», 1917, թիվ 81, ապրիլի 22, էջ 3: Կարծում ենք «Հայկազյան ընկերություն» խորագրով խմբագրությանն ուղղված և «Հորիզոնում» տպագրված այս նամակը պետք է տեղ գտներ գրողի գիտական հրատարակության մեջ:

Այդ կապակցությամբ 1917 թ. ապրիլի 23-ին՝ կիրակի օրը, Արտիստական ընկերության դահլիճում դռնփակ նիստի հատուկ հրավերներ ստացողների մեջ, անշուշտ, առաջիններից էր Աբեղյանը. նա այդ օրը հանդիպել է ժողովին ներկա ռուս կոմիսար, պրոֆեսոր Բենեշնիչին, որը «ջեմագին խոսքերով» ողջունում է ընկերության հիմնադրումը²³⁵: Կազմվում է 111 անուն ներառող մի ցուցակ, որտեղ ընդգրկված էին անվանի գրողներ, գիտնականներ, այդ թվում՝ Մ. Աբեղյան, Ադոնց, Հ. Աճառյան, Ս. Տիգրանյան, Հ. Մանանդյան, Ստ. Լիսիցյան, Ե. Լալայան, Հայկ Հովհաննիսյան և այլք²³⁶:

Նշված ցանկը²³⁷, որում քիչ չէին միջազգային հռչակ ունեցող անունները՝ Կոմիտաս, Բաշինջաղյան, Թ. Թորամանյան, Փ. Թերլեմեզյան, Մ. Սարյան, վկայում է, թե մտավոր-կրթական ինչպիսի ներուժ ուներ հայ ժողովուրդը XX դարասկզբին: Եվ նրանք բոլորն էլ այդ պահին պատրաստ էին իրենց մասնակցությունը բերել ու տաղանդը ծառայեցնել համազգային նշանակության այդ գործին:

1917 թ. հունիսի 4-ին ընդհանուր ժողովում²³⁸ ընտրվում է նաև երկու ենթաժողով՝ տնտեսական ու ուսումնական: Մ. Աբեղյանը ուսումնական ենթաժողովի կազմում էր Թումանյանի, Աղբալյանի, Շանթի հետ: Հունիսի դեկտեմբեր ամիսներին տեղի են ունենում ևս 11 նիստեր, որոնց մասնակցում էր Աբեղյանը, իսկ հիմնականում ղեկավարում էր Թումանյանը²³⁹:

²³⁵ «Հորիզոն», 1917, թիվ 84, ապրիլի 26, էջ 3:

²³⁶ Այդ ցանկում էին նաև գրողներ Նար-Դոսթ, Շիրվանզադեն, Շանթը, Կրթ. Փափազյանը, Ա. Իսահակյանը, Վ. Տերյանը, Հ. Հովհաննիսյանը, Ա. Չոպանյանը, Դ. Դեմիրճյանը, Լեոն, Զապել Եսայանը և այլք, հրապարակախոսներ և գրականագետներ՝ Հ. Առաքելյանը, Ն. Աղբալյանը, Հ. Սուրխաթյանը, Ա. Տերտերյանը, Պ. Մակինցյանը և այլք, թարգմանիչներ Հ. խան Մասեհյանը, Տ. Հովհաննիսյանը և այլք, Մխիթարյանները, նկարիչներ Ե. Թադևոսյանը, Գ. Բաշինջաղյանը, Փ. Թերլեմեզյանը, Մ. Սարյանը, Շահինը և այլք, քանդակագործներ, ճարտարապետներ և երաժիշտներ, դերասաններ Թորամանյանը, Ալ. Սպենդիարյանը, Կոմիտասը, Անտոն Մալիկյանը, Ա. Տիգրանյանը, Հ. Աբեղյանը, Արմենյանը, Միրանուշը, Ալիխանյան և այլք:

²³⁷ Ցուցակը սևագիր է՝ գրված Թումանյանի ձեռքով, թանաքով և մատիտով՝ գրված երկու թերթերի բոլոր էջերի վրա:

²³⁸ Այդ օրը ընտրված ժամանակավոր մասնաժողովի հրավիրած նիստում ընկերության նախագահ է ընտրվում Կոստանիտին Ալիխանյանը, իսկ փոխնախագահներ՝ Հովհաննես Թումանյանը և Լ. Ղուկասը, քարտուղարներ՝ Ս. Լիսիցյանը, Ս. Մալխասյանցը, գանձապահ Ս. Բերբերյանը:

²³⁹ 1917 թ. հունիսի 11-ին կատարվում է դասաբաշխումը: Հունիսի 12-ին որոշվել էր ուսման տևողությունը դարձնել եռամյա՝ խնայողության նպատակով և ուսանողներին Պե-

1917 թ. հունիսի 11-ին որոշվում է աշխատավարձի չափը՝ ըստ գիտական աստիճանի 3000 և 2000: Աբեղյանը ընդգրկվել էր «Հայկական ակադեմիա» կոչված հայ բանասերների ու գիտականների խմբի մեջ: Անվանի հայագետի անունը Հ. Աճառյանի և Աշոտ Հովհաննիսյանի հետ միասին այն 10 գիտնականների թվում էին, որոնք վարձատրվելու էին թե՛ դասավանդելու, թե՛ գիտությամբ զբաղվելու համար:

Հոկտեմբերի 28-ի նիստում ընտրվում է 8 հոգուց բաղկացած խորհուրդ՝ դասախոսներ և ակադեմիայի անդամներ²⁴⁰ ընտրելու նպատակով: Մ. Աբեղյանը այդ հանձնաժողովում էր Թումանյանի, Շանթի, Ն. Աղբալյանի, Ս. Տիգրանյանի և Ս. Լիսիցյանի հետ միասին: 1917 թ. նոյեմբերի 5-ի նիստում, երբ առաջադրվում է Թումանյանի թեկնածությունը՝ իբրև իսկական անդամի, բանաստեղծը դեմ է արտահայտվում: Սակայն նրա մոտեցումը չի ընդունվում, և նա հանդես է գալիս հայտարարությամբ, ըստ որի՝ արձանագրում է, որ իսկական անդամների ցանկից իր անունը հանելու խնդրանքը մերժվել է, այդ պատճառով էր նա համաձայնվել է իր անունը թողնել միայն մի պայմանով, որ ինքը իրավունք ունի հրաժարվելու իսկական անդամներից տրվող ամբողջ վարձատրությունից: «Այժմ խնդրում եմ հարգելի վարչությանը,– գրում է Թումանյանը,– իմ էս հայտարարությունը կցել խորհրդի արձանագրությանը և նկատել, որ իմ անունը դրված է առանց թոշակի, և էս խնդիրը չդնել քննության ու վիճաբանության առարկա»²⁴¹:

Այսպես, բազում պարտատերեր ունեցող, տասը երեխաների հայր, իր տանը տասնյակ որբեր ապաստանած Թումանյանը հրաժարվում է տարեկան 6000 ռ. թոշակից: Նույնպիսի համեստություն դրսևորում է նաև

տերբուրգում կատարելագործվելու հնարավորություն տալու համար: Մեկ ֆակուլտետի ծախսը նախնական հաշվարկներով կազմել է 200 000 ռուբլի:

²⁴⁰ Ակադեմիայի անդամը ընտրվում էր ցմահ, անդամները լինում էին պատվո, ազատ և իսկական: Վերջիններս տարվա ընթացքում պարտավոր էին առնվազն երկու գեկուցում կարդալ, մեկը՝ իրենց հայագիտական ուսումնասիրությունների շրջանակում, մյուսը՝ մեկ այլ հայագետի աշխատության մասին: Հոկտեմբերի 30-ի նիստում իսկական անդամներ առաջադրվեցին Աճառյանը (լեզվաբանություն), Սմբատ Տեր-Ավետիքյանը (պատմագիտություն), Սիրական Տիգրանյանը (ազգագրություն և իրավունք) և այլք: Նրանք տարեկան թոշակ էին ստանալու: Պատվո անդամ են ընտրվում Մառն ու Ադոնցը: Ազատանդամները թոշակ չէին ստանալու, բայց նրանց կոնկրետ աշխատությունների համար վարձատրություն էր սահմանվելու: Հոկտեմբերի 30-ին պատվո անդամներ են ընտրվում Ադոնցը և Մառը:

²⁴¹ Թումանյան, ԵԼԺ 10, էջ 280-281:

Մանուկ Աբեղյանը: 1917 թ. հոկտեմբերի 30-ի նիստում Մանուկ Աբեղյանը և Հակոբ Մանանդյանը *բանասիրություն* մասնագիտությամբ իսկական անդամ են առաջադրվում: Աբեղյանի կարծիքով կարող ուժերի պակասի պատճառով առնվազն 10-15 տարի կպահանջվի ակադեմիայի ու համալսարանի ստեղծման համար: Երբ ակադեմիայի անդամների ցուցակում 18 գիտնականների թվում (Օրբելի, Ն. Ադոնց, Գ. Հովսեփյան, Լեո, Հ. Աճառյան, Հ. Մանանդյան և այլք) կարդացվում է նաև Մ. Աբեղյանի անունը, նա համեստորեն հրաժարվում է ակադեմիկոսի կոչումից և խնդրում իր անունը գրել դասախոսների ցանկում (Աշոտ Հովհաննիսյան, Նիկոլ Աղբալյան, Գրիգոր Ղափանցյան, Ստեփան Լիսիցյան և այլք): Ժողովը չի ընդունում Աբեղյանի հրաժարականը, դրա փոխարեն ընդունում է ակադեմիկոսության թեկնածուների գիտական աշխատանքները ուսումնասիրող հանձնաժողով կազմելու նրա առաջարկը:

Հենց Հայկազյան ընկերության շուրջ համախմբած գիտնականները, այդ թվում՝ Աբեղյանը, դարձան 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում ստեղծված և նույն ամռանը Երևան տեղափոխված ազգային համալսարանի սերուցքը:

Աշխարհամարտի տարիներին Հայկազյան ընկերությունն ստեղծելու ձեռնարկն ու այդ ուղղությամբ ջանքերը յուրատեսակ սխրանք էին այդ գաղափարի շուրջ համախմբված ազգային գործիչների, գիտնականների, այդ թվում՝ Մանուկ Աբեղյանի համար: Երախտագիտության են արժանի նաև դրամատեր բոլոր այն հայ բարերարները, որոնք պատրաստ էին աջակցել. այդ պահին նրանց թիվը քիչ չէր:

Այսպես անվանի հայագետն ու Ամենայն հայոց բանաստեղծը շուրջ երեք տասնամյակ ապրել ու գործել են միասին՝ միմյանց նկատմամբ դրսևորելով խորին հարգանք ու գնահատանք: Աբեղյան-Թումանյան առնչակցությունը գրողի և քննադատի, մշակութային երկու գործիչների օրինակելի համագործակցություն է:

«Մանուկ Աբեղյանի և Հովհաննես Թումանյանի գրական համագործակցության պատմությունից». տպագրվել է «Գրականագիտական հանդես», ԺԷ, Եր., 2016, էջ 312-325:

Մ. ԱՔԵՂՅԱՆԻ «ՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ» ՀՈԴՎԱԾԱՇԱՐԸ ԵՎ ՆՐԱ ԱՐԴԻԱԿԱՆ ՀՆՁԵՂՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Բ. Գ. Դ.

Հայագիտության մեջ Մանուկ Աբեղյանի գիտական վաստակի քննությանն ու արժևորմանը նվիրվել են բազմաթիվ արժեքավոր աշխատություններ, հոդվածներ, սակայն ուսումնասիրության առանձին նյութ չի դարձել Աբեղյանի «Մեր դպրոցական կյանքից» սովորածավալ հոդվածը, որ, ինչպես նկատում է գրականագետ Սարգիս Հարությունյանը, «իր շոշափած հարցերով կարևոր երևույթ էր ժամանակի հայ մտավորական կյանքում»²⁴²: Մեր կարծիքով այն այսօր էլ արժանի է ոչ միայն համակողմանի բացահայտման ու գնահատման, այլև լուրջ և խոր ուսումնասիրության՝ ժամանակի հեռավորությունից ստանալու որոշ հարցերի պատասխաններ, որ ծառացած են XXI դարի կրթական համակարգի առջև:

Մեր խնդիրն է ուսումնասիրել վերը հիշատակված հոդվածաշարը, ընդգծել ժամանակի քննությունն անցած տեսակետներն ու բացահայտումները, որոնք ոչ միայն պարզաբանում են XX դարասկզբին հայերենի գոյավիճակը և կրթօջախներում նրա դասավանդման առանձնահատկությունները, այլև ներկայացնում են Աբեղյանի գիտնականի խոր և մանրակրկիտ դիտարկումներն ու վերլուծությունները ժամանակի առաջ ծառացած բազմաթիվ հարցերի վերաբերյալ:

Նկատենք, որ հոդվածի ստեղծման շարժառիթը Հ. Թումանյանի «Հայերեն չգիտեն» բաց նամակն է՝ տպագրված 1910 թ. հունիսի 17-ին «Հորիզոնի» 131 համարում: Բանաստեղծը բարձրաձայնում է այն ցավալի փաստի մասին, որ թեմական դպրոցները, ճեմարանն ու Ներսիսյան դպրոցն ավարտած հայ ուսուցիչները ոչ միայն չգիտեն և «չնչին բացառությամբ» չեն կարողանում հայերեն գեղեցիկ ու կանոնավոր շարադրել, բանավոր խոսել, այլև թույլ են տալիս քերականական և ուղղագրական տարաբնույթ սխալներ, «հասարակ համաձայնությունները չեն կարողա-

²⁴² Հարությունյան Մ., Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, Եր., 1970, էջ 69:

նում հաշտեցնել իրար հետ»²⁴³։ Թումանյանը փորձում է հասկանալ համատարած տգիտության պատճառը։ Բանաստեղծը բաց նամակը մասնավորապես հասցեագրում է ճեմարանի հայկաբան ուսուցիչ Մ. Աբեղյանին և Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Ս. Մալխասյանին՝ իմանալու նրանց դիրքորոշումը երևույթի վերաբերյալ, միաժամանակ ակնկալելով լուծումներ։

Թումանյանի հոգվածը հասարակական մեծ հնչեղություն է ստանում. արձագանքում են մտավորականներ, նախկին ճեմարանականներ, ուսուցիչներ՝ ամենատարբեր դիրքերից ներկայացնելով իրենց տեսակետները։

Մ. Աբեղյանը՝ իբրև հասցեատեր, նույնպես անդրադառնում է բանավիճային այս խնդրին (նմանատիպ հարց-պատասխանը կարելի է համարել յուրահատուկ երկխոսություն)՝ գրելով «Մեր դպրոցական կյանքից» հոդվածաշարը, որը լույս է տեսնում «Հորիզոնի» ինը համարներում։ Ի տարբերություն այլ հոդվածագիրների, որոնց դիտարկումները պարզունակ և երբեմն միակողմանի էին, Աբեղյանը, ինչպես վայել է վաստակաշատ ու շրջահայաց գիտնականին, ամենայն մանրամասնությամբ, գիտական լրջությամբ քննում և ընթերցողի ուշադրության է ներկայացնում հայերեն լավ չիմանալու բոլոր փաստարկումները՝ հիմնավորելով հասարակական-քաղաքական, սոցիալական, հոգեբանական և այլ պատճառներով։

Աբեղյանը հոգվածն սկսում է խոսուն բնաբանով. ««Ուղտին ասին. «Ինչի՞ է վիզդ ծուռ»։ Ասաց. «Ո՞ր տեղս է ուղիդ, որ վիզս ուղիդ լինի»»²⁴⁴։ Ընտրված բնաբանն արդեն հուշում է, որ խնդիրը ոչ թե մասնավոր է, որ կարող է թվալ առաջին հայացքից, այլ համակարգային։ Հայագետը աստիճանաբար բացում է հայ իրականության ռեալ պատկերը և առաջադիր խնդրի ծագմանն առնչվող փաստարկումները։ Նախ՝ Աբեղյանը հակադրվում է Թումանյանի այն մտքին, թե հայերեն չգիտեն թեմական դպրոցները, ճեմարանն ու Ներսիսյան դպրոցն ավարտած ուսուցիչները. քիչ թե շատ՝ հենց նրանք գիտեն հայերեն։ Խնդիրը ոչ թե հայերեն չիմանալու, այլ լավ չիմանալու մեջ է։ Հոդվածագիրը, իհարկե, չի ժխտում, որ կրթական գործընթացում բացասական երևույթները բավական շատ են և

²⁴³ Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 6, Եր., 1994, էջ 226։

²⁴⁴ «Հորիզոն», հմ. 191, Թիֆլիս, 1910։

կարիք ունեն շուտափույթ փոփոխությունների և շտկումների, սակայն նշում է, որ պետք է տարբերություն դնել ճեմարանը նախկին տարիներին և վերջին տարիներին ավարտողների միջև: Աբեղյանը համոզված է, որ հայերեն լավ չգիտեն վերջին տարիներին ավարտողները: Նա հրնթացս հիշեցնում է, որ ճեմարանը հայերենի մասնագիտական ուսումնարան չէ. այստեղ աշակերտները փորձում են շատ բաներ սովորել, սակայն, ցավոք, բոլորն էլ՝ թերի: Առհասարակ պետք է նկատի ունենալ, որ ցանկացած մասնագիտության դեպքում էլ կրթություն ստացողներին (բժիշկ, իրավաբան, դերձակ և այլն) անհրաժեշտ է ժամանակ՝ վարժվելու և հմտանալու: Ուսումն ավարտելուց հետո ձեռք բերած համապատասխան գիտելիքները պետք է անպայման կիրառել, ավելին, ինքնակրթությամբ հարստացնել և ամրապնդել՝ վերացնելով թերությունները:

Մի առանցքային հարցադրում ևս. ինչպե՞ս կարող են լավ տիրապետել մայրենի լեզվին, եթե հայկական դպրոցներում հայերենը մյուս առարկաների համեմատ չունի ոչ մի առավելություն: Ռուսական գիմնազիաներում ռուսերենը տիրապետող առարկա է, և անբավարար ստացողները այլևս չեն կարող շարունակել կրթությունը: Աբեղյանը կարևորում է հայերենի իմացության պահանջները խստացնելու հարցը: Եթե աշակերտը հայերենից թույլ է, ապա չընդունել դպրոց, չփոխադրել հաջորդ դասարան: Բայց այդպես չէ: Բացակայում է նաև պահանջը հայերենի գրավոր խոսքի նկատմամբ: Աբեղյանը հիշատակում է, որ մեկ տարի առաջ ընդունված որոշումը, ըստ որի՝ ավարտական դասարանում քննական գրավորից անբավարար ստացողին թույլ չտալ շարունակելու քննությունները, մնացել է անկատար: «Դպրոցական ընդհանուր ուսումը մի կենդանի օրգանիզմի նման է,– գրում է Աբեղյանը,– եթե ամբողջ օրգանիզմը հիվանդ է, չի կարող մի մասն առողջ լինել: Հայերենն էլ այդ ամբողջի մասն է»²⁴⁵:

«Հորիզոնի» հաջորդ համարներում (հմ. հմ. 193, 194, 197, 202, 203, 204, 207, 208) Աբեղյանը ներկայացնում է հատկապես վերջին տարիներին կրթական ողջ համակարգը ախտահարող էական գործոններն ու հանգամանքները՝ այդ համատեքստում անդրադառնալով հայոց լեզվի դասավանդման խոչընդոտներին:

²⁴⁵ Նույն տեղում:

Ուսուցման վատթարացման օբյեկտիվ պատճառների թվում հայագետը նշում է՝

ա) 1903 թ. ցարական կառավարության կողմից հայ եկեղեցական գույքի և կալվածքների բռնագրավումը (օրենքի գործադրության կենտրոնը Էջմիածինն էր. խանգարվում է ուսուցման բնականոն ընթացքը),

բ) 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմը (արտաքին, քաղաքական խնդիրները մեծապես զբաղեցնում են աշակերտներին և ուսուցիչներին. պետության մեջ ընդհանուր հուզումը և հեղափոխական տրամադրությունները ներթափանցում են դպրոց),

գ) հայ-ադրբեջանական ազգամիջյան կոտորածները,

դ) վերոբերյալներով պայմանավորված՝ ժամանակից շուտ ուսումնական տարին փակելը:

Արեղյանը մատնանշում է ճեմարանում տիրող արատավոր որոշ երևույթներ ևս՝

ա) ճեմարանի տեսուչների, մանկավարժների հաճախակի փոփոխությունը (ըստ Արեղյանի՝ եթե ուսուցիչների փոփոխությունը վատ ազդեցություն է ունենում դպրոցական գործի վրա առհասարակ, ապա առավելապես վնասում է լեզվի ուսմանը, քանի որ լեզվի դասավանդումը շատ ավելի բարդ գործընթաց է, քան մյուս առարկաներինը),

բ) աշակերտների ընդունելության անսկզբունքային եղանակները (ընդունելության չափորոշիչ, ծրագրի բացակայություն, տարբեր տարածաշրջաններից, գավառներից եկած աշակերտների անխտիր ընդունում՝ անկախ տգիտության աստիճանից),

գ) վարչական գործառույթների ոչ ճիշտ բաշխումը,

դ) ճեմարանի հանրակեցության՝ հնացած և ժամանակին անհամապատասխան կանոններն ու կարգերը,

ե) միջաշակերտական գծությունները,

զ) ուսուցման ծրագրի բացակայությունը,

է) պատրաստական, առաջին և երկրորդ դասարանների աստիճանական փակումը և այլն, որոնք տարբեր տեսանկյուններից էականորեն ազդում են ուսումնական ողջ գործընթացի վրա, ինչից բնականաբար առաջինը տուժում է հայոց լեզուն: «Եվ մի թե այս ամենից հետո զարմանալի պիտի լինի, որ թերուսներ ավարտեին, և ստեղծվեր ճեմարանի դպրա-

նոցում մի սերունդ, որ եթե ոչ ավելի, առնվազն մի ամբողջ տարով հետ է ուսման մեջ, քան պետք է լիներ»²⁴⁶, – գրում է Աբեղյանը:

Դպրոցներում հայերենի դրվածքի թուլությունը լեզվաբանը մեկնաբանում է նաև գրավոր աշխատանքների թվի նվազեցմամբ. «Գրելը՝ գրելով կտավորի մարդ, ինչպես և կարդալը՝ կարդալով»²⁴⁷: Մի կարևոր և սկզբունքային հանգամանք ևս չի վրիպում Աբեղյանի վերլուծությունների շղթայից. մինչև 1906-1907 թթ. ուսումնական տարին դպրոցներում հայոց լեզու ասելով հասկանում էին միայն գրաբար: Աշակերտները, առօրյա կյանքում գործածելով կենդանի աշխարհաբար հայերենը, ստիպված էին ուսումնասիրել ու սովորել գրաբար. «Հայերենի ուսում ասելով այնուհետև պետք է հասկանալ աշխարհաբարի, կենդանի հայերենի ուսումը, այն հայերենը, որ կյանքի ու գրականության մեջ պետք է գալիս, և որի տգիտությունն է երևան գալիս, երբ ասում են, թե հայերեն չգիտեն»²⁴⁸: Զարգացնելով այս տեսակետը՝ Աբեղյանը պնդում է, որ մինչև ուսումնառության վերջնական ավարտը դպրոցում դասավանդվի աշխարհաբար, հակառակ դեպքում «աշակերտների հայերենը միշտ թույլ կլինի»²⁴⁹:

Հայագետը կարևորում է նաև հայ գրականության ծրագրի և դասավանդման մեթոդների փոփոխությունը՝ ընդգծելով այն միտքը, որ «հայերենի ուսումը բարձրացնելու համար պետք է... ուժ տալ աշխարհաբարին և աշխարհաբար գրականությանը»²⁵⁰: Իր հանճարեղ նախորդի՝ Աբովյանի նման Աբեղյանը հրաշալի հասկանում է, որ հայոց լեզվի և առհասարակ ազգային հոգևոր մշակույթի զարգացման համար անհրաժեշտ է մեծ տեղ տալ ժամանակի կենդանի լեզվին և դրանով ստեղծված նոր գրականությանը: Գրաբարն իր ողջ շքեղությամբ վաղուց արդեն դարձել էր անհասկանալի և արհեստական, ուստի նրա ուսուցումը պիտի լինի ոչ թե ինքնանպատակ, այլ, ըստ լեզվաբանի, պարտադիր այնքանով, որքանով պիտի նպաստի աշխարհաբարի առավել լավ ըմբռնմանն ու յուրացմանը:

Թումանյանի՝ շարադրություն գրել չկարողանալու մտահոգությանը Աբեղյանը պատասխանում է, որ անհրաժեշտ է ոչ թե գրելու արվեստն

²⁴⁶ «Հորիզոն», հմ. 197, Թիֆլիս, 1910:

²⁴⁷ «Հորիզոն», հմ. 203, Թիֆլիս, 1910:

²⁴⁸ «Հորիզոն», հմ. 204, Թիֆլիս, 1910:

²⁴⁹ Նույն տեղում:

²⁵⁰ Նույն տեղում:

իմանալ, այլ զարգացած լինել և գրելու նյութ ունենալ: Քերականական, ուղղագրական գիտելիքների պաշարը չի օգնի, եթե մարդն ասելիք չունի: Արեղյանը իրավացիորեն մատնանշում է մի կարևոր հանգամանք, որ, կարծում ենք, այսօր էլ մեծ դեր կարող է խաղալ մայրենիի իմացության գործում. «Արդյոք լեզվի՞ դասի պարտքն է միայն՝ աշակերտի գիտության ու ծանոթությունների սահմանները բազմակողմանի ընդարձակել և բանալ նրա միտքը»²⁵¹: Ըստ հայագետի՝ հայերենը չի կարելի առանձնացնել մյուսներից, բոլոր առարկաների ուսուցման մակարդակն էլ պետք է հավասարապես մտահոգության տեղիք տա: Չէ՞ որ աշակերտի մտահորիզոնն ու աշխարհայացքը ձևավորվում են տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքների համակցումից: Սակայն ցավալիորեն այդ հարցը դուրս է մնում հետաքրքրության շրջանակից: Հայերենի անմխիթար վիճակն է աչքի զարնում. կյանքում առավել կիրառելի լինելով՝ հայերենը դառնում է քավության նոխագ: Այլ առարկաներ դասավանդող ուսուցիչները նույնպես պետք է պահանջեն ճիշտ խոսել ու ձևակերպել մտքերը:

Այստեղից բխում է մեկ այլ հարցադրում. արդյո՞ք հայերենի ուսուցիչները միայն պետք է իմանան հայերեն: Արեղյանը արձանագրում է իրականության այդ ցավալի իրողությունը ևս. «Ընդունված մի սովորություն է, որ մեր դպրոցներում ուսուցիչ վարձելիս միայն հայերենի ուսուցչի համար հարց են տալիս, թե արդյոք նա քիչ ու շատ հայերեն գիտե՞, թե՞ ոչ: Մնացած ուսուցիչները, տեսուչներն ու վերակացուները ազատ են հայտարարված այդ անհաճո պարտականությունից: Ես այս համարում եմ աշակերտներին հայերենի նկատմամբ պարզապես անբարոյականացնող մի դրություն»²⁵²: Այն հանգամանքը, որ ճեմարանում սովորում են տարբեր տարածաշրջաններից եկած, տարբեր բարբառներով խոսող աշակերտներ, առավել անհրաժեշտ է դարձնում և՛ տեսուչի, և՛ վերակացուների, և՛ բոլոր ուսուցիչների կենդանի «կարգին հայերենի» իմացությունը. «Էջմիածնի դպրանոցը այդ բազմազան խառնուրդները պետք է ի մի համաձուլի և նրանցից առաջ բերի մի կարգին գրական հայերեն»²⁵³:

Ի հավելումն ասվածի՝ հայագետը ցավով նշում է, որ հաճախ այդ նույն վարժապետները, անգամ ճեմարանի ուսուցիչներն իրենց երեխա-

²⁵¹ «Հորիզոն», հմ. 193, Թիֆլիս, 1910:

²⁵² «Հորիզոն», հմ. 207, Թիֆլիս, 1910:

²⁵³ «Հորիզոն», հմ. 208, Թիֆլիս, 1910:

ների հետ խոսում են օտար լեզվով, որովհետև, ինչպես այսօր, կարծում են, որ «սա՛հաց կտա նրան, և ոչ թե հայերենը»²⁵⁴:

Աբեղյանը, շարունակելով հանգամանալից ու մանրամասն քննել հայերեն չիմանալու սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառները, գրում է. «Եվ պ. Ն. Թումանյանը, որ անշուշտ ամենը գիտե, դեռ հարց է տալիս, թե ինչո՞ւ մեր դպրանոց ավարտողները հայերեն չգիտեն: –Նրանք լավ հայերեն չգիտեն, որովհետև կրթված հասարակությունը չգիտե, որովհետև պատահում է, որ իրենց ուսուցիչներն էլ չգիտեն և նույնիսկ չեն հարգում այդ լեզուն, և որովհետև այդ դրությունը համարվում է թույլատրելի»²⁵⁵: Մեծ հայկաբանը հայերեն լավ չիմանալու և չսովորելու գլխավոր պատճառը համարում է արհամարհանքը սեփական լեզվի նկատմամբ: «Դա մեր կյանքի ամենացավոտ կողմն է...», – արձանագրում է Աբեղյանը: –Մի՞թե կարելի է դատապարտել մի աշակերտի, որ լավ գրաբար սովորել չի աշխատում, երբ նա տեսնում է, որ հազարավոր հայ տղայք, գիմնազիայի աշակերտներ և ուսանողներ, նույնիսկ բարձրագույն ուսում ստացած հայազգի տղամարդիկ ու շատ կրթված հայ կանայք ոչ միայն գրաբար մի տող չեն հասկանում, այլև հայերեն չգիտեն իրենց իմացածի քառորդի չափ, ոչ միայն հայերեն լեզվով երկու տող գրել չգիտեն ու չեն գրում, այլև հայերեն լեզվով կես ժամի չափ մի հասարակ զրուցատրություն անել չեն կարողանում: Ոչ միայն այդ կրթվածները հաճախ բառի բուն նշանակությամբ հայերեն չգիտեն, այլև ավելորդ են համարում իմանալ: Ե՛վ գրում, և՛ խոսում են դրանք ուրիշ լեզուներով, և ամոթ չէ համարվում այդ, այլ իրերի բնական դրություն»²⁵⁶: Ազգասեր, կրթված, մտավորական հորջորջվող մարդիկ բացասական օրինակներ են դառնում աշակերտների համար:

Այսպիսով՝ կրթօջախներում հայոց լեզվի թերուսուցումն ու չիմացությունը պայմանավորված են հասարակական կյանքի ամենատարբեր հանգամանքներով, քանի որ դպրոցը նույն հասարակության բաղկացուցիչ և անքակտելի մասն է. «Ինչ որ մեր կյանքի մեջ կա, նույնը պիտի լինի

²⁵⁴ «Հորիզոն», հմ. 207, Թիֆլիս, 1910:

²⁵⁵ Նույն տեղում:

²⁵⁶ Նույն տեղում:

մեր դպրոցի մեջ: Քանի կյանքի մեջ հայերենն արհամարհված է, մեր դպրոցը կարգին հայերենի ուսում չի կարող տալ ընդհանրապես»²⁵⁷:

Հոգվածաշարի վերջում Աբեղյանը հույս է հայտնում, որ կարելի է որոշակի բարեփոխումներ կատարել կրթական գործընթացում: «...Կյանքը փոխելն իհարկե մեր ձեռքին չէ,— գրում է նա,— բայց մենք կարող ենք դպրոցն այնպես կարգավորել, որ արտաքին ազդեցությունները գոնե պակասեն և համեմատաբար ավելի լավ հայերեն սովորեն մեր աշակերտները»²⁵⁸:

Աբեղյանը մի քանի կետով առաջարկում է բարեփոխման իր հայեցակարգը, որը, ինչպես նշում է Ս. Հարությունյանը, «երեք տարի առաջ Խրիմյան Հայրիկին ներկայացրած Ճեմարանի ուսումնական դրվածքի բարեփոխության իր ծրագիրն էր՝ համալրված հատկապես հայոց լեզվի հարգն ու ուսուցումը դպրոցներում պատշաճ բարձրության վրա դնելու նոր առաջարկներով»²⁵⁹:

Հիմնական դրույթներն են՝ ա) կարգուկանոն հաստատել դպրոցներում, բարելավել ուսուցման ողջ գործընթացը, բ) հայերենը համարել գլխավոր առարկաներից մեկը, գ) ուսումնառության բոլոր տարիներին աշխարհաբարի ուսուցումը դարձնել պարտադիր, դ) աշակերտների ընդունելությունը կատարել համապատասխան ծրագրով, և եթե չեն բավարարվում ծրագրի պահանջները, չընդունել, ե) յուրաքանչյուր դասարանի ուսուցման գործընթացը իրականացնել առարկայական համապատասխան չափանիշներով, ծրագրերով, գ) հնարավորինս նվազեցնել ուսուցիչների և տեսուչների փոփոխությունը, է) ունենալ այնպիսի տեսուչ, որ կարողանա հսկել բոլոր առարկաների, առավել ևս հայերենի ծրագրի անթերի գործադրությունը, ը) ուսուցիչների և այլ պաշտոնյաների ընտրության ժամանակ պահանջել հայերենի բավարար իմացություն, թ) ունենալ որակյալ դասագրքեր և այլն:

Այսպիսով՝ վերոհիշյալ առաջարկությունների ամբողջությունը բարեփոխման համալիր ծրագիր է, որի հանգամանալի ուսումնասիրությունը հուշում է, որ Աբեղյանի առաջ քաշած խնդիրները, կատարած դիտարկումները դեռևս վերջնական լուծում չեն ստացել: Մեր օրերում էլ հայ

²⁵⁷ «Հորիզոն», հմ. 208, Թիֆլիս, 1910:

²⁵⁸ Նույն տեղում:

²⁵⁹ **Հարությունյան Ս.**, Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, Երևան, 1970, էջ 72:

աշակերտը, ուսանողը դպրոցը կամ բուհը ավարտում են հայերենի թերիմացությամբ, դժվարանում են գեղեցիկ և կանոնավոր կերպով շարադրել իրենց մտքերը: Թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում աղճատվում և վտանգվում է մայրենին. խառնաձին հասարակաբանությունները, օտարաբանությունները փառավոր տեղ են գրավում մեր լեզվում: Ոչ պակաս մտահոգիչ է նաև հայերենի աղավաղումը հեռուստատեսությամբ և լրագրողների կողմից:

Այսօր կրթական բարեփոխումներ անվան տակ փորձեր են արվում ամրապնդելու ազգային լեզվամտածողությունը, նոր չափորոշիչներ, ծրագրեր ու դասագրքեր գրելու, գիտելիքներ, կարողություններ, հմտություններ ձևավորելու, ընդունելության, փոխադրման նորանոր ձևեր մշակելու, սակայն, ցավոք, դրանք երբեմն ունենում են հակառակ արդյունքը: Հայ երեխան, հայ մարդը հաճախ ավելի սիրով և եռանդով է սովորում օտար լեզուներ, քան մայրենին: Լեզուն մեր մտքի և հոգու ամենացայտուն արտահայտությունն է, ուստի այն մշտապես պահանջում է ամենօրյա ուշադրություն և սեր:

Եզրափակելով նշենք, որ Աբեղյանի «Մեր դպրոցական կյանքից» հոդվածաշարը այսօր էլ ունի արդիական հնչեղություն, և նրա մանրամասն ուսումնասիրությունը կրերի լուրջ հետևությունների և գործնական քայլերի, կօգնի այսօրվա դպրոցին՝ կատարելագործելու հայոց լեզվի ուսուցման գործընթացը:

Այսօր՝ XXI դարում, համաշխարհային փոփոխությունների այս մրցավազքում անհրաժեշտ է սիրել և ամուր պահել մեր ամենահաստատուն զենքը՝ լեզուն, իսկ դա հնարավոր է միայն մայրենի լեզվի հրաշալի իմացությամբ, ինչը նշանակում է, որ դպրոցներում և բուհերում հատուկ ուշադրության պիտի արժանանան հայոց լեզվի և գրականության դասավանդումը, մայրենիի անաղարտության պահպանումը:

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԵՎ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՂԲԵՐԸ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ

Հերիքնազ Որսկանյան

Բ.Գ. Թ.

Ընդգրկուն ու խորն է Մանուկ Աբեղյանի քննական տեսադաշտը: Իր հետազոտության ծիրում գտնվող յուրաքանչյուր հարցի մոտենալիս նա դրսևորել է սկզբունքայնություն, նյութը համակողմանի վերլուծության ենթարկելու համար մշակել է հատուկ մեթոդներ, արժևորել է գրական երկը այլ ստեղծագործությունների հետ ունեցած աղերսներն ու առնչակցությունները բացահայտելու ճանապարհով և, որ ամենակարևորն է, յուրաքանչյուր ստեղծագործության մեջ փնտրել է ազգային գույն ու ոգի:

Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» և Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի դիմաց Կաթուղիկէին» պատմաողբերի գրականագիտական վերլուծության, երկու ստեղծագործությունների համադրության մեջ ևս հստակ դրսևորվում են գիտնականի հետազոտական մեկնակետերը:

«Ողբ Եդեսիոյ»-ն Մանուկ Աբեղյանը համարում է Շնորհալու գլուխգործոցը: Անդրադառնալով քերթվածի թեմատիկային՝ նա փաստում է, որ ողբի նյութը ոչ կրոնական է, ոչ կրոնավորներին է վերաբերում, այլ աշխարհիկ է, բայց ոչ արևելյան հեքիաթ, այլ պատմական իրադարձություն. քաղաքական դեպքերն են դարձել ստեղծագործության նյութ:

Արձանագրելով, որ դա դարի ամենամեծ նորությունն էր՝ Աբեղյանը քերթվածի ինքնատիպությունը նախ և առաջ դրա մեջ է տեսնում, ապա գրում է. «Բայց միանգամայն այդ երկն իր մեջ լայնորեն անդրադարձրած ունի հեղինակին ժամանակակից իրականությունը, հասարակական և ազգային կյանքի իրական պատկերը, լի է հայրենասիրական ոգևորությամբ, հարուստ և փայլուն նկարագիրներով, լինի խաղաղ և բարօր կյանքի, բնության ու շեն քաղաքների, թե՛ քաջամարտիկ կռիվների, որ մղում են այլազգիների դեմ, և թե՛ վերջինների գործած վայրագությունների: Եվ այս ամենի վրա ընդարձակ ծավալով սփռվում են հեղինակի հույզերն ու խոհերը, նրա զգայուն սրտի մորմոքն ու կակիծը, նրա հույսերն ու տենչե-

րը, որ միայն իրենը չեն, այլ նաև իր ժամանակի քրիստոնեությանն ընդհանրապես և հայությանը մասնավորապես»²⁶⁰ :

Խորքային առումով տարողունակ, բանաձևային ընդգրկում ունեցող բնորոշում, որն ի ցույց է դնում «Ողբի» ամենաէական կողմերը, միաժամանակ ուրվագծում այն մոտիվները, որոնք դառնալու են գրականագետի հետազոտության նյութը:

Եթե հետևենք վերլուծության ենթավերնագրերին, այն է՝ «Քերթվածի իրական պատմական նյութը և ծագումը», «Էական կողմը», «Իրականության հրապուրիչ ներբողը», «Բարբարոսական ռազմական գործողությունների ռեալիստական պատկերը», «Մահմեդականության և քրիստոնեության կովի հիմնական պատճառը, մեղքը: Նոր հայացք: Երկբայություն», «Անեծքների շարանը», «Քաղաքական լավատեսություն և լավ օրերի գեղեցիկ երազը: Աշխարհիկ կյանքի ծարավն ու հաղթանակը բանաստեղծության մեջ», ապա ակնհայտ է, որ Աբեղյանը քայլ առ քայլ բացում, վերլուծում է «Ողբը»՝ հետևելով վերը մատնանշված հատկանիշներին:

Նախ գիտնականը ներկայացնում է պատմական աղետալի իրադարձությունը, որը դարձել է քերթվածի գործողության հիմքը, ապա վեր է հանում երկի ծագման դրդապատճառն ու նպատակները:

Հետաքրքիր է, որ Աբեղյանի աչքից չի վրիպում փոքրիկ մի մանրամասնություն. նա վկայակոչում է Շնորհալու բառերը, որ «Ողբը» հորինել է ոչ թե «գիտունների», այլ Ապիրատի ու նրա նման «տխմարների» համար, ապա եզրակացնում է, որ այսպիսի ծագում ունենալով հանդերձ՝ Շնորհալին ստեղծել է «իր գրական վաստակների պսակը, եռանդով ոգված մի գեղեցիկ քերթված»²⁶¹:

Կարծում ենք՝ հենց այդ ուղղորդվածությունն էլ պայմանավորել է լեզվի մատչելիությունը, ժանրի ընտրությունը, ժանրային բովանդակությունից թելադրվող գեղարվեստական մի շարք հատկանիշները՝ ողբը շարադրելու համար ընտրված ձևը՝ դիմառնությունը՝ այնքան հարիր ազգային հոգեբանությանը, բազմահանգությունը, զգացմունքային լավածությունը բարձրացնելու միտում ունեցող ներքին հանգավորումները, զգացմունքների ու խոհերի արտակարգ տպավորիչ պատկերներ ստեղծող պատկերավորման-արտահայտչական միջոցները:

²⁶⁰ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Եր., 1970, էջ 128:

²⁶¹ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 129:

Ամեն ինչ միտվում է նրան, որ խոսքը տեղ հասնի և ազդեցություն ունենա, ներգործի մասնավորապես Ապիրատի նման «մանուկ» տղաների վրա:

«Ողբը» մասսայական ընթերցողին ուղղված ստեղծագործություն է, որն ունի թե՛ խրատաբարոյական միտում, թե՛ քաղաքական իրավիճակի սթափ վերլուծությունից բխող եզրահանգումներ:

Վարպետության, տաղանդի շնորհիվ Շնորհալին կարողացել է հասնել իր նպատակին, և դրան մեծապես նպաստել է «Ողբը» շարադրելու համար ընտրված ձևը՝ դիմառնությունը, որը Աբեղյանը քերթվածի հորինվածքի գյուտն է համարում: Այն գեղեցկություն, ավելին՝ մեծ կենդանություն է տալիս երկին: Ճիշտ է, ինչպես մատնանշում է Աբեղյանը, հեղինակը երբեմն մոռանում է դիմառնությունը և գրում է իր անունից, կամ էլ կան տողեր, որոնք չեն հարմարվում ողբերգու կնոջ, բայց դա չի ստվերում քերթվածի գեղեցկությունը: «Կարդալիս, – գրում է Աբեղյանը, – մեծագույն մասամբ մոռացվում է բարառնությունը, և մեզ թվում է, թե իրոք մի մանկակորույս, գորովագութ թշվառ կին է խոսողն ու կոծողը, Եդեսիայի տիրուհին, որ լալով պատմում է իր գլխին եկածները: Եվ այդ կենդանի մարդկային էակի դառն ցավն և աղեկտուր արտասուքը համակում է մեզ ի գութ և ի խանդաղատանք»²⁶²:

Այս տողերում, ըստ էության, ընդգծվում է Աբեղյանի համար բանաստեղծական երկը արժևորելու ամենակարևոր չափանիշներից մեկը՝ մարդկային հոգու, ներաշխարհի բացահայտումը:

Ելնելով գրական երկը վերլուծելու իր սկզբունքներից՝ Աբեղյանը ներկայացնում է ժամանակի հասարակական և ազգային իրական կյանքի պատկերը, հասնում Արիստակես Լաստիվերտցու ժամանակները, որն արդեն մորմոքվում էր Հայաստանի անկման, շեն երկրի ավերման համար: Աբեղյանի նպատակն է ցույց տալ, որ Շնորհալին, ի դեմս Եդեսիայի, երգել է նաև Հայաստանի իրականությունը, որովհետև դեպքերն ու աղետալից վիճակը շատ կողմերով նման են եղել: Բացի այդ, Շնորհալին Եդեսիային ողբակից է հրավիրում Վաղարշապատ, Անի քաղաքներին:

Աբեղյանը ցավով արձանագրում է, որ Շնորհալու այս տխուր ողբերգով Վաղարշապատն ու Անին դառնում են Հայաստանի անցյալ մեծու-

²⁶² Նույն տեղում, էջ 130:

թյան սիմվոլներ, նույնիսկ «Մայր Հայաստանի» կոչված նկարի գաղափարը XIX դարում առնված է «Ողբի» այն տողերից, որոնցով Շնորհալին պատկերացրել է ավեր Հայաստանը. «Նըստիս որբ և այրի, տըխուր դիմօք՝ զերթ ի սըզի»:

Աբեղյանը Շնորհալու երկի ամենաէական կողմը համարում է հայրենասիրական նվագը: Հետադարձ հայացքը՝ ուղղված հայ գրականությանը, թույլ է տալիս գիտնականին ասելու, որ մինչ այդ չենք ունեցել չափաժողովոր քանադասություն, ուր հնչի անկեղծ կարոտ կորած քաղաքական ազատության համար, և հնչի տենչանք՝ ունենալու այն հին երկիրը: Աբեղյանը Շնորհալու «Ողբը» բնորոշում է իբրև «մեր ժողովրդի դարավոր վերքերի առաջին բանաստեղծական ողբ», «հայրենասերի ողբ», «առաջին «Վերք Հայաստանին»»:

Շարադրանքում ակնառու է իր իսկ՝ գրականագետ քաղաքացու կերպարը. քերթվածի հայրենասիրական բովանդակության մասին Աբեղյանը խոսում է առանձնակի ոգևորությամբ, նրա սեղմ խոսքը դառնում է երկարաշունչ, մեջբերումները՝ ընդարձակ:

Աբեղյանը մատնանշում է քերթվածում առաջադրված մեկ այլ խնդիր՝ քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների հակամարտությունը, և նորից ամփոփելով իր դիտարկումները՝ հստակ բանաձևում է քերթվածի էությունը. «քրիստոնեության և մահմեդականության հակամարտություն և հայրենասիրական ողբերգություն այլագգիներից կրած ավերմունքի հիման վրա»:

Եթե Արիստակես Լաստիվերտցին տարակուսում էր, թե սելջուկյան թուրքերը, տարիներ շարունակ հարևան լինելով, չարություն են նյութում հայերի հանդեպ, ապա Շնորհալին արդեն նրանց բնորոշում է իբրև գազանացած արյունարբուներ, որոնց սուրը մեր արյանն է ծարավի և չի հագենա երբևէ:

Շնորհալին ունի դրա բացատրությունը. պատճառը նրանց տարբեր կրոնական հակասության մեջ է: Մի մեկնաբանություն, որ, ըստ Աբեղյանի, շատ բնական էր այն դարերում: Գիտնականը, սակայն, միևնույն ժամանակ նկատում է, որ Շնորհալին այդ հարցում առաջ չի անցնում հին մեկնաբաններից և քրիստոնյաներին հասած աղետների պատճառը համարում է աստվածային պատիժ մեղքերի համար: Այսինքն՝ փաստելով հանդերձ, որ «մեր բանաստեղծությունը 12-րդ դարի կեսին արդեն

երկնքից իջել էր երկիր և դարձել կյանքի և բնության գեղեցիկ արտացոլումը ոչ միայն իր ընդհանուր էությանմբ, այլև բովանդակային մանրամասներով...»²⁶³՝ Աբեղյանն ընդունում է Շնորհալու աշխարհայացքը ձևավորած հոգևոր մթնոլորտի ազդեցությունը:

Գիտնականը, սակայն, անբնական է համարում ողբացող կնոջ բերանից լսել 182 տող երկար ու բարակ օրինակներ Ս. գրքից: Նա նկատում է, որ հատվածը վնասում է երկրի վայելչահյուս գեղեցկությանը, և կարծում է, որ հետո է ավելացված իբրև խոհուն մարդկանց՝ Աստծու դատաստանի իրավացի լինելու մասին երկբայության ոգու արտահայտություն:

Նշենք, որ Գրիգոր Հակոբյանից և Մանուկ Աբեղյանից հետո գրականագետները գրեթե չեն անդրադարձել այդ հատվածին և իրենց գնահատականներում հիմնականում երկրորդական պլան են մղել «Ողբի» կրոնական ելակետը: Սա ևս վկայում է Աբեղյան գիտնականի անաչառության մասին: Կարծում ենք միայն, որ հատվածը, եթե անգամ վնասում է երկրի հյուսվածքին, ի սկզբանե «Ողբի» մտահղացման մի օղակն է եղել: Լևոն Տեր-Պետրոսյանը բացահայտել է Շնորհալու «Ողբի» կապը ասորական գրականությանը, նրանում՝ Հովհաննես Մերդինցու և նրա հակառակորդների միջև ծագած բանավեճի արձագանքը²⁶⁴:

Մերդինցին առաջ էր քաշում այն տեսակետը, որ ֆրանկների զորքի՝ քաղաքում լինելու դեպքում Եդեսիան չէր ընկնի թուրքերի ձեռքը:

Բանաստեղծը հակաճառում է Մերդինցու նման մտածողներին՝ նշելով, որ Զանգին ինքնին ոչնչություն է, և երկնային թագավորն է տնօրինում կյանքը:

Ոչ միայն այդ հատվածում, այլև քերթվածի այլ էջերում ևս Շնորհալին շեշտում է, որ Աստծո պատվիրանները մոռանալու պատճառով է պատժվում քաղաքը: Քրիստոնեական վարդապետության ճշմարտությունների վրա է հենվում բանաստեղծը նաև հոգու և մարմնի, դատաստանի և հատուցման մասին խոսելիս: Այդ ճշմարտության վրա է խարսխվում Շնորհալու լավատեսությունը ևս. նահատակներն անձառ լույսով պիտի լուսավորվեն, և դա կլինի մնացողներին մխիթարություն, իսկ քրիստոնյաները պիտի հաղթեն մահմեդականներին:

²⁶³ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 131:

²⁶⁴ Տե՛ս «Ներսես Շնորհալի», հոդվածների ժողովածու, Եր., 1977, էջ 202-211:

Քննելով այս հարցը՝ Աբեղյանը նկատում է, որ Շնորհալու լավատեսությունն այդքանով չի սահմանափակվում: Նա գուգահեռ է անցկացնում Հովհաննես Սարկավագի և Ներսես Շնորհալու հայացքների միջև. «Հովհաննես Սարկավագն իր գրած աղոթքով²⁶⁵ խնդրում է աստծուն, որ արտասվահոս տրտմությամբ վտարված ու ցրված ժողովուրդը ժողովվի ուրախությամբ և փրկվի. նույնը Շնորհալին երևակայում է արդեն շատ շուտով կատարելի, նույնիսկ ավելի շուտ, քան մի տարի («Ձի չէ ամով այս լինելոց»)²⁶⁶:

Աբեղյանն արժևորում է քերթվածը նաև նրանով, որ մեծ կրոնասեր լինելով՝ Շնորհալին չի քարոզում «Մի՛ կալ հակառակ չարին» սկզբունքը, այլ դրվատում է քաջամարտիկ կռիվը այլազգի թշնամիների դեմ՝ նրանցից պաշտպանվելու համար: Միաժամանակ նա դեռ XXII դարում բանաստեղծել է խաչակրության մասին, այն, որ մեր «Եդեսիոյ ողբի» հորինումից չորս հարյուր տարի հետո ծնված իտալացի բանաստեղծ Տորկատո Տասսոն պիտի երգեր իր «Ազատված Երուսաղեմ» հռչակավոր վիպական քերթվածի մեջ»²⁶⁷:

Աբեղյանը կարևորում է այն հանգամանքը, որ Շնորհալու քերթվածը լի է կենսասիրությամբ, և դա ոչ միայն հեղինակի, այլև ժամանակի հասարակության բաղձանքի արտահայտությունն էր:

«Այսպիսով,– գրում է Աբեղյանը,– վերջ է տրվում նարեկյան խիստ կրոնաճգնավորական հայացքին մեր բանաստեղծության մեջ, միաժամանակ և սկիզբ է դրվում մի քաղաքական գեղեցիկ երազի-արևելյան քրիստոնյաների լավ օրեր և վերածաղկում եվրոպացիների օգնությամբ»²⁶⁸:

Նշենք, որ Շնորհալու մտայնությունը՝ խարսխված Ներսես Պարթևի մարգարեության վրա, այն է՝ կործանված Հայոց աշխարհի փրկությունը հռոմեացիների՝ «ֆրանկների» ձեռքով է լինելու, սին երազանք ու ակնկալություն չէր միայն: Մեր համոզմամբ Շնորհալին երկը գրել է ոչ թե 1145 թ., այլ 1146 թ. սկզբին, երբ խաչակիրների նախապատրաստությունները որոշակի էին դարձել՝ Շնորհալուն հավատ ընծայելու համար, որ կիրականանա Ներսես Մեծի մարգարեությունը:

²⁶⁵ Մ. Աբեղյանը նկատի ունի Հովհաննես Սարկավագի՝ ի պատիվ Ղևոնդյանց ոգած շարականը՝ «Պայծառացան այսօր»:

²⁶⁶ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 145:

²⁶⁷ Նշվ. աշխ., էջ 146:

²⁶⁸ Նույն տեղում:

Աբեղյանը իբրև քերթվածի հորինման տարեթիվ նշում է 1145 թ. կամ 1146 թ.²⁶⁹ չցանկանալով առանց հիմնավոր կովանների որոշակիացնել այն:

Կարևորելով գեղարվեստական ստեղծագործության հասարակական-գաղափարական միտվածությունը՝ Աբեղյանը նաև մեծ ուշադրություն է դարձնում գեղարվեստական ստեղծագործության ձևին: Այս առումով նա Շնորհալու մեծությունը տեսնում է նախ բնությունն ինքն իբրև երգի նյութ դարձնելու մեջ. բնությունը Շնորհալու մոտ պատկեր կամ նմանություն չէ կամ էլ այլաբանություն: Աբեղյանը հավաստում է, որ նախորդ շրջանում ունենք Նարեկացու Վարդավառի տաղը, բայց այն հետապնդում է կրոնական նպատակ ու դիտում: Կլասիկ պատմագիրներից մասնավորապես Մովսես Խորենացին գործողության վայրերի մի քանի գեղեցիկ կարճ նկարագիրներ ունի, բայց ոչ ոտանավոր և այնպես մաքուր բանաստեղծական, ինչպես Շնորհալին: Վերջինս ոչ թե սառն ու անտարբեր պատկերահանում է բնությունը, այլ տալիս է հույզով տոգորված նկարագիր:

Աբեղյանն արժևորում է Շնորհալու քերթվածում առկա ռազմական գործողությունների ռեալիստական պատկերները, որոնք նա շարադրել է մեծ տաղանդով ու բանաստեղծական կենդանի հյուսվածքով: Պատկերներն Աբեղյանը համեմատում է շարունակ փոփոխվող նկարի հետ: Այդ տեսարաններին անդրադառնալիս Աբեղյանի շարադրանքը դառնում է նկարագրական, վերապատմում է գործողությունները՝ կարծես ինքն իրեն արդարացնելով. «Կարելի չէ առանց հուզվելու կարդալ նրա մեծ արվեստով հյուսված այդ հատվածի տողերը, որ իրականության ռեալիստորեն գծված պատկերն է, մի իրականության, որ հաճախ է տեղի ունեցել: Դրանք նկարագիր լինելով հանդերձ՝ և՛ ողբ են, և՛ ցավի ճիչեր»²⁶⁹:

Աբեղյանն անդրադառնում է ժողովրդական ռճին և լեզվաձևերին բնորոշ անեծքների կիրառմանը: Եթե դրանք հարիր չեն մեղմ ու բարի հոգի ունեցող հեղինակին, ապա միանգամայն արդարացված են որդեկորույս Որբնայրու համար: Գրականագետը դժվարանում է տողեր ընտրել, որովհետև բոլորն ազդու են, բուռն և ուժեղ և նույնիսկ ճնշող են չարաբաղձ արտահայտությունների կուտակությամբ:

²⁶⁹ Նշվ. աշխ., էջ 138:

Հորինվածքի ուժեղ կողմերից մեկն Աբեղյանը համարում է այն, որ բարկացայտ ու ցասումնալից անեծքներից հետո բանաստեղծը հորինում է մի զորեղ հակադրություն՝ բացելով անիծողի սրտի քնքուշ խորշերը՝ պարզաբանելով անեծքների հիմքը:

Աբեղյանը գնահատում է Շնորհալու վարպետությունը նաև այն հարցում, որ պատմությունը հյուսել է բայերի անցյալ ժամանակով՝ ուժեղացնելով ներագդեցությունը ընթերցողի վրա:

Գիտնականը չի վարանում գրելու, որ քերթվածը բանաստեղծը վիպերգել է մեծ հմտությամբ, իբրև մի գիտակ անձ, որ արդեն իշխում է իր՝ կատարելության հասած արվեստին՝ «երևան բերելով բացադրության թեթև ճոխություն և փայլուն գյուտեր»:

Թերևս այդ փայլուն գյուտերն են պատճառը, որ «Ողբի» գեղարվեստական առանձնահատկություններին անդրադառնալիս Աբեղյանի պարզ շարադրանքը ձեռք է բերում բանաստեղծական պատկերավորություն: Այսպես, Աբեղյանը գրում է. «Ողբի մեջ Շնորհալին մեղմ և անուշ, բայց և գունեղ ու նկարեն ոճով, երփնագրել է տեսարանը», կամ՝ «քաղաքի գեղեցկությունը պատկերում է մերթ շքեղ նմանություններով, մերթ մի երկու նկարչական բառով միայն, երբեմն անմոռանալի հստակ ու հոսուն տողերով», մեկ այլ դեպքում՝ Շնորհալին «վիպերգել է վճիտ ոճով»²⁷⁰:

Աբեղյանը մասնավորապես կարևորում է այն, որ Շնորհալին չի դիմել արվեստակյալ պերճության ու փայլի: Ամեն ինչ թեթև է ու ճաշակավոր, անբռնազրոս ու կենդանի, առանց ավելորդ զարդարանքների, ամեն ինչ հյուսվել է մեծ ներշնչումով ու ոգևորությամբ:

Աբեղյանը եզրակացնում է, որ Շնորհալին ծանոթ է եղել Հովհաննես Սարկավագի տեսությանը, թե բանաստեղծը հետևում է բնությանը, որ է՝ իրականությունը, և հմտորեն կիրառել է այն: Նա իր համոզմունքն է արտահայտում, որ Շնորհալին եթե անգամ ծանոթ էլ չլիներ այդ տեսությանը, միևնույն է, դա ժամանակի ոգու պահանջն էր, որին արձագանքում էր բանաստեղծը:

«Ողբի» վերլուծությունն Աբեղյանն ամփոփում է՝ մեկ անգամ ևս արձանագրելով, որ քերթվածի ինքնատիպությունը նախ և առաջ աշխարհիկ

²⁷⁰ Նշվ. աշխ., էջ 135, 137:

իրականությանը անդրադառնալու մեջ է, թեկուզև այն կողմերով, ինչքանով հնարավոր էր՝ «չպարսավելու համար անդուռն բերաններից»:

Համեմատությունը խաչակրության քերթող իտալացի բանաստեղծի նշանավոր երկի և արևելյան արաբական ստեղծագործությունների հետ թույլ է տալիս Աբեղյանին վստահաբար ասել, որ միջնադարի համաշխարհային գրականության համապատկերում մենք XX դարում արդեն ունենք բանաստեղծ՝ իրականության մաքուր ընկալումով, հեռու վիպական հրաշալիքներից, և դա նոր մտավոր հոսանքի հաղթանակն էր:

Քերթվածի պատմական հիմքի, ժամանակաշրջանի քաղաքական դեպքերի, XIII դարում տեղի ունեցած բեկումնային իրադարձությունների վերհանումով է Աբեղյանը վերլուծում նաև Ստեփանոս Օրբելյանի «Ողբը»՝ սկզբից նեթ տալով քերթվածի բովանդակային բնորոշումը՝ «քնարական քերթված, որ իր մեջ անդրադարձրել է հեղինակի և նրա ժամանակի հայ հայրենասիրական ոգին ու խոկերը»:

Աբեղյանն ուշադրություն է դարձնում թե՛ վերնագրում, թե՛ Հիշատակարանում բերված փաստին. Խաչատուր անունով բաբունապետն է մղել հեղինակին գրելու քերթվածը: Հենց սրա վրա էլ խարսխվում է գիտնականի եղրակացությունը, որ բանաստեղծությունը ոչ միայն անձնական խոհերի արդյունք է, այլ նաև Խաչատուր Կեչառեցու և նրա նման մտածողների հայացքների արտահայտություն: Ավելին՝ հիշատակարանից Աբեղյանը քաղում է իր ենթադրությունները հիմնավորող կարևոր մի տեղեկություն ևս. Խաչատուրը եկել է Արարատյան տնից: Իսկ սա արդեն ուղղորդում է Աբեղյանին՝ կառուցելու իր տեսությունը՝ երկի գաղափարական բովանդակության մեկնաբանման շուրջ:

Պատմական փաստերի համադրումը հնարավորություն է տալիս գիտնականին հասկանալու տիրող տրամադրությունը: Կիլիկյան Հայոց թագավորությունը վտանգված էր մահմեդական տերություններից: Արևմտյան հայ հոգևորականությունը գնում էր կրոնական զիջումների հունահռոմեական եկեղեցիների առջև: Սա գծության պատճառ էր դարձել արևելյան և արևմտյան հայ եկեղեցիների միջև:

Աբեղյանի խորին համոզմամբ՝ քերթվածը չի կարելի բնորոշել միայն ողբ, և վերնագիրը, որ հնարավոր է՝ հեղինակի գրածը չէ, լիովին չի արտահայտում քերթվածի բովանդակության էական կողմերը: Այստեղ էա-

կան է քարոզը՝ կաթողիկոսական աթոռը փոխադրել Արևելք, և ոչ միայն դա:

Եթե Շնորհալու «Ողբը» գնահատելիս Արեղյանը հետադարձ հայացք է գցում ողջ հայ գրականությանը, ապա Օրբելյանի «Ողբը» քննելիս նա շարունակ գուգահեռներ է տանում Շնորհալու և Օրբելյանի ողբերի միջև թե՛ գաղափարական-բովանդակային, թե՛ գեղարվեստական առումով:

Շնորհալին արտահայտում է XII դարի կեսերի արևմտյան հայության հայացքները. երկրորդ խաչակրաց արշավանքները կրերեն փրկություն, և հալածված քրիստոնյաներն ի վերջո ուրախ և երջանիկ կապրեն իրենց տարածքներում:

«Շնորհալին,– գրում է Արեղյանը,– ողբում էր Հայաստանի քաղաքական իշխանության կործանումը, բայց չէր մտածում Հայոց աշխարհում անկախ հայկական թագավորություն ստեղծելու մասին»²⁷¹: Իսկ Օրբելյանը XIII դարի վերջին արտահայտում է բուն հայաստանցիների իդձերն ու տենչերը: Դա նոր ազգային գաղափարախոսություն էր. ցրված հայերը պետք է հավաքվեն մայր հայրենիքում, և Վաղարշապատը պետք է լինի ոչ միայն եկեղեցական, այլև քաղաքական կենտրոն: Այս ձգտման քաղաքական հիմքը պայմանավորված էր մահմեդականացած թաթարների մոլեռանդության պատճառով ստեղծված իրավիճակով, որ հանգամանորեն ներկայացնում է Արեղյանը:

Եվ ինչպես Շնորհալին էր գտել նյութին համապատասխան հորինվածք, այնպես էլ Օրբելյանը. նա իր գաղափարները քարոզում է իբրև «Արքայտևի»՝ անձնավորված Կաթողիկեի բերանով: Այս առումով Արեղյանը քերթվածը նմանեցնում է միտումնավոր վիպական բանաստեղծությանը, ուր անուղղելի տրվում է բարոյական ուսում:

Արեղյանը հավաստում է, որ թեև ձևը գեղեցիկ է մտածված, սակայն ըստ ոճի և մանրամասների արտահայտության՝ աղքատ է, չունի պերճություն: Քերթվածի ձևական թերությունը ոչ թե հասարակ ոճի մեջ է, այլ պակաս ինքնուրույնության: Դա մասամբ նմանություն է Շնորհալու «Եղեսիոյ Ողբին»:

Արեղյանն ավելորդ է համարում կատարել երկու ստեղծագործությունների մանրամասն համեմատություն, այլ բերում է մի քանի ընդհա-

²⁷¹ Նշվ. աշխ., էջ 259:

նուր գծեր, ինչպես դիմառնությունը, ողբակցության կանչելը, հին լավ օրերի և ժամանակակից աղետալի վիճակի հանդիպադրությունը, որ Շնորհալուց առաջ էլ կա Լաստիվերտցու մոտ, «ուր» բառով սկսվող ճարտասանական հարցումները: Արեղյանը նկատում է նաև մի քանի պատկերների ակնհայտ նմանություններ, ինչպես՝ «Շնորհալին ունի «Քարամբ ծեծեմ կուրծքս սրտի», Օրբելյանը՝ «Զկուրծքըն բախեր քարամբ ուժգին»: Անցնել և այլևս չերևալ ստվերի պես կամ երազի պես. կամ «Որպես ծաղիկ ամարայնի» (Շն.), «Որպես ծաղիկ ամարայնոյն» (Օրբ.)»²⁷²:

Արդարացի լինելու համար Արեղյանը նրբանկատորեն նշում է, որ այդ ամենը, բացի բարառնությունից, կարող էին իրարից անկախ ծագած լինել. շատ դարձվածներ ու ճարտասանական, բանաստեղծական պատկերներ բխում են ուղղակի նյութի նմանությունից:

Գիտնականն ավելի կարևորում է քերթվածի անկեղծությունը, քերթվածին կենդանություն տվող ջերմ զգացմունքը: Նա մատնանշում է, որ հենց այդ անկեղծությունն էլ մղում է ընթերցողին մտորելու «Ողբի» էական գաղափարի շուրջ:

Օրբելյանի «Ողբի» վերլուծության մեջ հատկապես դրսևորվում է Արեղյան գրականագետի խառնվածքը. անկեղծությամբ շարադրված, բայց ձևական հատկանիշներով ոչ ինքնատիպ քերթվածը կարևորվում է գաղափարով՝ խտացած, խորացած հայրենասիրությամբ՝ դարձած մի կոնկրետ ձգտում:

«Այդ այլևս ոչ թե լոկ ողբ էր, ոչ թե տարագիր ժողովրդին հավաքելու և փրկելու մի տարտամ իդձ և աղոթք էր, որ երգել էր դեռ Հովհաննես (Յովհաննես) Սարկավազ Վարդապետը. ոչ թե մի երազ արևմտյան ազգերի ձեռով փրկվելու արևելյան քրիստոնեության հետ, այլ քարոզվում էր վերջ տալ ողբանքին, խնամ տանել սեփական երկրին, ձգտել բնիկ երկրում ունենալ եկեղեցական կենտրոնը և Այրարատյան դաշտում, իր նախկին վայրում՝ վերանորոգելու Հայոց թագավորական գահը: Այս արդեն մի նոր ու մեծ, պարզ ու որոշ զարգացում էր մեր հայրենասիրական երգի մեջ արծարծված գաղափարի- սիրով կապվել բուն հայկական երկրի հետ և կյի- նի «նորոգում»»²⁷³:

²⁷² Նշվ. աշխ., էջ 270-271:

²⁷³ Նշվ. աշխ., էջ 270:

Լայնահայաց տեսադաշտի, խորաթափանց մտքի, մանրագնին դիտարկումների շնորհիվ Աբեղյանը հանգում է հիմնադրությանին նշանակություն ունեցող այսպիսի եզրակացության՝ բացահայտելով յուրաքանչյուր հեղինակի աշխարհայեցողությունը՝ արտահայտված Ողբերի մեջ: Նրանց շարքում նա չի մոռանում Հովհաննես Սարկավագին, որն իր շարականով սկիզբ էր դրել նոր բովանդակությամբ ու նոր ոգով հայրենասիրական երգին:

Այսպիսով՝ Աբեղյանի՝ Ներսես Շնորհալու և Ստեփանոս Օրբելյանի Ողբերի գնահատությունը թույլ է տալիս արձանագրելու, որ Աբեղյանի փաստարկված եզրահանգումները կատարվում են դարաշրջանի իրադարձությունների գիտական լուսաբանմամբ: Յուրաքանչյուր վերլուծություն սկսելիս նա ներկայացնում է իր ուսումնասիրության ընդգրկման սահմանները՝ բանաձևելով իր ասելիքը:

Գիտնականը ուսումնասիրության շրջանակների մեջ է առնում բանաստեղծների աշխարհայացքը, գեղագիտական ըմբռնումներն ու իդեալները, քննության նյութ է դարձնում ստեղծագործությունների թեմատիկան, գաղափարական բովանդակությունը, պլոժեն, ծագման նախադրյալները, դրդապատճառները, վերնագրերը: Անէական թվացող մանրամասներն անգամ դառնում են մեկնաբանությունների հիմք: Քննվող ստեղծագործությունները գիտնականը դիտարկում է հայ գրականության համատեքստում, երբեմն՝ համաշխարհային գրականության համապատկերում, և «Հայոց հին գրականության պատմության» շրջանակում հնարավորինս վեր է հանում յուրաքանչյուրի ինքնատիպությունը, գեղարվեստականությունն ընդգծող էական կողմերը:

Մանուկ Աբեղյանի վերլուծություններն առ այսօր ուղենիշ են գրականագիտական հետազոտությունների համար:

**ԱԲԵՂՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱՉԱՓՈՒԹՅԱՆ
ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ**

ԷԴՈՒԱՐԴ ԶՐԲԱՇՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ր. գ. դ., պրոֆեսոր

Այն կարևոր տեղը, որ Մանուկ Աբեղյանի գիտական աշխատությունների մեջ գրավում են տաղաչափության հարցերը, պայմանավորված է հայ ժողովրդի հոգևոր կուլտուրայի, բանահյուսության, լեզվի և գրականության **համադրական ուսումնասիրության սկզբունքով**, որով բնորոշվում է գիտնականի ամբողջ վիթխարի ժառանգությունը: Իրոք այն հանգամանքը, որ Աբեղյանը հավասար եռանդով ու փայլով հանդես եկավ հայ բանասիրության երեք հիմնական ուղղություններով՝ ժողովրդական բանահյուսության, լեզվի և գրականության ուսումնասիրության բնագավառներում, չի կարող բացատրվել միայն գիտնականի հետաքրքրությունների լայնությամբ և տաղանդի հզորությամբ: Դա, անշուշտ, միաժամանակ և որոշակի հայեցակետի արտահայտություն էր, մեր ժողովրդի բնարվեստն իր պատմական զարգացման, բովանդակության և ձևական-կառուցվածքային հատկանիշների ներքին միասնության մեջ դիտելու միտումի դրսևորում: Այդ ձգտումը հատուկ էր հայ դասական բանասիրական գիտության լավագույն ներկայացուցիչներին և, իհարկե, ամենից ավելի՝ Մանուկ Աբեղյանին: Չկա հայ բանասիրության տառացիորեն և ո՛չ մի անկյուն, ուր թափանցած չլինի գիտնականի քննախնայգ միտքը՝ հաճախ իսկական հեղաշրջում կատարելով նրանց մեջ և ամենուրեք բերելով իր նոր և արդյունավետ հայեցակետը: Բանահյուսության, գրականության և լեզվի համադրական հետազոտության դիրքերից, բնականաբար, չէր կարող անտեսվել բանասիրության այնպիսի մի ճյուղ, որպիսին տաղաչափությունն է, որի մեջ յուրովի միանում, «հատվում են» այդ երեք բնագավառների տվյալները:

Մ. Աբեղյանը ելնում էր այն համոզումից, թե հնարավոր չէ ճիշտ գնահատել ո՛չ մեր ժողովրդական բանահյուսության գեղարվեստական մեծությունն ու անկրկնելի ինքնատիպությունը, բանահյուսություն, որի խոշորագույն հուշարձանները չափածո են ստեղծվել, և ո՛չ էլ մեր բանաստեղծ-

ների կերտած մեծ արժեքները՝ Նարեկացուց և Շնորհալուց մինչև Տերյան ու Չարենց, եթե գիտականորեն ստուգված չափանիշների հիման վրա չբացահայտվեն նրանց տաղաչափական կառուցվածքի էական հատկանիշները: Չափածոն գեղարվեստական խոսքի կառուցման մի ամբողջական և ինքնուրույն համակարգ է, որի բոլոր կողմերը՝ ռիթմը, հանգը, տունը, բանաստեղծական հնչյունաբանությունը, գտնվում են ինչպես փոխադարձ կապի, այնպես էլ բովանդակության հետ համակողմանի պայմանավորվածության մեջ: Հետևաբար, առանց տաղաչափական կառուցվածքի «ներքին օրենքների» և բարդությունների բացահայտման չի կարելի ճիշտ հասկանալ ինչպես տվյալ երկի իմաստն ու գեղարվեստական հմայքը, այնպես էլ, առհասարակ, չափածոյի յուրահատկությունները արձակի համեմատությամբ, քանի որ դրանք, վերջին հաշվով, արտահայտվում են չափածո կառուցվածքի մեջ: Մյուս կողմից, քանի որ ոտանավորը տվյալ լեզվի որոշ կառուցվածքային-քերականական և արտասանական առանձնահատկությունների խտացումն ու առավել զտված արտահայտությունն է, հենց այդ պատճառով էլ տաղաչափության հետազոտությունը դառնում է նաև լեզվաբանական կարևոր խնդիր: Սրանով է պայմանավորված տաղաչափական ուսումնասիրության յուրահատուկ տեղը Արեղյանի գիտական ժառանգության մեջ: Դա մի յուրօրինակ միջանկյալ բաժին է նրա լեզվաբանական ու գրականագիտական հետազոտությունների միջև, ներառում է մեկի ու մյուսի արդյունքները և իր հերթին նյութ է տալիս նրանց:

Տաղաչափական հետաքրքրությունները ուղեկցել են գիտնականին նրա ամբողջ 60-ամյա ստեղծագործական կյանքում: Դեռ 1889 թ. լույս տեսած հայկական էպոսի «Դավիթ և Մհեր» տարբերակի նախաբանում երիտասարդ գիտնականը ուշագրավ դիտողություններ էր անում մեր ժողովրդական վեպի տաղաչափական կառուցվածքի մասին: Այնուհետև տարբեր առիթներով նա անդրադարձել է մեր բանավոր ու գրավոր պոեզիայի մի շարք հուշարձանների տաղաչափության հարցերին, ինչպես, օրինակ, «Հայ ժողովրդական վեպը» (1908), «Գուսանական ժողովրդական երգեր» (1931) և մի շարք ուրիշ ուսումնասիրությունների մեջ: Բացի դրանից, Արեղյանն ունի զուտ տաղաչափական բնույթի մի շարք ուսումնասիրություններ: Ըստ տպագրության ժամանակի՝ դրանցից առաջինը 1916 թ. տպագրված «Հայերեն տաղաչափության մասին» հոդվածաշարն է («Համբավաբեր» շաբաթաթերթ, 1916, № 21, 22, 23, 25, 27), որի մեջ ընդհանուր

գծերով բնութագրված են տաղաչափական հիմնական գիտելիքները և հայկական ոտանավորի յուրահատկությունները: 1923 թ. «Նորք» հանդեսում (№3) հրատարակվեց գիտնականի ընդարձակ ուսումնասիրությունը՝ «Տաղաչափության զարգացումը Չարենցի և ուրիշների բանաստեղծությունների մեջ» վերնագրով, իսկ 1934 թ.՝ ««Շահնամայի» ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ» հոդվածը («Ֆիրդուսի», բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու): Հանրահայտ է, սակայն, որ Արեղյանի տաղաչափական հետազոտությունների պսակը 1912 թ. ավարտված, բայց միայն 1933 թ. համապատասխան լրացումներով ու ճշտումներով լույս տեսած «Հայոց լեզվի տաղաչափություն (մետրիկա)» մոնումենտալ աշխատությունն է, որը ոչ միայն գիտնականի գլուխգործոցներից է, այլև մեկը հայ բանասիրության մեծ և անանցանելի արժեքներկայացնող հուշարձաններից: Այս բոլորին պետք է ավելացնել Արեղյանի տակավին անտիպ մի աշխատությունը, որը շատ կարևոր է գիտնականի հայացքների համակարգը հասկանալու համար: Խոսքը վերաբերում է «Մի քանի տաղաչափական խնդիրների մասին (մի «գրախոսականի» առթիվ)» հոդվածին՝ գրված հավանաբար 1934 թ.: Այս ծավալուն (շուրջ 3 հեղինակային մամուլ) հոդվածում, պաշտպանելով իր գիրքը անբարեխիղճ և միակողմանի քննադատությունից, Արեղյանը հանգամանորեն բացատրում է տաղաչափության հետազոտման այն սկզբունքները, որոնցով ղեկավարվել է ինքը, լրացուցիչ պարզություն է մտցնում մի շարք հարցերի լուսաբանման մեջ: Այդ հոդվածն ընկալվում է իբրև «Տաղաչափություն» գրքի յուրօրինակ լրացում և վերջաբան:

Անցնելով Արեղյանի տաղաչափական հետազոտությունների գնահատմանը՝ պետք է ուղղակի ասել, որ այս բնագավառում գիտնականի առջև կանգնած խնդիրները թերևս ավելի բարդ էին, քան գրականագիտության և լեզվաբանության մեջ: Եթե հայոց լեզվի և հայ հին գրականության ուսումնասիրության ասպարեզում Արեղյանն ունեցել է այնպիսի նշանավոր նախորդներ և ժամանակակիցներ, ինչպես Ա. Այտընյանը, Հ. Գաթրոյանը, Ս. Պալասանյանը, Գ. Զարբհանալյանը, Ն. Մառը, Ա. Մեյեն, Ս. Մալխասյանը, Հ. Աճառյանը և ուրիշներ, որոնք հանդես են եկել ծանրակշիռ գիտական դրույթներով և հսկայական նյութ են կուտակել գիտության համար, ապա տաղաչափության ուսումնասիրության մեջ մինչև

Աբեղյանը, ըստ էության, չկար լուրջ գիտական հետազոտության տրադիցիա, թեև առանձին գրքույկներ և հոդվածներ եղել են:

Իրոք, ի՞նչ էր արված մեր տաղաչափության լուսաբանման համար մինչև Աբեղյանի գրքի հրապարակ գալը: Տվյալ դեպքում մի կողմ թողնենք միջնադարյան հայ քերականների աշխատանքը, որոնք լեզվի կատեգորիաների շարքում նկարագրել են նաև տաղաչափական որոշ երևույթներ, ստեղծել են համապատասխան հայերեն տերմինաբանություն: Վերցնենք XIX դարում հրապարակված աշխատությունները, որոնց մեջ լրիվ կամ մասնակի խոսվում է տաղաչափության հարցերի մասին: Հատկանշական է, որ սկզբնական շրջանում Մխիթարյանների կողմից այդ հարցերը ոչ միայն ներմուծվում էին քերականությունների մեջ, այլև այդ բանն արվում էր նույնիսկ ֆրանսերեն լեզվին նվիրված աշխատություններում: Ըստ երևույթին, դա կապված էր այն համոզման հետ, թե մեր ոտանավորի բնույթն էլ ամենից ավելի մոտ է ֆրանսիականին, որի չափանիշներով էլ պետք է գնահատել այն: Այսպես էին վարվում Ա. Անթիմոսյանը (որ ինքը՝ Արսեն Բագրատունին է) 1821 թ. լույս տեսած «Քերականութիւն գաղղիական» գրքի մեջ և Ղևոնդ Հովնանյանը «Քերականութիւն գաղղիերէն լեզուի» գրքում, որը հրատարակվեց 1843 թ.²⁷⁴: Տաղաչափության հարցերին խոշոր տեղ էր հատկացված Արսեն Այտընյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության մեջ (1866), թեև գիտնականը բավարարվում էր միայն կարճառոտ բացատրություններով և հայկական ոտանավորի բնորոշ տեսակների նկարագրությամբ²⁷⁵: Գրեթե նույն բնույթն ունենալով տաղաչափական հարցերի արծարծումը հայկական կլասիցիզմի առաջին ամբողջական տեսական աշխատության՝ Էդվարդ Հյուրմյուզյանի «Առձեռն բանաստեղծութիւն» գրքի մեջ, որը լույս է տեսել 1839 թ.²⁷⁶: Նշված բոլոր աշխատություններում տաղաչափական ձևերի բնութագիրը սովորաբար չէր բխում չափածոյի բնույթի գիտական բացատրությունից, կրում էր էմպիրիկ, նկարագրական բնույթ:

²⁷⁴ **Արսեն Անթիմոսեան**, Քերականութիւն գաղղիական, Վենետիկ, 1821, էջ 523-590: **Ղևոնդ Թովնանեանց**, Քերականութիւն գաղղիերէն լեզուի, Վիեննա, 1843, էջ 267-288:

²⁷⁵ **Արսեն Այտընյան**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, էջ 374-428:

²⁷⁶ **Էդուարդ Հյուրմյուզեան**, Առձեռն բանաստեղծութիւն, Վենետիկ, 1839, էջ 1-35:

Սակայն միաժամանակ հայ տեսական ու քննադատական միտքը փորձ էր անում ազգային տաղաչափության էական գծերը բացահայտելու և օգտագործելու ուղղությամբ: Այդ է պատճառը, որ այնքան խանդավառությամբ ընդունվեց հին հայկական վիպական տաղաչափության նկարագրությունը, որ տվեց Արսեն Բագրատունին 1847 թ. հրատարակված Վիրգիլիոսի «Մշակականքի» թարգմանության առաջաբանում²⁷⁷: Այդ ձևը Բագրատունին կոչեց պարզապես «հայկական չափ» և դրանով կատարեց Վիրգիլիոսի, Հորացիոսի, հույն ողբերգակների թարգմանությունները, գրեց իր հոշակավոր «Հայկ Դիւցազնը»: Շուտով նրան հետևեցին նաև այլ բանաստեղծներ, օրինակ, Մկրտիչ Խրիմյանը՝ իր «Հրաւիրակ Արարատեան» գրքում²⁷⁸: «Հայկական չափի» վերածնման փորձերը հենվում էին այն համոզման վրա, որ բուն հայկական տաղաչափությունն էլ հին հունականի և հռոմեականի նման չափական (ամանակային) բնույթ է ունեցել. կապվել է երկար ու կարճ ձայնավորների զուգորդման հետ²⁷⁹: Ազգային ինքնատիպության և անտիկ բանաստեղծությանը ազգակից լինելու զգացման ուրախությունը շատերին երկար ժամանակ խանգարեց տեսնելու այն պարզ իրողությունը, որ չնայած բոլոր ջանքերին՝ «հայկական չափը» արհեստական մի բան էր, չէր համապատասխանում մեր լեզվի բնությունին, մանավանդ աշխարհաբարի շեշտադրության և արտասանության օրենքներին: Այդ իրողությունը ընդունվեց միայն տասնամյակներ անց, երբ «հայկական չափով» գրելու և թարգմանելու ուրիշ անհաջող օրինակներ էլ կային:

Մեր հին ու նոր տաղաչափական կոնկրետ ուսումնասիրության մի քանի փորձեր կատարվեցին XIX դարավերջին և XX դարի սկզբին, հատկապես «Բազմավեպի» մեջ տպված մի խումբ հոդվածներում: Հիշենք, օրինակ, Էդ. Հյուրմյուզյանի «Հայկական տաղաչափություն» (1873, №2), Արսեն Սուքրյանի «Հոմերական բառգիրք և հոմերական տաղը» հոդվածը

²⁷⁷ Պոլիոսի Վիրգիլեայ Մարովնի Մշակականք, թարգմանեալք ի չափս հայկականս և համառօտ մեկնութեամբք բացայայտեալք ի Հ. Արսէնէ Կոմիտասայ Բագրատունոյ Մխիթարեան վարդապետէ, Վենետիկ, 1847, «Յառաջաբան», էջ 10-32:

²⁷⁸ Այդ գրքի առաջաբանում Մ. Խրիմյանը ևս ձգտում էր տեսականորեն հիմնավորել «հայկական չափը» (տե՛ս Մ. **Խրիմեան**, Հրաւիրակ Արարատեան, Կ. Պոլիս, 1850, «Տեղեկութիւն ի վերայ նորոգեալ տաղաչափութեան նախնեաց», էջ 15-22):

²⁷⁹ Ա. Բագրատունու հայտնագործած «հայկական չափի» էության մասին տե՛ս Մ. **Արե-դյան**, Հայոց լեզվի տաղաչափություն, 1933, էջ 341-351:

(1877, №1) հին հայկական չափերի կոնկրետ դիտարկումներով, Աթանես Տիրոյանի «Ասորական և հայկական տաղաչափություն» հոդվածաշարը (1899, №№ 1, 3, 6, 8, 11), որի մեջ հետազոտվում էին մեր պոեզիայի կապերը արևելյան հնագույն ձևերի հետ, Արսեն Ղազիկյանի մի շարք կոնկրետ դիտողությունները ժամանակակից բանաստեղծների տաղաչափական վարպետության մասին և այլն: Հատկապես շատ վեճեր առաջացրին հին «Գողթան երգերի տաղաչափական» կառուցվածքի հարցերը: Այդ մասին բազմաթիվ հոդվածներ գրվեցին երկու դարերի սահմանագծում, կատարվեցին ճշմարտացի ու անհիմն ենթադրություններ, կռահումներ ու «ցուտեր»: Ամենից աչքի ընկնող գործն այս ուղղությամբ Ա. Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» գիրքն էր (1891), որը, չնայած վիճելի դրույթներին, ձգտում էր «Գողթան երգերի» կառուցվածքը բացատրել մեր լեզվի օրենքներով՝ մերժելով ուրիշ ազգերի բանաստեղծությանը հատուկ չափանիշների կիրառման միտումը:

Հայկական ոտանավորի կառուցվածքի յուրահատկություններին նվիրված նյութերից հիշատակման արժանի են նաև Հ. Մ. Սահակյանի հոդվածները «Բազմավեպում»՝ «Աշխարհաբարի նոր տաղաչափություն մը» (1905, №№ 10, 11), «Ազգային հին բանաստեղծությանց տաղաչափական գաղտնիքը» (1907, №6): Վերջինիս մեջ փորձ էր արվում ապացուցելու հին հայկական տաղաչափության ամանակական բնույթը, այսինքն՝ արտասանության տևողությամբ երկար և կարճ վանկերի զուգորդման վրա կառուցված լինելու հանգամանքը:

Նույն ժամանակաշրջանում լույս են տեսել նաև տաղաչափության հարցերին նվիրված մի քանի առանձին գրքույկներ, ինչպես՝ Սարգիս Գասպարյանի «Տաղաչափություն արդի հայերեն լեզվի» (Կ. Պոլիս, 1895), Հակոբ Գուրգենի «Համառոտ արվեստ տաղաչափության» (1897), Ս. Կուրտիկյանի «Օսմանյան տաղաչափություն» (1900), ավելի ուշ՝ Հ. Թիրյաքյանի «Հայկական տաղաչափություն» (Նյու Յորք, 1922) և այլն: Տաղաչափական հատուկ բաժիններ ունեին Հ. Ճաղարբեգյանի «Բանահյուսության տեսություն» (Թիֆլիս, 1894), Ս. Հովհաննիսյանի «Քննական պատմություն ԺԹ դարու հայ դպրության» (Փարիզ, 1901) և այլ գրքեր: Թեև այս գրքերը պարունակում էին զգալի նյութ տաղաչափական ձևերի վերաբերյալ, բայց իրենց զուտ նկարագրական բնույթի պատճառով զուրկ էին գի-

տական ելակետից կամ չափանիշից, կտրված էին ժամանակակից պոեզիայի ընթացքից:

Այսպիսով, մինչև Մ. Աբեղյանի ուսումնասիրությունը հայ տաղաչափության հետազոտության վիճակը բնութագրվում էր հետևյալ թերություններով: Նախ՝ չկային քիչ թե շատ հիմնավորված գիտական ըմբռնումներ չափածոյի էության և տարբերիչ գծերի, հայկական ոտանավորի տեսակների և բնույթի մասին: Ուսումնասիրությունները կրում էին առանձին, ճիշտ կամ սխալ, դիտողությունների բնույթ, չէին բարձրանում գիտական կոնցեպցիայի աստիճանի: Երկրորդ՝ միայն մոտավոր ձևով էր հետազոտվում տաղաչափության կապը ազգային լեզվի ներքին օրենքների հետ, նրա պայմանավորվածությունը լեզվի քերականական, արտասանական յուրահատկությամբ: Սա երբեմն իր հետ բերում էր նաև մեկ այլ միտում՝ մեր տաղաչափության ձևերը բացատրել այլ լեզուների, հատկապես անտիկ լեզուների ու ֆրանսերենի չափանիշներով: Երրորդ՝ շատ անկատար վիճակում էր նաև բուն բանաստեղծական ձևերի հավաքման, դասդասման և նկարագրության աշխատանքը, առանց որի հնարավոր չէ տաղաչափական երևույթների ճիշտ ըմբռնումը: Չէ՞ որ տաղաչափությունը գրականագիտության հենց այն բաժինն է, որն ամենից ավելի է կապված կոնկրետ նյութի հանգամանակից ուսումնասիրման, նույնիսկ թվական տվյալների ու հաշվումների հետ, որտեղ պարզապես անիմաստ են փաստական նյութից կտրված սուբյեկտիվ գնահատականներն ու կռահումները: Այնինչ նշված հոդվածների ու գրքույկների հեղինակները մեր պոեզիայի տաղաչափական ձևերի շատ փոքր մասն էին ընդգրկում, այն էլ գերազանցապես ժողովրդական երգերն ու միջնադարյան բանաստեղծության նմուշները և լավագույն դեպքում Բագրատունուց ու Ալիշանից այս կողմ չէին անցնում:

Բնորոշ է, որ հայ տաղաչափության վատ ուսումնասիրված լինելը, նրա բնույթի և օրինաչափությունների մասին հստակ պատկերացումների բացակայությունը ոմանց նույնիսկ հանգեցնում էին այն տխուր եզրակացության, թե առհասարակ անմշակ ու քառսային վիճակում է գտնվում ինքը՝ հայկական պոեզիան իր ձևական-կառուցվածքային հատկանիշներով: Դա աչքի էր զարնվում հատկապես այն դեպքերում, երբ խոսվում էր այլ լեզուներից կատարված չափածո թարգմանությունների մասին, որոնց մեջ, բնականաբար, մեր տաղաչափության վիճակն ու յուրահատկու-

թյունները ցայտուն էին երևում: Այդ մասին խոսում էր, օրինակ, Լ. Մանվելյանը «Մակբեթի»՝ Ս. Մալխասյանցի կատարած թարգմանության գրախոսության մեջ («Մուրճ», 1893, № 1) և մանավանդ Հ. Հովհաննիսյանը՝ «Համլետի»՝ Հ. Մասեհյանի կատարած թարգմանության առթիվ գրած «Մի քանի խոսք աշխարհաբարի տաղաչափության մասին» հոդվածում (1895): «Մեր նորագույն գրականության մեջ ընդունված տաղաչափական ձևերն ինքնըստինքյան մինչև այն աստիճան անկերպարանք են, և օրենքները՝ մինչև այն աստիճան անմշակ ու խառնաշփոթ, որ մեր, հատկապես ռուսահայոցս նույնիսկ լավագույն բանաստեղծները մեզ երևում են որպես արհամարհող բանաստեղծության այն անհրաժեշտ պայմաններից մեկի, որ է գեղարվեստական արտահայտության արտաքին ձևը, չափը»²⁸⁰, - գրում էր բանաստեղծը:

Ահա այսպիսի պայմաններում դիմեց Մ. Աբեղյանը տաղաչափության ուսումնասիրության գործին, և մենք ուղղակի պետք է ասենք. **Աբեղյանն է հայ տաղաչափության իբրև մեր բանասիրության մի առանձին ճյուղի իսկական հիմնադիրը, նրա առանձնահատկությունների և օրինաչափությունների բացահայտողը:** Նրա գիտական ջանքերի շնորհիվ մեր պոեզիայի տաղաչափական ուսումնասիրությունը հանվեց խանձարուրային վիճակից և դրվեց ժամանակի եվրոպական ու ռուսական բանասիրական գիտության բարձրության վրա: Առավել ևս մեծ է Աբեղյանի այս գործն այն պատճառով, որ դա կատարվեց գրեթե դատարկ տեղում, և այս իմաստով նրա խնդիրը տարբերվում էր ժամանակակից ռուս և եվրոպացի տաղաչափների խնդրից: Իրոք, տաղաչափական հարցերի հետազոտման այն բարձր մակարդակը, որ դարասկզբին ձեռք էր բերել եվրոպական բանասիրությունը, նախապատրաստված էր գիտության այդ ճյուղի հարյուրամյա ավանդներով: XX դարի 20-ական թվականներից ռուսական ֆիլոլոգիական գիտության մեջ տաղաչափության նկատմամբ ծագած բուռն հետաքրքրությունը, որն արտահայտվեց Բ. Տոմաշևսկու, Բ. Էյխենբաումի, Վ. Ժիրմունսկու, Յու. Տիմոնովի, Լ. Տիմոֆեևի, Գ. Շենգելու և ուրիշների գրքերում, նույնպես հենվում էր նախընթաց լուրջ փորձի վրա՝ սկսած Տրեդիակովսկու և Լոմոնոսովի, Վոստոկովի, Չերնիշևսկու և Կորշի աշխատություններից մինչև Բոյուսովի և Անդրեյ Բելու հետազոտու-

²⁸⁰ Հ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 3, 1965, էջ 214-215:

թյունները: Մանուկ Աբեղյանը, ինչպես տեսանք, այդպիսի նախորդներ չուներ:

Որո՞նք են Աբեղյանի ստեղծած հայ տաղաչափության տեսության հիմնական ելակետերն ու եզրակացությունները:

Ամենից առաջ Աբեղյանը բազմակողմանիորեն ցուցադրեց **հայ տաղաչափության օրգանական կապերը մեր հին և նոր լեզուների կառուցվածքային արտասանական առանձնահատկությունների հետ**: Նա ամենուրեք դեկավարվում է այն դրույթով, որ ոտանավորի էական տարբերիչ գիծը «կանոնավոր ռիթմն» է, որ նա պայմանականորեն անվանում է նաև «երաժշտական ռիթմ»: Այդ կանոնավոր կամ երաժշտական ռիթմը, ասում է գիտնականը, «հակադրվում է սովորական արձակ խոսքի անկանոն ռիթմին, կամ թե լեզվի ընդհանուր ռիթմը բաժանվում է երկու հակադիր կողմերի»: Այդ պատճառով էլ, շարունակում է նա, «կարելի չէ լեզվի կանոնավոր ռիթմն ուսումնասիրել, առանց նկատի ունենալու անկանոն ռիթմը, որի հետ սերտ կապված է և որով վերջին հաշվով պայմանավորված է կանոնավոր ռիթմը»²⁸¹: Ուրեմն չափածոյի յուրահատկությունները տվյալ լեզվի ընդհանուր սկզբունքներին հակադրվող և անհարիր մի բան չեն, այլ բխում և առաջ են գալիս սրանց տարերքից, հանդիսանում են նրանց խտացումը որոշ կառուցվածքային և գեղագիտական սկզբունքով: Այդ մասին Աբեղյանն իր աշխատության սկզբում գրում է. «**Լեզվի երաժշտականության տեսությունն** այսպիսով միայն բխում էլնում է առարկայի իրեն բնությունից, և հետազոտությունը կատարվում է բազմակողմանի, նկատի ունենալով ամբողջ լեզվի ռիթմը, լինի խոսակցական լեզուն, արձակ թե չափածո գրվածքները, իսկապես այս վերջինների առոգանումը, զի լեզվի ռիթմը կախված է ոչ թե մեռած տառերից, այլ արտասանված խոսքից, խոսվածքից: Եվ այլապես էլ չի կաող լինել, քանի որ **տաղաչափությունը լեզվական ուսումնասիրություն է**, լեզվի ընդհանուր հնչաբանական (ֆոնետիկական) ուսումնասիրության մի մասը» (էջ 8):

Այսպիսով, տաղաչափության ուսումնասիրության այն ասպեկտը, որ ընտրել է գիտնականը, հարցի լեզվական-կառուցվածքային կողմն է ամենից առաջ (պատահական չէ, որ նրա գիրքը կոչվում է «Հայոց լեզվի տա-

²⁸¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն (մետրիկա), Եր., 1933, էջ 7-8: Այս գրքից կատարվող մեջբերումները հետագայում կնշենք տեքստում՝ ցույց տալով համապատասխան էջը:

ղաչափություն»): Սրանով էլ պայմանավորվում է Աբեղյանի առաջադրած և հիմնավորապես լուծած առաջին խնդիրը՝ ցույց տալ հայերեն ոտանավորի կանոնավոր ռիթմի կապերը լեզվի բնական օրենքների հետ: Այս կապակցությամբ էլ նա հետազոտում է, և այն էլ ամենայն մանրամասնությամբ, փաստերի առատության և դիպուկության ոճով, առաջին հայացքից այնպիսի զուտ լեզվաբանական խնդիրներ, ինչպես՝ բառի շեշտը, խոսքի շեշտն ու քերականական շեշտը, նրանց տեղն ու տեղափոխության կամ կորստյան շարահյուսական, բառակազմական, հոգեբանական գործոնները, վանկերի արտասանական տևողության (կամ ամանակի) հարցը՝ կապված նրանց դիրքի հետ, արհեստական սղման կամ երկարացման երևույթները բառի տարբեր մասերում, սովորական խոսքում և ոտանավորի մեջ, նման բաղաձայնների և ձայնավորների հանդիպման (հորանջի) արտասանական յուրահատկությունն ու արժեքը և մի շարք այլ հարցեր:

Լեզվաբանական այս ամուր և համակողմանի հիմքը, որը հետազոտվում է Աբեղյանի գրքի երեք մասերից առաջինի մեջ («Ոտք և ոտանավոր»), հնարավորություն է տալիս գերծ մնալու տաղաչափության մասին սուբյեկտիվ կամ վերացական դատողություններից, յուրաքանչյուր տեսակետ և եզրակացություն հիմնելու բուն լեզվական տարերքի օրինաչափությունների վրա:

Աբեղյանի աշխատության բերած մյուս կարևոր նորությունն այն էր, որ հիմնվելով մեր պոեզիայի փաստերի վրա և օգտագործելով ընդհանուր բանասիրության տվյալները՝ հայերեն լեզվով առաջին անգամ տրվեց **տաղաչափական էական հասկացությունների գիտական բնութագիրը**, ճշտվեց նրանց տերմինաբանությունը: Նա էր, որ առաջին անգամ ծավալուն կերպով բնութագրեց այնպիսի ըմբռնումների իմաստը, ինչպես՝ ռիթմ և տակտ, ամանակ, ոտք, անդամ և նրանց տեսակները, բանաստեղծական տող, դադար, տողանց, հատած, հանգ և տուն՝ իրենց բազմաթիվ տարատեսակներով, նրանց ծագման ու զարգացման փուլերը, առձայնույթ ու բաղաձայնույթ և այլն: Ճիշտ է, նրանից առաջ էլ այս հասկացությունների զգալի մասը գտնվել է հիշված հայ բանասերների գիտական տերմինաբանության մեջ, բայց Աբեղյանից առաջ հանգամանորեն, լուրջ հիմքի վրա չի բացատրվել նրանց էությունը: Իհարկե, հիշյալ հասկացություններից շատերը հաճախ տարբեր գիտնականներ տարբեր կերպ են մեկնաբանում: Բնականաբար, Աբեղյանն էլ չէր կարող տալ բոլորին բավարարող բնու-

թագրեր, և եթե նրա այս կամ այն ըմբռնումը կամ գնահատականը մեզ այսօր անընդունելի թվա, ապա դրա մեջ զարմանալի ոչինչ չկա:

«Հայոց լեզվի տաղաչափություն» աշխատության երրորդ ու թերևս ամենից ցայտուն արժանիքն այն է, որ նրա մեջ տրված է մեր **նոտանավորի տեսակների առաջին լրիվ դասակարգումն ու նկարագրությունը**: Այդ խնդրին է նվիրված գրքի երկրորդ բաժինը («Հայերեն նոտանավորների տեսակները»), որը գրավում է ամբողջ աշխատության ճիշտ կեսը (225 էջ՝ 450-ից): Մի զարմանալի երուդիցիայով գիտնականը հավաքել է հայերենում երբևէ օգտագործված գրեթե բոլոր տողաչափերը՝ իրենց հիմնական տեսակներով ու ենթատեսակներով, ցույց է տվել նրանց գործածության յուրահատկությունները: Ընդհանուր առմամբ նրա նկարագրած հայկական նոտանավորի տեսակները անցնում են 150-ից: Եթե սա համեմատենք նախկինում նկարագրված տեսակների հետ, ապա կհամոզվենք, որ Աբեղյանի ներկայացրածը մի քանի անգամ ավելի է, քան նրա բոլոր նախորդներինը՝ միասին վերցրած: Ընդ որում, Աբեղյանի նախորդները մեծ մասամբ սահմանափակվում էին հին և միջնադարյան բանաստեղծության օրինակներով՝ շատ-շատ հասնելով Մխիթարյանների հորինած առանձին նոտանավորներին: Այնինչ Աբեղյանը, բացի դրանից, ընդգրկում է մեր ժողովրդական էպոսը, հայրենները և բանահյուսության մյուս ժանրերը, աշուղական չափերը, արևելահայ նոր պոեզիան, ընդհուպ մինչև սովետահայ բանաստեղծների գործերում երևան եկած տաղաչափական նոր երևույթները: Ճիշտ է, Աբեղյանն էլ հակված էր կարծելու, թե «մեր չափերը ոչ միայն իրենց հիմնական ձևերով, այլ նաև իրենց ենթատեսակներով ամենամեծ մասամբ գործածված գտնում ենք VII-XI դարերում» (էջ 393), բայց այս տեսակետը նրան ամեննին չէր մղում անտարբեր լինելու դեպի նոր և նորագույն պոեզիայի տաղաչափական զարգացման հարցերը: Բավական է վերհիշել, թե ինչքան շատ նոր երևույթներ է նա նկատել Դուրյանի, Թումանյանի, Հովհաննիսյանի, Իսահակյանի, Տերյանի բանաստեղծական արվեստում, վերհիշել, թե ինչպիսի՜ սիրով 20-ական թվականների սկզբին գիտնականը ձեռնարկեց Չարենցի, ինչպես և Վշտունու, Աբովի ու մյուսների երկերում դրսևորված տաղաչափական նորույթների ուսումնասիրությանը: Ընդամին Աբեղյանը նոր տեսակներ ու ենթատեսակներ է նկատել նույնիսկ այն տաղաչափական ձևերի մեջ, որոնք թվում էին շատ հայտնի ու պարզ: Հիշենք միայն մեկ օրինակ: 10-վանկանի տո-

ղաչափը հայերենի ամենից տարածված, հնագույն ուտանավորի տեսակներից է, որի բոլոր օրինակները թվում են միանգամայն նույնատիպ: Այնինչ Աբեղյանը խորագնին քննությամբ ցույց է տվել այդ չափի բազմաթիվ տարբերակներ ու ենթատեսակներ, որոնք էապես լրացրին այդ ձևի մասին եղած պատկերացումները:

Այն լրիվությունը, որով Աբեղյանի գրքում նկարագրված են հայկական ուտանավորի չափերը, հանգի, բանաստեղծական տան, բաղաձայնության և առձայնության (ալիտերացիա և ասոնանս) տեսակները, գիտական հետևողականության և ամբողջականության հիմնալի նմուշ կարող է համարվել:

Վերջապես, Աբեղյանի աշխատության մեջ արդյունավետ փորձ է կատարված սահմանելու նաև **հայկական տաղաչափության հիմնական բնույթն ու որակը**: Աբեղյանի նախորդներն այս հարցում գրեթե միշտ ելնում էին այն ըմբռնումից, թե տաղաչափության մեջ կա երկու հիմնական տեսակ՝ ամանակական (կամ չափական) և թվական (կամ շեշտական) ուտանավոր: Այնինչ Աբեղյանը, ելնելով պոեզիայի նոր տվյալներից և հենվելով գերմանական ու ռուսական բանասիրության վրա, ընդունում է ուտանավորի կառուցվածքի հինգ տեսակ. 1) **ամանակական** (կամ չափական) ուտանավոր, որը հատուկ է եղել անտիկ լեզուներին և հենվել է երկար ու կարճ ձայնավորների գուգակցման միջոցով հարևան տողերի արտասանական տևողության հավասարության հանգամանքի վրա, 2) **վանկական** (կամ ռոմանական) ուտանավոր, որի մեջ ռիթմի հիմնական պայմանը վանկերի թվի հավասարությունն է տողերի ներսում, 3) **շեշտական** ուտանավոր (ռուսական և գերմանական պոեզիային հատուկ), որը, բացի վանկերի թվի հավասարությունից, հաշվի է առնում նաև շեշտերի օրինաչափ դասավորությունը, 4) **համաշեշտ** ուտանավոր, որի մեջ ռիթմի հիմնական պայմանը հարևան տողերի մեջ շեշտերի թվի հավասարությունն է, և 5) **ազատ ուտանավոր** (Աբեղյանը դա կոչում է նաև «ազատ ռիթմական պրոզա»), որի մեջ դեր են խաղում առավելապես շարահյուսական, արտասանական գործոնները: Բազմաթիվ օրինակներով գիտնականը ցույց է տալիս, որ միջնադարյան և հայ նոր պոեզիայում տարբեր չափով ու համեմատությամբ այս բոլոր սիստեմներն էլ օգտագործվել են, թեև ամանակական (չափական) ուտանավորի գոյությունը մեզանում նա մասամբ հարցականի տակ է դնում:

Սակայն այստեղ ծագում է հարցի երկրորդ և ավելի կարևոր կողմը. ո՞րն է հայկական ոտանավորի հիմնական որակը, նշված համակարգերից ո՞րն է ամենից ավելի համապատասխանում մեր լեզվի քերականական կառուցվածքին և արտասանական յուրահատկությանը: Հայտնի է, որ չնայած միևնույն լեզվում կիրառվող տարբեր ձևերի առկայությանը՝ ամեն մի ազգային պոեզիա լեզվի յուրահատկությանը համապատասխան ունի իր հիմնական տաղաչափական որակը: Անտիկ պոեզիան հիմնականում չափական էր, ռոմանական, իսպանական, և որոշ սլավոնական լեզուներ (լեհերեն, չեխերեն)՝ վանկական, ռուսական, գերմանական, անգլիական պոեզիան՝ շեշտական և այլն: Արեղյանից առաջ և նրանից հետո էլ հայկական ոտանավորը ամենից հաճախ համարվել է վանկական և իր բնույթով նմանեցվել ռոմանական լեզուների ոտանավորին: Գիտնականի ծառայությունն այս հարցում այն էր, որ նա ցույց տվեց ֆրանսերեն կամ մի այլ լեզվի տաղաչափության հետ մեխանիկական գուգահեռների սխալ լինելը, քանի որ մեր ոտանավորն ունի միայն իրեն հատուկ ինքնատիպ գծեր: Նա ցույց տվեց, որ նախ՝ հայերենը միանգամից ընդունակ է միանման ոտքերով (ասենք՝ զուտ յամբերով կամ անապետով) ոտանավորներ հորինել. մի բան, որ ռոմանական լեզուները չեն անում (էջ 127): Այս դեպքում շեշտի օրինաչափ դասավորությունը մեզանում ևս, ինչպես, ասենք, ռուսերենում կամ գերմաներենում, դառնում է ռիթմի կարևորագույն պայման: Արեղյանը ապացուցեց նաև, որ «փոքր ռիթմական միությունների պահանջը մեր լեզվի մեջ համեմատաբար ավելի մեծ է, քան ռոմանական ոտանավորի մեջ» (էջ 128), որ հայերենում որոշ ռիթմական շեշտերի ճշգրիտ տեղադրությունը անհրաժեշտ պահանջ է և այլն: Այս և մի քանի այլ նկատառումներից ելնելով՝ Արեղյանը իր միտքը ընդհանրացնում է այսպես. «Ինչպես վերևում բացատրվածից երևում է, մեր ոտանավորի տարբերությունը ֆրանսերենից այնքան մեծ և էական է, որ կարելի չէ մեր ոտանավորը «վանկական» համարելով դնել ռոմանական ոտանավորի տեսակի մեջ, այլ, ընդհակառակն, մեր ոտանավորը, այդ տարբերություններով հեռանալով ռոմանականից, մոտենում է գերմանականին և ավելի ևս ռուսականին» (էջ 131): Այսպիսով, մեր ոտանավորի հիմնական տեսակը, ըստ Արեղյանի, շեշտական է կամ պատկանում է ոտանավորի այն սիստեմին, որը ժամանակակից գրականագիտու-

թյան մեջ սովորաբար կոչում են վանկաշեշտական (սիլաբո-տոնիկական)՝ տարբերելու համար համաշեշտ (տոնիկական) ոտանավորից²⁸²:

²⁸² Աբեղյանի այս տեսակետի մասին ես դեռ 1961 թ. գրել եմ «Գրականության տեսություն» գրքում՝ նշելով, որ գիտնականի գործածած «շեշտական» տերմինը իր բովանդակությամբ համապատասխանում է այսօրվա մեր «վանկաշեշտական» տերմինին: Բայց ահա Ն. Մուրադյանը 1964 թ. լույս տեսած «Հովհաննես Հովհաննիսյանի արվեստը» գրքում վիճում է ինձ հետ այն բանի համար, որ ես իբր թե փորձել եմ «ճշգրտում մտցնել նրա (Աբեղյանի) տերմինոլոգիայի մեջ՝ շեշտայինի տակ հասկանալով մեր վանկաշեշտայինը: «Ինձ թվում է,– շարունակում է հեղինակը,– թե այս ճշտման հարկը չկա: Աբեղյանը չի շփոթում տերմինները: Հենց գիտակցաբար նա մեր տաղաչափությունը համարում է շեշտային, տարբերելու համար սիլաբո-տոնիկական չափից, որպիսին է, ասենք, ռուսականը» (էջ 182): Այստեղ շատ հասկացություններ են շփոթված, մի բան, որ առհասարակ բնորոշ է այս գրքի այն հատվածին, որը նվիրված է Հովհաննիսյանի տաղաչափական արվեստին (էջ 176-195): Նախ Աբեղյանի գրքում առհասարակ չկա սիլաբո-տոնիկական (վանկաշեշտական) տերմինը: Երկրորդ՝ Աբեղյանը, ինչպես տեսանք, հակառակ Ն. Մուրադյանի պնդման, ուղղակի ասում է, թե հայկական ոտանավորը «մոտենում է գերմանականին և առավել ևս ռուսականին»: Վերջապես իմ գրքում որևէ խոսք չի եղել տերմինները շփոթելու մասին, մի բան, որն առհասարակ անպատեհ կլիներ ասել այնպիսի մի խիստ և ճշգրիտ գիտնականի նկատմամբ, որպիսին է Աբեղյանը: Խոսքը վերաբերում է նրան, որ Աբեղյանից հետո տերմինաբանական փոփոխություն մտավ, և այն, ինչ մինչև XX դարի առաջին տասնամյակները կոչվում էր շեշտական (տոնիկական, ակցենտային) ոտանավոր, սկսեցին անվանել վանկա-շեշտական (սիլաբո-տոնիկական), իսկ տոնիկական կոչումը կապվեց ոտանավորի մի նոր տեսակի, պայմանականորեն ասած՝ Մայակովսկու տաղաչափական համակարգի հետ: Ի դեպ, ոտանավորի այս նոր տեսակն Աբեղյանը շեշտականից տարբերելու համար անվանում է *համաշեշտ* ոտանավոր, մի տերմին, որը և, կարծում եմ, պետք է պահպանվի: Որ տաղաչափության մեջ իրոք եղել է տերմինների այդ փոփոխությունը, կրեքեմ երկու վկայություն: Ռուսական տաղաչափության ժամանակակից հայտնի հետազոտող Լ. Տիմոֆեևը, խոսելով Տրեդիակովսկու առաջ քաշած տաղաչափական նոր տեսության մասին, ավելացնում է. «Դա հենց այն ոտանավորի տեսությունն է, որն այժմ կոչում են վանկաշեշտական, և որ ինքը՝ Տրեդիակովսկին, կոչում էր շեշտական (այդ տերմինը երբեմն գործածվում է նաև այժմ)» (Л. Тимофеев, Очерки теории и истории русского стиха, 1958, с. 312): Տերմինների այդ փոփոխության մասին ավելի մանրամասն գրել է տաղաչափության մի ուրիշ խոշորագույն գիտակ՝ Բ. Տոմաշևսկին, որի գրքում կարդում ենք. «Տրեդիակովսկին այդ տաղաչափությունն անվանեց «տոնիկական» (շեշտական)... Իսկն ասած, կարելի էր սահմանափակվել այդ անվանումով: Բայց արդեն մեր դարում՝ ռուսական ոտանավորի տեսական ուժեղ ուսումնասիրության շրջանում, միտք հայտնվեց, որ տողի մեջ շեշտված և անշեշտ վանկերի հաջորդականության ճշգրիտ պահպանում չի լինում, բայց պարտադիր է վանկերի հաշիվը: Եվ ահա սիմվոլիզմի շրջանում սկսեցին այդ չափն անվանել ոչ թե պարզապես «շեշտական», ինչպես որ պետք է անվանել, այլ «վանկաշեշտական»: Ինչի՞ համար է այդ հավելումը՝ հայտնի չէ, բայց, այդուհանդերձ, ժամանակակից դասագրքերում հանդիպում է այդ բանաձևը՝ «վանկաշեշտական տաղաչափություն», որը մտցվել է սիմվոլիզմի շրջանում: Պայքարել ընդհանուր բառագործածման դեմ դժվար է, ստիպված ենք հաշվի առնել, որ դասական տաղաչափությունը անհաջող կերպով անվանում են «վանկաշեշտական»..., իսկ այն, ինչ ընդունված է կոչել զուտ շեշտական տաղա-

Պետք է ասել, որ մեր տաղաչափության հիմնականում շեշտական բնույթ ունենալու միտքը պաշտպանում էր նաև հայ բանասիրության մյուս նշանավոր ներկայացուցիչը՝ Ս. Մալխասյանցը, որը 1915 թ. հատուկ հոդված է տպագրել՝ «Հայերեն տաղաչափությունը շեշտային է» վերնագրով²⁸³։ Սակայն այդ փոքրիկ հոդվածը սահմանափակ փաստական նյութի վրա էր հենվում, ինչպես և պարունակում էր առանձին չհիմնավորված դրույթներ։ Ինչ վերաբերում է Աբեղյանի տեսությանը, ապա անհրաժեշտ է ասել հետևյալը։ Ամբողջ ուժով ընդգծելով մեր տաղաչափության ինքնատիպությունը, հայտնաբերելով շեշտի նշանակության բազմաթիվ, մինչև այդ չնկատված ասպեկտներ՝ Աբեղյանը, սակայն, մեր կարծիքով, ընկնում էր որոշ ծայրահեղության մեջ հայկական ոտանավորի վանկական բնույթի ժխտման հարցում։

Հայկական տաղաչափության, հատկապես XX դարի պոեզիայի մեջ կան մի շարք գործեր, որոնք, բոլոր ըմբռնումների համաձայն, պատկանում են վանկաշեշտական (կամ Աբեղյանի տերմինով ասած՝ շեշտական) տաղաչափական համակարգին։ Դրանք շեշտերի կանոնավոր դասավորվածությամբ գրված մաքուր յամբական և անապեստյան բանաստեղծություններ են, որոնց նշանակության ընդգծումը Աբեղյանի գիտական ծառայությունն է։ Սակայն այդպիսի ոտանավորներն ընդհանուր առմամբ համեմատաբար փոքր թիվ են կազմում մեր պոեզիայում։ Այս դեպքում չդիմենք Թումանյանի կամ Իսահակյանի պոեզիային, ուր այդ տիպի ոտանավորները տառացիորեն մատների վրա կարելի է համրել («Խաղո՛վ եկավ, ախո՛վ գնաց Սայա՛թ-Նովա՛ն», «Իմ հոգի՛ն տարագի՛ր մի թռչո՛ւն...»)։ Նույնիսկ Տերյանի և Չարենցի մոտ դրանց թիվը սահմանափակ է։ Այսպես, Տերյանի 450 ինքնուրույն և թարգմանական չափածո գործերից (ըստ բանաստեղծի երկերի վերջին՝ եռահատոր հրատարակության) նույնատիպ ոտքերով են գրված ընդամենը 77 բանաստեղծություն, այսինքն՝ միայն մեկ վեցերորդը։ Չարենցի երկերի առաջին հատորում գետեղված 252 բանաստեղծությունից (վերցնում ենք միայն այս հատորը,

չափություն, արդեն հատուկ, ոչ դասական ձև է» (Б. В. Томашевский, *Стилистика и стихосложение*, 1959, с. 351)։

Վերը նշված բացատրություններն ու բերված վկայությունները, կարծում եմ, վերջ պիտի դնեն այս ակամա բանավեճին։

²⁸³ «Զիթենի», գրական ժողովածու հայ գրագետների, Թիֆլիս, 1915, էջ 357-365։

քանի որ այստեղ Չարենցն ամենից ավելի մոտ է կանոնիկ չափերին) նույնատիպ ոտքերով գրված է միայն 55 գործ: Մոտավորապես նման հարաբերություն կարելի է տեսնել նաև հետագա շրջանի բանաստեղծների մոտ: Այսպիսով, մեր բանաստեղծությունների ճնշող մեծամասնությունը խառն ոտքերով գրված գործեր են, որոնց մեջ շեշտերի օրինաչափ դասավորություն չկա, այլ ռիթմի հիմնական պայմանը ռիթմական միավորների (անդամ, տող) վանկերի թիվն է և ո՛չ շեշտադրության կարգը: Այս տեսակի ոտանավորներում մեր տաղաչափությունն իր ընդհանուր նկարագրով ավելի մոտ է վանկական ոտանավորի սկզբունքներին²⁸⁴:

Կարծում եմ՝ հենց այս նկատի ունեւ մեծ բանաստեղծ և տաղաչափության հիանալի գիտակ Եղիշե Չարենցը, երբ 1934 թ. իր օրագրի մեջ գրում էր, թե չնայած Մ. Աբեղյանի պնդումներին՝ «մեր տաղաչափությունն իր հիմքում, այնուամենայնիվ, վանկային է»²⁸⁵:

Ինչևէ, մեր տաղաչափության բնույթի հարցն անպայման պահանջում է հետագա հետազոտություններ և ճշտումներ, և դա միանգամայն հասկանալի է: Բ. Տոմաշևսկու կեսկատակ ասված խոսքերը իրականում շատ ճշմարիտ իմաստ են պարունակում. «Հենց նրա համար է հաճելի զբաղվել տաղաչափությամբ, որ այդ բնագավառում գրեթե ամեն ինչ դեռ վիճելի է»²⁸⁶:

Գիտնականի վաստակի և անվան մեծարումը ամենևին չի նշանակում ո՛չ այն, որ նրա առաջադրած բոլոր դրույթները անառարկելի ու վերջնական են, ո՛չ էլ այն, որ նա սպառել է բոլոր հարցերը և անելու ոչինչ չի թողել հաջորդ սերունդներին: Գիտությունը հարաշարժ ու կենդանի գործ է, և մեծ գիտնական է ոչ թե նա, ով դոգմաներ է սահմանել, այլ նա, ով գիտական միտքը դրել է ճշմարիտ հունի մեջ, կանխորոշել նրա հետագա զարգացման և որոնումների ուղիները: Այդպիսի գիտնական էր Մանուկ Աբեղյանը, որի գիտական դրույթները մեծապես պայմանավորեցին հայ ժողովրդական բանահյուսության, լեզվի և գրականության ուսումնա-

²⁸⁴ Հայկական տաղաչափության նշված առանձնահատկությունների մասին ավելի մանրամասն տե՛ս **Է. Ջրբաշյան**, Գրականության տեսություն, 3-րդ վերամշակված հրատարակություն, 1967, էջ 264-272:

²⁸⁵ **Ե. Չարենց**, Գրականության մասին, 1957, էջ 157:

²⁸⁶ **В. В. Томашевский**, О стихе, 1929, с. 62.

սիրության հանգուցային հարցերն ու ճանապարհները: Դա լիովին վերաբերում է նաև տաղաչափության հարցերին:

Դժբախտաբար, տաղաչափությունը եղավ Աբեղյանի գիտական հետաքրքրությունների այն բնագավառը, որը նրանից հետո մեզանում գրեթե ոչ մի զարգացում չստացավ: Դրա պատճառները շատ են՝ և՛ տաղաչափական ուսումնասիրությունը ինչ-որ «երրորդական» և «անօգուտ» բան համարող բավական տարածված կարծիքները, և՛ այն միամիտ համոզումը, թե Աբեղյանն ամեն ինչ ուսումնասիրել է, և տաղաչափության մեջ նոր բան ասել հնարավոր չէ: Առաջին կարծիքներն արժանի չեն լուրջ հերքման, այնքան որ ակնհայտ է նրանց անհիմն լինելը, երկրորդը նույնպես ճիշտ չէ ըստ էության: Եվ առաջին մարդը, որը գրել է այդ կարծիքի դեմ, ինքը՝ Աբեղյանն էր: Իր աշխատության մեջ (էջ 395-397) նա մեծ գիտնականին հատուկ լայնախոհությամբ ցույց է տվել տաղաչափության այն կողմերը, որոնք դուրս են մնացել իր գրքից և պետք է դառնան նոր հետազոտությունների նյութ:

Նախ՝ Աբեղյանն ընդգծում է հայկական տաղաչափությունը նաև պատմական լուսաբանությամբ վերլուծելու անհրաժեշտությունը: Թեև գիտնականն իր նյութերը քաղել է մեր պոեզիայի պատմության անխտիր բոլոր շրջաններից, բայց տաղաչափական ձևերի զարգացման ամբողջական պատմությունը նա չէր կարող շարադրել, քանի որ նրա համար հիմնականը տաղաչափության կառուցվածքային-տիպաբանական ձևերի դասակարգումն ու նկարագրությունն էր: «Արդ,– գրում է գիտնականը,– բանասիրությունը և գրականության պատմությունը պետք է հետազոտեն և ճշտությամբ որոշեն, թե ինչպես, ինչ պատճառներով, ինչպիսի ժամանակագրական կարգով և որ բանաստեղծների ձեռով են առաջ եկել հայերենում գործածվող այդ չափերը, հնագույն շրջանից մինչև XI դարը, և այնուհետև մինչև մեր այս օրերը» (էջ 395):

Երկրորդ խնդիրը, որ առաջադրում էր գիտնականը, տաղաչափական ձևերը նրանց արտահայտած կոնկրետ բովանդակության համեմատ ուսումնասիրելու հարցն է: Քանի որ Աբեղյանն ընտրել է առավելապես հարցի լեզվական-կառուցվածքային կողմը, հասկանալի է, որ նա չէր կարող հանգամանորեն լուսաբանել կոնկրետ տաղաչափական ձևերի պայմանավորվածությունը բովանդակությամբ: Բայց գիտնականը հստակորեն մատնանշել է այդ կապը՝ գրելով. «Գրական-գեղարվեստական երկե-

րի ձևի և բովանդակության հարաբերության խնդիրը վերածվում է մի ընդհանուր պայմանի, որ է՝ ձևը համեմատ պիտի լինի բովանդակությամբ... Ձևի մեջ է և ոտանավորը. ուրեմն վերջինս էլ համեմատ պիտի լինի բովանդակությամբ... Ամեն տեսակի ոտանավոր կամ ամեն չափ ունի իր կազմության համեմատ իր հատուկ ռիթմական բնավորությունը, աշխույժ ու թեթև, ծանր ու դանդաղ, մեծավայելուչ ու լուրջ, ծաղրածու կոմիկական. կան ոտանավորներ դիցազներգության, քնարերգության, վիպական, դրամատիկական և այլն: Չափերի կամ ոտանավորների այդ տարբեր բնավորություններն առաջանում են ոչ միայն ոտքերի կամ անդամների տեսակներից և նրանց դասավորությունից տողի մեջ, այլև տողերի երկարությունից և կարճությունից» (էջ 396): Ահա՛ բովանդակության և տաղաչափական ձևերի այդ բազմազան, ամեն անգամ նոր երանգներով հանդես եկող կապերը պետք է ըստ ամենայնի ուսումնասիրվեն գիտության կողմից:

Ճիշտ է, Աբեղյանը հակված է կարծելու, թե նշված հարցերի պատասխանը արդեն դուրս է գալիս տաղաչափության շրջանակներից (որը, նրա կարծիքով, նախ և առաջ լեզվաբանական գիտություն է) և վերաբերում է «բանասիրությանը, գրականագիտությանը և առանձնապես բանաստեղծության պատմությանը» (էջ 395): Սրանով նա, կամա թե ակամա, որոշակի խզում էր ստեղծում տաղաչափության և գրականագիտության միջև: Դժվար է այսօր համաձայնել այդ պնդմանը. տաղաչափությունը, լեզվաբանության հետ ունեցած բոլոր կապերով հանդերձ, առաջին հերթին գրականագիտական առարկա է, գրականության տեսության մի անբաժան մասը: Բայց և չի կարելի չնկատել, որ, անկախ նշված հանգամանքից, Աբեղյանը հստակորեն տեսնում և մատնանշում է թե՛ տաղաչափական ձևերի պատմական զարգացման և թե՛ նրանց կոնկրետ գեղարվեստական բովանդակության ուսումնասիրման արժեքն ու անհրաժեշտությունը. «Եվ այդ պետք է անել,– եզրափակում է իր խոսքն Աբեղյանը,– ոչ թե ընդհանուր վերացական ֆրազներ ասելով, այլ նկատի ունենալով ամեն պարագաներ և մանրակրկիտ աշխատանքով վերլուծելով յուրաքանչյուր նշանավոր հեղինակի ամեն մի կոնկրետ երկը բովանդակության և ռիթմական ձևի հարաբերության տեսակետից» (էջ 397):

Մեծ գիտնականի առաջադրած խնդիրները մեր բանասիրության կողմից դեռ չեն իրագործվել. հայկական տաղաչափությունը պատմական

լուսաբանությամբ դեռ չի գրվել, չի տրվել նաև գեթ մեր խոշորագույն բանաստեղծների ժառանգության տաղաչափական յուրահատկությունների գիտական բնութագիրը: Դրա փոխարեն մեր գրականագիտության մեջ, հայ պոեզիային նվիրված նույնիսկ հաջողված աշխատություններում «տիպական երևույթներ» են դարձել կա՛մ կատարյալ անտարբերությունը տաղաչափության հարցերի նկատմամբ, կա՛մ մի քանի էմպիրիկ-նկարագրական տեղեկություններով հարցն «սպառելը», կա՛մ էլ տաղաչափական տարրական գիտելիքների շփոթման հիման վրա հիմնված ծուռ ու սխալ դատողությունները: Վաղուց ժամանակն է վերջ տալու այդ վիճակին: Տաղաչափությունը պետք է իր արժանի տեղը գրավի գրականագիտական հասկացությունների և վերլուծությունների համակարգում: Եվ եթե այս բոլորին ավելացնենք այն ակնհայտ փաստը, որ Աբեղյանի ուսումնասիրությունից հետո անցած տասնամյակներում մեր պոեզիայի մեջ շատ նոր տաղաչափական ձևեր են առաջ եկել, որոնք դեռ պետք է նկարագրվեն և գնահատվեն, ապա պարզ կլինի, թե ինչքա՛ն շատ անելիք կա հայ բանասիրության այս բնագավառում:

**ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ ՏԱՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ.
ԱՔԵՂՅԱՆԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

ԱՇԽԵՆ ԶՐԲԱՇՅԱՆ

բ. գ. թ., դոցենտ

1916 թ. Թիֆլիսում լույս տեսնող «Համբավաբեր» շաբաթաթերթի մի քանի համարներում Մանուկ Աբեղյանը հրապարակ է հանում իր «Հայերեն տաղաչափության մասին» հոդվածը, որն արդեն պատրաստ, բայց միջոցների բացակայության պատճառով չտպագրված «Հայոց լեզվի տաղաչափություն» հիմնարար աշխատության գլխավոր դրույթների սեղմ շարադրանքն էր։ Խմբագրությունն այդ հոդվածին կցել էր մի ծանոթություն՝ ընդգծելով տաղաչափական գիտելիքների կարևորությունը սկսնակ ստեղծագործողների համար։ «Այդ սկսնակներից շատ շատերը,– գրված է խմբագրականում,– բանաստեղծական շնորհ են ցույց տալիս, բայց անտեղյակ են հայերենի ոգուն ու տաղաչափությանը, և երբեմն ցուցմունքներ են ուզում, մենք դիմեցինք մեր աշխատակից պ. Մ. Աբեղյանին հատուկ առաջարկով՝ Հայոց տաղաչափության էական հիմունքները պարզաբանելու...»: Շարունակության մեջ ասված է. «Խմբագրությունը միայն ցավել կարող է, որ պ. Մ. Աբեղյանի Հայերենի տաղաչափության ընդարձակ ուսումնասիրությունը ցարդ լույս չտեսավ։ Հրավիրում ենք այս առթիվ մեր «Հրատարակչական Ընկերության» և հայ մեկենասների ուշադրությունը, մանավանդ որ այդ գրքի տպագրության ծախքը շատ չէ լինելու»²⁸⁷։

Սակայն Աբեղյանի այդ աշխատությունը, որ պատրաստ էր արդեն 1912 թ., տպագրվեց միայն երկու տասնամյակ անց՝ 1933 թ., և եկավ լրացնելու այն բացը, որ կար մեր գիտության մեջ այդ ասպարեզում։ Իսկ հետաքրքրությունը տաղաչափական խնդիրների նկատմամբ իսկապես մեծ էր և ուներ օրեցօր աճող պահանջարկ։ Նույն «Համբավաբերի» հոդվածի առաջաբանում Մ. Աբեղյանը գրում է. «Հաճախ մեր երաժիշտները դիմել են ինձ՝ բացատրելու իրենց, թե ինչ կանոններով են հորինվում մեր ոտանավորները, և նրանք միշտ գանգատվել են, թե մեր հայերեն ոտանավորի եղանակ դնելու ժամանակ մեծ դժվարության են հանդիպում...։ Բայց հա-

²⁸⁷ Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ե, Եր., 1971, էջ 504։

ճախ գրականությամբ պարապող երիտասարդներ ևս դիմել են ինձ՝ ցույց տալու մի երկու գիրք, որի մեջ մանրամասն պարզաբանված լինել մեր տաղաչափությունը. ես էլ այդ դեպքում դժվարության եմ հանդիպել»²⁸⁸:

Տաղաչափության հարցերը Մ. Աբեղյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում արդեն վաղուց ունեին իրենց ուրույն և լուրջ տեղը: Դեռևս 1889 թ. հրատարակած հայկական նորահայտ էպոսի «Դավիթ և Մհեր» պատումի առաջաբանում նա փորձում է բացահայտել և վերլուծել մեր ժողովրդական վիպերգի տաղաչափական կառուցվածքը: Աբեղյանի կողմից տաղաչափական հատուկ քննության նյութ են դարձել հայ գուսանական և ժողովրդական երգերը («Հայ ժողովրդական վեպը», «Գուսանական ժողովրդական երգեր» ուսումնասիրություններում): «Համբավաբերի» հոդվածաշարից հետո 1923 թ. նա հրապարակ է հանում «Տաղաչափության զարգացումը Չարենցի և ուրիշների բանաստեղծությունների մեջ» ծավալուն ուսումնասիրությունը, ավելի ուշ՝ 1934 թ., ««Շահնամայի» ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ» հոդվածը և մի շարք այլ գործեր, որոնցում արծարծված են տաղաչափական խնդիրներ: Հայտնի է, որ Գևորգյան ճեմարանի լսարանական բաժնում Աբեղյանը դասախոսություններ է կարդացել հայ տաղաչափության վերաբերյալ: Այս փաստերը վկայում են այն մեծ հետաքրքրության մասին, որ մեծ գիտնականը մշտապես ունեցել է հայկական ոտանավորի կառուցման ձևերի և եղանակների նկատմամբ:

Ո՞րն էր գիտության այս բնագավառում այն ելակետային վիճակը, որից սերում և շարունակվում էին Աբեղյանի տաղագիտական հետաքրքրությունները: Դեռևս V-VI դարերում հայ իրականության մեջ հունաբան դպրոցի քերական մեկնիչները մշակել էին տաղաչափությանը վերաբերող հայերեն մի շարք եզրույթներ: XIX դարում, հատկապես Մխիթարյանների մոտ տաղաչափական խնդիրների ուսումնասիրությունը լայն թափ ու ծավալ է ստանում: Այդ հարցերով զբաղվում են Է. Հյուրմուզյանը, Ա. Բագրատունին, Ղ. Հովնանյանը և ուրիշներ: Տաղաչափության հարցերին մեծ տեղ է հատկացրել Արսեն Այտընյանը իր «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության մեջ: Ի դեպ, Մանուկ Աբեղյանն իրեն դիմողներին խորհուրդ էր տալիս

²⁸⁸Նույն տեղում, էջ 385:

կարդալ հենց այս աշխատանքը տաղաչափական քիչ թե շատ ամբողջական գիտելիքներ ձեռք բերելու համար: Նշանակալի երկեր էին Ա. Բահարյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» գիրքը, Աթանես Տիրոյանի «Ասորական և հայկական տաղաչափություն» հոդվածաշարը: Անունների այս շարքը կարելի է համալրել ևս մի քանիսով, սակայն պետք է նշել, որ մինչաբեղյանական տաղագիտությունը մեզանում կրում էր գերազանցապես նկարագրական բնույթ և շատ հաճախ վերաբերում էր որևէ առանձին, մասնավոր շրջանի (ասենք՝ Գողթան երգերին կամ միջնադարյան բանաստեղծության ձևերին): Մինչաբեղյանական տաղագիտության մյուս էական թերությունն այն էր, որ հայկական ոտանավորի օրինաչափությունները փորձում էին վերաձևել անտիկ կամ ռոմանական լեզուների (գերազանցապես՝ ֆրանսերենի) տաղաչափական սկզբունքների հիման վրա՝ հաշվի առնելով հայերենի և այդ լեզուների շեշտադրական որոշակի նմանությունները: Ինչպես իրավացիորեն նկատել է ակադ. Սարգիս Հարությունյանը, «հայ տաղաչափագիտությունն ընդհանրապես մինչև Աբեղյանը տակավին իր մանկությունն էր ապրում, հնի ավանդական խանձարուրով կաշկանդված. զգացվում էր նոր խոսքի, գիտական նոր մտքի անհրաժեշտություն»²⁸⁹:

Աբեղյանն այս ասպարեզում հիրավի դարձավ այն նախակարապետը, որը փորձեց ստեղծել ամբողջական և տեսական տաղագիտություն: Նախ՝ նա առաջինն էր, որ սահմանեց և անվանում տվեց տաղաչափական բազմաթիվ հասկացությունների՝ իհարկե, մեծ չափով հենվելով իր նախորդների մշակած տերմինաբանության վրա, բայց և զգալիորեն հարստացնելով այն: Նրա շնորհիվ մեզանում սկսեցին շրջանառվել շատ եզրույթներ ու հասկացություններ, ինչպես *տակտ*, *ամանակ*, *քերականական* և *բառական շեշտ*, *շեշտի կորուստ*, *հորանջ*, *սղում*, *պարզ ոտք*, *բարդ ոտք*, *տողանց*, *հատած*, *անդամ*, *հանգիտություն* և այլն. սրանք դարձան այն հիմքը, որի վրա XX դարում իր հետագա զարգացումն ապրեց հայկական ոտանավորի ուսումնասիրությունը:

Մեծ գիտնականի տաղագիտական հայացքների առանցքում չափաժոյի և բնական արձակ խոսքի կառուցման սկզբունքների համադրումն էր, քանի որ, ըստ նրա, չափաժոյի ուսումնասիրությունն անհնարին է առանց

²⁸⁹ **Հարությունյան Ա.**, Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, Եր., 1970, էջ 431:

արձակի բնական ռիթմի և առողջանության ուսումնասիրման, և արձակից որոշակի շեղումներն են հենց ստեղծում չափածոն՝ իբրև հատուկ կազմակերպված խոսքի տեսակ: Իր աշխատությունն անվանելով «Հայոց լեզվի տաղաչափություն»՝ Աբեղյանը դրանով իսկ ընդգծում էր ոտանավորի կառուցվածքի սերտ կապը լեզվի ընդհանուր սկզբունքների և պրոսոդիայի (շեշտադրություն, արտասանական տևողություն, իմաստային շեշտ, սղում, բառակազմություն և այլն) հետ: Եթե ժամանակակից տեսական միտքը գրականագիտությանն է հատկացնում տաղաչափությունը, ապա Աբեղյանն ընդգծեց վերջինիս կապն առավելապես լեզվաբանության հետ, իսկ ավելի շուտ՝ այն համարեց լեզվաբանության և գրականագիտության արանքում գտնվող մի միջանկյալ գիտություն, որը յուրահատուկ ձևով շաղկապում է այդ երկուսը: «...Լեզվի ռիթմը,– գրում է նա,– կախված է ոչ թե մեռած տառերից, այլ արտասանած խոսքից, խոսվածքից: Եվ այլապես չի կարող լինել, քանի որ **տաղաչափությունը լեզվական ուսումնասիրություն է**, լեզվի ընդհանուր հնչաբանական (ֆոնետիկական) ուսումնասիրության մի մասը»²⁹⁰:

Մյուս նորույթը, որ բերեց Աբեղյանը, ոտանավորի և երաժշտության սերտ կապի ընդգծումն էր՝ դրանց ծագումնաբանական և ռիթմական-կառուցվածքային հիմքի վրա: Երաժշտական տակտերի, դրանց տևողության, ընկնող և բարձրացող ռիթմերի նմանությամբ էր նա բացատրում տաղաչափական շատ իրողություններ: «Երաժշտությունն իր գաղափարն արտահայտելու համար ճշտությամբ չափում է ձայնի բարձրությունը, տևողությունը և ուժը. նույնը վանկերի տևողության և ուժի վերաբերմամբ, ռիթմ առաջ բերելու համար անում է և ոտանավորը: Տաղաչափության մեջ երաժշտական տակտին համապատասխան է **ոտանավորի ոտքը** կամ ոտանավորի **ռիթմական ոտքը**, որի փոխանակ հաճախ գործ են ածում նաև **տակտ**, որով և առաջանում է ոտանավորի երաժշտական ռիթմը»²⁹¹,– գրում է Աբեղյանը: Միևնույն ժամանակ գիտնականը ցույց էր տալիս բանաստեղծական շատ ձևերի՝ էպոսի, գուսանական պոեզիայի երգային բնույթը և դրանց տաղաչափական կառույցի սերտ կապը երաժշտության հետ: Սակայն Աբեղյանը նաև բազմիցս խոսում է դրանց տարբերության

²⁹⁰ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ե, Եր., էջ 10:

²⁹¹ Նույն տեղում, էջ 12:

մասին՝ ընդգծելով, որ պոեզիան կապված է առաջին հերթին խոսքի, հետևաբար մտքի և իմաստի արտահայտման հետ, իսկ երաժշտությունն ազատ է հնչյունների օգտագործման մեջ, և այդ երկու ոլորտները չի կարելի նույնացնել ու դնել մի հարթության վրա, քանի որ մենք գործ ունենք գեղարվեստական միանգամայն տարբեր իրողությունների հետ. «Չափաձո խոսք և երաժշտական երկ բոլորովին տարբեր գեղարվեստական արդյունք են, և ինչքան էլ երկուսի ևս էական պայման է ռիթմը, այդ պայմանին, սակայն ամեն մեկն իր ձևով և առանձին չափով է բավարարություն տալիս»²⁹²:

Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափություն (մետրիկա)» աշխատության կարևորագույն արժանիքներից մեկն էլ բանաստեղծական ձևի և բովանդակության սերտ կապի ընդգծումն է: Այդ գրքում, որն առաջին հայացքից կարող է գուտ ձևական քննության օրինակ թվալ, հեղինակը բազմիցս շեշտադրում է ձևի կապը բանաստեղծության բովանդակային կողմերի հետ՝ առաջնությունը տալով վերջիններին: Հետաքրքիր է, որ աշխատությունը լույս տեսնելուց անմիջապես հետո նրա գրախոսներից մեկը՝ բանասեր-երաժիշտ Հակոբ Հարությունյանը, հաճելիորեն զարմացած լինելով Աբեղյանի տաղաչափական գիտելիքների խորությամբ և ընդգրկման լայնությամբ, միևնույն ժամանակ նրան մեղադրում էր ֆորմալ, ձևապաշտական մոտեցման մեջ: Թեև գրախոսությունը մնում է անտիպ, սակայն Աբեղյանին ներկայացնում են այն՝ խնդրելով պատասխանել գրախոսականում արված դիտողություններին: Աբեղյանը հանդես եկավ «Մի քանի տաղաչափական խնդիրների մասին (Մի գրախոսականի առթիվ)» ընդարձակ բանավիճային հոդվածով, որտեղ փորձեց պաշտպանել իր աշխատության մեթոդաբանական սկզբունքները՝ մեկ առ մեկ ցույց տալով գրախոսի սխալներն ու վրիպումները²⁹³: Խոսելով ձևի և բովանդակության տարրերի ուսումնասիրության մասին՝ նա ընդգծում է, որ տաղագիտությունն այդ ասպարեզում ունի որոշակի սպեցիֆիկա. այն կարող է քննության առնել ինչպես ձևի, այնպես էլ բովանդակության միայն որոշակի, յուրահատուկ կողմերը, ոչ թե դրանց բոլոր տարրերը: Ըստ Աբեղյանի՝ տաղաչափությունը «ուսումնասիրության նյութ ունի ոչ թե ձևի բոլոր

²⁹²Նույն տեղում, էջ 16:

²⁹³Տե՛ս նույն տեղում, էջ 453-500:

կողմերը, այլ մեկ կողմը, **չափածոությունը, չափը...** Ապա տաղաչափությունը բովանդակության վերաբերմամբ նկատի ունի չափական ձևերի, ռիթմական միությունների մեջ եղած բովանդակությունը, որչափով որ սա ազդում է չափական ձևերի, ոտանավորի ռիթմի վրա»²⁹⁴:

Աբեղյանի «Տաղաչափության» ամենաարժեքավոր կողմը թերևս այն հսկայական նյութի ընդգրկումն է, որ առկա է այդ աշխատանքում: Քննության առնելով հայկական բազմադարյան պոեզիայի մեծաթիվ նմուշներ՝ սկսած Գողթան երգերից մինչև Չարենց և նրա ժամանակակիցները, Աբեղյանն առաջին անգամ փորձ արեց ստեղծելու ոչ թե նկարագրական, այլ տիպաբանական տաղագիտություն, որտեղ հստակ ներկայացված են այն բոլոր տեսակներն ու ենթատեսակները, որ հանդիպում են մեր բանաստեղծության մեջ: Նա նշել է հայկական ոտանավորի 53 հիմնական տեսակ՝ միևնույն ժամանակ ցույց տալով մեր տաղաչափության պատմական զարգացման ընթացքը, նոր ձևերի առաջացման միտումները, մեր ոտանավորի կրած ազդեցությունը գուսանական արվեստից, արևելյան և արևմտյան ժողովուրդների բանաստեղծությունից: Ուստի կարելի է ասել, որ տաղաչափության տիպաբանական քննությունը Աբեղյանի մոտ ձեռք է բերում նաև պատմական երանգավորում: Նա բավական հանգամանակից ներկայացնում է այս կամ այն չափի ծագումը և էվոլյուցիոն զարգացումը մեր բազմադարյան պոեզիայում: Այսպես՝ նա տալիս է վանկական և շեշտական տարբեր չափերի փոփոխման պատկերը, իսկ խոսելով, այսպես կոչված, «ազատ ռիթմական պրոզայի» (ազատ ոտանավորի) զարգացման մասին՝ դրա ակունքները տեսնում է մեր բազմաթիվ հոգևոր երգերի, նաև աշուղական պոեզիայի մեջ և հասնում մինչև Միամանթո ու ավելի ուշ շրջանի պոետներ:

Եթե Մխիթարյանների ուշադրության կենտրոնում գերազանցապես մեր հոգևոր և դյուցազնական պոեզիայի նմուշներն էին, ապա Աբեղյանը մանրակրկիտ քննության և դասակարգման է ենթարկում նաև ժողովրդական պոեզիայի ձևերը՝ հայրեններն ու աշուղական չափերը՝ մեծապես լրացնելով մեր տաղագիտության այդ բացը: Հետաքրքիր է, որ գիտնականը լուրջ և էական տարբերություններ է տեսնում գրավոր և աշուղական պոեզիայի ռիթմական սկզբունքների միջև՝ նշելով, որ «...աշուղները բա-

²⁹⁴ Նույն տեղում, էջ 464:

նաստեղծում են ոչ թե կարդալու համար, այլ միայն երգելու: Նրանց ոտանավորները երգվելիս ստանում են եղանակի ռիթմը, և տողերի մեջ առաջ են գալիս եղանակի համեմատ ռիթմական ոտքեր, որոնք տաղաչափական տեսակետից արժեք չունին»²⁹⁵: Ըստ այդմ՝ աշուղական պոեզիային բնորոշ են մի շարք ժանրային և կառուցվածքային ձևեր, ինչպես՝ *դիվանը*, *մուխամազը*, *դաստանը*, *գազելը*, *դյուբեյթը* և շատ այլ տեսակներ, որոնց հանգամանալից քննությունը տրված է Աբեղյանի աշխատության մեջ:

Հատկապես ուշագրավ են գիտնականի դիտարկումները հանգի դերի, ծագման ու զարգացման վերաբերյալ: Նա մանրակրկիտ վերլուծության է ենթարկում հանգի ամենատարբեր տեսակներ (բաղաձայնությային, առձայնությային, բայական, աղքատ, հարուստ, ճշգրիտ, մոտավոր, իգական, արական, թույլ, ուժեղ, քողարկված և այլն), դիտարկում տների կառուցման, տողի՝ իբրև ռիթմական ամբողջական միավորի, ձևավորման գործում հանգի կարևորագույն դերը: Հանգի ծագման ու զարգացման քննությունը նա սկսում է ժողովրդական պարզագույն ժանրերից՝ առածներից, ասացվածքներից ու հանելուկներից, որտեղ հանգն ունեցել է կարևորագույն գործառույթ ոչ միայն խոսքի կազմակերպման, այլև այդ ժանրերի բանավոր արագ տարածման գործում: Հայտնի է, որ մեր տաղագետներից շատերը, մասնավորապես Ա. Բագրատունին, ունեցել են ժխտողական վերաբերմունք հանգի նկատմամբ: Աբեղյանն այս հարցում ավելի լայնախոհ է. ընդունելով, որ շատ հին լեզուներ իրենց ոտանավորը կառուցել են անհանգ, և դրանից ռիթմը չի տուժել, Աբեղյանը, այնուհանդերձ, նոր լեզուներում ընդգծում է հանգի նշանակությունը՝ իբրև ռիթմական կարևորագույն գործոնի, քանի որ «այդ լեզուները կարիք ունին նաև մի ուրիշ ռիթմական տարրի»²⁹⁶ ամանակային հատկությունները կորցրած լինելու պատճառով: Մյուս հանգամանքը, որի շնորհիվ հնագույն բանաստեղծությունները կարող էին հնչել անհանգ, դրանց երգվող բնույթն էր, որի դեպքում հանգը որևէ էական դեր ունենալ չէր կարող:

Հայ բանաստեղծության մեջ հանգի առաջին դրսևորումներն ու տեսական հիմնավորումները Աբեղյանը տեսնում է Գրիգոր Նարեկացու մոտ, այնուհետև Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողեան»-ում, իսկ XII

²⁹⁵ Նույն տեղում, էջ 253-254:

²⁹⁶ Նույն տեղում, էջ 348 :

դարում, ըստ նրա, «արդեն հանգը հաստատված է եղել մեր հոգևոր բանաստեղծության մեջ ևս»²⁹⁷: Նա կարևորում է նաև օտար բանաստեղծության ազդեցությունը հանգի առաջացման գործում. եթե միջնադարում այդ ազդեցությունը գալիս էր արևելյան պոեզիայից, ապա նոր ժամանակների բանաստեղծները ձգտում են շատ հարցերում նմանվել ռուս պոետներին:

Սակայն Աբեղյանի «Տաղաչափությունը» միևնույն ժամանակ հավակնում էր դառնալ նորմատիվ տեսություն, քանի որ, գծագրելով բանաստեղծության կառուցման հիմնական սկզբունքները, գիտնականը նաև մատնանշում էր այդ կանոններից շեղումների տարբեր պոետների մոտ: Այսպես՝ Աբեղյանը չի զլանում որոշակի խորհուրդներ տալ, ասենք, հանգի կազմակերպման հարցում՝ նշելով, թե որ տեսակի հանգերից պետք է խուսափել, որոնք են ավելի նախընտրելի, որ հանգերն են թուլացնում բանաստեղծության ռիթմը, և որոնք, ըստ նրա, ուժեղացնում: Նորմատիվիզմի այս կարգի դրսևորումները, իհարկե, հետագայում ենթարկվեցին լուրջ քննադատության:

Խոսելով Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափություն (մետրիկա)» աշխատության մասին՝ հատուկ պետք է անդրադառնալ մի կարևորագույն խնդրի, որը Աբեղյանի տաղաչափական տեսության ամենաքննադատված և ամենավիճելի կողմերից է: Խոսքը վերաբերում է հայկական ոտանավորի բնույթին, որին Աբեղյանը փորձեց տալ սպառիչ և ամբողջական լուծում: Իրավացիորեն ընդգծելով հայկական ոտանավորի ինքնատիպությունը՝ գիտնականը միևնույն ժամանակ հակադրվեց մեզանում իշխող և հատկապես Մխիթարյաններից եկող մտայնությանը՝ մեր տաղաչափության բնույթը բացատրել ֆրանսիական պոեզիայի սկզբունքներով: Աբեղյանը մի քանի անգամ իրավացիորեն հայտարարում է. մեր պոեզիան չի կարելի վերաձևել ֆրանսիականի օրինակով, քանի որ մեր լեզուն այլ բնույթ ունի: Նա նաև նկատում է, որ եթե ֆրանսերենում սովորական են երկար անդամները, ապա մեր լեզուն հակված է ավելի փոքր միավորներով կառույցների: Այստեղից Աբեղյանն անցում է կատարում մի խնդրի լուծման, որը դեռևս այդպիսի ծավալով և այդ խորությամբ չէր դրվել մեր տաղագիտության մեջ. դա մեր ոտանավորի ինքնատիպ որակի

²⁹⁷ Նույն տեղում, էջ 350:

բացահայտման խնդիրն էր: Սակայն հրաժարվելով ֆրանսիականի հետ նմանության վարկածից՝ Աբեղյանն այդ հարցի լուծմանը մոտեցավ գերմանական տաղաճիտության ելակետից՝ հայտարարելով, որ մեր ոտանավորը միջանկյալ տեղ է գրավում գերմանականի և ռուսականի արանքում և իր բնույթով *շեշտային* է, այսինքն՝ ռիթմի ստեղծումը պայմանավորված է ուժեղ արտասանվող շեշտերով: 1915 թ. նման տեսակետ էր հայտնել նաև Ս. Մալխասյանը, որը «Զիթենի» գրական ժողովածուում, հավանաբար ոչ առանց Աբեղյանի որոշ հոդվածների անմիջական ազդեցության, հրապարակում է «Հայերեն տաղաչափությունը շեշտային է» պարտադրող վերնագրով հոդվածը: Այս պնդմամբ երկու խոշորագույն գիտնականները, ըստ էության, հակադրվում էին մինչ այդ իշխող տեսակետին հայկական ոտանավորի *վանկական* բնույթի մասին, տեսակետ, որին Աբեղյանը մի քանի անգամ անդրադառնում է իր աշխատության մեջ՝ ըստ էության ժխտելով Ադոնցի, Բագրատունու, Բահաթրյանի և այլոց տեսությունները: Սակայն պետք է ասել, որ երկու խոշոր գիտնականները՝ Աբեղյանն ու Մալխասյանը, այս հարցում մնացին միայնակ: Նշենք, որ հայկական ոտանավորի վանկային բնույթի մասին խոսել են նաև օտարները՝ Ն. Մառը, Վ. Բրյուսովը և ուրիշներ: Ի դեպ, Բրյուսովն այդ խնդրին ուղղակիորեն անդրադառնում է ոչ միայն իր կազմած «Поэзия Армении» անթոլոգիայի առաջաբանում, այլև «Մի քանի մտքեր հայկական տաղաչափության մասին» անավարտ հոդվածում:

Որո՞նք էին այն կոմանները, որոնց հիմքի վրա գիտնականը մեր ոտանավորը համադրում էր սլավոնական և գերմանական լեզուներով ստեղծված չափածո խոսքի հետ. «Շեշտական է գերման և սլավոն ազգերի, սկզբնապես նաև հռոմայեցոց ոտանավորը... Շեշտական է նաև հայերեն ոտանավորը»²⁹⁸, – գրում է նա: Խնդիրն այն է, որ մեր լեզվի բառերի մեծագույն մասը երկվանկ կամ եռավանկ է (ի տարբերություն ֆրանսերենի), հետևաբար, քանի որ շեշտերն ընկնում են հիմնականում բառերի վերջին վանկի վրա, ապա դրանք Աբեղյանը դիտարկում է իբրև մեկ շեշտված ոտք (երկվանկը՝ յամբ, եռավանկը՝ անապեստ), իսկ եթե երկու երկվանկ բառեր են միավորվում, ապա ձևավորվում է մեկ բարդ ոտք: Նույն

²⁹⁸ Նույն տեղում, էջ 40:

կերպ և հնգավանկ բարդ ոտքերը նա անվանեց յամբ-անապետյան, որտեղ յամբերի և անապետների դիրքը փոփոխական էր:

Արեղյանի առաջ քաշած տերմինաբանությունն ու կարևորագույն դրույթները երկար տասնամյակներ մեծ հետք թողեցին հայ տաղագիտության վրա: Ամենին հաշվի չառնելով այն հանգամանքը, որ մեր լեզվում, ի տարբերություն, ասենք, ռուսերենի, շեշտերն արտասանությամբ ուժեղ և իմաստակիր չեն, և խոսքի բնական ընթացքի մեջ դրանք հատուկ չեն ընդգծվում, Արեղյանը չափածոյի տաղաչափական վերլուծության ընթացքում ուշադրությունը կենտրոնացնում էր բառային շեշտերի վրա՝ համոզմունք հայտնելով, որ հայկական ոտանավորի գերակշիռ մասի ռիթմը ձևավորվում է հենց այդպիսի ուժեղ շեշտերով:

Արդեն իսկ 1930-ական թթ. հայկական ոտանավորի շեշտային բնույթի վերաբերյալ Մ. Արեղյանի առաջ քաշած այս վարկածը թերահավատորեն է ընդունվում մի շարք բանասերների և քննադատների կողմից, մանավանդ որ այն լրջորեն հակասում էր ոչ միայն նախընթաց շրջանի հայ բանասիրության մշակած սկզբունքներին, այլև գեղարվեստական պրակտիկային: Հետաքրքիր է, որ առաջին ընդվզողներից մեկը եղել է Ե. Չարենցը: 1934 թ. օրագրային իր մի գրառման մեջ նա կտրուկ հակադրվում է Արեղյանի տեսությանը՝ գրելով. «...Չնայած Մ. Արեղյանի «գիտական» դոգմային՝ մեր տաղաչափությունն իր հիմքում, այնուամենայնիվ, **վանկային** է, իսկ շեշտային տաղաչափությունը մեր բանաստեղծական արվեստի մեջ **բերովի, արհեստական** կուլտուրա է, որ իր հիմքում իսկ **ինտելիգենտական** է, այսինքն՝ մտացածին»²⁹⁹: Արեղյանի տեսությանը տալով «գիտական» չակերտավոր բնորոշումը՝ նա ակնհայտորեն ակնարկում էր դրա սխալաստիկ բնույթը, կառուցված լինելը գիտական որոշակի դոգմաների և ոչ թե ռեալ իրողությունների վրա: Ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ Չարենցը, որն իր ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում օգտվել էր բանաստեղծական ամենատարբեր ձևերից ու համակարգերից, կարող էր օբյեկտիվ և ճիշտ գնահատական տալ մեր ոտանավորի ինչպես «բնիկ», այնպես էլ «բերովի» ձևերին, և նրա փաստարկները հիմնված էին նաև այդ հարցի շուրջ տեսական գիտելիքների վրա:

²⁹⁹ **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., 1967, էջ 478:

Մեր ոտանավորի շեշտային բնույթի վերաբերյալ Աբեղյանի մշակած տեսությունը որոշակի խնդիրների առջև կանգնեցրեց նաև 1930-ական թթ. ռուսական պոեզիայի հայ թարգմանիչներին, իսկ այդ շրջանում լայն թափ էին առել հատկապես Պուշկինից թարգմանությունները, քանի որ 1937 թ. նշվելու էր ռուս մեծ բանաստեղծի մահվան 100-ամյա տարելիցը: Ձգտելով Պուշկինին թարգմանել հենց նրա պոեզիային բնորոշ վանկաշեշտական չափերով՝ բանաստեղծները կանգնում էին լուրջ խնդիրների առջև, քանի որ մեր լեզուն այդ հնարավորությունը չէր տալիս, և այդպիսի թարգմանությունները շատ անբնական էին հնչում: 1936 թ. Թիֆլիսի «Պրոլետար» թերթի համարներից մեկում Պողոս Մակինցյանը, տպագրելով Պուշկինի «Բորիս Գոդունով»-ից կատարած իր թարգմանության մի հատված, որը կատարված էր մեր վանկական 11-վանկանի տողաչափով, անդրադառնում է այս խնդրին և ուղղակիորեն հանդես գալիս Ս. Մալխասյանի ու Աբեղյանի տեսության դեմ՝ պնդելով, որ տաղաչափական խնդիրների լուծումից է կախված նաև մեր թարգմանությունների որակը, և օտար լեզուներից թարգմանելիս չպետք է պատճենել դրանց տաղաչափության սկզբունքները³⁰⁰:

Շատ բանասերներ, նաև բանաստեղծներ, որոնք 1930-ական թվականներից գտնվում էին Աբեղյանի տեսության անմիջական ազդեցության տակ և խոր համոզմունք ունեին, որ մեր ոտանավորը ստեղծվում է շեշտային սկզբունքներով, աստիճանաբար սկսում են փոխել իրենց մոտեցումները. նրանց թվում էին Ա. Իսահակյանը, Ս. Մալխասյանցը և շատ ուրիշներ:

Հայկական ոտանավորի վանկային բնույթի գիտական հիմնավորումն իր արդյունավետ հանգրվանին հասավ XX դարի 60-70-ական թթ. ասպարեզ իջած հայ տաղագետների նոր սերնդի (Է. Ջրբաշյան, Ռ. Պապայան, Վ. Նավասարդյան, Դ. Գասպարյան, Ռ. Ղուլյան և ուրիշներ) աշխատություններում³⁰¹: Ամենևին չնսեմացնելով Մանուկ Աբեղյանի դերը հայ տաղագիտության հիմնարար դրույթների մշակման, բազմաթիվ եզրույթների և հասկացությունների շրջանառման գործում՝ նշվեցին այն օբյեկտիվ

³⁰⁰ 1930-ական թթ. թարգմանական խնդիրների և դրանց շուրջ ծագած տաղաչափական վեճերի մասին մանրամասն տե՛ս **Ջրբաշյան Է.**, Փաստերի հետքերով, Եր., 2001, էջ 189-212:

³⁰¹ Հայկական ոտանավորի վանկային բնույթի առավել հանգամանալից գիտական հիմնավորումը տե՛ս **Ջրբաշյան Է.**, Պոետիկայի հարցեր, Եր., 1976, էջ 153-270:

պատճառները, որոնք հիմք էին հանդիսացել հայկական ոտանավորի շեշտային բնույթի վերաբերյալ աբեղյանական տեսության համար: Նախ, ինչպես իրավացիորեն նկատվել է, XX դարասկզբին, երբ առաջ քաշվեց այդ տեսությունը, բանասիրության մեջ բավական տարածված էր մի մտայնություն, որի համաձայն՝ վանկային ոտանավորի համեմատ շեշտայինը զարգացման ավելի բարձր աստիճան է: Հետևաբար Աբեղյանի կողմից կարծես փորձ էր արվում մեր ոտանավորը դնել որակական «ավելի բարձր» դիրքի վրա: Երկրորդ՝ տաղաչափական ձևերը բաժանելով միայն երկուսի՝ ամանակայինի և շեշտայինի՝ Աբեղյանը ողջ եվրոպական հետաքուգանդական պոեզիան համարում էր շեշտային և, ըստ էության, հայկական վանկային ոտանավորը նույնպես քննում էր այդ համատեքստում՝ իբրև դրա մի տարատեսակ: Մյուս պատճառը բանաստեղծությունն անպայմանորեն երաժշտական-ռիթմական սկզբունքների հետ կապելու միտումն էր, ինչը հանգեցնում էր շեշտերով ձևավորվող ռիթմին նախապատվություն տալուն: Իհարկե, այստեղ պետք է խոսել նաև գերմանական բանասիրության մեծ ազդեցության մասին, որն իր կրթության բերուժ մեծապես կրում էր Մ. Աբեղյանը:

Մեր ոտանավորի վանկային բնույթի հիմնավորման համար հիմք հանդիսացավ այն իրողությունը, որ բանաստեղծական ռիթմը որոշվում է առաջին հերթին իր պրոսոդիական-արտասանական բնույթով: Եվ եթե վանկաշեշտական ռիթմերն իբրև հենակետ ունեն շեշտերի ուժեղ արտասանությունը, ապա մեր ոտանավորի ռիթմական հենակետերը անդամների միջև տրվող դադարներն են, այսինքն՝ որևէ մեծ կամ փոքր հատվածի ֆրագավորումը, որն ընդգծվում է ոչ այնքան շեշտերով, որքան արտասանական դադարներով: Որքան էլ հայկական ոտանավորի մեջ փորձենք գտնել ուժեղ բառաշեշտեր, այնուհանդերձ, «պետք է հրաժարվել... ոտանավորի մեջ շեշտերի օրինաչափ և կանոնավոր կարգ որոնելու փորձերից և չափածոյի կառուցվածքի ու ռիթմի հիմքը տեսնել տողերի և անդամների վանկային-քանակական ցուցանիշների ու ռիթմական հատածների մեջ»³⁰²:

Ռ. Պապայանը, բանավիճելով Մ. Աբեղյանի տեսության մի շարք դրույթների դեմ, գիտականորեն հիմնավորում է XX դարի հայ պոեզիա-

³⁰² Զրբաշյան Է., Պոետիկայի հարցեր, էջ 266:

յում վանկաշէշտական ոտանավորի, մասնավորապէս՝ եռավանկ ոտքերի (այդ թվում և անապետյան չափերի) առաջացման նախադրյալները: Նրա համոզմամբ «եռավանկ ռիթմական խմբերով չափերը էպիգոդիկ կերպով հանդիպում էին և նախկինում՝ միջնադարյան քնարերգությունից մինչև Տերյանի ավագ ժամանակակիցները: Եվ, այնուհանդերձ, դրանք սկզբունքորեն չէին տարբերվում վանկական մյուս չափերից, բացի նրանից, որ իրենց հազվադեպ լինելու շնորհիվ ձեռք էին բերում որոշակի տարաշխարհիկ բնույթ: Մինչտերյանական եռավանկ չափերի ներքին կառուցվածքն ուրիշ էր...: Դրանք նման էին նրանով, որ յուրաքանչյուր եռավանկ ռիթմական խումբ բոլոր տողերում հստակ շրջապատված էր բառաբաժանումներով...: Միլաքիկ ոտանավորի հենց այսպիսի կարևոր հատկանիշի ջնջումը, ինչպիսին բառաբաժանումն է, հայկական ոտանավորին հաղորդեց տոնիկական ոտանավորի (լայն իմաստով) հատկանիշներ՝ ուժեղացնելով շէշտի ռիթմաստեղծիչ դերը...: Վանկական եռավանկ ռիթմա-չափական խմբերը վերածնվեցին եռավանկ «ոտքի»՝ անապետի մեջ: Հենց սա չնկատեց Մ. Աբեղյանը, որը ոչ մի տարբերություն չէր տեսնում տերյանական և նախատերյանական եռավանկ չափերի միջև»³⁰³: Սրանով Պապայանը հստակ սահմանազատում է մեր պոեզիային դարերով բնորոշ վանկական (այդ թվում և եռավանկ անդամներով) չափերը XX դարասկզբին որոշակի տարածում գտած վանկաշէշտական չափերից, որոնք ռիթմական բոլորովին այլ մշակույթի արտահայտություն էին կամ, ինչպես Չարենցն էր պնդում, «բերովի, արհեստական կուլտուրա», որը, սակայն, վարպետ կիրառության դեպքում երբեմն կարող է հաջողությամբ մերվել մեր պոետական ավանդույթների հետ և ձեռք բերել նրա կողքին գոյատևելու իրավունք:

Այս ամենով հանդերձ՝ հնարավոր չէ թերագնահատել Մ. Աբեղյանի կարևորագույն վաստակը հայ տաղագիտության զարգացման գործում: Ի վերջո, գիտնականի մեծությունը դրսևորվում է ոչ այնքան վերջնական ճշմարտություններ տալու մեջ, որքան գիտության համար նոր հուն բացելու: Իսկ այդ առումով Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափությունը», իրոք, նոր և լայն հուն բացեց հայ տաղագիտության համար՝ ձևավորելով նրա գիտական և տեսական կարևորագույն հիմքերը:

³⁰³ Папаян Р. А., Сравнительная типология национального стиха, Е., 1980, с. 61-62.

Գ) ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՎԱՆԴԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՁՅԱՆ

մ. գ. թ.

«Աբեղյանի շնորհիվ մեր ազգային-հոգեկան միջավայրը լցված է իմաստությամբ և հեղինակությամբ, լրջությամբ և վեհ նպատակների հետապնդումով»:

Ա. Իսահակյան

1898 թ. Աբեղյանը Գերմանիայից վերադառնում է Թիֆլիս: Գևորգյան ճեմարանի վարչությունը շտապում է նրան պաշտոնի հրավիրել: Սեպտեմբերի 3-ին ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանը հեռագրով Փիլիփոս Վարդանյանի միջոցով դիմում է նրան՝ առաջարկելով հայոց լեզվի, գրականության, պատմության, աշխարհագրության և գերմաներենի դասեր: Աբեղյանն ընդունում է հրավերը և անմիջապես մեկնում Վաղարշապատ: Ստանձնելով ճեմարանի ուսուցչի պաշտոնը՝ նա սկսում է դասավանդել³⁰⁴:

Հանձն առնելով ժամանակի հայկական միակ ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոնը՝ Աբեղյանը միաժամանակ նվիրվում է գիտահետազոտական գործունեության: Էջմիածնի մտավորական միջավայրը, սիրած մասնագիտությունների դասավանդումը նպաստավոր պայմաններ են ստեղծում գիտական աշխատանքով զբաղվելու համար:

Արդեն 1900-ական թվականներին Աբեղյանը սկսում է թելադրող դառնալ հայագիտության մեջ, նրա հետ սկսում է հաշվի նստել հայ գիտական միտքը: Սակայն զարմանալին հենց դա է, որ արդեն գիտնականի համբավ ձեռք բերած Աբեղյանը հրաժեշտ չի տալիս ուսուցչի իր առաքելությանը՝ համարելով իբր ցածր աշխատանք իր գիտական նվաճումների կողքին, այլ շարունակում է ուսուցչություն անել ևս 16 տարի:

³⁰⁴ Ս. Հարությունյան, Մ. Աբեղյան. կյանքն ու գործը, Եր., 1970, էջ 51-52:

1899-1900 ուստարում Աբեղյանը ստանձնում է նաև ընդհանուր եվրոպական գրականության, իսկ հաջորդ տարում նաև գրականության տեսության դասավանդումը: Հետագայում նա դադարում է դասավանդել Հայաստանի աշխարհագրություն, հայոց պատմություն, գերմաներեն, ինչպես նաև գրականության տեսություն և հիմնականում ծանրանում է հայոց լեզվի (գրաբար և աշխարհաբար), հայոց հին և նոր գրականության պատմության (թե՛ տեսական, թե՛ գործնական պարապմունքներ), մասամբ էլ հայոց լեզվի տաղաչափության վրա, որոնք էլ հետագայում դառնում են նրա գիտական ուսումնասիրությունների բուն առարկաները: Ճեմարանի ուսումնական ծրագրում Աբեղյանը կարևոր նորամուծություն է կատարում և առաջին անգամ ներմուծում է ժողովրդական բանահյուսությունը՝ իբրև առանձին ծրագրված առարկա, և ինքն էլ ստանձնում է դասավանդումը³⁰⁵:

Ինչպես տեսնում ենք, Աբեղյանը մի յուրօրինակ մարդ-դպրոց էր, որը շարունակ առաջ էր նայում և նախաձեռնողն էր դառնում մի շարք նորամուծությունների: Առարկա ներմուծելը հեշտ գործ չէ. այն պիտի հիմնավորված լինի ներմուծման անհրաժեշտությամբ, ունենա ծրագիր, դասագիրք, կիրառման մեթոդներ: Եվ քանի՛ այսպիսի նոր առարկաների ներդրման հեղինակը դարձավ Աբեղյանը տարբեր դպրոցներում աշխատելու տարիներին:

Եվ այսպես՝ Ճեմարանում հայոց լեզվի դասավանդմանը զուգընթաց՝ նա մշակում է դասավանդման իր ծրագրերն ու մեթոդները, որոնց հիման վրա էլ կազմում է դասագրքեր: 1907 թ. կազմում է «Տարրական քերականություն» դասագիրքը, որը հաջորդ տարին՝ 1908 թ., լույս է տեսնում Թիֆլիսում և հետագա տարիներին ունենում մի քանի վերահրատարակություններ (ծանոթ ենք 5 վերահրատարակությունների): 1908 թվականի երկրորդ հրատարակության մեջ Աբեղյանը խորհուրդ է տալիս ուսուցիչներին. «Ուսուցիչները դասատվության ժամանակ հարկավ ազատ են իրենց մեթոդի համեմատ նյութը հետ ու առաջ անցնելու, բայց կարծում ենք՝ առաջին հատվածը Գ. պատրաստականի դասընթացն է, երկրորդ հատվածը՝ Ա. Դասարանի, միայն «ասացվածի» ուսումը կարելի է պահել Բ. Դասարանի համար, երբ պետք է ավանդել Գ. հատվածը»³⁰⁶: Ինչպես

³⁰⁵ Նշվ. աշխ., էջ 305:

³⁰⁶ Տե՛ս Մ. Աբեղյան, Տարրական քերականություն, Թիֆլիս, 1908:

արդեն պարզ էր առաջաբանից, դասագիրքը բաժանված է երեք հատվածի: Առաջին հատվածում տեղ են գտել Լեզվի բաղադրիչ մասերը, Տառեր և ուրիշ նշաններ, Ձայնավոր և բաղաձայն տառեր, Յ կիսաձայն և երկբարբառներ, Ուղղագրություն: Յուրաքանչյուր դասի հաջորդում են վարժություններ: Հետաքրքիրն այն է, որ այսօր դասագրքաստեղծ խմբերի առջև խնդիր է դրված, որ գործնական աշխատանքներին ավելի շատ տեղ հատկացվի, քան տեսական նյութին: Արեղյանը դեռևս 1900-ական թվականներից էր իր դասագրքերով լուծել այդ խնդիրը, և 4-5 նախադասություն կազմող տեսական նյութին հաջորդում էին 2-3 էջ վարժություններ: Դասագրքի վերջում տեղ է գտել ուղղագրական ցանկ, որով հստակ սահմանվում էր, թե տվյալ դասարանի աշակերտը որքան բառի ուղղագրություն է պարտավոր իմանալ:

Իսկ 1910 թ. վերահրատարակության Առաջաբանում հայտնում է, թե ինչ թեմաներ են ավելացել: Միաժամանակ փոփոխություն է կրել նաև մեթոդական ապարատը: Եթե նախորդ հրատարակություններում զետեղված էին միայն վարժություններ, ապա այստեղ ավելացել է նաև *Վերլուծություն* բաժինը: Արեղյանը վարժությունը կատարելուց առաջ սովորեցնում է, թե հաջորդ թեման ինչպես է պետք վերլուծել, որից հետո միայն կատարել տվյալ վարժությունը: Օրինակ՝ էջ 32-ում տրված է վերլուծություն. «Որոշել ենթակա և բայ՝ ենթակաները հոգնակի դարձնելով, իսկ հոգնակի ենթակաները՝ եզակի՝ համապատասխան ձևով փոխելով և բայերի թիվը: Օրինակ՝ 1. Ծերունին ցանցով ձուկ բռնեց ծովից: – Ծերունիները ցանցով ձուկ բռնեցին ծովից»³⁰⁷: Դրանից հետո վարժություն կատարելը ամեննին դժվարություն չի ներկայացնի:

Շուտով Ներսիսյան դպրոցի վարչության հրավերով Արեղյանը ստանձնում է դպրոցի գրաբարի և հայ հին գրականության ուսուցչի պաշտոնը: Այստեղ ևս զբաղվում է դասագրքաստեղծ գործունեությամբ:

1913 թ. լույս է տեսնում Արեղյանի թելադրությունների ժողովածուն՝ «Ուղղագրական հոդվածներ» վերնագրով: Հետաքրքիր կառուցվածք ունի գիրքը: Բոլոր թելադրությունները վերաբերում են գայլին, այդ պատճառով գրքի ենթավերնագիրն է «Գայլ և գայլի պատահարներ»: Մենք սովոր ենք, որ թելադրության նյութերը պիտի տարաբնույթ լինեն, բայց այն սկզբունքը, որ կիրառել է Արեղյանը, չափազանց հետաքրքիր է և անսովոր: Ամբողջ

³⁰⁷ Տե՛ս Մ. Արեղյան, Տարրական քերականություն, Թիֆլիս, 1910:

գիրքը քննում է գայլի կենսաձևը: Այն բաղկացած է երկու հատվածից՝ Ա. Գայլ և Բ. Գայլի պատահարներ: Ա. Բաժինն ունի համապատասխան վերնագրեր՝ «Գայլի արտաքինը», «Գայլի տարածված լինելը», «Գայլի բնակավայրն ու թափառելը», «Գայլի սնունդը», «Գայլի որսորդությունը», «Գայլի ընդունակություններն ու հատկությունները», «Գայլի գույներ», «Պատահած դեպքեր գայլի կյանքից»:

Բ. Հատվածի նյութերի վերնագրերն են՝ «Գայլի ձագը», «Գայլի ուսումը», «Գայլի պարծանքը», «Գայլը դատավոր», «Գայլը փողահար», «Գայլը պայտար», «Գայլը ջրաղացում», «Գայլը փաստաբան», «Գայլի զոջումը», «Գայլը թակարդի մեջ», «Գայլի տարիքը», «Գայլը թղթատար», «Գայլի հայացքը», «Գայլերի ոհմակը»:

Հետաքրքիր է գայլերին ուղղված անեծքը.

Էլ չտեսնես ոչխար բարով,

Գեր դմակի մնաս կարոտ:

Վիզդ կապեն կարմիր նարոտ,

Ծեծվես բրով, մեռնիս սրով:

Մարդիկ մորթիդ առնեն շուտով,

Շինեն իրենց մուշտակ աղվոր:

Շներ լինին հուղարկավոր,

Մեծ հանդեսով լեշդ տանեն քաշքշելով,

Պատառ-պատառ հոշոտելով:

Վրադ խնդան ծիծաղելով,

Ավաղ ու վայ քեզ ասելով:

Աբեղյանը Առաջաբանում տեղեկացնում է, որ «Այս «Ուղղագրական հոդվածների» առաջին մասի նյութը քաղած է Բրեմի կենդանաբանությունից, իսկ երկրորդ մասը ժողովրդական առակներ են՝ Վարդանա առակներից, Հայկունու ժողովածուից և այլ աղբյուրներից, մասամբ և անմիջապես ժողովրդի բերանից գրի առնված: Գրվածքը մի ամբողջություն է կազմում և պատրաստված է հատկապես Ա. և Բ. դասարանների թելադրության համար, բայց կարող է ծառայել և իբրև ընթերցանության նյութ»³⁰⁸: Այնուհետև ուսուցիչներին է հղում իր մեթոդական խորհուրդները, թե ինչպես պիտի օգտագործեն նյութերը: Այսպես թելադրությունը միայն գրագիտու-

³⁰⁸ Մ. Աբեղյան, Ուղղագրական հոդվածներ. Գայլ և գայլի պատահարներ (թելադրության համար պատրաստած), Թիֆլիս, 1910:

թյան խնդիր չի լուծում, այլ միաժամանակ հարուստ տեղեկություն է փոխանցում երեխային՝ զարգացնելով նրա մտահորիզոնը:

Այնուհետև Ներսիսյան դպրոցի ուսուցիչներ Մ. Մատենճյանի և Ա. Աբեղյանի հետ համատեղ կազմում և տպագրության է հանձնում «Գրագետ» ուղղագրական ձեռագիր հոդվածների երեք պրակները, որոնք, հաջորդաբար տպագրվելով, հետագայում ևս ունենում են մի քանի վերահրատարակություններ:

Դասագրքի նյութերի մեծ մասը մշակվել է հեղինակների կողմից, մի մասն էլ քաղվել է տարբեր աղբյուրներից: Դասագրքի շապիկի վրա գրված է. «Հոգաբարձուների կողմից թույլատրված է որպես դասարանական ձեռնարկ պետական դպրոցների համար»: Դասագիրքը վերնագրված է «Գրագետ», և հետաքրքիր է, որ դասագիրքը բացվում է Անգրագետի դիմումով՝ ուղղված հեղինակներին.

Երբեք մեկին չեմ նախանձում Ես աշխարհի երեսին,
Միայն գրագե՛տ դուք պարոններ, Նախանձում եմ ձեր բախտին:
Ա՛խ, գթացե՛ք գեղջուկ որբիս Մի լավություն միայն արե՛ք:
Տվե՛ք մի թերթ ինձ ճերմակ թուղթ Մի փետուրե գրիչ տվե՛ք
Եվ ինձ գրել սովորեցրե՛ք սովորեցրե՛ք լավ, շուտով,
Որ գրիչս կայծակից էլ Արագ թռչի գրելով³⁰⁹:

Յուրաքանչյուր նյութից (հոդվածից) հետո տրված են ուղղագրական բառեր: Ուշագրավն այն է, որ հեղինակները առաջադիմական հայացքների տեր էին, որովհետև նախընտրել էին ուղղագրությունն ուսուցանել խոսքի մեջ և նրա միջոցով: Բնագրերը ուղղված են արժեքային համակարգի ձևավորմանը, կենդանիների միջոցով վեր են հանվել մարդկային կյանքի խոցելի և դրվատելի կողմերը:

Աբեղյանի կազմած հայոց լեզվի դասագրքերն ու ձեռնարկները կազմված էին խնամքով, մատչելի էին ու տրամանաբանված: Դրանք աչքի էին ընկնում նաև մեթոդական ապարատով, և դա էր պատճառը, որ դրանք լայնորեն օգտագործվում էին ժամանակի հայկական դպրոցներում:

Հայ ժողովրդի հոգևոր կերտվածքի նորոգման և ազգային ինքնապահպանման գաղափարները առավել նոր ու որոշակի դրսևորումներ են

³⁰⁹ Մ. Աբեղյան, Ա. Աբեղյան, Մ. Մատենճյան, Գրագետ, ուղղագրության դասագիրք ձեռագիր հոդվածներով, Թիֆլիս, 1916:

գտնում Աբեղյանի ձեմարանական շրջանի վերջին տարիների հրապարակախոսության մեջ: Դրանց ամփոփումը եղավ «Հորիզոնում» լույս տեսած «Մեր դպրոցական կյանքից» ծավալուն հոդվածաշարը, որն իր շոշափած հարցերով նոր երևույթ էր հայ մտավորական կյանքում: Այն պատասխան էր Հ. Թումանյանի «Հայերեն չգիտեն» բաց նամակին, որտեղ բանաստեղծն իր մտահոգությունն էր հայտնում ձեմարանը, Ներսիսյան ու թեմական դպրոցներն ավարտած հայերենի ուսուցիչների «ահավոր տգիտության» կապակցությամբ:

Հայոց լեզվի ուսուցիչների ողբալի վիճակը Աբեղյանը հիմնավորում է հասարակական-քաղաքական և սոցիալ-կենցաղային լուրջ դրդապատճառներով: Առաջին պատճառը նա համարում է ցարիզմի վարած ոստիկանական քաղաքականությունը, որի պատճառով տուժում էին հայոց լեզուն և հայ մշակույթը: Այդ հալածական քաղաքականությունից զերծ չէին և ազգային փոքրամասնությունները: «Ի՞նչ խոսք կարող էր լինել հայոց լեզվի լավ տիրապետման մասին, երբ այդ առարկան հայկական դպրոցներում հանրակրթական մյուս առարկաների նկատմամբ ոչ մի արտոնություն չի վայելում: Մինչդեռ ռուսական գիմնազիաներում ռուսերենն ուներ բացարձակ արտոնություն. ռուսերենից կտրվողներին այլևս չէր թույլատրվում ուսումը շարունակել: Իսկ հայերենը ոչ միայն նման առավելություն չունեի, այլև հավասարազոր էր դասվում մյուս առարկաներին, և քանի որ դրանց դրվածքը շատ թույլ էր հայկական դպրոցներում, ապա թույլ էր նաև հայոց լեզվի դասավանդումը»³¹⁰:

Հայկական դպրոցներում հայոց լեզվի դրվածքի թուլությունը նա բացատրում էր մի ուշագրավ հանգամանքով ևս: Նա ցավով նշում է, որ մինչև 1906-1907 ուսումնական տարին, հայոց լեզու ասելով, մեր դպրոցներում գրաբարն էին հասկանում: Լեզվի նկատմամբ մեզանում եղած այդ հնամուլական ըմբռնումն է եղել մասամբ պատճառը, որ թերագնահատվել է կենդանի լեզվի ուսուցումը և այն փոխարինվել մեռած գրաբարով, որից աշակերտները շատ բան չէին հասկանում: «Հայերենի ուսում ասելով, – գրում է Աբեղյանը, – այսուհետև պետք է հասկանալ աշխարհաբարի, կենդանի հայերենի ուսումը, այն հայերենի, որ կյանքի ու գրականության մեջ պետք է գալիս»³¹¹:

³¹⁰ Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 69-70:

³¹¹ «Հորիզոն», 1910, հ. 204:

Աբեղյանի խոսքերը այսօր ևս շատ արդիական են, որովհետև այսօր էլ պահանջ է դրված դպրոցներում ուսուցանելու այն հայերենը, որը կյանքի ու գրականության մեջ պետք է գալիս: Նա առաջարկում է, որ հայկական դպրոցներում «մինչև աշակերտի ավարտելը լինի արևելյան և արևմտյան աշխարհաբարի ուսում: Եթե այսպես չլինի, ես հավատացած եմ, որ այսուհետև ևս մեր աշակերտների հայերենը միշտ թույլ կլինի»³¹²:

Այսօր ևս արևմտահայերենի ուսուցումը օրակարգի հարց է, քանի որ ցավալիորեն այն դասվում է մեռնող լեզուների շարքին, իսկ դեպքերի բերումով Հայաստանում բնակություն հաստատած արևմտահայերը կարիք ունեն լեզվի կիրառության, արևմտահայերենով հաղորդումների, մամուլի, գրականության: Արևմտահայերենը տեղ է գտել օրինակելի հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի ցանկում՝ որպես երաշխավորված առարկա, և շատ դպրոցներ դպրոցական պարտադիրից լրացուցիչ ժամ են հատկացնում արևմտահայերենին: Արևմտահայերենը տեղ է գտել նաև հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի հայոց լեզվի ծրագրում: Այնպես որ այս խնդիրը 1900-ականներին բարձրացրել է Աբեղյանը և շարունակ անդրադարձել խնդրին:

Աբեղյանը գտնում էր, որ աշխարհաբարի ուսուցման հետ մեկտեղ պետք է փոփոխել «հայ գրականության ծրագիրն ու դասատվության եղանակը: Հայերենի ուսումը բարձրացնելու համար,– գրում էր նա,– պետք է ուժ տալ աշխարհաբարին ու աշխարհաբարի գրականությանը»³¹³:

Այստեղ ևս երևան է գալիս Աբեղյանի՝ ազգի հոգևոր նորոգման և վերածնման ձգտումը: Այս գործում նա մեծ տեղ էր հատկացնում կենդանի լեզվին ու նրանով ստեղծված նոր ու թարմ գրականությանը, որը փոխարինելու էր եկել քչերին մատչելի գրաբարին: Իհարկե, սա չէր նշանակում, թե Աբեղյանն առհասարակ դեմ էր գրաբարի ուսուցմանը: Ընդհակառակը, նա պարտադիր էր համարում գրաբարի ուսուցումը դպրոցներում, բայց այնքանով միայն, որքանով նպաստելու էր աշխարհաբարի ավելի լավ ըմբռնմանն ու յուրացմանը: «Ինչքան էլ մեծ է գրաբարի նշանակությունը,– գրում է Աբեղյանը,– աշխարհաբարի և աշխարհաբար գրականության մեջ չափի դնել գրաբարն ու գրաբար գրականության ուսումը...:

³¹² Նույն տեղում:

³¹³ Նույն տեղում:

Մեր դպրանոցներում սկզբից մինչև վերջ իշխող պիտի լինի աշխարհաբարը»³¹⁴ :

Հայերեն չիմանալու, լավ չսովորելու պատճառներից մեկն էլ Աբեղյանը համարում է արհամարհանքը լեզվի հանդեպ: Նա դա համարում է մեր կյանքի ամենացավոտ կողմը, որը գնալով խորանում է և այլանդակ ձևեր ընդունում:

«Մի՞թե կարելի է դատապարտել մի աշակերտի,– դառնացած գրում է նա,– որ լավ գրաբար սովորել չի աշխատում, երբ նա տեսնում է, որ հագարավոր հայ տղայք, գիմնազիայի աշակերտներ և ուսանողներ, նույնիսկ բարձրագույն ուսում ստացած հայազգի տղամարդիկ ու շատ կրթված հայ կանայք ոչ միայն գրաբար մի տող չեն հասկանում, այլև հայերեն չգիտեն իրենց իմացածի քառորդի չափ, ոչ միայն հայերեն լեզվով երկու տող գրել չգիտեն ու չեն գրում, այլև հայերեն լեզվով կես ժամի չափ մի հասարակ զրուցատրություն անել չեն կարողանում: Ու միայն այդ կրթվածները հաճախ բառի բուն նշանակությամբ հայերեն չգիտեն, այլև ավելորդ են համարում իմանալ: Եվ գրում և խոսում են դրանք ուրիշ լեզուներով, և ամոթ չէ համարվում այդ, այլ իրերի բնական դրություն»³¹⁵: Եվ երբ հայ աշակերտը տեսնում է, որ այդ «հայ կրթվածներ», «հայ առաջավորներ», «հայ ազգասերներ» համարվող «ինտելիգենտները» հայերեն չգիտեն ու արհամարհում են լեզուն, կարո՞ղ է արդյոք այդ ամենին ականատես աշակերտը սիրել հայերենը, հետաքրքրվել նրանով ու խորամուխ լինել նրա մեջ: Ազգային-բարոյական այս աղճատումը իր շոշափուկներն է տարածել հայ դպրոցներում ու ձեմարանում այն դեպքում, երբ նրանք կոչված են լինելու հայ մտքի և ոգու դարբնոցներ: Հայկական դպրոցներում բավարար չափով հայերեն չիմացող ուսուցիչների առկայությունը, ապա ուսուցիչների մի մասի՝ իրենց զավակներին այլազգի դպրոցներ տալու մոլուցքը Աբեղյանն իրավամբ անվանում է «աշակերտներին հայերենի նկատմամբ պարզապես անբարոյականացնող մի դրություն»³¹⁶:

Աբեղյանը համոզված է, որ դպրոցը կյանքի բաղկացուցիչ օղակն է. «Ինչ որ կա մեր կյանքի մեջ, նույնը պիտի լինի և դպրոցի մեջ: Քանի կյանքի մեջ հայերենն արհամարհված է, մեր դպրոցում կարգին հայերենի

³¹⁴ Նույն տեղում:

³¹⁵ Նույն տեղում:

³¹⁶ Նույն տեղում:

ուսում չի կարելի տալ ընդհանրապես»: Այս մտքերը իրավամբ արդիական են, քանի որ կրթական չափորոշիչներում այսօր էլ ամրագրված է, որ դպրոցը չափտի կտրված լինի կյանքից և պիտի արձագանքի կյանքում տեղի ունեցող փոփոխություններին: Այնուհետև շարունակում է. «Կյանքը փոխելն իհարկե մեր ձեռին չէ, բայց մենք կարող ենք դպրոցն այնպես կարգավորել, որ արտաքին ազդեցությունները գոնե պակասեն և համեմատաբար ավելի լավ հայերեն սովորեն մեր աշակերտները»³¹⁷:

Կրթության և լուսավորության վերաբերյալ իր մտահոգություններն Աբեղյանն արտահայտում է «Գիսավորի հիշատակարանը» ֆելիետոնաշարում³¹⁸: Այստեղ Աբեղյանը բացահայտում է Էջմիածնի վանական միջավայրում տիրող տգիտությունն ու խավարը, տգետ վանականների թշնամական դիրքորոշումը լուսավորության հանդեպ, ձեմարանում տեղ գտած չարաշահումները:

Ֆելիետոնն ունենում է իր ազդեցությունը և փոխվում է ձեմարանի տեսուչը, սակայն ձեմարանի ուսուցիչների նյութական կյանքի վրա շարունակում էին բացասաբար ազդել աշխատավարձերի վճարման երկարատև ուշացումները: Աբեղյանը նոր տեսչին ուղղված իր գրության մեջ բարձրաձայնում է ուսուցիչների աշխատավարձերի բարձրացման հարցը, խոսում ուսուցչի անապահով ներկայի և տխուր ապագայի մասին: Հայ ուսուցիչը, որի «ռոճիկը, – գրում է Աբեղյանը, – փոխանակ տարվետարի ավելանալու, պակասում է, երևի որպեսզի վերջը բոլորովին ոչնչանա, և ուսուցիչը 50 տարեկան հասակում առանց կենսաթոշակի և խնայողության մնացած, երթա յուր համար ապրելու նոր ասպարեզ բանա կամ դռներն ընկնի մուրա»³¹⁹:

Չարաշահումներն այնքան են շատանում, որ պատճառ են դառնում աշակերտական ընդվզումների, բողոքի ակիքը վերաճում է աշակերտական խռովությունների, և կաթողիկոսը խնդրում է Աբեղյանին ստանձնել ձեմարանի տեսչի պաշտոնը: Աբեղյանը մի ընդարձակ հայտարարությամբ դիմում է կաթողիկոսին և հանգամանալից ներկայացնում ձեմարանի պայմանների բարեփոխման իր առաջարկությունները:

³¹⁷ Նույն տեղում:

³¹⁸ «Նոր-Դար», 1902, հ. 69, 73, 95, 98, 145, 156:

³¹⁹ ՀՍՄՀ պետական կենտր. պատմ. արխիվ, ֆոնդ 312, թղթ. 38, վավ. 3, թերթ 13:

1. Բարձրագույն կրթությամբ որակյալ ուսուցչական խումբ ստեղծելու նախապայմանը նա տեսնում էր ուսուցիչների նյութական դրության բարելավման մեջ, որը ենթադրում էր աշխատավարձերի բարձրացում և վաստակած տարիներից հետո արժանավայել կենսաթոշակի սահմանում:

2. Պահանջում էր տարեկան նախահաշիվների կարգավորում և ժամանակին ֆինանսավորում, որից էլ կախված էր ճեմարանի նյութական բարեկեցությունը՝ սկսած պարենից ու հագուստից, վերջացրած ճեմարանին անհրաժեշտ գույքով ու գրենական պիտույքներով:

3. Առաջարկում էր ականջալուր լինել ճեմարանի աշակերտության իրավացի պահանջներին, ինչը ենթադրում էր աշխարհիկ հագուստի կրում, հրաժարում ամենօրյա խմբակային աղոթքներից և եկեղեցի ամենօրյա հաճախելուց, ազատ երթևեկության ապահովում:

4. Անհրաժեշտ էր դեմոկրատացնել ճեմարանի կառավարման վարչական համակարգը: Ըստ Աբեղյանի՝ ճեմարանի տեսուչը պիտի ընտրվեր մանկավարժական խորհրդի կողմից և կառավարեր նույն այդ խորհրդի ցուցումներով:

Իհարկե, Էջմիածնի բարձրագույն հոգևոր իշխանությունը ի վիճակի չի լինում իրագործելու Աբեղյանի առաջարկությունները, բավարարվում է միայն մասնակի բարելավումներով, որոնք առանձին ազդեցություն չեն ունենում ճեմարանի հետագա ճակատագրի վրա:

Չնայած այս ամենին՝ դպրոցական գործի և մասնավորապես հայոց լեզվի ուսուցման բարելավման խնդրում Աբեղյանի մղած բարենորոգչական պայքարը երկու կարևոր ուղղություններով էր ընթանում.

ա) մանկավարժական տեսակետից այն պատմական արժեք էր ներկայացնում, քանի որ փոփոխություններ էր առաջարկում դպրոցական կարգերի ժողովրդավարացման մեջ և ձգտում էր մայրենի դարձնել առաջնակարգ առարկա,

բ) հասարակական առումով այն ազգային-քաղաքական վերանորոգման ձգտումի արտահայտություն էր, որ նպատակ էր հետապնդում նպաստելու ազգային հոգևոր կյանքի ծաղկմանն ու բարգավաճմանը:

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺ

ՆՈՒՆԵ ՄԿՐՏՁՅԱՆ

Բ. Գ. Թ., դոցենտ

Մանկավարժության պատմությունը հատկանշվում է բազմաթիվ նվիրյալների անուններով, որոնց մեջ իր կատարած գործի արժեքով և նշանակությամբ ուրույն տեղ է զբաղեցնում Մանուկ Աբեղյանը: Նրա գիտական-բանասիրական գործունեության մասին խոսվել է բազմաթիվ անգամներ: Այս հոդվածով մենք ցանկանում ենք լուսաբանել Աբեղյանի մանկավարժական գործունեությունը՝ նրան համարելով դպրոցաշինության և հայ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության մեծագույն նախանձախնդիրներից մեկը: Մանուկ Աբեղյանը երկարամյա վաստակավոր դաստիարակ և ուսուցչապետ է, ներհուն ուսումնասիրողը մեր հին ու նոր լեզվի ու գրականության:

Մանուկ Աբեղյանի գիտական-մանկավարժական աշխատություններն այսօր դարձել են ուղեցույցներ հայոց լեզու և գրականություն դասավանդող ուսուցիչների համար: Նա մի խոշոր հայագետ է, որը վիթխարի ժառանգություն է թողել մեզ, և մեր՝ ուսուցչությամբ զբաղվողներիս պարտքն է յուրացնել այդ ժառանգությունը, Մանուկ Աբեղյանի նման հետևողականորեն ու անդադրում աշխատել այն հիմնահարցերի լուծման վրա, որոնք ուսումնական հաստատություններում դեռ անլուծելի կամ սակավ ուսումնասիրված են մնացել:

Ոչ միայն ամեն մի ուսուցիչ, այլև յուրաքանչյուր գրագետ հայ անհատ, որ կոչում ունի հայոց լեզվի և գրականության ուսուցման ասպարեզում առաջնակարգ դեր կատարելու, տարրական պարտականություն պետք է համարի շարունակ խորանալու հայերենագիտության մեջ, հարստացնելու իր լեզվական գիտելիքները՝ ուսումնասիրելով Մանուկ Աբեղյանի մանկավարժական փորձն ու գիտական աշխատությունները: Այդպես մենք կարող ենք լրջորեն արտահայտել մեր հարգանքն ու սերը մեծ ուսուցչի գործունեության հանդեպ:

Մանուկ Աբեղյանի մանկավարժական գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլերի: Առաջին փուլը սկսվում է նրա ուսանելու տարիներից. դեռևս ճեմարանում սովորելու տարիներին Մա-

նուկ Աբեղյանը ուշիուշով հետևում էր ուսուցչի՝ Էջմիածնի համեստ միաբաններից մեկի՝ Մակար վարդապետի դասավանդման մեթոդին, սաներին կրթելու նրա կարողություններին: Դասավանդման հմտություններ սովորում է նաև իր ուսուցիչներից՝ հայտնի բանասեր և հայագետ Կարապետ Կոստանյանից, մանկավարժ Մեղրակ Մանդինյանից, որոնք ազգի հոգևոր բարգավաճման գլխավոր հիմքը տեսնում են ուսման և կրթության մեջ:

Գնահատելով ճեմարանում նրա ձեռք բերած գիտելիքները և գրական-մանկավարժական պատրաստվածությունը՝ հիմնարկության տեսչությունը նորավարտ Մանուկ Աբեղյանին նշանակում է դասաբանական բաժնի ուսուցիչ: Ուսանողության և ուսուցչության տարիներին նա ճեմարանում ընկերական և բարեկամական կապեր է հաստատում մի շարք ուրիշ ճեմարանցիների հետ՝ Ստեփան Մալխասյանց, Ստեփան Կանայանց, Մկրտիչ Ղազարյան, Նիկ. Ադոնց և ուրիշներ, որոնք հետագայում դարձան անվանի դեմքեր մանկավարժական և հայագիտական ասպարեզներում: Աբեղյանը, Էջմիածնի ճեմարանի դպրոցում աշխատելու տարիներից սկսած, հայոց լեզվի և գրականության դասավանդումը իրականացնում էր ընթերցանությունը և վերլուծական մտածողությունը զարգացնելու մեթոդով: Սաներն ընթերցում էին մեր թե՛ արևելյան և թե՛ արևմտյան աշխարհաբարով նոր գրականությունից որոշ հատվածներ, աշխատում էին ընտիր ու կանոնավոր գրական լեզվով վերապատմել կարդացածը, նույնիսկ որոշակի կտորներ անգիր էին անում. «Ընտրվում են, իհարկե, այնպիսի հատվածներ, որ ընտիր ու ճոխ լեզվով են,– գրում է Աբեղյանը,– թեպետ ընտրությունը շատ նեղ սահմանում է լինում, որովհետև դասագիրք չլինելով՝ կարդում են մի քանի հեղինակի մի քանի երկերից միայն: Վերլուծում են կարդացած հատորների կազմությունը, մասերի տրամաբանական կապակցությունը և այլն: Սովորում են այդ հատվածների մեջ պատահած անծանոթ բառերի ու դարձվածների նշանակությունը, անսովոր քերականական ձևերը, ամբողջ քերականությունը»³²⁰:

Գևորգյան ճեմարանում երկու տարի (1885- 1887) պաշտոնավարելուց հետո Մանուկ Աբեղյանը հրավիրվում է Շուշիի թեմական դպրոցը որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Երեք տարի (1887-1890) նա դա-

³²⁰ «Հորիզոն», 1910, №. 193:

սավանդում է այդ դպրոցում՝ պաշտոնակից ունենալով Նիկ. Մելիք-Թանդեյանին (հետագայում՝ Ներսես արքեպիսկոպոս), Սամվել Գյուլզադյանին (Ֆիրդուսու Շահնամեի թարգմանիչը), Հակոբ Ճաղարբեդեյանին, Գաբրիել վարժապետ Ղուլիքնիսեյանին և մի շարք վաստակավոր մանկավարժների:

Մանուկ Աբեղյանը Շուշի՝ թեմական դպրոցում սովորելու է տանում նաև իր եղբոր որդուն՝ Արտաշես Աբեղյանին՝ ստանձնելով նրա ուսման և դաստիարակության հոգսը: Այստեղ է, որ գործուն դեկավարի՝ Մանուկ Աբեղյանի և թեմական դպրոցի մի քանի ուսուցիչների մասնակցությամբ կազմվում է գրական-մանկավարժական մի խմբակ, ուր հաճախ գրական կամ մանկավարժական հարցերի շուրջ դասախոսություններ են ընթերցում և դասավանդման մեթոդների շուրջ մտքերի փոխանակություններ են ունենում բազմաթիվ մանկավարժներ: Թեև պաշտոնով ոչ ուսուցիչ, այդ խմբակի անդամ էր նաև Առաքել Բաբախանյանը՝ Լեոն:

Թիֆլիսի Հովնանյան դպրոցի տեսուչ, Աբեղյանի ճեմարանական ուսուցիչ, հայտնի թարգմանիչ Փիլիպոս Վարդանյանը, 1890 թ. Մանուկ Աբեղյանին հրավիրում է՝ կովկասահայ օրիորդաց ամենանշանավոր վարժարանում դասավանդելու հայոց լեզու և գրականություն: Շուրջ երեք տարի (1890- 1893) մեծ հաջողությամբ ուսուցանում է Թիֆլիսի Հովնանյան դպրոցում՝ ցուցաբերելով մանկավարժական բեղմնավոր արդյունք: Ծխական դպրոցների համար պատրաստելով հայոց լեզուն դասավանդող մեծաթիվ վարժուհիներ և ընդունելով հայ կնոջ ազատության և իրավունքի իրագործման պատմական կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ Աբեղյանը գտնում էր, որ «կանանց կրթության, լուսավորության, նրանց մտավոր-կուլտուրական ընդհանուր մակարդակի բարձրացումը ինքնըստինքյան կնախապատրաստի և կլուծի կնոջ ազատության և իրավունքի հարցը»³²¹:

Ուր տարի մանկավարժական-գրական գործունեություն (1885-1893) ունենալուց հետո, քսանութ տարեկանում Մանուկ Աբեղյանին հաջողվում է 1893 թ. բարձրագույն կրթություն ստանալու նպատակով մեկնել արտասահման:

Պարապելով ջանասիրաբար և ձեռք բերելով ուսուցման ու դաստիարակության մեթոդների մեծագույն պաշար և բազմակողմանի հմտություն՝

³²¹ «Նոր-Դար», 1890, № 64, 65:

Մանուկ Աբեղյանը 1898 թ. վերադառնում է հայրենիք և հրավիրվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարան որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ և լսարանային բաժնի դասախոս: Այսպես սկսվում է մանկավարժական գործունեության երկրորդ՝ բավականին նշանակալից ու բեղմնավոր փուլը: 1898-1914 թթ.՝ շուրջ 16 տարի, Մանուկ Աբեղյանը ուսուցիչ է եղել Գևորգյան ճեմարանում և աշխատել այնպիսի մարդկանց հետ, որոնք նույնպես մեծ անուն ու հեղինակություն էին վայելում իրենց գործունեության ասպարեզում՝ հռչակավոր բանասեր Կարապետ Կոստանյան, խոշոր գիտնական Կարապետ Տեր-Մկրտչյան, անգուգական երաժշտագետ Կոմիտաս, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյան, հայտնի մանկավարժ Սեդրակ Մանդինյան, ակադեմիկոս Հակոբ Մանանդյան, Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հ. Աճառյան, Ստեփան Կանայան և այլք. «Եվ այս փայլուն կաճառի մեջ առաջնակարգ տեղերից մեկն էր գրավում Մանուկ Աբեղյանը»³²²:

Առանձնապես ուսանելի էին ու արդյունավետ նրա՝ մայրենի լեզվի և գրականության գործնական պարապմունքները ճեմարանի լսարանական բաժնում: Աբեղյան մանկավարժը իր աշակերտներին իսկապես սովորեցնում էր գրական-գեղարվեստական վերլուծություններ կատարել, տարբերակել գլխավորը երկրորդականից, ուշադրությունը կենտրոնացնել հիմնականի վրա: Ճեմարանում դասավանդելու վերջին տարիներին Աբեղյանը ցանկանում էր արմատական բարեփոխումներ կատարել դպրոցական բաժնում՝ դասավանդվող գրաբարի և աշխարհաբարի ծրագրերում և, ըստ այդմ, կազմել մեր հին մատենագրությունից մի ընտիր ծաղկաքաղ. «Ծաղկաքաղն ունենալու էր ընդարձակ ներածություն, և ընդգրկված նյութը դասակարգվելու էր մանկավարժական այնպիսի սկզբունքով, որ մեծապես նպաստեր թե՛ գրաբարի, թե՛ հին գրականության ու հայոց պատմության ուսուցմանը: Մակայն այդ լավ ծրագիրը, որ նույնիսկ գրավոր ներկայացվում է ճեմարանի տեսչին, ինչ-ինչ պատճառներով մնում է չիրագործված»³²³:

1914-1919 թթ. Աբեղյանը տեղափոխվում է Թիֆլիսոբյան Ներսիսյան և Հովնանյան դպրոցների ուսուցիչ և դասավանդում հինգ տարի: Այս շրջանը կարելի է համարել Մանուկ Աբեղյանի մանկավարժական գոր-

³²² Ե. Տեր-Մինասյան, Մ. Աբեղյանի կյանքն ու գործը, Եր., 1946, էջ 10:

³²³ Մ. Հարությունյան, Մ. Աբեղյան. կյանքն ու գործը, Եր., 1970, էջ 60:

ծունեության երրորդ փուլը: Թիֆլիսում նա դասավանդում էր նաև պետական գիմնազիաներում, որտեղ գործ ուներ այլասերված բուրժուազիայի երես առած զավակների հետ, որոնք էլ արհամարհում էին հայ ժողովրդին ու հայոց լեզուն և գրականությունը: Այդ տարիներին ցարական Ռուսաստանը արգելքներ էր ստեղծում Անդրկովկասում համալսարան կամ որևէ բարձրագույն դպրոց հիմնելու բոլոր ջանքերի ու առաջարկների առջև: Ավելին՝ նա խիստ սահմանափակում ու խափանում էր մինչև իսկ հայրենիքում մայրենի լեզվով ազգային կրթությունը: Մանուկ Աբեղյանը, լինելով հայ ազգի առաջավոր մտավորականներից ու մանկավարժներից մեկը, դեմ էր նման արգելքներին: Եվ երբ 1920 թ. Ալեքսանդրապոլում հիմնվում է Հայաստանի համալսարանը, Մանուկ Աբեղյանը, բնականաբար, դառնում է անդրանիկ դասախոսներից մեկը՝ այդ աշխատանքով զբաղվելով մինչև խորին ծեղրություն. «Սկսվում է Մանուկ Աբեղյանի գիտական և դասախոսական գործունեության վերջին, ամենաբեղմնավոր էտապը Պետական համալսարանում և Գիտությունների ակադեմիայում»³²⁴:

Մանուկ Աբեղյանը գրեթե վաթսուս տարիների բեղմնավոր մանկավարժական գործունեություն ուներ, որի ընթացքում ուսուցանողի ու դաստիարակի դեր է կատարել ժամանակի մեր ամենահայտնի կրթական օջախներում՝ Էջմիածնի Գևորգյան Ճեմարան, Շուշիի և Թիֆլիսի թեմական դպրոցներ, Թիֆլիսի օրիորդաց վարժարան, Հայաստանի համալսարան: Եղել է Կովկասի հայ ուսուցիչների արհեստակցական միության Էջմիածնի գավառի հիմնադիրը և տարիներ շարունակ այս ճյուղի վարչության նախագահը, գիտական և մանկավարժական դասախոսություններ է կարդացել Երևանում, Էջմիածնում, Թբիլիսիում, Բաքվում: Հմուտ մանկավարժը համոզված էր, որ եթե մի ազգի մեջ ընդհանուր կրթությունը չի ծավալվում ամենուր, և ուսումը մնում է միայն իբրև որոշ դասի առանձնաշնորհ, ապա այդ կրթահամակարգը զարգացում ապրել չի կարող:

Մանուկ Աբեղյանի մանկավարժական-ուսուցչական գործունեության հետ սերտորեն կապված են իր մանկավարժական և գիտական բազմաթիվ աշխատություններն ու վաստակները, որոնք, կարծում ենք, կարելի

³²⁴ Ե. Տեք-Մինասյան, Մ. Աբեղյանի կյանքն ու գործը, Եր., 1946, էջ 12:

բաժանել հայոց լեզվի և հայոց գրականության դասավանդման վերաբերյալ մեծարժեք գործերի:

Դպրոցական պահանջներին համապատասխան են գիտնականի ստեղծած հայոց լեզվի քերականության դասագրքերը, հատկապես «Տարական քերականությունը», որում մանրամասն տրված դասընթացը և ուսուցման մեթոդները սահմանված են նախակրթարանների կամ տարական վարժարանների աշակերտության համար, ինչպես նաև «Աշխարհաբարի քերականությունը»՝ նախատեսված միջնակարգ դպրոցի սաների համար: Դասագրքերը դպրոցներում երկար տարիներ եղել են գործածության մեջ: «Տարական քերականությունը» ունեցել է մի քանի տպագրություն՝ միշտ ենթարկվելով մշակման ու բարեփոխման, իսկ «Աշխարհաբարի քերականությունը» ստեղծված է լեզվական գիտական հիմունքներով՝ բնականաբար, հաշվի առնելով դպրոցականների տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնակատկություններն ու հնարավորությունները: Թե՛ «Տարական քերականությունը», թե՛ մանավանդ «Աշխարհաբարի քերականությունը» պարունակում են ոչ միայն անհրաժեշտ գիտելիքներ արևելահայ աշխարհաբարի մասին, այլև ուղղագրական կարևոր գիտելիքներ: Մանուկ Աբեղյանը քերականական կանոնների ուսուցումը դյուրին դարձնելու համար վերջիններիս կցել է համառոտ վերլուծություններ, դյուրըմբռնելի գործնական վարժություններ և անհրաժեշտ բառացանկեր:

Տաղանդավոր գիտնական-մանկավարժը աշխարհաբարի քերականության անբաժանելի մասն է համարում շարահյուսության ճիշտ ուսուցումը, որը բոլորովին անտեսվում էր կամ թերի էր ուսուցանվում մեր դպրոցներում: Մանուկ Աբեղյանը լրացնում է այդ զգալի թերին և ստեղծում «Աշխարհաբարի շարահյուսությունը» մեծարժեք գործը՝ որպես արդի հայերենի ուսուցման ավելի բարձր դասընթաց: Նա իր գրքում քննում է ոչ միայն արևելահայ, այլև արևմտահայ գրական լեզուն և իր սաներին բացատրում առանձնահատկությունները: Աշխատությունն լեցուն է բազմաթիվ օրինակներով և նմուշներով՝ քաղված մեր ընտրագույն հեղինակների երկերից: Այն մեծապես օգտակար քերականական դասընթաց է՝ նախատեսված ոչ միայն որպես դասագիրք աշակերտների համար, այլև որպես ուսումնասովորական ձեռնարկ ուսուցիչների և առհասարակ հայերենի ուսուցմամբ հետաքրքրվող բոլոր մարդկանց համար:

Մանուկ Աբեղյանի քերականական դասագրքերը և ուսումնասիրությունները մեծ մասամբ ներառում էին աշխարհաբար լեզուն, բայց նա մի աշխատանք էլ նվիրել է մեր հին լեզվին՝ «Գրաբարի համառոտ քերականություն» (Վաղարշապատ, 1907): Այս դասագիրքը ևս հաշվի է առնում դպրոցական պահանջները. այն երկար տարիներ գործածության մեջ էր ոչ միայն դպրոցներում, այլև Էջմիածնի Ճեմարամում և Հայաստանի համալսարանում: Մեծն գիտնական-մանկավարժի կարծիքով դպրոցներում աշխարհաբարի ուսուցումը պետք է առաջնայինը լինի՝ աշակերտի դպրոց մտած օրից մինչև ավարտելը: Իսկ գրաբարի ուսուցման համար առանձին դասեր պետք է հատկացվեն, այն էլ միայն բարձր դասարաններում, երբ աշակերտը բավական հմտացած կլինի հայոց լեզվին, սովորած կլինի աշխարհաբարի ամբողջ քերականությունը և լավ ծանոթ կլինի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան գրական լեզվին: Գրաբարի քերականության նպատակն էլ այժմ, իհարկե, այլևս այն չէ, ինչ որ առաջ, երբ պետք էր ուղիղ գրաբար գրել սովորել, այն էլ հինգերորդ դարի՝ «Եղիշէի կամ Խորենացու» լեզվով գրաբար: Աբեղյանի կարծիքով՝ գրաբարի քերականությունը միայն իբրև միջոց պետք է ծառայի հայ հին լեզուն հասկանալու համար և ապա պիտի օգնի մեր լեզվի կազմությունն ու պատմական զարգացումը բացատրելուն: Այս երկու նպատակի համար էլ կազմվեց «Գրաբարի քերականություն» դասագիրքը, բայց այդ հրատարակելու փոխանակ՝ մի քանի ուսուցիչների խորհրդով ու ցանկությամբ լույս տեսավ «Համառոտ քերականությունը», որում չներառվեցին մեր լեզվի պատմական քերականության խնդիրները՝ պահելով դրանք աշխարհաբարի քերականության դասընթացի մեջ ներկայացնելու համար: Այս «Համառոտ քերականության» դասընթացից (քանի որ գրաբարի ուսուցումն աշխարհաբարի ուսուցումից հետո պիտի տրվի) դուրս է թողնված այն ամենը, որ ընդհանուր քերականությանն է վերաբերում և հատուկ է նաև աշխարհաբարին, որ և աշակերտը պետք է սովորած լինե՛ր «Տարրական քերականությունից» կամ «Աշխարհաբարի քերականությունից»: Բայց դրա փոխարեն, որքան հնարավոր է, մանրամասն վերցված են գրաբարի ձևերը՝ խոնարհում, հոլովում, նախդիրների գործածություն և մի քանի շարահյուսական կանոններ, որոնք հատուկ են միայն գրաբարին, կամ աշխարհաբարում հազվադեպ են հանդիպում. «Քերականությանս մեջ բերած օրինակների հեղինակները չնշանակեցինք ավելորդ տեղ չբռնելու համար,

մանավանդ, որ այժմ լեզվի ընտրության և ոչ ընտրության խնդիր չկա: Գրաբարն այժմ կարդում ենք աշխարհաբարի ձևով, իսկ աշխարհաբարը գրում ենք մեծ մասամբ գրաբարի ձևով: Գրաբարի և աշխարհաբարի բառերը մեծ մասամբ նույն են. սակավաթիվ բառեր կան գրաբարում, որոնք աշխարհաբարում չեն գործածում, օր. մորթել գրաբարում նշանակում է մորթազերծ անել, քերթել, ապա երկրորդաբար՝ փողոտել, վիզը կտրել, իսկ աշխարհաբարում նույն բառը գործածվում է միայն երկրորդ իմաստով: Բառակազմության նկատմամբ գրաբարն ու աշխարհաբարն իրարից առանձին տարբերություն չունեն: Գրաբարի էական տարբերությունը աշխարհաբարից ձևաբանության և շարահյուսության մեջ է»³²⁵:

Լինելով պահանջկոտ գիտամանկավարժական գործիչ՝ Մանուկ Աբեղյանը նույնը պահանջում էր նաև իր սաներից: Վաստակավոր ուսուցչապետն իր բազմամյա մանկավարժական գործունեության ընթացքում՝ իբրև հայոց լեզվի և գրականության ուսուցիչ և դասախոս, կրթել ու դպրոց է ճանապարհել հարյուրավոր հմուտ ուսուցիչների, որոնք արարել են ոչ միայն տարրական ու միջնակարգ վարժարաններում, այլև բարձրագույն հաստատություններում՝ շարունակելով ավանդապահը լինել իրենց ստացած կրթության և ուսման՝ տրված Մանուկ Աբեղյանի և մյուս երախտավորների կողմից: Ինչպես նկատել է հայագետ ակադեմիկոս Արամ Դանալանյանը. «Իր հասարակական-մանկավարժական երկարամյա բեղմնավոր գործունեությանը, հայագիտությանը մատուցած մեծագույն ծառայությունների համար Մանուկ Աբեղյանը, ըստ արժանվույն, մեծարվել ու գնահատվել է Հայաստանի կառավարության և համապատասխան կազմակերպությունների կողմից»³²⁶:

³²⁵ Մ. Աբեղյան, Գրաբարի համառոտ քերականություն, Վաղարշապատ, 1908:

³²⁶ Մանուկ Խաչատուրի Աբեղյան, Բիբլիոգրաֆիա, Հայկական ՍՍՌ ԳԱ, Եր., 1963, էջ 11:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՒՇԱՐՁԱՆ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻՆ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 70x100 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 17.375:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am